








Я. А. М а н а н д я н

**КРИТИЧЕСКИЙ ОБЗОР
ИСТОРИИ
АРМЯНСКОГО НАРОДА**

ТОМ II


МАТЕРИАЛЫ К III ЧАСТИ

**От утверждения Марзбанства в Армении
до падения Багратидского царства**

ЕРЕВАН

АРМГИЗ

1960



ՀԱՅՈՐ ՄԱՆԱՆԴՅԱՆ

9(47-925)

Ք
ԻՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ՀԱՏՈՐ

Բ

Բ ՄԱՍԻ ՆՅՈՒԹԵՐ

ՄԱՐԶՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ՄԽԶԵԿ ԲԱԳՐԱՏՈՒՅԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱԿՈՒՄԸ

114/93

ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԴԵՏՀՐԱՏ

1960



Հանգուցյալ ակադ. Հակոբ Մանանդյանի «Հայ ժողովրդի պատմության»
ներկա հատորը ընդգրկում է հեղինակի անտիպ նյութերը և տպագրված այն
աշխատությունները, որոնք վերաբերում են Հայ ժողովրդի պատմական անց-
յալին, սկսած մարզպանության հաստատումից Հայաստանում [428 թ.]
մինչև Բազրատունյաց թագավորության անկումը:

ԱՌԱՋԱՐԱՆ

Ակադեմիկոս Հ. Մանանդյանը իր «Քննական տեսությունն հայ ժողովրդի պատմության» աշխատության երկրորդ հատորի առաջին մասը վերջացնելուց հետո, իր ծրագրած «Քննական պատմությունը» ամբողջացնելու նպատակով, սկսել էր աշխատել այդ երկրորդ հատորի երկրորդ մասի վրա, որը ընդգրկելու էր հայ ժողովրդի պատմությունը՝ սկսած մարզպանության հաստատումից Հայաստանում մինչև Բագրատունյաց թագավորության անկումը:

Դեռևս 1925, 1926 և 1930 թվերին Պետական Համալսարանում այդ ժամանակաշրջանին վերաբերող իր դասախոսությունները կարդալու ընթացքում, նա այդ շրջանի պատմությունը ուսումնասիրել ու մշակել էր, և համառոտակի ձևով գրանցել էր իր ուսումնասիրության արդյունքները, որտեղ նա նշել էր՝

1. Տվյալ ժամանակի պատմական իրադարձություններին վերաբերող, սկզբնաղբյուրներից ֆաղված կարևոր և արժանահավատ վկայությունները.

2. Պատմական տարբեր դարաշրջանների և օտարազգի տիրապետությունների ընդհանուր բնույթը՝ իր ձևակերպումներով և ընդհանրացումներով.

3. Տեղի ունեցած պատմական անցքերի, իր կողմից ճշտված տարբերվերը, որոնք գրանցված են նաև առանձին տեսրակներում իր, ստուգմանը վերաբերող հաշվարկումներով.

4. Տվյալ նյութին վերաբերող հայ և օտար սկզբնաղբյուրները, նրանց համառոտ բովանդակությունը ու բնութագիրը. և գրականությունը:

Իր ուսումնասիրությունների ընթացքում նա հատկապես մեծ կարևորություն էր տալիս տեղի ունեցած պատմական իրադարձությունների ժամանակի որոշմանը: Այդ աշխատանքը նա կատարում

լը՝ համադրելով աղբյուրներում եղած ժամանակագրական տվյալները և պատմաբանասիրական գրականության մեջ տրվող կարծիքները, իր մշակած եղանակով:

1951 թվի աշնան ամիսներին, իր մահվանից մի քանի ամիս առաջ նա սկսել էր վերանայել իր գրանցած նյութերը՝ լրացումներ կատարելու, քարտեր կազմելու և մշակելու համար: Դժբախտաբար, վերահաս մահը նրան հնարավորություն չտվեց լրիվ կերպով իրականացնել իր ծրագրած մեծ գործը և գրել նաև իր «Քննական պատմություն» այդ մնացող մասը, որը նա թողել էր ամենից վերջը, որովհետև գտնում էր, որ այդ պատմական շրջանը զգալի չափով արդեն ուսումնասիրված է՝ թե հայ և թե օտար պատմագիտության կողմից և բացի այդ, կան նաև ժամանակակից հավաստի սկզբնաղբյուրներ, որոնց միջոցով հեշտությամբ կարելի է ճշտել և տալ այդ շրջանի Հայաստանի պատմության իրական պատկերը:

Նկատի առնելով ակադ. Մանանդյանի գիտական ժառանգության մեջ մնացած վերոհիշյալ անտիպ նյութերի կարևորությունը, որը տալիս է տվյալ ժամանակաշրջանի պատմական իրադարձությունների ընդհանուր պատկերը խտացած ձևով, մենք անհրաժեշտ գտանք քաղվածորեն հրատարակել նաև այդ անտիպ նյութերը, որը անշուշտ կարևոր ներդրում է լինելու՝ հայ ժողովրդի այդ ժամանակաշրջանի պատմության լուսաբանության համար:

Բացի հիշված անտիպ նյութերից, ակադ. Մանանդյանը գրել և հրատարակել է 12 այլ աշխատություններ՝ հայ ժողովրդի պատմության այդ շրջանին վերաբերող խնդիրների մասին:

Ներկա հրատարակության մեջ մենք, իբրև կարևոր չրացում, անհրաժեշտ համարեցինք վերոհիշյալ անտիպ նյութերի հետ միասին վերահրատարակել նրա տպագրված այն աշխատությունները, որոնք իրենց բովանդակությամբ կազմում են, փաստորեն, «Քննական պատմություն» երկրորդ հատորի երկրորդ մասի կարևորագույն գլուխները, և որոնք հրատարակված են եղել մեծ մասամբ տարիների առաջ, փոքր տպաքանակով և վաղուց արդեն սպառված են:

Այդ աշխատություններն են՝

1. Քաղվածքներ «Համառոտ տեսություն հին Հայաստանի պատմության» աշխատությունից.

2. Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում.

3. Յուստինիանոսի նոր օրենքները հայերի ժառանգելու կարգի մասին.

4. Հերակլ կայսեր պարսկական արշավանքների ընթացողիները.

5. Արաբական արշավանքները Հայաստանում (ժամանակագրական դիտողություններ).

6. Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ.

7. Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության I.

8. Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության II.


9. Հատվածներ «О торговле и городах Армении» 1954 թվին հրատարակած աշխատությունից, հայերեն թարգմանությամբ.

10. Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում:

Անհրաժեշտ ենք գտնում նշել, որ սկզբնաղբյուրների վերաբերմամբ իր ձեռագիր նյութերի մեջ գրանցված դիտողություններում ալադ. Մանանդյանը ցույց է տվել, որ տվյալ ժամանակաշրջանի պատմական իրադարձությունների լիակատար ու ճշգրիտ պատկերը կարելի կլինի տալ, երբ հրատարակվեն և լույս տեսնեն մատենագրության համար անհայտ մնացող արձանագրությունները: Այդ գործը նա համարում էր հայ պատմագիտության հերթական ու անհետաձգելի խնդիրներից մեկը: Պետք է նաև ասենք, որ ներկա հրատարակությամբ լույս տեսնող գրականության ցանկի մեջ չեն հիշված այն աշխատությունները, որոնք լույս են տեսել 1930 թվից հետո և ինքը դեռևս չէր գրանցել:

Ալադ. Մանանդյանի հակիրճ գրանցված անտիպ ձեռագիր նյութերը, ամփոփումները և ընդհանրացումները ժամանակագրական կարգով դասավորելիս, մենք քաղվածորեն վերցրել ենք իր գրածները միանգամայն անփոփոխ, իր տված ձևակերպումներով, այնպես, ինչպես որ գրանցված են ձեռագիր նյութերում, և ըստ ամենայնի պահպանել ենք հրատարակվող նյութերը բնագրին հարավատ: Ռուսերեն գրված աշխատությունների թարգմանությունը կատարված են իմ կողմից:

ԱՐՍԵՆ ՄԱՆԱՆԴՅԱՆ



ՀԱՄԱԹՈՑ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒԹՅՆԵՐ ԵՎ ՍԿՋԲՆԱՂԲՑՈՒՐՆԵՐԻՑ ՔԱՂՎԱԺ ԿԱՐԵՎՈՐ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱՐԶՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԻՆՁԵՎ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Արշակունյաց թագավորության վերացումից հետո Սասանյան Պարսկաստանը նպատակ է ունեցել և աշխատել է կոլտուրապես անջատել Հայաստանը արևմտյան ազդեցությունից:

Պարսկաստանի այդ ձգտումը պարզ կերպով արտահայտված է Հազկերտ II-ի [438/9—457] հրովարտական, որ բերված է Ղազար Փարպեցու հետևյալ վկայության մեջ՝ Փարպեցի. ԻԱ, էջ 119՝

«Վասն զի դուք ինքեին գիտէք և ամենայն Արիք՝ զաշխարհն Հայոց, թէ որպէս մեծ է և պիտանի, և մօտ և սահմանակից է կայսեր իշխանութեանն. և զօրէնս և պաշտօն զնոյն ոմնի, զի կայսր զիշխանութիւն նոցա ունի: Եւ եթէ և մերոց օրինաց ընտանեցուցանէք զնոսա, և ընտելնուն, և կարեն ճանաչել, եթէ ցայժմ մոլորեալք էին, և արդ ի ճանապարհ եկեսցեն, այնուհետեւ զձեզ սիրեն և զԱրեաց աշխարհս, և ի կայսերէ և յօրինաց նորա և յաշխարհէն մերժին և հեռանան ի բաց: Եւ լինի այնուհետեւ աշխարհն ընդ մեր սերտ սիրով և միաբանութեամբ: Եւ յորժամ Հայք սերտիւ մեր լինին, Վիրք և Աղոսանք այնուհետեւ մեր իսկ են»:

Հայաստանը Արեւմուտքից անջատելու իր ձգտումը Հազկերտ II-ը ուզեցել է կատարել նախարարական տոհմերի կրոնամիտութեան միջոցով: Մոզութեան կրոնը ընդունողներին նա պատվում էր, սակայն էր պարգևներ, կալվածքներ և իշխանություն:

Ինչպես Եղիշեն վկայում է՝ [էջ 29]

«Սկսաւ այնուհետեւ յառաջ կոչել զկրտսերս աւագաց և

զանարգս ի պատուականաց, զտգէտս ի գիտնոց և զանարիս ի քաջ արանց»:

Այնուհետև Հայաստան է ուղարկվում Դենշապուհը՝ «Աշխարհագիր առնել»:

1. «զազատութիւն եկեղեցւոյ արկանէր ի ծառայութիւն».

2. միայնակեացք — ընդ աշխարհազրաւ.

3. զհարկ աշխարհին ծանրացոյց».

4. յամենայն տան արար խռովութիւն».

5. հազարապետ աշխարհին — պարսիկ».

6. մոգպետ—դատաւոր աշխարհին»:

Տվեց հրաման՝ «Կամաւ և սիրով յանձն առնել մազդէական կրօնն»:

Ըստ Փարպեցու վկայության [էջ 123]՝ «Եւ ընկալեալ դայսպիսի հրովարտակ ամենայն Հայոց աւագանոյն»:

Այնուհետև նախարարները և սեպուհները կարգադրութիւն են ստանում անմիջապէս զնալ արքունիք, որտեղ նոքա ընդունում են մազդէական կրօնը և վերադառնում:

Իսկ Հայաստանում, ինչպես վկայում է Նդիշեն՝

«Յետ աւուրց քսան և հնգից զալստեան մոգուց ի Հայս՝ մոգպետն ինքնին հասանէր քակել զգրունս եկեղեցւոյն, իսկ սուրբն Ղևոնդ երէց ոչ ետ թոյլ»:

Փարպեցի՝ «մոգուցն գունդք բռնադատէին տանել զկրակս ի տաճար սրբութեանց Տեառն»:

Միջ բերված վկայություններում հիշվող քաղաքական և կրօնական խստությունների հետևանքը եղել է Վարդանանց ապստամբությունը [450—451 թ.] և Ավարայրի կռիվը 451 թվի փետրվարի 17-ին, որը թեև վերջացել էր ապստամբությանը մասնակցող նախարարների պարտությանը, սակայն ունեցել է որոշ դրական արդյունքներ: Ավարայրի կռիվից հետո Հայաստան է ուղարկվել Վասակ մարզպանի փոխարեն Ատրորմիզդը և, ինչպես վկայում է Փարպեցին, տեղի է ունեցել երկրում պարսից քաղաքականության որոշ մեղմացում:

Փարպեցի, Խ, էջ 215 — «Յանձն առնել [Ատրորմիզդ] հրովարտակով զմարդիկն Հայոց՝ շընդոստուցանել, ալլ սիրով նուաճել և զպաշտօն քրիստոնեւթյանն համարձակապէս առնել ամենեցուն»:

Փարպեցի, 216 — [Ատրորմիզդ] «Բաղում թուղթս խաղաղության ամէնէր ի տեղիս տեղիս Հայոց աշխարհին. թէ եկայք շինեցարուք աներկիւղութեամբ, և մի՛ ինչ զարհուրիք. յորս

գրէր և կնքէր աւետաւոր բանս, շնորհել ամենեցուն զկարգ քրիստոնէութեան, որպէս և կամիցի ըստ իւրանքանչիւր կամաց»:

Ինչպէս պատմիչների վկայութիւններից երևում է, Պարսկաստանը ուզեցել է մազդեական կրոնը մտցնել Հայաստան նախարարների աջակցութեամբ, բայց ոչ բռնութեամբ: Եվ նախարարական տոհմերի վերաբերմամբ հետագայում ևս, ինչպէս վկայում է Փարպեցին, շարունակվում էր նույն անարդարամիտ ու դժգոհ քաղաքականութիւնը:

Փարպեցի—«Ի՞նչ ժամանակն յայնմիկ և Պարսկաց զտանու տէրութիւնն գնեալ էին ուրացութեամբ ըստ անարժանութեանն, և ոչ տիրացեալք աստուածաշտութեամբ իբրև զարժանաւորս, արք անմիտք և վնասակարդ, վատք և ոչ քաջք»... «Եւ էր տեսանել աշխուհեալ յաշխարհիս Հայոց զբաւութիւն հեռացեալ, զիմաստութիւն կորուսեալ, զքաջութիւն հեռացեալ և մեռեալ, զքրիստոնէութիւն թագուցեալ»...

Փարպեցի, 340 — «Իսկ լաւ ոք այր յանկարծ և կամ արժանաւոր թէպէտ և էր ի ժամանակին, որպէս լաւ այր Բաբելն Սիրնի և կամ սքանչելին Առնակն Ամատունի, և կամ այլ ոք նման նոցին, ի հոգեսպանութենէ մոլեկան թագաւորին և ի կատաղութենէ ամբարշտեալ ժամանակի իշխանացն՝ որպէս նապաստակք ի սլացմանէ գիշակեր արծուեաց ի ծերպս վիմաց և կամ ի մացառուտ տեղիս զօղեալք թաքէին»:

Զսպված Հայաստանի դժգոհ նախարարները և հոգեւորականութիւնը հարմար առիթի կսպասեին, որ նորից ապստամբեն: Այդ երկրորդ ապստամբութիւնը բռնկվեց 481 թվին Վահան Մամիկոնյանի ղեկավարութեամբ և տեեց մինչև 484 թիվը:

Ապստամբութիւնը ունեւ պարտիզանական կռիւների բնույթ, որի ընթացքում պարսից Ատրվշնասպ մարզպանը ստիպված էր փախչել և նրա տեղը մարզպան էր կարգվել Սահակ Բագրատունին: Ապստամբներին խոստացել էր օգնել նաև վրաց Վախտանգ Գորգասալ թագավորը [446—499], Վերջապես 484 թվին՝ պարսից Պերոզ թագավորի հեփթաղներից կրած սոսկալի պարտութիւնից հետո, Պարսկաստանը հարկադրված էր փոխել Հայաստանում իր քաղաքական գիծը, և անհայտ կորած Պերոզ թագավորի հաջորդ Վաղարշ թագավորը [484—488] ստիպված էր ընդունել Վահան Մամիկոնյանի կողմից առաջադրված հաշտութեան հետեւյալ պայմանները՝

Ղազար Փարպեցի—1. «զհայրենի և զքնիկ օրէնս մեր ի մեզ թողուք, և զհայ այր զոք մի՝ մոգ ոչ առնէք, և ումեք յա-

զագա մոգութեան գահ և պատիւ շտայք, և զկրակարանն յաշխարհէս Հայոց ի բաց տանիք, զեկեղեցոյ թշնամանս յաղտեղի և յանպիտան մարդկանէ, որ ցայժմ լինէր, յայսմ հետէ մեզ շտայք տեսանել. և քրիստոնեայ մարդկան և քահանայից զկարգ և պաշտօն քրիստոնէութեան համարձակութեամբ և աներկիւղ տայք պաշտել՝ ուր և կամին.

2. զմարդ ոչ իշխանաբար ճանաչէք, այլ իրաւաբար գիտել զլաւն և զվատթարն, ընտրել զպիտանին և զանպիտանն, իմանալ զտոհմիկն և զանտոհմիկն, ունել առ լաւան զպատուականն և զքջաճն և զօգտակարն, արհամարել և առ ոչինչ համարել զվատն և զանպիտանն. սիրել զվաստակաւորսն և ատել զանվաստակն, ունել ի մօտ զիմաստունս և խորհուրդս առնել, և զանմիտն ոչ մօտեցուցանել, այլ ի հրապարակէ ևս հալածել.

3. որ տէրն է Արեւաց աշխարհի թագաւորն՝ կամիմք զի ինքն լուիցէ իւրովք ականջօք և ինքն տեսցէ իւրովք աշօք, և ինքն գիտասցէ զմարդ լաւ և զանլաւ, և ոչ այլոյ բերանոյ խոսեսցի զպէտանս:

Վաղարշ թագավորի պատասխանը եղել է հետեւյալը՝

«Զամենայն զոր ինչ խորհեալ է ձեր՝ տուեալ եղիցի ձեզ մեր գրով և կնքով զամենայն խնդիրդ ձեր մինչև հաւիտեանս»:

Այնուհետև Վահան Մամիկոնյանը ստանում է նախ Մամիկոնեից տերութիւնը և ապա հայոց ապարապետութիւնը. մյուս նախարարներին էլ տրվում են իրենց նախկին իրավունքները:

VI դարում վերսկսվում են համառ ու պարբերաբար կրկնվող կռիւները Բյուզանդական կայսրութեան և Սասանյան Պարսկաստանի միջև, որոնք V դարում ընդհատվել էին շնորհիվ հոնների և ուրիշ արեւելյան ցեղերի արշավանքների, և այդ շրջանում պատմական անցքերը ունեցել են հետեւյալ ընդհանուր բնույթը՝

1. Կրոնամոլութեան սաստկացում՝ կատաղի կրոնական վեճեր՝ թե Բյուզանդիայում և թե Սասանյան Պարսկաստանում.

2. Պարսկաստանը Կավատ I թագավորի ժամանակ [488—531 թ.] նորից զորեղանալով, վերսկսում է Մարզպանական Հայաստանում կրոնական իր հին քաղաքականութիւնը:

3. Կրոնական փոփոխութիւն Պարսկաստանում և Մազդակյան կրոնական նոր ուսմունքի տարածումը Մարզպանական Հայաստանում¹, որին կողմնակից է եղել ինքը Կավատ I-ը:

¹ Մազդակյան նոր կրոնի բովանդակութիւնը եղել է հետեւյալը՝

Բոլոր մարդիկ նման են ստեղծված. անարդարացի է, եթե մեկն ավելի գույք ունի և կին, քան մյուսը:

4. Բյուզանդական կայսրության զորեղացումը Յուստինիանոս կայսեր ժամանակ [527—565] և ձգտում ու միջոցառումներ՝

ա) վերականգնելու հռոմեական զորեղ ու միաձույլ կայսրությունը.

բ) միաձուլել Բյուզանդական Հայաստանը կայսրության հետ, վերացնելով այնտեղ տեղական առանձնահատկությունները և կարգերը, ինչպես, օրինակ, նախարարական իշխանության հաջորդականությունը և թե ցկյանս սատրապությունը:

5. Բյուզանդական Հայաստանի քաղաքական վերակազմությունը, որի նպատակը եղել է հետևյալը՝ որ հայերը ոչ մի բանում չտարբերվին կայսրության մեջ ընդունված կարգերից և ամեն բանում հետևեն հռոմեական օրենքներին:

6. Բյուզանդական Հայաստանի վարչական վերակազմությունը. համաձայն Յուստինիանոսի նոր օրենքի, Բյուզանդական Հայաստանը բաժանված է եղել չորս կառավարչության:

7. Յուստինիանոս կայսեր կողմից Բյուզանդական Հայաստանում ձեռնարկված խստությունների պատճառով առաջացել էր՝ արդարադատության բացակայություն, ապօրեն տուրքեր, ժողովրդի վճարունակության նվազում, երկրի աղքատացում, հուսահատ վիճակ, խռովահույզ դրություն ու ապստամբական շարժումներ ընդդեմ իշխանության:

8. Մայր երկրում [Հայաստանում] ներքին անհամաձայնություններ, ազնվականության տարբեր կողմնորոշման պատճառով:

9. Նոր ավերիչ պատերազմներ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև փոփոխակի հաջողությամբ՝ Յուստինիանոս կայսեր ու իր հաջորդների ժամանակ, երբեմնակի ընդհատումներով, որոնց ընթացքում տեղի են ունեցել՝ հայկական շրջանների ավերում և բնակչության փախուստ:

10. Նախարարներից շատերի գաղթը Պոլիս և նրանց բյուրո-

Պետք է դասային և գույքային տարբերությունները վերացնել և կատարել կանանց հավասար բաշխում:

Գույքային հավասարությունը հնարավոր է, եթե անձնական սեփականությունը վերացվի և գույքերը լինին ընդհանուր սեփականություն:

Միս ուտելը, արյուն թափելը արգելվում է:

Ծնթաղրում են, որ կալատն օգտվել է այդ ուսմունքից ազնվականության դեմ պայքարելու համար:

1 ա. ներքին Հայք — կենտրոնը՝ Թեոդոսուպոլիս

բ. բ Հայք — կենտրոնը՝ Սեբաստիա

գ. գ Հայք — կենտրոնը՝ Մելիտենե

դ. դ Հայք — կենտրոնը՝ Մարտիրոպոլ. բերդը՝ Կթրիճ:

կրատացումը: Ուշագրավ տեղեկություն է տալիս Պրոկոպիոս Կեսարացի պատմիչը Պոլսում Արտավան Արշակունու վարած անվայել; ու զեխ կյանքի մասին:

Proc. Goth. III, 32, p. 409.

«Ուրիշների դժբախտությունների գնով, Արտավանը ձեռք բերեց հերոսի, բռնակալի, ջախջախողի համբավ, սպանելով առանց որևէ հիմքի իր ընկերոջն ու սեղանակցին՝ Գոնֆարիսին: Իսկ այժմ կորցնելով իր արիությունը, նա նստել է այստեղ թուլամորթաբար, մինչդեռ նրա հայրենի երկիրը, գրաված միշտ զորքերով, ուժասպառ է լինում ապօրեն հարկերի ծանրության տակ: Նրա հորը սպանել էին խաղաղության բանակցության պատճառով, իսկ նրա ազգը լիովին ստրկացրեցին և անընդհատ ցրում են հռոմեական կայսրության զանազան մասերում»:

Պրոկոպիոսը տալիս է նաև ուշագրավ վկայություն հայ նախարարների հուսահատ դրության մասին՝ Բյուզանդիայի կողմից հայերի դեմ ձեռնարկված դաժան խստությունների պատճառով և Պարսից խոսրով Անուշիրվան թագավորի [531—578/9] օգնությանը դիմելու մասին:

Procop., II, 3՝

Նրանց ճառը— Հայտնում է [խոսրովին], որ իրանցից շատերը Արշակունիներ են. քայց այժմ եկել են նրա մոտ, իբրև ստրուկներ և փախստականներ — ոչ հոժար կամքով, այլ հարկադրված:

«Մեր նախնիներից վերջին թագավորը՝ Արշակը զիջել էր իր թագավորությունը Հռոմեական կայսեր Թեոդոսին հոժարակամ, այն պայմանով, որ բոլոր տոհմով իրա մերձավորները մնան միշտ ազատ և ոչ մի հարկ չվճարեն: Այդ կարգադրությունը ուժի մեջ էր մնում, մինչև որ դուք կնքեցիք խաղաղության աջն նշանավոր դաշինքը, որ, մեր կարծիքով, առանց սխալվելու կարելի է անվանել համաշխարհային աղետ, որովհետև այնուհետև, անտես առնելով իր բարեկամներին ու թշնամիներին, ամեն ինչ իրար է խառնել ու քայքայել նա, որ անունով քեզ բարեկամ է, բայց իրոք — թո իսկական թշնամի՞ն է: Այդ բանը ինքդ կիմանաս, հենց որ նվաճե արևմտյան ազգերը: Եվ իրոք, ի՞նչ բան նա չէ արել, որ արգելված է եղել ի՞նչ բան նա չէ խանգարել, որ շինված է եղել: Նա չէ՞ որ մեզ վրա հարկ է դրել, որ անաջ մենք չգիտեինք: Նա չէ՞ որ նվա-

ճեց մեզ հարևան ճաներին, որոնք մինչ այդ անկախ էին: Նա չէ՞ որ հռոմեական իշխան է կարգել դժբախտ լազերի թագավորի վրա: Նա չէ՞ որ բոսպորյանների մոտ, որոնք ենթարկված էին հոների իշխանության, ուղարկել է իր զորավարներին: Նա չէ՞ որ նվաճել է այդ քաղաքը առանց որևէ իրավունքի: Նա դաշն է կնքել եթովպիացիների հետ, որոնց մասին առաջ հռոմայեցիները նույնիսկ լսած չէին: Նա շրջապատում է արդեն Ուիթիտների հողերը և...

Ամբողջ աշխարհը քիչ և՛ այդ մարդոմ.... Աչքերը ուղղել է այժմ եթերին.... Ի՞նչ ես դանդաղում..... Եթե ուզում ես իմանալ, թե ինչպես է վարվում Յուստինիանոսը նրանց հետ, որոնք նրան հանձնվում են, մենք և լազերը քեզ օրինակ.....

Նվաճման համար մնացել է միայն Պարսկաստանը.... Հռոմեական ուժերի մեծագույն մասը դեռ հեռավոր երկրներում են.....

Յիտտային մենք սպանել ենք, Վելիսարը այլևս չի գա. մենք կլինենք առաջնորդներ:

541 Թվին բյուզանդական զորքերը մտել էին Հաղիստան և լազերը ևս, դժգոհ լինելով բյուզանդացիներից, դիմել էին Պարսից խոսրով թագավորի օգնությանը: Հազերի դեսպանությունը գնացել էր խոսրովի մոտ և հայտնել էր՝

1. որ բյուզանդացիները իրանց ձեռքն են առել երկրի իշխանությունը, թողնելով թագավորին նրա արժանավորությունը միայն արտաքին տեսքը:

2. առևտրի մեջ մտցրել են մենաշնորհ [մոնոպոլիա]. ծախում են ինչ որ իրանց ավելորդ է և անպետք. գնում են և իրանք են նշանակում գները: Դուրս են տանում երկրից ամենաանհրաժեշտ բաները, նաև ոսկին:

Հռոմեական զորավարը արգելել էր ազատ առևտուրը. ինքն էր ծախում և առնում, և նշանակում գները:

543 Թվին բյուզանդացիները իրենց ուժերը ուղղել էին դեպի Պարսկական Հայաստան, սակայն Դվինի մոտ տեղի ունեցած կռուվում Բյուզանդիայի զորքերը պարտվել էին:

Այնուհետև մինչև 562 թիվը պարբերաբար կրկնվող կռիվներից հետո տեղի է ունենում Դարայի մոտ հիսնամյա խաղաղության կնքում Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև:

Մինչ այդ, տեղի ունեցող անընդհատ կռիվների և Յուստինիանոսի իշխանության ընթացքում կայսրության ուժերի չափազանց

լարման հետեանքով, Բյուզանդական կայսրության վիճակը. չընայած նրա արտաքին փայլին, խախտվել էր:

Յուստինիանոսի մահվանից հետո Յուստինոս II-ի [565—578] ժամանակ Պարսկաստանը խիստ զորեղացել էր:

Ինչպես վկայում է Միխայել Ասորին՝

«Յայսմ ժամանակի հպարտացաւ թագաւորն Պարսից յաղթութեամբ, որ եղև նմա ի Միջագետս»:

564 թվին Հայաստան էր եկել Պարսից Սուրեն մարզպանը, որը Պարսկական Հայաստանում նորից մտցրել էր խստություններ:

Ասողիկ, գլ. Բ, էջ 84 [Ս. ՊԲ., 1885]՝ «յոյժ հարստահարէր զնախարարս Հայոց, զի շնայր ընդ կանայս ազատաց, ոչ առնելով զայրն տէր կնոջ իւրոյ»:

Միխայել Ասորի՝ «Եվ նոսրով թագաւորն Պարսից սկսաւ նեղել զՀայս՝ երկրպագել կրակի»:

«առաքեաց ի Հայս շինել անդ տուն կրակի»:

Ասողիկ, գլ. Բ, էջ 84՝ «Դենշապուհ — զորմզդական հուրն վառեաց ի Ռշտունիս»:

Հիշված խստությունների հետեանքով 572 թվին բռնկվեց հայերի III-րդ ապստամբությունը Վարդան Մամիկոնյանի առաջնորդությամբ՝

«Հանդերձ միաբանութեամբ ամենայն նախարարաց», որոնց խոստացել էր օգնել Բյուզանդական Յուստինոս II կայսրը: Ապստամբները 572 թվի փետրվարի 22-ին զրավեցին Դվինը և կոտորեցին պարսկական զորքն ու մոգերին, և Սուրեն մարզպանը սպանվեց:

Այնուհետև բռնկվեց նոր պատերազմ Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև, որը տևեց ընդհատումներով 20 տարի և որի ընթացքում ապստամբ նախարարների երկրամասերը ենթարկվեցին ավերածության:

Ինչպես վկայում է Ասողիկը, էջ 85՝ «Եվ այս են ժամանակք մարտից երկպառակութեան, անթիւ սպանմանց, գերութեան առից, խռովից, կապանաց, նեղութեանց, պակասութեանց, խիստ սովու, սրոյ և մարդամահու, աւերելոյ աւանից, հրդեհից շինուածոց, և ամենայն վնասուց բազում աշխարհաց, յերկուդ կողմանց հասանէր՝ մոռացեալ աստուածապաշտութիւն»:

Այդ կռիվների հետեանքով Բյուզանդիան ստանում է՝ Դարան, Աղձնիքը, Տուրուբերանը, Գուգարքը, Տայքը, Այրարատի մեծ մասը: Իսկ Պարսկաստանին մնում է՝ Մոկքը, Կորճեքը, Վասպուրա-

կանը, Այրարատի փոքր մասը, Սյունիքը, Արցախը Փայտակարանը, Ուտին:

Այդ 20 տարվա աշխարհավեր պատերազմների հետևանքը հղավ Մավրիկիոս բյուզանդական կայսեր [582—602] նոր քաղաքականութունը, որի մասին Սեբեոսը տալիս է հետևյալ վկայությունը՝

Սեբեոս, գլ. 2, էջ 75—«Յայնմ ժամանակի թագաւոր յունաց Մաւրիկ հրամայէ գրել առ թագաւորն Պարսից դիր ամբաստան վասն իշխանացն ամենայն Հայաստանեաց և զաւրաց նոցա»:

«Ազգ մի խոսորդ և անհնազանդ են, ասէ, կան ի միջի մերում և պղտորեն: Բայց եկ՝ ասէ, ես դիմս ժողովեմ և ի Թրակէ գումարեմ. և դու զքոյդ ժողովէ և հրամայէ յԱրևելս տանել: Զի եթե մեռանին՝ թշնամիք մեռանին. և եթէ սպանանեն՝ զթշնամիս սպանանեն. և մեք կեցցուք խաղաղութեամբ: Զի եթէ դոքա յերկրի իւրեանց լինիցին մեզ հանգչել ոչ լինի»:

«Միաբանուեցան երկոքին»....

Բյուզանդական կայսրության այս նոր քաղաքականությունը առաջ էր բերել նախարարական տոհմերի մեջ հուսահատ դրություն: Բյուզանդական մասի նախարարները փախչում էին պարսից կողմը, որտեղ նրանց դրությունը քաղաքական և տնտեսական տեսակետից ավելի նպաստավոր էր: Սակայն նոքա գտնվում էին երկուստեք սպառնալիքի տակ և որոշեցին՝

Սեբեոս գլ. 2 էջ 77 — «Պատերազմեսցուք ընդ երկուսին թագաւորսդ, և բռնութեամբ զերկիրդ մեր ի մեզ դարձուցուք»:

Այնուհետև մի քանի անհաջող ապստամբական փորձերից հետո հայ նախարարները սկսեցին նոր զորահավաք—Սահակ Մամիկոնյանի և Սմբատ Բագրատունու առաջնորդությամբ՝

Սեբեոս, գլ. Ժ, էջ 86—«Դարձեալ սկսան միարանել մնացեալ նախարարքն Հայոց, և խնդրէին ի բաց կալ ի ծառայութենէն Յունաց թագաւորին. և նստուցանել իւրեանց թագաւոր, զի մի ևս նոցա հասցէ մեռանել ի կողմանս Թրակացւոց, այլ կեալ և մեռանել ի վերայ աշխարհին իւրեանց»:

Այս ապստամբության լուրը հասնում է թագավորին և Սմբատին ու ուրիշ յոթը հոգու բանտարկում են:

Հետագայում, շնորհիվ իր բացառիկ քաջության, Սմբատ Բագրատունին ներումն է ստանում և դառնում է մարզպան Վրկանա [607—616/617 թ.]: Այդ ժամանակները, Աբրահամի կաթողիկոսության օրով [607—610/611] տեղի ունեցավ վրաց և հայոց եկեղեցիների բաժանումը: Հայերը մնացին ասորական եկեղեցու հետ հա-

մերաշխ, իսկ վրացիները՝ հունա-հռոմեական եկեղեցու հետ, և ստեղծվեց թշնամական տրամադրություն:

Գիրք թղթոց — «Վասն որոյ և զյառաջագոյն սահմանն վարդապետացն մերոց, զոր ի վերայ Հոռոմին հատին, և կաց-ցէ մինչև ցրուն՝ թէ ոչ դարձցին ի ճշմարիտն, մեք զնոյն ի վերայ Վրաց հրամայեցաք, ամենևին մի՛ հաղորդել ընդ նոսա, մի՛ յաղաթս և մի՛ ի կերակուրս, և մի յըմպելիս, մի՛ ի բարեկամութիւն, մի՛ ի դաեկութիւն, մի՛ աղաթիւք երթալով ի հաշն որ ի Մցխիթայի տեղաւքն համբաւի, մի՛ ի Մանգղեաց խաշն և մի՛ ի մեր եկեղեցիս զնոսա ընդունել. այլ և ամուսնութեամբ ամենևին հեռանալ. բայց միայն դնել ինչ, և կամ զնոյ տալ որպէս Հրէից»:

«Նոյն հրաման և վասն Աղուանից»:

Հայ և վրաց եկեղեցիների բաժանումից հետո տեղի է ունենում քաղկեդոնական հայերի քայլ առ քայլ ապազգայնացումը և ձուլումը հույների և վրացիների հետ:

602 թվին Թրակիայում տեղի ունեցավ ապստամբություն. Մավրիկիոս կայսրը և իր որդիները սպանվեցին, և ֆրա հաջորդ Փոկաս կայսեր ու պարսից խոսրով II թագավորի [590—628] ժամանակ վերսկսվեց պատերազմը Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև, որը տևեց 24 տարի: 18 տարի շարունակ, զբոթե անընդհատ, բյուզանդական զորքերը պարտություն էին կրում: Տեղի էր ունենում բնակչության կոտորած առանց սեռի ու հասակի խտրության և Փոքր Ասիայի ավերումը մինչև Բոսփոր:

Կռիվների վերջին տարիները, թեև Բյուզանդիան 627 թվին Մոսուլի մոտ տարած վճռական հաղթության շնորհիվ վերականգնեց իր դիրքերը և փողմերը փնքեցին մշտական խաղաղության դաշնագիր, սակայն նոքա երկարատև կռիվների պատճառով յուրաքանչյուր էին եղել, և 636 թվից սկսած հանդես եկավ արաբական աշխարհակալությունը:

ԱՐԱՐԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.

Արաբական աշխարհակալության արագ ծավալմանը նպաստել են հետևյալ պայմանները՝

1. Բյուզանդիայի և Սասանյան Պարսկաստանի թուլացումը հաճախակի կրկնվող աշխարհավեր կռիվների պատճառով.

2. Հայաստանի բնակչության դժգոհությունը, Բյուզանդական կայսրությունից՝ վարչական դաժան սիստեմի, կրոնական հալա-

ծանօնների, դրամական ծանր տուրքերի և միաձուլման քաղաքականության պատճառով:

3. Երկու մեծ պետությունների իշխանության տակ գտնվող արաբական և սեմական ժողովուրդների համակրանքը և օգնությունը նոր աշխարհակալությանը:

4. Օգնում էին նաև հրեաները, որոնց դրությունը Պաղեստինում ծանր էր:

5. Արաբների մեղմ և բարյացակամ վերաբերմունքը դեպի անձնատուր եղող թշնամիները և քաղաքները: Հոժարակամ հանձնվող քաղաքներին տրվում էին արտոնություններ:

6. Համբերատար վերաբերմունք եկեղեցու նկատմամբ:

7. Նախարարական շահերը արաբների իշխանության տակ եղել են ավելի ապահովված:

8. Տուրքերը և հարկապահանջությունը սկզբնական շրջանում եղել են չափավոր:

9. Արաբները կատարում էին իրենց խոստումները:

10. Իրենց տիրապետության առաջին շրջանում՝ Օմայան դինաստիայի խալիֆները եղել են ընդհանուր առմամբ մատչելի և ժողովրդին մոտ:

Արաբական տիրապետության բնույթը զգալի չափով փոխվել է 750 թվից հետո, Աբասյան դինաստիայի գերիշխանության օրով, շնորհիվ ստեղծված նոր պայմանների՝

ա. Աբասյանների պետական կազմակերպությունը և մշակույթը եղել են նախկին Սասանյան Պարսկաստանի պետականության ազդեցության տակ:

բ. Աբասյանները հին աշխարհականների նման վարել են շռայլ կյանք, կատարել են մեծ ծախսեր և եղել են ժողովրդից ավելի կտրված:

Արաբական տիրապետության առանձնահատուկ երևույթներից են՝ խառն ամուսնությունները, որոնք տեղի են ունեցել, գլխավորապես, VIII դարում և IX դարի առաջին կեսում՝ հալածանքներից խուսափելու համար:

Արաբական աշխարհակալության հիմնական նպատակը սկզբնական շրջանում եղել է՝ աշխարհագիր կատարել նվաճված շրջաններում և հարկեր ստանալ, որի վճարման համար պատասխանատու է եղել ամբողջ համայնքը:

Իրենց տիրապետության առաջին շրջանում արաբները նպատակ ունենալով պահպանել իրենց զինվորական գերազանցությունը,

եղել են իշխողներ և զինվորականներ: Քաղաքացիական զբաղմունքները և վարչական աշխատանքները թողնված են եղել նվաճվածներին:

Վարչական պաշտոնները սկզբնական շրջանում եղել են պարսիկներ և քրիստոնյաներ: Քաղաքացիական և վարչական գործերում իրենք արարները ոչ մի միջամտություն չեն ունեցել: Մինչդեռ հետագայում, Հաջիի ժամանակ տեղի է ունեցել պաշտոնները մահմեդականացում:

Օմայան դինաստիայի ժամանակ մշտական զորք չի եղել. եղել են զինվորական զաղութներ որոշ գլխավոր կայաններում: Մինչդեռ հետագայում Աբասյանները ունեցել են մշտական վարձկան զորք, որը բաղկացած է եղել՝ արաբներից, պարսիկներից և թուրքական Ֆերգանի ժողովուրդներից:

Համաձայն ֆրանսիական գիտնական Լոռանի եզրակացության՝

«Հայաստանը եղել է Հռոմի և Բյուզանդիայի ու Իրանի և ապա արաբների աշխարհակալական մրցակցության զոհը՝ նա ստանում էր հարվածներ թե մեկի և թե մյուսի կողմից: Օգտվում էր այդ մրցակցությունից և օգտագործում նրանց հակամարտությունը ու խուսափում վերջնական անկումից: Սակայն, հայերը չկարողացան այդ հակամարտությունը օգտագործել և իրենց ինքնուրույնությունը վերածել անկախության և պետական միության»:

* * *

Արաբական տիրապետության շրջանի մասին Սեբեոսը տալիս է հետևյալ պատկերավոր վկայությունը, որտեղ նա արաբներին նմանեցնում է չորրորդ գազանին՝

Սեբեոս, գլ. ԼԲ, էջ 182—«Բայց երանելին Դանիէլ կանխաւ գուշակէ մարգարէութիւնն զայսպիսի նեղութեանս, որ եկն եհաւս ի վերայ երկրի, որ չորս գազանաւք նշանակէ զչորս թագաւորութիւնսն, որ յառնելոցն էին ի վերայ երկրի: Եւ նախ առաջին զԱրեւմտից թագաւորութիւն զմարդացեալ գազանն, որ է Յունաց...: Եւ ահա գազանն երկրորդ նման արջոյ, և եկաց ի Վոդմն մի՝ յարեւելից կողմանէ՝ Սասանականին աւէ զթագաւորութիւն...: Իսկ գազանն երրորդ, իբրև զինձ և զորք թեք թռչնոց ի վերայ նորա և զորք գլուխ գազանին՝ զհիւսիսային աւէ զթագաւորութիւն՝ Գոգ և Մագոգ...

Խակ գազանն շորորդդ, ահեղ և զարմանալի, և ժանիք նորա երկաթիք, և մագիլք նորա պղնձիք, ուտէր և մանրէր և զմնացածան առ ոտն կոտորէր: Այս շորս յարուցեալ ի հարատոյ կողմանէ Իսմայէլեան Թագաւորութիւնն, որպէս հրեշտակապետն մեկնեաց եթէ՝ «գազանն շորորդդ Թագաւորութեանն կայցէ որ առավել իցէ քան զամենայն Թագաւորութիւնս, և կերիցէ զամենայն երկիր»....

Արաբական առաջին արշավանքների մասին պատմիչների վկայությունները հակասական են և իրար հետ չեն համաձայնում:

Արշավանքները տեղի են ունեցել երկու ուղղությամբ՝ Միջագետքից և ապա Ատրպատականից:

Արաբական առաջին արշավանքի մասին, որ տեղի է ունեցել Միջագետքից 640 թվի հոկտեմբերի 6-ին, ուրբաթ օրը, Սեբեոսը տալիս է հետևյալ վկայությունը՝

Սեբեոս, գլ. Լ. էջ 175—«Եւ ել զաւր ապականիչ յԱսորեստան կողմանէ ընդ ճանապարհս ձորոյ յաշխարհն Տարօնոյ, առին զնա և զԲղնունիս և զԱղիովիտ: Եվ ճանապարհ կալեալ և Բերկրոյ ձորն ընդ Որգսպոյ և ընդ Գոգովիտ՝ Թափեցան յԱյրարատ...: Հարին ասպատակաւ զամենայն երկիրն, և ժողովեալ զաւար և զգերութիւն բազում յոյժ...: Յաւուրն հինգերորդի դիմեցին ի վերայ քաղաքին... արկին մուկս շուրջանակի, մերժեցին ծխովն և նետաձգութեամբն զպահապանս պարսպին, և կանգնեալ սանդուխս՝ ելնի ի պարիսպն և անկեալ ի ներքս..... զարք թշնամացն սատակեցին սրով զբազմութիւն քաղաքին՝ ելին և բանակեցան ի նմին բանակատեղն. որ աւր ի էր տրէ մատոյն՝ յաւուր ուրբաթի:....»

Այդ նույն արշավանքի մասին Հովհան Մամիկոնյանը տալիս է հետևյալ վկայությունը՝

«Յովհաննու Մամիկոնեանի պատմութիւն Տարօնոյ», Վեներտիկ, 1832, էջ 57—58—«Եւ յետ ութ ամի եկն Արդուհիմ, քեռորդի Մահմետի բազում աղխիւ, ութևտասն հազար առնէձիոյ ընդ իւր բերեալ, խնդրէր հարկս ի Հայոց:... անցանէ ի Հարք և ի Բասեան, ի Վիրք և ի Զաւախս և ի Վանանդ. և առեալ հարկս, դառնայ ի Տաճկաստան»:

Նման վկայություն բերված է նաև

«Պատմութիւն սրբոյն Ներսիսի և գիւտ նշխարաց» պատմական երկի մեջ. տես՝ Սոփեբք Հայկականք, է, Վեներտիկ, էջ 43—44: Դվին քաղաքի գրավման մասին, որ տեղի է ունե-

ցել հետագա արշավանքների ժամանակ, արաբական պատմիչները տալիս են հետևյալ վկայությունը՝ Belâdhori, 200, Zâkût, II, 549—

Հ ա ն ձ ն մ ա ն գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը .

«Յանուն Աստուծոյ Ողորմածի. այս մի գրութիւնն է Հաբիր իբն Մասլամայի Դվինի բնակչութեանը՝ քրիստոնյա, մոգ և հրեա, ներկա և բացակա: Ես ապահովում եմ ձեր կյանքը, գույքը, ձեր եկեղեցիները, աղոթարանները և ձեր քաղաքի պարիսպները: Դուք ապահով եք: Մեր պարտականութիւնն է մեր խոսքը պահել, քանի որ դուք հավատարիմ կմնաք և կվճարեք գլխահարկ ու հողահարկ: Աստված վկա է. նրա վկայութիւնը բավական է: Կնքված իբն Մասլամայի կողմից»:

Արաբների երկրորդ արշավանքը տեղի էր ունեցել Ատրպատականի կողմից 642/643 թվերին, և երրորդ մեծ արշավանքը 650 թվի օգոստոսի 8-ին: Այդ արշավանքներից հետո, երբ նոքա վերադառնում էին ավարով և գերիներով, Թեոդորոս Ռշտունի հայ զորավարը հարձակվել է վերադարձող արաբների վրա, կոտորել է նրանց և ետ է վերցրել ավարը և գերիներին: Այնուհետև Թեոդորոս Ռշտունին համաձայնութեան է եկել արաբների հետ, իբրև նրանց կողմնակից, և արաբները պարտավորութիւն են վերցրել օգնութեան գալ հայերին բյուզանդացիների հարձակման դեպքում: Այդ համաձայնութեան մասին Սեբեոսը տալիս է հետևյալ վկայութիւնը՝

Սեբեոս, ԼԵ, էջ 224—«Արդ՝ խաւսէր ընդ նոսա իշխանն Իսմայէլի և ասէր. «Այս լիցի ուխտ հաշտութեան իմոյ ընդ իս և ընդ ձեզ, որչափ ամաց և դուք կամիջիք. և ոչ առնում ի ձեռք սակ զերեւամ մի. ապա յայնժամ տաջիք երդմամբ, որչափ և դուք կամիջիք, և հեծեալ կալէք յաշխարհս ժծ հազար: Եւ հաց յաշխարհէն տուք, և ես ի սակն արքունի անգարեմ, և զհեծեալսն յԱսորիս ոչ խնդրեմ. բայց այլուր և հրամայեմ, պատրաստ լիցին ի գործ. և ոչ արձակեմ ի բերդորայն ամիրայս, և ոչ տաճիկ սպա՝ ի բազմաց մինչև ցմի հեծեալ: Թըշնամի մի՛ մտցէ ի Հայս, և եթէ գայ Հոռոմ ի վերայ ձեր՝ արձակեմ ձեզ զաւրս յաւգնականութիւն որչափ և դուք կամիջիք: Եվ երդնում ի մեծն Աստուած՝ եթէ ոչ ստեմ»:

654 թվին Բյուզանդիայի կայսր Կոստանդինը մտել էր Հայաստան և գրավել էր Կարինը, Տայքը, Սպերը և մի շարք այլ շրջաններ, որոնց նախարարների մի մասը հնազանդել էին: Թեոդորոս

իշտունին, վրացիք, Աղվանքը և Սյունիքը կողմնակից էին արաբ-
ներին: 655 թվին, Կոստանդին կայսեր վերադառնալուց հետո Թեո-
փորոս Ռշտունին, ստանալով արաբներից օգնութիւն, վերագրա-
վում է երկիրը և բյուզանդացիներին հալածում ու առնում է Տրա-
պիզոնը, որից հետո Մուսվիան տալիս է նրան երկրի իշխանու-
թիւնը:

Սեբեոս, լե. էջ 233—«Իշխանութիւն ետ նմա զՀայս և
զՎիրս, զԱղուանս և զՍիւնիս, մինչև ցԿապկոհ և ցՊարհակն
Ճորայ»:

Ինչպես վկայում են հայ պատմիչները, արաբները Հայաստա-
նում իրենց հաստատվելու առաջին շրջանում դեպի հայերը ունեցել
են բարյացակամ վերաբերմունք:

Ղևոնդ, գլ. Դ, 14[Ս. ՊԲ. 1887]—«Իսկ յերկրորդում ամի
իշխանութեանն [662 թ.] Մուսվիա կոչէ զԳրիգոր և զՍմբատ,
որ էին պատանդք ի դրանն արքունի. և տայր Գրիգորի զպա-
թիւ իշխանութեանսն Հայոց [662—685]. և առաքէ զնոսա բա-
ղում մեծարանօք յաշխարհս Հայոց»:

Ասողիկ, գլ. Դ, էջ 122—«Եւ Մաւիա զԳրիգոր՝ իշխան
հաստատեաց Հայոց և Վրաց»:

Ղևոնդ, գլ. Դ, էջ 15—«Իսկ Գրիգոր իշխան Հայոց յաւուրս
իւրոյ իշխանութեան խաղաղացոյց զաշխարհս Հայոց յամե-
նայն հինից և յարձակմանց»:

Գրիգորի իշխանութեան օրով Հայաստանում ստեղծված խա-
ղաղութիւնը խանգարվեց խազարների արշավանքի պատճառով:
Ինչպես վկայում է

Ղևոնդը, գլ. Դ, էջ 16—«Տիրեցին ի վերայ աշխարհիս Հա-
յոց հյուսիսային ազգն, որ ասին խազիրք, և սպանին ի պա-
տերազմին զիշխանն Գրիգոր և զբազումս ի նախարարացն և
զիշխանսն Վրաց և Աղուանից..... առեալ զաւար և զգերու-
թիւն՝ զնացին յաշխարհն իւրեանց»:

Գրիգորի մահվանից հետո Բյուզանդիայի Յուստինիանոս II
կայսրը [685—695] իր Թագավորութեան սկզբում ուղեցել է նվաճել
հայերին: Ինչպես վկայում է Թեոփանեսը, հայերը տվել են հետևյալ
պատասխանը՝

«Այս քանի անգամ է, որ հնազանդեցանք ձեզ, և չգտանք
օգնութիւն ձեզանից մեր նեղութեան մեջ. այլ, զլիաժողովապես,
զրկանք ու լլկանք, եթե այժմ ևս մտնենք ձեր իշխանութեան
ներքո, դարձալ մատնվելու ենք սրի ու գերութեան օտար ազ-
գերի կողմից: Եվ երբ ձեռք քաշեք մեզանից, ինչպես արել եք

և ուրիշ անգամներ, ո՞րտեղից մենք օգնութիւն ստանանք։
Ուստի ազաշում ենք ձեզ, թույլ տվեք, որ մնանք մեր այս վի-
ճակում»։

Հայերի հիշված դիմումին Բյուզանդիայի կողմից ձեռնարկված
ևն եղել պատժիչ գործողութիւններ, որի մասին Ղևոնդը տալիս է
հետևյալ վկայութիւնը՝

Ղևոնդ, գլ. Ե, էջ 17—«Եւ յերկրորդում ամի թագաւորու-
թեանն Յոսատիանոսի կայսեր [686 թ.] և յիշխանութեանն
Աշոտի պատրիկ առաքէ զօր բազում ի վերայ աշխարհիս Հա-
յոց, որք եկեալ աներեցին զաշխարհս աւարառութեամբ և բա-
զում գեղեցկահարմար շինուածս հրձիգ արարին յաւեր դար-
ձուցանելով, և ինքեանք դառնային յաշխարհն իւրեանց»։

Ասողիկ, էջ 100—«Հրով և գերութեամբ քանդեցին գա-
ւառս ին և ԸՌ երդ գերեալ վաճառեցին»։

Համաձայն Ղևոնդի վկայութեան, հենց նույն ժամանակը, երբ
Բյուզանդացիք ավերում էին հայկական շրջանները՝ գլ. Դ, էջ 15—
«Ի յերկրորդում ամի իշխանութեան նորա [Աբդու-Մելիքի, 686 թ.] եղև
խառնակումն սաստիկ ի մէջ Տաճկաց և պատերազմ»։

Միաժամանակ Ղևոնդը վկայում է, որ տեղի է ունեցել հայերի
ապստամբութիւն՝

Ղևոնդ, գլ. Դ, 15—«Եւ ի ժամանակի պատերազմին, որ
ի մէջ Տաճկաց՝ դադարեցին ի հարկատուութենէ նոցա Հայք,
վիրք, Աղուանք... Եւ եղեն աւուրք ապստամբութեան նոցա
ամբ Գ»։

Արաբական պատմիչները՝ Բելազորին, Յակուբին և Իրն ալ-
Աթիրը Բյուզանդացիների հաջողութիւնները վերագրում են հայերի
ապստամբութեանը։

692/93 թվերին բյուզանդացիները Փոքր Ասիայում Սեբաստո-
պոլսի մոտ պարտութիւն են կրում արաբներից և Հայաստանը նո-
րից ամբողջութեամբ ընկնում է արաբների ձեռքը։ Սմբատ Բագրա-
տունին և հայ նախարարները ընդունում են արաբների իշխանու-
թիւնը և կռվում բյուզանդացիների դեմ։ Սակայն արաբները վստա-
հութիւն չունենին հայ նախարարութիւնների հանդեպ։ Նրանք վա-
րում են նոր քաղաքականութիւն՝ աշխատում են նախարարներին
ձնշել, խստացնում են իրենց վերաբերմունքը և ավերածութիւններ
են կատարում Հայաստանում։ Կաթողիկոսին, Սմբատ Բագրատու-
նուն և նախարարներից շատերին գերում և տանում են Դամասկոս։
Ինչպես վկայում է Հովհաննէս Կաթողիկոսը՝ «մարտ ընդ ամրոցս,
աւերումն»։

Սմբատ Բագրատունին Դամասկոսից փախչում է. նախարարները ապստամբում են արաբների դեմ. տեղի են ունենում կռիվներ արաբների հետ բյուզանդական զորքի օգնությամբ և 705 թվին՝ հայերի և բյուզանդացիների պարտությունից հետո, Վլիթ խալիֆի [705—715] կարգադրությամբ Հայաստան է գալիս Հեղմ արաբական զորավարը նախարարական տոհմերի ընտանիքների վրա՝ կողոպտում, արաբները հարձակվում են նրանց ընտանիքների վրա՝ կողոպտում, կոտորում և գերի են տանում:

Ղևոնդ, գլ. Ժ, էջ 35—«Յայնմ ժամանակի թափուր եղեալ աշխարհս Հայոց ի տոհմէ նախարարաց՝ մատնէին որպէս զոչխարս ի մէջ գալլոց: Եվ թշնամեացն ամենօրինակ շարեաց յարձակեալ ի վերայ՝ յանհուն աղէտս վտանգի պահէին՝ զքնակիչս աշխարհիս Հայոց»:

Այս պատժիչ գործողություններից հետո Վլիթն ուղարկում է Հայաստան Աբդլ-Ազիզին մեղմացրած ծրագրով, և ինչպես վկայում է Ղևոնդը.

գլ. Ժ, էջ 35—«Գրէր հրովարտակ առ նախարարս Հայոց, և հաւանեցուցանէր զնոսա դառնալ յիւրեանցական աշխարհս. և տայր նոցա գիր երգմամբ շափ ըստ սովորութեանն իւրեանց»:

Փախած հայերը վերադառնում և վերաշինում են Դվինը. Համաձայն Ղևոնդի վկայության, գլ. Ժ, էջ 36—«Շինէր վերստին զքաղաքն Դուին հզօրագուն և ընդարձակագոյն մեծութեամբ, քան զառաջինն»:

Այնուհետև Օմար խալիֆը ևս [717—720 թ.] ունեցել է բարյացակամ և մեղմ վերաբերմունք գեպի հայերը և, ինչպես վկայում է Ղևոնդը,

գլ. ԺԳ, էջ 42—«Զաս ասեն ազնուականագոյն քան զամենայն արս ազգատոհմին իւրոյ: Սա արար դարձ գերութեանն, զոր գերեաց Մահմետ յաշխարհէս Հայոց..... և խաղաղացոյց զաշխարհս, որ ընդ իւրով իշխանութեամբ»:

Օմարի ժամանակ տեղի է ունեցել՝

1. Հաշիջի կարգադրության վերացումը, որով նորադարձ մահմեդականները պետք է վճարեին դիսահարկ.

2. Հողերի նոր գնումների և անշարժ գույք ձեռք բերելու արգելում.

3. Խարաջի պակասեցում մահմեդականների անշարժ գույքից.

4. Ապօրինի տուրքերի վերադարձը:

Օմարի քաղաքականութեան հետեանքը եղել է խալիֆատի ֆինանսական դրութեան քայքայումը:

Օմարից հետո, Հեշմ խալիֆի ժամանակ [724—743] խալիֆատի ֆինանսական քաղաքականութիւնը փոխվում է, ինչպես վկայում է Ղևոնդը՝

գլ. Ժէ, էջ 100—«Եւ սա յառաջնում ամի իշխանութեան իւրոյ [725 թ.] խորհուրդ վատ ի մէջ առեալ՝ առաքէր զոմն զորավար, որում անուն էր Հերթ՝ աշխարհագիր առնել ընդ աշխարհս Հայոց վասն ծանրացուցանելոյ զանուր լծոյ ծառայութեան հարկատրութեան ազգի ազգի շարեօք, որպէս թէ դժուարելով ընդ բարեմտութիւնն Օմարայ, եթէ անիրաւութեամբ ծախեաց զմթերս գաճձուցն, զորս համբարեալ էր իշխանացն, որ յառաջ քան զնա: Եւ բազում վտանգ հասուցանէր աշխարհիս, մինչ զի ամենեցուն հառաչել ի վերայ անհանգիստ նեղութեանցն, յորմէ ոչ գոյր ապրել ումեք յանհնարին վտանգիցն: Եւ յայնմհետէ առաւել ծանրացաւ ձեռն նորա ի վերայ աշխարհիս Հայոց»:

Մովսէս Կաղանկատվացի, էջ 368—«ՄԱմուն [725 թ.] մահ անասնոց եղև, և ի ձմերան աշխարհագիրն Հերթի, որ էարկ զմարդ և զանասուն և զսահմանս երկրի ընդ հարկաւ անթիւ ծառայութեան»:

Ասողիկը ևս վկայում է, որ 725 թվի աշխարհագրից հետո՝ Բ. գլ. Դ, էջ 128—«Սա [Հեշմը] ծանրացոյց զսակ հարկի աշխարհիս Հայոց»:

Հարկերի ավելացումը որոշ չափով տեղի էր ունեցել դեռևս 662 թվին: Համաձայն Ասողիկի վկայութեան՝ Բ, գլ. Դ, էջ 128—«Գրեն հրովարտակ ի Հայս՝ հարկել նոցա. և յանձն առին իշխանքն, նախարարքն և կաթողիկոսն ներսէս Շ դահեկան յամենայն ամի հատուցանել»:

Մինչդեռ, ինչպես վկայում է Սամուել Անեցին, արաբների տիրապետութեան սկզբնական շրջանում հարկերը եղել են համեմատաբար շատ փոքր.

Սամուել Անեցի, էջ 82—«մուրհակ աշխարհիս Հայոց. յամենայն տանէ — Դ դրամ, Գ մոթ խորբան, ձիատօպրակ մի և պարան մի մաղէ. և ձեռնարար մի իսկ ի քահանայից և յազատաց և ի հեծելոց ոչ հրամայեաց առնուլ»:

Ինչպես վկայում են հայ պատմիչները, 725 թվի աշխարհագրից հետո երկրում ստեղծվել էր ծանր դրութիւն, որի հետեանքով 747—

750 թվերին բռնկվեց ապստամբական շարժում, Գրիգոր Մամիկոնյանի առաջնորդությամբ:

Աշոտ Բագրատունին եղել է դեմ և ասել է՝

Ղևոնդ, գլ. ԻԶ, 122—«Ո՛վ եղբարք, ոչ տեսանեմ խոհական մտաց զգործ անզգայութեանդ, այլ անուղղայ խորհուրդ և բանս տարապարտս. քանզի ահա նուազունք են զօրքս մեր ի մէջ բռնութեանն իսմայէլի, և ոչ կարեմք զդէմ անել զօրաց նոցա, և ոչ զերկիր մեր հանել ի բերանոյ վիշապացն: Եւ միայն աշխատութիւն և վտանգ հասուցանեմք ի մտածմունս մեր. այլ եթէ կամեսցիք ընդունել զխրատ իմ՝ ոչ արասցուք զբանդ զայգ, և հարկեսցուք նոցա որպէս ցարդ ևս, և կալցուք զստացուածս մեր, զայգիս, զանտառս և զանդաստանս՝ մերս: Աշոտ Բագրատունու հիշված խորհրդի պատասխանը եղել է հետևյալը՝

Ղևոնդ, ԻԶ, 122—«Եթէ ոչ միաբանեսցիս ի խորհուրդս մեր՝ ոչ մնասցէ առ քեզ և ոչ մի ոք ի զօրաց քոց. չկարեմք ժուժկալել տազնապիս յորում կայ երկիրս Հայոց»:

Այնուհետև ապստամբ նախարարները կնքում են ազաշինք տւիտիս. սակայն այդ դաշինքը մի տարի էլ չտևեց: Աշոտ Բագրատունին և նախարարների մի մասը բաժանվում են ապստամբներից և գալիս են Բագրեանդ [ի գիւղն Հազր] ու կամենում են միաբանել շրջի որդիսն իսմայէլիս:

Գրիգոր Մամիկոնյանը հետամուտ է լինում նրանց՝ ապաշարէր զկայս հանգստեան նորա, գիտացեալ զերկմտութիւն զօրաց նորա, զի ոչ եկին ի թիկունս օգնականութեանս:

Ապստամբները Աշոտ Բագրատունուն կուրացնում են: Գրիգորը Կարինում շուտով վախճանվում է. իսկ նրա փոխարեն Քալցուցին իշխան զՄուշեղ սակաւ ինչ ժամանակս» [750 թ.]:

750 թվին խալիֆատում տեղի են ունեցել մեծ փոփոխություններ: Սիրիայի Օմայան դինաստիան ընկնում է և իշխանությունը անցնում է իրաքի արաբների Աբասյան դինաստիային: Փոխվում է նաև խալիֆատի քաղաքական գիծը: Աբասյանները [750—1258 թ.] ծանրացնում են հարկերը, որի հետևանքով VIII դարի երկրորդ կիսում տեղի են ունենում պարբերաբար կրկնվող ապստամբություններ:

Աբասյան Արուվաբաս Աբդլա խալիֆը [750—754 թ.] Հայաստան է ուղարկում իր եղբորը Աբու Ջաֆար Աբդլային [Ալ-Մանսուր՝ 754—775], որը, ինչպես վկայում են հայ պատմիչները, դրել էր երկիրը ծանր ու դաժան պայմանների մեջ: Ինչպես պատմում է

Ղևոնդը, գլ. ԻԸ, էջ 127—«Բազում վշտօք և նեղութեամբ վտանգէր զամենեւին և հասուցանէր ի չքաւորութիւն տնանկութեան, մինչև պահանջել հարկս ի մեռելոցն, Եւ զամենայն բազմութիւն որբոց և այրեաց շարալլուկ տառապեցուցանէր. վտանգէր զբահանայս և զպաշտօնեայս աստուածային խորանին՝ ի յայտ ածել զանուանս վախճանելոցն և զընտանիս նոցուն: Խոշտանգէր և զբնակիչս աշխարհիս բռնագոյն և դառն հարկապահանջութեամբ, առնուլ ըստ գլխոյ բազում զուգէս արծաթոց, և դնել կնիք և կապարեայ յամենեցուն պարանոցս»:

Մխիթար Այրիվանեցի—«Աբդլայ գերեք տարուայ մեռածին հարկն ի կենդանւոյն խնդրէր բռնութեամբ. և հատաւ յամենայն աշխարհէ ոսկի և արծաթ»:

Ասողիկ, գլ. Դ, էջ 133—«Այլ յիշխանութեանն Աբդլայի միւսոյ և ի հրամանատարութեան Իզիտի յոյժ ծանրացաւ անուր լծոյ հարկապահանջութեան երկրիս Հայոց. զի ոչ ըստ երդ պահանջումն, այլ ըստ գլուխս արանցն. մինչև նախարարքն և մեծամեծքն ի չքատրութիւն աղքատութեան անկանա»:

Ղևոնդ, գլ. ԻԸ, էջ 128 —«Հատաւ սակ արծաթոյն, որ գայր ամի ամի յարքունուտ զօրացն Հայոց: Եվ զհամար հեծելոցն պահանջէին յիշխանացն. և հարկ լինէր ի տանց իւրեանց հանդերձել զգունդս զօրացն և զընթացսն զրաւաստակ աշխատութեանցն ողջ պահել»:

Ղևոնդ, գլ. ԼԳ, էջ 135—«Ծանրացաւ անուր լծոյ հարկապահանջութիւն...: Վախճանեաց զգիւտ արծաթոյի յերկրէս, և ամենայն ոք տալով զպաճարանս ընչից իւրեանց՝ ոչ գտանէին ղգինս փրկանաց անձին իւրեանց. և զար կտտանօք, գելարանօք և կախաղանօք. և դառն տանջանօք կեղէին զկեանս մարդկան: Յորմէ փախստեայ եղեալ բազումք. յայրս և ի փապարս երկրի զօղեալ թագչէին. և ոմանք ձիւնահեղձ և գետավէժ լինէին վասն անտանելի աղետիցն»:

Միքայել Ասորի—«Զեզն և զէջ դրամի միոյ վաճառէին և զուղայն հինգ դրամի տային պահանջողացն»:

Նախարարական տոհմերը տալիս էին ընծա՝ ձի, ջորի, պատվական հանդերձներ, ոսկի, արծաթ—«զի կարասցեն լնուլ զբերան վիշապին, որ յարձակեալ էր ապականել զերկիրս»:

Հարկ չվճարողներին շարչարում էին, տանջում և նույնիսկ կախում: Ստեղծված ծանր դրութեան պատճառով ժողովուրդը և նախարարներին ոմանք գաղթում էին և գնում Բյուզանդիա: 752 թվից

հետո Կոստանդին V կայսեր զորքերի հետ գաղթել էին Կարնո շրջանի հայերից շատերը:

«էին ոմանք ի նախարարացն Հայոց, որք մերժեալ լին զժառանգութիւն իւրեանց և փախստեայ անկան յաշխարհն Յունաց, ապաւինեալն առ կայսրն Կոստանդին»:

Հայաստանի ավագանու, Սահակ Բագրատունու և Տրդատ կաթողիկոսի [741—764] գանգատները մնում էին անհետեանք: Երկրի դրությունը հետզհետեւ ավելի վատանում էր:

Ըստ Ղևոնդի վկայության՝ զլ. ԼԳ, էջ 137—«Եւ ևս առ այսոքիւք արհամարհութիւնք հայրապետաց, այպանութիւնք եպիսկոպոսաց, գան և խոշտանգանք քահանայից, իշխանաց և նախարարաց քարշանք և քայրայութիւնք... Ռամիկ բաղմութիւն մարդկան խոշտանգէին ազգի ազգի տանջանօք... Փոկահարութեամբ լլկէին վասն հարկաւաճանջութեան»:

Արաբական խալիֆատի կողմից ձեռնարկված հալածանքների հետեանքը եղել է 774 թվին բռնկված հայերի ապստամբությունը Արտավազդ Մամիկոնյանի ձեռնեղծությունը, որին մասնակից են եղել նաև ռամիկները:

Ղևոնդ, էջ 137—138—«Իբրև տեսին նախարարք Հայոց զվտանգն տարակուսանացն հասեալ ի վերայ ինքեանց՝ եղին զոգի ի ձեռին իւրեանց և ձեռնամուխ եղեն յիրս, զոր ոչ կարէին վճարել, վասնզի նուազունք էին: Այլ սակայն լաւ համարեալ զմահ քաջութեամբ քան զկեանս վտանգաւոր՝ ձեռնամուխ եղեն յիրս ապստամբութեան»:

Այնուհետև Արտավազդը գնում է Դվին և սպառազինում զորքերը, բարեկամ ցույց տալով իրեն խամայելական զորքերին: Սպանում է Կումայրիում [Շիրակում] «զհրամանատար հարկին» և ձեռքից առնում հավաքած հարկերը: Գնում է իր ընտանիքով Վրաստանի կողմերը և աթոռեղից ստիպված է լինում փախչել Եգիպտոս երկիրը: Արաբները կարգադրում են ավելի ևս խիստ միջոցների դիմել և բռնությունք հավաքել հարկերը:

Արտավազդից հետո ապստամբության գլուխ է անցնում Մուշեղ Մամիկոնյանը, որին միանում են մի քանի ուրիշ նախարարներ:

Ապստամբները Բագրեանդում սպանում են հարկահավաքներին՝

Ղևոնդ, զլ. ԼԳ, էջ 139 — «Լեցուցանէր զպահանջումն հարկին յերկրէս»..... «Ժողովէին առ նա յշտատեսք և վտանգեալք հոգովս»:

Ապստամբների դեմ արաբները ուղարկել էին պատժիչ զորք:

սակայն Մուշեղը Բագավանում նրանց ևս հաղթում և հալածում է մինչև Առուճ, որտեղ սպանվում է նրանց զորավարը:

Այս հաղթությունից հետո բռնկում է ընդհանուր ապստամբություն: Ապստամբությունը դեմ է եղել Սահակ Բագրատունու որդին՝ Աշոտը, որը ասել է՝

Ղևոնդ, գլ. ԼԴ, էջ 142—143 — «Մանկունք էք և կրտսերագոյնք հասակաւ. և գիտեմ եթէ ոչ կարէք զդէմ ունել զօրութեան բազմագլուխ վիշապին, զի հօր է զօրութիւն նորա և անթիւ բազմութիւն ընդ ձեռամբ նորա, և անշափ պատրաստութիւն զինուոց ի գանձս նորա և ամենայն թագաւորութիւնք որք հակառակ կացին իշխանութեան նորա՝ փշրեցան որպէս զանօթ բրտի. զի թէ Հռովմայեցւոց թագաւորութիւնն ոչ կարաց համբառնալ զձեռս ի վեր, այլ սարսեալ դողաց յերեսաց նորա»..... «Կամ հնազանդեցէք, կամ փախէք»:

Աշոտի խորհուրդը ապստամբները համարեցին «խրատ նենգութեան» և Վասպուրականի ապստամբները որոշեցին հարձակվել Արճնշի վրա, որը արաբական կենտրոնատեղերից մեկն էր: Սակայն խալիֆատի կարգադրությամբ Հայաստան ուղարկված և դարան մտած արաբական զորքերը Ամր զորավարի առաջնորդությամբ գրոհեցին ապստամբների վրա և պարտության մատնեցին [775 թ.]:

Ղևոնդ, գլ. ԼԴ, էջ 147 — «Կոտորեցին զմեծ մասն հետեակ զօրոմ, որ յաշխարհաբնակ մարդկանէն էին. քանզի էին մերկք և առանց զինուոց և անհմուտք պատերազմի»:

Կարինը պաշարող ապստամբները ստանալով Արճնշի մոտ տեղի ունեցած ապստամբների պարտության լուրը, ստիպված են լինում վերացնել քաղաքի պաշարումը, որը արդեն անձնատուր էր լինելու սովի պատճառով և, ինչպես վկայում է Ղևոնդը, գլ. ԼԴ, էջ 148 — «Թէպէտ կարող էին մեկնել ի կողմն Յունաց..... սակայն յաւ համարեցան զմահ անձանց, քան զկորուստ աշխարհիս»...

Նոքա՝ թվով 5000 հոգի գալիս են Բագրևանդ, անցնում են Արածանի գետը և ասում էին՝ Ղևոնդ, ԼԴ, էջ 149 — «Քաջութեամբ մեռցուք ի վերայ աշխարհիս մեր և ի վերայ ազգիս՝ և մի տեսցեն աչք մեր կոխան ոտից լեալ պղծալից արանց»:

Տեղի է ունենում խալիֆատի զորքերի հետ անհավասար կռիվ, որտեղ հայերը ծանր պարտություն են կրում: Զոհվում են նախարարները և ռամիկներից 3000 հոգի:

Այնուհետև տեղի են ունենում հարձակումներ երկրի զանազան կողմերում: Խաչերի ողնչացում, Եկեղեցիների կողոպտում: Հարձակում ամրոցների վրա:

«Տային գիր հրդման և իջեցուցանէին»:

775 թվին խալիֆատում Աբու Ջաֆար Աբդլա ալ Մանսուրից հետո գահ է բարձրանում Մահադի [Մահդի՝ 775—785 թ.] խալիֆը, որը, ինչպես վկայում է

Ղևոնդը՝ Լէ, էջ 154—155 «էր ազնուական և լաւագոյն բարուք...: Երբ զամենայն տունս գանձուց և բաշխեաց պարգևս զօրաց իւրոց... և եղև առատութիւն երկրի, և գիւտ արծաթոյ ընդարձակեցաւ. և բնակչաց երկրի անդորրութիւն եղև ի հարկապահանջ բռնութենէն. զի թէպէտ և զանուր լծոյ հարկին ծանրացոյց, սակայն վասն գիւտի արծաթոյն հանգեաւ երկիրս... լերինք արծաթոյ յայտնեցան յաշխարհիս Հայոց առ ի հանել ի նոցունց խանութս արծաթոյ զտոյ ի պէտս մարգկանս»:

778 թվին Բյուզանդական զորքերը՝ Տաճատ, Վարազտիրոց, Գրիգորիոս և Արտավազդ հայ զորավարների առաջնորդությամբ գալիս են Հայաստան և Գերմանիկեի մոտ [Կոմագենեում] տեղի է ունենում արաբների դեմ մեծ ճակատամարտ, որտեղ արաբները ծանր պարտություն են կրում:

Տաճատը, որ հաղթական կռիվներ էր վարել բուլղարների դեմ, կայսրությունից ստանում է «պատիւ իշխանութեան ի վերայ Հայաստանի»:

Մահադիից հետո նրան հաջորդում է նրա որդին Մուսե խալիֆը [785—786 թ.]: Հայաստան է գալիս խազմը, իբրև արաբական զորքերի հրամանատար, որի մասին Ղևոնդը ասում է [զլ. Խ, 162]՝ «Արդարև ըստ անուան իւրոյ խազմարար և գոթխաձև»: խազմի ժամանակը հալածանքները Հայաստանում և Վրաստանում սաստկանում են: Դվինում նրան հանդիպում են նախարարներից մի քանիսը, որոնցից Մեհրուժան Արծրունին ընդունում է մահմեդական կրոնը, իսկ մյուսները բանտարկվում և գլխատվում են:

786 թվին խալիֆատի գահը բարձրանում է Մուսեի եղբայրը՝ Ահարոնը, Հարուն-ալ Ռաշիդը [786—809], որին հայ պատմիչները բնութագրում են իբրև ագահ և արծաթասեր:

Ատրպատականը, Հայաստանը, Վրաստանը և Աղվանքը ստանում է նրա եղբայրը՝ Ուլբեղլան, որը ինչպես վկայում է Կաղանկատվացին՝ «նեղութիւն անշափ հասույց աշխարհի և վասն այնր բազում գաւառի Հայոց փախեալ ի Հոռոմս»:

786 թվին տեղի է ունենում մահմեդական ցեղերի գաղթը Հայաստան: Միաժամանակ ծանրանում է տեղական բնակչության դրությունը»

Ղևոնդ, գլ. ԽԲ, էջ 168 — «Ոչ որ էր տէր ընչից իւրոց, այլ առհասարակ վարէին յաւարիս»:

Շնորհիվ ստեղծված ծանր դրութեան շատերն ինքնակամ թողնում էին իրենց ունեցվածքը և փախչում: Այսպես՝ 791 թվին տեղի է ունեցել 12000 հայերի գաղթը Շապուհ և Համամ Ամատունիների առաջնորդութեամբ:

Ինչպես Ղևոնդը վկայում է՝ գլ. ԽԲ, էջ 169 — «Իսկ կէսը ժողովրդեան, որը մնացին՝ առ սաստիկ կարօտութեան անձնատուրք եղեն ի ծառայութիւն ստրկի, փայտակոտորք և ջրաբերք»:

Հարուն ալ Ռաշիդի ժամանակը տեղի է ունեցել Հագարացիների արշավանքը Հայաստան. այդ արշավանքի մասին Հովհաննէս կաթողիկոսը տալիս է հետևյալ վկայութիւնը՝

«Յովհաննէս կաթողիկոսի Դրասխանակերտցոյ, Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ III — «Եւ վասնզի սպառնալու Հագարացիքն տիրեցին կալան զՀայաստանեայս և մեծամեծք աշխարհիս նուազեցան, և մնացեալք ղօղեալ դադարեալ կային ընդ լծով ծառայութեան նոցա. սակա այսորիկ իսկ յայսմ վայրի պակասեաց ի պատմութենէ աստի զրոյցք իշխանաց մերոց»...

Նախարարական Հայաստանը կործանվում էր, ռազմական ու ժի, գաղթի ու կոտորածների միջոցով ստանում էր սոսկալի հարվածներ, եկեղեցին կորցնում էր իր հարստութիւնները և ազդեցութիւնը, բնակչութիւնը խիստ պակասում էր և երկրում բնակչութիւն էր հաստատում մահմեդական գաղթականութիւնը: Նախարարական Հայաստանի կործանման ու այլասերման ահեղ այդ պրոցեսը, որ մեծ չափերով առաջ էր տարվում 775 թվի ապստամբութիւնից հետո, հետզհետեւ նախ է առնում սկսած IX դարի սկզբներից:

Նախարարական Հայաստանի քաղաքական այդ նոր իրադրութեան պատճառները եղել են՝

1. Գահակալական կռիւները խալիֆատում.
2. Մահմեդական ամիրաների ապստամբութիւնները Հայաստանում.
3. Պարսկական խմբավորումների ապստամբութիւնները խալիֆատի դեմ: Ինչպես վկայում է

Վարդան վարդապետը [էջ 77]՝

«Յայնմ ժամանակի աղմկեալ Իսմայէլի ընդ միմեանս, հանգչէր երկիրս Հայոց, և սկսան զօրանալ իշխանքն մեր յիւրաքանչիւր տեղիս»:

Կովոդ կողմերը դիմում էին և օգնութիւն խնդրում հայկական նախարարութիւններից, որոնց քաղաքական դրութիւնը այդ ներքին խռովութիւնների պատճառով հետզհետեւ նորից զորեղանում է:

Դեռեւ 792—793 թվերին Հարուն ալ-Ռաշիդի խալիֆայության օրով տեղի էր ունեցել Բայլաքանում [Փայտակարանում] և Պարթավում պարսիկ աղանդավորների ապստամբութիւնը Արու-Մուսիմի [Ատա ալ Մոսկանա] առաջնորդութեամբ: Ապստամբները պարտութեան էին մատնել Հայաստանի երեք կառավարիչներին, մինչև որ խալիֆատի զորքերին հաջողվել էր խեղդել ապստամբութիւնը:

809—813 թիւը, Հարուն ալ-Ռաշիդի մահվանից հետո, տեղի էին ունեցել գահակալական կռիւներ նրա որդիների մեջ: Այդ ներքին երկպառակութիւններից օգտվելով, 809 թվին ապստամբել էր Թիֆլիսի ամիրա Իսմայիլը [809—819]:

Այնուհետև խալիֆատի դեմ ապստամբել էին Մանազկերտի ամիրաները՝ Ջահապը և նրա հաջորդները՝ Արդել-Մելիքը [813—820] և Սեադան [820—830], Համաձայն Հովհաննես կաթողիկոսի վկայութեան՝ նրանք գրավել էին Հայաստանի մեծագույն մասը, և նպատակ էին դրել ամբողջ երկիրը՝ Վանա լճից մինչև Արաքս դետը անկախ դարձնել: Նրանք Հայաստանի իշխանութիւնը իրանցն էին համարում և կռիւներ են ունեցել արաբական կառավարիչների հետ:

813 թվին ապստամբել էին Դվինում հայերի օգնութեամբ կայսրիկները:

Նույն ժամանակները տեղի է ունեցիլ Եդեսիայի և Մարաշի ամիրա Նասրի [812—825] ապստամբութիւնը:

816 թվին արաբական իշխանութեան դեմ ապստամբել էր Հայաստանի կառավարիչ Հատիմը:

Իսկ 817 թվին տեղի ունեցավ պարսից աղանդավոր խուրամիտների ահեղ շարժումը Բաբելի առաջնորդութեամբ, որը ունեցել է աղատագրական և սոցիալական բնույթ: Ապստամբները նպատակ են ունեցել վերականգնել նախկին պարսկական տիրապետութիւնը և պահանջում էին գուլթի և ունեցվածքի հավասար բաշխում:

Ապստամբները գրավել էին Ատրպատականը, Փայտակարանը, Աղվանքը և Արեւելյան Հայաստանը: խալիֆատի զորքերը շարունակ պարտութիւն էին կրում: Միայն 833—834 թվերին, Համադանի մոտ Բաբելի կրած պարտութեանից հետո, խալիֆայութեանը հաջողվում է 835 թվին խեղդել ապստամբական այդ մեծ շարժումը. իսկ 836 թվին Ափշինը գրավում է Բաբելի մայրաքաղաք Պարթաւը և ավերում:

Այս ներքին խռովությունների և քաղաքական դրության փոփոխման հետևանքով հայ ազնվականությունը հետզհետե նորից սկսում է վերականգնել իր ուժերը: Հատկապես ուժեղանում են Բագրատունիները, որոնք 774 և 775 թվի ապստամբություններից հետո ապավինել էին Հայաստանի արևմտյան լեռնային շրջանները և օգնություն էին ստանում Բյուզանդիայից:

Մայր երկրում տեղի ունեցող երկպառակություններից ու կռիվներից օգտվում էին Բագրատունիները, բռնելով խալիֆատի կողմը և հետզհետե ընդարձակում էին իրենց երկրի սահմանները:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇԻՋԱՆԸ

Բագրատունյաց թագավորության առաջնակարգ նշանակությունը Հայոց պատմության մեջ, որ առանձնապես շեշտված է պատմական երկերում — սխալ է:

Բագրատունյաց թագավորության բնույթը եղել է՝

1. Թագավորական տիրոգոս, և ոչ իրական թագավորական իշխանություն.

2. իշխանությունը և իրավունքները եղել են նույնը, ինչպես և նախընթաց շրջանում.

3. պարտականությունները եղել են՝ հարկերի հավաքումը և զորքերի առաջնորդությունը.

4. ֆեոդալական անիշխանությունը մնում էր.

5. Արժույթիները և մյուս ականավոր նախարարությունները ևս ձգտում էին ձեռք բերել թագավորական տիրոգոս.

6. խալիֆայության և Բյուզանդական կայսրության քաղաքականությունը եղել է նպաստավոր ֆեոդալական անջատողականության և ոչ միացման.

7. որքան իշխաններ, նույնքան թագավորներ: Բագրատունիների ժամանակաշրջանում 7 անջատ իշխաններ հետզհետե ստացել են թագավորի տիրոգոս:

Բագրատունյաց ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքական կազմակերպությունը ֆրանսիական ականավոր գիտնական Լոռանը բնութագրում է հետևյալ կերպով՝

«Նախարարները եղել են ինքնիշխան, ինչպես և առաջ. հեղինակությունը եղել է անձնական և ոչ իրական: Նոքա շէին կարող տարածել իրենց իշխանությունը, Բյուզանդիայի և խալիֆատի դիմադրության պատճառով: Աշոտին 862 թվին տրվում է «իշխանաց իշխան»-ի տիրոգոս. բայց տիրոգոսը միայն

բավական չէր. Աշոտը ինքը պետք է իր հեղինակությունը հաստատեր և նախարարներին ենթարկեր իր իշխանությանը, որը խիստ դժվար էր: Հայաստանը կարող էր միանալ, բայց չմիացավ, Աշոտի զորքը քիչ էր խալիֆատի պաշտոնյաներից և տեղական ամիրաներից պաշտպանվելու համարձ:



Դեռևս 775 թվի ապստամբությունից հետո Վասակ Բագրատունիին փախել էր Բյուզանդիայի հարևան շրջանը՝ Կղարջք և այնտեղ հիմք էր դրել Արտանուշի Բագրատունյաց ճյուղին: Նրա որդին՝ Ատրնեբրսեհը և թոռը՝ Աշոտը գրավում են Արտահանը և մերձակատեղերը և ընդարձակում են իրենց տիրապետության սահմանները: Բյուզանդիայի գերիշխանության տակ, Հետզհետե Աշոտը զորեղանում է և ինչպես վկայում է Վարդան վարդապետը՝

«Տայր իշխանն իսմայէլի Աշոտի, որդույ Ատրնեբրսեհի, որդույ Վասակայ՝ գերկիրն Վրաց, որոյ երդեալ հնազանգեցուցանէ ինքեան. և կայսրն առաքէ նմա պատիւ կիրապաղատութեան» [810—833, ըստ Լոռանի]:

Նույն ժամանակաշրջանում զգալի չափով զորեղանում է, 775 թվի ապստամբության ժամանակ զոհված, Բագրատունի Սմբատ սպարապետի որդին՝ Աշոտ Մսակերը [806—825/6], որը գրավել և հաստատել էր իր իշխանությունը Հայաստանի հյուսիս-արևմտյան շրջաններում՝ Տայքում, Արշարունիքում, Շիրակում և Աշոցքում: 806 թվին նա Հարուն ալ-Ռաշիդից կարգվել էր Հայաստանի իշխան և այնուհետև հնարավորություն ստացավ ընդարձակելու իր երկիրը:

Աշոտ Մսակերը եղել է իր ժամանակվա հայ իշխաններից ամենից զորեղը, քաջը և ժողովրդականը: Նա հավաքում է բերում է իր շրջանը ցիր ու ցան եղած հայերին՝

Վարդան Վարդապետը վկայում է.— «Բողոք կալեալ Թգին Գնունեաց թափել նոցա յիսմայէլացուցն, որոյ երթեալ հազար արամբք յԱղիովիտ գաւառ, և առ ինքն գումարեալ զամենայն ազդն աղխին իւրեանց տանի բնակեցուցանէ ի Տայս»:

Աշոտ Մսակերի որդին Բագրատը, իբրև Տարոնի իշխան, 830 թվին ստացել էր «իշխանաց իշխանի» կոչում և նրա իշխանության տակ էին գտնվում՝ Տարոնը, Խոյթը, Սասունը:

Բագրատի եղբայրը՝ Սմբատ Աբլաբասը երեսուն տարի [826—855] եղել է մեծ սպարապետ: 850 թվին Բագրատունիների իշխանու-

Ֆյան տակ են եղել Մոկերը, Տարոնը, Սպերը, Արաքս և Կուր գետերի վերին հոսանքի շրջանները, Սյունիքը, Աղվանքի մի մասը:

Հայկական նախարարությունները նորից զորեղանալով և օգտւելով խալիֆատում տեղի ունեցող ներքին խռովություններից, հարեան մահմեդական ամիրայություններին հետեւելով, իրենք ևս գտնում էին հարկատու դրությունից ազատվել:

Մամուն խալիֆայի մահվանից հետո ապստամբել էին խալիֆայության զորքերը: Մամունի հաջորդ Մուտասիմ խալիֆը [833—842 թ.] կազմակերպում է վարձկան թուրք զորքեր, որոնց ապրուստի, հանդերձելու ու պահելու համար պահանջվում էին հսկայական գախքեր: Պաշտոնները ծախում էին փողով: Մախբերը ծածկելու համար ժողովրդին կողոպտում էին: Խալիֆ ալ-Վաթիկի [842—847] ժամանակ Հայաստանը նորից գտնվում էր խառնակ դրության մեջ: 847 թվին խալիֆայության գահն է բարձրանում Մութավաքիլը [Ջափրը՝ 847—862], որը միջոցներ է ձեռնարկում խալիֆայության խախտված դրությունը ամրապնդել և սանձահարել ուժեղացող նախարարություններին: 849 թվին Մութավաքիլը Հայաստան է ուղարկում Աբուսեթ ռուստիկանին մեծ զորքով: Բագրատը և Աշոտ Արծրունին ուղարկում են պահանջվող հարկերը և դիմում են նրան, որ նա Հայաստան չմտնի և հեռանա:

850 թվին Արզնի ամիրա՝ Մուսեն, իբրև հարկահավաք, մտնում է Տարոն: Բագրատը և Աշոտը միացյալ ուժերով դիմադրում ու դուրս են բշում նրան: Մութավաքիլը կատաղած Հայաստան է ուղարկում Աբուսեթի որդուն՝ Յուսուֆին, որը հրալիլում է իր մոտ Բագրատին, խոստանալով երկրի իշխանությունը նրան հանձնել: Բագրատը գնում է, և Յուսուֆը նրան շղթայված ուղարկում է Սամառա, Մութավաքիլի աթոռանիստը:

Այնուհետև, ինչպես վկայում է Թովմա Արծրունին, գլ. է՝

«Յուսուֆի [Յուսուֆ] զօրավարն Տաճկաց մնայր անցանել ձմերանն, զի ելցէ ի վերայ աշխարհիս Հայոց սրով և գերութեամբ և մեծամեծ հարուածովք և մեծամեծս աշխարհիս խաղացուցանէ ի գերութիւն և կացուցէ ի վերայ աշխարհիս գործավարս, որ ըստ իւրեանց հրամանի զկարգս աշխարհիս յօրինեցեն, և իւրեանք հանդերձ ընտանեօք իւրեանց նստցին յամուրս Հայոց»:

Այս իրադարձությունների հետևանքով բռնկում է ուժեղ ազապագրական շարժում: Ապստամբում է Սասունի ժողովուրդը Հովնան Խութեցու առաջնորդությամբ՝

Թովմա Արծրունի, գլ. է, էջ 119—120—«Յայնժամ քնա-
կիչք լերինն իբրև տեսին, թէ վարեցաւ իշխանն ի գերութիւն.
ինքեանք պատրաստեալ են զնոյն փարշմանն կրել, զոր դաշ-
տայինքն կրեցին՝ հասին միաբան բազմութիւնքն մեկնախ-
զէնքն խուփայ... և եկեալ ի վերայ քաղաքին պաշարեն զնա,
և զգորսն մատնեն ի սատակումն սրոյ, և զպատանդսն Վա-
պուրականի հանն յարգեալանէն, և գերեացն ընդարձակեն,
զկապուտ նոցա բաժանեն յինքեանս»:

852 թվին Հայաստան է ուղարկվում Բուղան 200.000 զորքով
վրեժ առնելու, ագատագործը ոչնչացնելու և նախարարներին շղթա-
յակապ տանելու Սամարա:

Բուղան սասունցիներին անողոք կերպով պատժում է, գրավում
է Տարոնը, Վասպուրականը, Արաքսի և Կուր գետի դաշտային մա-
սերը, Աղվանքը, Վրաստանը: Նախարարական տոհմերից շատերը
ապավինում են ամուր տեղեր: Ամենուրեք ավերածութիւններ է կա-
տարում, աղատներին կոտորում: Բուղային օգնում են նաև երկրում
բնակչութիւն հաստատած մահմեդականները: 855/56 թվին Բուղան
վերադառնում է Սամարա և իր հետ տանում բանտարկված նախա-
րարներին ու գերի բռնված ազնվականներին:

Մութավաքիլի ժամանակ սաստկանում են նաև կրոնական հա-
լածանքները: Յակուբիի վկայությամբ Ջափըր [Մութավաքիլը] գահ
բարձրանալուց հետո հրաման է տվել՝ որ

«Ոչ մի քրիստոնյա կամ հրեա չպետք է պետական պաշ-
տոն վարեն: Նոր եկեղեցիները և տաճարները պետք է քանդ-
վին և նրանք իրավունք չպիտի ունենան վերաշինելու»:

Արգելվում են վճարը ղուրանի մասին. հալածվում են
ազատամիտ աստվածաբանները, շիաները և հերետիկոսները:

Սամարայում 991 ազնվականներ ստիպված ընդունում են մահ-
մեդական կրոնը:

858 թվին տեղի է ունեցել Դվինի մեծ երկրաշարժը, որի մասին
Հովհաննես կաթողիկոսը տալիս է հետևյալ վկայութիւնը [էջ 133]

«Յամս Զաքարիայի կաթողիկոսի յետ է ամի գերութեան
Հայոց... Ահագին իմն շարժմանց եղելոց ի Դուին քաղա-
քի բազում սասանութիւնս և փլուզմունս տանց և պարսպաց և
ապարանից լինէր, և առհասարակ քանդումն և դղրդումն առ-
նոյր քաղաքն, այլ և մահ յուղից մարդկան ի վերայ հասա-
նէր և այնպէս ահագին իմն լինէր վտանգ տագնապին, մինչե
ոչ որ մնալ ընդ յարկաւ, այլ ի հրապարակս և ի փողոցս ելեալ
հառաչէին: Իսկ ցրտաշունչ սառնամանիքն ձմեռայնոյն առա-

ւել բերէր զլքացումն հեծութեան, զի հոլովք մսեալք և ծայրատեալք լինէին»:

Մուկավաքիլի մահւանից հետո [861 թ.] խալիֆատում նորից առաջ են գալիս գահակալական կռիւներ ու ներքին խռովություններ և ստեղծվում են նպաստավոր պայմաններ հայ նախարարութեան դիրքերի վերականգնման համար: 862 թվից հետո Սամարայից վերադառնում են կենդանի մնացած նախարարները և վերանաստատվում են իրենց տոհմական կալվածքներում:

862 թվին Աշոտ Բագրատունին [Սմբատ Բագրատունու որդին], որ Բուղայի արշավանքների ժամանակը հավատարիմ էր մնացել խալիֆայութեանը, ստանում է «իշխանաց իշխան»-ի կոչում:

Ինչպէս վկայում է Բուղայա նրժրունին

«Հաւատացեալ էր վերակացութիւն աշխարհիս Հայոց Աշոտի, որ իշխանաց իշխան՝ ձեռն ի գործ արկեալ նուաճել զիշխանս Հայոց, զՎրաց և զԱղուանից, որ եղև իսկ»:

Աշոտ Բագրատունին աշխատում է թե զենքի ուժով և թե դիւանագիտական խաղաղ միջոցներով իր գերիշխանութեանը ենթարկել նախարարական և մյուս երկրները՝ Հայաստանում, Վրաստանում, Աղվանքում և այլուր:

Ըստ Վարդանի վկայութեան՝ «ընդարձակեալ մեծին Աշոտի ի Վիրս և յԱղուանս զԿաւկասայինս հնազանդեալ»:

Իր հեղինակութիւնը բարձրացնելու համար նա աշխատում է քաղաքացիական հաստատել զորեղ նախարարութեանների հետ խնամութեան կապերի միջոցով: Իսկ Աշոտի եղբայրը՝ Աբասը ստանում է սպարապետի աստիճան:

Բուղայի արշավանքներից հետո զորեղանում են մահմեդական ամիրայութիւնները: 863 թվին տեղի է ունենում կայսիկների արշավանքը՝ Սևաղայի որդի Ջահապի առաջնորդութեամբ: Այդ արշավանքի մասին Ասողիկը տալիս է հետևյալ վկայութեանը՝ Բ., Բ, էջ 110՝

«Շահապ որդի Սևաղայի ամբոխասաստ զօրու գայ յերկիրս Հայոց՝ աւերել գերել զերկիրս կամելով: Եւ եկեալ յԱրշարունիս գաւառ՝ իջանէ յեզերս Նրասխայ ըստ հարաւոյ կուսէ ի տեղին, որ այժմ ասի Քառասունք: Իսկ մանուկն Արաս սպարապետն Հայոց, ելեալ ի Կաղզուան աւանէ ԽՈՒ արամբք ամենայն Հայոց զօրուն, քաջօք և մրցողօք՝ գայ հասանէ ի վերայ նոցա. զբոլոր բանակն ցիր ու ցան վայրացն ընկեցեալ՝ սրախողխող և գետավէժ զամենեանս առնելով: Իսկ Շահա-

պայ իջ արամբք մազապուր պրծեալ՝ անցեալ գնայր ամօթալից»:

Այս պարտութիւնից հետո կայսիկները կորցնում են իրենց երկրների որոշ մասերը: Այնուհետև Աշոտ իշխանաց իշխանի տիրապետութեան տակ են եղել հետևյալ մարզերը և երկրամասերը՝ Բագարան, Շիրակ, Արշարունիք, Աշոցք, արևելյան Տայք, Վանանդ, Սուրմալի, Արագածոտն — մինչև Երևանի կողմերը և Կուրտիկ Մամիկոնյանի մահվանից հետո, նաև Բագրևանդը:

Դվինում եղել է արաբական կառավարիչ:

867 թվին Բյուզանդիայում հանդես եկավ հայկական դինաստիան, հանձինս Բարսեղ Ա-ի, որը տեղեց մոտ երկու դար:

Բարսեղ Ա-ն [867—886] համաձայն ըյուղանդագետ Գեղեցերի բնութագրման, «պատկանում էր այն հանճարեղ, բայց խիստ ուժեղ բնավորութիւններին, ինչպես էին Սուլլան, Թեոդորիսը, նապոլեոն Ա-ը»:

Համաձայն Լոռանի բնութագրման՝

«Բարսեղի ժամանակը հայերի համար բախտավոր շրջան էր. արաբական ոստիկանները ուղարկվում էին հայերի ընտրութեամբ. նոքա կարող էին ազատ շնչել, իրենց իրավունքները և ուժը ավելացնել. կատարել ճանապարհների շինութիւն, շենքերի կառուցում. նպաստավոր էր երկրագործութեան և առևտրի զարգացման համար»:

880 թվից հետո, երբ մահմեդական ամիրաները միացել էին ընդդէմ զորեղահայ նախարարների, Աշոտ Բագրատունին արշավում է Մանազկերտ և գրավում է Բերկրին, Խլաթը և Արճեշը:

Նախարարական Հայաստանի այս հաջողութիւնները պետք է վերագրել խալիֆատի թուլացմանը և Բյուզանդական կայսրութեան հաղթական արշավանքներին Հայաստանի սահմանամերձ շրջաններում՝ 871—882 թվերին:

Կործանիչ հարվածներ էր հասցնում խալիֆայութեանը Բարսեղ Ա-ը, որը քայլ առ քայլ առաջ էր գալիս և ավերում էր խալիֆայութեան լեռնային ամրութիւնները: Բարսեղի հաջողութիւնները կըլինեին կատարեալ, եթե նախարարական Հայաստանը հարձակվեր արաբների աջ թևի վրա:

Նախարարական Հայաստանի դիրքը դեպի կռվող կողմերը ստանում էր մեծ կարևորութիւն: Սակայն նախարարական Հայաստանը չեզոք դիրք էր բռնել, որի շնորհիվ ստեղծվել էին նպաստավոր պայմաններ երկրի խաղաղ զարգացման համար:

887/888 թ. նախարարները վճռում են Աշոտին թագավոր դարձ-

էել: Դիմում են Ահմետ խալիֆին, որը ուղարկում է իշխանաց իշխան Աշոտին թագ և թագաժողովական զգեստներ: Աշոտ Ա-ի պետական կազմակերպչական գործունեության մասին Հովհաննես կաթողիկոսը տալիս է հետևյալ վկայութիւնը [էջ 139]՝

«Եւ այնուհետեւ բազում և երեւելի կարգս յարգարէր աշխարհի տէրութեանն իւրոյ, յօրինուածս տանց, ազգաց, քաղաքաց, շինից, դաստակերտաց և հարթհաւասար ըստ իւրաքանչիւրոցն կատարէր կարգս լեռնականաց և ջերմահովիտ բարեխառն դաշտականաց, և զամենայն տափարակ տեղիս՝ ագարակս և գոմս դնէր. և զմարմանդս յայգիս և ի բուրաստանս զարդարէր».....

890/91 թվին Աշոտ I-ին հաջորդում է Սմբատ I-ը: Գահակալության առթիվ տեղի են ունենում ներքին խռովութիւններ: Աշոտի եղբայրը՝ Աբաս սպարապետը ուզեցել է ինքը ժառանգել գահը, ինչպես վկայում է Հովհաննես կաթողիկոսը՝ «յինքն զթագաւորութիւնն հնարէր նուաճել», սակայն այդ նրան չի հաջողվում. նա հաշտվում է Սմբատի հետ և մնում է սպարապետ:

Ինչպես վկայում է Ասողիկը, էջ 161 — Սմբատ Ա-ի և նրա հոր Աշոտ Ա-ի ժամանակ

«էր շինութիւն և խաղաղութիւն յաշխարհիս Հայոց ըստ մարգարէութեանն՝ հանգչիլ իւրաքանչիւր ուրուք ընդ որթով իւրով և ընդ թգնեհաւ. և այսպէս ագարակաց աւանացեալ և աւանաց քաղաքացեալ բազմամարդութեամբ և ընչեղութեամբ, մինչև հովուաց և անդէորդաց մետաքսեայս զգենուլ պատմուճան»:

Ընդհանրապես այս շրջանում մեծ թափ ու ծավալ է ստացել շինարարութիւնը նախարարական բոլոր երկրներում:

Արծրունիների երկրի շինարարութեան մասին Թովմա Արծրունին տալիս է հետևյալ վկայութիւնները՝

Թովմա Արծրունի, էջ 252—«Շինեաց Գագիկ [887—936] պարսպաւոր ամրափակութեամբ զրլուրն Ոստանին Ոշտունեաց զաւերեալն ի բազում ամաց»:

Թովմա Արծրունի, III, 29—«Շինեաց [Վան Տոսպում] ի վերայ ամրական քարանձաւին յելս և ի մուտս կոյս տունս խրախիցս ոսկեզօծս պատշկամբեալ, յաւելլով ի յառաջագոյն ի հօրէ նորա Դիրանկէն շինեալ»:

Թովմա Արծրունի, Թ. IV, է — վկայութիւն Ախթամարի շինարարութեան մասին—«ապաստան լինել աշխարհի ի հինից թշնամեաց»:

«Հրաման տուեալ բազում արուեստաւորաց և անթիւ մարդկան զհատեալ վէմս ծանունս հոսել ընկենուլ յատակս ծովուն անհնարին խորութեանն... Քարահատակն ամբարտակ կանգունս հինգ... Եւ պարիսպն է հրաշակերտ, ահեղակերպ, բարձրաբերձ, լայնանիստ բրգամբք և բարձրացեալ աշտարակօք զարգարեալ, անկիւնաւոր խորանանման տախտակած և յինքեան ունելով գահոյք զքօսանաց, յորում հանդերձ որդւովք և ազատակոյտ զօրօք միշտ ուրախանայր արքա: Ի շրթունս խորայատակ հիմանց ծովուն դէն դրունս ահաւորատեսս, հաստահեղոյսս, բեռապինդս. որով և զմասն ինչ ծովուն ի կղզին կոյս հատանելով՝ հրաշալիս իմն ներգործեաց, բազում նաւաց յօրինեալ խաղաղ և անքոյթ նաւահանգիստս ժողովեալ ի դուռն արքայի իշխանաց և տէրանց, ազատաց և ռամկաց, եպիսկոպոսաց և կրօնաւորաց, ղի ամենեքեան օն անդր փութապէս շինուածս և ձեռակերտս հաստատեցեն, հրաման տայցէ, ղի լինիցի տեղի ապաստանի ամենայն հինից ի թշնամեաց եկելոց... Զկնի հնգից ամաց յորմէ հետէ սկսան շինել՝ պայծառացեալ բարձրացաւ շինութիւն քաղաքին առաւել քան զառաւել»:

Մեծ քանակութեամբ շինված են եկեղեցիներ՝ Անիում, Կարսում. 40-ի չափ: եկեղեցիներ ու վանքեր շինված են այդ ժամանակաշրջանում Սյունիքում:

Հայաստանի շինարարութեան զարգացման այս շրջանում, Սրմբատ Ա-ի թագավորութեան երրորդ տարում տեղի է ունեցել 893 թվին Դվինի մեծ ու ավերիչ երկրաշարժը, որի մասին Հովհաննես Կաթողիկոսը [էջ 162] տալիս է հետևյալ վկայությունը՝

«Զայսու ժամանակաւ ահագին իմն յեղակարծումն ժամոս սաստիկ շարժմանց եղելոց ի գիշերի և Դուին քաղաքի՝ բազում սասանումն և սարսափումն և դղրդումն և կործանումն զքնակշօք քաղաքին զեղեալ, հիմն ի վեր տապալէր: Վասն զի առհասարակ ի վայր փլուզեալ զպատուար պարսպացն և զապարանս գլխաւորացն և զտունս ռամկաց՝ իբրև գերիզուտ վայրս առապարաց յական թոթափել տեսանէր... Իսկ զբաժմութիւնս դիականցն ոչ բաւեալ տալ գերեզմանաց՝ զբաղումս ի վիհս և ի խորափիտս և դարափլակս ընկեցեալ ծածկէին»:

Նույն երկրաշարժի մասին Թովմա Արծրունին տալիս է հետևյալ վկայությունը՝ «Պարսպաւոր պատնիշօք պատուարեալ և տուրեառիկ վաճառականութեամբ և աղգի ազգի պըղ-

ծութեամբ յափրացեալ յղփացեալ՝ զնա ի հիմանց տապա-
լեալ...: Ասի լինել թիւ մարդկանն ապականելոց ի շարժ-
մանէ՝ ոգի առաւել ՀՌ: Այս շարժումն սաստկագոյն քան որ
եղև յամս Զաքարիայի Հայոց կաթողիկոսի, յետ է ամի գե-
րութեան Հայոց»:

Բագրատունյաց Սմբատ Ա-ն, իր թագավորութեան ընթացքում
նպատակ է ունեցել և ձգտել է ազատվել հարկատվութիւնից, իրա-
կան դարձնել իր թագավորական իշխանութիւնը, հնազանդեցնելով
իրան նախարարներին: Նա իր իշխանութեանն է ենթարկում այն
երկրները, որոնք գտնվում էին, ինչպես վկայում է Հովհաննես կա-
թողիկոսը, էջ 161՝

Այսրեւմտից հիւսիսոյ մինչև ցկարնոյ քաղաք, և անդր ևս
քան զկղարջս բերեալ մինչև առ ափն ծովուն մեծի, և մինչև
ցսահմանս Նգերացոց և մինչև ցստորոտ մեծի լերինն Կով-
կասու, զԳուգարացիս, և զԾանարս մինչև ցդուռն Ալանաց....
և անտի ի հարաւ կողմն կոյս զԿուր գետով մինչև ի քաղաքն
Տփլիս. և զՈւտի գաւառ մինչև ի քաղաքն Հունարակերտ և
մինչև ի Տուս և ի Շամքոր:

Եւ այսպէս ընդարձակեալ զսահման տէրութեան իւրոյ,
որ ընդ լծով արքունի սակից և բեկարաց և մաքսից կացու-
ցեալ՝ զգէն քաջութեան մարտի իւրոյ նշան յաղթութեան
կանգնէր»:

Սմբատի թագավորութեան օրով Ադրբեջանում հանդես եկավ
Սաճյան զորեղ ամիրայութիւնը (879—930), որը Սաճյան Ափշինի
898 թվի հաղթական արշավանքից հետո հարկատու դարձրեց գրա-
ված հայկական շրջանները Սաճյան ամիրայութեանը: Իսկ Բագրա-
տունյաց Հայաստանի ենթարկումը խալիֆայութեանը դառնում էր
անվանական:

Հետագայում Սմբատը աշխատել է ազատվել այդ հարկատվու-
թիւնից, սակայն նրան ամիրայետը և Ափշինի հաջորդը՝ Յուսուֆ
ամիրան պարտադրել են վճարել պահանջվող հարկը: Ինչպես վկա-
յում է Հովհաննես կաթողիկոսը, էջ 204—205՝ «Իսկ Սմբատ վասն
զի բռնազրոսութեամբ զղեմ չկարէր ունել», վճռում է տալ մի տար-
վա հարկը:

Եւ ապա ընդ բոլոր աշխարհս տէրութեան իւրոյ հինգե-
րորդել հրամայէ զամենայն երամակս ձիոց և զանդեայս ար-
ջառոց և զհօտս ոչխարաց և տալ ի զրադատ տուգանս սա-
կին...: Եւ վ զայս ապա անարեալ զվճար՝ առնոյր այնմ ամի

սակ... Իսկ այսօրիկ ապա յաշս նախարարացն արքայի յա-
ւէտ իմն ծանր համարեալ թուէր»:

Այնուհետև զժգոհ նախարարները գծովում են Սմբատի հետ
և Յուսուֆը գրավելով իր կողմը Գագիկ Արծրունուն, որը 908 թվին
Յուսուֆից ստացել էր արքայական թագ և արքունական պատիվներ,
ավերածության է մատնում Բագրատունյաց Հայաստանը, իսկ Սըմ-
բատ թագավորին Երնջակի ամրոցի պաշարման ժամանակ ենթար-
կում է տանջանքների և խաչում [914 թվին]:

Այս ծանր ու ավերիչ իրադարձություններից հետո Բագրատուն-
յաց Հայաստանում ստեղծվել էր լիակատար անիշխանութուն:
Ինչպես ասում է Չամչյանը՝ էջ 762 Ճայս ամենայն տեսեալ ու-
միկ ժողովրդոց և ծառայից և գեղջկաց՝ նոքա ևս գրեթէ առհասա-
րակ ապստամբեցան ի տեարց իւրեանց. և յարուցեալ ի վերայ նո-
ցա՝ հարին զքաղումս ի նոցանէ և ինքեանք տիրեցին փոխանակ
նոցա»:

Այս ժողովրդական ապստամբության մասին Հովհաննես կա-
թողիկոսը տալիս է հետևյալ վկայությունը՝ էջ 258—261.

«Վասնդի նուազունքն քան զմեծամեծսն ձեռներեց լինել
ջանային, և ծառայքն ըստ Սողոմոնի հնարէին, զի զտեարս
տրեխաւորեալ՝ ի գետնի գնացուցեն և ինքեանք ելցեն յերի-
վարս ահապարանոցս և առաթուր հարողս՝ խորխտացեալք և
սոնքացեալք մեծաւ ապստամբութեամբ: Իսկ թագաւորք մեր
և պետք և իշխանք, զորս ի բնէ նախարարութիւնք էին՝ ջա-
նային վարատել և խլել յիւրաքանչիւրոցն բնակութեանց, և
ըստ ախորժից իմն ձեռական և նոր ստեղծանել պայազատս
և սպասալարս...»:

«Եւ այսպէս ի յիշատակութենէ թշնամեաց և յանարդին
անպտղությանց՝ ապա և սովն ևս ի վերայ սաստկացեալ զօ-
րանայր ուժգնապէս: Վասն զի հուրն կայծակնացայտ որ տե-
ղեացն ի մեզ, և սուրն անողորմ պատերազմացն որ միշտ ի
մեզ բղխէր զհոտ մահու՝ մինչև յեօթն ամ ձգեալ ընդերկարե-
ցաւ. և վասն այնօրիկ մնացեալքս պանդխտեցաք ի վրանս
Կեդարու. և թափրացաք և ունայնացաք ի ստացուածոց և ի
բոլոր պարենի ոռճկաց և ի շգոյէ կերակրոց»:

Այդ սոսկալի սովի, աղետալի ու խռովահույզ շրջանում Բագրա-
տունյաց թագավորության գահն է բարձրանում Սմբատի որդին՝
Աշոտ Երկաթը [913/14—928/29]: Բռնկում են պարտիզանական
կռիվներ ընդդեմ Յուսուֆի զորախմբերի:

Բագրևանդում, Շիրակում, Գուգարքում, Տփլիսում, Աղստևում, Արշարունիքում անողոր ջարդ են տալիս արաբական զորքերին:

«զԳլխաւոր երէցս նոցա ձերբակալ արարեալ՝ հրամայէր տիկ ձեացունել և կախել զպարսպաց ամրոցացն առ ի տեսիլ և յահաբեկութիւն բազմաց»:

Կռիվներ են տեղի ունենում նաև Արծրունյաց և Սյունյաց շրջանում ընդդէմ Յուսուֆի զորքերի:

Աշոտը գնում է Բյուզանդիա Կոստանդին VII կայսեր [912—959] մոտ. թագ է ստանում կայսրից և վերադառնում է բյուզանդական զորքերով [921 թվին]: Այնուհետև Յուսուֆը աշխատում է հրահրել երկպառակությունը և խռովությունները նախարարական Հայաստանում: Նա թագավոր է կարգում Սմբատ Ա-ի եղբորորդի Աշոտ սպարաբետին [Դվինում]: Տեղի են ունենում ներքին խռովություններ. սակայն Աշոտ սպարապետը հաշտվում է Աշոտ Երկաթի հետ: Աշոտ Երկաթը բարեկամություն է հաստատում նաև խալիֆայության հետ և ստանում է շահնշահի կոչում՝ «Ըստ որում վերնագոյն էր նա քան զայլ արքայս Հայոց, քան զԳագիկ, քան զմիւս Աշոտ, քան զթագաւորս Վրաց և Ափխազաց, Աղուանից և Եգերացոց»:

Յուսուֆը, որ ապստամբության պատճառով 919 թվին խալիֆայության կողմից ձերբակալված և բանտարկված է եղել, ազատվելով բանտից նորից տիրում է Ատրպատականին և զորքեր է ուղարկում Հայաստան, սակայն նրա ուղարկած զորքերը պարտվում են և Աշոտ Երկաթի թագավորության վերջին տարիներում Հայաստանը խաղաղվում է:

Բագրատունյաց առաջին թագավորների ջանքերը Հայաստանը փրկեցին իրանց իշխանության տակ, ոչ միայն հաջողություն չեն ունենում, այլ պատճառ են դառնում աղետների, երկպառակության և թշնամությունների:

Աշոտ Երկաթի հաջորդները հրաժարվեցին նախորդների այդ քաղաքականությունից, բավականացան տոհմական իրանց երկրներով և աշխատեցին տարածել երկրի իշխանությունների վրա իրենց բարոյական հեղինակությունը:

Խալիֆայության քայքայումը, որ սկսվել էր IX դարում, հետըզհետե ավելի ևս մեծ չափեր է ստանում: Խալիֆայության զանազան շրջաններում ստղծվում են անկախ մամլուկություններ:

935 թվին տեղի էր ունեցել Ասորիքի և Եգիպտոսի վերջնական անջատումը խալիֆայությունից: Արաբական Հայաստանի ոստիկանները և Պարսից, Միջագետքի, Փոքր Ասիայի, Դվինի, Մանազկերտի ու Խլաթի կուսակալները դառել էին ինքնագլուխ վարիչներ:

Մյուս կողմից զգալի չափով զորեղացել էր Բյուզանդիան, և Հովհաննես Կուրկուաս բյուզանդական հայ զորավարը հաղթական կռիվներ էր մղում խալիֆայության երկրամասերում: 934 թվից «կսած» Շիմշատը, Մալաթիան և Արևմտյան Հայաստանը վերջնականապես մտել էին Բյուզանդական կայսրության գերիշխանության տակ:

Հայաստանի նախարարական գլխավոր տոհմերը ևս դառել էին ինքնագլուխ՝

1. Արծրունյաց թագավորությունը, որի ինքնիշխան տերն էր Գագիկ թագավորը [904—908—937], և որը թագ էր ստացել Ցուսուֆից 908 թվին: Նրա գերիշխանության տակն էին գտնվում Վասպուրականի մյուս իշխանությունները: Կենտրոնը եղել է Ոստանը: Գագիկին հաջորդել է Աշոտ Դերենիկը [937—953], որի մահվանից հետո՝ նրա որդիները իրարից բաժանվել և կազմել էին երեք նոր թագավորություն՝ Վասպուրականի, Անձևացյաց և Ոշտունիքի:

2. Աղվանից թագավորությունը.

3. Սյունյաց թագավորությունը.

4 և 5. Ավելի ուշ նաև Կարսի և Կյուրիկյան թագավորությունները:

Բագրատունյաց Հայաստանում Աշոտ Նրկաթին հաջորդեց նրա եղբայրը՝ Աբասը [928/29—953], ինչպես վկայում է Ասողիկը [էջ 171]՝ Աբասը եղել է—«նազաղութեան և շինութեան պատճառ» «յաղթող շուրջանակի», Կարսը, որի ռազմական գիրքը խիստ հարմար էր պաշտպանության տեսակետից, իբրև կենտրոն, Աբասը ավելի ևս ամրապնդում է, կառուցում է մի գեղեցիկ եկեղեցի և ուրիշ շինություններ:

Միևնույն ժամանակ Աբասը սիրով ու խոնարհությամբ էր վերաբերվում դեպի Նըսր վերակացուն, որ նստում էր Դվինում:

Ինչպես վկայում է Ասողիկը [էջ 196] — «Նբարձ նա յաշխարհէն յիւրմէ զաւագակութիւն և զմարդասպանութիւն»:

Աբասին հաջորդեց նրա որդին՝ Աշոտ III-ը, կամ, ինչպես նրան կոչում էին՝ Աշոտ Ողորմածը [953—977],

Ասողիկ III, Ը, էջ 180—«Եւ զկնի Աբասայ թագաւորեաց Աշոտ որդի նորա, որ և շահնշահ կոչյուր ամս ին»:
«Այս Աշոտ խաղաղասէր բարուք կալեալ աշխարհս Հայոց խոնարհութեամբ և ողորմածութեամբ»:

Նա թագավոր է օծվել Անիում 961 թվին և կենտրոնը Կարսից տեղափոխել է Անի. իսկ նրա փոխարեն Կարսում գահ է բարձրանում նրա եղբայրը՝ Մուշեղը [962 թ.]:

Աշոտ Ողորմածը եղել է ժողովրդին մոտիկ: Նա հավաքում էր իր շուրջը հիվանդներին և կարոտյալներին, խնամում էր և նրանց հետ միասին ճաշում: Եղել է առատաձեռն՝ «Մինչև ի մահուն ոչ լինել դրամ մի ի գանձատուն նորա»: Իր թագավորության առաջին տարիներում նա կռիվներ է ունեցել թշնամիների հետ և ահաբեկել է նրանց:

Աշոտ III-ի ժամանակ՝ 964—969 թվերին տեղի են ունեցել կռիվներ Բյուզանդական կայսրության և խալիֆատի միջև: Այդ ընդհարումների մասին Ասողիկը տալիս է հետևյալ վկայությունները՝

Ասողիկ, III, Ը, էջ 183—«Սա [նիկեփոռ կայսրը] քաջապէս յաղթեաց իսմայելական զօրուն, յոլով քաղաքս հանեալ ի նոցանէ՝ զՄսիս ի ՆժԳ, ղՏարուն ի ՆժԴ թուականին»:

Ասողիկ, III, Ը, էջ 183—«Վարդ եղբորորդի Նիկեփոռա զօրու ծանու գայ յԱպահոնիս, պաշարէ ղՄանազկերտ քաղաք. և առեալ զնա ի հիմանց բրեալ խրամատեաց զպարիսպ նորա [968], Եվ ապա ի ՆժԸ թուականին առնու զԱնտիոք մեծ քաղաք Ասորուց» [969]:

Հետզհետե Բյուզանդական կայսրությանը հնազանդում են և հարկ են վճարում՝

ա. ազգն Տաճկաց ըստ հարաւոյ, բ. Սարմատացւոց ըստ հյուսիսոյ. գ. Վրաց ըստ արեւելից:

967—969 թվերին, Տարոնի իշխան Աշոտ պատրիկի մահվանից հետո բյուզանդացիները գրավել էին Տարոնը. իսկ 973 թվին գրավել էին նաև Մծբինը:

974 թվին ինքը Հովհաննես Չմշկիկ կայսրը [969—976] նվաճել է Ամիդը և Ֆարկինը և հարկատու է դարձրել ամիրաներին. հարկատու է դարձրել նաև Ասորիքը մինչև Երուսաղեմ:

Հիշված քաղաքական իրադարձությունների ժամանակաշրջանում հայերը մնում էին չեզոք և չէին մասնակցում կռիվներին: Երկրի խաղաղ պայմաններում Հայաստանը շինվում էր և տնտեսապես բարգավաճում:

Աշոտ Ողորմածի մահվանից հետո հաջորդում է նրա որդին՝ Սմբատ Բ-ը [977—989]: Սմբատ Բ-ի օրով խաղաղությունը և երկրի շինարար գործունեությունը շարունակվում է:

Ասողիկ, գլ. ԺԱ, էջ 187 — «Պարսպափակ առնէ զպարիսպն Անւոյ, յԱխուրյան գետոյ մինչև ցճորն Մաղկոցաց, կրով և վիմով մածուցեալ, մահարձաճօք և աշտարակօք բլրգանց, բարձրաբերձ պարսպեալ բացագոյն քան զհին պա-

րիսպն յընդարձակութիւն քաղաքին, և մայրագերան դրամբ՝
երկաթագամ հաստահեղոյս բեկոսպինդ ամրացուցեալս:

Սմբատ Բ-ի կրտսեր եղբայրը՝ Գուրգենը, հաւատարիմ լի-
նելով նրան՝ ժառանգում է նրա հրամանով 982 թվին Տաշիրը, Տա-
վուշը, Կայանը և մերձակա շրջանները, ու հիմք է դնում Կորիկյան
թագավորութիւն: Այսպիսով առաջանում են Բագրատունյաց երեք
թագավորութիւն՝ Անիի, Կարսի և Կորիկյան թագավորութիւնները:

988 թվին Տայքում իշխանութիւն գլուխ է անցնում վրաց Դա-
վիթ Կյուրոպաղատը, որը Բյուզանդիայի Բարսեղ Բ կայսեր ժամա-
նակ դառնում է թագավոր [988—1001 թ.]: Ինչպես վկայում է Ասո-
ղիկը, էջ 275՝

«Եղև նա պատճառ խաղաղութեան և շինութեան ամենայն
արեւելեայց, մանաւանդ Հայոց և Վրաց, զի զգոռ պատերազ-
մաց յամենայն կողմանց դադարեցոյց: Նա, յաղթող եղեալ
ամենայն շուրջանակի ազգաց և ամենայն թագաւորք կամա-
հանգանդեցան նմա»:

Բյուզանդական Բարսեղ Բ կայսեր ժամանակ հայերը մեծ դեր
են խաղացել Բյուզանդիայի՝ բուլղարների դեմ մղած երկարատև
կռիւններում: Ինչպես վկայում է

Ասողիկը, էջ 201—Վասիլ [987 թ.] «Կամեցաւ յազգէն Հա-
յոց. որ ընդ իւրով թագաւորութեամբն՝ անցուցանել ի Մակե-
դոնիա ընդդեմ բուլղարացն, զի շինեսցեն զերկիրն: Որ և տա-
րեալ բնակեցոյց զյուրվս յաշխարհն այն»:

Ինչպես պատմիչների վկայութիւններից երևում է, Բարսեղ Բ-ի
կռիւնների ժամանակ «հետեւագունդ»-ի զինվորները եղել են հայերը:

987—989 թվերին Բյուզանդիայում տեղի են ունենում քաղա-
քացիական կռիւններ, որի ժամանակ նորից հանդես են գալիս մահ-
մեդական ամիրանները: Ատրպատականի Աբլահաճ ամիրան գալիս է
Դվին և պահանջում է անցեալ տարիների հարկերը՝ «զոր ընդէմ
յուզարկեալ զհարկսն թագաւորն Սմբատ մեծամեծ ընչիւք դարձոյց»:

Սմբատ Բ-ի մահվանից հետո Անիի Բագրատունյաց գահը ժա-
ռանգում է նրա եղբայրը՝ Գագիկ Բագրատունին [989—1020]—«ի
նոյն աւուր թագաւոր, շահնշահ»:

Ըստ Ասողիկի վկայութիւն, էջ 256 — Գագիկը եղել է «սրա-
միտ, վարժ ի պատերազմի և առատաձեռն ի բաշխելն»:

«զբաժ հարկաց յոլովից տեղեաց աղատեաց.

«տիրեաց յոլով բերդից և գաւառաց ի սահմանաց Վայոց ձո-
րոյ, հաշենոյ և Փառեսոսոյ՝ առավել քան զեղբայր իւր.

«ոչ ոք էր որ զարհուրեցուցանէր զՀայաստանեայսս»:

Գագիկ թագավորի օրով զգալի կերպով ուժեղացել էր նրա եղ-
բոր Գուրգենի որդի Դավիթը՝ «ունի զկողմանս Տաշրաց և Վրաց դաշ-
տի», որի կենտրոնը եղել է մեծ քաղաքանքստ «Շամշուտե» գրդ-
յակը։ Նա նվաճում է Դմանխը։

«Հնազանդեցուցանէ զամիրայն Տփսեաց քաղաքաւան իւրով»։

Այնուհետև նա կռվում և հաղթում է Գանձակի Փատուռն ամի-
րային։ 1000 թվին Բարսեղ Բ-ը Տայքի կողմերը գալու ժամանակ
նրա մոտ են գալիս Աբխազաց և Վրաց թագավորները, գալիս են
նաև Կարսի թագավոր Բագրատունի Աբասը և Վասպուրականի Սե-
նեքերիմ թագավորը իր եղբոր Գուրգենի հետ՝ նրա օժանդակությու-
նը ձեռք բերելու նպատակով, և ինչպես վկայում է Ասողիկը, էջ
277—«պատուեաց զնոսա արքունատուր պատուով և... դարձոյց
զնոսա յիւրաքանչիւր տեղիս»։

Բարսեղ Բ-ն Վաղարշակերտի մոտ սպասում է Գագիկին, բայց
նա, ինչպես ասում է Ասողիկը, էջ 278—

«Իբրև փոքրութիւն համարեալ զգնալն իւր առ նա, իսկ
քուերորդին Գագիկայ Ապուսահլ շարախօս եղև ի նմանէ առ
Վասիլ։ Վասն որոյ Գագիկ հրաման տուեալ որդւոյ իւրոյ Յով-
հաննիսի և յաւարի էառ զգաւառն Ապուսահլի զկողոյցովիտն
և Մաղկոյտն»։

Գագիկին անհնազանդ չէ գտնվել նաև իր եղբորորդի Դավիթը,
որի դեմ նա կռվում է և հետո հաշտվում են։

1020 թվին մեռնում է Անիի Գագիկ թագավորը, և նրա որդի-
ները՝ Աշոտի ու Հովհաննես-Սմբատի մեջ տեղի են ունենում ներքին
արյունահեղ երկպառակություններ, որ համընկնում էին Բյուզան-
դական կայսրության կողմից տարվող քաղաքական նպատակնե-
րին¹։

Բարսեղ Բ կայսրը Արևելքում շարունակում էր իր աշխարհա-
կալ գործունեությունը։ Նա գնում է «ի քաղաքն Ուխտեաց».—
Տայոց բերդերն ու ամրոցները գրավում է. պաշտոնյաներ է նշանա-
կում. Տայոց ազատներին տանում է իր հետ և քնակեցնում Բյու-
զանդական կայսրության այլ վայրերում։

Բարսեղ երկրորդի ժամանակ Բյուզանդական կայսրությունը
խիստ ուժեղացել էր և իր ուշադրությունը կենտրոնացրել էր իր արե-
վելյան սահմանների վրա։ Կայսրության քաղաքականությունը իր
արևմտյան և արևելյան սահմանակից շրջաններում եղել է.

1 Այդ և հետագա պատմական իրադարձությունների նկարագրությունը տրե-
ված է ակադ. Մանանդյանի «Քննական պատմության» Գ հատորի և այլու-
րի գլխում։

1. Պետութեան կենտրոնացումը և սահմանակից մանր թագա-
վորութիւններին նվաճումը.

2. Կռիւլ խոշոր կալվածատիրութեան դեմ.

3. Կրօնական և ազգային միաձուլում՝ բռնի գաղթեցման և
մայրենի երկրից կտրելու միջոցով:

Այդ քաղաքականութիւնը Բյուզանդիան համառութեամբ վա-
րել է՝ ինչպես բուլղարների և սլավոնների վերաբերմամբ, որոնց
հետ մոտ 40 տարի [981—1018 թ.] կռիւններ է ունեցել, մինչև որ
հաջողվել է նրանց ընկճել:

Նույն քաղաքականութիւնը Բյուզանդիան կիրառել է նաև նա-
խարարական Հայաստանի վերաբերմամբ:

ՀԱՄԱՌՈՑ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ՝

Մարգարանության ճաստառումից Հայաստանում մինչև Բագրատունյաց
բագավորության անկումը

4-րդ դարի վերջը և 5-րդ դարի երկրորդ կեսը հանդիսանում են Հայաստանի պատմության մեջ ապստամբությունների ու համառ պայքարի հերոսական ջրջան ընդդեմ Սասանյան Պարսկաստանի: Այգ պայքարը կրում էր ոչ միայն կրոնական, այլև սոցիալական և, զխավորապես, ժողովրդա-ազատագրական բնույթ:

Հին հայկական աղբյուրների հաղորդումներից երևում է, որ Հազկերտ 2-ի (438—457 թ.) ժամանակ Սասանյան Պարսկաստանը փորձեր էր անում մտցնել և տարածել Արևելյան Հայաստանում և ամբողջ Անդրկովկասում պետական-մազդեական կրոնը և միա-ժամանակ ձգտում էր ոչնչացնել այդտեղ արմատավորված նախարարական կարգերը, որոնք ապահովում էին երկրի ինքնուրույնությունը, և իջեցնել նախարարական Հայաստանը մյուս իրանական դավանների աստիճանին: Նա միաժամանակ ուժեղացրեց ժողովրդական մասսաների շահագործումը, ավելացնելով երկրից զանձվող սլետական հարկերը: Պարսկական կառավարությունը այդ անում էր, ինչպես հաղորդում է Նղիշե պատմագիրը այն նպատակով, որ-պեսզի հասցնի գյուղացի շինականներին լիակատար աղքատության և ստիպե նրանց ընդունել մոգերի կրոնը:

Ինչպես հաղորդում են պատմագիրները՝ Ղազար Փարպեցին և Նղիշեն, 450 թվին ամբողջ Արևելյան Հայաստանում բռնկվեց ժողովրդական ապստամբություն, Վարդան Մամիկոնյանի զխավո-

¹ Տե՛ս՝ Краткий обзор истории древней Армении Ак. Наук СССР. М. Л.— 1943 г.

րությամբ: Սակայն, հայկական աշխարհագրորդ, որ բաղկացած էր գերազանցորեն հասարակ մարդկանցից և համարձակություն էր ունեցել դուրս գալ ընդդեմ ահեղ պարսկական ոհմակների, մի քանի մարտերից հետո, որոնք վերջացան պարսիկների հաղթանակով, ջարդվեց Ավարայրի դաշտում (451 թվին), որը գտնվում է այժմյան Մակուից ոչ հեռու, Այդ կովում հերոսաբար ընկան Վարդան Մամիկոնյանը և նրա քաջարի զինակիցները:

450—451 թվերի ապստամբությունը ճնշելուց հետո, Սասանյան Պարսկաստանը հասավ իր նպատակին: Նախարարական Հայաստանը զրկվեց իր ներքին ինքնուրույնությունից և հավասարեցվեց մյուս պարսկական մարզպանություններին, և այնտեղ իշխանություն ու նշանակություն ստացան այն նախարարները, որոնք հրաժարվեցին քրիստոնեությունից:

Ավելի քան երեսուն տարի շարունակվեց Արևելյան Հայաստանում պարսկական կառավարության գործակիցների և դրածունների իշխանությունը, որոնք ընդունել էին մազդեականությունը:

Ավերված և ստրկացած Հայաստանը սպասում էր մի հարմար ժամանակի, որպեսզի դուրս գա ընդդեմ բռնակալների, որոնք խեղդել էին նրա կուլտուրական ինքնուրույնությունը: Հերոս մարտիկների օրինակը, որոնք ընկել էին 451 թվին անհավասար կռվում, ոգեշնչում էր ժողովրդական մասսաներին: Եվ 481 թվին Արևելյան Հայաստանում բռնկվեց նոր ապստամբություն ընդդեմ պարսիկների, դաշնակցությամբ Վրաստանի և Աղվանքի:

Այս անգամ ապստամբության գլուխը կանգնած էր 451 թվին նահատակված Վարդան Մամիկոնյանի եղբորորդին՝ Վահան Մամիկոնյանը: Ապստամբության շորորորդ տարվա վերջին, 484 թվին, հեփթաղների երկրում իր կրած սարսափելի պարտությունից հետո, Պարսկաստանը ստիպված էր ապստամբների հետ բանակցության մեջ մտնել և կնքել խաղաղության համաձայնություն Վահան Մամիկոնյանի առաջադրած պայմաններով:

Այդ համաձայնության հիման վրա վերականգնված են եղել նախարարական Հայաստանի նախկին իրավունքները և արտոնությունները և ապահովվել է հայկական քրիստոնեական եկեղեցու ազատությունը ու երկրի կուլտուրական ինքնուրույնությունը:

Ուշագրավ է, որ հայ ժողովրդի մեծ պայքարի դարաշրջանը, որ սկսվել էր 4-րդ դարի վերջում և ավարտվել էր 5-րդ դարի վերջում, եղել է, այսպես կոչված, հայկական գրականության ոսկեդարը:

Հայերեն գրականության առաջացման ու զարգացման այս վաղ շրջանում թարգմանվել են հայերեն լեզվով ասորերենից և, գերա-

զանցորեն հոժարենից, բացի աստվածաշնչից և եկեղեցական գրքերից, քրիստոնեական գրականության հարյուրամյոր այլ երկեր: Այդ թարգմանություններից շատերի մեջ լեզվի գեղեցկությունը և նրբությունը զուգակցված են բացարձակ ճշտության հետ:

Այդ դարաշրջանի թարգմանություններից մեր ձեռքը հասել են մի քանի թանկարժեք եկեղեցա-պատմական և պատմական երկեր՝ Ռվմեբրիոս Կեսարացու ժամանակագրությունը, Արիստիդես Աթենացու երկը և ուրիշները, որոնց բնագրերը չեն պահպանվել: Նույն ժամանակը գրված են եղել պատմական և գիտական ինքնուրույն երկեր՝ Կորյունի, Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդացու, Նզնիկ Կողբացու և ուրիշների, որոնք թարգմանվել են եվրոպական լեզուներով:

5-րդ դարի վերջում հին-հայկական գրականության մեջ սկիզբ առավ և զարգացավ, այսպես կոչված, հռևաբան դպրոցը: Հանդես եկավ ընդարձակ թարգմանական գրականություն հունարենից, որը ընդգրկում էր հին աշխարհի գիտության բոլոր ճյուղերը՝ քերականությունը, աստղաբաշխությունը, ճարտասանությունը, փիլիսոփայությունը և այլն: Հայերեն թարգմանական գրականության մեջ պահպանվել են հնադարյան գրողների մի շարք երկեր, որոնց բնագրերը կորել են:

Այդ բազմակողմանի թարգմանական գրականությունը հնարավորություն տվեց հայերի հետագա սերունդներին ձեռք բերել գիտական տեղեկություններ մայրենի լեզվով: Հունական գիտության ու գրականության երկերը զարթեցնում էին մարդկանց միտքը, լայնացնում էին նրանց մտավոր հորիզոնը և մղում էին դեպի ինքնուրույն աշխատանք: Հետագա դարերում նրանք առաջ բերին Հայաստանում հարուստ մեկնաբանական գրականություն՝ փիլիսոփաների, քերականագետների և հռևաբան հայ գրողների:

Հայ ժողովրդի չընդհատվող ստեղծագործական կարողությունը, հատկապես, լրիվ չափով արտահայտվել է պատմության գծով: Հայերի ընդարձակ պատմական գրականությունը, Արևելքի բոլոր պատմական գրականություններից ամենից հարուստը, ծառայում է իբրև արժեքավոր աղբյուր՝ ոչ միայն Հայաստանի պատմությունը ուսումնասիրելու համար, այլև Պարսկաստանի, Բյուզանդիայի, Վրաստանի, Ադրբեջանի և Մերձավոր Արևելքի համարյա՝ բոլոր ժողովուրդների:

Պահպանված բազմաթիվ թարգմանական և ինքնուրույն գրվածքները, որոնք վերաբերում են աստղաբաշխության, մաթեմա-

տիկայի, բժշկութեան և գիտութեան այլ ճյուղերին, մինչև այժմ քիչ են ուսումնասիրված և, մեծ մասամբ, հրատարակված չեն:

Հայերի գրական ժառանգութիւնը, անշուշտ, հանդիսանում է իբրև արժեքավոր ներդրում համամարդկային կուլտուրայի մեջ:

Հայերի հելլենիստական տրամադրութիւնների և բյուզանդական կողմնորոշմանը ծանր հարված հասցրեց 4-րդ դարի առաջին կիսում հենց ինքը Բյուզանդիան, որը Յուստինիանոս կայսեր ժամանակ (527—565 թ.) խիստ փոխեց իր քաղաքականութիւնը հայկական արևմտյան երկրամասերի վերաբերմամբ: 384—387 թթ. Հայաստանի բաժանումից հետո, կայսրութեանը միացված սատրապութիւնները և ներքին Հայաստանը, իրենց ներքին կազմակերպչական խնդիրների կարգավորման վերաբերմամբ, համարյա մեկ և կես դարի ընթացքում եղել են ինքնավար, կայսրութիւնը, պահելով նրանց նախարարական կարգերը, պարտադրել էր նրանց ցոլց տալ զինվորական օգնութիւն պարսիկների դեմ:

Այդ դրութեան մեջ էին մնում հիշված մարզերը մինչև Յուստինիանոսի թագավորելը, որն առաջին անգամը սկսեց վարել ագրեսիվ միաձուլման քաղաքականութիւն, նպատակ դնելով ոչնչացնել նախարարական կարգերը և ներքին ինքնուրույնութիւնը:

529, 535 և 536 թվերին Յուստինիանոսի հրատարակած մի շարք դեկրետներով Բյուզանդական Հայաստանը ենթարկվեց վերակազմութեան և վերածվեց սովորական պրովինցիայի հռոմեական օրենքներով և ենթարկվեց ծանր հարկատվութեան:

Նրկրի հասարակական-քաղաքական ինքնուրույն կազմակերպութեան բեկումը և ծանր հարկային ճնշումը այստեղ ևս առաջ բերին, ինչպես այդ տեղի էր ունեցել Արևելյան Պարսկական Հայաստանում—450/451 և 481—484 թվերին, ընդհանուր վրդովմունք, որը վերածվեց բացարձակ ապստամբութեան:

Պրոկոպիոս պատմագրի հաղորդագրութիւններից երևում է, որ ապստամբները սպանել էին ներքին Հայաստանի վարիչ Ակակիոսին: Հայտնի է նաև, որ հայ Արշակունիները՝ Արշակը և Արտավանը, մայրաքաղաքում կազմակերպել էին իրեն՝ Յուստինիանոս կայսեր դեմ դավադրութիւն:

Յուստինիանոսի ռեֆորմների միջոցով Բյուզանդական Հայաստանում ոչնչացված է եղել ֆեոդալական-նախարարական կենցաղը և արգելք է դրվել նրա վուլտուրական ինքնուրույն զարգացմանը: Եթե Բյուզանդական Հայաստանի հայերը, չնայելով իրենց ներքին ինքնուրույնութեան վերացմանը, չէին ենթարկվել լրակատար ռոմանիզացիայի, և նրանց կուլտուրան կայսերական կարգերի հորձանքի

մեջ մշտապես չէր մարել, այդ բացատրվում է, անշուշտ, նրանով, որ նրանք ունեին մայրենի լեզվով գրականություն և դպրոցներ:

Հայ ժողովրդի միաձուլման (ասիմիլացիայի) քաղաքականությունը, ինչպես տեսնում ենք, հաջողություն չէր ունեցել ոչ միայն 5-րդ, այլև 6-րդ դարում:

Հունա-հռոմեական Արևմուտքի կոիվները իրանական Արևելքի հետ, որ սկսվել էին առաջին դարում մեր թվականությունից առաջ, շարունակվել էին ընդհատումներով համարյա յոթը հարյուր տարի, Այդ կոիվները հաճախակի դառնալ և ընդունեցին կատաղի բնույթ 6-րդ դարում և 7-րդ դարի սկզբում: Այդ կոիվները այնքան հյուժել էին երկու կողմերին, որ ո՛չ Բյուզանդիան և ո՛չ Պարսկաստանը չկարողացան ընդդիմանալ նոր համաշխարհային ուժի՝ իսլամի ու արաբական խալիֆայության դուրսին:

Հայաստանի վրա, որ գտնվում էր այդ իրադարձությունների հանգույցում, այդ կոիվների ընթացքում թափվում էին ամենածանր հարվածները: Կոլոդ պետությունների զորքերը, որոնք մտնում էին իրա սահմանները, թողնում էին սոսկալի հետքեր: Յոթը դարի ընթացքում Հայաստանը պարբերաբար թալանում, այրում և ավերում էին, բնակիչներին գերում, սպանում ու բռնանում: Այդ արշավանքներից հետո Հայաստանի քաղաքները հաճախ դառնում էին ավերակների կույտ, ամբողջ գավառներ քանդում և ավերում էին ու ամեն անգամ բնակչությունը համառ աշխատանքով ստիպված էր լինում շինել ու նորից վերականգնել քանդված բնակելի վայրերը:

Այդ պարբերաբար կրկնվող աղետները չափազանց ծանր էին անդրադառնում Հին Հայաստանի վրա: Նրանք արգելք էին հանդիսանում երկրի բարեկեցությանը և առաջացնում էին կյանքի տեսական լճացում, իսկ երբեմն, բացառիկ ցնցումներից հետո, երկրի տնտեսական զարգացումը վերականգնում էր ավելի ցածր հիմքերի վրա: Հասնելով տնտեսական հարաբերությունների համեմատաբար բարձր մակարդակի և իր քաղաքային առևտրական կենտրոնների զգալի զարգացման, Հայաստանի տնտեսական կյանքը հաճախ ետ էր շարտվում, ըստ որում այնտեղ գերակշռող նշանակություն էին ստանում բնական տնտեսության հիմքերը:

7-րդ դարի առաջին կիսում Սասանյան Պարսկաստանը ջախջախվել էր արաբների կողմից և դադարել էր գոյություն ունենալ, իսկ Բյուզանդական կայսրությունը ետ էր մղվել դեպի Փոքր Ասիայի խորքերը:

Հայաստանը դեռևս չէր կարողացել կազդուրվել նախընթաց երկարատև Բյուզանդական-Սասանյան հյուժող կոիվների հետե-

վանքներից, և սկսած 640 թվականից կրեց արաբական արշավանքների բոլոր սարսափները և աղետները: Արաբների ավերիչ ասպատակութունները (640, 642—643 և 650 թվերին), որոնք զուգակցվում էին թալանով, ավերումներով և բնակչության գերեվարությամբ, պարբերաբար կրկնվում էին Միջագետքի կողմից և հարավարևելքից՝ Ադրբեջանի կողմից: Ստեղծված պայմանների հետեվանքով, Հայաստանը ճանաչեց արաբական խալիֆայության իշխանութունը՝ ներքին ինքնավարության և ֆեոդալական-նախարարական կազմակերպության պահպանման որոշ պայմաններով:

Այդ ժամանակվա Հայաստանի խոշոր պատմական դեմքերից էր Ռշտունյաց գավառի իշխան Թեոդորոսը, որն ամեն կերպ աշխատում էր համախմբել երկրի ուժերը արտաքին թշնամուց պաշտպանվելու համար:

Դեռևս Արարատյան դաշտը 640 թվին արաբների առաջին անգամը ներխուժելու ժամանակ, երբ արաբները վերադառնում էին իրենց քանդած ու ավերած Դվին քաղաքից ավարով ու գերիներով, գերիներին ազատելու համար Թեոդորոս Ռշտունին հարձակվեց նրանց վրա փոքրաթիվ զորքով: Սակայն նա ստիպված էր ետ քաշվել թշնամու գերազանց ուժերի պատճառով: Կարճ ժամանակից հետո, արաբների երկրորդ արշավանքի ժամանակ (642—643 թթ.), Թեոդորոս Ռշտունին, վրդովված լինելով Բյուզանդական զորավար Պրոկոպիոսի անգործությունից, իր ուժերով, առանց հունական զորքերի օգնության, դիմադրություն ցույց տվեց արաբներին, ջարդեց նրանց Կոգովիտ գավառում և ետ վերցրեց գերիներին ու ավարը: Նմանապես նաև 650 թվին, երբ արաբները դեռ նոր էին սկսել իրենց վերցրած ամրոցում կոտորածը և թալանը, հայ ժողովրդի այդ քաջարի զավակը, որը դառել էր ժողովրդական-ազատագրական պայքարի առաջնորդը, մատնեց նրանց լիակատար պարտության և փրկեց բնակչությունը և գերիներին:

Վերջի վերջո, որպեսզի ազատե երկիրը, Թեոդորոս Ռշտունին, տեսնելով արաբների անխուսափելի հազթանակը, համաձայնության եկավ նրանց հետ:

Արաբական տիրապետությունը Հայաստանում հիմնավորվեց 7-րդ դարի հիսնական թվականների սկզբում և շարունակվեց մինչև Հայաստանում Բագրատունիների թագավորության հաստատումը (653 թվից մինչև 887—888 թվերը):

Նոր աշխարհակալների իշխանության առաջին շրջանում, սկսած 653—750 թվականը, համարյա մի ամբողջ հարյուրամյակի ընթացքում Հայաստանը գտնվում էր Օմայան խալիֆաների իշխանության

տակ. իսկ 750—887 թ. այսինքն, մինչև Բագրատունիների թագավորության առաջացումը, Հայաստանը ենթարկվել էր Աբասյան տոհմի խալիֆաներին: Արաբական տիրապետության առաջին շրջանում խալիֆայության կենտրոնը գտնվում էր Դամասկոսում և նոր կազմակերպված պետության մեջ գլխավոր դերը խաղում էին Սյուրիայի արաբները. իսկ երկրորդ շրջանում կենտրոն էր դառել Բաղդադը, որը հիմնվել էր 762 թվին, և խալիֆայության մեջ գլխավոր դերը խաղում էին Իրաքի արաբները ու մահմեդականությունը:

Օմայանների ժամանակ, մանավանդ նրանց տիրապետության առաջին շրջանում, արաբական իշխանությունը Հայաստանում, ինչպես և նրանց կողմից բնակչության շահագործումը, իհարկե գլխավորապես ստորին խավերի, եղել են համեմատաբար տանելի: Աշխարհականների այդ զգուշ և մեղմ քաղաքականությունը բացատրվում է նրանով, որ Օմայանները հաշվի էին առնում Հայաստանի խոշոր ռազմական ու զինվորական նշանակությունը, պահելով նրաներին ինքնուրույնությունը ու նախկին նախարարական կարգերը, ցանկանում էին օգտագործել նրա զինվորական ուժը իրենց նոր սահմանները պաշտպանելու ընդդեմ Բյուզանդիայի և խազարների:

Սակայն արաբական տիրապետությունը, նույնիսկ այդ ժամանակաշրջանում, Հայաստանի համար եղել է կորստաբեր: Բյուզանդիայի և խալիֆայության մեջ պարբերաբար կրկնվող կռիվների ժամանակ, Հայաստանը հաճախ փոխել է իր կողմնորոշումը և ենթարկվել և՛ անխնա ավերածությունների՝ թե մեկի և թե մյուսի կողմից: Եթե նա հավատարիմ էր մնում խալիֆայությանը, դաժան կերպով պատժում էին հույները, իսկ եթե անցնում էր Բյուզանդիայի կողմը, վրեժ էին առնում արաբները:

Հայաստանի հյուծմանը նպաստեց նաև հարկերի անչափ ավելացումը Հիշամ խալիֆի (724—743) և առաջին Աբասյանների ժամանակ (8-րդ դարի երկրորդ կիսում):

724—725 թվերին, Հիշամի հրամանով, Հայաստանում կատարվեց ընդհանուր մարդահամար, ըստ որում հաշվի էին առնված մարդիկ, անասունները և հողերը: Այդ հաշվառումից հետո վերացվում էին ֆեոդալական Հայաստանի նախկին արտոնությունները: Հարկերը գանձվում էին ոչ թե տներից կամ ծովներից, ինչպես առաջ, այլ մարդագլուխ, նաև ըստ հողերի տարածության և, հավանորեն, նաև ըստ հողային հանդամասերի (угодые) որակի:

Այդպիսով մտցվում էր անհատական հարկատվության նոր ձև: Այդ ձևը շուտով դառավ ամբողջ երկրի համար իսկական աղետ և,

հատկապես, հարկատու ռամիկների, այսինքն՝ ճորտացած գյուղացիության և քաղաքի բնակչության ստորին խավերի համար:

Այդ այն ժանր արաբական հարկային լուծն էր, որը պատճառ դառավ խոշոր ժողովրդական ապստամբությունների բռնկմանը բնորոշ խալիֆայության:

Աբասյանների իշխանության հաստատումից հետո (8-րդ դարի կեսերին), Հայաստանի գրությունը դառավ անտանելի: Նոր պետական ղեկավարությունը չափից դուրս ավելացրեց հարկային ծանրությունը և հարկատու բնակչության մեծագույն մասը ընկավ ծայրահեղ աղքատության մեջ:

Ղեկնող պատմագրի հաղորդագրության համաձայն, խալիֆ Մանսուրի (754—775 թ.) ժամանակ, Հայաստանը, արծաթի ու այլ թանկագին մետաղների պակասության պատճառով, անկարող եղավ վճարել Աբասյաններին դրամական տուրքերը: Պարզ է, թե ինչպիսի կորստաբեր հետևանքներ պետք է ունենար այդ իրողությունը: Ղեկնողի հաղորդագրությունից երևում է, որ բնակչությունը վաճառում էր իր գույքը շնչին գներով, և ոչ մի կերպ չէր կարողանում հավաքել պահանջվող գումարը՝ հարկերը վճարելու համար: Միքայել Ասորու ժամանակագրության վկայությամբ, հյուսիսային Միջագետքում՝ ռայան էր արծաթը պակասել, որ եղները և էշերը վաճառում էին ամեն մեկը մեկ դրամի (մոտավորապես 50 կոպ. ոսկով) և տալիս էին հարկահավաքներին իրենց երեխաներին՝ յուրաքանչյուրը 5 դրամի (2 ո. 50 կ.)»:

Համատարած հալածանքների և բռնությունների նոր պայմաններում ակ-Մանսուր խալիֆան, բնականաբար, չէր կարող վստահել հայ նախարարներին, որոնք նրա ու նրա նախորդների ժամանակը գրկված են եղել իրենց նախկին արտոնությունների շատերից: Ուստի 770 թվին Հայաստան էին ուղարկվել թուրքական զորքեր:

Այդ զազանաբարո և արյունարբու վարձկանները, որոնք առիթ էին որոնում ավերածությունների ու թալանի համար, ծաղրում ու թալանում էին Հայաստանի բնակչության բոլոր խավերին:

Կարճ ժամանակից հետո արաբական տիրապետության դեմ բռնկվեց ապստամբություն (774 թվին), որը կրում էր համաժողովրդական ազատագրական շարժման բնույթ: Ապստամբության ղեկավարներն էին սկզբում Արտավազդ և Մուշեղ Մամիկոնյանները: Ապստամբները Շիրակում, Բագրևանդում և Տարոնում կոտորեցին հարկահավաքներին և արաբական զորամասերին: Կաբինից ու Դվինից Մուշեղի դեմ ուղարկված զորքերը մատնվեցին խոշոր պարտության:

Ոգևորված Մուշեղի հաջողութուններով, նրան միացան նաև մյուս նախարարները իրենց զորքերով և ամենուրեք ընդգրկեց նաև ռամիկների լայն մասսաներին:

Ահաբեկված արաբները, որոնց համար Հայաստանում, իբրև հենարան, ծառայում էին ամրացված քաղաքները, ստիպված էին թաքնվել և ամրանալ Դվինում, Կարինում և Արճեշում: 775 թվի սկզբին Հայաստան, պաշարվածներին օգնության եկան խալիֆայական երեսուն հազարանոց ընտիր զորքեր և ապստամբությունը անողոք կերպով խեղդվեց:

Ղևոնդ պատմագրի հաղորդագրությամբ, ապստամբների մի մասը, որը պաշարել էր Կարինը և բաղկացած էր մեծ մասամբ հետևակ և թեթև զինված ռամիկներից, հնարավորություն ուներ խույս տալ թշնամու դեմ կռիվուց, որը վեց անգամ նրանցից շատ էր: Բյուզանդիայի արևելյան սահմանները, ինչպես հայտնի է, գտնվում էին Կարինից ոչ հեռու:

«Սակայն ապստամբները, — ասում է Ղևոնդը, — որոշեցին, որ ավելի լավ է մեռնել, քան տեսնել իրենց երկրի կործանումը... և, թեև քանակով թշնամուց քիչ էին, նրանք կամովին զնացին ընդդիմ իրենց կյանքին սպառնացող վտանգին»:

774—775 թվի ապստամբությունը խեղդելուց հետո, 8-րդ դարի վերջին քառորդում Հայաստանի պատմությունը ներկայացնում է մի շրջան՝ անընդհատ կոտորածների, ծանր հարկահանությունների, ավազակային թալանի և ամեն տեսակի բռնությունների ու հալածանքի:

8-րդ դարում Հայաստանի կուլտուրական զարգացման մեջ նկատվում է մեծ անկում և նույնիսկ տնտեսական կյանքի հետադիմություն, որ բացատրվում է ոչ միայն վերև հիշված քաղաքական ցնցումներով, այլև Սև ծովի նավահանգիստների հետ միջազգային առևտրի ընդհատումով:

Չնայելով այն բարենպաստ պայմաններին, որ ստեղծվել էին արաբական աշխարհականների կողմից՝ լայն համաշխարհային հարաբերությունների համար, Հայաստանը արաբական տիրապետության առաջին ժամանակաշրջանում կորցրեց միջազգային առևտրում իր ունեցած տեղը:

7—8-րդ դարերում խալիֆայության առևտուրը արտաքին աշխարհի հետ զարգանում էր ոչ թե Բյուզանդիայի հետ ունեցած սահմանային մարզերում, այլ գլխավորապես Չինաստանի, Հնդկաստանի, Իսպանիայի և հարավային Նվրոպայի մյուս մասերի հետ:

Հայաստանի վրայով Բյուզանդիայի հետ անմիջական առևտրա-

կան հարաբերություններ ունենալ համարյա հնարավոր չէր, շնորհիվ խալիֆայության և Բյուզանդիայի միջև տեղի ունեցող անընդհատ ու արյունահեղ կռիվների։ Պոնտական Տավրոսից մինչև Միջերկրական ծովը տարածվում էր լայն սահմանային գոտի, որտեղ երկու կողմերումն էլ գտնվում էին ամրոցներն ու զինվորական կայանները, որոնք դարերի ընթացքում վարում էին սահմանային կռիվներ։

Բնական է, որ այդ իրադրությունը բացասում էր լայն միջագային առևտրի ամեն մի հնարավորություն։

Ջնայելով արաբական տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանում ստեղծված ծանր դրությանը, գրական կյանքը չէր դադարում այնտեղ նաև 7-րդ և 8-րդ դարերում։

7-րդ դարի աչքի ընկնող գրվածք է Սեբեոսի «Պատմությունը», որն իր մեջ պարունակում է արժեքավոր տեղեկություններ բյուզանդական-պարսկական կռիվների մասին 6-րդ դարի վերջում և 7-րդ դարում, վերջին Սասանյանների մասին և արաբների առաջին աշխարհակալ արշավանքների մասին (մինչև 661 թիվը)։ Սեբեոսի պատմության շարունակող է եղել 8-րդ դարի պատմիչ Ղևոնդը, որը գրել է արաբական խալիֆաների պատմությունը մինչև 788 թիվը և, գլխավորապես, արաբների տիրապետության պատմությունը Հայաստանում։ Գրողների թվում քացառիկ խոշոր դեմք է 7-րդ դարի երկրորդ կեսի գիտնական-մաթեմատիկոս և տիեզերագետ Անանիա Շիրակացին։ Նրա անվան հետ են կապված բազմաթիվ երկեր մաթեմատիկական գիտություններից, որոնցից հասել են մեր ձեռքը մի փոքրիկ խնդրագիր, թվաբանական դասագրքից մի հատված, չափագիտական աշխատություն բյուզանդական-սասանյան դարաշրջանի կշիռների ու չափերի և մի քանի աշխատություններ ու թարգմանություններ տիեզերագիտական, օդերևույթաբանական և ժամանակագրական բովանդակությամբ։ Նրան են վերագրում համաշխարհային խրոնիկայի թարգմանությունը, որի հեղինակը համարում են Խալոլիտ Հոռմայեցուն։

8-րդ դարի վերջում քայքայման, գաղթականության և ավերման շրջանում, ֆեոդալական Հայաստանը գտնվում էր տանջալից հոգեվարքում և նրա վերջնական անկումը թվում էր անխուսափելի։ Հայկական նախարարությունները ղրկված էին իրենց նախկին զինվորական ուժից, հետևաբար, նաև դիմադրական կարողությունից։ Նախարարական կալվածքները, որ անցել էին մասամբ մուսուլմանական ու արաբական ամիրաների ձեռքը, բնակեցվում էին արաբական ազգաբնակչությամբ։ Երկրի տերերը, հատկապես, Հայաս-

տանի հարավային մարզերում դառել էին մուսուլմանական և արաբական իշխաններն ու ֆեոդալները։ Նախարարական Հայաստանը գտնվում էր կորստյան ծայրում։

Սակայն շուտով, արդեն 9-րդ դարի առաջին կիսում հանկարծ սկսեցին երևան գալ հայկական նախարարությունների վերածնման համար նոր նպաստավոր քաղաքական պայմաններ։

Նախարարական Հայաստանի նորից զորեղանալուն նպաստեցին խալիֆայության մեջ առաջացած խլրտումները և խռովությունները, որոնք 9-րդ դարից սկսած դառել էին համարյա անընդհատ։

Բագրատունիները, որոնք 774—775 թվերի ապստամբությունից հետո գնացել էին Հայաստանի արևմտյան լեռնային շրջանները և այնտեղ գտնվում էին Բյուզանդիայի հովանավորության տակ, լարված ուշադրությամբ հետևում էին քաղաքական իրադարձություններին, որոնք տեղի էին ունենում խալիֆայության սահմաններում։

793—794 թվերին Պարթավում և Փայտակարանում, ներկա Ադրբեջանի սահմաններում, բռնկվեց պարսկական աղանդավորների խռչող ապստամբություն Աբու-Մուլիմի առաջնորդությամբ։ Ապստամբները ոչ միայն կարողացան պարտության մատնել մի քանի անգամ իրենց դեմ ուղարկված արաբական ուստիկան-կառավարիչներին, այլև իրենք անցան հարձակման և մոտ 4 ամիս պաշարման մեջ պահեցին Ղվին քաղաքը։ Նկարագրելով այդ զեպքերը Յակուբի պատմագիրը իր «պատմության» մեջ նշում է, որ այնուհետև ուժեղացավ Հայաստանի կարողությունը։

Հենց նույն ժամանակում վերսկսվեցին համառ և պարբերաբար երկնվող խալիֆայության կռիվները Բյուզանդիայի և խազարների հետ։ Այդ պայմաններում, իհարկե, որոշ կշիռ և նշանակություն էին ստանում նույնիսկ թուլացած հայկական նախարարությունները։ Խալիֆայության համար կարող էին հատկապես վտանգավոր լինել Բագրատունիները և, ամենից առաջ, նրանք, որ ապաստարան էին գտել Բյուզանդիայի սահմանակից շրջաններում (Սպերում, Տաջքում և Կղարջքում) և, որոնք բարեկամական հարաբերությունների մեջ էին մտել կայսրության հետ։ Ուստի և Հարուն-ալ-Ռաշիդ (785—809) խալիֆան ստիպված էր բարեկամական դիրք և զիջող քաղաքականություն վարել նրանց վերաբերմամբ։

Հենց Հարուն-ալ-Ռաշիդի ժամանակ հաջողվեց Աշոտ Մսակեր Բագրատունուն, Սմբատ սպարապետի որդուն, որի հայրը 774—775 թվերի ապստամբության ժամանակ զոհվել էր, մասամբ կաշառքով, մասամբ զենքի ուժով հաստատել իր իշխանությունը Հայաստանի հյուսիս-արևմտյան մարզերում՝ Տաջքում, Արշարունիքում, Շիրա-

կում և Աշոցքում: 806 թվին Հարուն-ալ-Ռաշիդը նրան նշանակեց Հայաստանի կառավարիչ, և այնուհետև Աշոտը հնարավորութուն ստացավ ավելի մեծ հաջողությամբ շարունակել իր հետագա նվաճումները:

Բագրատունիների և, ընդհանրապես, հայ նախարարների համար նպաստավոր եղանակ 809—813 թթ. տեղի ունեցող այն համառ կռիվները, որ Հարուն-ալ-Ռաշիդի Մամուն և էմին որդիները վարում էին գահաժառանգության համար:

Մի քանի տարուց հետո, երբ արդեն վերջացել էին հիշված երկպառակությունները արևելյան Անդրկովկասում բռնկվեց պարսկական աղանդավոր խուրրամիտների նոր խռոք ապստամբություն (816—837 թթ.) Բաբելի առաջնորդությամբ: Այդ ահեղ շարժումը կրում էր և սոցիալական և ազատագրական բնույթ: Ապստամբները պահանջում էին գուլբային հավասարություն և ուզում էին տապալել արաբական խալիֆաների իշխանությունը և վերականգնել նախկին պարսկական տիրապետությունը:

Հայկական նախարարությունները օգտագործեցին այդ ապստամբությունը իրենց շահագրիտական նպատակների համար և, ամբողջենով իրենց քաղաքական դիրքերը, հնարավորություն ստացան գրավելու նոր հողեր ու նոր կալվածքներ:

Այդպիսով, 9-րդ դարի քառասնական թվականների վերջին, հայ նախարարները, հատկապես Բագրատունիները, ոչ միայն վերականգնեցին իրենց նախկին հզորությունը, այլև դառան ավելի ուժեղ, քան 8-րդ դարում Օմայանների ժամանակ:

Աշոտ Մսակերի մահվանից հետո (826 թ.) Բագրատունիների առանձին ճյուղերը իշխում էին ինչպես իրենց նախկին տիրապետության տակ եղած երկրամասերում, նույնպես և համարյա ամբողջ արևմտյան Անդրկովկասում: 9-րդ դարի առաջին կեսի վերջում նրանք և Արծրունիները այնքան էին ուժեղացել, որ արդեն սոչխատում էին վերականգնել լրիվ չափով իրենց արտոնությունները և լայնացնել իրենց քաղաքական իրավունքները ու ներքին անկախությունը:

842—847 թվերին ալ-Վաթիկ խալիֆայի ժամանակ Հայաստանը գտնվում էր խռովահույզ և մշտական ապստամբական շարժումների պայմաններում: Բագրատունիները, ինչպես և Արծրունիները նկատի առնելով խալիֆայության քաղաքական և ռազմական թուլացումը, ձգտում էին ազատագրվել արաբական տիրապետությունից և խալիֆայության պետական հարկերը վճարելուց:

Շուտով, սակայն, պարզվեց նրանց հույսերի վաղաժամ լինելը:

Տ47 թվին խալիֆայության գահը բարձրացավ Մուֆավաքիլը (847 — 861), որը ամրացրեց խալիֆայության խախտված դրուժյունը։ Եվ նրա ժամանակը զորեղացած հայկական նախարարությունների սանձահարումը դառավ խալիֆայության գլխավոր նպատակներից մեկը։

849 թվին Հայաստան էր ուղարկվել ուժեղ զորամասերով Աբուսեթ ոստիկանը, սակայն, խեղդել և պատժել հայ նախարարներին նա չկարողացավ, որովհետև Բագրատ Բագրատունին, որն այդ ժամանակ Հայաստանի կառավարիչն էր և Վասպուրականի իշխան Աշոտ Արծրունին, միանալով դուրս էին եկել նրա դեմ։ Նրանք ուղարկեցին Աբուսեթին պահանջվող հարկերը և պահանջեցին որպեսզի նա չմտնի Հայաստանի սահմանները։

850 թվին Բագրատը և Աշոտը գլխովին ջարդեցին խալիֆայության զորքերը, որոնք ավերածության ու թալանի էին մատնել Տարոնի և Վասպուրականի շրջանները։

Վրդոված լինելով այդ դեպքերի մասին ստացած տեղեկություններից, Մուֆավաքիլը Հայաստան ուղարկեց մեռած Աբուսեթի որդուն՝ Յուսուֆին։ 851 թվին Յուսուֆը մեծ ու ջոկովի զորքով մտավ Վասպուրական, Աշոտի հետ հաշտություն կնքեց և, ապահովելով իր թիկունքը, գնաց դեպի Խլաթ, որտեղ նա խաբեյությունը գերի բռնեց Բադրատին, շղթայեց նրան և ուղարկեց Մուֆավաքիլի աթոռանիստը՝ Սամարա։

Այնուհետև Հայաստան ուղարկվեցին շրջանային կառավարիչներ, որոնք ամենուրեք դաժան դատաստան տեսան։ Իսկ Տարոնում արաբական զորքերը վերցրին շատ գերիներ, որոնց նրանք ծախեցին շնչին գնով Ասորիքում և ուրիշ տեղերում։ Գարնանը նրանք պատրաստվում էին ավերածության ու սրի մատնել ամբողջ Հայաստանը և ենթադրում էին ոչնչացնել հայկական նախարարությունները ու երկրում հաստատել իրենց անմիջական տիրապետությունը։

Այժմ Հայաստանի դրուժյունը դառնում էր նույնքան ազդեցալի, ինչպես և 8-րդ դարի վերջում։ Վտանգ էր սպառնում ոչ միայն իշխող նախարարական գահին, այլև ամբողջ ժողովրդին։ Ուստի և նորից տարերային ձևով բռնկվեց ապստամբություն, որը ինչպես և 774—775 թվերին կրում էր ազատագրական շարժման բնույթ։

Այդ ապստամբության գլխավոր մասնակիցներն էին սասունցի լեռնականները, ռամիկ գյուղացիները, որոնք հարձակվեցին արաբական զորքի վրա Հովնան խութեցու առաջնորդությամբ։ Նրանք սչնչացրին արաբական զորքը, սպանեցին իրեն՝ ոստիկան Յուսուֆին և ազատեցին դերիներին։

Սասունցի լեռնականների այդ հաղթական կռիվը ընդդեմ արաբական խալիֆայության զորքերի, որոնց նրանք քշեցին իրենց հայրենի երկրից, եղել է հայկական «Սասունցի Դավիթ» ժողովրդական վիպերգության հիմքերից մեկը:

852 թվի մեծ ապստամբությունը, որ կրում էր համաժողովրդական-ազատագրական բնույթ, խեղդվեց անողորմ դաժանությամբ:

Մուսավաթիլ խալիֆան Հայաստան ուղարկեց երկու հարյուր հազար հոգուց բաղկացած թուրքական ու արաբական զորքեր, նախկին գերի, խորամանկ ու դաժան թուրք Բուղայի առաջնորդությամբ: Բուղան սրի մատնեց և գերեց ու ավերեց ոչ միայն Հայաստանը, այլև Աղվանքն ու Վրաստանը:

Հայկական նախարարները և ապստամբության ղեկավարները խարդախությամբ բռնվեցին ու բանտարկվեցին և ապա ուղարկվեցին Սամարա: Բուղայի արշավանքից հետո, նախարարական Հայաստանը, որ ենթարկվել էր սոսկալի ավերածության, թվում էր թե այլևս անկարող կլինի ուշքի գալ և վերակենդանանալ: Սակայն շուտով, ինչպես և 774—775 թվերի ապստամբությունից հետո, նա ոչ միայն վերականգնեց իր նախկին հզորությունը, այլև հասավ իր տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքի բուռն ու անօրինակ ծաղկմանը:

9-րդ դարի երկրորդ կիսում սկսվեցին բյուզանդական կայսրների հաղթական արշավանքները դեպի հարավ-արևմտյան Հայաստանին կից սահմանային շրջանները, և խալիֆայությունը, որ անընդհատ պարտություն էր կրում, հետզհետե թուլանում և գնում էր դեպի անկում:

867 թվին Բյուզանդական գահը բարձրացավ ազգով հայ, Մակեդոնիայից եկած, Բարսեղ 1-ը (867—886), որը կործանիչ հարվածներով ոչնչացրեց արևելյան սահմանների արաբական պաշտպանողական ամրացրած դիրքերը և կարողացավ մտնել Միջագետք: Բյուզանդիայի այդ հաղթական հարձակման ժամանակ ֆեոդալական-նախարարական Հայաստանի կողմնորոշումը դեպի կովոդ պետությունները ստանում էր չափազանց կարևոր նշանակություն: Բարսեղ 1-ի հաղթությունը կլիներ լիակատար, եթե հայերը հարձակվեին արաբների աջ թևի վրա և օգնեին կայսերը մտնել խալիֆայության կենտրոնական շրջանները:

Ուստի և զարմանալի չէ, որ արաբները ստիպված էին փոխել իրենց քաղաքականությունը Հայաստանի վերաբերմամբ և ճանաչեցին նրան իբրև ինքնուրույն վասսալական թագավորություն: Դեռևս 862 թվին Աշոտ Բագրատունին, որ հետագայում կոչվեց Մեծ, ալ-

Մուստաին խալիֆայի (862—866) կողմից նշանակվել էր Հայաստանի կառավարիչ ճիշխանաց իշխանն տիտղոսով։ Հավատարիմ մնալով խալիֆայությանը և շեզոք Բարսեղ 1-ինի հաղթական կռիվների ժամանակ, Աշոտը քսան և հինգ տարի մնաց ճիշխանաց իշխանն (862—887)։ Նրա ժամանակը Հայաստանը զորեղացավ թե քաղաքականապես և թե տնտեսապես։ Քառորդ դար կռվելուց հետո, 887—888 թվին Մուսամիդ խալիֆայից (870—892) նա ստացավ թագ և թագավորի տիտղոս։

Խալիֆայության այդ արտաքուստ բարյացակամ քաղաքականությունը եղել էր, իհարկե, ստիպողաբար։ Հայաստանի վերամիավորումը, իբրև զորեղ թագավորություն, ցանկալի չէր ոչ խալիֆայությանը, ոչ Բյուզանդիային և ոչ հարևան ամիրայություններին։ Շուտով խալիֆայությունը և հարևան ամիրայությունները սկսեցին իրենք խրախուսել և նույնիսկ զրգռել խռովարար ֆեոդալներին, առաջ բերել Հայաստանում ապստամբություններ։ Ուստի հասկանալի է, որ Բագրատունիների թագավորական տիտղոսը մնաց միայն հրեև տիտղոս, առանց բովանդակության։ 10-րդ դարում Հայաստանի և Անդրկովկասի բոլոր մեծ ֆեոդալները դառան նույնպես «թագավորներ» և ունեին նույնպիսի թագավորական թագ և հանդերձանք, ինչպես և Աշոտ 1-ի հաջորդը։

Աշոտ 1-ի մահից հետո գահ բարձրացավ նրա որդի Սմբատ 1-ը (891—914), որը, դաշն կնքելով Բյուզանդիայի հետ, ուզեց միացնել իր իշխանության տակ հայկական նախարարությունները և ստեղծել միացյալ ֆեոդալական պետություն։ Սակայն Սմբատի այդ փորձը հաջողություն չունեցավ։ Հայաստանի խոշոր ֆեոդալները օգնություն գտան հարևան ամիրաների մոտ, ոչ պակաս զորեղ, քան Բագրատունիները։ Շատ ուժեղ դիմադրություն ցույց տվին Բագրատունիների զորեղացմանը Ադրբեջանի ամիրաները՝ Աֆշինը և Յուսուֆը։

10-րդ դարի սկզբում Յուսուֆ ամիրան, որ իր կողմն էր գրավել Մուվիտաֆի խալիֆային և Գագիկ Աթորունուն, Բագրատունյաց Հայաստանը մատնեց ավերածության և Սմբատ 1-ին թագավորը ենթարկվեց տանջանքների ու խաչվեց (914 թվին)։

Սմբատ 1-ի հետ կատարած Յուսուֆի այդ դաժան դատաստանից ու աշուհհետև տեղի ունեցած խառնակություններից, ապստամբություններից և երկրի անխնա ավերածություններից հետո, Հայաստանում 10-րդ դարի երկրորդ քառորդից սկսած, ավելի քան 100 տարի եղել է համեմատաբար խաղաղ։

Չունենալով ակտիվ մասնակցություն Բյուզանդիայի և արաբ-

ների կոիվներին և մեալով իբրև խալիֆայության վասսալ, Բագրատունի թագավորները բարեկամական հարաբերություններ էին պահում միառամանակ և՛ Բյուզանդիայի, և՛ խալիֆայության հետ։ Նրանց տիրապետության տակ եղած մարզերում խաղաղությունը և հանդատությունը չէր խախտվել ոչ մեկի և ոչ մյուսի կողմից։

Բագրատունիների թագավորության անկախ զարգացման այդ ժամանակաշրջանը, որը շարունակվեց մինչև Սելջուկ թուրքերի կողմից Հայաստանի գրավումը, հանդիսանում է երկրի տնտեսական և կուլտուրական զարգացման վերելքի ու քաղաքային կենտրոնների ծաղկման շրջան։

Տվյալ ժամանակաշրջանում Հայաստանի ծաղկումը երևում է նախ նրանից, որ ժամանակակից արաբական հեղինակները Հայաստանը համարում էին խալիֆայության ամենից հարուստ երկրներից մեկը։

Բագրատունյաց Հայաստանի հարստության և ընդհանուր տնտեսական վերելքի մասին կան մանրամասն տեղեկություններ նաև հայկական աղբյուրներում։

Հայաստանի նոր կուլտուր-տնտեսական վերելքի գլխավոր հիմքը եղել է, անշուշտ, միջազգային առևտուրը, որը սկսել էր այնտեղ նորից զարգանալ, սկսած 9-րդ դարից։

7-րդ—8-րդ դարերում արաբական խալիֆայության ռազմական ու քաղաքական զորեղ շրջանում և Բյուզանդիայի հետ տեղի ունեցող կատաղի կռիվների ընթացքում Հայաստանը եղել է, գլխավորապես, խալիֆայության ռազմական առաջապահը և միջազգային առևտուրը այնտեղ բոլորովին դադարել էր։

Տնտեսական զարգացման համար նպաստավոր պայմաններ նորից ստեղծվեցին 9-րդ դարում։

Շնորհիվ համաշխարհային գլխավոր ճանապարհներից մեկի վրա իր ունեցած բուֆերային դրության, Բագրատունյաց Հայաստանը, որ Բյուզանդիայի հետ կապված էր բարեկամության պայմանագրով, և խալիֆայության հետ վասսալական կապերով, ոչ միայն նորից ձեռք բերեց նշանակություն տրանզիտային առևտրի համար, այլև ինքը դառավ շեղոք երկիր միջազգային աշխույժ առևտրի համար։

Կյանքի ապահովությունը և խաղաղությունը հանդիսանում էին իբրև նպաստավոր նախապայմաններ երկրի տնտեսական վերակենդանացման և առաջադիմության համար։

Սակայն նրա տնտեսական զարգացման աճը և քաղաքային կենտրոնների ծաղկումը բացատրվում են, գլխավորապես նրանով,

որ Հայաստանը այդ ժամանակաշրջանում դառել էր Մերձավոր Արևելքում միակ տրանզիտային ճանապարհը և միակ շեզոք երկիրը, որոնք հնարավորություն էին տալիս օժանդակելու միջազգային հարաբերություններին:

Այդ ժամանակվա նոր հիմնված քաղաքների Անիի, Կարսի և Արծնի հարստության մասին, որոնք դառել էին խոշոր առևտրական կենտրոններ, հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում 11-րդ դարի հայ պատմիչ Արիստակես Լաստիվերտցին:

Անի քաղաքը, որը 10-րդ դարի երկրորդ կեսից դառել էր Բագրատունիների մայրաքաղաքը, նա անվանում է «տիեզերահռչակ» քաղաք:

Արծն քաղաքի մասին, որը գտնվում էր Թեոդոսուպոլիսից ոչ հեռու, հաղորդում է, որ նրա հարստությունները բերում էին «Մովսիս և ցամաքով»: Նմանապես Կարսի բնակիչների ունեությունը նկարագրելիս, նորից ընդգծում է, որ նրա հարստությունները կուտակված են եղել «ծովից ու ցամաքից»:

Այդ քաղաքների վրայով միջազգային առևտրի հիմնական սրանգիտային ճանապարհը գնում էր դեպի Տրապիզոն, որն այդ ժամանակաշրջանում եղել է Սև ծովի արևելյան մասի գլխավոր առևտրական կենտրոնը և որը միջազգային առևտրի մեջ խաղում էր բացառիկ դեր:

Մեզ հասած պատմական հուշարձանները հաստատում են, որ Բագրատունյաց Հայաստանի քաղաքների հարստացման գլխավոր աղբյուրը եղել է միջազգային տրանզիտային առևտուրը:

Հայաստանի տնտեսական վերակենդանացման հետևանքով, ստեղծվել էին նպաստավոր պայմաններ ֆեոդալական կուտուրայի ծաղկման և մեծ շինարարության համար, գլխավորապես Բագրատունյաց մայրաքաղաք Անիում: Հայաստանի, գերազանցորեն այն քաղաքները, որոնք գտնվում էին տրանզիտային գլխավոր ճանապարհի մոտ, հարստանում էին, շինվում էին և լայնանում: Թագավորները և բոլոր ֆեոդալները մրցում էին իրար հետ իրենց շինած տաճարների, պալատների և այլ կառուցումների շքեղությամբ: Հայկական ճարտարապետության պահպանված հուշարձանները չկալում են շինարարական տեխնիկայի զարգացման բարձր աստիճանի և հայ գեղարվեստագետ-ճարտարապետների բացառիկ ստեղծագործական ընդունակությունների մասին:

Հին հայկական արվեստի և ճարտարապետության զարգացման շրջան էր հանդիսանում 7-րդ դարը, որը համարվում է հայկական ճարտարապետության ոսկեդարը: Հենց այդ ժամանակաշրջանում

է կառուցված էջմիածնի մոտ բազմահաղկ, կլոր Զվարթնոց տաճա-
րը, որը հանդիսանում է անտիկ տիպի հույակապ կառուցումների
վերածնունդը: Այդ վեհ կառուցվածքի պահպանված փլատակները
ւպշեցնում են իրենց հույակապ սյուների, խոյակների և զարդաքան-
դակների նուրբ գեղեցկությամբ և վկայում են նրա կառուցողների
մեծ ստեղծագործական տաղանդի մասին: Բադրատունյաց դարա-
շրջանում, նախկին շրջանում տեղի ունեցած քայքայումից ու լճա-
ցումից հետո, վերականգնել էին մինչարաբական ժամանակի կուլ-
տուրական ավանդները. 10—11-րդ դարերում հետզհետե ստեղծվել
էր ճարտարապետական նոր ոճ, որը զարգանալով 12—13-րդ դա-
րերում կազմեց հայկական ճարտարապետության պատմության մեջ
նոր դարաշրջան:

Բադրատունյաց Հայաստանի քաղաքական և տնտեսական զար-
գացման հետ զուգընթաց տեղի է ունեցել նաև գրականության զար-
գացումը:

Այդ շրջանի կարկառուն երկ է հանդիսանում Մովսես խորենա-
ցու «Հայաստանի պատմությունը», որը գրված է եղել 9-րդ դարում,
մինչև Բադրատունիների թագավորության հաստատումը: Հետագա
դարերում խորենացին դառել է ամենից ժողովրդական և հեղինա-
կավոր հայ պատմագիրը և համարվել է հայկական պատմության
հայրը: Եվ իրավի, չնայելով նրա տված տեղեկություններից շա-
տերի անվավերականության, նրա գիրքը հանդիսանում է բացառիկ
արժեքավոր պատմական աշխատություն, որովհետև այնտեղ, գրա-
կան աղբյուրների հետ զուգընթաց օգտագործված են հին ժողովրդ-
դական վեպը և ժողովրդական բանահյուսությունը: Այդ ժամանա-
կաշրջանի մյուս պատմագիրներ Հովհաննես Դրասխանակերտցին,
Թովմա Արծրունին, Ստեփանոս Տարոնեցին և ուրիշները եղել են
խորենացու մեծ ազդեցության տակ: Հատկապես արժեքավոր է Մով-
սես Կաղանկատվացու «Աղվանից պատմությունը», որը հանդիսա-
նում է իբրև աղբյուր ներկա Ադրբեջանի հին պատմության:

Տվյալ ժամանակաշրջանում մեծ զարգացում ստացավ, բացի
պատմական ու եկեղեցական գրականությունից, նաև գիտական
գրականությունը՝ աշխարհագրական, փիլիսոփայական, քերակա-
նական, հոնտորական և մեկնաբանական: Խոշոր գիտական պատ-
րաստություն ունեցող հելլենիստ է եղել Գրիգոր Մագիստրոս Պահ-
լավունին (11—դ.), որը թարգմանել է հայերեն լեզվով Պղատոնի
մի քանի աշխատությունները և Եվկլիդեսի «Երկրաչափություն»-ը:

Այդ դարաշրջանի բանաստեղծական գրականությունը, Բրյու-
ետլի կարծիքով, արդեն պարունակում էր հետագա ուշ ժամանակ-

ների փարթամ ծաղկման սաղմերը, իսկ որոշ դեպքերում եղել է նույնիսկ շգերազանցված:

Այդ ժամանակաշրջանի խոշորագույն բանաստեղծ, որն ունեցել է հարուստ երևակայություն և նուրբ ոճ, եղել է Գրիգոր Նարեկացին (951—1003), որը ստեղծել է, այսպես կոչված, բանաստեղծների Նարեկացու շկոլան:

Ուշագրավ են այն հակասությունները, որ այդ ժամանակաշրջանում առաջ էին գալիս սոցիալական և զաղափարական ասպարեզում: Մի կողմից 11-րդ դարում տեժեղ զարգացում ստացավ եկեղեցական սխոլաստիկական գրականությունը՝ միստիկական բովանդակությամբ, որը նախագուշակում էր ֆեոդալական հասարակարգի մոտակա անկումը: մյուս կողմից, ծնունդ էր առնում ժողովրդական աշխարհիկ գրականությունը, որտեղ մարմնացում էին ստանում աշխատավոր մասսաների իղձերը և ձգտումները:

Բագրատունյաց Հայաստանի ֆեոդալական քաղաքների կուլտուրական դեմքը որոշված է զգալի մանրամասնությամբ Ն. Մառի սխտեմատիկ պեղումներով, որոնք կատարվել են 19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբներում Անի քաղաքի տեղամասում: Անիում գտնված իրերը առատ նյութ են տվել վերականգնելու այդ խոշոր առևտրական քաղաքի կուլտուրական կենցաղը, իր զարգացած արհեստագործական-արդյունաբերական կյանքով: Իջևաններով, կամուրջներով, բաղանիսներով, ջրմուղներով և ուրիշ գեղեցիկ շենքերով և եկեղեցական ու աշխարհիկ բնութի ունեցող կառուցումներով: Արհեստագործական և գեղարվեստական-արհեստագործական արդյունաբերության արտադրանքը, որ գտնվել է պեղումների ժամանակ ցայտուն կերպով ցույց է տալիս, որ Անի քաղաքի և Բագրատունյաց Հայաստանի մյուս քաղաքների կուլտուրական կյանքը գտնվել է զարգացման ավելի բարձր աստիճանի վրա, քան Արևմտյան Սվրոպայի միջնադարյան քաղաքներում: Բագրատունյաց Հայաստանի տնտեսական կյանքի և Հայաստանից արտահանվող իրերի մասին, մի քանի պատահական, սակայն շատ ուշագրավ տեղեկություններ կարելի է գտնել արաբական աշխարհագիրների և պատմագիրների աշխատություններում:

Տաբարիի պատմական աշխատության մեջ կա տեղեկություն, որ Հայաստանը իր հացը արտահանում էր և ուղարկում Բաղդադ: Այդ վկայությունը չափազանց կարևոր է, և ցույց է տալիս, որ Հայաստանի ֆեոդալական երկրագործական տնտեսությունը մտել է միջազգային առևտրական շրջանառության մեջ:

Իբրև արտահանության կարևոր ապրանք, արաբական հեղի-

նակների մոտ հատկապես հաճախ հիշվում են Վանա և Սևանա լճերի և Արաքս ու Կուր գետերի ձկները: Միջին դարերում չորացրած և աղը դրած ձուկը եղել է լայն սպառման նյութ ոչ միայն Արևմտյան Սմրտպալում, այլև Արևելքում:

Շատ հետաքրքիր են արաբական աղբյուրների տեղեկությունները Հայաստանից շինարարական փայտի արտահանության մասին: Կարելի է ենթադրել, որ Բագրատունյաց շրջանում Հայաստանի անտառների տարածությունը ունեցել է զգալի չափեր: Արաբական և հայկական աղբյուրները հիշում են նույնպես լեռնային արդյունաբերության մի շարք արտադրանքների մասին, որոնք արդյունահանվում էին Հայաստանում՝ արծաթ, պղինձ, բորակ, աղ, մկնդեղ, ձյուժ, սնդիկ, պղնձարջասպ և արճիճ:

Քաղաքային արդյունաբերության և արհեստների՝ կավագործության, դարբնոցային, զինագործական, ոսկերչական, մանածագործական և այլոց զարգացման մասին վկայում են գտնված իրերը և գրական աղբյուրները:

Արդյունաբերության հիշված ճյուղերից ամենից մեծ նշանակություն է ունեցել մանածագործական արդյունաբերությունը, գրվխավորապես, մետաքսի, որից պատրաստված գործվածքները արտահանվել են խալիֆայության արևելյան մարզերը և Բյուզանդիա:

Մանածագործական արդյունաբերության զարգացմանը նպաստում էին հանքային և բուսական ներկերը, որոնք մեծ քանակությամբ եղել են Հայաստանում:

Քաղաքների աճի և արդյունաբերության զարգացման կապակցությամբ հարց է առաջ գալիս այդ քաղաքների տիպի և ներքին կարգերի մասին: Սակայն, այդ հարցին դժբախտաբար, չի կարելի հանգամանորեն պատասխանել, որովհետև նրանց ներքին կյանքի մասին տվյալներ մենք համարյա չունենք:

Համենայն դեպս, կասկածից դուրս է, որ Բագրատունյաց շրջանի քաղաքները, որոնք պատկանում էին խոշոր ֆեոդալներին և դառել էին նրանց աթոռանիստը, գտնվում էին այդ ֆեոդալների իշխանության տակ և ունեին սենյորական (ինքնիշխանական) ռեժիմ: Կառավարվում էին նրանք, ինչպես և նույն ռեժիմը ունեցող Արևմտյան Սմրտպական քաղաքները, Բագրատունի թագավորների և այլ խոշոր ֆեոդալների կողմից նշանակված անձանց միջոցով:

Այդ քաղաքների տեղագրության մասին մեր տրամադրության տակ եղած տվյալները ցույց են տալիս, որ այդ քաղաքները, ինչպես և խալիֆայության արևելյան քաղաքները ունեցել են ներքին մաս, այսպես կոչված, շահրիստան, որը շրջապատված է եղել ռա-

պատ կոշվող արվարձաններից ամուր պարիսպներով, իսկ շահրիստանի կենտրոնում եղել է նրա միջնաբերդը կամ ամրոցը:

Համաձայն աղբյուրների մի քանի ցուցմունքների, մանր և խոշոր քաղաքների բնակչության ղգալի մասը բաղկացած է եղել հողագործական մանր ու խոշոր աղնվականությունից և քաղաքային բնակչությունից, որոնք ունեցել են իրենց այգիները, բանջարանոցները և հողային տնտեսությունը: Խոշոր քաղաքները, որոնք ունեցել են գործոն մասնակցություն միջազգային առևտրում, միաժամանակ եղել են առևտրական ու արհեստագործական բնակչության կենտրոններ:

Բագրատունյաց Հայաստանի խոշոր քաղաքների բնակչության քանակի մասին (Դվին, Անի, Արծն) աղբյուրները տալիս են անուղղակի ցուցմունքներ: Օրինակ՝ հայ պատմիչ Թովմա Արծրունին հաղորդում է, որ 893 թվին, երկրաշարժի ժամանակ կոտորվել է ավելի քան 70.000 մարդ: Բյուզանդական պատմաբան Գ. Կեդրենիոսի հաղորդագրության համաձայն, 1049 թվին սելջուկները Արծն քաղաքը գրավելու և այրելու ժամանակ ոչնչացրել են այնտեղ հրով ու սրով 140.000 մարդ: Պատմիչների տվյալներով՝ Անիում եղել է 100 հազար բնակիչ և 10 հազար տուն:

Մեջ բերված կլոր թվերը, իհարկե, վիճելի են, սակայն թույլ են տալիս ենթադրելու, որ Բագրատունյաց Հայաստանի խոշոր քաղաքների բնակչությունը զգալիորեն գերազանցել է միջնադարյան Եվրոպայի քաղաքների բնակչությունը և կազմել է, հավանորեն, մոտավորապես 50-ից մինչև 100 հազար:

Ուշագրավ է, որ տվյալ ժամանակը, որ եղել է քաղաքների և առևտրի արագ զարգացման շրջան, եղել է նաև դրամական լսյն շրջանառության շրջան, որը նպաստել է փողային-տնտեսական հարաբերություններին: Հայկական արձանագրական տվյալներից կարելի է տեսնել, որ բնամթերային ռենտան 10—11-րդ դարերում փոխվել էր դրամականի: Բացի այդ, առևտրի ու արդյունաբերության զարգացման կապակցությամբ, այդ ժամանակաշրջանում Բագրատունյաց Հայաստանի քաղաքներում նկատվում է բնիկ հայերից հարուստ առևտրա-արդյունաբերական դասի առաջացումը և դորեղացումը:

Հասկանալի է, որ քաղաքների զարգացումը և ապրանքային ու դրամական հարաբերությունների աճը պետք է ստեղծեին այստեղևս, ինչպես և Արևմտյան Եվրոպայում, երկրի սոցիալ-տնտեսական կյանքի որոշ տեղաշարժ: Եվ իրավի, աղբյուրներից երևում է, որ սամնուրեք դրամային տնտեսության խորացման ընթացքը զու-

գաղցվել է նաև Հայաստանում հիվանդոտ երեւոյթներով, որոնք առաջացել էին վաշխառուական կապիտալի զորեղացման և ստորագաս բնակչության դաժան շահագործման հետեանքով:

Ն. Մառը իր Անիի մասին գրած կապիտալ աշխատության մեջ ցույց է տվել, որ 11-րդ դարի առաջին կիսում Ֆեոդալական Հայաստանի կյանքը իրենից ներկայացնում էր հակադրույթ (անտիթեզա) աշխատավոր հայ բնակչության տնտեսական ճնշվածության և հալածությունների կոտակմանը տիրող դասակարգերի փոքրաքանակ անդամների ձեռքերում:

Հսկայական հարստությունների մասին, որ գտնվում էին թեկուզ միայն հոգևորականության ձեռքում, հետաքրքիր տեղեկություններ է տալիս Մատթեոս Ուռհայեցի պատմիչը:

Նկարագրելով Արծն քաղաքի ավերումը, սելջուկյան իբրահիմ և Գիլմուշ զորավարների կողմից, Մատթեոս Ուռհայեցին վկայում է, որ «քորեպիսկոպոս Դավթակի գանձատունը գրավեց իբրահիմը, նրա գանձերը բեռնեցին 40 ուղտերի վրա. նրա տանից դուրս էին գալիս արտերը հերկելու համար ութը հարյուր գութան, յուրաքանչյուրում վեց դույզ եղներ»: Հակառակ աղնվականության, վաճառականների և հոգևորականության ունեորությանն ու հարստությանը, Անիի աշխատավոր բնակչությունը, ինչպես ցույց են տալիս Անիի պեղումները, տեղավորված են եղել խղճուկ հյուղերում և քարքարոտ քետնում փորված որջերում:

Աշխատավոր բնակչության տնտեսական ծանր դրության մասին ցույց է տալիս, ի միջի այլոց, և այն, որ ըստ եղած տեղեկությունների այդ ժամանակաշրջանում տեղի են ունեցել գյուղացիական ապստամբություններ (10-րդ դարի առաջին քառորդում): Հայ պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցու վկայությամբ, որը թշնամաբար է վերաբերվում դեպի ապստամբները, «Ստորին խավերը ուզում էին լինել ավելի ձեռնահաս, քան բարձր խավերը, և ծառաները Սողոմոնի նման մտածում էին նրա մասին, որպեսզի տերերը հազնեն տրեխներ, ման գան ոտով և, որպեսզի իրենք նստեն փառահեղ ու տրոփող ձիերի վրա. նրանք հպարտացան, անբարտավանացան և բարձրացրին մեծ ապստամբություն»:

Բացի ապստամբություններից, 10—11-րդ դարերում սաստկացել էր նաև թոնդրակեցի աղանդավորների կրոնական-սոցիալական շարժումը, որոնք խիստ քննադատության էին ենթարկում տիրող հավատի դավանանքը և Ֆեոդալական եկեղեցու կազմակերպությունը: Այդ աղանդի ուսմունքը, որի հետևողներն էին աշխատավոր աղքատ ժողովրդի լայն մասսաները, պաշտպանում էր դեմոկրատա-

կան քրիստոնեութիւնը և այդ ժամանակվա պայմաններում հանդիսանում էր իբրև բողոք ոչ միայն պաշտոնական եկեղեցու, այլև տիրող գասակարգերի ճնշման դեմ:

Հայկական թոնդրակեցի և պալլիկյան աղանդավորները, որոնք ենթարկվում էին դաժան հալածանքների, պարբերաբար աքսորվում էին Բուլղարիա և այլ երկրներ, որտեղ նրանք, ինչպես ենթադրում է Ն. Մառը, ՁԵՅԻ չէին ձգել սերմեր, որոնց արգասիքը եղել են բողոքոսութիւնը և ալբիզոյականութիւնը, համեմայն դեպս առաջ են բերել նոր հուզումներ և իրենց արյան հոսանքով բեղմնավորել են հողը ավելի երջանիկ եվրոպական բարենորոգիչների (ռեֆորմատոնների) շարժման համար:

10—11-րդ դարերում սոցիալական պայքարի ակնառու սրումը բացատրվում է, ըստ երևույթին, դրամա-տնտեսական հարաբերութիւնների խորացմամբ, գյուղացիներից պահանջվող դրամական տուրքերի ծանրութեան ավելացմամբ և վաշխառուական կապիտալի խաղացած դերի սաստկացմամբ:

Քաղաքների արդյունաբերութեան և առևտրի աճը թեև հանգեցնում էր գասակարգային պայքարի սրմանը, սակայն, միաժամանակ նպաստում էր նոր սոցիալական ու տնտեսական հարաբերութիւնների առաջացմանը: Եվ միանգամայն հնարավոր է, որ այդ նոր ուժերը ժամանակի ընթացքում առաջ էին բերելու ֆեոդալական կազմակերպութեան տապալումը, եթե այդ իրադրութեան զարգացումը չխափանվեր թուրք-մոնղոլական արշավանքներով:

11-րդ դարի առաջին կեսում Բյուզանդիայի մերձավոր-արևելյան քաղաքականութեան մեջ տեղի ունեցավ սուր շրջադարձ: Քառասունամյա համառ կռիվից հետո Բյուզանդական պետութիւնը Արևմուտքում գրավեց Բուլղարական թագավորութիւնը և փոխեց իր քաղաքականութիւնը ֆեոդալական Հայաստանի և Անդրկովկասում առաջ եկած մանր թագավորութիւնների վերաբերմամբ:

Հանդես գալով ակտիվ կերպով Արևելքում, նա ենթարկեց իր իշխանութեանը Վանա լճի շուրջը տեղավորված ամիրայութիւնները և հետզհետե մտցրեց կայսրութեան կազմի մեջ արևմտյան Հայաստանը, Վրաստանի մի մասը, Վասպուրականում Արծրունիների թագավորութիւնը (1016 թ.), Անիի Բագրատունյաց թագավորութիւնը (1045 թ.) և Վանանդի մարզում Կարսի Բագրատունիների թագավորութիւնը (1064 թ.):

Հիշված բոլոր ֆեոդալական երկրներում նա անմիջապես ձեռք առավ միջոցներ հողագործական տիրող դասի և նրա զինվորական ուժի թուլացման վերաբերմամբ: Միացված մարզերից հողագործա-

կան աղնվականությունը մասսաներով հեռացվեց, գլխավորապես
յիպի Փոքր Ասիա և Կիլիկիա, որտեղ նրանք ստացան նոր հողեր և
կալվածքներ: Բագրատունիների և նախարարութունների տեղական
դինվորական ուժերը արձակվեցին և փոխարինվեցին կայսերական
եկվոր զորքերով: Եվ այնուհետև, երբ տիրող դասի ընդդիմությունը
կոտրված էր, ամենուրեք մտցրեց Բյուզանդիայի կայսերական վար-
չական ղեկավարություն:

Անիի Բագրատունիների թագավորությունը և Անի քաղաքը Բյու-
զանդացիները գրավել էին 1045 թվին, իսկ արդեն երեք տարուց
հետո սելջուկյան թուրքերի հրոսակախմբերը, որոնք մտել էին Հա-
լաստան Վասպուրականի կողմից, ավերեցին և քարուքանդ արին
Վանա լճից հյուսիս գտնվող մարզերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՔՈՒՆԻ ՀԱՐԿԵՐԸ ՄԱՐԶՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ¹

ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԱՐՍԿԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՔՈՒՆԻ ՀԱՐԿԵՐԸ ՀԱԶԿԵՐՏ Բ-ԻՑ ԱՌԱՋ

Հայոց մատենագրական աղբյուրներում Հայաստանի հնագույն հարկերը հիշատակվում են առաջին անգամ Եղիշեի պատմության մեջ և նրա վկայությունները վերաբերում են մարզպանության շրջանին: Հայաստանի պատմության նախկին շրջանների նկատմամբ հարկերի խնդիրը, ինչպես և շինական դասի դրույթունը, մենք են մոլթ ու անորոշ, որովհետև աղբյուրներն այդ մասին չեն տալիս ոչ տեղեկություն, ոչ էլ որևէ ակնարկ:

Խոսելով Հայաստանում Հազկերտ Բ-ի ժամանակ (439—457 թ.) տեղի ունեցած աշխարհագրի մասին, Եղիշեն հարկերի ծանրության մասին հաղորդում է հետևյալը. «Քանզի ուստի արժան էր առնուլ հարիւր դահեկանաւ չափ, կրկին առնուին, նոյնպէս և նպիսկոպոսաց և երիցանց դնէին, ոչ միայն շինաց, այլ և աւերակաց: Նա բնաւ ո՞վ իսկ կարէ պատմել վասն ծանրութեան մտից և սակից, բաժից և հասից և հարկաց լերանց և դաշտաց և մայրեաց: Ոչ ըստ արքունի արժանաւորութեանն առնուին, այլ հինաբար յափշտակելով. մինչև ինքեանք իսկ մեծապէս զարմանային, թէ ուստի այս ամենայն գանձ ելանէ, զիարդ շէն կայցէ աշխարհն» (Վենետիկ 1864, էջ 40): Մի ուրիշ հատվածում Եղիշեն դարձյալ վկայում է, որ Հազկերտ Բ-ը Հայաստանից ավելի հարկ է ստացել, քան նրա նախորդները. «Իսկ զմտից և զսակից, և որ այլ ևս էին հարկք աշխարհին, բազմագոյն

¹ Տե՛ս, «Դիտություն և Արվեստի ինստիտուտի տեղեկագիր» № 1. Երևան, 1926 թ.

քան առ հարբն նորա երթայր յարքունիս, նա և ի սուրբ եկեղեցւոյն, որ էր ազատ ի Քրիստոս ըստ կարգի նախնեացն մերոց, և դու ընդ հարկաւ եդիր» (Վենետիկ 1864, էջ 75): Դենշապուհի աշխարհագրի Պաքուն նպատակների մասին Նղիշին հաղորդում է հետևյալ տեղեկութիւնը. «Եւ յայսր ամենայնի վերայ այլ ևս շարութիւն խորամանկեաց: Զմի ոմն ի հաւատարիմ ծառայից իւրոց ի գործ առաքէր յերկիրն Հայոց, որում անուն էր Դենշապուհ: որ եկեալ հասեալ հրամանաւ արքունի, զողջոյն բերեալ զմեծ թագաւորին, և խաղաղասէր կեղծաւորութեամբ աշխարհագիր առնել ամենայն երկրին Հայոց ի խողովիւն հարկաց և ի թեթեւութիւն ծանրութեան այրեւծիոյ: Թէպետ և ի վերին երեսս կեղծաւորէր, այլ ի ներքոյ խորհուրդք շարագոյն ցուցանէին: Առաջին, զազատութիւն եկեղեցւոյն արկանէր ի ծառայութիւն. երկրորդ, միայնակեաց քրիստոնեայք՝ որ բնակեալ էին ի վանորայս, ընդ նովին աշխարհագրաւ էարկ. երրորդ, զհարկ աշխարհին առաւել ծանրացոյց. չորրորդ, բանսարկութեամբ զնախաբարեանն էարկ ընդ միմեանս, և յամենայն տան արար խռովութիւն: Եւ զայս ամենայն առնէր, թերեւ զմիաբանութիւնն քակեսցէ, և զուխտն եկեղեցւոյն ցրուեսցէ, և զմիայնակիացսն փախուսցէ և զշինականսն վատնեսցէ. և առ յոյժ աղքատութեանն՝ ակամայ դիմեսցեն յօրէնս մոգուց» (Վենետիկ 1852, էջ 38—39):

Նղիշիի այս վկայութիւնները, իմ կարծիքով, հիմք կարող են ծառայել, նախ և առաջ, ընդհանուր մի դիտողութեան:

Հայագիտական նորագույն երկերում ենթադրվել է հաճախ, ինչպես, օրինակ, Կ. Դյուտերբուրկի «Բյուզանդիտն և Պարսկաստան» հետաքրքիր ու կարևոր աշխատութեան մեջ, որ Պարսկական Հայաստանը 429 թվից հետո, կորցնելով իր ինքնավարութեան մնացորդները, միացվել է Սասանյան Պարսկաստանին, իբրև պարսկական մի նահանգ: Պատմական այս ամփոփումը կարող է, բնականաբար, մեկնվել այն իմաստով, որ իբր թե 429 թվից հետո Պարսկական Հայաստանի պետական հարկերը նույնը եղած պիտի լինեին, ինչ որ և մյուս պարսկական նահանգներում: Այդպիսի կանխակալ մի հետևություն, իմ կարծիքով, թույլատրելի չէ:

Մատենագրական մի շարք վկայութիւններից դժվար չէ գուշակել, որ 429 թվից հետո մինչև Հազկերտ Բ-ի նոր քաղաքականութիւնը Պարսկական Հայաստանի թե ներքին վիճակը և թե հարկային հին կարգերը մնացել էին գրեթե անփոփոխ:

Արշակունյաց թագավորութեան անկումից հետո, ինչպես վկայում է Նղիշին՝ «Ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն» (Վենետիկ 1852, էջ 11): «Զի թէպէտ և գանձն յարքունիս Պարսկաց

Երթայր,— ասում է Նղիշին,— սակայն այրուձին հայոց բովանդակի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի» (նույնը, էջ 11): Եվ իրոք, հայտնի է արդեն, որ հայկական նախարարութիւնները, որոնք իրենք էին հոգաբարկամ ցանկացել ենթարկվել Սասանյան Պարսկաստանի անմիջական իշխանութեան, Արշակունյաց վերջին թագավորի գահընկեցութեան հետո պահպանել էին անաղարտ ու անփոփոխ իրենց տիրական և գործակալական իշխանութեան գրեթէ բոլոր իրավունքները: Մամիկոնյանները մնում էին դարձյալ, իբրև Պարսկական Հայաստանի սպարապետներ, Վահան Ամատունուն հանձնված է եղել հազարապետութեան գործակալութիւնը, իսկ դատաւարութեան իշխանութիւնը, ըստ երևութիւն, մնացել էր բարձր հոգևորականութեան ձեռին:

Այս բոլորը պարզ ցուցմունքներ են, որ Արշակունյաց անկումից հետո Պարսկական Հայաստանի ինքնավար ներքին կազմակերպութեան մեջ զգալի փոփոխութիւններ չէին եղել:

Նույնը, հավանորեն, պետք է ենթադրել նաև Պարսկական Հայաստանի արքունի հարկերի մասին:

Նղիշի վերահիշյալ վկայութիւններից պարզ երևում է, որ հայ հոգևորականութեան հարկային բոլոր նախկին արտոնութիւնները մնացել էին անփոփոխ մինչև Հազկերտ Բ-ի նոր կարգադրութիւնը: Այս վերջին հանգամանքը կարող է հավանական մի նշան համարվել, որ Պարսկական Հայաստանի նաև մյուս արքունի հարկերը մարդպանութեան սկզբնական տարիներում փոփոխութեան չէին ենթարկվել: Նղիշի վերահիշյալ խոսքերը՝ «Որ զանձն յարքունիս Պարսկաց երթայր», ինձ թվում է՝ պետք է հասկանալ այն մտքով, որ Սասանյան Պարսկաստանին տրվելու էին այն արքունի հարկերն ու եկամուտները, որոնք գոյութիւն ունեին Արշակունյաց վերջին թագավորների ժամանակ:

Վարչական ու հարկային ուրույն այս վիճակը, որ Պարսկական Հայաստանն ունեցել է, հավանորեն, Հազկերտ Բ-ից առաջ, հարկավոր է աչքի առաջ ունենալ ու առանձնապես ընդգծել, որովհետև վարդապետաց շրջանի քաղաքական անցքերը ստանում են տարբեր լուսաբանութիւն, երբ նկատի են առնվում այս կարևոր հանգամանքները: Հազկերտ Բ-ի նոր քաղաքականութիւնը Պարսկական Հայաստանի հանդեպ ուղղված է եղել, ինչպես այդ պարզ երևում է փաստական մի շարք տվյալներից, ոչ միայն քրիստոնեական եկեղեցու դեմ, այլև նախարարութիւնների, նրանց արտոնյալ արտակարգ իրավունքների, նաև, ըստ երևութիւն, Պարսկական Հայաստանի հարկային հին կարգերի դեմ:

Սասանյան Պարսկաստանը, բնական է, որ վաղ թե ուշ ձգտելու էր տարածելու մարզպանական այս շրջանի վրա թե իր պետական օրենսդրության ընդհանուր որոշումները և թե հարկային այն սխեման ու այն կարգերը, որ պարտադիր են եղել մյուս մարզերում: Դենշապուհի աշխարհագիրը, հազարապետության հանձնումը պարսիկ պաշտոնյայի, եկեղեցու ու հոգևորականության հարկային ազատության ոչնչացումը և այլ նման փաստեր, իմ կարծիքով, ուշագրավ ու հավաստի նշաններ են, որ այդ փոփոխությունը Պարսկական Հայաստանի հարկային դրության վերաբերմամբ տեղի է ունեցել Հազկերտ Բ-ի ժամանակ:

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԿԵՐԸ ՄԱՐԶՊԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սասանյան Պարսկաստանի հարկերի ու ֆինանսական տնտեսության լուսարանության համար, ինչպես հայտնի է, գլխավոր ու հիմնական աղբյուրն է Տաբարիի արաբական ժամանակագրությունը: Ընդունելով, որ Պարսկական Հայաստանի արքունի հարկերը նման պիտի լինեին մյուս մարզերի հարկերին, այս աղբյուրի վկայությունները բնականաբար մեծ կարևորություն են ստանում նաև Պարսկական Հայաստանի համար:

Տաբարիի հաղորդած տեղեկությունների համաձայն՝ խոսքով նուշիրվանից առաջ (531—579 թ.) Պարսկաստանի թագավորները, սովորաբար, առնում էին առանձին շրջաններից, որպես հողային տուրք, բերքի $1/3$ -ը, $1/4$ -ը, $1/6$ -ը կամ $1/8$ -ը, նայած ոռոգման ու հողի մշակույթին: Բացի այդ նրանք առնում էին նաև որոշ գումար գլխահարկ: Պերոզի որդին Կավատը (488—531 թ.) իր թագավորության վերջում կարգադրած է եղել, որ հողաչափություն կատարվի դաշտային ու լեռնային հողերի, որպեսզի կարելի լինի ճշտվել որոշել հողային հարկերը: Այդ հողաչափությունը, որ սկսվել էր Կավատի ժամանակ, շարունակվել է ու ավարտվել խոսքով նուշիրվանի ժամանակ, որը կարգադրած է եղել համրել նաև մարդկանց ու հաշվել արմավենիների ու ձիթենիների քանակը: Այնուհետև՝ այս աշխարհագրից հետո, որոշված է եղել հարկերի չափը: Ամեն մի garib հողից (=3600 քառակուսի կանգուն, 1470 քառ. մետր, մոտավորապես $1/4$ դեսյատին²), որի վրա ցանված էր ցորեն կամ գարի՝

¹ Sk'w Th. Noeldeke, Tabari, Geschichte der Perser und Araber zur Zeit der Sasaniden, Leiden 1879, էջ 241—247.

² 1 garib հողը = 1470,87 $1/2$ քառակուսի մետրի, տես J.-A. Decourde-mauch, Traité pratique des poids et mesures des peuples ancienne et des

որոշված է եղել պահանջել 1 դրամ հողահարկ, մեկ garib խաղողի այգուց՝ 8 դրամ և այլն: Գլխահարկ վճարելու էին բոլորը՝ 20 տարեկանից մինչև 50 տարեկանը՝ բացի ազնվականներից, մեծամեծներից, զինվորներից, որոշ հոգևորականներից ու թագավորութան պաշտոնյաներից: Ամեն մի անձից առնում էին 12, 8, 6 կամ 4 դրամ՝ համաձայն հարկատուի կարողության: Գլխահարկի սովորական, տարածված չափը եղել է, ըստ երևույթին, 4 դրամ: Հարկերը գանձվում էին մաս մաս, տարին երեք անգամ, յուրաքանչյուր քառամսյակում տարեկան հարկի $\frac{1}{3}$ մասը:

Հենվելով Տաբարիի կարևոր այս տեղեկության վրա, պրոֆ. Նիկ. Ադոնցը «Армения в эпоху Юстиниана» իր ուսումնասիրության մեջ (էջ 481—485) քննության է առել Նդիշեի վերոհիշյալ վկայությունները, համեմատելով Պարսկական Հայաստանի հարկերն այն ընդհանուր հարկերի հետ, որոնք ընդունված են եղել Սասանյան Պարսկաստանում, իսկ հետագայում նաև Արաբական խալիֆատում: Նրա ասելով՝ Սասանյան Պարսկաստանում գոյություն են ունեցել երկու տեսակ հիմնական հարկեր՝ «խարաճ» հողային հարկ և gezith գլխահարկ: Նույն հիմնական հարկերը եղել են նաև Հռոմեական կայսրության մեջ tributum soli և tributum capitis, որոնք Դիոկետիանի բարենորոգումից հետո անվանվել են՝ capitatione terrena և capitatio humana կամ plebeia: Արաբական տիրապետության ժամանակ տարբերել են երկու կարգի հողային տուրք՝ vazifé և mucasame: Առաջինը, vazifé-ն համապատասխան լինելով եվրոպական cens-ին, վճարվել է դրամով՝ որոշ գումար հողային տարածության յուրաքանչյուր հատուկ միավորից: Իսկ երկրորդը՝ mucasame-ն, որ համապատասխանում է եվրոպական cham-part-ին, բնական հարկ է՝ որոշ մաս բերքից, որ տրվել է կալվածատիրոջ: Նիկ. Ադոնցի կարծիքով, արաբական vazifé-ն համապատասխանում է իրապես պարսկական «խարաճ»-ին, իսկ mucasame-ն անվանվում է պարսկերեն bahrak:

Բաղդատելով Նդիշեի մոտ հիշատակված հարկերը հիմնական ու սովորական այս հարկերի հետ, Նիկ. Ադոնցն ավելի քան հավանական է համարում, որ «բաժ»-ը համապատասխան կարող է լինել

Arabes, Paris 1909, էջ 65 և 90: A. Christensen-ը (garib հոդք ենթագրում է 2400 քառ. մետր) տես L'empire des Sassanides, Kobenhavn 1907 էջ 57), իսկ Alf. Kremer-ը 1169, 54 քառ. մետր) տես Culturgeschichte des Orients I էջ 98—99: J.-A. Dacourdemanch-ի հաշիվները վստահելի են ու հավաստի, որովհետև նրա երկը մասնագիտական հատուկ աշխատություն է, նվիրված հնագույն բոլոր չափերի համեմատական ուսումնասիրությանը:

«խարաճ»-ին և vazifé-ին, իսկ «սակ»-ը՝ gezith-ին: Նա հնարավոր է նաև համարում, որ Եղիշեի «մուտ»-ը և «հաս»-ը հոմանիշներ են սլարոններին «սակ»-ի և «բաժ»-ի և գործածական են եղել հայկական միջավայրում:

Այս ենթադրական համեմատությունները, պարզապես գուշակություններ են և ոչ հիմնավորված եզրակացություններ: Շատ պարզ է, որ հայկական հին հարկերը և նրանց իրական բովանդակությունը պետք է որոշել ոչ թե համեմատական այդ եղանակով, այլ, նախ և առաջ, հայոց մատենագրական աղբյուրների հավաստի ու հաստատուն վկայությունների օգնությամբ: Ներքև մենք քննության ենք առնելու Հայաստանի թե՛ այս և թե՛ մյուս հնագույն հարկերը՝ յուրաքանչյուրն առանձին՝ հիմնվելով մատենագրական վկայությունների վրա: Ինչպես կտեսնենք, ուսումնասիրության այդ եղանակով ստացվում են հավանական նոր եզրակացություններ, որոնք մեծ մասամբ, հիմնովին տարբեր են Ն. Ագոնցի վերոհիշյալ ենթադրություններից:

Պարսկական Հայաստանի առանձին հարկերի քննությունից առաջ՝ նախ կարևոր է, իմ կարծիքով, կանգ առնել ու ծանրանալ մի շարք ընդհանուր խնդիրների վրա, որոնք տրամաբանորեն բխում են Տաբարիի ու Եղիշեի վկայությունների բաղդատությունից և որոնք մինչև այժմ հարուցված չեն եղել:

Տաբարիի վկայությամբ՝ հողային դրամական հարկերի կիրարկումը Սասանյան Պարսկաստանում որոշված է եղել հոսորով Նուշիրվանի (531—579 թ.) հրամանով: Իսկ մինչ այդ գոյություն են ունեցել հողային բնական տուրքեր: Որ հողային հարկերը Սասանյան թագավորության նախնական շրջանում ունեցել են բնական տուրքերի բնույթ՝ այդ մասին ուշագրավ մի ակնարկ կա Աբրահամ հոստովանողի «Վկայք Արևելից» թարգմանության մեջ հետևյալ հատվածում, որ վերաբերվում է Պարսից թագավորին՝ «Գրգիս ի տաճարի որ շինեցաւ ի հզարաց, և բաղմնալ ես յապարանս, զոր զարդարեցին պնդակազմքն: Գան քեզ պատիւք և պատարագք ի հեռաստանէ և տասանորդք ի չորից կողմանց երկրի: Ուտես զսուրբ արգինս կալոց և ըմպես զաղնուական գինիս հնձանաց» (էջմիածին 1921, էջ 9): «Տասանորդք» գործ է ածված այստեղ, անշուշտ, հողային բնական հարկերի իմաստով:

Արդ, եթե ճիշտ է Տաբարիի այդ վկայությունը՝ կարելի է արդյոք առանց դրական ապացույցների ենթադրել, որ Եղիշեի թված հարկերից որևէ մեկը կարող էր ունենալ հողային դրամական հար-

կի՝ «խարաճ»-ի նշանակութիւնն: Ինչու շենթադրել, որ խոսքով Նուշիրվանից (531—579) առաջ Պարսկական Հայաստանում ևս հողային հարկը նույն բնույթն ունեցած պիտի լիներ, ինչ որ և մյուս պարսկական շրջաններում: Այս հարցերն այնքան կարևոր են ու առաջնակարգ Հայաստանի տնտեսական զարգացման պատմութեան համար, որ արժանի են, իմ կարծիքով, ամենալուրջ ուշադրութեան:

Եթե ի նկատի ունենանք, որ հողային հարկը նույնիսկ Բյուզանդական կայսրութեան մեջ տրվել է հաճախ բերքով (*In speciebus, ta eidê*) և տուրքի այդ ձևը վերջնականապես վերացվել ու փոխարինվել է դրամական վճարումներով միայն Անաստաս կայսրի ժամանակ (491—518 թ.)², ինձ թվում է՝ խիստ դժվար է Պարսկական Հայաստանի հողային հարկերն ընդունել դրամական, Հազկերտ Բ-ի ժամանակ (439—457 թ.): Անհավատալի կլինենք, իհարկե, կարծել, որ Պարսկական Հայաստանը տնտեսական իր զարգացման ու դրամական շրջանառութեան տեսակետից կարող էր այդ ժամանակ ավելի նպաստավոր պայմաններով մեջ գտնվել, քան Բյուզանդական կայսրութիւնը:

Հինգերորդ դարում, ճիշտ է, Արտաշատը և ապա Դվինը պարսկա-բյուզանդական տարանցիկ առևտրի կենտրոններն են եղել, բայց այդ փաստը չպետք է, իհարկե, գերազնահատել և կարծել, որ Հայաստանում, մանավանդ, նրա ծայրագավառներում, բնական տնտեսութիւնը կարող էր ստացած լինել դրամական բնույթ: Իմ կարծիքով, խնդրական ու վիճելի է նույնիսկ, թե արդոք, հիմնը վերով Տաբարիի վկայութեան վրա, կարելի է հաստատ կերպով պնդել, որ Պարսկական Հայաստանի հողային բնական հարկերը դրամականի էին վերածվել խոսքով Նուշիրվանի ժամանակ (531—579 թ.): Եթե անգամ այդ հավանական համարվի, դժվար է, իմ կարծիքով, պնդել, որ հարկատվութեան այդ նոր ձևը պարտադիր ու

¹ Միքայել Կաշու Փորթուգալը «Եդիշիի վարդապետի վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին» 1903 թվի իր հրատարակութեան բացատրական ծանոթութեաներում Դենշապուռի աշխարհագրին տվել է հետևյալ լուսարանութիւնը. «Պարսիկք,— ասում է նա,— տասանորդաց մեծամեծ անպատեհութիւնները տեսած էին, բայց որովհետեւ դժվարին է կարգել դուրս նոցա տված հասույթը մեկնն ի մեկ անշարժ սակի մը վերածել, առաջին փորձը Հայաստան փորձել ուղեցին՝ իրեն մնացյալ նահանգներեն ավելի բարգավաճ և հարուստ հրկիր» (Վննետիկ 1903, ծանոթ. էջ 216): Ուրեմն՝ Փորթուգալը ևս Պարսկահայաստանի հողային հարկը դրամական է ընդունում հիշյալ աշխարհագրից հետո: Իմ կարծիքով, աշխարհագրի բովանդակութեան այս բռնաձիգ մեկնութիւնը ծայրն է ծայր վիճելի ու կամայական է, որովհետեւ հիմնված չէ պատմական փաստերի վրա:

² Տե՛ս Լ. О. Кулаковскій, История Византии, I, 1913, էջ 524

ընդհանուր է եղել Պարսկական Հայաստանի բոլոր շրջաններում, Ուշագրավ է այս տեսակետից, որ արաբական տիրապետության սկզբնական շրջանում 7-րդ դարի վաթսնական թվերին, Աղվանքի հողային հարկերը եղել են բնական և ոչ դրամական:

Այդ մասին Մովսես Կաղանկատվացին, խոսելով Զուանշիր իշխանի ճանապարհորդության մասին Մուավիայի մոտ՝ հաղորդում է հետևյալ կարևոր տեղեկությունը. «Եւ սկսեալ այնուհետեւ (Զուանշիր) զթողութիւն ծանրաբեռն իւրոյ վիճակին խնդրել հարկաց, զոր ախորժելով յանձն էառ թագաւորն հարաւոյ, և հրամայեաց երկալիսեալ զհարկացն լուծ թեթեացուցանել յառաջին երրեակ շափուց զմասն մի՛ (Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս 1913, էջ 227—228)»։ Եւ այս վկայությունը վերաբերվում է Աղվանքին և 7-րդ դարի վաթսնական թվերին, բայց կարող է մի ակնարկ համարվել, որ Աղվանքի հարևան շրջաններում ևս հողային հարկը կարող էր այդ բնույթն ունենալ նույն 7-րդ և թերևս նաև նախորդ դարում:

Ինչպես տեսնում ենք, Պարսկական Հայաստանի հողային հարկերի վերաբերյալ այս հատուկ խնդիրն այնքան վիճելի ու այնքան լուրջ է, որ խիստ դժվար է ընդունել նիկ. Ադոնցի և Միքայել Փորթուգալի վերոհիշյալ կանխագուշակ եզրակացությունները, մինչև որ այդ եզրակացությունները չհաստատվեն որևէ հիմնավոր ազատույցներով: Ի՞նչ անգամ հողային հարկերի դրամական լինելը հավանական համարվի Պարսկական Հայաստանում հոսորով նուշիրվանի հատուկ կարգադրությունից հետո, որ, իմ կարծիքով, դեռևս վիճելի է, համենայն դեպս, մենք ոչ մի հիմք չունենք այդ հարկերը դրամական ենթադրելու հինգերորդ դարում Հազկերտ Բ-ի ժամանակ:

Ներքև մենք կտեսնենք, որ հողային հարկերը հին Հայաստանում անվանվել են, հավանորեն, «հաս», իսկ «բաժ»-ը, որ նիկ. Ադոնցը հոմանիշ է համարում «հաս»-ի, մատենագրական վկայություններում գործ է ածված, պարզապես, մաքսային հարկերի նշանակությամբ: Արդ՝ եթե ճիշտ են մեր գիտությունները, նշիշին վկայության մեջ հիշատակված «հաս»-ը պետք է ենթադրել իբրև հողային հարկ՝ բնական:

1 Այս հատվածի լուսարանությունը տվել է Թադ. Ավգալրեզյանը նորերս լույս տեսած իր ուսումնասիրության մեջ, տե՛ս «Ներկագործական հավելյալ արդյունքի նորման XVII—XVIII դարերում ու XIX-ի սկզբներում»: Նորք Ջ—Յ, Երևան 1923 թ.:

Մխիթար Գոշն իր Դատաստանագրքում կարծում է, որ գլխահարկն այլազգիներին, այսինքն՝ մահմեդականներին վճարվող հատուկ հարկ է, ուստի այդ հարկը քրիստոնյա իշխանները չպետք է պահանջեն հավատացյալներից: Անդատաստան է, — ասում է նա, — իշխանաց հարկել զհաւատացեալս, զոր հարկեն այլազգիք. զի յայլազգեաց հարկ արժան է և ոչ ի նոցոնց, որպէս և առնեն վիրք ընդ ձեռամբ անկելոցն» (հրատ. Վահան ծ. վարդ. Բաստամյանցի, Վաղարշապատ 1880, մասն Բ, ա, էջ 317)¹: Գոշի այս կարծիքը ճիշտ չէ, որովհետև գլխահարկը թե Սասանյան Պարսկաստանում և թե Հռոմեական կայսրության մեջ, ինչպես հայտնի է, սովորական ու հիմնական հարկերից մեկն էր:

Հատկապես, Հռոմեական կայսրության արևելյան հայկական շրջաններում «գլխահարկը» կրել է կամ սովորական անձնական հարկի բնույթ, կամ երբեմն համեմատաբար թեթև է եղել և ունեցել է, մոտավորապես, ծխահարկի նմանություն: Հայտնի է, օրինակ, 386 թվի Թեոդոս Ա-ի հրովարտակը, որը վերաբերվում է Արմենիային ու Կապադովկիային և որի մեջ ասված է, որ առաջ գլխահարկի նորման որոշված է եղել տղամարդկանց ամեն մեկից և կանանց երկուսից, իսկ այժմ տրվելու է՝ երկու երկու կամ երեք երեք տղամարդ և շորսական կին հաշվելով մեկ գլուխ»²:

Քանի որ դրամական այս հարկը գլխահարկի կամ ծխահարկի ձևով գոյություն է ունեցել Սասանյան Պարսկաստանում և Հռոմեական կայսրության մեջ, ինձ հավանական է թվում, որ նույն հարկն այս կամ այն ձևով գոյություն ունեցած պիտի լիներ նաև Արշակունյաց թագավորության ժամանակ: Ներքև, «հաս»-ի մասին խոսելիս, կտեսնենք, որ եկեղեցական ծխահարկը, որ հիշատակված է Սահակի կանոններում, կարող էր թերևս առաջ եկած լինել աշխարհական համալսարանական հարկերի նմանողությամբ: Եթե հաջողվի այդ ավելի որոշ կերպով ապացուցել, այդ դեպքում՝ վերոհիշյալ հարկն Արշակունյաց թագավորության ժամանակ պետք է ենթադրվի որպես երգահարկ և ոչ գլխահարկ: Այս հարևանցի, իհարկե, մի դիտողություն է, որ կարոտ է ավելի լուրջ հիմնավորման:

¹ Տես նաև էջ 314՝ «զի ոչ է հարկ գլխոյ քրիստոնէից, բայց այլազգեաց՝ յորժամ րոնի ընդ հարկաւ արասցեն»:

² Տե՛ս՝ Cod. Theod. 1312², cum antea per singulos viros, per binas vero mulieres caplius norma sit c. nsa, nunc binis ac ternis viris, mulieribus autem quaternis unius pendendi capitis adtributum est.

Եթե հողային դրամական հարկերի գոյութիւնը վիճելի ու անհավանական էր Պարսկաստանում, ինչպես և Մարգարական Հայաստանում, Հազկերտ Բ-ի ժամանակ (439—457 թ.), գլխահարկի գոյութիւնը նույն այս շրջանում կարելի է համարել միանգամայն հաստատ ու անտարակուսելի:

Սասանյան Պարսկաստանում, ինչպես տեսանք Տաբարիի վկայութիւնից, գլխահարկը եղել է գլխավոր հարկերից մեկը ոչ միայն խոսքով նուշիրվանի ժամանակ վեցերորդ դարում, այլև հնագույն շրջանում: Որ Պարսկական Հայաստանում ևս այս հարկը գոյութիւն է ունեցել խոսքով նուշիրվանից (531—579 թ.) առաջ Հազկերտ Բ-ի ժամանակ (439—457 թ.)՝ այդ պարզ երևում է, իմ կարծիքով, Եղիշեի վերահիշյալ վկայութիւնների հետևյալ հատվածներից. 1) «միայնակեաց քրիստոնեայք, որ բնակեալ էին ի վանորայս, ընդ նովին աշխարհագրաւ էարկ» (վեցերորդ 1852, էջ 39), 2) «բանդ ուստի արժան էր առնուլ հարկւր դահեկանաւ շափ, կրկին առնուին. սոյնպես և եպիսկոպոսաց և երիցանց ղնէին ոչ միայն շինաց, այլ և աւերակաց» (նույնը, էջ 40):

Այս վկայութիւններից կարելի է անել մի քանի կարևոր հետևութիւններ: Հարկը դրված է եղել, ինչպես տեսնում ենք, միայնակացների, եպիսկոպոսների և քահանաների վրա անձնապես ուրեմն՝ պարզ է, որ այդ Տաբարիի հիշատակած գլխահարկն է: Երկրորդ՝ կարելի է ենթադրել, որ դրամական այդ հարկը համապատասխան Տաբարիի վկայութեան ունեցել է ոչ թե ժխահարկի, այլ գլխահարկի բնույթ: Երրորդ՝ աշխարհագիրը, որին ենթարկվել էին միայնակացները, պետք է հասկանալ, անտարակույս, մարդահամարի նշանակութեամբ:

Բացի Եղիշեից, գլխահարկի մասին ուշագրավ մի վկայութիւն կա նաև Մովսես Կաղանկատվացու պատմութեան մեջ: Խոսելով Աղվանքի ծանր դրութեան մասին խաղաղների տիրապետութեան շրջանում՝ 627 թվից հետո, Կաղանկատվացին հաղորդում է հետևյալ հետաքրքիր տեղեկութիւնը. «Նաև զանցս վաճառաց և զկարթընկէցս ձկնորսութեան մեծամեծ գետոցն Կուրայ և Երասխայ՝ ղամեայն ճշդիւ պահանջէր (Շաթ), և զգիտրաքմայսն ըստ սովորութեան աշխարհագրի Պարսից թագաւորութեանն» («Պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս 1913, Բ. գլ. ԺԶ, էջ 190): Այս վկայութեան մեջ, որը վերաբերվում է, անշուշտ, գլխահարկին, որոշված է այդ հարկի սովորական տարածված չափը: Թ. Նյուդեկեն Տաբարիի գերմաներեն թարգմանութեան մեջ հաղորդում է, որ շինացի Հիոնեսթ-սանգի (Mem. sur contrées occ. II 179) վկայութեամբ՝ Պարսից թա-

չավորութեան մեջ յուրաքանչյուր ընտանիք վճարել է գլխահարկ մարդագլուխ 4 արծաթ (Tabari էջ 246, ծան. 2): Այս վերջին վկայութիւնը, ինչպես տեսնում ենք, հաստատում է նաև Կաղանկատվացու վերոհիշյալ տեղեկութեամբ: «Դիտրաքմայան» (հունարեն didrachmon հոգնակի didrachma), ամենայն հավանութեամբ, գործ է ածված նրա մոտ սատերի իմաստով, որի կշիռը հավասար էր 4 դրամի¹: Ընդունելով Սասանյան արծաթ դրամի կշիռը համաձայն Անանիա Շիրակացու հաշիվներին, մոտավորապես 4 դրամ, նրա դրամական արժեքը հավասար կլինի, մոտավորապես այժմյան 25 կոպեկին²:

Ուրեմն՝ գլխահարկի սովորական ընդհանուր չափը պետք է լինի Սասանյան Պարսկաստանում մարդագլուխ, մոտավորապես, 1 ռուբլի: Հարկավոր է, իհարկե, որոշել դրամական այդ գումարի նաև իրական արժեքը, որ Սասանյանների ժամանակ, հավանորեն, ավելի քարձր եղած պիտի լիներ, քան այժմ: Սակայն այս խնդրի լուսաբանութիւնը, դժբախտաբար, դեռևս հնարավոր չէ, որովհետև, որքան ինձ հայտնի է, այդ մասին պատմական համապատասխան տվյալներ գրեթե չկան: Ուշադրութեան արժանի է այդ տեսակետից, որ Մահմեդի հաջորդ Աբու Բեքրի իշխանութեան շրջանում (632—634 թ.), ճիշտ այն ժամանակ, որին վերաբերվում է Կաղանկատվացու վերոհիշյալ վկայութիւնը, Արաբիայում մեկ ոչխարը գնահատվել է 10 դրամ³:

Ալֆ. Կրեմերը դրամի արժեքը խալիֆատի ծագման շրջանում ննթադրում է, մոտավորապես, 1 ֆրանկ (Culturgeschichte էջ 15) և ոչխարի գինը ընդունում 10 ֆրանկ (էջ 52): Դրամի իրական ար-

1 Անանիա Շիրակացու «Յաղագս կշոց և չափույց» գրվածքի երկու ձևադրում «գիտաբանայա»-ի մասին կա հետևյալ վկայութիւնը, որից երևում է, որ «գիտաբանայա»-ն հաճախ հավասար է համարվել սատերին՝ «գրամեն Բ գրամակշիւ է գիտաբանայն Դ գրամակշիւ է. գիտաբանայն և սատերն մի է» (տես Անանիայի Շիրակունւոյ, Մնացորդ բանից, Ս. Պետ. 1877, էջ 33): Հմմտ նաև Յ. վարդ. Ավդերյանի, Բացատրութիւն չափուց և կշոց նախնաց, Վննտիկ 1821, էջ 77—78:

2 Տես «Յաղագս կշոց և չափույց», էջ 28—29՝ «գրամ ըստ պարսկական լիզդոին անուանեցաւ և յարժաթոջ տպաւորեցաւ, որ է 2 մասն լտերա: Այս հաշիվ երբ կշիւր յոթնորոգ դարում պետք է ընդունել մոտավորապես 4 դրամ: Կրեմերի Culturgegeschichte des Orients unter den Chalifen, 1875 թ. աշխատության մեջ Սասանյան դրամի կշիռն ընդունում է 3.9 դրամ (էջ 60): Յր. Շպիդելի մոտ սասանյան դրամի արժեքը որոշված է 65—70 սանտիմ (Eransiche Alterthumskunde, 13. III, Leipzig, 1878 էջ 633), իսկ Բ. Նյուդեկեյի Տաբարիի թարգմանութեան մեջ՝ 70 պֆեննինգ կամ 86 սանտիմ (Tabari էջ 245, 355): Բ. Նյուդեկեյի հաշիվը տարբեր է, որովհետև նա սասանյան դրամի կշիռը համարել է մեկ մոխար:

3 Տես A. Cremer, Culturgeschichte, Wien 1875, էջ 52:

ժողովրդի կարևոր այս փաստը, թեև Սասանյան Պարսկաստանի համար վճռական որևէ նշանակություն չունի, սակայն, այնուամենայնիվ, ուշագրավ մի ակնարկ է, որ դրամի իրական արժեքը կարող էր հին ժամանակներում ևս լինել բավական ցածր և համապատասխան, մոտավորապես, նորագույն ժամանակվա ռենթին որոշ տեղերում:

Վերոհիշյալ վկայությունների օգնությամբ որոշվում է, իմ կարծիքով ոչ միայն գլխահարկի գոյությունը Մարդպանական Հայաստանում, այլ նրա հավանական ընդհանուր չափը:

Ներքև մենք կտեսնենք, որ գլխահարկը հին Հայաստանում անվանվել է, հավանորեն, «սակ», ինչպես այդ ճիշտ գուշակել է Նիկ. Ադոնցը: Հավանական է, ուրեմն որ Նիզիհի վերոհիշյալ վկայությունների մեջ հիշատակված են Սասանյան Պարսկաստանի հիմնական հարկերը՝ հողայինը և գլխահարկը. առաջինը, ըստ երևույթի, անվանված է նրա մոտ «հաս», իսկ երկրորդը՝ «սակ»:

«ՀԱՐԿԵ ԼԵՐԱՆՑ ԵՎ ԴԱՇՏԱՆՑ ԵՎ ՄԱՅՐԵԱՅ»

Միքայել Փորթուգալը Դենշապուհի աշխարհագրի բնույթը Հագկերտ Բ-ի ժամանակ բացատրում է իբրև մարդահամար և միաժամանակ իբրև ընդհանուր հողաչափություն՝ ոչ միայն մշակվող հողերի, այլև լեռների, դաշտերի, անտառների և նույնիսկ ավերակ տեղերի: Բնակ հարկերը թեթևեղությամբ կամ ծանրացնելու նպատակով, — ասում է նա, — եղած աշխարհագիրը բնական է, որովհետև անձնական տուրք մը կամ գլխահարկ մը հաստատելու համար ազդահամարն անհրաժեշտ է. բայց որովհետև լեռանց, դաշտաց և անտառաց և շինից և աւերակաց վրա այլ և այլ տուրքեր գրուեցան կամ եղածներն ավելցան, պետք է հետևենք՝ թե այդ աշխարհագիրը cadastre մի էր և ոչ պարզ ազդահամար¹: Փորթուգալը, ինչպես տեսնում ենք, ենթադրում է, որ Պարսկաստանում Հագկերտ Բ-ի ժամանակ հարկ է դրված եղել բոլոր հողերի վրա՝ մշակվող թե անմշակ, մասնավորապես, նաև բոլոր լեռների վրա:

Արդ՝ ճիշտ է արդյոք այդ: Հավանական է արդյոք, որ Պարսկական Հայաստանում Հագկերտ Բ-ի ժամանակ հարկ է առնվել ոչ միայն մշակվող, այլև անմշակ հողերից, անգամ ավերակներից: Կարելի է արդյոք Նիզիհի մոտ հիշատակված «Հարկը լեռանց և դաշտաց և մայրեաց» հասկանալ վերոհիշյալ իմաստով: Վերջապես՝

¹ Տես «Նիզիհի վարդապետի վասն Վարդանյա և հայոց պատերազմին» Վեներսի 1903, էջ 215, ծան. 1:

որոշ է արդյոք, որ Դենշապուհի աշխարհագիրն ունեցել է, անպայման, ոչ միայն ազգահամարի, այլև ընդհանուր հողաշահության շնույթ:

Քննենք նախ առաջին հարցը: Եղիշեի համապատասխան վկայությունը հետևյալն է՝ «սոյնպէս և եպիսկոպոսաց և երիցանց ղնէին, ոչ միայն շինաց, այլ և աւերակաց» (Վենետիկ 1852, էջ 40): Այս վկայությունից ոչ մի կերպ չի կարելի հետևցնել, որ հարկ է դրված զոհել ավերակների վրա, ինչպես այդ թյուրիմացաբար ենթադրել է Միքայել Փորթուգալը: «Ոչ միայն շինաց, այլ և աւերակաց» բառերը պետք է, անտարակույս, իբրև լրացումն կապակցել նախորդ սահադասության հետ: Եղիշեն ուզում է ասել, որ հարկ է պահանջվել անգամ ավերակ տեղերի շքավոր երեցներից: Ավերակներից հարկ առնելը, իմ կարծիքով, այնքան է օտարոտի ու անհավատարմ, որ նրա գոյությունը Պարսկական Հայաստանում, նույնիսկ Հազկերտ II-ի ժամանակ, պետք է համարել միանգամայն անհավանական:

Ավելի որոշ է Եղիշեի մոտ լեռանց, դաշտաց և մայրեաց» հարկերի հիշատակությունը: Լեռների ու դաշտերի հարկերը, ըստ երկրության, պետք է հասկանալ, գլխավորապես, իբրև արոտատեղերի հարկ: Բայց անվիճելի՝ է արդյոք, որ Պարսկական Հայաստանում հատուկ հարկ է դրվել բոլոր լեռների, դաշտերի ու անտառների վրա: Այս խնդիրն այնքան կարևոր է ու լուրջ, որ կարոտ է ուշադիր քննություն:

Ինչպես վերև տեսանք, Տաքարիի վկայության մեջ այս հարկերը չեն հիշված: Արաբական խալիֆայության սկզբնական շրջանում, թեև Սասանյան թագավորության արքունի հարկերը մնացել էին գրեթե նույնը, սակայն այս հարկերը, որքան ինձ հայտնի է, չեն մատնանշված իբրև ընդհանուր ու հիմնական հարկ: Հետաքրքիր են այս հարկերի մասին Մխիթար Գոշի հետևյալ վկայությունները. 1) «Արօտի այլ հարկ մի լիցի, զի այն իսկ են արօտականք որ հարկին» (Դատաստանագիրք, մասն երկրորդ, Ա, էջ 315), 2) «Իսկ պտուղ ամենայն գտեալ ի մայրիս իւրաքանչիւր սահմանաց նոցա լիցի: Շինականաց իրաւացի է տասանորդել օտարացն ի կթել պղտղոցն, որ ոչ իւրեանց իցէ, այնոցիկ՝ որոց իցէ սահմանն և ըստ խնդրոյ նոցին կամօք եղիցի: Այսպէս և փայտ ի շինուած, և խոտ յարօտ և ի հնձել, և հող ի վարել» (նույնը, մասն երկրորդ, Ժ, էջ 327): Գոշի այս կանոնները, թվում է ինձ, որ համապատասխան պիտի լինեն այն ընդհանուր ու իրական կարգերին, որ սովորական են եղել նրա ժամանակ: Յ. Կարստե այս կանոնների առթիվ, որ նույնությամբ առաջ են բերված նաև Սմբատի Դատաստանագրքում,

հայտնել է այն կարծիքը, որ անտառների, արոտի, ջրի, որսի ու ձկնորսության վերաբերմամբ գերագույն իշխանության ու տնօրինության իրավունքները, որ ֆինանսական գիտության մեջ անվանվում են *regalia* պատկանել են Գոշի ու Սմբատ Գունդստարլի ժամանակ ոչ թե արքունիքին, այլ ֆեոդալ հողատերերին: Ֆեոդալական այդ *regalia*-ների արտահայտությունն է, նրա կարծիքով, այն ուշագրավ փաստը, որ շինականները կարող էին օգտվել անտառներից, արոտներից և մյուս իրավունքներից իրանց տիրոջ հողերում, քայց այդ սահմաններից դուրս նույն իրավունքների համար վճարելու էին տասանորդ օտար տերերին: Նրա ասելով՝ ինչպես Արևմտյան Եվրոպայում, նույնպես և այստեղ, նախնական արքունի *regalia*-ները թողնվել են հետզհետե հօգուտ ֆեոդալ հողատիրոջ:

Յ. Կարստի այս դիտողությունների մեջ ճիշտ ու անվիճելի կարելի է համարել միայն այն, որ ԺԲ-րդ դարում անտառները և արոտատեղիները պատկանել են Հայաստանում և Ռուբինյան թագավորության մեջ հողատերերին և գտնվել են նրանց տնօրինության տակ: Իսկ թե դրանք Հայաստանում ևս, ինչպես և Արևմտյան Եվրոպայում, եղել են արքունի *regalia*-ներ պատմական հնագույն շրջանում, այդ հարկավոր է, անշուշտ, ապացուցել դրական որևէ փաստերով:

Արդ՝ կարելի չէ՝ արդյոք Եղիշեի վերահիշյալ վկայության մեջ «լեռանց և դաշտաց և մայրեաց» հարկերի հիշատակությունը հավանական մի ապացույց համարել, որ արոտատեղիները և անտառները եղել են Մարզպանական Հայաստանում արքունի *regalia*:

Եթե ի նկատի ունենանք, որ նախարարությունները շատ ավելի զորեղ են եղել Հայաստանում, քան ֆեոդալական ուրիշ երկրներում, որ նրանք ունեցել են ընդարձակ ու բացառիկ տիրական իրավունքներ, ինձ թվում է, դժվար ու անհավանական կլինի ենթադրել, որ նախարարապետական շրջաններում Արշակունյաց կամ Սասանյանների ժամանակ անտառները և արոտատեղիները կարող էին լինել թագավորական հատուկ *regalia*: Եղիշեի վկայությունը վերաբերվում է, իմ կարծիքով, միայն այն լեռներին, դաշտերին և անտառներին, որոնք «քնիկ սեփական կալուած» էին Արշակունի թագավորների և նրանց անկումից հետո պետական սեփականություն էին դառել Սասանյան Պարսկաստանի, «Հարկք լեռանց և դաշտաց և մայրեաց» հնարավոր է, ուրեմն, հասկանալ նաև նեղ իմաստով, իբրև արքունական կալվածքների հարկեր: Եթե այս լուսաբանու-

¹ Josef Karst, Sempadische: Kodex, Strassburg 1905, Bd. II, էջ 17

թյունն ընդունելի համարվի, այդ դեպքում՝ արքունի այդ հարկերը կլինին ոչ թե միջնադարյան *regalia*¹ հատուկ մենաշնորհ թագավորական գերագույն իշխանության, այլ հողատիրական սովորական մի եկամուտ:

Հայտնի է արդեն, որ մարզպանության շրջանում թագավորական են համարվել, իբրև *regalia* Հայաստանի ոսկու հանքերը, որ պտնվում էին Փարանգիոնում²: Կարող էին լինել և ուրիշ *regalia*-ներ, որոնց մասին վկայություններ չեն պահպանվել: Բայց ենթադրել, որ թագավորական իշխանությունն ունեցել է Հայաստանում մենաշնորհի գերագույն իրավունքներ բոլոր արոտատեղերի, անտառների, ջրի, որսի ու ձկնորսության վերաբերմամբ, այդ, իմ կարծիքով, անհավատարի է ու միանգամայն անհավանական:

Միքայել Փորթուգալը, ինչպես վերև տեսանք, Դենշապուհի աշխարհագիրը համարում է ոչ միայն «ազգահամար», այլ նաև ընդհանուր հողաչափություն՝ *cadastre*: Նրա ասելով՝ քանի որ Վերանց դաշտաց և անտառաց և շինից և աւերակաց վրա տուրքեր են դրել կամ եղած տուրքերն ավելացրել, կարելի է դրանից հետևցնել, որ աշխարհագիրն ունեցել է *cadastre*-ի բնույթ, վերև մենք բացատրեցինք, որ Նղիշեի մոտ հիշատակված են ոչ թե աշինաց և աւերակաց» հարկերը, այլ աշինաց և աւերակաց» երեցների հարկերը: Նմանապես՝ «Հարկք լերանց, դաշտաց և անտառաց» վերաբերվում են հավանորեն, ոչ թե ամբողջ երկրին, այլ արքունի միայն կալվածքների: Վիճելի են, ուրեմն, Փորթուգալի պատճառաբանության հենց հիմնական նախադրյալները:

Անկախ նույնիսկ փաստական այս առարկություններից, ինձ թվում է, դժվար է, ընդհանրապես, ենթադրել, որ Դենշապուհի աշխարհագրի ժամանակ կարող էին չափված լինել Պարսկական Հայաստանի բոլոր լեռները, դաշտերը, անտառները և անգամ ամայի ու ավերակ տեղերը: Ինչ վերաբերում է մշակվող հողերին, սրանց հողաչափությունը ևս ինձ անհավանական է թվում, որովհետև, ինչպես վերև ենթադրեցինք, հողային հարկերը այս դարաշրջանում եղել են, հավանորեն, բնական և ոչ դրամական: Ընդհանուր հողաչափությունն անհրաժեշտ պիտի լիներ, բնականաբար, Կավատի (488—531 թ.) և Խոսրով Նուշիրվանի (531—579 թ.) ժամանակ, որովհետև հողային բնական հարկերը վերածվել էին դրամականի, որը վճարվելու էր հողի տարածության յուրաքանչյուր 1 *garib* միա-

¹ См. A. Christensen, L'empire des Sassanides, Kobenhavn 1907, էջ 58, նաև Procopii, Bellum Persicum, I, 15

վորից, սակայն վեցերորդ դարից առաջ, քանի որ նույն՝ հարկերը բերքից էին տրվում, ընդհանուր հողաշահությունը, իմ կարծիքով միանգամայն ավելորդ էր ու անիմաստ: Դենշապուհի աշխարհագիրը, այս դիտողությունների համաձայն, հավանական է ենթադրել, գլխավորապես, իբրև ընդհանուր մարդահամար: Եթե անգամ հնարավոր համարվի, որ այս աշխարհագրի ընթացքում կարող էին որոշ շահով հաշվի առնել արքունական, նախարարական և մյուս հողերն ու կալվածքները, այդ հաշվառումը դժվար թե նման լիներ այն հատուկ cadastre-ին, որ անհրաժեշտ էր համարվել վեցերորդ դարում:

ՀԱՐԿԱՀԱՎԱՔՄԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՐԿԵՐԸ

Հարկահավաքման կազմակերպության մասին Տարարին տալիս է հետևյալ կարևոր տեղեկությունը: Նրա ասելով՝ աշխարհագիրը վերջանալուց հետո՝ խոսքով Նուշիրվանը կարգադրում է հարկերի պարտքների ցուցակներից մեկական օրինակ ուղարկել հարկահան պաշտոնյաներին, նաև մեկական օրինակ՝ շրջանների դատավորներին: Այս վերջիններին նա հրամայում է արգիլել վարչական պաշտոնյաներին, որ նրանք չպահանջեն ավելի հարկ, քան որոշված է ցուցակներում¹:

Այս վկայությունից պարզ երևում է, որ խոսքով Նուշիրվանի ժամանակ հարկերը չեն տրվել կապալով, ինչպես այդ ընդունված էր երբեմն պատմական հին ժամանակներում, այլ գանձվել են վարչական կարգով և հատուկ պաշտոնյաների միջոցով:

Հայկական աղբյուրների վկայություններից ևս կարելի է, իմ կարծիքով, հետևել, որ Հայաստանի հարկերի հավաքումը հանձնված է եղել մարզպանության շրջանում, հավանորեն, նաև Արշակունյաց ժամանակ, ոչ թե կապալառուների, այլ կառավարչական հատուկ պաշտոնյաների, որ անվանվում էին ռոմթակալ-ներ: Այդ դժվար չէ եզրակացնել, օրինակ, հետևյալ վկայություններից 1) Ղազար Փարպեցի, Պատմություն Հայոց, Բ, գլ. ԽԵ, էջ 83 (Տփլիս 1904)՝ «Եւ հարկքս ամենայն աշխարհիս Հայոց առ իս են, և գործակալք ամենայն յիմում ձեռին են, և այլևս բազում կարասի, զոր ի պարսիկ գործակալացն հանի՝ որ աստ ի Հայս էին, և յիմում գանձի կայ»։ 2) Կանոնք Յովհաննու Մանդակունույ Գ. Գ, էջ 90 (հրատ.

¹ Th. Noeldeke, Tabarl, էջ 247:

Ա. Ղլտճյանի)՝ «Եթե ոք ի քահանայից ի գնել կամ ի վաճառել կըրթնացին, կամ իշխանութեամբ իշխանաց վարեսցին՝ հարկապահանջն ինելով և յոստիկանս կարգել աշխարհական գործոց, ասէ գիրն. Եւսն ոսոս զաւեր նոցա»:

Թե Արշակունեաց և Թե մարզպանութեան շրջանում հարկային գործի վարչական գերագույն իշխանությունը, իբրև հատուկ «գործակալութիւն», անվանվել է Հայաստանում «հազարապետութիւն»։ «Հազարապետ»-ը վարել է ոչ միայն հարկահավաքման գործը, այլև պարտավոր է եղել աջակցել երկրի շինարարական աշխատանքներին և շինական տնտեսության զարգացմանը։ «Հազարապետութեան» այս վերջին պարտականությունները, անշուշտ սերտ կապված էին հարկահանութեան գործի հետ։ Հողի մշակությունը, ոռոգման գործը և, ընդհանրապես, երկրի շին վիճակը նշանակություն ունեին, իբրև հիմք և աղբյուր պետական բարեկեցության և պետական եկամուտների։ «Հազարապետ»-ի աշխարհախնամ գործունեության կարևոր այս կողմը շեշտված է, հատկապես, Փավստոսի պատմության հետևյալ հատվածում. «Եւ սկիզբն գործակալութեանն հազարապետութեանն՝ աշխարհատեսն խնամակալութեանն, աշխարհաշին աշխարհատած ղեհկանութեան, շինականաշէն ազգն Գնունեաց հազարապետն ամենայն երկրին» (Վենետիկ 1832, էջ 67)։ Իսկ նույն պաշտոնի ֆինանսական բնույթը կարելի է ենթադրել Նոր Կտակարանի հայերեն թարգմանությունից, որի մեջ «Հազարապետ» բառը համապատասխանում է հաճախ հունարեն *voikonomos* (ստնօրեն, տնտես) բառին (Ա Պետ. Դ, 10, Ա. Կորնթ Դ, 1 և 2)։ Թովմա Արծրունու պատմության մեջ «հազարապետ» բառը գործ էածված իբրև տեսուչ և վերակացու արքունի հարկերի։ «Ի դառնալն Ապուսէթի յԱսորիս,— ասում է Թովման,— և Մոսսեի հաւատալ ղվերակացութիւն հարկաց արքունի, և ընդդեմ եկեալ յարքունուստ հազարապետ ոմն հարկաց Մովսիի կոչեցեալ ամիրայ Ալայ անուն» (Պատմութիւն տանն Արծրունեաց, Պետերբուրգ 1887, Դպր. Բ, գլ. Զ, էջ 111)։ Իբրև պարսկական Հայաստանի «հազարապետ»-ներ հիշված են Կորյունի և Ղազար Փարպեցու մոտ՝ Վահան Ամատունին Հազկերտ Բ-ի քաղաքական վերանորոգումներից առաջ և պարսիկ Վեհվեհնամը Ատրվշնասպի մարզպանության շրջանում¹։

Սասանյան պետության մեջ հարկերի վերաբերյալ բոլոր գործերը և գրագրությունները կենտրոնացած են եղել «դիւան»-ներում։

¹ Տե՛ս Կորյուն, Պատմութիւն վարուց և մահվան սրբոյն Մեսրոպայ վարդապետի, Վենետիկ 1804, էջ 44 և Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Տփլիս 1904, Դ Գլ. 44, էջ 118:

Պարսկական Հայաստանի ադիւանը-ը գտնվել է Դվին քաղաքում՝ մարզպանութւյան վարչական կենտրոնում։ Այդ ադիւան-ին ենթակա են եղել բոլոր շրջանների գործերը։ Հայտնի է սակայն, որ 572 թվի նախարարական ապստամբութիւնից առաջ Սյունիքը միացրել էին Ատրպատականի աշահրմար-ին և նրա գործերի ադիւանը-ը փոխադրել էին Դվինից Փայտակարան քաղաքը։ Այդ անշատման մասին Սեբեոս պատմագիրը հաղորդում է հետևյալը. «Յայնժամ յառաջ քան զայս ապստամբեալ ի բաց եկաց ի Հայոց՝ անուանեալ Վահան իշխան աշխարհին Սիւնեաց, և խնդրեաց ի խոսրովայ յարքայէն Պարսից, զի տարցեն զադիւան աշխարհին Սիւնեաց ի Դընայ ի Փայտակարան քաղաք, և կարգեսցէ զքաղաքն. ի շահրմար՝ Ատրպատականի. զի մի ևս կոչեսցի անուն Հայոց ի վերայ նոցա, և կատարէր հրամանն» (պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն, Պետերբուրգ 1879, գլ. Ա, էջ 26)։ Լինելով վարչական կենտրոն Պարսկական Հայաստանի, Դվինը միևնույն ժամանակ պարսկահռոմեական դաշինքների համաձայն ճանաչված է եղել իբրև միջազգային առևտրի գլխավոր վայրերից մեկը։ Յուստինյանի օրենսգրքից հայտնի է, որ, հավանորեն, 387 թվի դաշնադրութեամբ, ուրեմը՝ Հայաստանի բաժանումից հետո՝ որոշված են եղել առևտրական հարաբերության ու փոխանակության համար երեք հատուկ վայր՝ հռոմեական Կալլինիկոնը, պարսկական Մծբինը, նաև Պարսկական Հայաստանում նախ Արտաշատը, իսկ հետո Դվինը²։ Իբրև միակ վայր, ուր թույլ էր տրված առևտուր անել երկու կողմի վաճառականներին, Դվինը, բնականաբար, ստացած պիտի լիներ միջազգային կենտրոնի բնույթ։ Պրոկոպիոսի վկայութեամբ՝ առևտրականներն ապրում էին այստեղ բազմամարդ գյուղերում՝ որ դրսևում էին իրար մոտ։ «Հնդկաստանից, հարևան վրաստանից, Պարսկաստանի գրեթե բոլոր ժողովուրդներից, նաև հռոմեական որոշ մասն-

1 «Շահրմար» բառը Ք. Պատկանյանի հրատարակության մեջ տպված է մեծատառ, սակայն այդ բառը հասարակ անուն է և ոչ հատուկ։ Նույն բառը, իբրև փոխառութիւն պարսկերենից, գործածական է եղել նաև հայերենում, բայց լինելով հնագույն շրջանի փոխառութիւն՝ արտասանվել է աշխարհամարտ։ «Շահրմար»-ի ուղիղ նշանակութիւնը՝ իբրև «աշխարհագիր»՝ մատնացույց են արել Յ. Մարկվարտը և Ն. Ադոնցը. տե՛ս Eranchahr Berlin 1901, էջ 122 և «Армения в эпоху Юстиниана», էջ 220—221։ Սյունիքը և Փայտակարանը, միացված լինելով Ատրպատականի աշահրմար-ին, վարչական տեսակետից ենթակա են եղել, հավանորեն, Ատրպատականի գլխավոր կենտրոնին։

2 Տե՛ս Cod Just 4,63 Պարսկա-բյուզանդական առևտրի ու հաղորդակցության կարևոր այս խնդիրը քննութեան է առնված Կ. Գյուտերբուխի «Բյուզանդիոն և Պարսկաստան» ուսումնասիրության մեջ. տե՛ս «Հանդէս Ամսօրեայ» 1910, հունվար, էջ—14—17.

րից, — ասում է Պրոկոպիոսը, — բերում էին Դվին փարանքներ և այստեղ վաճառում» (Պրոկոպիոս, de Bello Persico, II 25): Դվինը, որպես փարանքների մթերանոց և առևտրական փոխանակության որոշված վայր, եղել է, անշուշտ, Սասանյան Պարսկաստանի գլխավոր մաքսային կենտրոններից մեկը: Կ. Գյուտերբրոկը, ուշադրության առնելով, որ Մենանդրի պատմության մեջ առևտրական հաղորդակցության այս վայրերն անվանվում են dekateutèria՝ dekateutèrion (= տասնորդարան) հոմարեն բառից հետևցնում է, որ «երկու պետությանց համար ալ որոշված էր ներմուծության մաքսը վաճառքին արժեքին տասը առ հարյուրը» (տես ՀԱ, 1910, հունվար, էջ 16): Վ. Հայտը ևս իր Geschichte des Levantehandels աշխատության մեջ, խոսելով բյուզանդական առևտրի մասին ինչպես արշավանքներից առաջ, կարծում է, որ արտահանության մաքսը նրել է Բյուզանդիայում, ընդհանրապես, 10 տոկոս արժեքից: Այդ ստասնորդ-ից են ծագում, նրա կարծիքով, մաքսավորների dekatêlogoi և մաքսային վայրերի dekateutèria անունները: Այս ընդհանուր ենթադրությունները, որ հիմնված են բառաքնական դիտողությունների վրա, թեև ուշադրավ են ու հետաքրքիր, սակայն, իմ կարծիքով, չեն կարող հաստատում ու անվիճելի մի ապացույց համարվել, որ մաքսային հարկերը մնացել էին շարունակ նույնը պարսկա-բյուզանդական հարաբերությունների տարբեր շրջաններում: Ինձ թվում է՝ Սասանյան Պարսկաստանի նկատմամբ այս խնդիրը կարոտ է դնել լուսաբանության ավելի որոշ ու համոզիչ փաստերով:

Վերջացնելով ընդհանուր այս տեսությունը Հայաստանի արքունի հարկերի մասին մարդպանության շրջանում, կարևոր եմ համարում նաև քննության առնել և լուսաբանել մատենագրական աղբյուրների մեջ հիշատակված այն բոլոր հարկերի նշանակությունը և բովանդակությունը, որ վերաբերվում են պատմական հնագույն այս շրջանին: Այս հատուկ ուսումնասիրությունն ավելի քան անհրաժեշտ էր, որովհետև, ինչպես կտեսնենք, հարկերի նշանակությունը սխալ է մեկնվել հաճախ նորագույն իսկ գիտական աշխատություններում: Հիմնական իմ նպատակն է պարզել առայժմ, ըստ կարելիության, արքունի հարկերի անունները Մարդպանական Հայաս-

1 Տե՛ս Վ. Հայտի աշխատության ֆրանսերեն թարգմանությունը՝ հատ 1, Լճ 56 ծանոթ. 1: Histoire du commerce du Levant, Leipzig 1923:

տանում, ուստի հարկերի խնդիրը բնության է առնված այստեղ միայն այն շափով, ինչ շափով որ այդ կարևոր էր ու տնտեսական այդ հատուկ նպատակի համար:

« Բ Ա Փ »

Հայկական «բաժ» հարկը, ինչպես տեսանք, Ն. Ադոնցը համարում է հողային հարկ: Զ. Մուսայելյանն «Անդրկովկասի հողային պայմաններն» իր աշխատության մեջ (Վաղարշապատ 1910) առաջ է բերում Ն. Ադոնցի այս կարծիքը և ենթադրում է նույնպես, որ «բաժը պետք է հողային հարկը եղած լինի, իսկ սակը՝ գլխահարկ» (էջ 16):

Ն. Ադոնցից դեռ շատ առաջ պրոֆ. Զ. Հյուբշմանն իր Armentische Grammatik գրքում հայկական «բաժ»-ը թարգմանել է գերմ. Zoll, այսինքն՝ մաքս, և ենթադրել, որ «բաժ»-ը փոխառություն է սլարվեներենից (էջ 114): Հայկազյան լեզվի նոր բառգրքի աշխատակիցները «բաժ»-ը մեկնել են, իրեն «մաքս վաճառելի իրաց»: Միքայել փաշա Փորթուգալը «Նոյնի վարդապետի վասն Վարդանայ եւ Վայոց պատերազմին» հայտնի իր աշխատության մեջ «բաժ»-ը հասկացել է նույնպես, իրեն «փոխադրության տուրք» (էջ 218, ծան. 1):

Նորերս լույս էր տեսել պրոֆ. Նիխադարովի աշխատությունը Исследования по истории армянского права публичного и частного, որի մեջ հեղինակը, հիմնվելով Շիրակի ու Անի քաղաքի 11—13-րդ դարերի արձանագրությունների վրա, փորձ է արել լուսարանել «բաժ» հարկի նշանակությունը, բայց, ինչպես կտեսնենք, այդ փորձն ավելի քան անհաջող է:

Ի նկատի առնելով մատենագրական աղբյուրների վկայությունները, ինչպես և արձանագրությունները, իմ կարծիքով, կարելի է հաստատապես պնդել, որ «բաժ»-ը ոչ հողային հարկ է, ոչ էլ գլխահարկ, այլ գործ է ածված, գրեթե միշտ, մաքսային հարկի նշանակությամբ:

Հայկական «բաժ»-ի իսկական իմաստը պարզելու համար կարևոր եմ համարում առաջ բերել այդ հարկի վերաբերյալ բոլոր կարևոր վկայությունները, որ կարողացել եմ առաջմ հավաքել:

1. И. А. Орбели. Вопросы и решения вардапета Анании Ширакского, Петрогр. 1918, էջ 21—22. «Այր մի վաճառական էանց ընդ երիցս քաղաքս և բաժ արարին յառաջնումն և հանին զկէս և զեքևոր իրացն. և յերկրորդ քաղաքին թուեցան զոր ինչ ունէրն և

հանին զկէս և զերևորն... և մինչ ի տուն եկն, մնացեալ էին դահեկանք մետասան: Արդ գիտեա թէ ընդ ամենայն քանի՞ դահեկան ունեցա՞ն:

2. Կարապետ Կոստանյանց, Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ 1913, էջ 9՝ Արուճ, 987 թ. «Յանուն Աստուծոյ ի թուական ՆՆՁ ես Սմբատ Շահնշահ, որդի Աշոտոյ Շահնշահի, ազատեցի վասն իմ հաւրն հոգւոյն եւ իմ արեւշատութեան եւ մեղաց թողութեան զշալակաւոր բաժէ շնորհուն Աստուծոյն:

3. Վիմական տարեգիր, էջ 27, Անի, 1057—1063 թ.² «Եւ գինեւոր Անեցի, եթէ սայլով, եթէ գրաստով՝ ազատ է: Եւ Անեցի, որ իւրենն մորթելիք զնէ, բաժն ազատ է: Եւ շալակաւոր Անեցի յամէնցեղ բաժին կէսն ազատ է: Եւ ի կապէին տաին դահեկանին Ձ դրամ, այժմ տան Դ, Բ ազատ է: Եւ մսագործի, եթէ պախրէի լինի գլուխ, եթէ ոշխարի, կէսն տա, կէսն ազատ է»:

4. Վիմական տարեգիր, էջ 71՝ Շիրակաւան, 1228 թ. «Թողաք զգեղիս Շիրակա զապուռիշի և զջրսահին բաժն յորդեցէ յորդիք ազատ ի բաժէն»:

5. Վիմական տարեգիր, էջ 106՝ Անի, 1263 թ. «Բարձաք ի յԱնո իրիցանուս զբաժն, զոր ի սկզբանէ ազատ էր, մեք վերստին այլ հաստատեցաք. շունի ոք իշխանութիւն բաժ ուզելու ոչ ինչ ազգ ով իցէ որ կապէլոր լինի»:

6. Վիմական տարեգիր, էջ 160՝ Անի, 1320 թ. «Ես Սարգիս Միլենց բաժորարս թողի զԱրջուաճճո սբ Գրիգորո զբաժն մեծ և զփոքր վասն հանգստեան պատրոնին մերոյ Շահնշահի և աստուածատուր զաւակացն Զաքարիայի ևն»:

7. Վիմական տարեգիր, էջ 221՝ Անի, անթվական. «Եւ զամենայն հարկապահանջութիւն բարձին զմ... զթաղառ, զհեծել, զղսփրչուն, զխսրթամարն եւ զդոնագիրն՝ ի բաժ, ի դաղմս և ի մուսայիպն դարձուցին»:

8. Վիմական տարեգիր, էջ 222՝ Անի, անթվական. «Ես Նուրայտին Քոթիթս իմ ընկերաւքս եկի յԱնի տամղիս վերայ, տեսայ զԱնոյ իրիցանուս զիառլեխին հրամանքն որ ի սկիզբանէ բաժ ու տամղա

¹ Տես Նաե. Գալուստ Տէր-Մկրտչան, Անանիա Շիրակացի, Վաղարշապատ 1896, էջ 23:

² Կոստանդին Դուկասի Թագավորութեան ժամանակվա արձանագրութիւնն է, ուստի փոխանակ 1057—1063 թթ. պետք է լինի՝ 1059—1064 թթ.: Կոստանդին Դուկասի Թագավորութեան սկիզբը ենթադրվում է այժմ 1059 թվին: Ալփասլանը, ինչպես հայտնի է, նվաճել է Անի քաղաքը 1064 թվին: Արձանագրութիւնը զրկած է հավանորեն 1059—1064:

էին տվել. ևս այլ հաստատեցի իմ ընկերաւքս, որ ոչ բաժ տան ու ոչ տամդայս:

Վերոհիշյալ բոլոր վկայութիւններէ մեջ, բացի շորորորդից «բաժ»-ն ունի, իմ կարծիքով, մաքսային հարկի նշանակութիւն: Լեռաջին վկայութիւնն արեքան պարզ է, որ կարոտ չէ մեկնութեան նրկորդ վկայութեան մեջ ասված է, որ 987 թվին Սմբատ Շահնշահն սղատել է Արուճում զգլաւակաւոր բաժէ: «Բաժ»-ն այս հատվածում ևս ունի, անկասկած, փոխադրութեան տուրքի իմաստ: Երրորդ վկայութիւնը ևս պարզ է: Այս արձանագրութիւնից երևում է, որ Կոստանդին Դուկաս կայսրի ժամանակ (1059—1064 թ.), երբ Անի քաղաքը գտնվում էր բյուզանդական կայսրութեան իշխանութեան տակ, կարգադրված է եղել, որ անեցիներն ազատ հայտարարվեն մաքսային հարկից՝ «բաժ»-ից, եթե նրանք սայլով կամ գրաստով գինի էին բերում քաղաք կամ իրանց համար գնում էին մորթելիք: Իսկ անեցի շաւակավորները շաւակաբեռներէ համար վճարելու էին նախկին «բաժ»-ի կեսը: Նմանապէս և մագործները պախրեի և ոչխարի համար պետք է տային սովորական պահանջվող հարկի կեսը: Շարակավորների վերաբերյալ կետին պրոֆ. Ս. Եղիազարովը տալիս է անմիտ ու անհասկանալի մի բացատրութիւն, իբր թե շաւակավորը, որ փայտ էր բերում քաղաք, ամեն մի շաւակաբեռ փայտի համար վճարելու էր 9 դենար¹: Արձանագրութեան մեջ շաւակավորի մասին այդպիսի անհեթեթ կետ չկա: Հինգերորդ, վեցերորդ և ութերորդ վկայութիւնները պետք է հասկանալ, իմ կարծիքով, այն իմաստով, որ Անի քաղաքի երեցները, ինչպէս Արշոյառիճի սբ. Գրիգոր եկեղեցին, ազատ են հայտարարվել «բաժ»-ից, հավանորեն, փոխադրութեան հարկերից: Պրոֆ. Եղիազարովն «իրիցանոս գրաժն» մեկնել է, իբրև налог окладной, այսինքն՝ նախորոշված հարկազումար (impôt de répartition), որ պարտավոր էին վճարել երեցները²: Այս ենթադրութիւնը ես համարում եմ միանգամայն սխալ: Окладной налог-ը ուղղակի հարկերի մի տեսակն է, որ դրվար թե գոյութիւն ունեցած լինէր Հայաստանում հին ժամանակներում: Պետք է ասել, որ պրոֆ. Ս. Եղիազարովն օգտվել է Մ. Էմինի «Армянские надписи в Карсе, Ани и в окрестностях последнего» աշխատութիւնից (Москва, 1881), որի մեջ հարկերի անունները մեծ մասամբ սխալ են թարգմանված: Վերոհիշյալ սխալ են թաղրութիւններին հիմք են ծառայել, մասամբ, այս սխալ թարգ-

¹ Исследования по истории армянского права, էջ 39:

² Նույնը:

մանությունները: «Բաժ»-ը օրինակ, փոխանակ «пошлина» կամ «таможенная пошлина»՝ Մ. էմինը թարգմանել է «подать» կամ «налог»:

Յոթերորդ վկայությունը վերաբերվում է հարկային այն հեղաշրջմանը, որ տեղի էր ունեցել թաթարական տիրապետության ժամանակ 14-րդ դարի առաջին կիսում: Այդ մասին կա նաև մի ուրիշ վկայություն Անիում գտնված Աբուսայիդ Բահատուր խանի (1316—1335 թ.) պարսկական արձանագրության մեջ: Երկու վկայությունն էլ շատ կարևոր են Հայաստանի պատմության համար թաթարական շրջանում, բայց այժմ հետաքրքիր են միայն հատկապես «բաժ»-ի նշանակությունը որոշելու համար: Երկու վկայության մեջ էլ հիշատակված է «բաժ» հարկը, որ նշանակում է դարձյալ մաքսային փոխադրության հարկ: Ակադեմիկոս Վ. Բարտոլդը, որ հրատարակել է ու մանրազնին քննության ենթարկել Աբուսայիդի պարսկական արձանագրությունը, շատ ուղիղ լուսաբանել է արդեն «բաժ» հարկի նշանակությունն այդ շրջանում իբրև *droits de douane et de transit*¹, այսինքն՝ մաքսային և փոխադրության հարկ: Պրոֆ. Մ. Նդիազարովը, հիմնվելով դարձյալ Մ. էմինի սխալ թարգմանության վրա, որը «դոնագիրն ի բաժ» թարգմանել է անզգուշաբար *подворная подать*, իսկ «բաժ»-ը վերոհիշյալ յոթերորդ հատվածում լուսաբանել է՝ իբրև տների վրա դրված հարկ (*окладной налог ка дом*)²: Այս ենթադրությունը ևս, ինչպես և Հայաստանի հարկերի վերաբերյալ նրա գրեթե բոլոր բացատրությունները, զուրկ են որևէ հիմքից և սխալ ու քմահաճ կռահումներ են:

«Բաժ»-ի նշանակության որոշման խնդրում կասկածների առիթ կարող է տալ միայն վերև առաջ բերված չորրորդ վկայությունը՝ «Ֆողաբ զգեղին Շիրակա զապուտիշի և զջրսահին բաժն»։ Արձանագրության ընդարձակ բովանդակությունից երևում է, որ 1228 թվին Ռվանն աթաբեկը և նրա կինը Խոշակը Շիրակ գյուղն ազատել են «ապուտիշի և ջրսահին բաժից»։ Արդ ի՞նչ է նշանակում «ապուտիշի և ջրսահին բաժ»։ Մ. էմինն «ապուտիշի և ջրսահին» համարել է իր թարգմանության մեջ գյուղերի հատուկ անուններ՝ *Ануреш и Джерсах*³: Այս սխալ թարգմանությունը հիմք ընդունելով՝ պրոֆ. Մ. Նդիազարովը ևս հանգել է սխալ եզրակացության, իբր թե «բաժ»-ը նշանակում է այստեղ կալվածքների վրա դրված հարկ՝

¹ Бартольд. Персидская надпись на стене Мануче, С.-Петербург 1911, էջ 33—34

² С. А. Егизаров, Исследования.

³ Армянские надписи, Москва, 1881, էջ 51

«окладной налог на имения»¹, Հ. Ղևոնդ Ալիշանը «Եիրակի» մեջ «ապուռիշի բաժի» մասին հայտնել է հետևյալ կարծիքը՝ «քանզի ընդ ջրասհի յիշի՝ Թուի նույնպէս ջրու հարկ նշանակել ըստ ապ (ջուր) արաբացի բառի»², Յ. Կարստը «Դատաստանագիրք Սմբատի» հայտնի իր աշխատութեան մեջ «ապուռիշի և ջրասհին հարկ» թարգմանել է գերմաներեն «Kanal und Schleusenzoll»³, Այս վերջին լուսարանութունը, թեև չի կարելի համարել հաստատուն ու վերջնական, բայց, համեմատաբար ավելի հավանական է քան մյուս ենթադրութիւնները, Եթե, իրոք, «բաժ» են անվանվել բացի մաքսային հարկից նաև առուներից ու նրանց ջրից օգտվելու համար վճարվող հարկերը, այդ ալնքան էլ օտարուտի չպիտի թվա, իբրև առուների օգտագործման համար վճարվող տուրք՝ այդ հարկը որդշ չափով համապատասխանում է փոխադրութեան մաքսային հարկերին, որոնք վճարվում էին, մասամբ, նույնպես իբրև ձանապարհների, կամուրջների, շինութիւնների օգտագործման փոխարժեք:

Վերոհիշյալ բոլոր վկայութիւններից, ինչպես տեսնում ենք, կարելի է եզրակացնել, որ «բաժ»-ը չի կարող համարվել հողային հարկ, ինչպես այդ ենթադրել է նիկ. Աղոնցը:

Հ. Հյուբշմանի Armenische Grammatik աշխատութեան մեջ առաջ են բերված պարսկական «բաժ»-ի կամ «բազ»-ի լուսաբանութեան համար մի քանի վկայութիւններ պարթևական ու նոր պարսկական գրավոր աղբյուրներից: Այդ վկայութիւններից երևում է, որ «բաժ»-ը Պարսկաստանում ևս ունեցել է պարթևական ու նոր շրջանում մաքսային հարկի նշանակութիւն: Հ. Հյուբշմանը մատնացուց է անում bazigraban բառն Իսիդոր Խարաքսացու մոտ (Bazigraban hoesti thelônion Isidor von Charax), որ նշանակում է «մաքսի գանձում»: Ֆիրդուսիի մոտ ևս «բաշպան, բաժպան», նշանակում է «մաքսապան, մաքսավոր»⁴, Հայկազյան լեզվի նոր բառարքի մեջ «բաժապետ» ուղիղ մեկնված է, իբրև «վերակացու բաժից, մաքսապետ»: Նույն նշանակութիւնն ունեցած պիտի լինի և «բաժրար» բառը, որ հանդիպում է Անիի արձանագրութիւններից մեկում՝ Վիմ. տարեգիր, էջ 160՝ Անի, 1320 թ. «Ես Սարգիս Միլնեց բաժրարս թողի զԱրշուառնս սբ Գրիգորոս զբաժն մեծ և զփոքր»:

Ավելորդ չի լինի այստեղ հիշել, որ Թուրքիայանց թագավորութեան շրջանում ևս «բաժ»-ն ունեցել է դարձյալ մաքսային հարկի

¹ Исследования по истории армянского права, էջ 38:

² Եիրակ, Վնեստիկ 1881, էջ 91:

³ J. Karst, Sempadischer Kodex, Strassburg 1905, B. II, էջ 234:

⁴ Armenische Grammatik, էջ 115:

նշանակություն: Սմբատի Դատաստանագրքի ՃԺԲ կանոնում «բա-
ժ»-ի մասին կա հետևյալ վկայությունը. «Եւ ուր վաճառ լինի նա
զկապալն առնուլ պատեհ է, և զբաժն. բայց ուր ծախ շինի նա չի
իրաւունք բաժ առնուլ» (տես Karst, Bd. I, էջ 163): Այս կանոնը
համապատասխանում է Մխիթար Գոշի Դատաստանագրքի ՃԻԳ կա-
նոնին, ուր «բաժ»-ի փոխարեն գործ է ածված «մաքս» թիսկ զմաքսն
առնուլ իրաւապէս յորժամ ի քաղաքս կամ ի գաւառս եկեալ վաճա-
ռիցեն: Այլ մի լիցի յանցս ճանապարհաց մաքսել եթէ ոչ վաճառի-
ցեն» (F. Karst, B. I, 163 Մխիթար Գոշ, էջ 435): Նույն նշանակու-
թյամբ «բաժ»-ը հանդիպում է նաև «Գանձարան հայկական հրո-
վարտակաց» հրատարակության մեջ (էջ 154), ուր հանդիպում է
նաև հաճախ «բաժտուն», «բայժտուն» բառը (էջ 156, 178, 179,
185), որ նշանակում է պարզապես մաքսատուն¹:

Բացի մի շարք սխալ լուսաբանություններից «բաժ» հարկի
նշանակության մասին, որ վերև մատնանշեցինք, պրոֆ. Ս. Նդիա-
զարովը, ընդունելով որ Կոստանդին Դուկասի ժամանակվա արձա-
նագրության մեջ (1059—1064) «բաժ»-ն անուղղակի հարկի բնույթ
ունի, անզգուշաբար նույնացրել է այդ հարկը միջնադարյան Նվրո-
պայի octroi հարկի հետ: Այդ համեմատությունը ևս, իմ կարծիքով,
սխալ է: Octroi-ն, ճիշտ է, մաքսային հարկ էր, որ վճարում էին
ապրանքների փոխադրության համար, բայց այդ հարկը ստանում
էր ոչ թե պետությունը, այլ քաղաքները, որոնք պետությունից ստա-
ցել էին հատուկ արտոնություն այդ հարկը գանձելու իրանց օգտին:
Սակայն մատենագրական աղբյուրներում կամ արձանագրությու-
ններում և ոչ մի վկայություն ու սկնարկ անգամ չկա, որ Հայաստա-
նի քաղաքները՝ Դվինը, Անին կամ մյուսները՝ արտոնություն ստա-
ցած լինեին «բաժ»-ը գանձելու իբրև մունիցիպալ հարկ իրենց օգ-
տին: Ավելի ուղիղ կլինի, իմ կարծիքով, «բաժ» հարկը համապա-
տասխան ու նման համարել Հռոմեական ու Բյուզանդական կայս-
րության մեջ գոյություն ունեցող հարկին, որը լինելով փոխադրու-
թյան մաքսային հարկ, ստացվում էր, գլխավորապես, պետության
օգտին²:

¹ Տե՛ս Langlois, V. Le trésor des chartes d'Arménie ou cartulaire de la
chancellerie royale des Roupéniens, Venise, 1863.

² Portorium հարկը, ինչպես հայտնի է, ապրանքներից պահանջվող մաքսա-
յին հարկ էր, որ գանձվում էր մաքսային որոշ կենտրոնավայրերում պետության
օգտին: Պարսկա-բյուզանդական դաշնագրերի համաձայն, ինչպես վերև տեսանք,
«բաժ»-ի գանձման համար մաքսային այգախի կենտրոններ էին՝ Կալլինիկոնը,
Մծբինը և Դվինը: Portorium հարկից պետք է տարբերել միջնադարյան pedaticum

ԽԼԼ «բաժ» հարկը հիշատակված է, գլխավորապես, 10—14-րդ դարերի արձանագրություններում, բայց, նա, անտարակույս, Հայաստանի հնագույն հարկերից մեկն է:

7-րդ դարումն իսկ, ինչպես վերև տեսանք Անանիա Շիրակացու պարզ ու որոշ վկայությունից, «բաժ»-ն այն հարկն էր, որ վճարում էր քաղաքներում վաճառականը: Այս վերջին վկայությունը կարող է, իմ կարծիքով, հավաստի մի ապացույց համարվել, որ «բաժ»-ը մարզպանության շրջանում ևս ունեցել է փոխադրության մաքսային հարկի նշանակություն: Իսկ եթե այդ այդպես է, ուրեմն, և Նղիշեի վերոհիշյալ վկայության մեջ «բաժ»-ը պետք է ունենա ոչ թի հողային, այլ մաքսային հարկի իմաստ:

Քանի որ «բաժ»-ը, ինչպես ցույց է տվել պրոֆ. Հ. Հյուբշմանը, հայերենում փոխառություն է պարթևերենից և պարթևերենում ունեցել է նույնպես մաքսային հարկի նշանակություն, անհավանական չի լինի ենթադրել, որ այդ հարկը զոյություն ունեցած պիտի լիներ Հայաստանում նաև Արշակունյաց թագավորության ժամանակ, իբրև մաքսային հարկ:

« Մ Ո Ւ Տ »

Մատենագրական վկայություններից, որ վերաբերում են համեմատաբար հնագույն դարերին, կարելի է եզրակացնել, որ «մուտ»-ն ունեցել է հաճախ ոչ թե հատուկ որևէ հարկի նշանակություն, այլ զործ է ածվել այժմյան եկամուտի իմաստով:

Այդ նշանակությամբ «մուտ»-ը զործ է ածվել, օրինակ, Ասորական Դատաստանագրքում 1. «Եթե գրաւ դնէ ոք զիր հողն այլում և լինի ի մէջ նոցին պայման, որ զմուտս հողոյն առնու պարտատէրն փոխարէն վաշխին, և փոխառուն պարտի միայն զպարտսն տալ» (հրատ. Արսեն վարդապետ Ղլտճյանցի, էջմիածին 1917, էջ 51), 2. «Ապա թէ դնէ գրաւական հօտս խաշանց և լինի պայման ի

(=ֆրնս. p^éage) և passagium հարկերը, որ մարդկանց, անասունների և ապրանքների անցուղարժի համար պահանջում էին զանազան տեղերում, օրինակ, հանապահանքների, գետերի ու կամուրջների մոտ: Կիլիկյան շրջանում passagium հարկն անվանվել է, ըստ երևույթին, «յապուր» տես ռոմանական հայկական հրովարտական էջ 157՝ «Եւ յապուր որ տան ընդ Այաս ու ընդ Կուկլակ, նոյ յայսպես լիննայ, որ տան ի պրիսիմն և յըզտայրեռն նոր դրամ քսան ու հինգ: Միքայել փաշա Փորթուզալը սեղիշէի վարդապետի վասն վարդանայ և հայոց պատերազմին» իր աշխատության մեջ (էջ 218, ծան.) Մարզպանական Հայաստանի «բաժ»-ը համապատասխան է համարում ֆրնս. p^éage-ին: Այդ ենթադրությունը, ինչպես տեսնում ենք, վիճելի է, մինչև որ չապացուցվի մատենագրական փաստական վկայություններով:

մէջ, թէ մուտքն, որ լինի յոշխարացն, փոխարէն վաշխիցն է ևն» (նույնը, էջ 51), 3. «եւ հաշիւն զմուտ տարեացն, զոր կալաւ, զվաշխիւն, թէ լինի աւել՝ ինքն դարձուցանէ յորքերն և թէ պակասի լմընցընեն յորքերն» (նույնը, էջ 55): Բոլոր այս հատվածներում «մուտ»-ը, անկասկած, ունի եկամուտի նշանակութիւն:

Հայկազյան բառգրքում «մուտ»-ը հասկացված է հետևյալ իմաստով և մեկնված է՝ իբրև հուն. prosodos լատին. proventus, reditus, այսինքն՝ եկամուտ:

Ուշադրութեան արժանի է, որ Հին և Նոր կտակարանի գրաբար թարգմանութեան մեջ, ինչպես երևում է Համաբարբառից¹, ոչ մի անգամ չէ գործածվել «մուտ» բառը հարկի նշանակութեամբ, թեև բուն բնագրի մեջ հիշատակված են եղել հաճախ զանազան տեսակի անուններ հայկական արձանագրութիւններում ևս «մուտ»-ը, որքան ինձ հայտնի է, բնավ չի հիշված որպես հարկի անուն:

Նորենացու պատմութեան մեջ «մուտ»-ը հանդիպում է հետևյալ հատվածներում. 1. «Եւ քանզի բազում ունէր ուստերս՝ պատշաճ վարկաւ ոչ ամենեցուն առ իւր կալ ի Մծբին. վասն որոյ առաքէ զնոսա բնակել ի գաւառն Հաշտենից, և ի ձորն նորին սահմանակալ, որ է արտաքոյ Տարօնոյ. ի նոսա թողլով զշէնս ամենայն, հանդերձ յաւելուածով մտից առանձինն և ռոճկաց կարգելոց յարքունուստ» (Տփղիս 1913, էջ 118, Բ, գլ. Ը.) 2. «Իսկ Արտաշրի գեղեցկապէս յարդարեալ զաշխարհս Հայոց՝ ի կարգ առաջին հաստատէրո՛ւ նա և զԱրշակունիսն, զմեկուաացեալսն ի թագէն և յԱյրարատն բնակելոյ, կարգէ ի նոյն տեղիս մտիւք և ռոճկօք, որպես և էինն» (նույնը, էջ 216, Բ, գլ. Հէ): Մկրտիչ էմիրը «հանդերձ յաւելուածով մտից առանձինն» և «մտիւք» թարգմանել է ռուսերեն՝ «С присовокуплением особаго дохода» և «с назначением дохода», (էջ 61, 112), իսկ խորեն ծ. վարդ. Ստեփանեն թարգմանել է աշխարհաբար՝ «ալիւլացնելով առանձին եկամուտ» և «եկամուտով» (էջ 101, 199): Ինձ ևս հավանական է թվում, որ «մուտ» բառը վերոհիշյալ հատվածներում ունի ոչ թե հատուկ որևէ հարկի իմաստ, այլ նշանակում է, ընդհանրապես, եկամուտ:

Ինչպես հայտնի է, կանոնագրքերում «մուտ»-ը և «պտուղ»-ը հիշատակված են հաճախ այն եկամուտների համար, որ ժողովրդականներից ստանում էր եկեղեցին: Տես, օրինակ, Կանոնագիրք Հայոց, հրատ. Ա. Ղլտճյանի, Թիֆլիս 1914՝ «Կանոնք Սահակայ» էջ 22, 55, 56. «Կանոնք Ներսիսի Կաթողիկոսի և Ներշապհոյ Մա-

¹ Բ. վարդ. Աստվածատուրեան, Համաբարբառ Հին և Նոր կտակարանաց, Երուսաղէմ 1895:

միկոնէից եպիսկոպոսի», էջ 107, 108, 109, 111 (Ա, Ե, ԺԳ կան.): Մինչդեռ «պտուղ»-ը եկեղեցուն տրվող որոշ ու հայտնի տուրքի անուն է, «մուտ»-ը, իմ կարծիքով, այդ հատվածներում ևս ունի ոչ թե հատուկ որևէ հարկի, այլ, հավանորեն, եկամուտի ընդհանուր նշանակություն:

Մատենագրական աղբյուրներում, 7-րդ դարից հետո, ինձ ոչ մի վկայություն դեռևս չի հանդիպել, որի մեջ «մուտ»-ը պարզ ու որոշ հիշատակված լիներ հատուկ որևէ հարկի համար:

Ուշագրավ է սակայն այդ տեսակետից, որ Նղիշեի վերոհիշյալ հատվածներում «մուտ»-ն ունի, ըստ երևույթին, հատուկ հարկի նշանակություն և հիշված է մյուս հարկերի թվում առաջին իսկ տեղում. 1. «Նա քնաւ ո՞վ իսկ կարէ պատմել վասն ծանրութեան մտից և սակից, բաժից և հասից և հարկաց լերանց և դաշտաց և մայրեաց» (Վենետիկ 1852, Բ, էջ 40). 2. «Իսկ զմտից և զսակից, և որ այլ ևս էին հարկք աշխարհին, բազմագոյն քան առ հարքն նորա երթայր յարքունիս» (նույնը, Բ, էջ 75):

Հիմնվելով Նղիշեի այս վկայությունների վրա՝ կարելի է իրոք ենթադրել, որ «մուտ»-ը մարզպանության շրջանում և, հավանորեն, նաև Արշակունյաց թագավորության ժամանակ, ունեցել է հատուկ ինչ որ հարկի նշանակություն: «Մուտ»-ի այդ հատուկ իմաստը, թեև ինձ չէ հաշտվել պարզ ու հաստատ որոշել, ինչպես «բաժ»-ի նշանակությունը, սակայն, հիմնվելով ներքև առաջ բերված ուշագրավ մի վկայության վրա, թվում է ինձ, որ անհավանական չի լինի ենթադրել, որ «մուտ»-ը մարզպանության շրջանում՝ ուրեմն և Նղիշեի վերոհիշյալ վկայությունների մեջ՝ գործ է ածվել քաղաքներում վճարվող ինչ որ հարկերի համար: Հնարավոր է, որ «մուտ»-ը հոմանիշ է պարսկական «բաժ»-ի և գործածական է եղել այդ նշանակությամբ մարզպանության և, հավանորեն, նաև Արշակունյաց թագավորության շրջանում:

Այդ ենթադրության հիմք ծառայող կարևոր ու հետաքրքիր մի վկայություն գտնվում է Հովհան Մամիկոնյանի Տարոնի պատմության մեջ հետևյալ հատվածում. «Եւ Սուրեն ետ բերել հարիւր հազար դահեկան, և զուղտսն և զջորիսն և զծիսն և ետ ցիշխանն (Սըմբատ), և նա ասէ՝ հաւանեալ եմ տրոցդ. բայց հարիւր ութսուն հազար դահեկանի փայտ են տարեր ի Քարթլոյ, և չորս հարիւր հազար դահեկանի խոտ են կերեր ի դաշտէն. և ի հազար դահեկանի եզն և եղջերու և նապաստակ որսացեր են ի յերկրէս. թողում զգինսն ջրոցն և հացին: Բայց զասորւոց անունը գինին, զոր յինէն կտրեալ ինքեանք արբին՝ թող տան մեղ զգինն: Նաև զգաւառին հարկն զոր

առեալ են, և զմուտսն քաղաքին զոր կերեալ են Դ հարիւր հազար դահեկան՝ թող տան մեզ զայն, և դու քրիստոնեայ լեր և զիս ի պարսիկս տար, և դոքա քեզ եղիցին» («Գիրք պատմութեանց երկրին Տարօնոյ», Կոստանդնուպօլիս 1719, էջ 151): Այս հատվածի մեջ հիշատակված են, ինչպես տեսնում ենք, «զգաւառին հարկն» և «զմուտսն քաղաքին» և «զմուտսն» կարծես թե գործ է ածված այստեղ, ոչ թե, ընդհանրապես, եկամուտի, այլ քաղաքներում վճարվող հատուկ հարկերի համար: Այս լուսաբանությամբ նա կարող է, հավանորեն, ունենալ մաքսային հարկի նշանակութիւնը՝ իբրև հոմանիշ պարթևերին «բաժ»-ի: Այս բացատրութիւնը ես չեմ համարում վերջնական ու անվիճելի, այլ միայն հնարավոր ու հավանական:

«Մուտ»-ի նույն այս լուսաբանությամբ, իմ կարծիքով, հասկանալի է դառնում, թե ինչու Հին և Նոր կտակարանի գրաբար թարգմանութեան մեջ, և ոչ մի անգամ գործածված չէ «մուտ»-ը: Ոչ «բաժ»-ը և ոչ նրա հոմանիշ «մուտ»-ը չեն հանդիպում այդ թարգմանութեան մեջ, որովհետև սրանց համապատասխան հարկերը թարգմանված են ասորերեն՝ «մաքս», «մաքսավոր», «մաքսապետ» բառերով:

« Ս Ա Կ »

Պրոֆ. Ն. Ադոնցը «սակ»-ը լուսաբանել է իբրև գլխահարկ և համապատասխան է համարել վերոհիշյալ gezith-ին Армения в эпоху Юстиниана, (էջ 482—484): Պրոֆ. Հ. Հյուբշմանն իր Armenische Grammatik աշխատութեան մեջ մատնացույց է արել, որ հայերեն «սակ»-ը փոխառութիւն է պարթևերենից, Թե հայերեն և թե պարթևերեն «սակ»-ը նա թարգմանում է Tribut (էջ 234): Միքայել փաշա Փորթուզալը Եղիշեի պատմութեան իր հրատարակութեան մեջ (էջ 218, ծան. 1) ենթադրել է, որ «սակ» հոդ է մը կամ շենք է մը առնված այն տուրքն է, որոյ քանակը կանխալ որոշյալ է ու շփոփոխեր բերոց կամ եկամտից շատնալովն կամ նվազեցնովն: Հայկազյան բառգրքի աշխատակիցները «սակ»-ի դիմաց դրել են մի շարք բացատրութիւններ՝ «սահմանեալ տուրք, եկամուտ, հաս, հարկ, բաժ արքունի»:

Այս լուսաբանութիւնները, ինչպես տեսնում ենք, կամ անորոշ են, կամ նույնիսկ իրար հակասող:

Ուշագրաւ է, որ «սակ»-ը հարկի հատուկ իմաստով չի հանդիպում Հին և Նոր կտակարանի գրաբար թարգմանութեան մեջ: Մատենադրական աղբյուրներում այդ հարկի անունը գործածական է ու սովորական, գլխավորապես, արաբական և Բագրատունյաց շրջ-

շանում: Իսկ հայկական արձանագրություններում, որ մինչ այժմ հրատարակված են, «սակ»-ը որպես հարկ չէ հիշատակված և ոչ մի անգամ:

Հայերենում «սակ»-ը ինչպես հայտնի է նշանակում է ոչ միայն հարկ, այլև «նախորոշված» շահ, թիւ, կարգ: «Սակ»-ը հենց այդ հատուկ նշանակությունն ունի, իմ կարծիքով, հետևյալ վկայություններում. 1. Թովմայի վարդապետի Արծրունույ, Պատմութիւն տանն Արծրունեաց, Պետերբուրգ 1887, դպր. Դ. գլ. Դ էջ 143՝ «և կացցէ ինքն ի իւրքն ամենեքեան ի հնազանդութեան արքունի, ի հարկս և ի հասս շահոյ սակի արքունական աւանդութեանց»։ 2. Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողական, Պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ 1885, Բ. հանդ., գլ. Դ, էջ 128՝ «Եւ փոխանակ նորա տիրէ Հնշմ ամա ԺԲ: Սա ծանրացոյց զսակ հարկի աշխարհիս հայոց»։ 3. Պատմութիւն Ղևոնդեայ, Պետերբ. 1887, գլ. Դ, էջ 14՝ «Եւ յետ նորա. Եզիտ որդի Մուսեայ. և ապրի ամս Բ և ամիսս Ե, և վախճանի: Եւ նա վարեաց աշխարհս ի նոյն սակ հարկի»։ 4. Յովհաննու կաթողիկոսի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս 1912, էջ 160՝ «Իսկ արքայ Սմբատ ընդ կրունկն դարձեալ՝ հասանէր ի մայրաքաղաքն Դվին: Եւ վասն զի ըստ առաջնոյ կիտին եղելոյ ոչ ետես զնոսա հնաղանդեալս ի ծառայութիւն ինքեան և զսակ արքունի հարկաց և մաքսից նուազեցուցեալ, ապա դռնն ևս քաղաքին փակեցաւ ընդդէմ նորա»։

«Սակ»-ն իբրև հարկ՝ գործ է ածված հաճախ Հովհաննես կաթողիկոսի պատմության մեջ և, մեծ մասամբ, կանխապես սահմանված որոշ հարկագումարի նշանակությամբ: Օրինակ, էջ 193՝ «և թեթեաքեռն զսակն արքունի արարեալ»։ էջ 203՝ «և խոստացեալ ևս թողոյ նմա զամի. միոյ զսակն արքունի»։ էջ 214՝ «Եւ ապա ի խաբէութիւն մտաց զինքն զինեալ (Յուսուփն)՝ առաքէ առ արքայ Սմբատ, զի թէ բոլորապես զսակ ամին հատուցէ նմա, զխաղաղութեան պայման անշուշտ նմա պարգեւեալ՝ անցեալ զնասցէ: Իսկ նա... տայր վաղվաղակի զխնդիրն իբրև կշռիս վաթսուն հազար դահկանաց»։

Նույն նշանակությունն ունի «սակ»-ը, հավանորեն, նաև Սեբեոս եպիսկոպոսի պատմության մեջ՝ Ս. Պետերբուրգ 1879, գլ. ԼԵ. էջ 138 և գլ. ԼԴ, էջ 118:

Պրոֆ. Մ. Դյակոնովի կարծիքով՝ Ռուսաստանում ամեն ինչ՝ որ որոշված է եղել թվերով՝ անվանվել է урок:

Русская Правда օրենսգրքում урок են անվանվել, նրա ասելով, ճշտիվ որոշված վճարումները: «Այդ մտքով,— ասում է նա,— урок կարող են անվանվել և տուրքը, ուստի և հետագա հիշատակա-

րաններում հիշվում է «дань по уроку»: Նույն այս որոշված տուրքի համար կարող են սկզբներում գործածվել և оброк տերմինը, ինչպես այդ հանդիպում է և ավելի ուշ հիշատակարաններում՝ «а дань ти мати по оброку» (М. Дьяконов, Очерки общественного и государственного строя древней Руси, С. Петербург. 1908, էջ 188):

Եթե ուղիղ են պրոֆ. Մ. Դյակոնովի այս դիտողությունները՝ «սակ»-ը վերոհիշյալ իր նշանակությամբ կարող է համապատասխան համարվել հենց ռուսական այդ արոք և оброк տերմիններին:

«Սակ»-ը վերոհիշյալ վկայություններում, ինչպես տեսանք, նշանակում է նախորոշված չափ, թիվ կամ նախորոշված հարկագումար: Այժմ կարևոր է պարզել, թե արդյոք «սակ»-ը չէ՞ ունեցել հատուկ նշանակություն՝ գլխահարկի կամ հողային հարկի, ինչպես այդ ենթադրել են նիկ. Ադոնցը և Միքայել փաշա Փորթուգալը: Այս խնդիրը ևս պետք է պարզել, փմ կարծիքով, ոչ թե վերացականորեն, այլ դարձյալ մատենագրական վկայությունների օգնությամբ:

«Սակ»-ը ըստ երևույթին, իրոք որ ունեցել է նաև հատուկ նշանակություն, ինչպես երևում է հետևյալ վկայություններից. 1. Հովհաննու կաթողիկոսի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս 1912, էջ 133. «Ապա ոստիկան ոմն ի հայս առաքեալ, որ Ալի Արմանի անուանիր՝ ըստ հրամանի ամիրապետին իշխան լիշխանացս Հայոց զնա (զԱղոտ) կացուցանէր, բազում զգեստիւր և արքունական պատուով ճոխացուցեալ՝ ի նա հաւատալով զսակս հայոց և զամենայն բեկար արքունի» 2. Նույնը էջ 161—162. «Եւ այսպէս ընդարձակեալ զսահման տէրութեան իւրոյ (Սմբատ), որ ընդ լծով արքունի սակից և բեկարաց և մաքսից կացուցեալ զգէն քաջութեան մարտի իւրոյ նշան յաղթութեան կանգնէր»:

Այս վկայություններում «սակ»-ը հիշված է «բեկար»-ի կամ «բեկար»-ի ու «մաքս»-ի հետ միասին: Հավանական է, ուրեմն, ենթադրել, որ «սակ»-ն այստեղ հատուկ ինչ որ հարկի անուն է, տարբեր «բեկար»-ից ու «մաքս»-ից: Հիմնական գլխավոր հարկերն արաբական ու Բագրատոնյաց շրջանում, ինչպես հայտնի է, եղել են գլխահարկը՝ նաև հողային ու մաքսային հարկերը: Մաքսային հարկը, որ Հայաստանում անվանվել է «բաժ» կամ «մաքս», վերոհիշյալ երկրորդ վկայության մեջ հիշատակված է առանձին: «Սակ»-ը և «բեկար»-ը կարող են, ըստ երևույթին, նույն վկայության մեջ գործածված լինել մյուս հիմնական հարկերի՝ գլխահարկի ու հողային հարկի համար: Ներքև մենք կտեսնենք, որ «բեկար»-ը կարող էր թերևս ունեցած լինել այդ ժամանակ հողային հարկի նշան-

նակություն: Թեև իմ այս ենթադրությունը հիմնովին խախտում է սլոմյան ընդհանուր կարծիքը «բեկար»-ի նշանակության մասին, բայց, ինչպես կտեսնենք, այս նոր ենթադրությունը «բեկար»-ի հնադույն նշանակության մասին հիմնված է որոշ փաստական դիտողությունների վրա: Արդ՝ եթե Հովհաննես կաթողիկոսի վերոհիշյալ վկայության մեջ երեք հիմնական հարկերից՝ մաքսային, անվանված է «մաքս», հողայինը, ըստ երևույթին, «բեկար» կարելի է, ուրեմն, ենթադրել, որ «սակ»-ը նույն այդ հատվածում կարող է նշանակել, հավանորեն, գլխահարկ:

Արաբական աղբյուրների վկայություններից երևում է, որ ամենամեծ եկամուտը խալիֆայությունը քրիստոնեական երկրներում ստանում էր գլխահարկից: Յ. Լոռանի կարծիքով, 9-րդ դարի վերջերում, ուրեմն՝ հենց այն ժամանակաշրջանում, որին վերաբերվում են վերոհիշյալ վկայությունները, խալիֆայությունը ստացել է Հայաստանից՝ նրա մեջ հասկանալով և կովկասյան երկրները, տարեկան 13.000.000 դրամ՝ 4.000.000 դրամ իբրև հողային հարկ և 9.000.000 դրամ իբրև գլխահարկ: Ուրեմն՝ գլխահարկը կամ «սակ»-ը եղել է բոլոր հարկերից ամենակարևորը և շահավետը, և գուցե հենց այդ է պատճառը, որ «սակ»-ը վերոհիշյալ վկայությունների մեջ հիշատակված է առաջին տեղում:

Բացի Հովհաննես կաթողիկոսի վկայություններից կա և ուրիշ մի վկայություն, որից նույնպես կարելի է, իմ կարծիքով, եզրակացնել, որ «սակ»-ը, բացի իր վերոհիշյալ նշանակությունից, ունեցել է նաև գլխահարկի հատուկ իմաստ:

Այդ վկայությունը՝ ավելի ճիշտ ակնարկը՝ գտնվում է Գրիգոր Նարեկացու հետևյալ տողերում. «զխնդիր չափոյ ծածկելոցն իբր զճշդով պահանջումն սատերն սակի ի բերանոյ կետին կորինի չորքեզրամեան կշռութեամբ» (Գրիգոր Նարեկայ վանից վանականի, Ողբերգութիւն, Վենետիկ 1844, Բան խն, էջ 248):

Այդ տողերում ակնարկված է, իմ կարծիքով, «սակ»-ը որպես գլխահարկ, որի նվազագույն գումարը մարդագլուխ եղել է, սովորաբար Սասանյան Պարսկաստանում 4 դրամ (=1 սատեր) և Հռոմեական կայսրության մեջ, ըստ երևույթին, 2 դրամ:

Ինչպես տեսնում ենք, Նիկ. Ադոնցի ենթադրությունը «սակ»-ի հատուկ նշանակության մասին, որ նրա մոտ հիմնավորված չէ որոշ փաստերով, կարծես թե հաստատվում է մատենագրական վկայությունների վերոհիշյալ լուսաբանությամբ:

¹ J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam, 1919, էջ 161:

Միքայել փաշա Փորթուգալի ենթադրութիւնը «սակ»-ի մասին, որ վերև հիշեցինք, հիմնված չէ փաստական տվյալների վրա, ուստի և անընդունելի պիտի համարվի, մինչև որ չհաստատվի հավանական վկայութիւններով: Ի նկատի ունենալով «սակ»-ի ընդհանուր նշանակութիւնը՝ որպէս «որոշեալ» թիւ, չափ» և «որոշեալ հարկ», հնարավոր է, որ հողային հարկը ևս, որի քանակը, «կանխաւ որոշեալ էր», կարող էր և «սակ» անվանվել, սակայն այդ կոահումը կարող է, անշուշտ, փաստական հիմնավորման: Քանի որ «սակ»-ը հիշատակված է Եղիշի պատմութեան մեջ և փոխառութիւն է հայերենում պարթևերենից, պարզ է որ նա որպէս հարկ գոյութիւն է ունեցել Հայաստանում մարզպանութեան շրջանում, գուցէ և Արշակունյաց թագավորութեան ժամանակ: Սասանյան Պարսկաստանում gezith-ը՝ գլխահարկը, ինչպէս վերև տեսանք, հիմնական հարկերից մեկն էր: Եղիշի վկայութիւնը Դինշապուհի ժամանակ հոգևորականների վրա դրած հարկերի մասին՝ «սոյնպէս և եպիսկոպոսաց և երիցանց ղնէին, ոչ միայն շինաց, այլ և աւիրակաց» (Վենետիկ 1852, Բ, էջ 40)՝ վերաբերում է, ամենայն հավանութեամբ, գլխահարկին: Սակայն գլխահարկը, հավանական է, որ մարզպանութեան շրջանում ևս անվանվում էր «սակ», ինչպէս և Արաբական ու Բագրատունյաց ժամանակ:

Յր. Շպիգելը Ֆիրդուսիի մոտ հիշատակված պարսկական «բաժ» ու «սալ» հարկերի անունները մեկնել է՝ առաջինը՝ իբրև բնական տուրքեր, իսկ վերջինը՝ իբրև դրամական վճարումներ: Հայկական «բաժ»-ը, ինչպէս վերև մեր քննութիւնից երևաց, պարթևական ու հետագա շրջաններում ունեցել է մաքսային հարկի իմաստ: Իմ կարծիքով, նույն այդ ժամանակաշրջանում պարսկական «բաժ»-ը ևս ունեցած պիտի լիներ ոչ թե բնական տուրքի, այլ մաքսային հարկի նշանակութիւն: Իսկ պարսկական «սակ»-ի վերաբերմամբ, որ համապատասխան է համարվում հայկական «սակ»-ին, Յր. Շպիգելի դիտողութիւնը կարող է ընդունվել միայն այն շափով, որ այդ հարկը, համաձայն իր վերոհիշյալ հավանական նշանակութեան, իրոք որ պետք է լիներ դրամական:

« Հ Ա Ս »

Նիկ. Ադոնցը հնարավոր է համարում, որ հայկական «հաս»-ը և «մուտ»-ը համապատասխան կարող են լինել պարսկական «բաժ» ու «սալ»-ին, որոնցից առաջինը նա ենթադրում է հողային հարկ, իսկ

• Fr. Spiegel, *Erânische Alterthumskunde*, Dritter Band, 1878 էջ 631:

վերջինը՝ գլխահարկ (Армения в эпоху Юстиниана էջ 483)։ Նիկ Ադոնցի հարեանցի այս ակնարկն առաջ է բերված Հ. Մուսայելյանի աշխատության մեջ ավելի դրական ու որոշ ձևով, իբր թե Ն. Ադոնցը ամուրը համարում է սակի բացատրություն, իսկ հասը՝ բաժի» (Անդրրկովկասի հողային պայմանները, Վաղարշապատ 1910, էջ 16)։ Միքայել փաշա Փորթուգալը ենթադրում է, որ «հաս» հողի բերքէն առնված մասն է կամ տաքանորդ մի, որ հարյուրեն հինգեն մինչև հիսուն կըզանազաներ» (Նդիշէի վարդապետի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», Վենետիկ 1903, էջ 218)։ Փորթուգալը, ինչպես տեսնում ենք, ոչ միայն «հաս»-ի նշանակությունն է որոշել, այլև նրա քանակը։ Սակայն նրա այս կտրուկ ու վճռական պնդումը ոչ պատճառաբանված է, ոչ էլ հիմնված փաստական տվյալների վրա։ Հայկազյան բառգրքի աշխատակիցները «հաս»-ի դիմաց գրել են հետևյալ բացատրությունը՝ «որ ինչ իրաւամբ հասանելի է կամ հասանէ, այսինքն՝ անկ է ումեք, որպէս զատուցեալ տուրք եկամուտ, բաժին, բաժ, տասանորդ, նուիրելի Աստուծոյ մասն»։

«Հաս»-ի, ինչպես և մյուս հարկերի հավանական նշանակությունը, չի կարելի պարզել առանց մատենագրական ու արձանագրական վկայությունների ուշադիր քննության։

«Հաս»-ը Հայաստանի հնագույն հարկերից մեկն է, ուստի և նա հանդիպում է հաճախ ոսկեդարյան անվանված մատենագրական երկերում և, գլխավորապես, Հին և Նոր կտակարանի գրաբար թարգմանություններում։ Ուշագրավ է, որ այս թարգմանությունների մեջ «հաս»-ը գործ էածված միշտ ուղղակի հարկերի իմաստով, դրամական թե բնական, մինչդեռ անուղղակի հարկերի համար գործ էածված շարունակ «մաքս» բառը։

«Հաս»-ի այդ հատուկ նշանակությունը երևում է հետևյալ հատվածներից. 1. Նւբ Լ, 13. «Եւ կէս երկդրամենին եղիցի հաս Տեառն. ամենայն որ անցանիցէ ի հանդիսի անդ ի քսան ամենից ի վեր տացեն հաս Տեառն»։ 2. Թիւք ԺԾ, 20. «Եւ տաշիք զհաց հասին Տեառն. զատուաշիք զայն Տեառն որպէս զհասն ի կալոյ»։ 3. Թիւք ԺԸ, 24. «Զատանորդս որդւոցն Իսրայելի՝ զոր զատուացեն Տեառն հաս՝ ետու զեզացւոցն ի ժառանգութիւն»։ 4. Թիւք ԺԸ, 27 «Եւ համարեսցի ձեզ հասն ձեր իբրև զցորեան ի կալոյ և իբրև զպտուղ ի հնձանէ»։ 5. Թիւք ԼԱ, 28. «Եւ առջիք զհաս Տեառն յամենայն արանց պատերազմողաց երթելոց ի պատերազմ ոգի մի ի հինդ հարիւրոց՝ ի մարդոց և յանասնոյ, և յարջառոյ, և յոշխաբէ, և յայծեաց»։

«Հաս»-ն այս հատվածներում, ինչպես տեսնում ենք, կամ միավազ անձնական տուրք է դրամական, կամ հողային եկամտային

հարկ է, կամ որոշ տուրք է պատերազմական ավարից, որ պարտավոր էին տալ պատերազմողները: Նույն թարգմանությունն ալ մյուս բոլոր հատվածներում «հաս»-ը միշտ ունի ուղղակի հարկերի կամ, մասնավորապես, բերքից կամ եկամուտից տրվող որոշ տուրքի նշանակություն:

Ավետարանի թարգմանության մեջ առանձնապես կարևոր է հետևյալ հատվածը. «Զիա՞րդ թուի քեզ, Սիմովն, թագաւորք ազգաց յումմե՞ առնուն զհարկս կամ զհասն, յորդոց իւրեանց՝ թե յոտարաց» (Մատթ. Ժէ, 24): Հունարեն բնագիրը «զհասն» բառի դիմաց ունի kenson լատիններեն՝ censum: Kensos և census հոռմեական կայսրության մեջ «ցենզի» կամ աշխարհագրի համեմատ գանձվելիք ուղղակի հարկերն էին՝ հողայինը և գլխահարկը: Եթե թարգմանիչները kenson-ը թարգմանել են «հաս», հավանական է, ուրեմն, ենթադրել, որ այդ հարկն ըստ իր էության համապատասխան պիտի լինեք հունարեն kensos-ին:

Հայոց եկեղեցական կանոններում «հաս»-ը հիշվում է՝ իբրև հողեւորականության տրվող տուրք և ունի դարձյալ ուղղակի հարկերի նշանակություն, ինչպես և Հին և Նոր կտակարանների թարգմանություններում:

Ուշագրության արժանի է, որ Սահակայ հայոց հայրապետի կանոններում «հաս» է անվանվում դրամական տուրքը, որ յուրաքանչյուր տոմս վճարելու էր եկեղեցուն. տես կանոնադիրք հայոց, հրատ. Արսեն Ղլտճյանի, էջ 55. «Եւ հասք ի ձենջ ի սեղան Տեառն եղիցի դրամ մի յամենայն տանց ձերոց և նուիրեալք ի ձենջս: Այս հատուկ դրամական տուրքն ամեն մի տնից, որքան ինձ հայտնի է, չի հիշված ոչ Հին կտակարանում, ոչ էլ քրիստոնեական ընդհանուր կանոններում: Ի նկատի առնելով Հայաստանի նախարարական կազմակերպության խոր ազդեցությունը հայ եկեղեցու կազմակերպության ու ներքին կարգերի վրա՝ անհնարին չպիտի համարվի, որ եկեղեցական այս հատուկ տուրքը կարող էր առաջ եկած լինել Հայաստանում աշխարհական նման հարկերի ազդեցությամբ: Եթե այս դիտողությունը հնարավոր լինի հետազայում հիմնավորել ավելի որոշ ու հաստատուն կերպով՝ կստացվի շատ կարևոր մի եզրակացություն ծխահարկի կամ, ավելի ճիշտ, գլխահարկի գոյության մասին: Արշակունյաց թագավորության ժամանակ, որը, ըստ երևութիւն անվանվել է «հաս», ինչպես և հողային եկամտային հարկերը:

«Հաս»-ի նշանակության որոշման համար Սասանյան Պարսկաստանի տիրապետության շրջանում առանձնապես կարևոր է Դվնի 645 թվի իններորդ կանոնի հետևյալ վկայությունը. «Դի երախեյոյն

Գրիգորի և սրբոյն Տրդատայ զսուրբ եկեղեցւոյն մանկունս ընդ ազատաց տոհմին են կարգեալ, և ազատ էին սրբոյ եկեղեցւոյ հող և ջուր, նաև ի Պարսից իսկ տէրութեանն յայտ արարեալ և չէ խառնեալ ի շինական իշխանութիւնն. զերիցունեաց տունսն ի դիւանին եղեալ են, բայց միայն զհասն տալ յարքունիս» (տե՛ս Կանոնագիրք հայոց, հրատ. Արսեն Ղլտճյանցի, էջ 126): Եթե ի նկատի ունենանք Տարարիի տեղեկութիւնը¹, որ Սասանյան Պարսկաստանում հոգեւորականներն ազատված են եղել gezith-ից՝ գլխահարկից, բայց ոչ «խարաճ»-ից՝ հավանական կլինի, իմ կարծիքով, ենթադրել, որ 'իվնի ժողովի կանոնում մասնանշված «հաս»-ը պետք է ունենա «խարաճ»-ի, այսինքն՝ հողային հարկի նշանակութիւն:

Արարական և Բագրատունյաց ժամանակ, ինչպես և Թուրք-թաթարական տիրապետութեան ժամանակ, «հաս»-ը գործածական է եղել Հայաստանում դարձյալ կամ ուղղակի հարկերի ընդհանուր նշանակութեամբ կամ, մասնավորապես, հողային հարկի իմաստով: Օրինակ, Անիի 1036 թվի Պետրոս կաթողիկոսի արձանագրութեան մեջ «հաս»-ը հիշատակվում է այգուց առնվող գյուղական հարկերի նշանակութեամբ. տես Ն. Ղ. Ալիշանի, Շիրակ, Վենետիկ 1881, էջ 84. Ի նՁԵ Թուականիս հայոց և ի մեծափառ Թագաւորութեանս հզար և տիեզերակալ Սմբատ որդւո Գագկա Հայոց և Վրաց շահն-շահի կամ եղև ինձ Տեառն Պետրոսի հայոց կաթողիկոսի տալ զայ-գին Աշնկի որ ի մեր կորդո արկած էր քրիստոսասէր մարզպանին Ապղարիպա որդւո Գրիգորո Պահլաւունո վառն առաւել սիրոյն և երախտեացն զոր ծառեալ էր զսուրբ Լուսաւորչի աթոռս. արդ տուաք որմով և ծառովք պտղաբերովք և անպտղաւք և խոտագետ-նովք և Գ աւր ջուր ազատ ի խալաէ եւ ի գեղչէ յամենայն հասոցս:

Եղիշեի վկայութեան մեջ «հաս»-ը, ինչպես վերև ասացինք, ունենալու է, հավանորեն, հողային բնական տուրքի նշանակութիւն, որովհետև հողային դրամական հարկի գոյութիւնը դժվար է ենթա-դրել Հայաստանում 5-րդ դարում:

« Բ Ե Կ Ա Ր »

Նիկ. Ադոնցի կարծիքով, Հայաստանում, դեռևս հնագույն նա-խարարական շրջանում, գոյութիւն ունեցել պարտագիր ձրի աշ-խատանքների պարտականութիւնը, ինչպես եվրոպական corvée-ն (=corrogata opera), ռուսական барщина-ն, որ Հայաստանում

¹ Th. Noeldeke, Tabari, 1879, էջ 264:

անվանվել է «բեկար» bekār: Այս վերջին բառը ծագել է նրա ենթադրություն, պարսկական bekār āmadan «աշխատանքի գնալ» դարձվածքից և մինչև այժմ барщина իմաստով գործածական է ժողովրդի մեջ (Армения в эпоху Юстиниана, էջ 484):

«Բեկար»-ի մասին այս կարծիքը, կարելի է ասել, որ ընդհանուր է ու սովորական, և որևէ կասկածանք այս առթիվ մինչև այժմ արտահայտված չէ եղել:

Բայց ճիշտ է արդյոք այս պնդումը «բեկար»-ի նշանակության մասին նախարարական հնագույն շրջանի նկատմամբ:

Ինձ թվում է, դժվար է վճռականապես պնդել, որ այդ ճիշտ է ու միանգամայն անվիճելի: Մատենագրական հնագույն վկայություններից չի երևում, որ «բեկար»-ը արաբական, Բագրատունյաց ու թուրք-թաթարական շրջանում ունեցած լինի, անպայման, «կոռ»-ի՝ барщина-յի նշանակություն՝ այդ բառի սովորական ընդունված իմաստով:

Առայժմ ինձ հայտնի են «բեկար»-ի վերաբերյալ հետևյալ հնագույն վկայությունները. 1. Դվնի 645 թվի ութերորդ կանոնում. «Իսկ եթե որդեգրեալն արժանասցի քահանայության՝ գեղջն վկայությամբ կամ որ որդեգրեացն զնա, և չէր անկ նմա քահանայութիւն, լակայն զկէս շնորհին կալցէ յաղագս ձեռնադրութեան, ազատ ի հարկէ և ի բեկարէ» (Կանոնագիրք հայոց, հրատարակ. Արսեն Դլոճյանցի, էջ 125). 2. Սյունյաց Սուփան իշխանի 901 թվի Կոթա վանքի արձանագրության մեջ՝ «զԱստվածածնի քայանայքն նախնեաց իմոց և այլ բազում սպասաւորս ազատ արարի յարքունական ծանրութենէ և ի բեկարէ. և սահմանեցի հոգս և ջուրս, և ետու միոյ քահանայի յիսուն դրամ ի տարուջ»¹ (Վիմական տարեգիրք, էջ 5). 3. Հովհաննու կաթողիկոսի, Պատմություն հայոց, Թիֆլիս 1912, էջ 133. «Ապա յստիկան ոմն ի հայս առաքեալ, տր Ալի Արմանի անուանիւր՝ ըստ հրամանի ամիրապետին իշխան իշխանացս Հայոց զնա (Աշոտ) կացուցանէր, բազում զգեստիւք և արքունական պատուով ձոխացուցեալ՝ ի նա հաւատալով զսակս Հայոց և զամենայն բեկար արքունի»։ 4. Նույնը, էջ 161—162, «Եւ այսպէս ընդարձակեալ զսահման տէրութեան իւրոյ (Սմբատ), որ ընդ լծով արքունի լակից և բեկարաց և մաքսից կացուցեալ՝ զգէն քաջութեան մարտի իւրոյ նշան յաղթութեան կանգնէր»։ 5. Մխիթարայ Գօշի, Դատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ 1880, էջ 212՝ «Իսկ եթէ որ յոր-

¹ Տե՛ս նաև Ստեփաննոս Օրբելյան, «Պատմութիւն նահանգին Սիսական», Թիֆլիս 1911, էջ 178:

դեգրաց ի քահանայութիւն ձեռնադրի կամ գեղջն վկայությամբ, կամ յանձնէ, որում չէր անկ քահանայութիւն, զկէս շնորհին կալցի յազագս ձեռնադրութեանն անհարկ և անպեկար» (Դվինի ժողովի ութերորդ կանոնն է տարբեր խմբագրությամբ)։ 6. Նույնը, էջ 215՝ «Զի երիցս երանելոյն սրբոյն Գրիգորի և երանելոյն Տրդատայ թագաւորի զսուրբ ևկեղեցւոյն զժառանգութիւնն ընդ այլ ազատաց տոմս կարգեալ է և ազատ էին սրբոյ ևկեղեցւոյն հողովն և ջրովն։ Եւ ի պարտից թագաւորութեան ժամանակս թէպէտեւ ի պեկար արկին, սակայն տունն ի դիւանի յայտնի է եւ չէ խառնեալ ի շինականս, բայց միայն զհարկան տային յարքունիսն» (Դվինի ժողովի իններորդ կանոնն է տարբեր ու հետաքրքիր խմբագրությամբ)։

Ինչպես տեսնում ենք, այս բոլոր վկայությունների մեջ խոսքը գրեթե շարունակ արքունի «բեկար»-ի մասին է։

Եթե «բեկար»-ը հասկանանք իբրև «կոռ», կամ барщина այդ բառերի սովորական այժմյան նշանակությամբ՝ այդ դեպքում՝ վերոհիշյալ վկայություններից պետք է հետևենք, որ Աստվածածնի քահանաները կամ սպասավորները մինչև 901 թիվը ոչ միայն հարկ են վճարել արքունիքին, այլև ենթակա են եղել «բեկար»-ի, այսինքն՝ օգտագործվել են իբրև ձրի աշխատող ուժ. պետք է նաև ենթադրենք, որ Աշոտ Բագրատունուն և նրա որդուն Սմբատ Ա-ին հանձնարարված է եղել Հայաստանում ոչ միայն խալիֆայության հարկերի վերակացութունը, այլև արքունի «բեկար»-ի, այսինքն՝ պարտադիր ձրի աշխատանքների՝ վերահսկողությունը։ Վերև առաջ բերված վեցերորդ վկայությունը կստանա անակնկալ ու նոր իմաստ, իբր թե Սասանյան Պարսկաստանի տիրապետության ժամանակ հոգևորականությունը «բեկար»-ի պարտականություններ է ունեցել արքունիքի հանդեպ, այսինքն՝ պարտավոր է եղել կատարել «կոռ»-ի կամ барщина-ի պարտադիր աշխատանքներ։

«Բեկար»-ի նման լուսաբանությունը վերոհիշյալ վկայություններում, իմ կարծիքով, խիստ վիճելի է ու գրեթե անհավանական։

Հայկազյան լեզվի նոր բառագրքում «բեկար» բառը բացատրված է իբրև՝ «հուն. telos, dasmos, լատին. vectigal որ և դիմոսական հարկ. տուրք արքունի», իսկ «անբեկար» մեկնված է՝ «ազատ ի վճարելոյ բեկար. առանց տալոյ զարքունի սակ տրոց»։ Ուրեմն՝ Հայկազյան նոր բառգրքի աշխատակիցները «բեկար»-ը հասկացել են ոչ իբրև «կոռ», այլ իբրև արքունի հարկ և տրամադիր են եղել, ըստ երևութիւն, «բեկար»-ն ընդունելու որպես «դիմոսական հարկ», այսինքն, հավանորեն, capitato plebeia զլխահարկ։

Իմ կարծիքով, եթե «բեկար»-ը, իրոք, կարելի լինի ենթադրել

իբրև արքունի հատուկ որևէ հարկ՝ նա կարող է ունեցած լինել ավելի շուտ հողային հարկի նշանակութիւն. քան գլխահարկի: Մենք արդեն վերև առի՞ք ունեցանք մատնանշելու, որ Հովհաննէս կաթողիկոսի վկայութեան մեջ «արքունի սակք, բեկարք և մաքսք» կարող են թերևս լինել Արաբական խալիֆատի նրեք հիմնական հարկերը՝ գլխահարկը, հողային հարկը և մաքսը: «Սակ»-ը, ինչպես վերև տեսանք, բացի սովորական իր նշանակութիւններէր ունեցել է, հավանորեն, նաև գլխահարկի իմաստ. մաքսի նշանակութիւնը պարզ է առանց բացատրութեան, ուրեմն՝ «բեկար»-ը կարող է, ըստ երեւոյթի, լինել հողային հարկը, որ արաբներն յեզմով անվանվում էր «խարաճ»¹:

Որ «բեկար»-ը համապատասխան կարող է լինել «խարաճ»-ին, այդ՝ վերապահութեամբ, իհարկեւ, կարելի է թերևս կոհակն այն առանձնահատուկ ու ուշագրավ խմբագրութիւնից, որ Դվինի մուղլի իննետորդ կանոնին տրված է Մխիթար Գոշի Դատաստանագրքում. Համեմատութեան համար այդ կարևոր հատվածները ղնում եմ դեմ առ դեմ:

Կանոնի դուռնայ մաղ., ք.

Մխիթար Գոշ, Դատաստ. մասն

«Ձի երանելոյն Գրիգորի և սրբոյն Տրդատայ զսուրբ եկեղեցւոյն մանկունս ընդ ազատաց տոմարն են կարգեալ, և ազատ էին սրբոյ եկեղեցւոյ հող և ջուր. նաև ի պարսից իսկ տէրութեանն յայտ արարեալ և չէ խառնեալ ի շինական իշխանութիւնն, ղերիցունեաց տունն ի դիւանին եղեալ են, բայց միայն զհասն տալ յարքունիս» (Կանոնագիրք Հայոց, հրատ. Արսեն Ղլտճյանցի, էջ 126):

Ա, ԶՁ, էջ 215—216. «Ձի երիցս երանելոյն սրբոյն Գրիգորի և երանելոյն Տրդատայ Ոսպաւորի զսուրբ եկեղեցւոյն զժառանգութիւնն ընդ այլ ազատաց տունս կարգեալ է և ազատ էին սրբոյ եկեղեցւոյն հողովն և ջրովն: Սւ ի պարսից թագաւորութեան ժամանակս թեպետ և ի պնկար արկին սակայն տունն ի դիւանի յայտնի է եւ չէ խառնեալ ի շինականս, բայց միայն զհարկսն տային յարքունիսն»:

1 Ուշագրութեան արժանի է, որ մինչդեռ Հովհաննէս կաթողիկոսը, խոսելով Արաբական շրջանի արքունի հարկերի մասին, գործ է ածում «սակ, բեկար» (տես էջ 133 և 161, Քիֆլիս 1912)՝ Քովմա Արծրունին արքունի հարկերն անվանում է հարկ, հասո՝ Հետաքրքիր են այս տեսակետից Քովմա Արծրունու հետևյալ վկայութիւնները, 1. «Պատմութիւն տանն Արծրունեաց», Պետերբ. 1887, էջ 103՝ «Եւ նորա տան տանել նմա զհարկս և հասս արքունի և դարձուցանեն զնա ընդ նոյն ուտի եկն»։ 2. Նույնը, էջ 111՝ «Ձնա յղէ Ապուէթ ելանել լերկիրն Վասպուրական և անդէն մեալ զօրօք բազմօք, մինչև զքովանդակ զհարկս և զհասս. արքունի յամենայն կողմանցն Հայոց առ նա բերցեն յիւրբանչիւր սահմանաց»։ 3. Նույնը, էջ 143՝ «Եւ կացցէ ինքն և իւրքն ամենքեան ի հնազանդութեան արքունի, ի հարկս և ի հասս շափոյ սակի արքունական աւանդութեանց»։ Հովհաննէս կաթողիկոսի և Քովմա Արծրունու վերահիշյալ վկայութիւնների համեմատութիւնից ես ստացել եմ այն տպավորութիւնը, որ Հովհաննէս կաթողիկոսի «սակ և բեկար»-ը համապա-

Դեմ առ դեմ դրված այս հատվածների իմաստը պարզ չէ։ Վիճելի են ոչ միայն հատվածների բովանդակության մի քանի կետերը, այլ անորոշ է նրանց մեջ նաև «պեկար»-ի ու «հաս»-ի նշանակությունը։

Կա՞նք առենք նախ Դվինի ժողովի իններորդ կանոնի վրա։

Դվինի իններորդ կանոնի վերոհիշյալ վկայության ընդհանուր իմաստը, իմ կարծիքով, այն է, որ «երիցունեաց» ընտանիքներն ունեցել են պարսից տիրապետության ժամանակ հարկային ինչ որ արտոնություն։ Նրանք չեն եղել «խառնեալ ի շինական իշխանութիւնն», նրանց հատուկ դրությունը, ըստ երևույթին, արձանագրված է եղել դիվանում և նրանք պարտավոր են եղել «միայն զհասն տալ յարքունիս»։

Որ, իրոք, հայ հոգևորականությունն ունեցել է ինչ որ արտոնություն արքունի հարկերի նկատմամբ՝ այդ կարելի է թերևս եզրակացնել «Ներսիսի կաթողիկոսի և Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի»՝ հինգերորդ կանոնից՝ «նոյնպէս և տգէտք մի իշխեսցեն մտից սրբոյ եկեղեցւոյ, զի անիրաւ է, վասն անուսումնութեանն ընդ զինուորս կացցեն և զհայրենի հող և շուր կայցեն, և յարքունիս հարկ, և զորդիս ի դպրոց տացեն, զի ուսցին» (տե՛ս Կանոնագիրք հայոց, էջ 109)։ Եթե տգետ հոգևորականները, կորցնելով իրենց արտոնությունները, զրկվում էին հայրենի հողից ու ջրից և վճարելու էին «յարքունիս հարկ», ինձ թվում է՝ կարելի է ենթադրել, որ պաշտոնավարող հոգևորականներն արքունի այդ հարկից ազատ էին եղել։ Ուրեմն՝ հոգևորականության արտոնյալ հարկային դրությունը կարծես թե հաստատվում է և այս վկայությամբ։ Տաքարի վերոհիշյալ տեղեկության համաձայն հոգևորականությունն ազատված է եղել Պարսկաստանում gezith-ից գլխահարկից։ Ի նկատի առնելով կարևոր այս վկայությունը և «հաս»-ի հավանական նշանակությունը՝ իբրև հողային հարկ, որ վերև ենթադրեցինք, ինձ թվում է՝ կարող ենք հավանական համարել, որ հայ հոգևորականությունը՝ Հազկերտ Բ-ի քաղաքական խստություններից հետո՝ պարտավոր է եղել «տալ յարքունիս» հողային հարկ՝ «հաս», բայց ազատ է եղել գլխահարկից։

Եթե այս իմ դիտողությունն ուղիղ ենթադրվի և «հաս»-ն ընդունվի իբրև հոմանիշ «խարաճ»-ի, իմ կարծիքով, անհիմն չպիտի համարվի Գոշի Դատաստանագրքի «ի պեկար արկին» խոսքերը

տախանում է Թովմա Արծրունու «հարկ» և «հաս»-ին։ Այս համեմատությունից և՛ թերևս կարելի լինի ենթադրել, որ «բեկար»-ը համապատասխան կարող է լինել «հաս»-ին՝ հողային նշանակությամբ։

հասկանալ Դվինի կանոնի համապատասխան նշանակությամբ և «բեկար»-ը ենթադրել հոմանիշ հայերեն «հաս»-ի և արաբերեն «խարաճ»-ի: Այդ դեպքում, բնականաբար, Գոշի հատվածի վերջում «զհարկան» բառը պետք է համարել աղճատումն Դվինի կանոնի «հասն» բառի:

Հետաքրքիր է շատ, որ Մխիթար Գոշի վերոհիշյալ հատվածը և, ըստ երևույթին, նաև «ի պեկար արկին» խոսքերը՝ Սմբատ Գունգըստաբլը հասկացել է բոլորովին այլ կերպ: «Ապա երբ ուժվորեցին պարսիկք ի վերայ հայոց,— ասում է նա իր Դատաստանագրքի հԲ կանոնում,— նա տանէին զիրիցնին ի հեծել» (I. Karst, Sempad-scher Kodex, B. I, հԲ, էջ 65): Սմբատ Գունգստաբլի հԲ կանոնի այս հատվածը խմբագրված է, ամենայն հավանականությամբ, Գոշի ՃԶ կանոնի վերև առաջ բերված վկայության հետևությամբ: «Բեկար»-ը Գոշի կանոնում Սմբատ Գունգստաբլը, ըստ երևույթին, հասկացել է ոչ իբրև հարկ, այլ որպես ճեղք»-ների զինվորական պարտավորություն՝ ծառայելու արքունի հեծելազորքում:

Քննենք «բեկար»-ի նշանակության մասին կարևոր այս նոր ակնարկը: Եթե «բեկար»-ն ընդունենք իբրև «ճեղք»-ների զինվորական պարտավորություն, այդ դեպքում՝ վերև առաջ բերված վկայությունները կստանան բոլորովին նոր ու անակնկալ իմաստ: 901 թվի Կոթայ վանքի արձանագրությունը մեկնելու ենք այն իմաստով, որ Սուփան իշխանն Աստվածածնի քահանաներին ու սպասավորներին ազատել է արքունի հարկից ու հեծելազորքի մեջ ծառայելու պարտականությունից: Պետք է ենթադրենք, որ Աշոտ Բագրատունուն և նրա որդուն՝ Սմբատ Ա-ին, հանձնարարված է եղել Հայաստանում թե արքունի հարկերի և թե զինվորագրության վերահսկողությունը: Մխիթար Գոշի «ի պարսից թագաւորության ժամանակս ի պեկար արկին» վկայությունը պետք է բացատրենք, իբրև հոգևորականության պարտադիր ծառայություն Պարսկական Հայաստանի հեծելազորքի շարքերում: Բոլորովին նոր լուսաբանություն կստանա Դվինի ժողովի ութերորդ կանոնի հատվածը, որի մեջ հիշատակված է «բեկար»-ը: Այդ կանոնում ասված է, որ «որդեգրեալ»-ը «զկէս շնորհին կալցէ յազազս ձեռնագրութեան, աղատ ի հարկէ և ի բեկարէ»: Եթե «բեկար»-ը մեկնենք իբրև պարտադիր զինվորական ծառայություն նաև Լ-րդ դարում, անհրաժեշտութեն, պետք է ենթադրենք, որ 645 թվի քաղաքական խառն շրջանում հոգևորականությունը կարողացել է ազատվել զինվորագրումից, որին ենթարկված է եղել Սասանյան տիրապետության ժամանակ:

«Բեկար»-ի հնագույն նշանակությունը, ինչպես տեսնում ենք, մութ ու անորոշ է: Վերոհիշյալ վկայություններից, ինչպես տեսանք, կարելի է մոտավորապես գուշակել, որ «բեկար»-ը կամ հողային հարկ է արքունի, կամ զինվորական ծառայության պարտավորություն՝ Սասանյան թագավորության և Արաբական խալիֆայության հանդեպ:

Այս ենթադրություններից ինձ ավելի հավանական է թվում առաջմ առաջինը: Երկրորդ ենթադրությունը դժվար է հաշտեցնել մատենագրական մի շարք վկայությունների հետ, որոնց մեջ շեշտված է շարունակ, որ եկեղեցու պաշտոնեություն մեջ չպետք է ընդունվեն «հեծեալ»-ները և զինվորականները: Ուշադրության արժանի են այդ տեսակետից հետևյալ վկայությունները. 1. Դվինի, Ժողովի վեցերորդ կանոնը, հրատ. Արս. Ղլտճյանի, էջ 123՝ «Ոմանք լուխտէ եկեղեցւոյ զկարգ և զպաշտօն թողին և զհեծեալութիւն ստացան: Արդ՝ եթէ դառնան ի շար ճանապարհէն՝ օրհնեալ են ի տեսուհէ և ընկալեալք ի մէնջ. ապա թե ոչ, իշխանութիւն լիցի վարդապետին զշնորհս եկեղեցւոյ հանել յայնպիսեացն և արժանաւոր քահանայից և պաշտօնէից մերձաւորաց տալ, որք սրբոյ եկեղեցւոյ զկարգըն զգուշութեամբ կատարեն»։ 2. Կանոնք Սահակայ, հրատ. Արս. Ղլտճյանի, 2, էջ 18՝ «այլ զտգէտս և զզինուորս ամենեկին իսկ պարտ է որոշել ի շնորհէն վայելից»։ 3. Կանոնք Սիմէոնի Աղուանից կաթողիկոսի (3-րդ դար), հրատ. Ա. Ղլտճյանի, էջ 203, «մի ամենեկին պիտուր մարդկան հեծելոց և մաքսապետաց, մի որ իշխեսցէ տալ զեկեղեցւոյ իշխանութիւն»։ Հմմտե նաև Կանոնք Ներսիսի կաթողիկոսի և Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի, հրատ. Ղլտճյանի, 5, էջ 108. Կանոնք Սիմէոնի կաթողիկոսի, Դ, էջ 204 ևն:

«Բեկար»-ի պարսկական ծագումը, որ մատնացույց է արել Նիկ. Ադոնցը, ինձ ևս հավանական է թվում: Ինչպես վերև տեսանք, bekâr âmadan դարձվածքը Նիկ. Ադոնցը թարգմանել է «Գործի գնալ», որովմէ՝ նոր պարսկերեն bekâr-ը նա հասկացել է իրրև գործ, աշխատանք: Իր այդ նշանակությամբ պարսկերեն bekâr-ը կարող էր, իսկապես, corvée-յի (corrogata opera) իմաստ ստանալ, բայց ոչ հողային հարկի:

Բայց ճիշտ է արդյոք որ պարսկերեն bekâr-ն ունեցել է վերոհիշյալ միայն նշանակությունը:

Միջոցա Արդուլա Գաֆֆարովի պարսկերեն-ռուսերեն լիակատար բառարանում bekâr-ը թարգմանված է՝ пригодный, годный, полезный, այսինքն՝ «պիտանի, օգտակար», bekâr âmadan՝ пригодиться, быть полезным, приносить пользу այսինքն՝ «պիտա-

նի, օգտակար լինել, օգուտ բերել»¹: նմանապես նաև Կ. Զալեմանի
ու Վ. Ժուկովսկու «Պարսկերեն քերականության» մեջ bekâr âma-
dan թարգմանված է՝ Zweckdienlich sein, être utile: Bekâr-ի
իմաստն այստեղ կապ ունի օգուտ և շահ գաղափարների հետ: Հո-
ղային եկամտային հարկն էլ հենց աշխատանքից, օգուտից, ար-
դյունքից տրվող հարկ էր: Թուրքիկ այս դիտողությունը ես չեմ հա-
մարում, իհարկե, բավարար ու համոզիչ: «Բեկար» բառի գործածու-
թյունը հարկի իմաստով այնքան կարևոր մի խնդիր է, որ կարոտ
է, անշուշտ, հատուկ քննության լեզվագետների ու պարսկագետնե-
րի կողմից:

Ամփոփելով վերոհիշյալ իմ դիտողությունները «բեկար»-ի մա-
սին, ստանում ենք հետևյալ կարևոր եզրակացությունները. 1. Որ
«բեկար»-ը Դվինի ժողովի իններորդ կանոնում, Կոթայ վանքի 901
թվի արձանագրության, Հովհաննես կաթողիկոսի պատմության մեջ,
նաև Մխիթար Գոշի Դատաստանագրքում շունի corvée-յի կամ ба-
щина-ի նշանակությամբ՝ այդ բառերի այժմյան հասկացողությամբ.
2. որ «բեկար»-ը կարող է լինել կամ արքունի հարկ, հավանորեն,
հողային, կամ գինվորական ծառայության պարտավորություն, եթե
այս վերջին ենթադրությունը կարելի լինի հաստատել փաստական
որևէ նոր տվյալներով և վերացնել այն դժվարությունները, որ վերև
մատնացույց եմ արել. 3. որ «բեկար»-ը, հիշատակված լինելով Դվի-
նի 645 թվի ժողովի կանոններում, գոյություն ունեցած պիտի լինե՞ր
մարզպանական Հայաստանում:

Այս կետերից երկրորդը, ինչպես տեսնում ենք, սոսկ մի ենթա-
դրություն է, որ անհրաժեշտ է հետազայում հիմնավորել և ապա-
ցուցել ավելի որոշ ու հաստատուն վկայությունների օգնությամբ:

«ԿՈՒ» ԵՎ «ՊԱՀԱԿՈՒԹԻՒՆ»

Պրոֆ. Նիկ. Ադոնցը բացի «բեկար»-ից «կոու»-ը ևս հիշատակել
է իր աշխատության մեջ, նույնացրել է այդ բառը պարսկերեն kâr-ի
հետ³, որ նշանակում է «աշխատանք» և վերագրել է նրան նույն

¹ Мирза Абдулла Гаффаров. Полный персидско-русский словарь, т. I, Москва, 1914 г.

² C. Salemann und V. Schukovskl, Persische Grammatik, Berlin, 1889, էջ 116

³ Հայկական «կոու»-ը նույնացնելու համար պարսկերեն kâr-ի հետ հարկավոր
է ցույց տալ լեզվական այն օրենքը, որի հիման վրա պարսկերեն â-ն դառնում է
հայերենում ու:

իմաստը, ինչ որ «բեկար»-ին, այսինքն՝ համապատասխան է համարել ֆրանսերեն *convéе*-յին և *ռուս. барщина*-յին¹: Պրոֆ. Ս. Նդիազարովը իր «Исследования по истории армянского права» ռուսումնասիրության մեջ «կոռ»-ը համարել է հատուկ հարկ, որ առնելում էր աշխատավորից և մեկ զույգ ելից կամ գոմեշից, որ լըծված էին արորին, սայլին կամ կամին: Նրա կարծիքով «կոռ» անվանվել է թե անասունների այդ մեկ լուծը և թե այն հարկը, որ առնում էին յուրաքանչյուր այդ լուծից²: Ուրեմն՝ «կոռ»-ը նա համապատասխան է համարել ռուսական *соха*-յին, որ ինչպես հայտնի է, 13-րդ դարից սկսած դառել էր հարկային որոշ միավոր: Այս բացատրությունը, եթե ուղիղ լիներ, հին Հայաստանի հարկային կարգերի համար կլիներ, անշուշտ, կարևոր ու հետաքրքիր մի նորություն: Սակայն հարգելի պրոֆեսորի այս կարծիքը ևս սխալ է և արդյունք է, պարզապես, անախորժ մի թյուրիմացության: Վերոհիշյալ իր հետևությունները «կոռ»-ի մասին նա արել է, հիմնվելով վարձյալ Մ. Էմինի «АЯМЯНСКІЯ НАДПИСИ» աշխատության վրա, որի մեջ «կոռ»-ը թարգմանված է *ПОДАТЬ* և «կոռ»-ի վերաբերյալ հատվածները թարգմանված են միանգամայն սխալ (տե՛ս էջ 14 և 73):

«Կոռ»-ի խնդիրը՝ նրա բովանդակությունը և ծավալը՝ Հայաստանի տնտեսական կյանքի կարևորագույն խնդիրներից մեկն է, ուստի հարկավոր եմ համարում առաջ բերել «կոռ»-ի վերաբերյալ պատմական հնագույն տեղեկությունները, որ առայժմ ինձ հայտնի են: «Կոռ»-ը, գլխավորապես, հիշատակված է արձանագրություններում: 1. Վիմական տարեգիր, էջ 10, Մրեն 992 թ. «Ցանուն Աստուծոյ այս իմ հրամանք են Գագկա Շահիազնշահի. աղատեալ իմ ՂՄրենոյ կոռն, որ ի նախճաւանի էր, զմարդոյ և զեղին, ի ձեռն խնդրոյ աստուածապատիւ տեառն Սահակայ Արշարունեաց եպիսկոպոսի»։ 2. Վիմակ. տարեգ. էջ 27՝ Անի, 1057—1063 թ. (պետք է լինի 1059—1064, տե՛ս վերև էջ 19, ծան). «և ազատեցին (աղորմութեամբ սուրբ և ինքնակալ թագաւորին Կոստանդեա Դովի») զվեցկէ կոռ, և զսայլի, եւ զկամին, և զանգարիոն և կատապան ով և լինի, տա սերմ ո. մոգ եւ ծախք զընծելոցն. զայլն տանուտէրքն առնեն իւրեանց տամբ»։ 3. Վիմակ. տարեգ. էջ 43, Հառիճայ, 1201 թ. «եւ զառաջին բահմանքն, որ բուն լեալ էր, հաստատեցի ի Սահմանախաչէ Ի Հառիճա դետն կոռ մարգով, Գերովն, Յամաք ձորով, Ճինարին Հարով,

¹ Армения в эпоху Юстиниана, էջ 484։

² Исследования по истории армянского права, էջ 41։

Գումքեց ձորովն, Արենաղբերով, հին Հառիճաովա. 4. Վիմակ. տարեբ. էջ 80՝ Դսեղ, 1237 թ. «Յառաջնորդութեան Տիրացու վարդապետին ես Աշոտ, որդի Գալաթէի, միաբանեցայ վանիս եւ ետու Աստուածածնիս երկու մեծ կոռավար եւ հաստատեցի արձանագրով»։ 5. Վիմ. տարեբ. էջ 83՝ Դսեղ, 1241 թ. «Ես Գրիգոր, որդի Մարծպանաց, յետ մահուան հաւր իմոյ շինեցի զԳրիգորաշէն եւ ետու յիւ վանքս եւ Սիրեկայ գոմոց տափն եւ մեծ կոռավարն Ագարակի Փայտաշէնու կէսն Լն»։ 6. Վիմ. տարեբ. էջ 123՝ Սբ. Սիոն, 1283 թ. «Նուէր ի սբ. ուխտս զՔարաթաղին այգին վերին հատովն... կոռ արտով»... Լն. 7. Վիմ. տարեբ. էջ 161՝ Ձագավանք, 1325 թ. «Ի պարոնութեան Ջաքարիա, թոռն Աւագին, մեք Դաւիթ եւ Վահագ Եփաթա եւ որդիք մեր Սատրիկ եւ Բահագին եւ Աւգուլա վասն յուսոյն, որ առ Աստուած եւ մեր արեւուս համար թողաք զվանաց կոռս զմարդո, եզին, իշո, զամենայն ցեղ կոռ»։ «Կոռավար»-ը հիշվում է նաև 881 թվի «Սաղոմոն» Սյունյաց եպիսկոպոսի հիշատակագրում, որ առաջ է բերված Ստեփանոս Օրբելյանի պատմության մեջ (Թիֆլիս 1911, գլ. Խ, էջ 215)։

«Կոռ»-ը, իմ կարծիքով, հիշատակված է եղել նաև Դվինի 645 թվի ժողովի ԺԱ կանոնում։ Այդ վկայությունը, որ ամենահինն է ու կարևորը, անհայտ է մնացել մինչև այժմ, որովհետև «Կոռ»-ի վերաբերյալ հատվածը կանոնում աղճատվել ու փոփոխման է ենթարկվել տգետ գրիչների կողմից։ Աղճատումն ակնհայտ է դառնում, երբ դեմ առ դեմ ենք դնում Դվինի ժողովի ԺԱ կանոնը և Մխիթար Գոշի Դատաստանագրքի Բ մասի ՃԳ կանոնը, որը Դվինի ժողովի նույն կանոնն է Գոշի խմբագրությամբ։

Դվինի ժողովի ԺԱ կանոնը

Մխիթար Գոշ Բ. մասն. ՃԳ

«Ոմանք յազատաց ի վերայ տկարանոցաց իշխանութիւն առնեն, և որպէս ի կենդանեաց՝ հարկս պահանջեն և ի կերակուրս և յըմպելիս զիրեանց զգործակալս մատուցանեն, կոռով և պատուհասիւ նեղեն, զողորմելի եղբարսն չարչարեն անխղճաբար» (Կան. Հայոց, հրատ. Արսեն Դլտճյանի, էջ 127—128)։

էջ 412. «Ոմանք ի տկարանոցս իշխանութիւն առնեն եւ հարկս եւ կերակուրս եւ ըմպելիս պահանջեն բռնութեամբ, և զիրեանց գործակալս ի վերայ գումարեն եւ կոռով եւ պահակութեամբ նեղեն և զողորմելի եղբարսն չարչարեն անխղճաբար»։

Այս համեմատությունից պարզ երևում է, որ Դվինի կանոնում բնագիրը աղճատված է և «կոռով և պատուհասիւ» խոսքերը, որ անտեղի են ու անհարմար, ծագել են «կոռով և պահակութեամբ» ուղիղ ընթերցվածի աղավաղումից։ Մխիթար Գոշը, անկասկած.

ունեցել է ձեռքի տակ Դվինի կանոնի բնագիրն առանց այդ աղճատման: Կարծում եմ, որ այս սրբագրության դեմ և ոչ մի առարկություն չի կարող լինել, որովհետև աղճատումն ականբեր է ու անվիճելի:

Այս ուղղումը հին հայոց ներքին կյանքի լուսաբանության տեսակետից ունի խիստ մեծ նշանակություն, որովհետև Դվինի կանոնի վկայությամբ հաստատապես որոշվում է, որ «կոռ»-ը գոյություն է ունեցել Հայաստանում ոչ միայն Բագրատունյաց ու հետագա շրջաններում, այլև 645 թվին: Եթե այդ այդպես է, ուրեմն, կարելի է նաև ենթադրել, որ «կոռ»-ը, ամենայն հավանականությամբ, գոյություն ունեցած պիտի լիներ Հայաստանում նաև մարզպանության շրջանում¹:

Առանց Դվինի ժողովի հետաքրքիր այդ տեղեկության կարևոր այս խնդիրը կմնար մութ ու անլուծելի:

«Կոռ»-ի նշանակությունը վերոհիշյալ բոլոր հատվածներում ս:յնքան պարզ է ու որոշ, որ կարոտ չէ առանձին լուսաբանության: «Կոռ»-ը, անտարակույս, այն պարտադիր աշխատանքներն էին, որոնք, ինչպես միջնադարյան *corvée*-ն գերմ. *Frohdienst*-ը և ռուս. *барщина*-ն կատարվելու էին ձրի կալվածատիրոջ մոտ:

Իմ կարծիքով, միանգամայն սխալ է ու անհիմն Յ. Կարստի ենթադրությունը, որ իբր թե «կոռ»-ը Հայաստանում, ինչպես և արևելիյան սլավոնների ու ռուսների մոտ, առաջ է եկել Բյուզանդական ազդեցությամբ և իբր թե այդ է պատճառը, որ հայկական «կոռ»-ը, և, ընդհանրապես, հարկային սխտեմը նմանություն ու ազգակցություն ունեն արևելյան-սլավոնականի ու, մասնավորապես, ռուսականի հետ, որոնք նույնպես ենթարկվել են Բյուզանդիայի ազդեցության (I. Karst, *Sempadscher Kodex*, B. II, 1905, էջ 12): Այդ

¹ Կարևոր է այստեղ հիշել, որ «կոռ»-ը մարզպանության ժամանակ գոյություն է ունեցել նաև Սասանյան Պարսկաստանում: Այդ մասին Տարարիի պատմության մեջ կա ուշագրավ մի վկայություն: Խոսելով երկարատև սովի ու ժողովրդի ծանր դրության մասին Սասանյան Պերոզ թագավորի ժամանակ (457—484 թ.) Տարարին հաղորդում է, որ Պերոզ թագավորը «նամականքի միջոցով հայտարարում է իր ամբողջ ժողովրդին, որ ազատում է նրան հողային հարկից և գլխահարկից, հանրօգուտ նպատակների համար ծանրություններից և կոռից, որ նրանց շնորհում է լիակատար ազատություն և հրամայում է, որ նրանք հողան ու մտածեն իրենց սնունդի և պահպանության մասին»: *Sb'u Th. Noeldeke, Tabari. էջ 112*: «Da erklärte er durch Brlefe seinem ganzen Volke, dass er sie von Grund und Kopfsteuer, von Auflagen für gemeinnützige Zwecke und vom Frohdienst entbinde, dass er ihnen volle Freiheit gebe und ihnen gebiete, sich um ihre Ernährung und Erhaltung zu bemühen»:

ենթադրութիւնը ճիշտ չէ, որովհետեւ թե ինքը ֆեոդալիզմը և թե նրան առանձնահատուկ տնտեսական ներքին կարգերը՝ աղատ գյուղացիութեան ճորտացումը և օգտագործումը, որպէս աշխատող ձրի ուժ, ոչ թե իրավական փոխառութիւններ են, ինչպէս լեզվի որոշ բառապաշարը, այլ ամեն մի երկրի տնտեսական ու ներքին զարգացման արդյունք: Հայկական «կոռ»-ը չի կարող Բյուզանդիայի ազդեցութեամբ առաջ եկած լինել նաև այն պատճառով, որ «կոռ»-ի ճոյութիւնը Բյուզանդական կայսրութեան մեջ նրա ֆեոդալացումից առաջ, որ տեղի է ունեցել շատ ավելի ուշ քան Հայաստանում, գրեթե անհայտ մի խնդիր է և հաստատուն կերպով դեռ ապացուցված չէ:

Միջին դարերում, ինչպէս հայտնի է, տարբերել են ճորտ գյուղացիութեան երկու տեսակ գլխավոր պարտադիր աշխատանքներ՝ *manoperae* (գերմ. *Handfrohen*) և *carroperae* (գերմ. *Fahr-Spannfrohen*): Առաջինն այն աշխատանքներն էին, որ գյուղացին կատարում էր ինքը, երկրորդը՝ այն որ նա կատարում էր իր անասուններով ու լծասարքով: Այդ երկու տեսակ աշխատանքներն էլ, ինչպէս երևում է վերև առաջ բերված վկայութիւններից, ճոյութիւն են ունեցել Հայաստանում Բագրատունյաց ու հետագա շրջաններում, հավանորեն, նաև արաբական ու՝ մարդպահութեան ժամանակ: 992 թվի Մրենի արձանագրութեան մեջ հիշատակված է՝ «զՄրենոյ կոռն, որ ի նախճաւանի էր, զմարդոյ եւ զեզին», 1059—1064 թվի Անիի արձանագրութեան մեջ՝ «զվեցկէ կոռ եւ զսայլի, եւ զկամին, եւ զանգարիոն», իսկ 1325 թվի Ձագավանքի արձանագրութեան մեջ՝ «զվանաց կոռս զմարդո, եզին, իշո, զամենայն ցեղ կոռ»: Այս վկայութիւններում հիշված «մարդոյ կոռ»-ը համապատասխանում է, անշուշտ, միջնադարյան *manoperae* կամ գերմ. *Handfrohen* անվանված ձրի աշխատանքներին, իսկ «զվեցկէ, սայլի, կամին, եզին, իշո» կոռի տեսակները համապատասխանում են միջնադարյան *carroperae* կամ գերմ. *Fahrfrohen* աշխատանքներին:

Ինձ թվում է, որ «զվեցկէ կոռ»-ը, ինչպէս երևում է «զվեցկի» ժողովրդական բառի այժմյան նշանակութիւնից, այն վարուցանի պարտադիր աշխատանքներն էին, որ գյուղացին կատարելու էր իր արորով ու իր լծկաններով: Նմանապէս և «կամին կոռ»-ը կամ անելու աշխատանքներն էին, որ գյուղացին պարտավոր էր կատարել դարձյալ իր կամով ու լծկաններով: Կարող էին լինել, իհարկե, պէպքեր, երբ գյուղացին վարուցանի ու կալի պարտադիր աշխատանքները պետք է աներ կալվածատիրոջ գործիքներով ու լծկաններով, բայց այդ, իմ կարծիքով, չէր լինի այլևս «զվեցկէ կոռ» կամ

«կամին կոռ», այլ կլինեն «մարդոյ կոռ»: «Սայլի, եղին, իշո կոռ»-ը հասկանալի են: Այդ այն պարտադիր ձրի աշխատանքներն էին, որ գյուղացիին անելու էր կալվածատիրոջ մոտ իր բեռնակիր անասուններով կամ սայլով: Այս «կոռ»-ը հիշվում է նաև Մխիթար Գոշի Դատաստանագրքի Ա կանոնում (Բ մասն, էջ 316)¹ «Զիտյ և ջորսոյ և իշոյ մի լիցի հարկ, դի նոքօք բաղում անգամ¹ ծառայէ զտէրուներսն»:

Գոշի Դատաստանագրքում առանձնապես կարևոր է հետևյալ վկայությունը «կոռ»-ի քանակական չափի մասին. «Այսպես եւ յատուրս շաբաթոյ ևօթնէ մին գործիցի իշխանին եւ տէրոմնի. այլ աւելի աշխատելն զծեռամբ անկեալն անիրաւութիւն մեծ է» (մասն Բ, Ա, էջ 315):

Այս տեղեկությունը, ինձ թվում է, որ մոտավորապես համապատասխան պիտի լինի «կոռ»-ի օրերի միջին քանակին, որ, ըստ էրևութին, սովորական է եղել ԺԲ-րդ դարի երկրորդ կիսում: Նույն կանոնի վերջին խոսքերից կարելի է սակայն հետևել, որ իրական կյանքում գոյություն են ունեցել «կոռ»-ի ավելի ծանր պայմաններ: Ուշադրության արժանի է նույն կանոնում նաև հետևյալ հատվածը՝ «յեօթնէ մին գործիցի իշխանին ու տէրոմնի», Այս խոսքերից կարելի է, իմ կարծիքով, հետևել, որ շինականները «կոռ»-ի պարտականություն են ունեցել բացի իրենց անմիջական տիրոջից նաև երկրի իշխանի հանդեպ, որին ենթարկված էր դավառը կամ շրջանը:

«Կոռ»-ի 52 օր տևողությունը պետք է համարել շինականների համար բավական ծանր լինե, պետք է ասել, որ Արևմտյան Եվրոպայում նույն այդ ժամանակները գոյություն են ունեցել «կոռ»-ի շատ ավելի ծանր պայմաններ: Յ. Կուլիշերի ասելով, Թ—ԺԱ դարերում «կոռ»-ի աշխատանքներն Արևմտյան Եվրոպայում, սովորաբար, կազմել են ճորտական գյուղացիության աշխատանքի օրերի կեսը՝ երեք օր շաբաթվա ընթացքում²: Այս վկայությունը մոտավոր-

¹ Այս կանոնի առթիվ Վ. Բասդամյանցը ծանոթության մեջ հաղորդում է, որ «իր օրինակի մեջ լուսանցքի վերա դրած է՝ պատահմամբ (փխ, բրազում անդամ), իսկ Ն—488, 749 և Սին. Կարապ. օր. մեջ դրած է տողի ընթացքում՝ միայն պատահմամբ ծառայել նոքօք զտէրոմնիսն»: Հիմնվելով այս ծանոթության վրա, կարելի է, իմ կարծիքով, ենթադրել, որ Դատաստանագրքի խմբագրությունից հետո այս «կոռ»-ը եղել է որոշ տեղերում պատահական ու բացառիկ: Բայց հնարավոր է նույնպես, որ սրբագրողները, շեշտելով այս «կոռ»-ի պատահական լինելը, նպատակ ունեն արդարացին է ձրուց, ջորուց և իշուց առնվող հարկերը:

² Տես I. M. Кулишер, Лекции по истории экономического быта Западной Европы. Петроград, 1918, էջ 48.

դապես ձեռն կարող է լինել, իմ կարծիքով, գյուղացիության ճնշված ու ստորին խավերի համար: Ինչպես հայտնի է, նույն այդ ժամանակաշրջանում, նայած տեղին ու ժամանակին, գյուղացիության մի ստվար մասը գտնվել է Արևմտյան Եվրոպայում՝ ավելի ազատ ու տանելի վիճակում և պարտավոր է եղել աշխատել կալվածատիրոջ մոտ, մեծ մասամբ, 12 օր տարվա ընթացքում, իսկ երբեմն՝ դրանից էլ պակաս:

Ի նկատի առնելով հայ շինականների համեմատաբար բարեկեցիկ դրությունը, Ե-րդ դարում, ինչպես կարելի է, իմ կարծիքով, եզրակացնել Շահապիվանի ժողովի կանոններից¹, ինձ թվում է, որ «կոռ»-ը եթե նա գոյություն ունեցած լիներ հնագույն այդ շրջանում, կարող էր ավելի մեղմ եղած լինել, քան Բագրատունյաց ու հետագա ժամանակներում:

Վերև առաջ բերված «կոռ»-ի վերաբերյալ վկայություններից հետաքրքիր է, մասնավորապես, 1059—1064 թվի Անիի արձանագրությունը, որի բովանդակությունից երևում է, որ «կոռ»-ի պարտականություններ ունեցել է «Անի մայրաքաղաքը»: «Անուամբ Տեառն ամենակալի եւ ողորմութեամբ սուրբ եւ ինքնակալ թագաւորին Կոստանդեա Դուկի,— հաղորդում է արձանագրությունը,— կամ եղև իմ Բսպորտա մագիստոռսիս եւ արևելից կատապանիս Վիսկացոյս առնել ողորմութիւն մայրաքաղաքին Անու, յորժամ առին զտանուսրութիւնս Մխիթար իպատոսն, Կրտին որդին, եւ Գրիգոր, Լապասաակի որդին, սպաթար կանկիտատն, եւ Սարգիս, Արտաւազայ որդին, սպաթար կանկիտատն, և ազատեցին զլեցել է կոռ, եւ զսալլի եւ զկամին, եւ զանգարիոն եւ կատապան ով եւ լինի, տա սերմ ու մոգ եւ ծախք զընծելոցըն. զայլն տանուտէրքն առնեն իւրեանց տամբ, որ չհասնի ի յԱնի ոչ ինչ ոյժ» (Վիմ տարեգ., էջ 27):

Արդ, ինչպե՞ս պիտի հասկանալ արձանագրության այս վկայությունը, որ «կոռ»-ի պարտադիր աշխատանքներից ազատել են Անի մայրաքաղաքը: Դժվար է, իհարկե, ենթադրել, որ «կոռ»-ի պարտականություններ կարող էր ունենալ Անիում բնակվող «ազատ»-ների դասը: Ըստ երևույթին, այս վկայությունը վերաբերում է ռամիկ՝ ժողովուրդին, հավանորեն, Անիի տանուսերերի իշխանության տակ գտնվող այն ռամիկ շինականներին, որոնք գտնվել են ճորտական վիճակում:

Վերոհիշյալ վկայություններում հիշատակված են նաև «կոռա-

¹ Տե՛ս Հ. Մանանդյան, Դիտողություններ հին Հայաստանի շինականների դրության մասին մարզպանության շրջանում: Երևան 1925, էջ 41:

վարձ հողեր, որոնք նվեր էին տրված եկեղեցիներին կամ վանքերին: «Կոռավար» բառը գործ է ածված, անշուշտ, այն հողերի վերաբերմամբ, որոնք մշակված էին «կոռ»-ի միջոցով:

Արդ, եթե այդ հողերը նվեր էին տրվում, իբր «կոռավար», ինչպես ասված է արձանագրություններում, հարց է առաջ գալիս, թե արդյոք այդ հողերն էին միայն անցնում եկեղեցուն, թե՛ նաև «կոռ»-ը, այսինքն՝ նաև նրանց մշակման պարտադիր ձրի աշխատանքները: Քանի որ արձանագրությունների մեջ շեշտված է, որ նվեր են տրվում «կոռավար» որոշ հողեր, ինձ հավանական է թվում, որ «կոռ»-ի աշխատանքներն այնուհետև կատարվելու էին նույն հողերի վրա նոր տիրոջ օգտին: «Կոռավար» հողերի օտարացման ու փոխանցման վերաբերյալ կարևոր այս խնդիրը կարոտ է, իհարկե, դեռ առանձին քննության նոր ավելի որոշ փաստերի օգնությամբ:

«Կոռ»-ի նշանակության վերաբերմամբ կա մի ընդհանուր հարց, որ հարկավոր է պարզել. Ֆրանսիական corvée-ն և գերմանական Frohndienst-ը, ինչպես հայտնի է, ունեցել են ընդարձակ իմաստ և գործ են ածվել նաև պետական ու հասարակական բնույթ ունեցող աշխատանքային պարտականությունների համար: Այդպիսի աշխատանքներ էին, օրինակ, ճանապարհների շինությունն ու նորոգումը (corvée des routes), փոխադրական միջոցների հայթայթումը ևն:

Ռուսաստանում, ընդհակառակը, барщина կոչվել են միայն այն պարտադիր ձրի աշխատանքները, որ կատարվել են կալվածատիրոջ օգտին: Հայկական «կոռ»-ը ունեցել է, իմ կարծիքով, նույնպիսի ընդարձակ իմաստ, ինչպես corvée-ն և Frohndienst-ը: «Կոռ»-ի այդ ընդարձակ իմաստը Ժէ-րո դարում պարզ երևում է Զաքարիա սարկավազի հետևյալ հետաքրքիր վկայություններից. 1. Պատմագրություն, վաղարշապատ 1870, Հատ. Ա. էջ 45՝ «Սա (Ամիրզունայ խանը) ի տիրեր իւրում Երևանայ, իսկոյն ձեռն էարկ լինութեան և մարդաշատութեան: Նախ սկսաւ շինել զքերդն, և ապա քաարանս, և զայգիս, և զքուրաստանս, և զպարտէզս, և հանել զառուս, և առաւելու զշուրսն: Այլ և ի տեղիս տեղիս թեթեացոյց լահրկն, և երարձ դժանր լուծ ի պարանոց և ոսմկաց: Բայց զի բազմացոյց զսուխրայն՝ այսինքն կոռն. քանզի որպէս ասացաք՝ թէ շիւտածս առնէր. վասն այնորիկ բազմացոյց զկոռն»։ 2. Նույնը, Հատ. 2, էջ 11՝ «և հրամայեաց Քոռ-եազնատարն սուխրայ հանել՝ այսինքն կոռ՝ առ ի պեղել զձիւնն, և բանալ ճանապարհ զօրացն. և զորնչ ի ցերեկի պեղէին, գիշերն (իգիշերին) լնոյր հոսանն. բազումս արշարեցան, և ոչ հոգ օգուտ ինչ»:

ինձ թվում է, որ նույն այս ընդարձակ նշանակությունը «կոռ»-ը, հավանորեն, ունեցած կլինեիր նաև հնագույն ժամանակներում: Մխիթար Գոշի վերոհիշյալ վկայությունը, որ «յաուրս շաբաթու յեօթնէ մին գործիցի իշխանին եւ տէրունի» (էջ 315)՝ կարող է թերևս մի ակնարկ համարվել «կոռ»-ի այդ լայն նշանակության ժթ-րդ դարում: Այս հատվածում «տէրունի» անվանված աշխատանքները, անշուշտ, այն «կոռ»-ն է, որ պահանջվում էր կալվածատիրոջ օգտին. իսկ «իշխանին» անվանվածը՝ կարող է վերաբերվել այն պետական ու հասարակական բնույթ ունեցող պարտադիր աշխատանքներին, որ կատարվելու էին երկրի իշխանի հրամանով: Ինչպես ժթ-րդ դարում, նույնպես և այս շրջանում, «կոռ» են անվանվել, հավանորեն, թե առաջին և թե վերջին կարգի աշխատանքները:

Դվինի 645 թվի ժողովի ԺԱ կանոնում, ինչպես վերև տեսանք, հիշատակված է եղել բացի «կոռ»-ից նաև «պահակութիւն»-ը: «Ոմանք յազատաց, — ասված է եղել կանոնում, — ի վերայ տկարանոցաց իշխանութիւն առնեն, և որպէս ի կենդանեաց՝ հարկս պահանջեն և ի կերակուրս և յըմպելիս ղիւրհանց գործակալս մատուցանեն, կոռով և պահակութեամբ նեղեն, զողորմելի եղրարսն շարշարեն անխղճաբար»: «Պահակութիւն»-ն այս հատվածում, ինչպես երևում է այդ բառի այժմյան իսկ նշանակությունից, ըստ երևվույթի, պարտադիր ձրի աշխատանքներն էին՝ պահպանության ու հսկողության, որ գոյություն են ունեցել նաև Արևմտյան Նվորպայում: Որ «պահակութիւն»-ը «կոռ»-ի հատուկ մի տեսակն է եղել ոչ միայն յոթերորդ, այլև հինգերորդ դարում, այդ կարելի է գուշակել նոր Կտակարանի հայերեն թարգմանությունից, որի մեջ հունարեն *angareuo* (լատիններեն *angario*) բառի դիմաց, որ գործածական էր պարտադիր ձրի աշխատանքների համար, հայերենն ունի «պահակ ունել» (Մատթ. ԻԵ, 32, Մարկ. ԺԵ, 25) կամ «ստարապարհակ վարել» (Մատթ. Ե, 41) համապատասխան թարգմանությունը:

ՅՈՒՍՏԻՆԻԱՆՈՍԻ ՆՈՎԵԼՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԺԱՌԱՆԳԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ՝

Հայ իրավունքի պատմությունը ուսումնասիրելիս ուշադրության արժանի խնդիրներից մեկը՝ Հայաստանում Հռոմեական իրավունքի գործադրության խնդիրն է:

Դժբախտաբար այդ խնդրի պարզաբանումը դեռևս զգալի դժվարություն է ներկայացնում՝ թե մեզ հասած պատմական վավերագրերի աղքատության և թե պատմական սակավաթիվ մնացած նյութերը հավաքելու, հրատարակելու և ֆրանց քննական լուսաբանությանը վերաբերող նախնական պատմա-բանասիրական աշխատանքների անբավարար լինելու պատճառով:

Անկարող լինելով դնել այդ խնդիրը իր ամբողջ ծավալով, ներկա հոդվածում մենք սահմանափակվում ենք Արևմտյան կամ Կայսերական Հայաստանում ժառանգման կարգի փոփոխությանը վերաբերող Յուստինիանոսի նոր օրենքների [նովելների] ուսումնասիրությանը: Ընդ որում, վերլուծման ենթարկելով պատմական փաստաթղթերի տվյալները, մենք կաշխուսենք որոշել հին հայերի մոտ ընդունված ժառանգման բնույթը և պարզել հռոմեական իրավունքի սկզբունքների հնարավոր ազդեցությունը Հայաստանի ժառանգական հարաբերությունների հետագա զարգացման վրա:

Սակայն նախապես անհրաժեշտ է ասել մի քանի խոսք Հայաստանի քաղաքական վիճակի և այն պատմական պայմանների մասին, որ այնտեղ եղել են:

Ինչպես հայտնի է, Հայաստանի արևմտյան մասը ընկավ Հռոմի յոշխանության տակ դեռևս մինչև մեր թվականության սկիզբը: Այ-

¹ См. Новеллы Юстиниана о порядке наследования у армян «Известия АН. Арм. ССР. 1952» № 5

նուհետև ժամանակի ընթացքում հետզհետե միացվել են կայսրությանը նաև Հայաստանի մի քանի այլ մարզեր: Այդ մարզերի իրավական դրույթունը, որոնք տարբեր ժամանակներում էին մտել Հռոմեական կայսրության կազմի մեջ և տարբեր քաղաքական պայմաններում, եղել է խիստ տարբեր:

Մինչդեռ, այսպես կոչված, Փոքր Հայքի հողերը, որոնք տեղավորված էին Եփրատ գետի ձախ ափի երկարությամբ, ենթարկվել էին հռոմեացիներին դեռևս Միհրդատ Պոնտացու անկումից հետո և ժամանակի ընթացքում կազմել էին Հռոմեական կայսրության օրդանական մասը, կայսրությանը միացրած նախկին Մեծ Հայքի մարզերը [374 և 387 թթ.] իրենց ներքին կազմակերպությամբ եղել են անկախ և կառավարվում էին մեծ մասամբ տեղական իշխանների միջոցով, որոնք Պրոկոպիոս պատմիչի մոտ կոչվում էին սատրապներ:

Արևմտյան Հայաստանի քաղաքական կախումը նախ Հռոմեական հանրապետությունից և կայսրությունից, իսկ ավելի ուշ Բյուզանդական կայսրությունից, առաջ բերեց արևմտյան հայերի սերտ մերձեցում և մշակույթի շփում հունա-հռոմեական աշխարհի հետ: Ներգրավվելով կայսրության կյանքի հունի մեջ, Հայաստանի այդ մասը չկարողացավ դերժ մնալ կայսրության մշակույթի և կրթության ազդեցությունից: Այդ ազդեցությունը ուժեղացավ հատկապես Յուստինիանոսի ժամանակվանից և մասամբ կապված է այդ կայսեր բարենորոգչական գործունեության հետ, որը ձգտում էր հռոմեականացման ենթարկել կայսրության իշխանության տակ գտնվող Հայաստանի մարզերը:

Այդ խոշոր աշխարհակալի խիստ միտումնավոր ու մտածված քաղաքականությունը, ինչպես և դարերի ընթացքում տեղի ունեցող հայերի մոտիկ հալածությունները կայսրության հետ, պետք է, անշուշտ, թողնեին իրենց հետքերը հայ ժողովրդի հոգեկան կյանքի վրա և հատկապես նրա այն հատվածի, որը գտնվում էր կայսերական Հայաստանում:

Եվ իրոք, հայկական մատենագրությունը, որ հայերի քրիստոնեություն ընդունելուց հետո համակված է եղել աստրա-քրիստոնեական գաղափարներով, սկսած VI—VII դարերից կրում է հունա-բյուզանդական մտքի ու գիտության որոշ ազդեցությունը:

Հայ մտավորականության հունասիրական այդ նոր հոսանքը նկատելի է ոչ միայն հին հայկական գրականության մեջ, այլև հայերի մտավոր ու մշակութային այլ դրսևորումների մեջ: Կարող է այնուհետև կասկած լինել նրանում, որ իրավունքի ասպարեզում ևս

Արեւելյան-Հոռմեական կայսրության իրավական գաղափարները ունեւնային որոշ ազդեցություն հին Հայաստանի փրավական կենցաղի վրա:

Պժրախտարար, շնորհիվ ելած ինքի ու կցկտուր պատմական եւլյաւնքի, հին հայերի ներքին կյանքը կարելի է պատկերացնել միայն ընդհանուր գծերով:

Երկրի անկախութեան ժամանակաշրջանում Արշակունիների ցրով Հայաստանը մասնատված է եղել բազմաթիւ իշխանութիւնների և ունեցել է ֆեոդալական-նախարարական պետական կազմակերպություն: Ըստ երեւոյթին յուրաքանչյուր իշխանութիւն կամ նախարարութիւն ունեցել է իր ինքնուրույն ներքին կազմակերպութիւնը, և իրավունքի ու դատական խնդիրներում ղեկավարվել է իր նախնիներից ժառանգած իրավական նորմաներով, այսինքն՝ սովորութի իրավունքով: Նախարարական երկրների տարբերութեան համապատասխան, տարրեր են հղել նաև այնտեղ տիրող սովորութիւններ:

Քրիստոնեւթեան ընդունումը IV դարի սկզբում ունեցաւ այն հետեանքը, որ Հայաստան մուտք գործեց եկեղեցական կանոնական իրավունքը, որը և իր արհայատութիւնը ստացաւ հայ ժողովրդի կյանքի բոլոր իրավական ասպարեզներում: Նախարարութիւնների սովորական իրավունքը շատ դեպքերում հակասում էր քրիստոնեական եկեղեցու ուսմունքին, որը ուներ իր կանոնական օրենքները: Նոյսին, հենց այդ ժամանակաշրջանում Հայաստանում ապրում էին բազմաթիւ կրթված անձինք՝ ասորիներ և հույներ, որոնք ընտելացել էին իրենց իրավունքին և, իհարկե, չէին ուզենա ենթարկվել տեղի սովորական իրավունքին:

Քրիստոնեւթեան ընդունման կապակցութեամբ հայ հասարակայնութեան մեջ տեղի ունեցած փոփոխութիւնները, բացի կանոնական իրավունքի փոխառումից, առաջ բերին հայ եկեղեցու ինքնուրույն օրենսդրական գործունեւթիւն, որի գլխավոր արտահայտութիւնը եղել են տեղական եկեղեցական ժողովների որոշումները:

IV դարի վերջերին Արշակունիների անկման հետեանքով Հայաստանը լատանւեց երկու դարավոր ախոյանների՝ հոռմեացիների և պարսիկների մեջ:

Բացի քաղաքական ինքնուրույնութեան վերացումից, հայ ժողովրդի պատմութեան այդ շրջադարձը երկրի ներքին կազմակերպութեան մեջ սուր փոփոխութիւններ առաջ չբերեց: Նախարարութիւններում գոյութիւն ունեցող իրավական հարաբերութիւնները երկար ժամանակ մնում էին համարյա անփոփոխ՝ ինչպես Հոռմեա-

կան, այնպես էլ Պարսկական Հայաստանում: Սակայն Կայսերական Հայաստանում այդ ազատութիւնը հետզհետեւ սկսեց խեղդւիլ:

Պրոկոպիոս պատմիչի¹ վկայութեան համաձայն հայկական սատրապներից ոմանք բացարձակորեն անցան Զենոն կայսեր դեմ ապստամբած զորավարների կողմը: Այնուհետեւ, հաղորդում է Պրոկոպիոսը, հայկական սատրապները իշխանութեան էին կոչւում ժառանգական կարգով և այդ իշխանութիւնը պահում էին մինչև իրենց մահը: Սակայն 485 թվին Զենոն կայսրը, ապստամբութեանը մասնակցելու համար, իբրեւ պատիժ, նրանց պաշտոնանկ արեց և որոշեց, որպէսզի սատրապական իշխանութիւնը տրվի արժանավոր անձանց ըստ կայսեր ընտրութեան: Այդ ունֆորմը ներշնչված է եղել, անշուշտ, արևմտա-հայկական սատրապութիւնները կիսանկախ երկրներից կայսերական նահանգների վերածելու դիտավորութեամբ:

Այդ շրջանների վերամիավորման քաղաքականութիւնը ավարտվեց Յուստինիանոս կայսեր բարենորոգումներով, որոնք միանման ընդգրկում էին թե՛ վարչական, թե՛ դատավարական և թե՛ օրենսդրական բնագավառները:

Համաձայն 31-րդ նոր օրենքի՝ «Հայաստանում չորս կառավարիչներ հաստատելու մասին», որը հրատարակված է եղել 536 թվին և ուղղված է Իոհանես պրեֆեկտին, կայսրութեանը ենթակա բոլոր մարզերը ենթարկվել են նոր վարչական բաժանման՝ չորս Հայաստանների, և լիակատար կերպով վերակազմվել են ընդհանուր պետական հիմունքներով:

Երկրի վերակազմութեան հետ միաժամանակ բարեփոխման է ենթարկվել դատավարութիւնը և կարգադրութիւնը և արվել են թարկել հայերին ընդհանուր կայսերական օրենսդրութեանը:

Հավաստի վավերագրերի թվում, որոնք վկայում են Հայաստանում Յուստինիանոսի կատարած բարենորոգչական գործունեության մասին, բացի 31-րդ նոր օրենքից, պահպանվել են նաև երկու այլ օրենքներ, որոնք նվիրված են հայերի ժառանգականութեան իրավունքին: Մեր այս ուսումնասիրութիւնը նվիրված է հենց այլ լինդրին:

Բերում ենք այդ նոր օրենքների մեր թարգմանութիւնը ամբողջութեամբ, որը կատարված է հունարեն բնագրից, և որտեղ այլ թարգմանութիւնների համեմատութեամբ թույլ են տրված մի քանի շեղումներ²:

¹ De Aedificiis III, 1.

² Համեմատեա Նաև Ն. Ադոնցի թարգմանութիւնը, «Армения в эпоху Юстиниана», СПб., 1908, էջ 179—184:

Ներածություն.

«Մենք ցանկանում ենք նաև ազատագրել հայերին նախկին անադարություններից, փախածներից ըստ ամենայնի մեր օրենքներին և շնորհել նրանց պատշաճ նախաօգնություն:

Գլուխ I.

Մենք նորերս իմացանք, որ նրանց մոտ գոյություն ունի մի ինչ-որ բարրարոսական և դաժան օրենք, որը անվայել է թե հռոմեացիներին և թե մեր պետության արդարացի ոգուն, այսինքն՝ որ ծնողներին ժառանգում են տղամարդիկ, այլ ամենևին ոչ կանայք: Այդ պատճառով, ներկա սրբազան օրենքով մենք հրամայում ենք քոմեծաշուք անվանը, որպեսզի ժառանգական կարգերը լինեն միևնույնը և որպեսզի այն բոլորը, ինչ որ սահմանված է հռոմեական օրենքներով տղամարդկանց վերաբերմամբ, ինչպես և կանանց համար ուժ ունենան նաև Հայաստանում: Զէ՛ որ հենց նրա համար ուղարկեցինք նրանց մեր օրենքները, որպեսզի նոքա կառավարվեն նրանց համաձայն:

§ 1. Եվ տրովհետև արվեն անցածի համար հալուցել նոր գործեր լիլիներ լոլորովին անտնդի, տեստի մենք հրամայում ենք, որպեսզի այս օրենքը ուժ ունենա մեր բարեպաշտ թագավորության ժամանակից, այնպես որ այդ ժամկետից սկսած մինչ այժմ մեռած անձանց ժառանգության հետ պետք է վարվել համաձայն սույնի. քացի այն դեպքերից, երբ գործը արդեն վճռված է իրենց կողմից և նրանց մեջ հաշտեցում է կատարվել այլ կերպ: Իսկ եթե տեղի է ունեցել նման մի բան, հրամայում ենք խղճել այդ ուժի մեջ և բոլորովին չդիպչել:

§ 2. Մենք կամենում ենք, որպեսզի կանայք մասնակցեն նաև տոհմային կոչված կայքի ժառանգմանը, սկսած ցույց տրված ժամանակից: Իսկ այն դեպքում, եթե գտնվեն անձինք, որոնք իրենց տղջիկներին, որ թեև չեն կոչված իրենց մոտ սովորական աղիաֆետ ժառանգմանը, այնուամենայնիվ գրել են իբրև ժառանգ, նրանք ևս և նրանցից ծնված զավակները պետք է մասնակցեն տոհմային կայքի ժառանգմանը:

Վերջաբան.

Այսպես, ուրեմն, մեզ համար բարեհաճ, բույն սրբազան օրենքի մեջ հայտարարվածը թող քո գերազանցությունը պահպանես և հանձ-

նե ի կատարումն, որպեսզի մեր օրենքները յանհնաւ ըստ ամենայն ուժ և գերիշխում: Իսկ այս օրենքը, ինչպես մենք արդեն ասացինք, զործողութեան մեջ է մտնում մեր Թագավորութեան սկզբնավորութիւնից. այդ ամբողջ՝ անցած ու այնուհետև հետագա ժամանակվա համար պետք է խստիվ ղեկավարվել նրանով և բոլորը պետք է այն կատարեն:

Dat. XVII. K. Aug. Bilisario V. C. Cons.

Const. 47=Nov. 21. «Նրա մասին, որպեսզի հայերը ամենուր հետեան հռոմեական օրենքներին»:

Նույն կայսրը Հայաստանի ենթահյուպատոս գերաշնորհ Ակակիոսին:

Ներածութիւն.

Յանկանալով, որ Հայկական երկիրը լիովին բարեկարգվի և ոչ մի բանով չտարբերվի մեր պետութեան մնացած մասից, մենք մտցրինք հռոմեական հաստատութիւններ, վերացնելով նրանց նախկին անունները, սովորեցրինք նրան օգտվել հռոմեական կարգերով և կարգադրեցինք, որպեսզի նրանց մոտ ուրիշ օրենքներ չլինեն, բացի այն, որոնք ընդունված են հռոմեացիների մոտ:

Մենք գտանք նաև անհրաժեշտ ուղղել նրանց մոտ սույն օրենքով այն վատ շարիքը, որպեսզի ժառանգութիւնները՝ ծնողներից, եղբայրներից և այլ տոհմայիններից չպատկանեն միայն տղամարդկանց և ոչ երեք կանանց. այլև, որպեսզի կանայք առանց օժիտի մարդու չլինան և չդնվեն այն անձանց կողմից, որոնք ցանկանում են նրանց հետ կենակցել:

Մինչ այժմ այդ նրանց մոտ տեղի է ունենում, իբրև լնդ-որ բան՝ խիստ բարբարոսական. և ոչ միայն ընդունված է նրանց մոտ այդ ամբողջ վայրենութիւնը, այլև ուրիշ ժողովուրդներ ևս անպատկառ են վերաբերվում դեպի բնութիւնը և ստորացնում են կանացի սեռը, կարծես նա աստծուց չի ստեղծված և չի ծառայում սեռունդի հարատեւմանը, այլ իբրև լնդ-որ կարևորութիւն չունեցող և արհամարհված բան մատնված է պատվազուրկ դրութեան:

Գլուխ I.

Ուստի և մենք հրամայում ենք սույն սրբազան օրենքի զորութեամբ, որպեսզի հայերի մոտ ևս ուժ ունենա նույնը, ինչ որ ընդունված է մեզանում կանանց ժառանգութիւն ստանալու վերաբերմամբ, և որպեսզի ոչ մի տարբերութիւն չլինի տղամարդկանց

և կանանց սեռի մեջ: Ինչպես սահմանված է մեր օրենքներում և ինչ ձևով որ ժառանգում են ծնողներին, այսինքն՝ հորը և մորը, պապին ու տատին և այլն, կամ վայրընթաց գծով, այսինքն՝ որդուն կամ աղջկանը, ինչպես որ նրանց ժառանգում են, նույնը պետք է լինի նաև հայերի մոտ. և ոչ մի բանում Հայաստանում իրավական չափերը չպետք է տարբերվեն հռոմեականից:

Որովհետև հայերը մտնում են մեր պետության կազմի մեջ, մյուս ժողովուրդների հետ ենթարկվում են մեզ և օգտվում են մեր բոլոր բարիքներից, ուստի և նրանց մոտ կանայք չպետք է դուրս մնան մեզ մոտ գոյություն ունեցող հավասարությունից: Բոլորի համար միանման պետք է պարտադիր լինեն մեր օրենքների նորմաները, ինչպես այն, որ ժողովված են հներից և անց են կացված մեր Ինստիտուցիաների և Դիգեստների մեջ, այնպես և այն, որոնք հրատարակված են նախկին կայսերական ու մեր օրենսդրությունների հիման վրա:

Գլուխ II.

Այսպես, ուրեմն, մենք հրամայում ենք, որպեսզի այդ բոլորը ուժ ունենա հավիտենականապես, սկսած ու ներառյալ ընթացիկ ինդիկտից, երբ հորինված է սույն օրենքը. իսկ մտնել ավելի հին օրենքների քննարկման մեջ և բարձրանալ դեպի հին ժամանակները, կտանի ավելի շուտ դեպի խառնաշփոթություն, քան դեպի օրինականություն: Բայց սույն 14-րդ ինդիկտի ժամանակից ներառյալ, և հետագա բոլոր ժամանակի համար, ինչպես մենք ասացինք, ժառանգումը պետք է լինի հավասար և այն ամենը, ինչ որ վերաբերում է ժառանգման բոլոր վիճելի գործերին, պետք է կատարվի միատեսակ՝ ինչպես կանանց վերաբերմամբ, այնպես էլ սղամաբդկանց: Իսկ այն ամենը, որ կատարվել է առաջներում, թույլ ենք տալիս թողնել նախկին դրույթյան մեջ՝ գործը վերաբերում է տոհմական սեփականություններին, թե մյուսներին. իսկ կանացի սեռի անձինք չափեր է մասնակցեն արդեն բաժանված տոհմային հողերին կամ ժառանգումներին, որոնք տեղի են ունեցել մինչև 13-րդ ինդիկտը ներառյալ: Իսկ հիշված ժամկետին, այսինքն՝ 14-րդ ինդիկտից սկսած, մենք հրամայում ենք, որպեսզի ուժ ունենան մեր օրենսդրությունները:

Վերջաբան.

Մեր որոշումները, որ հայտարարված են սույն սրբազան օրենքով, թող քո մեծաշքությունը և նոքա, որոնք քեզանից հետո վա-

րելու են այդ պաշտոնը, աշխատեն կատարել հավերժ ժամանակ-
ներում:

Dat. XV. K. Apr. Const. post. Bilisaril V. C. consul.

Մեջ բերված օրենսդրություններից երկրորդը հասցեագրված է Ակակիրոս փոխհյուպատոսին և թվարկված է 536-րդ տարվա մարտի 18 թվով, իսկ առաջինը շունի վերնագիր, ուստի և չի կարելի որոշել, թե ո՞ւմ է ուղղված եղել: Նրա երևա՞ն գալը, իհարկե, պետք է տանել մինչև 536 թվի նոր օրենքի հրատարակումը, ինչպես այդ երևում է վերջինի բովանդակությունից: Նրա հրատարակության տարին ձեռագրերից մեկում ցույց է տրված 535 թվի հուլիսի 23-ը:

Այդ երկու վավերագրերի բովանդակությունից, ինչպես և Հայաստանում շորս կառավարիչներ սահմանելու նոր օրենքից որոշակի երևում է, որ Կայսերական հռոմեական օրենսդրության ուժի տարածումը Կայսերական Հայաստանի վերա վերաբերում է Յուստինիանոսի ժամանակին: Իսկ մինչ այդ, ակներևորեն պետք է գործադրություն ունենային սովորական տեղական օրենքի նորմաները: Ինչպես պնդում է կայսրը, համաձայն հայերի ազիաֆետ սովորության՝ կանայք չէին մասնակցում ժառանգման: Այդ հաղորդագրու-
թյունը շատ հետաքրքրական է:

Ժառանգական օրենքի պատմության զարգացման մեջ նույն երևույթը, ինչպես հայտնի է, հանդիպում է հին դարաշրջաններում նաև ուրիշ ժողովուրդների մոտ: Օրինակ՝ հայտնի է, որ հին հույների մոտ ab intestato ժառանգման դեպքերում տղամարդկանց գերադասություն էր տրվում կանանց հանդեպ: Նմանապես հին ռուսական օրենքը ևս, ինչպես և հին գերմանականը, ժառանգման օրենքի մեջ տղամարդկանց ու կանանց չէր հավասարեցնում: Այսպես, Բուրգունդական իրավունքը թույլ էր տալիս աղջիկներին ժառանգելու, եթե միայն տղաներ չկային: «Ռուսկայա պրավդա» [«Русская Правда»] գրքի 89-րդ հոդվածում գրված է՝ «Եթե տանը լինի քույր, նրան ժառանգություն չի հասնում, այլ նրան պետք է տան մարդու» [Аже будет сестра в дому то той задница не имати, но отда-
дять ю за мужь братия, како си могут]։

Վլադիմիրսկի-Բուդանովի¹ կարծիքով՝ «որդիներ լինելու դեպքում, աղջիկներին ժառանգությունից բացառելը սլավոնական և գերմանական իրավունքի ընդհանուր սկզբունքն է», ընդ որում, ժառանգման հատուկ կարգով աղջիկները չեն ժառանգում նաև այն

¹ М. Ф. Владимирский-Буданов. Обзор истории русского права, изд. пятое, 1907, стр. 494:

դեպքում, եթե որդիներ չեն մնացել, ինչպես «Ռուսկայա պրավդա»-ի [«Русская Правда»] համաձայն—«ամեռ»-ների դասում: Գիտնականները այդ կարգը համարում են ժառանգման իրավունքի նախնադարյան ընտանեկան հիմունքը, ըստ որում ընտանիքը իբրև ամբողջություն է հանդիսանում իր ունեցվածքի սեփականատերը:

Հասկանալի է թե ինչու կանայք զրկված են եղել այդ ունեցվածքին տիրանալու իրավունքից, որովհետև նրանց կապը ընտանիքի հետ, որտեղ նոքա ծնվել են, եղել է անկայուն:

Վերոհիշյալ օրենսդրությունների բովանդակությունից չի երևում, թե արդյոք հայերի մոտ աղջիկները եղել են զրկված ժառանգական իրավունքներից եղբայրների բացակայության դեպքում ևս, թե միայն նրանց առկայության դեպքում: Յուստինիանոսի հաղորդագրությունը, որ «ծնողներին ժառանգում են տղամարդիկ, այլ ոչ կանայք», ցույց է տալիս, որ կարծես կանացի սեռի անձինք բոլորովին զրկված են եղել ժառանգական իրավունքից՝ ո՛չ միայն եղբայրներ ունենալու, այլև չունենալու դեպքում:

Ժառանգական իրավունքի զարգացման սկզբնական փուլերը ուսումնասիրելիս, շատ հետաքրքիր է, ի միջի այլոց, կողմնակի ազգականների ժառանգման խնդիրը: Կողմնակի ազգականներից հետո, նաև տոհմի մնացած անդամների ժառանգելու փաստը պատմական տեսակետից ներկայացնում է, անշուշտ, զգալի հաջողություն այն դրության համեմատությամբ, որպիսին դիտվում է ժառանգական իրավունքի զարգացման ցածր աստիճաններում:

Օրինակ, հայտնի է, որ հնագույն հռոմեական իրավունքով՝ ժառանգել են միայն sui, իսկ ազնատները և gentiles թույլ են տրվել ավելի ուշ՝ նմանապես հին ռուսական իրավունքով, համաձայն «Ռուսկայա պրավդա» կանոնագրերի, կողմնակի ազգականների ժառանգումը թույլատրված չի եղել, առավել ևս հեռու ազգականությունը, և որդիներ չունենալու դեպքում, ժառանգությունը դառնում էր տիրազուրկ և անցնում էր իշխանին:

Հետզհետե ժառանգման իրավունք ունեցող ազգականների շրջանակի ընդարձակումը, որը փաստ է, հանդիսանում է, իբրև արդյունք, ժառանգական իրավունքի պատմական զարգացման:

Այդ կապակցությամբ, չափազանց հետաքրքրական է, որ վերոհիշյալ 21-րդ նոր օրենքում կա պարզ ցուցմունք հայերի մոտ կողմնակի գծով ժառանգելու իրավունքի գոյության մասին հետևյալ հետևածում:

«մենք կարևոր գտանք նաև սույն օրենքով ուղղել նրանց մոտ այն վատ շարիքը, որպեսզի ծնողներից, եղբայրներից և

այլ տոհմայիններից մնացող ժառանգությունները շատկանին միայն տղամարդկանց և երբեք կանանց»:

Ինչ կարգով էին կոշվում կողմնակիները ժառանգման՝ վերադաս ժառանգներից առաջ, նրանց հետ միասին, թե՛ նրանցից հետո, դրա մասին ոչինչ չգիտենք: Մեջ բերված 21-րդ նոր օրենքի հատվածից երևում է միայն, որ կողմնակիներին և մյուս ազգակիցներին թույլ էր տրվում մասնակցել ժառանգությանը: Սակայն, հայերի մոտ ժառանգական իրավունքի զարգացման առանձնահատուկ գիծը եղել է այն, որ ժառանգողների շրջանի ընդարձակումը նրանց մոտ տարածվում էր միայն արական սեռի անձանց վրա, և ոչ կանանց: 21-րդ նոր օրենքում պարզ ցույց է տրված, որ կանայք հայերի մոտ չէին ստանում ժառանգություն՝ ոչ միայն ծնողներից հետո, այլև եղբայրներից ու մնացած տոհմայիններից հետո:

Յուստինիանոսի հաղորդագրությունից երևում է, բացի այդ, որ հայերի մոտ կանայք ոչ միայն զրկված են եղել ժառանգական իրավունքից, այլև մարդու էին գնում առանց օժիտի և փեսացուները նրանց գնում էին: Ուստի Յուստինիանոսը վերոհիշյալ 21-րդ նոր օրենքում նշում է այդ սովորության անթույլատրելիությունը և հրամայում է.

«որպեսզի կանայք առանց օժիտի մարդու չգնան և չգնվեն այն անձանց կողմից, որոնք տգտում են նրանց հետ կենակցել»:

Կանանց գնումը, ինչպես հայտնի է, շատ հին ծագում ունեցող սովորույթ է: Նա նախ և առաջ հանդիսանում է առևանգման հակադարձ կողմը և պետք է երևան գար փաստական առևանգման եռուզեռի ժամանակ: Տուժող կողմին նյութական հատուցում տալը լինելու էր իբրև միջոց առևանգվածի ծնողների հետ հաշտեցնելու համար:

Հին հռոմեական իրավունքի մեջ ամուսնության այդ ձևը, որ հայտնի էր *coemptio* անվան տակ, և որը կատարվում էր իբրև *imaginarie venditio*, ներկայացնում է իրենից նախկինում փաստորեն գնելու վերապրուկը: Ռուսական սկզբնական տարեգրության մեջ [начальная летопись] Վլադիմիր Սուրբի մասին ասված է հետևյալը՝ «вдасть за вено грекам Корсунь царице дела»: Ամուսնության կարգը՝ հարսնացուներին գնելու միջոցով եղել է նաև հին-գերմանական իրավունքում, այնտեղ ամուսինը կնոջ վրա իշխելու իրավունքը [Mundium] պետք է գներ այն անձնավորությունից, որին այդ իրավունքը պատկանում էր մինչև ամուսնությունը: Այդ նպատակով նա պետք է վճարեր կնոջ արժեքը:

Քրիստոնեութիւնը ընդունելուց հետո, թեև հայերի մոտ մտաւ ամուսնութեան ձևակերպման կարգը համաձայն եկեղեցական կանոնների, սակայն այդ կանոնները, ըստ երևույթին, չէին գործադրվում հայկական կյանքում իրենց ամբողջ խստութեամբ, և տեղական հին սովորութիւնները դուրս էին գալիս եկեղեցական որոշումներից ավելի ուժեղ։ Մխիթար Գոշի Դատաստանադրքում, որ կազմված է եղել 1184 թվին, կան երեք հոդվածներ, որտեղ սահմանված են խիստ պատիժներ կանանց առևանգողների և նրանց գործակիցների համար։

Մինչև Յուստինիանոսի ժամանակը Հայաստանի ամուսնական կարգի այդ առանձնահատկութիւնները, լոնականաբար, հոռմեայիների կողմից պետք է համարվեին զբարբարոսական։ Ուստի և Յուստինիանոս կայսրը ուղեց տարածել հայերի վրա հոռմեական իրավունքի դոտալ համակարգը, որը ստացավ իր վերջնական մշակումը հենց նրա օրով։ Իսկ ինչո՞ւմ էր կայանում կայսրութեան այդ դոտալ հաստատութիւնը (ինստիտուտը)։

Այդ հաստատութեան հիմունքները եղել են dos և donatio propter nuptias. Ընտանեկան կյանքի ծախքերը ապահովելու համար տղամարդը կնոջ կողմից ստանում էր օժիտ, որը և կոչվում էր հոռմեայիների մոտ dos, իսկ հույների մոտ ferne կամ proix։ Dos-ի հետ զուգահեռաբար տղամարդը իր կողմից տալիս էր ռամուսնական նվեր»—donatio propter nuptias, որը մինչև Յուստինիանոսը կոչվում էր donatio ante nuptias. Այդ նվերը իր շահով պետք է համապատասխան լիներ dos-ին և հատկացվում էր նմանապես ad onera matrimonii sublevanda։

21-րդ նոր օրենքի բովանդակութիւնից երևում է, որ կայսրը ուղղում էր այդ կարգերը մտցնել նաև հայկական երկրում։

Բայց ի՞նչպես կարելի կլիներ անցկացնել այդ բարեփոխութիւնը այն դեպքում, եթե իրենք բնակիչները անառարկելի կերպով ենթարկվելու լինեին տեղական հին իրավունքին, որը ամրապնդված և սրբագործված էր սովորութեան հարակցութեամբ։ 21-րդ նոր օրենքը, որը հասցեագրված էր Ակակիոս փոխհյուպատոսին, օժիտ տալու ստիպման պարտականութիւնը դնում էր, ըստ երևույթին, կայսերական իշխանութիւնների վրա։ Եվ այդ խորթ չի եղել կայսերական օրենսդրութեանը։ Դիգեստների մեջ եղել է ցուցմունք, որ իշխանութիւնները կարող էին պարտադրել հորը սահմանել օժիտ և այդ դեպքում որոշում էին dos-ի շահը։

Վերևում քննութեան առնելով Յուստինիանոսի օրենսդրութիւններին վերաբերող հաղորդագրութիւնները հայերի ազիաֆետ ժա-

ռանդման մասին, մենք անուշադիր էինք թողել ժառանգական իրավունքի էական խնդիրներից մեկը, այն է՝ ժառանգում ըստ կտակի: Արդյոք եղե՞լ է հայտնի ժառանգման այդ ձևը Հայաստանում նոր օրենքների հրատարակման պահին:

Հին հայկական պատմիչների հաղորդագրություններից երևում է, որ կտակները այդ դարաշրջանում խորթ չեն եղել հին հայերին: Ղազար Փարպեցու¹ հաղորդագրության համաձայն Սահակ կաթողիկոսը [մեռել է 439 թվի սեպտեմբերի 7-ին], որդի չունենալու պատճառով, իր բոլոր ունեցվածքը թողել է հավերժապես, իբրև ժառանգություն, իր միակ աղջկանը՝ Մամիկոնյան իշխանուհուն և նրա սերունդներին: Կտակը աղջկա օգտին պատմիչը բացատրում է նրանով, որ «Սահակը չի ունեցել որդի»: Հետևաբար, ժառանգումը ըստ կտակի գոյություն է ունեցել հայերի մոտ Յուստինիանոսի նոր օրենքների հրատարակումից շատ առաջ:

Ավելի քան հավանական է, որ Հայաստանում ժառանգման այդ ձևի երևան գալը պետք է վերագրել որոշ չափով քրիստոնեական հոգևորականության ազդեցությանը: Հայերի քրիստոնեության ընդունումը IV դարի սկզբում և քրիստոնեական եկեղեցու իրավական գաղափարների փոխադրումը նրանց մոտ, հավանորեն, պետք է ունենային իրենց ազդեցությունը տեղական իրավունքի վրա, գլխավորապես ընտանեկան և ժառանգական իրավունքի բնագավառում, որովհետև ժառանգման գործերը, սերտ կապ ունենալով ընտանիքի հետ, ենթակա էին հոգևորականության իրավասությանը: Այսպիսով, ըստ երևույթին, կտակի գաղափարը առաջ քաշեց եկեղեցին և այդ միջոցով մտցրեց գույքի փոխանցման նոր կարգը:

Հայերի մոտ կտակային կարգադրությունների գոյության մասին, բացի հին հայկական պատմիչների տվյալներից, մատնանշում է նաև Յուստինիանոսի վերոհիշյալ հրովարտակը: I հրովարտակի § 2 գլխում կարդում ենք.

ժխկ այն դեպքում, եթե գտնվեն անձինք, որոնք իրենց աղջիկներին, որոնք թեև չեն կանչվում սովորական նրանց մոտ ագիաֆետ ժառանգմանը, այնուամենայնիվ գրանցել են իբրև ժառանգ, ապա ուրեմն նոքա ևս և նրանցից ծնված երեխաները պետք է մասնակցեն տոհմային գույքի ժառանգմանը»:

Այդ հաղորդագրությունը, ինչպես տեսնում ենք, ոչ մի կապած չի թողնում նրանում, որ հայերի համար կտակները խորթ չեն եղել:

¹ Տե՛ս դիրք I, գլ. 18 էջ 37 [Տփիս 1904]:

Լստ որում՝ «գրանցել են իբրև ժառանգ» խոսքերը վկայում են, որ այդ կտակները եղել են գրավոր:

Աղջիկների նշանակումը իբրև ժառանգ, հակառակ ագիաֆետ սովորության, իրավունք է տալիս սահմանել կտակարարի կամքի որոշ կամայականություն: Կտակները, որոնց մասին ակնարկում է Յուստինիանոսը, ըստ երևույթին, չեն եղել գույքի բաշխում օրինական ժառանգների մեջ, այլ նպատակ են ունեցել փոխել ժառանգման սովորական կարգը: Ուստի և ավելի քան հավանական է, որ հայերի մոտ կտակով ժառանգելը, կարող էր էականապես տարբերվել ժառանգման սովորական կարգից:

Սակայն հարց է ծագում, թե ինչու՞ հիշված կտակները աղջիկների օգտին չէին բավարարում կայսրին: Կարծում ենք, որ այդ խնդրի լուծումը դժվարություն չի ներկայացնում: Յուստինիանոսի հրամանը աղջիկների մասնակցության մասին, որոնք նշանակված են եղել իբրև ժառանգ, նաև տոհմային կալվածքների ժառանգմանը, կարելի է բացատրել միայն նրանով, որ տոհմային հողերի նկատմամբ հայերի ագիաֆետ սովորությամբ մնում էր անխախտ և կտակարարի կամքը չէր կարող խախտել այն նույնիսկ իրենց աղջիկների շահերի համար: Կտակարարի ազատությունը, ինչպես նրանում է, չէր տարածվում տոհմային սեփականությունների վրա, որոնք կարող էին անցնել միայն ժառանգման ագիաֆետ կարգով:

Ուստի մեզ թվում է, որ Ադոնցը¹ միանգամայն արդարացի է, երբ պնդում է, որ ֆեոդալական-նախարարական Հայաստանում տոհմային հողերը անցնում էին ազնատային գծով, հանելով կանանց ժառանգմանը մասնակցելու գծից: Ինչ որ նման բան մենք հանդիպում ենք գերմանական ցեղերի մոտ:

Հայերի մոտ ագիաֆետ ժառանգման սովորության հետ զուգընթաց կտակով ժառանգելու գոյության խնդիրը ներկայացնում է մեծ հետաքրքրություն, որովհետև կտակային կարգադրությունների սզատությունը թեև լրիվ չի եղել, սակայն ցույց է տալիս ընտանիքի հոր իրավունքների բարձրացումը: Յուստինիանոսի նոր օրենքները, ըստ երևույթին, հանդիպում են հայերին անձնական իրավունքների անցման դրության մեջ:

XII դարում, Մխիթար Գոշի Դատաստանագրքի երևան գալու պահին, կտակների ազատության լարգացման ընթացքը մենք գրանում ենք ավարտված: Այդ ժամանակին ընտանիքի մեծի անձնավորությունը այնքան էր ուժեղացել, որ նա կարող էր նշանակել ժառանգ նույնիսկ կողմնակի մարդու:

¹ Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, էջ 191:

Յուստինիանոսի նոր օրենքների մի քանի տվյալների հիման վրա մենք աշխատեցինք հնարավոր չափով լուսաբանել ժառանգական կարգերը և ժառանգման բնույթը հայերի մոտ այդ կայսեր ժամանակ։ Սակայն մեզ մնում է պարզել նաև մեկ խիստ կարևոր խնդիր։ Ինչպես հիշատակված տվյալներից երևում է, Յուստինիանոս կայսրը ցանկանում էր տարածել կայսերական օրենսդրության ուժը հայերի վրա։ Սակայն հարց է ծագում, թե ինչու նա, կովկասյան հայերի «բարբարոսական» սովորույթների դեմ, իր գլխավոր ուշադրությունը դարձրել էր հատկապես ժառանգական իրավունքի վրա և հրատարակել էր այդ խնդրին վերաբերող առանձնապես նոր օրենքներ։

Ն. Ադոնցը վերև հիշված «Армения в эпоху Юстиниана» իր աշխատության մեջ մանրամասն կանգ է առնում այդ խնդրի վրա և տալիս է շատ հետաքրքիր բացատրություն։ Ադոնցի կարծիքով, բերված երկու վավերագրերը, անշուշտ, վերաբերում են այն միջոցառումներին, որոնք ուղղված են ընդդեմ Հայաստանի ֆեոդալական կարգերի և ծառայում են իբրև բանալի Յուստինիանոսի բարենորոգումների աստառը բացելու համար¹։

Մենք կարծում ենք, որ հիշված օրենսդրությունների հրատարակման համար իբրև դրդապատճառ թեև կարող էին լինել մասամբ քաղաքական բնույթ ունեցող խորհրդածություններ, սակայն իբրև հիմք ծառայել են, գլխավորապես, միանգամայն այլ նկատառումներ։ Ժառանգության խնդրում հայուհիների իրավահավասարության մեծադղորդ պաշտպանությունը, որը կազմում է նոր օրենքների էությունը, ներշնչված է եղել մեր կարծիքով՝ հռոմեացիների կենսական շահերով, որոնք խառն ամուսնական կապի մեջ էին մտել հայուհիների հետ։

Հայկական երկիրը հետզհետե հռոմայականացնելու հետևանքով, որը սկսված է եղել դեռևս Յուստինիանոսի նախորդների ժամանակ, խառն ամուսնությունների քանակը Հայաստանում ալբիի ու ալբիի շատանում էր։ Դրան նպաստում էր նաև այն հանգամանքը, որ ազգագրական տեսակետից Արևմտյան Հայաստանի մեծագույն մասը բաղկացած էր խառն բնակչությունից։ Միաժամանակ այնտեղ էին գալիս կայսերական զորքեր և բազմաքանակ բարձր պաշտոնեություն։

Հաճախակի տեղի ունեցող խառն ամուսնությունների ժամանակ հայ հարսնացուները, համաձայն տեղական սովորույթների, ոչ միայն չէին ստանում ժառանգությունից որոշ մաս, այլև մարդու

¹ «Армения в эпоху Юстиниана», էջ 196.

էին տրվում առանց պատշաճ օժիտի: Մինչդեռ հոռմեռահիւները, որոնք ամուսնանում էին հայ ծագում ունեցող անձանց հետ, կարող էին ստանալ և՛ օժիտ, և՛ ժառանգութիւն:

Անշուշտ, հենց այդ էր վրդովեցրել հոռմեռացիներին: Բայց չյուրթական վնասից, որ համեմատ էր իրենց, առաջ էր գալիս տեղական իրավական նորմաների բխում կայսերական օրենսդրութեան իրավական գաղափարների հետ: Այդ պարագայն տւնի, իհարկե, զուտ իրավական բնույթ, և մենք համարում ենք այդ մերձավոր ու հավանական առիթ՝ քննարկվող նոր օրենքները հրատարակելու համար:

Պետք է հատկապես նշել, որ հայերի ժառանգական կարգերի անպատեհութիւնը պետք է ուրիշներից ավելի սուր կերպով զգալիս հոռմեական բարձր պաշտոնեութեան և ազնվականութեան անձինք, որոնք ամուսնութեամբ կապված էին հայուհիների հետ: Հայերի ազդեցիկ սովորութիւնը նրանց զրկում էր զգալի հարստութիւններից, որոնց նկատմամբ նոքա կարող էին ունենալ որոշ իրավունքներ, եթէ Հայաստանում տիրապետող լինէին կայսերական ժառանգական սկզբունքները: Օգտվելով արքունիքում ունեցած իրենց ազդեցութիւնից, կարծում ենք, որ հենց նոքա կարող էին դրդել կայսերը հրատարակելու վերոհիշյալ հրովարտակը՝ «հայերի ժառանգման կարգի մասին»:

Այդ ենթադրութիւնը, իմ կարծիքով, հաստատվում է նրանով, որ 535 թվի հրովարտակը պետք է ուժ տւնենար տշ թե հրատարակման օրից, այլ Յուստինիանոսի գահը բարձրանալու ժամկետից [527 թվից], այսինքն՝ նրա գործողութիւնը պետք է տարածվեր հրատարակման ժամանակին նախորդող իրողութիւններին:

Այդ օրենքի ներգործութեան հետագարձ ուժը պարզորոշ ցույց է տալիս, որ օրենսդիրը տվյալ դեպքում ղեկավարվել է որոշ անձնական նկատառումներով: Եվ մեզ միանգամայն հավանական է թվում, որ այդ օրենքը ծառայել է իբրեւ գործիք շահագրգռված մարդկանց անձնական նպատակների համար: Եթէ հրովարտակի ազդեցութիւնը տարածվեր միայն հետագա ժամանակների վրա, այդ դեպքում դժգոհ ու շրջանցված հոռմեացիները, որոնց ազդեցութեամբ հրատարակված է եղել հրովարտակը, ոչինչ չէին շահի, որովհետեւ նոքա արդեն ամուսնացած էին և նրանց կանայք արդեն զրկված են եղել ինչպես օժիտից, այնպես էլ ժառանգութիւնից:

Սակայն, նոր օրենքի կիրառումը անցած տարիների նկատմամբ անպայման պետք է առաջացնէին բարդութիւններ և խառնաշփոթութիւն. բացի այդ, հայերի աչքում այդ օրենքը պետք է հրեար

ավելի քան անիրավացի և հեշտությամբ կարող էր խախտել ամեն մի հարգանք դեպի իրենց մոտ ներմուծվող հոռմեական իրավունքը։
Կայսրը, ըստ երևույթին, շուտով հասկացավ իր սխալը և 21-րդ նոր օրենքում նոր կարգադրություն արեց, սահմանափակելով օրենքի գործադրության ժամկետը 14-րդ ինդիկտի սկզբից [535 թվի սեպտեմբերից]։

Թե ի՞նչ վիճակ են ունեցել Յուստինիանոսի բարեփոխությունները կայսերական Հայաստանում, ունեցե՞լ են արդյոք նրա անցկացրած միջոցառումները գործադրություն անվերադարձ կերպով, դրա մասին, դժբախտաբար, պատմական հիշատակարանները չեն տալիս անհրաժեշտ տեղեկություններ։ Մենք չենք կարծում, որ կարելի լիներ արագությամբ և հեշտությամբ բարեփոխել հայկական կյանքի առանձնահատուկ կենցաղը։ Բռնությամբ պարտադրելով հայերին ընդունել հոռմեական իրավունքի գաղափարները, Յուստինիանոսը չէր նախատեսել, իհարկե, որ ամեն մի ժողովրդի իրավունքը սերտ կախում ունի այդ ժողովրդի սոցիալական և տնտեսական կյանքի պայմաններից։

Հոռմեական ժառանգական իրավունքի հիմքերը արդյունք էին հոտիեացիների բազմադարյան պատմական զարգացման։ Տոգորված լինելով անհատականության սկզբունքներով, այդ հիմունքները, իհարկե, չէին կարող համապատասխան լինել հայկական կյանքի պայմաններին։

Հետաքրքիր է, որ հին հայկական օրենքի ժողովածուները, որ կազմված են եղել 12 և 13-րդ դարերում, ցույց են տալիս, որ հայերի մոտ ամենուրեք տիրապետող չէ եղել ժառանգման ընտանեկան սկզբունքը արյունակցական սկզբունքի փոխարեն, որը հատուկ է Յուստինիանոսի իրավունքի նորմաներին։ Բացի մի քանի շեղումներից, ժառանգման բնույթը նրանց մոտ մնացել է նույնը, որը նշված է եղել Յուստինիանոսի նոր օրենքներում։

Ճիշտ է որ հոռմեական իրավունքը ունեցել է ազդեցություն հայերի ժառանգական իրավունքի մի քանի երկրորդական երևույթների վրա, սակայն ժառանգման հիմնական ընտանեկան սկզբունքը նրանց մոտ մնացել էր համարյա անդրդվելի։

Պետք է նաև նկատի ունենալ, որ հայ հոգեւորականությունը հայերի հին ազիաֆետ սովորության նմանություն էր գտնում Մովսեսյան օրենսդրության մեջ և իր կողմից պաշտպանում էր այդ կաթոլիկեզ հեղինակությամբ։

ՀԵՐԱԿԼ ԿԱՑՍԵՐ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՈՒՂԻՆԵՐԸ¹ (ՄԱՐՇՐՈՒՏՆԵՐԸ)

Հերակլ կայսեր պարսկական արշավանքների ընթացողիները դեռևս վերջնականապես որոշված չեն պատմական գրականության մեջ: Բացատրվում է այդ ոչ թե սկզբնաղբյուրների աղքատիկ կամ անորոշ հաղորդագրությունների պատճառով, այլ բացառապես նրանով, որ Հերակլի դարաշրջանի իրադարձությունները ուսումնասիրող գիտնականները հնարավորություն չեն ունեցել լուսաբանել այդ խնդիրը, որովհետև Հայաստանի ռազմական ճանապարհների ուղղությունները բավարար չափով պարզաբանված չեն եղել:

Ինչպես հայտնի է, հնագույն մագիստրալ ճանապարհների ուղղությունները, որ Փոքր Ասիայից և Սև ծովի արևելյան երկրամասերից Հայաստանի վրայով գնացել են Պարսկաստան, պարզվել են նոր ժամանակներում: Այդ ճանապարհները իրենց վրա տեղադրված կայարաններով, որ մանրամասն նկարագրված են հռոմեական [մեր թվարկության] IV դարի համաշխարհային «Tabula Peutingeriana» կոչվող քարտեզում, քննարկված և համարյա ամբողջությամբ մեկնաբանված են վերջին տասնամյակների պատմականաշխարհագրական աշխատություններում²: Որոշ տեղեկություններ

¹ Տե՛ս «Византийский временник» том III. Москва. 1950 г., էջ 133 — 153:

² Տե՛ս Markwart, Skizzen zur historischen Topographie und Geschichte von Kaukasien, Wien, 1928, նաև իմ աշխատությունները՝ «О торговле в городах Армении», Երևան, 1930, 101—124. Հայաստանի հին ճանապարհները—Գիտության և Արվեստի տեղեկագիր, Երևան, 1931, № 5, էջ 65 — 69. Մանր հնագիտություններ, Երևան, 1932, էջ 3—21. Հայաստանի դիվանագիտականաշխարհները ըստ «Tabula Peutingeriana», Երևան, 1936, էջ 5—270:

պատմական Հայաստանի հիմնական ճանապարհների մասին կան նաև արաբական, հայկական և իտալական IX—X և XIV դարերի ճանապարհացույցներում: Այդ ճանապարհացույցներին վերաբերող հետազոտություն տրված է «О торговле и городах Армении» իմ աշխատության երկրորդ հրատարակության մեջ:

Հայաստանի գլխավոր ճանապարհների մասին աղբյուրների այդ նոր տվյալները հնարավորություն են տալիս ուսումնասիրել: XII դարի սկզբներում տեղի ունեցած բյուզանդական-պարսկական կռիվների աշխարհագրական իրադրությունը և բավականաչափ ճշտությամբ որոշել Հերակլ կայսեր պարսկական ռազմերթի ընթացությունները:

* * *

VI դարի վերջին տարիները և VII դարի սկիզբը եղել են, ինչպես հայտնի է, Բյուզանդիայի և Պարսկաստանի մեջ տեղի ունեցած ամենասուր կռիվների ժամանակը: 602 թվին բյուզանդական զահր բարձրացավ Փոկասը, և նրա հրամանով մահապատժի ենթարկվեցին Մավրիկիոս կայսրը և նրա որդիները: Այդ սպանությունները պարսից խոսքով թագավորի համար, որը պարտավոր էր Մավրիկիոսին իր թագավորության վերականգնման համար, ծառայեցին իբրև առիթ համառ կռիվներ վարելու Բյուզանդիայի դեմ, որ տեղեց մոտավորապես քառորդ դար: 604—605 թվերին պարսիկները հարձակվեցին և վերցրին սահմանապահ հզոր Դարա ամրոցը: 606 թվին նրանք հաղթական երթով ներխուժեցին Բյուզանդական Հայաստան, Միջագետք և Ասորիք: Խոսքովի Շահր-Վարազ ղորավարը դրավեց մի քանի տարում Նդեսիան, Սևտիոքը, Դամասկոսը և Ասորիքի մյուս քաղաքները: 614 թվին նա պաշարեց և վերցրեց Երուսաղեմը: Քաղաքը անխնա քարուքանդ արավ, իսկ բնակիչներին կոտորեց կամ գաղթեցրեց իրան: Քրիստոնյաների սրբություն— «նաչի փայտը», որի վրա, ըստ ավանդության, խաչված է եղել Քրիստոսը, տղարկեց Պարսկաստան: Երուսաղեմը վերցնելուց մի քանի տարի հետո Շահր-Վարազը դրավեց Աղեքսանդրիան և նվաճեց Եգիպտոսը [619 թ.]: Խոսքովի մյուս ղորավար Շահնը ներս խուժեց Կիլիկիա [615 թ.], գրավեց Կեսառիան և, առաջ գնալով դեպի արևմուտք, հասավ Բոսֆորին ու դրավեց Քաղկեդոնը:

Սակայն կարճ ժամանակից հետո պարսիկներին բախտը փոխվեց: Մահացու վտանգը, որ կախված էր կայսրության վրա, ստիպեց

բոլորին համախմբվել կառավարության շուրջը: Հերակլ կայսրը անձամբ իր վրա վերցրեց գլխավոր հրամանատարի պարտականությունները և 622 թվի ապրիլի 5-ին, Զատիկի երկրորդ օրը գնաց Փոքր Ասիա և սկսեց կռիվը պարսիկների դեմ:

Մեկնելով Կոնստանդնուպոլսից, Հերակլը ծովային ճանապարհով ժամանեց Պիլա՝ նավահանգիստը, որը Գիրոնը, Նյուրեկեն և ուրիշները սխալմամբ նույնացրել են Կիլիկիայի Իսոսին²: Իսկ իսկապես, ինչպես այժմ պարզված է, Թեոֆանի մոտ հիշված Պիլա նավահանգիստը գտնվել է Պրոպոնդիտայի Աստականի ծովածոցի ափին, Նիկոմեդիայի հարավում:

Ժամանելով Փոքր Ասիա, համարյա 622 թվի ամբողջ ընթացքում նա զբաղված է եղել իր զորաբանակի ուսուցմամբ և պատրաստությամբ առաջիկա արշավանքի համար դեպի Պարսկաստանի խորքը: Առաջ շարժվելով արևմուտքից դեպի արևելք, կայսերական զորքերը մտան Կապադովիա, որտեղ մի քանի հաջող ընդհարումներ ունեցան Շահ-Վարազի զորքերի հետ: Իսկ հետո, հանգստանալով Պոնտոսի ձմեռային բնակարաններում, նրանք Հերակլի առաջնորդությամբ հանկարծակի առաջ շարժվեցին Հայաստանի վրայով դեպի Ատրպատական [623 թվին]:

Հերակլի այդ առաջին պատժիչ արշավանքի մասին պարսիկների դեմ բյուզանդական աղբյուրները ցուցմունքներ համարյա չեն տալիս: Այդ ուղեգծի մասին կան հաղորդագրություններ հայկական աղբյուրներում՝ Սեբեոսի, Մովսես Կաղանկատվացու և Թովմա Արծրունու մոտ: Այդ հեղինակների վկայություները, որ կարոտ են բացատրության, ավելորդ չեմ համարում բերել ամբողջությամբ, ընդգծելով այն տեղերը, որոնք վերաբերում են Հերակլի ընթացություն:

1. Սեբեոս. գլ. ԻԶ, Թիֆլիս, 1912 թ., էջ 147.

«Զուհաց գնաց Երակլոս ՃԻ հաղարավ, և երթեալ ի դուռն թագաւորին պարսից. և նսնապարհ կալեալ ընդ կողմանս նիսիսոյ՝ ել դէպ ուլիղ ի Կաբնոյ քաղաք, և նստեալ ի Դուին Այրարատեան՝ անբէ զնա և զնախնաւան:

Նւ դիմեալ ի Դանձալ Ատրպատականի, կործանէ և զԲագինս Հրաթին մեծի՝ որում Վըշնասպն կոչէին»:

II. Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, գլ. Ժ, էջ 147—149, Թիֆլիս, 1913 թ. «Նւ դուռն

¹ Տե՛ս Theoph. A. M. (աշխարհի ստեղծագործությունից) 6113.

² Nöldeke, Aufsätze zur persischen Geschichte, Leipzig, 1887, S. 126:

պալատանն թողեալ ի ձեռս որդւոյն իւրոյ՝ թագ կապեալ նմա նստուցանէր փոխանակ իւր յաթոռ թագաւորութեան։ Ոչ հարկանէր ընդդեմ զօրացն Պարսից, որք պատեալ պաշարեալ ի հնազանդութեան ունէին զաշխարհս և զքաղաքս նորա, ոչ անցանէր մօտ առ նորօք և ոչ գրգռէր զնոսա ի մարտ պատերազմի։ այլ թողեալ զնոսա անդէն յերկրի իւրում՝ եկն ել ընդ ծով ճանապարհն կազմեալ ընդ աշխարհն Եգիպտոց, գայ ընդ Հայս և անցանէ ընդ գետն Երասխ, և խորհէր հանապատրաստի ունել զմեծ թագաւորն Խոսրով։Իսկ կայսրն մեծ Հերակլիոս իբրև ետես եթէ խոյս նո յերեսաց նորա թագաւորն պարսից, դադարեաց ի պնդելոյ զհետ նորա. և ասպատակ սփռեալ զԵգիպտոսն Առաքատականու մինչև ցտեղին՝ անուանեալ Գայշավան, տեղի ամրոցաց շերմութեան ընտրեալ յառողջութիւն հովասնութեան թագաւորացն Պարսից՝ որ է ի սահմանս Մարաց աշխարհին, աւերէր, քանդէր, դերէր զերկիրն ամենայն։

III. Թովմա Արծրունի, Պատմութիւն տառն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 159, գլ. Գ. «Եւ Հայրակղի ժողովեալ զամենայն արևելեայս իբրև Ճիմի դիմէ ի վերայ Խոսրովայ։ Եւ ճանապարհ արարեալ ընդ կողմն հիւսիսոյ՝ ել դէպուղի ի Կարնոյ քաղաք և անցանէ ի Շիրակ, և հասեալ ի Դուին՝ աւերէ զնա և զնախնաւան և զմումի, և դիմեալ ի Գանձակն Առաքատականի՝ բռնէ զնա, աւերէ զԱնիւղան և զՄայ. կործանէ զբազին Հրատին մեծի, որում Վշնապն կոչեն»։

Պետք է նշել, որ Մովսես Կաղանկատվացու ասածին հարում է մոտավորապես Եվտիքիոս պատրիարքը (X դ.), որը ցույց է տալիս Հերակլի առաջին արշավանքի ճանապարհը Կոստանդնուպոլսից դեպի Տրապիզոն¹։ Սակայն այդ ժողովային ճանապարհի դեմ բերված են լուրջ առարկություններ Գերլանդի հոգվածում, որ տպված է Byzantinische Zeitschrift² ժուռնալում։ Եվ իսկապես այդ խնդրի ուշադիր քննությամբ դժվար չէ համոզվել, որ Մովսես Կաղանկատվացին իր հաղորդագրության մեջ նկարագրում է Հերակլի առաջին արշավանքի իրադարձությունները, բայց թյուրիմացությունամբ ցույց է տալիս երկրորդ արշավանքի ճանապարհը։


Վերոհիշյալ տվյալներից, անշուշտ, արժանի են ավելի մեծ ուշադրության Սեբեոսի և Թովմա Արծրունու վկայությունները։ Թով-

¹ St'as Eutychil Patriarche Alexandriac Annales, P. G. III

² Gerland, Die persischen Feldzüge des Kaisers Herakleios, Bz., III 1894, S. 345

Մա Արծրունու հաղորդագրության մեջ մենք ունենք քաղվածք նույն
Անբեռսից, սակայն ուրիշ, ավելի ընդարձակ օրինակից:

Համաձայն այդ հավաստի աղբյուրների, Հերակլ կայսեր առաջին պարսկական արշավանքի ընթացողին սահմանվում է բավականաչափ որոշակիություն: Այդ ընթացողին կարելի է ենթադրել Պոնտոսից և Փոքր Հայքից դեպի Թեոդոսուպոլիս [Կարին], այդտեղից



Քարտեզ 1.

այժմյան Սարիղամիշի վրայով և Վանանդ ու Շիրակ գավառներով
դեպի Դվին քաղաքը և ապա Նախիջևանի վրայով դեպի Գանձակ: Այդ
ճանապարհի առաջին մասը [մինչև այժմյան Քեփրիքեյ] որոշվում է
բավականաչափ ճշտությամբ Պետինգերյան քարտեզի ուղեգծով,
որը մանրամասն քննարկված և պարզված է իմ պատմական-աշ-
խարհագրական «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները»¹ աշ-
խատության մեջ: Այդ գծի վրա, ըստ Պետինգերյան քարտեզի, գրտ-
նըվում էին հետևյալ կայարանները՝² Satala 20 Salmalasso 20 Da-
rucinte 20 Aegea 15 Lucus Basaro 22 Sinara 15 Chalchdiara 12
Autisparate 15 Tharsidarate 20 Datamisa 10 Adconfluentes:

Ճանապարհը գնում էր իր-կել-կելիտ գետի վերին հոսանքի շրջ-

¹ Երևան, 1936, էջ 61—81. Համեմատե՛ք նաև իմ աշխատությունը «О торговле и городах Армении», էջ 116—120:

2 Կայարանական կետերի մեջ, թվանշաններով նշանակված են տարածու-
թյունները հոսմեյական մղոններով [1,4815 կիլոմետր]։

ջանից դեպի Եփրատ, և ապա այդ գետի աջ ափի երկարութեամբ դեպի Գաղտառիճ [Chalchdiara], որը գտնվում էր Եփրատի գետանցի մոտ, այժմյան Աշկալայից ոչ հեռու, և այդտեղից Կարին-Թեոդոսուպոլիս շրջանի ու այժմյան Հասան-Ղալայի և Քեփիրքեյի վրայով Բասեն-սու և Արաքս գետերի միախառնման մոտակա տեղը:

Բյուզանդական զորքի հետագա ճանապարհը, ինչպես երևում է Թովմա Արծրունու վկայութեանից, որովհետև է այժմյան Սարիղամիշի և Կարսի վրայով դեպի հին հայկական Շիրակի գավառը և այնտեղից — Դվին: Ուշագրավ է, որ հենց այդ ճանապարհով՝ Շիրակի, Վանանդի և Թեոդոսուպոլիս քաղաքի վրայով է վերադարձել դեպի Կեսարիա [613 թ.], ինչպես հաղորդում է Սերեոսը, Պարսկական Հայաստան մտած բյուզանդական զորավար Ֆիլիպպիկը¹:

Դվին քաղաքը, որ եղել է մարզպանների նստավայրը և Պարսկական Հայաստանի մայրաքաղաքը, ինչպես երևում է Սերեոսի և Թովմա Արծրունու վերևում հիշված հաղորդագրություններից, գրավված և ավերված է եղել²: Հետևաբար կարելի է ենթադրել, որ Դվինը ցույց է տվել Հերակլին դիմադրություն: Նույն վիճակն է ունեցել նաև Նախիջևանը և, ըստ երևույթին, Ուրմիա քաղաքը:

Նախիջևանից Հերակլի զորքը գնացել է դեպի Արաքս գետը, անցել է այն և առաջ շարժվելով դեպի հարավ, մտել է Ատրպատական և գնացել է դեպի այդ մարզի Գանձակ մայրաքաղաքը: Հերակլի սրընթաց ասպատակության նպատակը եղել է՝ վրեժ առնել խոսրովից այն աղետների համար, որ պատճառել էին կայսրությանը, ուստի ամբողջ Ատրպատականը ենթարկվել է հրի ու սրի:

Նախիջևանից դեպի Գանձակ Ատրպատականի շրջանը տանող հիմնական և բնական ճանապարհները եղել են հին մագիստրալ գծերը Մարանդի և Թավրիզի վրայով, կամ խոյի և Տասվիշի վրայով: Վերջին գիծը, որը համապատասխանում է Պետինգերյան քարտեզի Gobdi — Paresaca — Ecbatanis գծին, ինչպես պարզված է իմ պատմական-աշխարհագրական՝ «Հայաստանի գլխավոր ճանապարհները»³ աշխատության մեջ, գնում էր խոյից դեպի Տասվիշ հարավ-արևելյան ուղղությամբ և այդտեղից Ուրմիա լճի արևելյան ափով Գանձակի շրջանը:

Հերակլի արշավանքի ճանապարհը, հավանական է ենթադրել Պետինգերյան քարտեզի հին ուղեգծով: Այդ ենթադրությանը իբրև

¹ Տե՛ս Սերեոս, Թարգմ. Մալխասյանցի, Երևան, 1939, էջ 70 [գլ. XXXI]:

² Տե՛ս նաև Georgie Pisdas Heraclias. 2. 163 [1637, Bonnac]:

³ Երևան, 1936, էջ 164—171 և 247—248:



Քարտեզ 2.



Քարտեզ 3.

ապացույց կարող է ծառայել այն, որ բյուզանդական զորքերի ավերած քաղաքների թվում, Թովմա Արծրունու մոտ հիշվում է Ուրմիա քաղաքը, որը գտնվում էր Խոյ-Տասմիչ մագիստրալից դեպի հարավ-արևմուտք, իսկ Թավրիզ քաղաքը, որը այն ժամանակը եղել է Ատրպատականի¹ նշանավոր կենտրոնը և գտնվում էր Նախիջևանից դեպի Գանձակ տանող ճանապարհի վրա, աղբյուրներում բոլորովին չի հիշվում:

Իր արագ հարձակման ժամանակ, որը Գևորգ Պիսիդան համեմատում է կայծակի հետ, չհանդիպելով դիմադրության, Հերակլը վերցրեց գրոհով Խոսրովի աթոռանիստ Գանձակը և ենթարկեց ավերածության ու քանդեց այնտեղ գտնվող կրակարանի տաճարը: Այդ եղել է վրեժ ծրուագեմի ավերման և Խալի գերևարության: Գանձակի տեղադրությունը, ինչպես հայտնի է, որոշել է Ռավլինսոնը Թախտ-ի-Սուլեյմանի ավերակների տեղում, որոնք գտնվում են այժմյան Մարաղայից դեպի հարավ-արևելք²: Գանձակը ավերելուց հետո բյուզանդական զորքերը, ցրվելով մարզում, սկսեցին թալանել և ավերել շրջակա տեղերը: Թովմա Արծրունու վերևում հիշված վկայությամբ, բացի Գանձակից նրանք ավերել էին նաև Համադանը և Մայր³:

Թեոֆանը հաղորդում է նաև, որ Հերակլը Գանձակը ավերելուց հետո գրավեց Թևարմայսը, այրեց այդ քաղաքը և այնտեղ գտնվող տաճարը և այնուհետև հետապնդեց Խոսրովին լեռնային կածաններում⁴: Թևարմայս քաղաքի անունը և տեղը դժբախտաբար չեն ենթարկվում բացատրության: Դ'Անվիլը նմանեցնում է այդ քաղաքը⁵ Ուրմիա քաղաքին, որ, իհարկե, միանգամայն անհավանական է: Հոֆմանը ենթադրում է, որ Թեոֆանի բնագրում կա խառնաշփոթություն: Պթարպալէս-ը առաջարկում էր ուղղել և կարդալ թղթարպալ և դրա համար նա հնարավոր էր գտնում եզրակացնել, որ Թեոֆանի մոտ հիշված Պթարպալէս-ը համապատասխանում է Betn-Ar-n'aye⁶ գավառին, որ գտնվում էր Զագրոս լեռնաշղթայից դեպի արև-

¹ Տե՛ս Փալստոս, Պատմություն Հայոց, Վեներիկ, 1889, էջ 149 [IV, 25] և էջ 157 [IV, 39]:

² Rawlinson, Memoir on the Site of the Atropatenian Echatana, JRGS, X, 1841.

³ Մայ-ի տեղեկագրության մասին տես Մարկվարտի մանրամասն բացատրությունը, նրա «Eranschahr» աշխատության մեջ, Berlin, 1901, էջ 18—20:

⁴ Theoph. A. M. 6114.

⁵ Տես Mémoires des Inscriptions et Belles Lettres, t. 32, p. 560.

⁶ G. Hoffmann, Auszüge aus syrischen Akten persischer Märtyrer, Leipzig, 1880, S. 252.

մուտք։ Սակայն, ինչպես մեզ հայտնի է, Հերակլը իր առաջին արշավանքի ժամանակ այնտեղ բռնորոշ չէր մտել։

Ուշքի գալով և հաբեկումից, որ առաջացել էր անսպասելի, հանկարծակի հարձակումից, Սասանյան Պարսկաստանը սկսեց ցույց տալ Հերակլին լուրջ դիմադրություն և կանչեց Ասորիքից Շահր-Վարազին։ Ձմեռը արդեն մոտենում էր և բյուզանդական զորքի դրությունը կարող էր կրիտիկական լինել։ Դրա համար Հերակլը որոշեց ետ քաշվել Ադվանք, հույս ունենալով, որ այնտեղ նա կկարողանա մեծագցնել իր ուժերը, միացնելով Անդրկովկասի քրիստոնյաներին։

Ատրպատականի Գանձակ քաղաքից ետ քաշվող Հերակլի զորքերի ընթացողու մասին մեզ տեղեկություն է տալիս Սեբեոսը (Թիֆլիս, 1912, գլ. ԻԶ, էջ 148)։

«Ազդ լինի Երակլի կայսեր եթէ եկն Խոռեամ [Շահր-Վարազ] ի Մըծվին. առնու զզարս իւր և գերութիւն, և դառնա առ ամուր աշխարհաւն Մարաց գայ ճասանէ ի Փայտակաւումն»։

Ինչպես երևում է Թեոֆանի հաղորդագրությունից, բյուզանդական զորաբանակը այդ ճանապարհին ենթարկվել է պարսիկների հաճախակի հարձակումներին և կորցրել է բոլոր գերիներին — ըստ Թեոֆանի վկայության՝ 50.000 հոգի¹։

Սերեոսի վերևում հիշված հաղորդագրությունից երևում է, որ Հերակլը զնացել է Ադվանք «մեղացիների ամուր երկրի վրայով» և Փայտակարանի վրայով։ Սեբեոսի այդ ցուցմունքները, ինձ թվում է, հնարավորություն են տալիս որոշել մեծ հավանականությամբ նաև Հերակլի այդ ճանապարհը դեպի Ադվանք։ «Մեղացիների ամուր երկրի» տակ, հավոնորեն, պետք է ենթադրել պարսկական Ադրբեջանի հյուսիս-արևելյան շրջանի լեռները, որ ներկայումս կրում են Ղարադաղ անունը, իսկ Փայտակարան անվան տակ այն մարզը կամ քաղաքը, որ գտնվում էին Արաքսի ներքին հոսանքի մոտ, Շուշի քաղաքից դեպի հարավ արևելք։

Սեբեոսի մոտ հիշված տեղերի որոշմամբ, Հերակլի ընթացողին որոշվում է Ատրպատականի Գանձակ քաղաքի շրջանից այժմյան Միանն և Արդաբիլի վրայով դեպի Արաքսի ներքին հոսանքի շրջանը, որտեղ գտնվում էր Փայտակարանը։ Այդ հին ճանապարհը մանրամասն նկարագրված է արաբական աղբյուրներում՝ Ալ-Իստախրիի, Իբն-Հաուկալի և ուրիշ աշխարհագիրների մոտ հետևյալ ուղղությամբ՝ Արդաբիլ—Բերդեհ—Բախսար—Վարսան—Բայլական²։ Կա-

¹ Theoph. A. M. 6114.

² См. Н. А. Караулов. Сведения арабских писателей о Кавказе, Ар-

րառւելովի կարծիքով ճանապարհը Արդաբիլից դեպի Վարսան, որը նույնական է հայկական աղբյուրների Վարդանակերտին, գնում էր Ղարասու գետի հոսանքով¹։ Իսկ Վարսանի կամ Վարդանակերտի ավերակները, ինչպես ցույց է տալիս Մինորսկին, գտնվում են Արաքս գետի ափին և այժմ կոչվում են Ալտանի ավերակներ²։

Հին Փայտակարանի մարզից, որ գտնվում էր այժմյան Շուշի քաղաքից դեպի հարավ-արևելք, բյուզանդական զորքը, ինչպես երևում է Մովսես Կաղանկատվացու հաղորդագրությունից, ուղևորվեց դեպի Ուտի և այնտեղ գրավեց Աղվանքի Պարթավ մայրաքաղաքը։ Այնտեղ նա տեղավորվեց ձմեռելու բնակարաններում [623—624]։

«և անտի [Պարսկական Ադրբեջանից] դարձեալ՝ կամէր [Հերակլ] ձմերել ի կողմանս Աղուանից, Վրաց և Հայոց աշխարհաց։ Ուտի և գիր արարեալ առ իշխանս և առաջնորդս աշխարհաց, զի ինքնակամ կամօք ելցեն ընդ առաջ նորա և ընկալնուցուն և պաշտեսցեն զնա հանդերձ զօրօքն իւրովք յատուրս ձմերանույ. ապա եթէ ոչ՝ համարեսցին առաջի նորա իբրև հեթանոսք, առցին ամուրք նոցա և գերեսցին սահմանք աշխարհացն այնոցիկ ի զօրաց նորա։ Իբրև լուան զայս ամենայն պետք և իշխանք աշխարհիս Աղուանից, ի նոյն ինքն ի հրամանէ խոսրովու թողեալ զմեծ քաղաքն Պարտաւ, ելեալ զնացին ամրացան ի տեղիս տեղիս... Իսկ իբրև եկն նհաս զօրն Հոռվմայեցուց անթիւ բազմութիւն յոյժ՝ բնակեցան յուտի գաւառի առ հեղեղատովն, որի մէջ սահմանաց պեղջն Կաղանկատուց. և կոխեցին քանդեցին զգեղեցիկ ստացուածս այգեստանեայց և գեօղաստանեայց ընդ որս անցանէին, և անտի չուեալ, բանակեցան առ հեղեղատովն Տրտուայ մօտ ի գիւղն Դիւտական»³։

Այդ հաղորդագրության մեջ հիշված Կաղանկատույք գյուղը, ինչպես մանրամասն պարզված է իմ «Հայաստանի գլխավոր ճանապարհները»⁴ աշխատության մեջ, գտնվում էր Թարթառ գետի ձախ

мени и Азербайджане. Сборник материалов для описания местностей и племен Кавказа, XXIX [1901] и XXXVIII [1908].

¹ Сборник мат. для описания местн. и племен Кавказа, XXIX, էջ 67, ծան. 59

² Sht. V. Minorsky, Hudud-al-Alam, London, 1937, p. 398

³ Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1913, էջ 149—150։

⁴ Տե՛ս «Հայաստանի գլխավոր ճանապարհները», 1936, էջ 200—202 և 250։

կողմում, այժմյան Մանդակիս գյուղից ոչ հեռու, Պարթավից մոտավորապես 50 կմ դեպի արևմուտք։

624 թվի ընթացքում կայսրության և Սասանյան Պարսկաստանի մեջ կատաղի կռվի թատերաբեմը եղել է Աղվանքը և Պարսկական Հայաստանը։ Այդ տարվա պատերազմական գործողությունների մասին մանրամասն, սակայն անորոշ և վիճելի տեղեկություններ է տալիս Թեոֆանը, որի հաղորդագրությունները ճշտում և լրացնում են Սեբեոսը և Մովսես Կաղանկատվացին։ Ինչպես երևում է նրանց հաղորդագրություններից Աղվանքում Հերակլի դեմ սկզբում գործել է միայն Շահրապլականի ղորաբանակը. սակայն հետո նրան օգնության են եկել մեկը մյուսի հետևից երկու ղորաբանակներ՝ Շահր-Վարազի և Շահենի հրամանատարությամբ։ 624 թվի գարնանը, ինչպես կարելի է եզրակացնել Թեոֆանի պատմվածքից, օգնություն է ստացել լազերից, ապազգներից և իբերներից նաև Հեթակը. կայսրը¹ Նույն հեղինակի վկայությամբ, Հերակլը ունեցել է մի քանի հաշոդ ընդհարումներ Շահրապլականի² զորքերի հետ, բայց հետո, Շահր-Վարազի և Շահենի ղորաբանակների գալուց հետո, պարսիկներին հաջողվել է, ինչպես հաղորդում է Սեբեոսը³, շրջապատել նրա զորքը, որը ընկել է ճգնաժամային դրության մեջ։

«Ազդե եղև Խոսրովու», եթէ դարձաւ Երակլոս և հհաս ի Փայտակարան, և կամի ընդ Աղուանս անցանել ի Վիրս. հրամանս ետ զարավարի իւրոյ Շահր-Վարազա՝ զի զառաջն կալցի։ Եւ նա փութով հասանէ յԱյրարատ, և անցանէ ի Գարդման ընդդեմ նորա, և բանակի ի միւս Տիգրանակերտի յանդիման նորա։ Եւ Շահենն լի գոր հասեալ բանակեցաւ ի թիկանց Երակլի ի Տիգրանակերտ աւանի։ Եւ էին սոքա աստի, և նոքա անտի բանակեալ։ Եւ բանակն Երակլի ի մէջ նոցա երկոցունցաւ։ Սեբեոսի այդ վկայությունը, որտեղ կան ճիշտ և արժեքավոր տեղագրական ցուցմունքներ, դժբախտաբար, չի ստացել պատշաճ լուսաբանություն պատմական աշխատություններում, հին Աղվանքի աշխարհագրության թույլ ուսումնասիրված լինելու հետևանքով։

Սեբեոսի վկայությունից երևում է, որ Շահր-Վարազի ղորաբանակը տեղավորված է եղել Գարդման գավառում, որը գտնվում էր այժմյան Շամբոր և Գյանջա քաղաքներից հարավ և Շամբոր դեպի դեպի արևելք, որտեղ և պետք է ենթադրել «մյուս Տիգրանակերտի» տեղադրությունը։ Դժվար չէ կռահել, որ Շահր-Վարազը,

¹ Theoph. A. M. 6115.

² Նույնը։

³ Տե՛ս Սեբեոս, Թեֆնիս, 1912, գլ. ԻԶ, էջ 148.

որը առաջացել էր Գարդմանի կողմից, նպատակ է ունեցել կանխել Հերակլի զորքերի տեղաշարժը դեպի արևմուտք և ներխուժումը դեպի Վրաստանի սահմանները: Իսկ Շահենի զորքը, որ տեղավորվել էր Տիգրանակերտ փոքրիկ վայրում, պետք է կտրեր Հերակլի ճանապարհը դեպի արևելք և հարավ:



Քարտեզ 4.

Տիգրանակերտի տեղադրությունը, որտեղ տեղավորված է եղել Շահենի բանակը, որոշվում է միանգամայն ճիշտ Հերակլի թիկունքում, մոտավորապես 40—45 կմ Կաղանկատույքից դեպի հարավ-արևելք: Այդ տեղի ավերակները գտնվում են Շահբուլաղ բերդի և այժմյան Տառնաուտ գյուղի մոտ, որ գտնվում են այժմյան Աղդաթից 8—10 կմ դեպի հյուսիս և Եվլախ — Շուշի ճանապարհից մի քանի կիլոմետր հեռավորության վրա դեպի արևմուտք¹:

Ընկնելով թշնամու շրջապատման մեջ, Հերակլը իրեն շփույթից: Նա սրընթաց գորհով հարձակվեց Շահենի զորքերի վրա, որ գտնվում էր «Տիգրանակերտ» փոքր վայրում, շարդեց և ցրեց նրան: Իր համար ճանապարհ բացեց դեպի հարավ՝ հին Սյունիքի վրայով:

Հերակլի զորքերի նահանջի ընթացուղու մասին Աղվանքից դեպի Պարսկական Հայաստան պատմական աշխատություններում

¹ Մ. Բարխուդարյանց, Արցախ, 1895, էջ 28.

սովորաբար տրվում են սխալ լուսաբանություններ, որոնք հիմնոված են պարզ թյուրիմացության վրա:

Այդ սխալները բացատրվում են Թեոֆանի հունարեն բնագրի վրիպակով, որը կարելի է հեշտությամբ ուղղել Սեբեոսի արժեքավոր վկայության օգնությամբ:

Թեոֆանի և Սեբեոսի համապատասխան վկայությունները բերում են ամբողջությամբ և հարազատ թարգմանությամբ, ընգծելով այն տեղերը, որոնք վերաբերում են Հերակլի ճանապարհի ուղղությանը:

1. Թեոֆան, A. M. 6115 [Թարգմ. Օբոլենսկու և Տերնովսկու, Մոսկվա, 1890, էջ 250] «Այս կոիվների ժամանակ եկավ Սահնը [Շահենը] իր զորքով, և նրան Հերակլը շարդեց, նրա զորքից շատերին ոչնչացրեց, իսկ մյուսներին ցրեց փախուստում և նրանց գլխավոր դռը վերցրեց: Սարվարազանը [Շահր-Վարազը], միանալով Սահնին, հավաքեց ազատված զինվորներին և նորից մտածում էր գնալ Հերակլի դեմ: Բայց կայսրը գնաց Հունների երկիրը [պետք է ռադել Սիւնի]՝ նրանց անանցանելի երկրները խորհուրդով և դժվարին ճանապարհներով: Թարգարոսները գնացին նրանց հետևից: Այն ժամանակը լազերը աբաղզիների հետ, վախենալով, ետ քաշվեցին հոռմայեցիներից»:

2. Սեբեոս, Բիֆուս, 1912, գլ. ԻԶ, էջ 148.

«Իբրև ետես Երակլոս, եթէ ի մէջ արկին զնա՝ դարձաւ ի վերայ զարուն՝ որ ի թիկանց կողմանէ, հապճէպ զարութեամբ եհար զնա և խորտակեաց և գնաց ընդ Մղուկս. և թափեցաւ ընդ լեռնակողմն ի դաշտն Նախնուանն ի ձմեռան ժամանակի»:

Համաձայն այդ վկայությունների Հերակլի ընթացողին Աղվանքից դեպի Նախիջևան որոշվում է լիակատար պարզությամբ՝ Տաթևսուտի շրջանից [«Տիգրանակերտ փոքր վայր»] Նվլախ—Շուշի ճանապարհով, Շուշիի և Գորիսի վրայով դեպի Սյունիքի Մղուկ տեղը և այնտեղից Անգեղակոթի ու Բիշենաղի լեռնանցքի վրայով դեպի Նախիջևան: Ուստի դժվար չէ կռահել, որ Թեոֆանի հունարեն բնագրում Օβνван հասարակ վրիպակ է փոխանակ Տвнван¹-ի:

Միանգամայն պարզ է նաև, որ պետք է ժխտել գիտնականների ենթադրությունները, որոնք Հերակլի ճանապարհը Աղվանքից

¹ Հայաստանի ծայրամաս Սյունիքը եվսեբիոս Կեսարացու մոտ անվանվում է Σαυνια կամ Συνια նրա Praeparatio evang., 2, 86 [277]. այդ նույն գավառը Կոնստանդին Միրանաթինի մոտ անվանված է Συνι. De caeremoniis, էջ 657, և ուրիշ հեղինակների մոտ:

ցույց են տալիս ոչ թե դեպի Սյունիք, այլ դեպի Հունների, Սարիր-ների երկիրը և կամ սակերի շրջանը — դեպի Սակաշեն¹։

Մանրամասն և ճշգրիտ տեղեկություններ Հերակլի հետագա ճանապարհի մասին, Նախիջևանի շրջանից դեպի հին-հայկական Ապահոնիք, տալիս է Սեբեոսը իր հետևյալ հաղորդագրության մեջ՝

«Իսկ նորա [Հերակլը] հասնալ անցանէ ընդ հուն գետոյն Երասխայ՝ յաւանն Վրջունիս և բանակի յանդաստանս նորա։ Եւ զաւրն պարսից հասնալ՝ ոչ կարացին անցանել զգետովն այն արն։ Հասանէ Երակլոս ի Բագրևանդ և անցանէ յԱպահոնիս, և բանակի ի գեղն՝ որ կոչի Հրճմունք։ Եւ Շահր-Վարազ սփոէր զղարս իւր յԱղիովիդ, և ինքն այլընտիր եղեալ զհազար սպառազինաց վառելոց քաջաց։ Եւ երթեալ նստի յԱրճէշ գաւառի՝ դարանամուտ լինել, որպէս զի ի մէջ գիշերին անկցի ի վերայ բանակին Երակլի²։

Հերակլի վերևում հիշված ճանապարհը ևս Նախիջևանից դեպի Ապահոնիք դժվար չէ որոշել Պետինգերյան քարտեզի տվյալների օգնությամբ, Նախիջևանի շրջանից Հերակլի զորքերը, անցնելով Արաքս գետը, գնացին Վրնջունիս գյուղի վրայով դեպի խոյ և ապա դնացին Բագրևանդ Պետինգերյան քարտեզի գծով՝ Gobdi [= խոյ]—Nasabi [= Նախրասակ]—Artaza [= Արտազ]—Sorvae Ortispi [= Որգրսպուլ]³։ Նախիջևանից ճանապարհը գնում էր հարավ-արևմտյան ուղղությամբ դեպի խոյ և այնուհետև հյուսիս արևմտյան ուղղությամբ դեպի Աղ-չայ գետի ակունքները. այդտեղից նույն հյուսիս արևմտյան ուղղությամբ դեպի այժմյան Կարաքենդ, որից ոչ հեռու գտնվում էր Պետինգերյան քարտեզի Ortispi կայարանը, և ապա Բագավանի [= Ուշ քիլիսա] վրայով, որ գտնվում էր Բագրևանդում, դեպի Ապահոնիք, որը տեղադրված էր Սիփան լեռից դեպի հյուսիս Արածանի գետի ավազանում։

Հրճմունք գյուղը Ապահոնիքում, որի մոտ տեղավորվել էին կայսերական զորքերը, Ասողիկի մոտ անվանված է—խրճտոնք կամ իւարճտոնք⁴։ Նրա տեղադրության խնդիրը, դժբախտաբար, մնում է

¹ H. Gelzer, Abriss der Byzantinischen Kaisergeschichte. *տես* Krumbacher, Geschichte der Byzantinischen Litteratur, 1897, S. 948. Gerland, Die persischen Feldzüge des Kaisers Herakleios, Byz. Zeitschr., III, S. 354. Кулаковский, История Византии, т. III, էջ 343—344 և ուրիշ։

² Տե՛ս Սեբեոս, Թիֆլիս, 1912, էջ 149, գլ. ԻԶ։

³ Տե՛ս «Հայաստանի գլխավոր ճանապարհները», էջ 139—162 և 246—247։

⁴ Տե՛ս Ասողիկ, հրատարակություն Մալխասյանցի, 1885, էջ 116, [II, գլ. 3]։

բաց. Հաճելի կլինեն համադրել այդ գյուղը այժմյան «Բորջոկին»
որ գտնվում ֆ Արածանի գետից դեպի արևմուտք, մոտավորապես
15—20 կմ դեպի հյուսիս-արևմուտք այժմյան Դուտախ-Այնթա-
պից»:




Figure 5.

Հերակլի Ապահունիք գալուց հետո տեղի ունեցավ պարսիկների հետ նոր ընդհարում, որի մասին տեղեկություններ են տալիս Սեբեոսը և Թեոֆանը:

1. Սեբեոս, Թիֆլիս, 1912, դր. ԻԶ, էջ 149—150:

«Ազդդ լինի Երակլիի ի ձեռն արձակելոյ լրտեսաց՝ եթէ եկն
 Խոռեամ [Շահր-Վարազ], և դարանակալ եղև ի վերայ քոյ:
 Յայնժամ Երակլոս ըստնմին աւրինակի այրընտիր և ձիւնտիր
 առնէ, և յարձակի ի վերայ նորա քսան հաղարաւ, և հասեալ,
 յԱղի դռանէ զաւրսն յառաջամարտիկ հինգ հարիւր: Նախ՝
 զնոսա կոտորէ. և զերծեալ մի ոմն ի հծծիւցն՝ հասեալ ի յԱր-
 ճէշ գոյժ արկանէ Խոռեմայ՝ եթէ հասեալ է թշնամին ի վերայ
 քոյ, և կոտորեցին զզաւրն պէշոպա յԱղի: Եւ բարկացաւ Խո-
 ռեամ ի վերայ առնն, հրմայեաց զնա կապել ոտիւք և ձեռաւք,
 և ասէ. «Երակլոս ցարդ յինէն փախստական գնայր. արդ եկեալ
 հասեալ եմ այսպիսի զինու, և նա յինէն ո՞չ փախիցէ»:

ՏԵ՛ս ժողովրդն էսկսկին դիմավոր շտաբի 10 վերստանոց քարտեզում:

Այն ինչ նորա բանքն ի բերան էին, և նոքա հասին ստիպով ի վերայ նոցա, պատեցին ղքաղաքն երեք կուսէ, և բորբոքեցին զնա հուրը և այրեցին զգաւրացն բազմութիւնս:Բայց Շահր-Վարադ գերծաւ՝ նստեալ ի վերայ նուաստ երկվարի. այնպէս գերծեալ գնաց առ զաւրս իւր, զոր ժողովեալ էր յԱղիոսիտ գավառի:

2. Թեոֆան [Թարգմ. Օբոլենսկու և Տերնովսկու, Մոսկվա, 1890, А. М. 6115, էջ 250]. «Մինչ այդ կայսրը, շարունակելով ճանապարհը, եկավ Պարսկական Հայաստանի երկրները: Եվ որովհետև այդ երկիրը գտնվում էր պարսից իշխանության տակ, ուստի և շատերը հավաքվեցին Սարվարազանի մոտ [Շահր-Վարադի] և շատացրին նրա զորքը: Ձմեռը վրա հասնելու պատճառով այդ ժողովուրդը ցրվեց իրենց տները, որի մասին տեղեկանալով, Հերակլը մտադրվեց գիշերը հանկարծակի հարձակվել: Ձմեռվա պատճառով բարբարոսները ոչ մի կասկած չունեին, և կայսրը ջոկելով ամուր ձիեր և զորքից՝ քաջերին, բաժանեց նրանց երկու մասի, և մի մասը ուղարկեց առաջուց ընդդեմ բարբարոսների, իսկ ինքը մյուսների հետ գնաց նրանց հետևից: Գիշերը նրանք արագութեամբ գրավեցին Սալվանի փոքրիկ տեղը ժամը 9-ին: Այնտեղ եղած պարսիկները տեղեկանալով հարձակման մասին, վեր թռան և նետվեցին նրանց դեմ, սակայն հոռմեացիները նրանց բոլորին էլ ոչ չհացրին, բացի մեկից, որը լուրը տարավ բարբարոսին: Նա վեր կացավ նստեց ձիու վրա և մերկ ու բոբիկ փրկության դիմեց փախուստի միջոցով: Նրա կանանց և ամբողջ պարսկական ազնվականներին՝ կառավարիչներին, սատրապներին և ընտրովի զինվորներին, որոնք բարձրանալով կտուրների վրա կրկնվում էին, ոչնչացրեց հրկիզմամբ»:

Հերակլի, Շահր-Վարադի դեմ տարած հաղթանակի մասին մեջ բերված Սեբեոսի և Թեոֆանի հաղորդագրություններում, ինչպես տեսնում ենք, էական տարաձայնություններ չկան: Սակայն, անշուշտ, Սեբեոսի հաղորդած տեղեկությունները մեծ արժեք ունեն, որովհետև ճշտում են իրադարձության աշխարհագրական պայմանները:

Հերակլի գիշերային հարձակման ճանապարհը որոշվում է Ապահունքից այժմյան Պատնոսի կամ Ձմիկի վրայով, այսինքն՝ լեռնային շրջանի վրայով, որտեղ, ինչպես իմ կողմից պարզված է

եղել. գտնվում էր Պետինգերյան քարտեզի ամրացված Tsumbo կամ Սումբ կայարանը¹:

Պատնոսից և Զոմիկից դեպի Արճեշ գնացող ճանապարհի վրա ներկայումս էլ գտնվում է Աղի լեռնանցքը, որը գտնվում է Արճեշից 20—25 կմ դեպի հյուսիս², և դժվար չէ կոհհել, որ պարսկական առաջատար զորագնդին է հանձնարարված եղել այդ լեռնանցքի պաշտպանությունը: Հենց այդտեղ լեռնանցքի մոտ կարելի է ենթադրել և Աղի փոքրիկ վայրի տեղադրությունը³:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Հերակլի այդ արշավանքի ընթացուղին ևս պարզվում է բավականաչափ որոշակիությամբ: Դժվար չէ կոհհել, որ Թեոֆանի մոտ հիշված Սալվանի փոքրիկ տեղը Աղի գյուղի աղավաղված անունն է, այսինքն՝ Ասի-Ավան [Ήλι(α)βανόν]: Հիմնվելով ներկա ուսումնասիրության նոր տվյալների վրա, կարելի է, բացի այդ, եզրակացնել, որ հազիվ թե հավանական լինի Նորման Բելնդի ենթադրությունը, որ իբր թե 624 թվի վերջերին տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ Հերակլը վերցրած լինի Վան քաղաքը⁴:

Շահր-Վարազի դեմ տարած հաղթանակից հետո, Հերակլի զորքերը ձմեռը անցկացրին Վանա լճի հյուսիսային հայկական գավառներում: Իսկ մարտի սկզբին, ինչպես մանրամասն հաղորդում է Թեոֆանը, Հերակլը այդտեղից գնաց դեպի Կիլիկիա և այնտեղից Սեբաստիա:

Թեոֆանի համապատասխան վկայությունները այնքան հավաստի և արդարացի են, որ մեզ հնարավորություն են տալիս բավականաչափ ճշտությամբ որոշել նաև Հերակլի ընթացուղին դեպի Ասորիք [Սիրիա]:

«Այն տարվա մարտի 1-ին, — հաղորդում է Թեոֆանը, — Հերակլ կայսրը հավաքելով իր զորքը, խորհուրդ արավ՝ թե ինչ ճանապարհով իրենք գնան. երկու ճանապարհ կային նեղ և դժվար՝ մեկը տանում էր դեպի Տարանտ, մյուսը — դեպի Սիրիական երկիրը: Ժանապարհը դեպի Տարանտ կարճ էր, բայց սպառնում էր ամեն տեսակ սննդամթերքի պակասությամբ. ճանապարհը դեպի Սիրիա, որ գնում էր Տավրոսի վրայով, ներկայացնում էր առատություն և հարմարություն սննդա-

¹ Տե՛ս «Հայաստանի Գլխավոր ճանապարհները», էջ 104—106 և 243:

² Տե՛ս Acu Կովկասի գլխավոր շտաբի 10 վերստանոց քարտեզում:

³ Acu գյուղի և լեռան մասին տե՛ս Հյուսիսային գիտությունը նրա «Die al-larmentischen Ortsnamen» աշխատության մեջ, 1904 թ.:

⁴ Տե՛ս The Cambridge Medieval History II, 1936, p. 294.

մթերքների նկատմամբ: Բոլորը վճռեցին ընտրել այդ ճանապարհը, թեև նա խորոտւորդ էր և ծածկված էր խոր ձյունով: Մեծ դժվարությամբ անցնելով այդ ճանապարհը, յոթը օրում հասան Տիգրիս գետին, որը անցնելով, գրավեցին Մարտիրոսյուրը և Ամիգը: Այդտեղ հանգիստ առան և զորքը, և գերիները¹:

Վանա լճի հյուսիսային շրջանից դեպի Փոքր Ասիա տանում էին, ինչպես միանգամայն ճիշտ ցույց է տրված Թեոֆանի մոտ բերված հաղորդագրության մեջ, երկու պատմական ճանապարհ: Մի ճանապարհը գնում էր Մանազկերտի վրայով դեպի Կարին — Թեոդատպոլիս և այնտեղից դեպի Սատաղ և Փոքր Հայք, իսկ մյուսը՝ Տավրոսի լեռների վրայով դեպի Մարտիրոսյուր — Ֆարկին և այնտեղից Մելիտեն: Որովհետև Հերակլի զորքը ետ նահանջեց երկրորդ ճանապարհով, ուստի դժվար չէ եզրակացնել, որ Թեոֆանի մոտ հիշված մյուս ճանապարհի ուղղությունը դեպի Տարանտ պետք է ենթադրել Թեոդատպոլիսի և Սատաղի վրայով: Այդ ճանապարհը թեև իսկապես կարճ և հարմար էր, սակայն զորքի համար ճարել «ննդամթերք այդտեղ, իհարկե, դժվար էր լինելու, որովհետև Հերակլի զորաբանակը 624 թվի գարնանը այդ ճանապարհին սնվում էր կողոպուտի միջոցով:

Պետք է նշել, որ «ճանապարհը դեպի Տարանտ» Կուլակովսկին ենթադրում է հին հայկական Տուրուբերան նահանգի վրայով, որտեղ գտնվում էր Տարոնը²: Այդ ականջատնի թյուրիմացություն է, որովհետև Տուրուբերանի և Տարոնի վրայով գնում էր Թեոֆանի մոտ հիշված «ճանապարհը դեպի Սիրիա», որով ետ նահանջեց 625 թվին Հերակլի զորաբանակը: Վերևում հիշված Տարանտը Սեն-Մարտենը նույնացրել է Փոքր Հայքի Derendeh գավառին, որը հայերը անվանում էին Daranda, իսկ Սիրիացիք՝ Touranda³: Այդ կարծիքը ևս ես համարում եմ քիչ հավանական: Ես կարծում եմ, որ Թեոֆանի մոտ Ταραντος, որը խիստ աղճատված է, կարող է համապատասխան լինել Կարին մարզի անվանը, հունարեն Καρρηνός կամ Καρηνίτις⁴, որի վրայով անցնում էր հիշված կարճ ճանապարհը:

Հերակլ կայսեր ընթացուղու ուղղությունը Վանա լճի շրջանից


¹ Летопись византийца Феофана, перев. Оболенского и Терновского, М, 1890, т. 233 [А. М. 6116]

² Ю. Кулаковский. История Византии, т. III, 1915, т. 72

³ See Histolre du Bas-Empire par Leban. Paris, 1830, p. 109, Ժանդ. 3:

⁴ Strabo XI, 14, 5 (528) և C. Müller, Claudii Ptolemaei geographia I, 1911, p. 937:

դեպի Մարտիրոսոյ — Ֆարկին որոշվում է առանց դժվարության Պետինգերյան քարտեզի Artaxata — Tigranocerta մագիստրալի երկարությամբ, որը որոշված է մանրամասն նկարագրված է իմ «Հայաստանի գլխավոր ճանապարհները» աշխատության մեջ¹։ Այդ ճանապարհի վրա, որ գնում էր Մուշի հովիտի և Տավրոսի լեռնաշղթայի վրայով դեպի Բատման-սուլի ակունքները և այնտեղից այժմյան Կիլտիդ և Ներջիկ գյուղերի վրայով դեպի Մարտիրոսոյ [հին Տիգրանակերտ], Պետինգերյան քարտեզի վրա ցույց են տրված հետևյալ կայարանները՝ Elegacana [հին հայկ. Եղեգական] 15 Dagnevana [հին հայկ. Դոնեվանք] 26 Molchia 32 Vastauna կամ Bastavena [այժմյան Բոստաքենդ] 26 Patansana կամ Patransana [հին հայկ. Պատրանսավան] 27 Dyzanas կամ Dizanas 22 Cyldiza [այժմյան Կիլտիդ] 20 Zanserio կամ Zancerion [սիրիակ. Չոնիկարտ] 30 Tigranocerta [Ֆարկին — Մարտիրոսոյ]²։



Քարտեզ 6.

Հեռավորությունը Վանա լճի շրջանից մինչև Մարտիրոսոյ — հին Տիգրանակերտ, ինչպես տեսնում ենք, կազմում է մոտավորապես

¹ Երևան, 1936, էջ 85—104 և 241—242։

² Կայարանների մեջ եղած թվանշանները ցույց են տալիս տարածությունը հոմ. մղոններով [1.4815]։

200 հռոմեական մղոն կամ 300 կմ, և այդ տարածությունը կայսերական զորքերը կարողացել էին անցնել մոտավորապես 10 օրում. իսկ մինչև Տիգրիսի ակունքները Դիզանաս կայարանի մոտ նրանք կարողացել էին հասնել, ինչպես միշտ ցույց է տրված Թեոֆանի մոտ, 7 օրում: Թեոֆանի վկայության մեջ Տիգրիս գետի անվան տակ, ինչպես և Քսենոֆոնի Անաբասիսում [IV, 4, 3], ենթադրվում է ըստ երևույթին Նիմֆի գետը, կամ այժմյան Բատման-սուն, Հեռաքրքիր է նաև, որ Թեոֆանը իր հետագա պատմվածքում Նիմֆի անվանում է այն գետը, որ հոսում էր Ամիդի մոտ, այսինքն՝ այժմյան Տիգրիսը:

Հերակլի զորքերը դադար առան Մարտիրոպոլի և Ամիդի շրջանների միջև: Այստեղ նրանց հասավ Շահր-վարազը, որը համառորեն հետևում էր Հերակլին և փորձում էր նրան պատժել: Նիմֆի գետը, այսինքն՝ այժմյան Տիգրիսը, անցնելուց հետո, Հերակլի հետագա ճանապարհը ցույց է տրված Թեոֆանի մոտ Սամոսատի և Գերմանիկի վրայով դեպի Ադանա և դեպի Սարա գետը ու այնտեղից Սեբաստիայի վրայով դեպի Պոնտոս, որտեղ Հերակլի զորքը անցկացրեց 625—626 թվի ձմեռը:

624—625 թվերի Հերակլի կռիվները, ինչպես հայտնի է, Թեոֆանը փառաբանում է իբրև հաղթանակների անընդհատ շարք: Ավելի ճիշտ գնահատական է տրված այդ իրադարձություններին Մովսես Կաղանկատվացու պատմական աշխատության մեջ՝ որտեղ ասված է հետևյալը՝

«Զի թէպէտ և հարուածք մեծամեծք եղեն զօրացն Պարսից, սակայն հանին տարան արկին զնա յաշխարհն իւր, և անդէն կալան զքաղաքն, զոր հանին բռնութեամբ ի նմանէն»², Հերակլի պատերազմական գործողությունների մասին կարելի է ճիշտ համարել նաև Նյուդեկեի հետևյալ գնահատականը:

«Նրա [Հերակլի] համարյա արկածային տեղաշարժերը տեղից տեղ, որոնց ընթացքում նա սովորաբար չունէր կապ թիկունքի հետ, և պետք է հանդիպեր մեծ դժվարությունների իր զորքերը պարենավորելու ընթացքում, բնորոշում են Հերակլին, իբրև մեծ զորավար և խոշոր քաղաքագետ»³:

¹ Theoph. A. M. 6116.

² Մովսես Կաղանկատվացի, Աղվանից պատմութիւն, Թիֆլիս, 1913, էջ 150—151:

³ Nöldeke, Aufsätze zur persischen Geschichte, 1887, S. 126:

Պաշարը Սասանյան Պաշտանի և Բյուզանդական կայսրության միջև շարունակվեց առանձին կատարողությամբ 626 թվին:

Ետ քելով Հերակլին դեպի Պոնտոս և վերականգնելով իր իշխանությունը Հերակլի թողած մարզերում, Սասանյան Պարսկաստանը նորից անցավ հարձակման և ավարների հետ միացած պաշարեց Կոստանդնուպոլիսը [626 թվի ամառը]: Շահր-Վարադի զորաբանակը առաջ էր գնում Քաղկեդոնի կողմից, իսկ Հերակլի դեմ պետք է կռիվ մղեր Շահենը: Սակայն պարսիկների մտածված լաքն ծրագիրը հաջողություն չունեցավ: Ավարների զորավարը պարտություն կրեց [626 թվի օգոստոսի 7-ին] և պետք է պաշարումը վերացներ ու ետ քաշվեր: Նույն տարում Շահենի դեմ հաղթություն տարավ նաև Հերակլի եղբայրը — Թեոդորոսը:

Այդ իրադարձությունների ժամանակ Հերակլ կայսրը զբաղված էր դեպի Պարսկաստանի իր երկրորդ արշավանքը կազմակերպելու գործով: Կազմավորելով նոր զորաբանակ, նա զնաց, ինչպես հաղորդում է Թեոֆանը¹, դեպի Լազիկա: Այդ տեղեկությունը, ինչպես ենթադրում են, արժանի է վստահության: Ուստի հնարավոր է, որ Մովսես Կաղանկատվացու վերևում հիշված վկայությունը Հերակլի՝ ծովային ճանապարհով Եգեթիա, այսինքն՝ Լազիկա ուղևորվելու մասին, վերաբերում է ոչ թե առաջին արշավանքին, այլ երկրորդը:

Հիմնվելով Նիկիփորոսի հաղորդագրության վրա, Կուլակովսկին հավանական է համարում, որ ուղևորությունը դեպի Լազիկա, այսինքն՝ Կոլխիդա, Հերակլը կատարել է ծովային ճանապարհով Տբապիզոնից³: Սակայն, ինչպես ներքևում մանրամասնորեն պարզվելու է, այդ ենթադրությունը խիստ վիճելի է:

Նախքան իր երկրորդ արշավանքը սկսելը, Հերակլը փնտրում էր նոր դաշնակիցներ, և գտավ նրանց, հանձինս խազարների: Նամաձայն Մովսես Կաղանկատվացու տեղեկությունների, խոսքովի թագավորության 36-րդ տարում [այսինքն՝ 626 թվին] Հերակլ կայսրը դեսպանություն ուղարկեց խազարների առաջնորդ Զբրուխանի մոտ [Զիկլի, տե՛ս Թեոֆան, A. M. 6117] և նրա հետ կնքեց զինվորական դաշինք: Այնուհետև խոսքովի թագավորության 37-րդ տա-

¹ Theoph. A. M. 6117:

² Մովսես Կաղանկատվացի, հիշված աշխատությունը, էջ 101:

³ Ю. Кулаковский, История Византии, III, էջ 75. համեմատե Nicephori archiepiscopi Const. opuscula historica, 1890, 15, 12.

րում [627 թ.] Զերութանի անհամար շոկատները, անցնելով Դերբենտի անցքը, ավերեցին աղվանների և իբերների երկիրը և պաշարեցին Թիֆլիսը¹։

Թեոֆանի և Մովսես Կաղանկատվացու ներքևում բերվող հաղորդագրություններից երևում է, որ հենց այդտեղ, պաշարված Թիֆլիսի պատերի տակ տեղի է ունեցել Հերակլի հանդիպումը իր նոր դաշնակիցների հետ։

1. Թեոֆան, [հիշված աշխատ., 1890, էջ 235] A. M. 6117. «Խազարները անցնելով Կասպից դռները, ներխուժեցին Ադրբեջանի երկիրը Զիկլի հրամանատարությամբ, որը Կազանում իր արժանիքով եղել է երկրորդը. և որտեղով որ նորա անցնում էին, ամենուրեք գերում էին պարսիկներին, իսկ քաղաքները և գյուղերը՝ այրում էին։ Կայսրը թողնելով լազերի հողը միացավ նրանց»։

2. Մովսես Կաղանկատվացի, Թիֆլիս, 1913, գլ. ԺԱ. էջ 156.

«Յետ այս ամենայնի դիմէր ուղիս յարուցեալ և գետն յորձանուտ ընդդէմ Վրաց աշխարհին և պատեալ պաշարէին զփափկասուն, վաճառաշահ, հռչակաւոր մեծ քաղաքն Տփլիս։ Ազդ լինէր մեծի կայսերն Հերակլիոսի. և ժողովեալ նորա զամենայն զօրս զօրովեան իւրոյ՝ գայր վաղվաղակի հասանէր առ նիզակակից օգնականն իւր։ Եւ ի մատուցանել զօժիտս և զընծայս թագաւորականս՝ ընկալեալ յոյժ բերկրեցան ի տեսանել զմիմիեանս»։

Հիշված հաղորդագրությունների ու նկարագրված իրադարձությունների տարբերվելի մասին, ինչպես և Հերակլի դեպի Թիֆլիս գնացած ընթացուղու մասին, ինչպես հայտնի է, պատմական աշխատություններում կան անհաշտելի տարաձայնություններ։ Ելնելով Թեոֆանի ցուցմունքներից, գիտնականների մի մասը ենթադրում է, որ վերոհիշյալ անցքերը տեղի են ունեցել 626 թվին²։ Սակայն գիտնականների մյուս մասը, ինչպես ինձ թվում է, ավելի իրավացիորեն այդ անցքերը տանում է 627 թիվը³։

Այդ վերջին տարեթիվը հաստատվում է բավականաչափ ճշտու-

¹ Մովսես Կաղանկատվացի, հիշված աշխատ., էջ 153—156։

² H. Gelzer, Abriss der byzantinischen Kaisergeschichte, S. 948. Апрамонов, Очерки древней истории Хазар, 1936, էջ 51—58. Lebeau, Histoire du Bas-Empire, IX, p. p. 117—119 և ուրիշ։

³ Ю. Кулаковский, История Византии, III, էջ 93—94։

N. H. Baynes, Cambridge Medieval History, II, 1936, 297 sq.

թյամբ Մովսես Կաղանկատվացու համապատասխան հաղորդագրությունների ուշադիր վերլուծման միջոցով:

Պարզ է, սակայն, Հերակլի ընթացուղու ուղղովթյան խնդիրը նգերիա — Լադիկայից դեպի Թիֆլիս, Սորովաբար նգերիա — Լադիկայի տակ գիտնականները ենթադրում են Ֆազիս — Ռիոն գետի հոսանքով տարածվող երկրամասը, այսինքն՝ Կոխիդան¹: Լադիկայի սեղադրության այդ մեկնաբանությամբ Հերակլի ընթացուղու որոշումը «Լադերի հողից» դեպի Թիֆլիս դժվար էր լինի: Այդ ճանապարհը կարելի է ընդունել այժմյան Շորապանի և Սուրամի լեռնանցքի վրայով և այնուհետև Կուր գետի երկայնությամբ:

Սակայն, բավական է դիմել Վրացական աղբյուրներին, և առաջ են գալիս մի շարք կասկածներ: Ակնհերե է, որ Հերակլի պարսկական երկրորդ արշավանքին են վերաբերում վրաց աղբյուրների հետևյալ վկայությունները.

1. *Տես* Н. Я. Марр, Антиох Стратиг, Пленение Иерусалима персами в 614 г. [1909, стр. 25]. «Մինչ այդ Հերակլ կայսրը շտապեց զորք հավաքել և... մարտիկների անհաշիվ խմբեր բաժնի կողմերից, բազմաթիվ ցեղերից և անթիվ ժողովուրդների բազմությամբ ուղևորվեց էվքսինյան Պոնտոսի վրայով, որը իրենից ներկայացնում է ընդարձակ ծով հյուսիսում: Նրա հետ էր կինը: Նրբ Հերակլը հասավ Տրապիզոն, Մինգրելիայի սահմաններում, կինը ծնեց որդի, որին նա անվանեց Հերակլ: Այդտեղից Հերակլը դեսպաններ ուղարկեց [թուրքական] թագավորի մոտ առատ նվերներով: Թուրքական թագավորը ընդունեց Հերակլի դեսպաններին և տվեց միանալու խոստում, որից հետո Հերակլը գնաց թուրքական հողը»:

2. *Ջվանշիր, Համառոտ պատմութիւն Վրաստանի* [Վենետիկ, 1884, գլ. 15, էջ 96—97]:

«Իսկ զՓոկաս սպանեալ Հերակլայ՝ ազգականին Մուրկայ և թագաւորեալ ի վերայ Յունաց և ածեալ զօր յարևմտից ի թուրքաց բազում յուլժ, և ել ի խնդիր կենսատու խաչին, ճանապարհ կալեալ ընդ Հայս՝ եկն ի Բզնունիս և անտի ելանէ ի Տփիսիս»:

Առաջին հատվածում հետաքրքիր է այն հաղորդագրությունը, որ «Հերակլը հասավ Տրապիզոն» Մինգրելիայի սահմաններում». այսինքն, ինչպես ճիշտ նշում է Ն. Մառը, Մինգրելիայի, որ հաս-

¹ Ю. Кулаковский, История Византии, т. III, էջ 75:

կացվում է Հազիկայի մտքով, կամ «Եգերացիների երկրի»¹։ Հետաքրքիր է, որ «Աշխարհացույցի» մեջ ևս որոշակի ցույց է տրված, որ Զանիկը, այսինքն՝ Մանների երկիրը, կամ լազերի, որ գտնվում էր Տրապիզոնի մարզի շրջանում, եղել է Եգերիա-Կոլիսիդայի մի մասը²։ Ուստի կարելի է հնարավոր և նույնիսկ հավանական համարել, որ Եգերիա — Հազիկայի տակ, որտեղից Հերակլը եկել էր Թիֆլիս, պետք է. ենթադրել ոչ թե Արևմտյան Վրաստանի այժմյան Մինգրելիան, այլ «լազերի երկիրը» Տրապիզոնի մարզում։

Ուշագրավ է նաև այն, որ Զվանշիրի «Վրաստանի համառոտ պատմության» մեջ Հերակլի ճանապարհը դեպի Թիֆլիս ցույց է արված ոչ թե Արևմտյան Վրաստանից Սուրամի լեռնանցքի վրայով, այլ Հայաստանի և Բզնունիքի [՝]։

Ենթադրել Հերակլի ճանապարհի ուղղությունը դեպի Թիֆլիս հին-հայկական Բզնունիքի վրայով, որ գտնվում էր Վանա լճի հյուսիս-արևմտյան անկյունում, իհարկե, միանգամայն անհավանական է։ Ուստի կարելի է ենթադրել, որ Բզնունիքը Զվանշիրի մոտ աղավաղում է և կարելի է որոշ վստահությամբ ենթադրել, որ հունարեն բնագրում, որը հիմք է ծառայել վրացական հաղորդագրությանը, դրված է եղել հավանորեն ոչ թե «Բզնունիք», այլ βελαν որ հիշված է Գևորգ Կիպրացու մոտ Տրապիզոնի երկրամասում թեմական քաղաքների թվում³։ Զվանշիրի վկայության այդ նոր մեկնաբանությամբ Հերակլի ճանապարհը դեպի Թիֆլիս կարելի կլիներ ենթադրել ոչ թե Ֆազիս-Ռիտն գետի ավազանից Սուրամի լեռնանցքով, այլ Տրապիզոնի մարզից Երզնկայի վրայով դեպի Վիդանա, որ գտնվում էր Եփրատի ափին, Կոթուրից հարավ, և այդտեղից Կարինի, Վանանդի և Շիրակի վրայով դեպի Թիֆլիս։

Մեր կողմից քննարկված Վրացական աղբյուրների վկայությունները, ինչպես տեսնում ենք, կասկածի տակ են դնում այն գիտնականների ենթադրությունը, որոնք Հերակլի ելակետը երկրորդ պարսկական արշավանքի ժամանակ ենթադրում են ոչ թե Տրապիզոնի շրջանից, այլ այժմյան Մինգրելիայից, կամ այժմյան Աջարայից։ Կարծում եմ, որ Հերակլի ընթացուղին դեպի Թիֆլիս չի կարելի վերջնականապես որոշված համարել և մնում է դեռևս վիճելի։

Գալով Թիֆլիս, կայսերական զորքերը պաշարեցին քաղաքը խազարների հետ միասին։ Բայց պաշարումը խիստ ձգձգվեց, ուստի

¹ Антиох Стратиг, էջ 25, ծանոթ. 4։

² Армянская география, пер. Паткамова, 1877, էջ 38—39։

³ Georgii Cyprii, Descriptio orbis Romani, ed. H. Gelzer, 1890, p. 78.

դաշնակիցները որոշեցին ժամանակավորապես այն դադարեցնել: Խազարները վերադարձան իրենց երկիրը, իսկ Հերակլը, վերցնելով նրանցից 40.000 հեծելազոր, սրընթաց առաջ գնաց դեպի Պարսկաստանի խորքը [627 թվի աշնանը]:

Հերակլի այդ նոր արշավանքի ընթացողին դեպի Պարսկաստան ցույց է տրված Սեբեոսի մոտ նրա հետևյալ հաղորդագրության մեջ.

«Յայնժամ առեալ Երակլի զզարս իւր՝ դարձաւ յերկիրն Հայոց, անցեալ ընդ Շիրակ հասանէ ի հուն գետոյն Երասխայ, և անց ընդ գետաւն առ Վարդանակերտաւն Թաւաւ, ետքեալ քափեցաւ ի Գոգովիտ գաւառ: Եւ Ռոճիկ Վահանայ և զաւրուն պարսից կարծեցեալ զնոսա փախստական գնալ: Իսկ նորա ճանապարհ կալեալ ի Հեր և ի Զարեանդ գաւառ, դէպողիդ ի Տիզբոն ի վերայ հոսորովու: Եւ իբրեւ միջամուկ եղև ի սահմանս Ատրպատական գաւառի, ապա ուրեմն լուր եղև Ռոճ Վահանայ, առ զզարս իւր և գնաց զհետ նորա ի Նախճաւան քաղաք: Այնպես փութով գնացեալ զտիւ և զգիշեր, մինչև չոգաւ հհառ մերձ ի նա: Եւ նորա անկեալ յայնկոյս լերինն Զարասպայ յերկիրն Ասորեստանեայց: Եւ ստքա պնդեցան զհետ նորա. և նոցա դարձեալ ընդ արևմուտս՝ գնաց ի Նինուէ՞»¹:

Մեջ բերված Սեբեոսի մանրամասն ցուցմունքները, աշխարհագրական տվյալների լիակատար որոշակիություն չնորհիվ, հնարավորություն են տալիս պարզել բավականաչափ ճշտությամբ Հերակլի ընթացողին Թիֆլիսից դեպի Նինվեի շրջանը:

Ճանապարհի առաջին մասը Թիֆլիսից մինչև Արաքսի հունը Վարդանակերտի մոտ համապատասխանում է, ընդհանուր առմամբ, Պոմպեոսի ընթացողուն, որը գնացել էր հակառակ ուղղությամբ Արտաշատի շրջանից դեպի Հարմոզիկա, որ գտնվում էր Կուր գետից և այժմյան Մցխեթից դեպի հարավ²:

Թիֆլիսի շրջանից Հերակլի զորքը առաջ էր գնացել Կուր գետի երկարությամբ դեպի այժմյան Բորժոմ, իսկ այնուհետև կամ Բակուրիանիի ու Խոսպիայի վրայով [Caspiae—Պետինգերյան քարտեզի, այժմյան Ախալքալաքից ոչ հեռու] կամ Ազդրի վրայով դեպի Մինադա [Ad-Metcurium—Պետինգերյան քարտեզի, այժմյան Ախալցխայից ոչ հեռու], և այդտեղից Շիրակի վրայով դեպի Վարդանակերտ, որի տեղագրությունը պետք է ենթադրել Արտաշատից դեպի արևմուտք: Իմ «Տիզբոն II և Հոռմը» աշխատության մեջ

¹ Սեբեոս, Թիֆլիս, 1912, գլ. ԻԶ, էջ 150—151:

² Տե՛ս իմ հոդվածը՝ «Круговой путь Помпея в Закавказье», ВДИ. № 4. 1939, էջ 74—76.

ցույց է տրված, որ հետագա վարդապետների մոտ, գետանցքի վրա-
յով պետք է անցած լինեին Արաքս գետը նաև Պոմպեոսը [66 թ.] և
Դոմիցիոս Կորբուլոնը [58 թ.], որոնք տանում էին իրենց զորքերը
գնդի Արտաշատ շրջանցիկ ճանապարհով¹։



Հարց 7.

Անցնելով Արաքսի հունի վրայով, Հերակլի զորքը շարունակել էր ճանապարհը, ինչպես դժվար չէ որոշել, Պևտինգերյան քարտեզի Artaxata — Gobdi² ուղեգծով: Այդ պատմական ճանապարհը հիշված քարտեզում գնում է հետևյալ ուղղությամբ՝ Artaxata 39... Calispil=Ortispil, հին հայկ. Որդասու, Կոզովիտում, այժմյան Թավրիզից ոչ հեռու] 27 Sorvae 24 Anteba [Artaza, հին հայկ. Արտազ] 24 Nasebi [հին հայկ. Նվարսակ] 17 Gobdi [հոյ] 24 Filadelfia 20 Trispeda կամ Tarspedo [այժմյան Տասվիշ] 45 Paresaca [հին հայկ. Պարսք]:

խոյից դեպի հարավ, ինչպես ցույց է տրված վերևում, հիշվում են հին աղբյուրներում երկու պատմական ճանապարհ. մեկը Մարանդի և Թավրիզի վրայով, իսկ մյուսը Տաավիջի վրայով, որ գնում

¹ «Տիգրան II և Հռոմը», Երևան, 1943, է, 189.

² ՇՀալաաստանի պխավոր ճանապարհները, 1936, էջ 139—172 և 246—248.

³ Կայարանների մեջ դրված թվերը ցույց են տալիս տարածությունները հոս-
մակալան մղոններով [1.4815 կմ]։

էր Ուրմիա լճի արեւելյան ափերով: Հերակլի ճանապարհի՝ ուղղությունը, որը Սեբեոսի մոտ ցույց է տրված Զարեանդի շրջանի վրայով, որը գտնվում էր Ուրմիա լճի հյուսիսում, որոշվում է ոչ թե Մարանդ — Թալրիզի վրայով, այլ Տապիշի:

Աջի-չայ գետը անցնելուց հետո, որից ոչ հեռու գտնվում էր Պետինգերյան քարտեզի Paresaca կայարանը, Հերակլի զորքը շարունակեց ճանապարհը, ինչպես նշված է իմ «Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ»¹ աշխատության մեջ, Դեհարկանի շրջանից այժմյան Միյանգուաբի վրայով դեպի Սոուդորուլադ և ախտեղից Զարասպ [Զագրոս] լեռնաշղթայի վրայով դեպի Ասորեստան:

Անգլիական գիտնական Նորման Բեյնզը, որը ենթադրում էր հիշված ճանապարհը Ուրմիա լճի արևմտյան կողմի երկարությամբ, այսինքն՝ այժմյան Սալմասի և Ուրմիայի վրայով, բոլորովին նկատի չի առել, որ կայսերական զորքը Ասորեստան է մտել ոչ թե հյուսիսից, այլ արևելքից²: Նա անցել է, ինչպես որոշակի հաղորդում է Սեբեոսը, Զարասպ լեռան մյուս կողմը, այսինքն՝ Զագրոս լեռնաշղթայի այն մասը, որտեղ գտնվում է Կելիշինի լեռնանցքը³:

Թեոֆանի վկայությամբ, դեռևս մինչև կայսերական զորքերի Ասորեստան մտնելը, Հերակլին թողել էին նրա դաշնակից խազարները: Չնայելով դրան, բյուզանդական զորքը անդադար շարունակել էր իր արշավանքը դեպի Պարսկաստանի խորքը⁴:

Զարասպ-Զագրոս լեռը անցնելուց հետո Հերակլի ընթացուղու մասին որոշ տեղեկություններ հաղորդում է միայն Թեոֆանը: Իջնելով զորքերի հետ միասին Ասորեստան, ինչպես հաղորդում է Թեոֆանը, Հերակլը մտել էր ինայտուի մարզը⁵, որը գտնվում էր Ռեանդուլից դեպի հարավ, որտեղ նա իր զորքին յոթը օր հանգիստ տվեց: Խողնելով ինայտուն, նա առաջ գնաց դեպի հարավ և ավերեց հարակից տեղերը: Աղբյուրների վկայություններից երևում է, որ Հերակլի երկրորդ արշավանքը ևս, ինչպես և նրա առաջին արշավան-

¹ Երևան, 1945, էջ 13—14 և 49:

² Cambridge Medieval History II, 1936, էջ 298. Հերակլի ճանապարհը Ուրմիա լճի արևմտյան ուղղությամբ ենթադրել է նաև Կուլակովսկին [История Византии, III, էջ 94]:

³ «Պատմական-աշխարհագր. մանր հետազոտություններ» իմ աշխատությունը, էջ 9—14 և 48—49:

⁴ Theoph. A. M. 6118:

⁵ Rawlinson, Memoir on the Site of the Atropatenian Ecbatana, JRGS. X, 1841, p. 73. Hoffmann, Auszüge aus syrischen Akten persischer Märtyrer. S. 216:

քը ունեցել է անխնա ոչնչացման բնույթ։ Կայսերական զորքերը հրի ու սրի էին մատնում ինչպես պարսկական քաղաքները և գյուղերը, այնպես էլ գերի վերցրած պարսիկներին։

Կռիվը Հերակլի հետ պետք է վարեր պարսից զորավար Ռախ-զադը, հենց նա, որը Սեբեոսի վերևում բերված հաղորդագրության մեջ անվանված է Ռոճիկ Վահան։ Այդ Ռախզադը, որ հետապնդում էր Հերակլին Նախիջևանից, ընկել էր շատ ծանր դրության մեջ, բերով հետև գնում էր Հերակլի կողմից ավերված տեղերով. այդ հանգամանքը խիստ դժվարացնում էր նրա զորաբանակի մատակարարումը սննդամթերքով։ 627 թվի դեկտեմբերի 1-ին, ինչպես հաղորդում է Թեոֆանը, [A. M. 6118] Հերակլի զորքերը անցան Մեծ Զաբ գետը և բանակ դրին Նինվեի մոտ։ Նրանց հետևից նույն տեղը նկավ Ռախզադի զորքը և բանակ դրեց նրանց բանակատեղի մոտ։ 'Իեկտեմբերի 12-ին տեղի ունեցավ վճռական կռիվ, որտեղ պարսկական զորքը կրեց ծանր պարտություն։ Կռվում ընկան ինքը՝ Ռախզադը և նրա զորավարների մեծագույն մասը։

Տարած հաղթությունից հետո Հերակլի զորաբանակը շտապ կարգով գնաց դեպի հարավ 627 թվի դեկտեմբերի 23-ին, անցավ Փոքր Զաբ գետը և դադար առավ Իսդեմ պարսիկ ազնվականի հարուստ կալվածքում, որտեղ և տոնեց Քրիստոսի ծննդյան տոնը [627 թվի դեկտ. 25-ին]։ Այնուհետև նա մոտեցավ Խոսրովի Ռուսա կոչվող պալատին և այն ավերեց [Թեոֆան A. M. 6118]։ Իր հոգևածում, որ տպված է IRGS-ի մեջ [X, 1841], Ռավլինսոնը նմանեցնում է Ռուսան, տեղափոխելով վանկերը, Sori կամ Bet Sori-ին։

Նինվեի մոտ ջարդված պարսից զորքը, օգնություն ստանալով, շտապեց գնալ Տիգրեսի պաշտպանությանը և, շրջանցելով Հերակլին, անցավ Տորնա գետը [Թեոֆան, A. M. 6118] ու տեղավորվեց նրա ձախ ափին։ Կայսրը ենթադրեց, թե պարսիկները ուզում են ցույց տալ դիմադրություն Տորնայի կամուրջի մոտ։ Բայց երբ Հերակլը մոտեցավ, թշնամին փախավ, և կայսերական զորքը անարգել կերպով կամուրջով անցավ գետը։

Տորնա գետը անցնելով, Հերակլի զորքերը գրավեցին 628 թվի հունվարի սկզբներին Բեկլալ և Բեդդարիս պալատները [Թեոֆան A. M. 6118] և Խոսրովի աթոռանիստ Դաստակերտը, որտեղ բացի այլ հարուստ ավարից, խլեցին 300 հռոմեական դրոշակներ, որ պարսիկները վերցրած են եղել տարբեր ժամանակներում։

Հիշված կետերի տեղը, չնայելով գիտական գրականության մեջ եղած տարաձայնություններին, ընդհանուր առմամբ կարելի է համարել բավականաչափ պարզված։ Սեն-Մարտենը ենթադրում էր,



Քարտեզ 8.



Բարեկ Զ.

որ Տորնա գետը, որ Պլինիոսի մոտ անվանված է Tornadotus [VI, 27] և Քսենոֆոնի մոտ Physcus [Anabasis III, 4], եղել է Տիգրիս գետի վտակը և այժմ կրում է Katri-Sou անունը¹։ Ռավլինսոնի կարծիքով Տորնան կարելի է նույնացնել Naharvan ջրանցքի հյուսիսային գետաբազուկին, որը գտնվում էր Փոքր-Ջաբ գետից 80 անգլիական մղոն հեռավորության վրա²։

Վերևում հիշված Բեկլալ և Բերդարիս պալատները և Թագավորական Դաստակերտ աթոռանիստը, ինչպես երևում է Թեոֆանի հաղորդագրությունից [A. M. 6118], եղել են համեմատաբար իրար մոտ և Հերակլի ու իր զորքի կողմից գրավված են եղել համարյա միաժամանակ, հունվարի առաջին օրերը։ Ուստի դժվար չէ համոզվել, որ նրանց տեղը պետք է եղած լինի այժմյան Դիալա գետի միջին հոսանքի ձախ կողմը։ Այդ գետից ոչ հեռու գտնվել է Դաստակերտը։ Սասանյան Թագավորների այդ նշանավոր աթոռանիստի ավերակները, որ ներկայումս հայտնի են Իսկի-Բաղդադ անվան տակ, ինչպես պարզված է, գտնվում են Շահրաբան գյուղի մոտ, Խանիկինից դեպի Բաղդադ գնացող ճանապարհի վրա, Բաղդադից 16 փարսախ և Խանիկինից 14 փարսախ հեռավորության վրա³։

Կողոպտելով ու ավերելով Դաստակերտը 628 թվի հունվարի 7-ին, Հերակլը գնաց ավելի հարավ Տիգրոսի կողմը, որ գտնվում էր Դաստակերտից 105—110 կմ հեռավորության վրա։ Դուրս գալով Դաստակերտից, Հերակլը անցավ երեք օրվա ճանապարհ և կանգ առավ գետից 12 մղոն հեռավորության վրա, կամ ավելի ճիշտ, Նահրավան ջրանցքից [Թեոֆան A. M. 6118], որի մոտ, Տիգրոսից 19 մղոն հեռավորության վրա կանգնած էին պարսիկ զորքերը։ Այստեղից կայսրը ուղարկեց հեծյալ հետախույզների մի ջոկատ, որը նրան հաղորդեց, որ վամուրջները քանդված են և անցումը Նահրավանի վրայով հնարավոր չէ։

Հերակլը ստիպված էր ընդհատել առաջխաղացումը և վճռեց ետ նահանջել։ Նրա նահանջի ճանապարհը տրոշվում է բավականաչափ ճիշտ՝ Դիալա գետի հոսանքով դեպի վեր, իսկ հետո, Շահրիգուրի մոտ Զարասպ-Ջագրոս լեռներում դժվար լեռնանցքը անցնելուց հետո դեպ Գանձակ Ատրպատականի։

Դուրս գալով Նահրավան ջրանցքի մոտակա շրջանից, Բյուզան-

¹ Histoire du Bas-Empire par Lebeau, ed. par M. de Saint-Martin XI, 1830, p. 136, ծան. 2.

² Rawlinson JRGS, X [1841], p. 93.

³ Նույնը, p. 93 sq; Б. Бартольд, Историко-географич. обзор Ирана, 1903, էջ 132

դական զորքը ետ նահանջեց հյուսիս-արևելյան ուղղությամբ և եկավ Շահրիզուր [Թեոֆան Ա. Մ. 6118], որը գտնվում էր այժմյան Սուվեյմանիայից դեպի հարավ-արևելք, Տիզբոնի ու Ատրպատականի Գանձակի կրակապաշտների գլխավոր տաճարի կես ճանապարհին¹։

Շահրիզուրում Հերակլը մնաց, ինչպես Թեոֆանը հաղորդում է, համարյա ամբողջ փետրվար ամիսը, և այդ ժամանակը նրա զորքերը քանդում և ավերում էին շրջակա գավառները։ Փետրվարի 24-ին Հերակլի զորքերը սկսեցին իրենց երթը Զարասպ-Ջագրոս լեռների վրայով և անցնելով լեռնանցքը անընդհատ տեղացող ձյան տակ, հասան Բարզա փոքրիկ տեղը [Թեոֆան, Ա. Մ. 6118], որտեղ նրանք հանգստացան, մնալով 7 օր։ Ինչպես միանգամայն ճիշտ ցույց է տվել Ռավլինսոնը, Բիբլա փոքրիկ տեղը կարելի է նույնացնել այժմյան Berozeh²-ին Baneh մարզում, որը գտնվում է Ջեկե-տու-չալ գետի ակունքների մոտ, որ թափվում է Ուրմիա լիճը։

Սակայն, պետք է նշել, որ գիտնականներից շատերը, հիմնվելով, ըստ երևույթին, Զատկական ժամանակագրության ոչ բավարար չափով պարզ հաղորդագրությունների վրա, անթաղրում են, որ Զարասպ-Ջագրոս լեռնաշղթան գտնվում էր ոչ թե Շահրիզուրի և Բարզայի միջև, ինչպես ցույց է տրված վերևում, այլ Բարզայի և Ատրպատականի Գանձակի միջև։ Բարզա փոքրիկ տեղի և Բան Բան մարզի տեղագրությունը, որ գտնվում էին Ատրպատականի Զագրոս լեռնաշղթայից դեպի արևելք, նրանք սխալմամբ ենթադրում են այդ լեռնաշղթայից դեպի արևմուտք, այսինքն՝ Ասորեստանում³։

628 թվի մարտի 8-ին Հերակլը դնաց իր ղորքով դեպի Ատրպատականի Գանձակ քաղաքը և այնտեղ հասավ մարտի 11-ին։ Այնտեղ նա իր զորքին տվեց երկարատև հանգիստ։ Դեռևս մինչև Գանձակ հասնելը կայսրը տեղեկություն էր ունեցել Պարսկաստանում տեղի ունեցած արյունալի հեղաշրջման մասին։ Եվ Գանձակում Հերակլի կանգառի ժամանակ նրա մոտ եկավ Կավատ թագավորի պաշտոնական դեսպանությունը, որը հաղորդելով նրան իոսրովի մահապատժի մասին [628 թվի փետրվարի 29-ին] և Կավատի թագավորաց թագավոր հռչակելու մասին, սկսեց նրա հետ բանակցություններ խաղաղության մասին։ Դրանից հետո, 628 թվի ապրիլի 8-ին Հերակլը Գանձակից վերադարձավ Հայաստան։

¹ В. Бартольд, Историко географический обзор Ирана, էջ 138.

² JRGS, X, 1841.

³ The Cambridge Medieval History, II, p. 299. Ю. Кулаковский, «Ист. Византии, II, էջ 102 և ուրիշ»։

Հերակլի հետադարձ ճանապարհը Ատրպատականից Հայաստանի վրայով դեպի Բյուզանդիա ճիշտ պարզել չի կարելի, որովհետև սկզբնաղբյուրները չեն տալիս դրա մասին ճշգրիտ տեղեկություններ: Մի քանի ցուցմունքներ դրա վերաբերմամբ կան հայկական և վրացական ուշ շրջանի աղբյուրներում, սակայն այդ վկայությունները կամ ավանդական են, կամ վիճելի, տուտի և հենվել նրանց վրա խիստ վտանգավոր է:

Սկզբնաղբյուրների հաղորդագրություններից հայտնի է միայն, որ Հայաստանից կայսրը գնաց դեպի վերին Միջագետք, որտեղ նշանավորեց իր Ամիդում լինելը մեծ տաճարի հիմնադրությամբ [628—629 թվականների ձմեռը]¹:

¹ Chronique de Denys de Tele-Mahré, Paris, 1895, p. 5:

ԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝

(ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

Արարական արշավանքների և արարական տիրապետության ժամանակ Հայաստանում տեղի ունեցած անցքերի մասին կարևոր տեղեկություններ են հաղորդվում ոչ միայն հայկական, այլև արաբական, ասորական և բյուզանդական աղբյուրներում. սակայն այդ տեղեկությունները խիստ հակասական են և ժամանակագրական իրենց տվյալներով՝ խառնաշփոթ ու անհաշտելի, չնայած որ Հայաստանի պատմության այս շրջանը քննության է առնված բանասիրական ու պատմագիտական բազմաթիվ աշխատություններում, սակայն ժամանակագրության վիճելի հարցերից շատերը մնում են մինչև այժմ շփոթ ու անորոշ վիճակում:

Ուշագրավ է նաև, որ ժամանակագրական ակնբախ այդ սխալները, մանավանդ, արարական առաջին արշավանքների մասին Հայաստանում, կրկնվում են շարունակ ոչ միայն հայագիտական, այլև եվրոպական ու ռուսական նորագույն ուսումնասիրություններում, որ վերաբերվում են Բյուզանդական կայսրության և արաբական խալիֆայության պատմության: Արդ՝ աչքի առաջ ունենալով ճշտված ու հաստատուն ժամանակագրության կարևորությունը, նաև ժամանակագրական այն անճշտությունները, որ հանդիպում են վերոհիշյալ աշխատություններում, առաջ ենք բերում ներքև մեր մի քանի դիտողությունները արաբական առաջին արշավանքների ժամանակագրության մասին, որ թվում են մեզ հիմնավոր ու հավանական:

¹ Տե՛ս Հ. Մանանդյան, Մանր հետազոտություններ, Երևան, 1932 թ., էջ 23—64:

Հայկական և արարական աղբյուրների վկայութուններին հայտնի է, որ արարներն առաջին անգամ մտել են Հայաստան հարավից՝ հյուսիսային Միջագետքը նվաճելուց հետո: Թեև այդ վկայութունները որոշ կետերում իրենց բովանդակությամբ տարբերվում են, սակայն արշավանքի ժամանակի նկատմամբ նրանք, ինչպես կտեսնենք, միանգամայն համերաշխ են:

Առաջին այս մեծ արշավանքի մասին հայկական աղբյուրները տալիս են հետևյալ տեղեկությունները.

1. «Յովհաննու Մամիկոնեանի եպիսկոպոսի, Պատմութիւն Տարօնոյ», Վենետիկ, 1832, էջ 57—58:

«Ապա ի սոյն ամի ելանէ, Հերակլ, և սպանանէ զհոսրով. և յիշեաց զերգումն՝ զոր ընդ Տիրան և ընդ ինքն, և կացուցեալ մարդպան ամենայն Հայոց, և ինքն գնաց ի Կոստանդինուպօլիս: Եւ յետ ութ ամի եկն Արգուհիմ քեռորդի Մահմետի բազում աղխիւ, ութևտասն հազար առնեծիոյ ընդ իւր բերեալ, խնդրէր հարկս ի Հայոց: Իսկ Տիրան արձակեաց ժողով լինել համօրեն զօրու ի պատերազմ: ... Իսկ Արգուհիմ անցանէ ի Հայք և ի Բասեան, ի Վիրք և ի Զաւախս և ի Վանանդ. և առեալ հարկս, դառնայ ի Տաճկաստան»:

2. «Պատմութիւն սրբոյն Ներսիսի և գիւտ նշխարաց». Սոփերք հայկականք, է, Վենետիկ, 1853, էջ 43—44:

«Քանզի Հերակլ արքայն Յունաց յետ ութսուն ամի թուականին Հայոց ելանէ ի պատերազմ ընդ հոսրով արքային Պարսից և սպանանէ զնա. և յետ ութ ամի այսմ լինելոյ՝ Արգուհիմ քեռորդին Մահմետի՝ ելանէ ութևտասն հազարաւ ի Հայս, խնդրել հարկս և կոտորել զզօրս քրիստոնէիցն որ ի Տարան գաւառի. և անցանէր ի Հարք և ի Բասեն, ի Վիրք և ի Զաւախս և ի Վանանդ. և առեալ հարկս դառնայ ի Տաճկաստան»:

Վերոհիշյալ վկայութունները, ինչպես տեսնում ենք, գրեթե նույնն են: Երկրորդ վկայութունը քաղված է, հավանորեն, Հովհան Մամիկոնյանի պատմութունից. հնարավոր է սակայն, որ իրար համապատասխանող այս վկայութունները ծագում են մի երրորդ՝ մեզ մի անհայտ աղբյուրից:

Երկրորդ վկայության այն տեղեկությունը, թե իբր հոսրով Բ-ին սպանել է Հերակլը «յետ ութսուն ամի թուականին Հայոց»,

ճիշտ չէ: Ինչպես հայտնի է, Խոսրով Բ-ի սպանությունը Կավատի հրամանով տեղի էր ունեցել Կեստր. 25-ին 628 թվին, այսինքն՝ Հայոց 22 թվին (=23 հունիս 627 — 22 հունիս 628 թ.): Սակայն մեր հաշիվների համար այդ սխալը կարևոր չէ. կարևոր է այն, որ արաբական այս արշավանքի տարեթիվը որոշված է «յետ ութսուն» և «ութ ամիս» թվականության Հայոց:

Հիմնվելով վերոհիշյալ վկայությունների վրա՝ պատմաբանները և բանասերները ենթադրել են արշավանքի ժամանակը 636 կամ 639 թվականներին:

636 թվին — Չամչյան (Պատմություն Հայոց, Բ, Վենետիկ 1785, էջ 342), Բասմաջյան (Իսկական պատմություն Հայոց, Պոլիս 1919, էջ 295) և ուրիշները, իսկ 639 թվին — Dulaurier, [Recherches sur la chronologie arménienne, Paris, 1859, էջ 225]. Tournebize [Histoire politique et religieuse de l'Arménie, Paris, 1900, էջ 96]. Arslan Kevork [Etudes historiques sur le peuple arménien, Paris, 1909, էջ 275] և Morgan [Histoire du peuple arménien, Paris 1919, էջ 115]:

Բանասերների առաջին խումբը արշավանքի թվականը հաշվել է Խոսրով Բ-ի մահից ութը տարի հետո (628—8) 636 թվին, իսկ երկրորդ խումբը հենվել է, ըստ երևույթին, Dulaurier-ի հաշվի վրա (Recherches, էջ 225), որը երկրորդ վկայության համաձայն արշավանքի թվականը ենթադրել էր հայոց 88 թվականին, այսինքն՝ 551—88=639 թվին:

Ինձ թվում է, որ թե առաջին և թե երկրորդ հաշիվը չեն համապատասխանում վերոհիշյալ վկայություններին: «Յետ ութ ամիս Խոսրով Բ-ի մահից, այսինքն՝ 628—8=636 թվից հետո՝ կստանանք ոչ թե 636, այլ 637 թիվը, իսկ «յետ ութսուն ամի թուականին Հայոց» և «յետ ութ ամի այսմ լինելոյ», այսինքն՝ 551—88=639 թվից հետո՝ արշավանքի թվականը կլինի դարձյալ ոչ թե 639, այլ 640 թվին:

Ի նկատի ունենալով, որ վերոհիշյալ երկրորդ վկայության մեջ ժամանակագրական տեղեկություններն ավելի լրիվ են և ծագում են, հավանորեն, սկզբնական աղբյուրից, պետք է ենթադրել, որ Հովհան Մամիկոնյանի պատմության այժմյան բնագրում ժամանակագրական նույն տեղեկությունները համառոտված են, ուստի և չեն կարող հիմք ծառայել արշավանքի թվականի որոշման: Եթե այդ պեպես է, ուրեմն, առաջին այս արշավանքի ժամանակը դրվելու է ըստ վերոհիշյալ վկայության, ոչ թե 637, այլ 640 թվականին:

Արաբական նույն այս արշավանքին են վերաբերում, ինչպես ճիշտ դիտել է Մկրտիչ Ղազարյանն իր «Armenien unter der arabischen Herrschaft» աշխատության մեջ (Marburg, 1903, էջ 16—17), արաբական աղբյուրների հետևյալ վկայությունները.

1. Բեյլազորի, հրտր. de Goeje, Leiden 1870, էջ 176. հայերեն թարգմանությունն առաջ ենք բերում Բագրատ խալաթյանցի աշխատությունից՝ «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», Վիեննա, 1919, էջ 74—75:

«Իյադ նվաճեց Ամիդ առանց ճակատամարտի՝ Ուհայյի խաղաղության հիման վերա, նույն օրինակ և Մայաֆարեկին. իսկ Կաֆարտուֆ ամրոցը և Մծբին՝ կռվով, նույն պայմանների հիման վերա. նույն կերպ Տուր Արդին, Մարդին ամրոցը և Դարա, իսկ Քարդա և Բազաբդա՝ Մծբինի դաշին հիման վերա:

Նորա մոտ եկավ Զավազանի իշխանը և խաղաղություն կապեց նորա հետ՝ յուր հողից նորան հարկ տալու պայմանով: Այս բոլորը կատարեցավ 19 թ. և Մուհառռամի օրերից (հաշված)՝ 20 թ.: Իյադ նվաճեց Արզն Մծբինի խաղաղության հիման վերա և՛ անցնելով կիրճից՝ հասավ Բիթլիս, եկավ իլաթ և հաշտություն կապեց քաղաքի իշխանի հետ: Գալով Աղի ջուրք (Ղազարյան, Armenien unter der arabischen Herrschaft, էջ 16՝ «Zu den saueren Quellen» = «Թթու ջուրք»), որ Հայաստանումն է, նա շանցավ այն, այլ վերադարձավ և դրեց Բիթլիսի տիրոջ վերա նույն հարկը, որ նա իլաթի (քնակչաց), մեծամեծաց և իշխանի վերա էր դրած: Այստեղից Իյադ անցավ Ռաբբա, ապա Հիմս, ուր նորան Օմար կառավարիչ նշանակեց. վախճանեցավ 20 թ.»:

2. Տարարի. հրտր. de Goeje, Leiden 1879/93, 1, 2506. հայերեն թարգմանությունը տես «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», էջ 80:

«Իյադ ուղարկեց Օսման Ի. Աբի-լ-Ասսին Չորրորդ Հայքախատեղ Սաֆֆան Ի. Մուաթթալ Սուլամին նահատակեցավ տեղի ունեցած մի ճակատամարտի մեջ: Բնակիչք խաղաղություն հաստատեցին Օսման Ի. Աբի-լ-Ասսի հետ՝ յուրաքանչյուր ընտանիքից մի դենար վճարելու պայմանով»:

3. Տաբարիի հիշյալ վկայությունը մեջ է բերված նաև Իբն-ալ-Աթիրի մոտ, հմմտ. «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», էջ 127:

Արաբական աղբյուրների տեղեկությունները, ինչպես տեսնում

ենք, տարբեր են մի քանի կետերում թե իրարից և թե վերոհիշյալ հայկական վկայություններից: Այդ շեղումները և տարաձայնությունները բացատրվում են մասամբ նրանով, որ յոթերորդ դարի անցքերի պատմությունը հիմնված է արաբական աղբյուրներում, գլխավորապես, բանավոր հիշողությունների և ավանդությունների վրա: Բացի այդ՝ պետք է նաև ի նկատի ունենալ, որ հայկական վկայություններում հիշատակված են արաբական արշավանքները Տարսուսում և Հայաստանի հյուսիսային շրջաններում, իսկ արաբական աղբյուրների մեջ՝ հյուսիսային Միջագետքում և Չորրորդ Հայքում: Հնարավոր է նույնպես, որ արաբական զորքերը կարող էին ներս խուժած լինել զանազան ուղղությամբ տարբեր զորավարների առաջնորդությամբ:

Տարարին և Իբն-ալ-Աթիրն արշավանքի ժամանակը դնում են Հեջիրի 19-ին, այսինքն՝ 640 թվին (Հեջիրի 19 թիվը=640 թվին, մինչև դեկտեմբերի 20-ը), իսկ Բելադորին՝ Հեջիրի 19-ին և 20 թվի «Մուհառամի» օրերին, այսինքն՝ 640 թվին մինչև 641 թվի հունվար ամսի կեսերը: 20 թվին Մուհառամ ամսի 1 կիզբն ընկնում է դեկտեմբերի 21-ին 640 թվի: Ինչպես տեսանք, արշավանքի նույն այս 640 թվականը մատնանիշ է արված նաև «Պատմութիւն սրենբսիսի» գրվածքում: Ուրեմն՝ վերոհիշյալ արշավանքի ժամանակի նկատմամբ հայկական և արաբական աղբյուրների վկայությունները միմյանց հետ համերաշխ են և համաձայն:

Որ արաբների մուտքը Հայաստան չէր կարող լինել 636 կամ 637 թ., այդ միանգամայն որոշ է ու անվիճելի: Արաբները չէին կարող Հայաստան մտնել Միջագետքը և նրա գլխավոր քաղաքները գրավելուց առաջ: Իսկ Միջագետքի նվաճումը, ինչպես հայտնի է արաբական, ասորական և բյուզանդական աղբյուրների վկայություններից, տեղի էր ունեցել 639—640 թ.:

Ասորական աղբյուրներից Միքայել Ասորին, օրինակ՝ պարզ վկայում է, որ արաբներն առաջին անգամ անցել են Եփրատ գետը և շարժվել դեպի հյուսիս 951 թվին հունաց, 29 Հերակլի, 18 արաբների, 6 Օմարի» այսինքն՝ 639—640 թ. (տես Chronique de Michel le Syrien, ed. par Chabot, T. II, էջ 426):

Ինձ թվում է՝ հիմնվելով բոլոր այս ուշագրավ դիտողությունների վրա՝ կարող ենք վստահորեն եզրակացնել, որ արաբներն առաջին անգամ մտել են Հայաստան հյուսիսային Միջագետքի կող-

¹ Նույն այս թվականն ունի նաև Ասողիկը [Պետերբ. 1885], էջ 98՝ «Յաուրս յայսոսիկ և յիշխանութեանն Թեոդորոսի Ռշտունայ 192 թուականին եղև առաջին ելք ի Հայս Տաճկաց, հրամանաւ Օմարայ»:

մից ոչ թե 636, 637 կամ 639 թվականներին, ինչպես այդ մատնացույց է արվում հայ և օտար ուսումնասիրություններում, այլ 640 թվին:

2. ԴՎԻՆԻ ԱՌՈՒՄԸ՝ 640 Թ., ՀՈԿՏԵՄԲ. 6-ԻՆ, ՈՒՐԲԱԹ

Որ արաբներն առաջին անգամ մտել են Հայաստան Միջագետքի կողմից 640 թվին, այդ դժվար չէ եզրակացնել նաև Սեբեոսի վկայությունից, որ ժամանակակից է եղել յոթերորդ դարի անցքերին:

Ներքև մենք կտեսնենք, որ Դվինի առումը, համաձայն Սեբեոսի վկայության, տեղի էր ունեցել 640 թվի հոկտեմբերի 6-ին: Արաբական զորքերը եկել էին Դվին յԱսորեստան կողմանէ՝ Տարոնը, Բզնունիքը և Աղիովիտը նվաճելուց հետո: Պարզ է, ուրեմն, որ Սեբեոսի վկայությունը ևս վերաբերում է արաբական առաջին արշավանքին, որ հիշված է նաև Հովհան Մամիկոնյանի և Պատմութիւն սր. Ներսիսի» վերոհիշյալ երկերում:

Կարևոր այս հետևությունը, որ անտարակուսելի է, աչքաթող է արված բանասիրական ու պատմական հայ և օտար աշխատություններում. ուստի անհրաժեշտ է նորից կանգ առնել այս խնդրի վրա և ուշադիր կերպով քննել հայկական, ասորական և արաբական աղբյուրների տեղեկությունները, որ հիմք են ծառայել Դվինի առման թվականի որոշման:

Վկայությունները Դվինի առման թվականի մասին բաժանվում են երեք խմբի, որ մեջ ենք բերում տեղ-տեղ հապավումներով:

Առաջին խումբ (հնագույն)

1. «Պատմութիւն Սեբեոսի եպիսկոպոսի ի Հերակլին», Թիֆլիս, 1912, էջ 175, գլ. Լ՝

«Եւ ել զաւր ապականիչ յԱսորեստան կողմանէ ընդ ճանապարհս Զորոյ յաշխարհն Տարօնոյ. առին զնա և զԲզնունիս և զԱղիովիտ: Եւ ճանապարհ կալիալ ի Բերկրոյ ձորն ընդ Որդսպոյ և ընդ Գոգովիտ՝ թափեցան յԱյրարատ: Եւ ոչ ոք կարաց ի փաւրացն Հայոց արկանել գոյժ ի Դըւին աւան. բայց արք երեք յիշխանացն, որք երթային ժողովել զզաւրն ճապաղական՝ Թէոդորոս Վահագունի, և Խաչիան Առաւելեան, և Շապուհ Ամատունի: Որք գնացեալ փախտական ի Դւին, և հասեալ ի կամուրջն Մեծամարի, ի բաց աւերեցին, և ինքե-

անք անցեալք գոյժ արկանել ի յաւանին: Եւ ի բերդն ժողովեցին զամենայն մարդիկ աշխարհին՝ որ եկեալ էին ի կութս ալգեստանին:

Բայց Թէոդորոսն գնացեալ ի նախճաւան քաղաք: Եւ հասեալ թշնամին Բուշայն ի կամուրջն Մեծամարի ոչ կարաց անցանել. բայց ունէին առաջնորդ իւրեանց զՎարդիկ իշխան Մոկաց, որ կոչէր Ակնիկ: Ապա անցեալ ընդ կամուրջն Մեծամարի, հարին ասպատակաւ զամենայն երկիրն, և ժողովեալ զաւար և զգերութիւն բազում յույժ, և եկեալ բանակեցան ի յեզր մայրուոյն Խոսրովակերտի:

Եւ եղև յաւուրն հինգերորդի դիմեցին ի վերայ քաղաքին. մատնեցաւ քաղաքն ի ձեռն նոցա. քանզի արկին մուս ջուրջանակի, մերժեցին ժխովն և նետաձգութեամբն զպահապանս պարսպին և կանգնեալ սանդուխս՝ ելին ի պարիսպն և անկեալ ի ներքս քացին զդուռն քաղաքին: Եւ դիմեալ ի ներքս զաւրք թշնամեացն սատակեցին սրով զբազմութիւն քաղաքին՝ ելին և բանակեցան ի նմին բանակատեղն. որ աւր Խէր տռէ ամսոյն՝ յատուր ուրբաթի: Եւ դադարեալ աւուրս ինչ ելին և գնացին ընդ նոյն ճանապարհ՝ ընդ որ եկեալն էին: Եւ խաղացուցին զբազմութիւն գերւոյն՝ ԼԵ հազար ոգի: Իսկ իշխանն Հայոց Ռշտունեաց տէրն դարանակալ եղեալ ի Գոգովիտ գաւառի՝ դիմէ ի վերայ նոցա սակաւուր: Եւ ոչ կարաց զդէմ ունել նոցա. փախստական լինի առաջի նոցա. և նոքա զհետ մտեալ նոցա՝ սատակէին զբազումս ի նոցանէն. և ինքեանք չորան անցին յԱսորեստան: Եւ եղև այս յամս Եզրի կաթողիկոսի: Իսկ ի ձեռն այնր պատերազմի ի կայսերէ հրաման հասեալ զաւրավարութեանն Թէոդորոսի Ռշտունեաց տեառն՝ հանգերձ պատրկութեան պատուով:

Այս ամենայն լինի ի ձեռն կաթողիկոսին Ներսիսի՝ որ յաջորդեցաւ ի նմին ամի յաթոռ կաթողիկոսութեան՝ փոխանակ Եզրի կաթողիկոսի:

2. «Անանուն ժամանակագրութիւն» Վենետիկ, 1904, էջ 77՝

«Կոստանդին՝ որդի Կոստանդիանի, թոռն Հերակղի, ամս քսանեկին: Ի սորա երկրորդ ամին առաւ Դուին ի Տաճկաց «իՂ թուականին»): և եղև համար գերերոցն ԼԵՌ»:

3. Chronique de Denys de Tel-e-Mahré, pub. et trad. par Chabot, Paris, 1895, էջ 6՝

«952 Թ. (640—641), արարենբըր պաշարեցին Դարան և հարձակվեցին այդ քաղաքի վրա... Նույն այս րվին արարենբըր պաշարեցին Դվինը (Adabln), ուր սպանվածների թիվը խիստ մեծ էր՝ մինչև 12 000 հայ»:

Համտե «Պատմութիւն հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ», Թիֆլիս, 1910, էջ 58՝ «ի կոտորելն իսմայէլի զքաղաքն Դուին երկոտասան հազար»¹:

Երկրորդ խումբ (ըստ արաբական ավանդության)

4. Բելազորի, տե՛ս «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», էջ 40՝

«Ինձ պատմել է Մահմեդ Ի. Սադ, որ լսած էր ալ-Վակիդից, իսկ սա՝ Աբդուլ Համիդ Ի. Ջաֆարից և սա՝ յուր հորից, թե Հաբիբ Ի. Մասլամա պաշարեց Դվին և մնաց այստեղ, մինչև պատահեցավ նորան Մավրիան հույնը. նա հարձակվեցավ նորա վերա գիշերը, սպանեց նորան և ավարի առավ նորա բանակը: Դորանից հետո Սալման շտապեց Հաբիբի մոտ և պատահեցավ նորան Կարինում, ինչպես ճիշտ տեղեկություն ունեն պատմողները»:

Տես նաև էջ 43՝

«Այնտեղից (Արճեշից և Բաջունայիսից) Հաբիբ եկավ Արտաշատ, որ է ալ-Քիրմիզ, անցավ Ակրատ գետը և բանակեցավ Դվինի դաշտում, ուղարկելով հեծելազորը քաղաքի վերա. ինքն ևս կամաց-կամաց առաջ գնաց, մինչև որ քաղաքի դռների առջև կանգ առավ: Բնակիչք կպաշտպանվեին, նետահարելով նորա զորքը: Հաբիբ դնել տվեց մանջալիք և սկսեց քարկոծել նոցա, մինչև որ նոքա խնդրեցին խնայել նոցա և պարգևել խաղաղություն: Հաբիբ համաձայնեցավ»:

Բելազորի պատմելով՝ Հաբիբի և Սալմանի այս արշավանքների ժամանակ, որ տեղի էին ունեցել Օթման խալիֆի (644—656) հրամանով, արաբները նվաճել են Հայաստանը, Վրաստանը և Ատրպատականը (տես «Արաբացի մատենագրեր Հայաստանի մա-

¹ Տե՛ս նաև «Սամուէլի քահանայի Անեցոյ, Հավաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ 1893, էջ 80՝

«Արդ՝ յաւորս Կոստանդի որդւոյ Հերակլեայ՝ առաւ Դուին ի Տաճկաց, ասէ պատմագիրն, և սպանին յաւուր սրբոյ յայտնութեան, ի ս: վկայարանի ս. Սարգսի ԲԺ-ան Ռ և արեամբ կոտորելոցն ծածկեցաւ սեղանն սուրբ և առաջանն. և զալլսն զերեցին՝ աւելի քան զլիշ»:

սին», էջ 36—53), Հաբիրի արշավանքը Միքայել Ասորին (Chronique, II, f. 3, էջ 440—441) դնում է Հեջիրի 25 թվին (28 հոկտ. 645—17 հոկտ. 646), Տաբարին (տես «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», էջ 89) նույն արշավանքը հիշում է Հեջիրի 24 թվին (644/645 թ.), սակայն վկայում է նաև՝ որ ըստ Վակիդիի ավանդության Հաբիր ի. Մասլամա Ֆիհրին նվաճել է Հայաստանը Հեջիրի 31 թվին (24 օգոստ. 651—12 օգոստ. 652 թ.), Այս վերջին թվականն ունի նաև Յակուբին հետևյալ հատվածում՝

5. Յակուբի, տես Բ. հալաթյանց, «Արաբացի մատենագրեր», էջ 104՝

«31 թ. Օսման ուղարկեց Հաբիր ի. Մասլամա Ֆիհրին Հայաստան և ապա Սալման ի. Ռաբիա Բահլիին՝ նորան օգնության»:

Իրն-ալ-Աթիրը ևս վկայում է, որ «31 թ. ըստ ոմանց Հայաստան նվաճեց Հաբիր ի. Մասլամա» (տես «Արաբացի մատենագրեր», էջ 129):

Ինչպես տեսնում ենք, արաբական աղբյուրները Հաբիր ի. Մասլամայի արշավանքի նկատմամբ տալիս են տարբեր թվականներ:

Երրորդ խումբ (խառն և շփոթ)

6. «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայոց», Ս. Պետերբ. 1887, էջ 8—9, գլ. Բ. և Գ՝

«Ապա ի քսան եւ վեցերորդ ամի նոցին (Արու-Բաբրայ, Ամրայ եւ Օրմանայ) իշխանութեանն դարձեալ յարձակէին ելանել ի վերայ աշխարհիս Հայոց զօրու ծանու... Յերկրորդ ամի Կոստանդնու կայսեր Հոռոմոց, որ էր թոռն Հերակղի՝ ազդե եղև առ իշխանն Թէոդորոս, եթէ հէն զարթուցեալ գայ ի վերայ աշխարհիս, Իսկ նորա առեալ զզօրս իւր՝ կամէր ունել զկիրճս ճանապարհին Ձորայոյ, այլ ոչ կարաց ժամանել յազաքս նոցա. բանդի ըստ օղաթէն արագութեան յարձակեալք իբրև օձք թևասորք յառաջեցին թշնամիքն, և զկնի իւրեանց թողեալ զղօրսն Հայոց՝ դէմ եղեալ ընթացան ի մայրաքաղաքն Դուին: Եւ վասն զի թափուր գտին զքաղաքն յարանց պատերազմողաց, զի ամենեքեան զհետ Թէոդորոսի իշխանին գնացեալ էին, բայց միայն զկանայս և զմանկտիս և զայլ խառնիճաղանճս, որք ոչ էին արք պատերազմի՝ հասին ի վերայ քաղաքին և վաղվաղակի առին զամրոցն, և զգտեալ արսն ի

նմա կոտորեցին, և զկանայս և զմանկտիս վարեցին ի գերութիւն՝ ոգիս լինոյ։

7. «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբ. 1885, էջ 98, 2, գլ. Բ՝

«Ի ՂԵ՛ ամի թուականութեան դարձեալ սաստիկ զօրութեան Տաճկաց՝ առին զԴուին քաղաք, և եղև համար գերութեան լին և ապա տիրեցին Հայոց, Վրաց և Աղուանից»։ Նույնը, էջ 120, 2, գլ. Դ՝

«Ապա ի ԻԶ ամի նոցին (Արուբաքրայ, Ամրայ և Օթմանայ) իշխանութեան և յերկրորդն² Կոստանդնի թոռն Հերակլէսի՝ էլ զօրն Իսմայիլի յԱսորեստանէ ընդ ճանապարհ Ձորոյ յերկիրն Տարօնոյ. ընդ Բզնունիս, ընդ Բերկրոյ ձորն յԱյրարատ թափեցան։ Եւ առին զԴուին քաղաք և զգտեալ արսն ի նմա կոտորեցին, և զկանայս և զմանկունս ի գերութիւն վարեցին ոգիս լին, որ օր Ի առէի ամսոյ, ի կութս այգեստանի։ Իսկ իշխանն հայոց Թէոդորոս Ռշտունեաց տէր, որ շինեաց զԱղթամարայ կղզին՝ պատերազմեցաւ ընդ նոսա ի Կոզովիտ և ոչ կարաց յաղթել։ Եւ եղև այս յամս Եգրի կաթողիկոսի»։ Նույնը, էջ 142, 2, գլ. Զ՝

«Կոստանդին որդի Կոստանդնու, թոռն Հերակլի, ամս ԺԹ. ի սորա երկրորդ ամին առաւ Դուին ի Տաճկաց»։

8. «Մովսեսի Կաղանկատուացւոյ, Պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս 1913, էջ 363, 3, գլ. ԺԵ՝

«Իսկ Կոստաս սորին (Կոստանդնի) որդի՝ ամս քսան և ինն ի սորա հինգ ամին յԱրաբիա կռիւն եղև, և ի վեցին Տաճիկք եկին ի Հայս եւ առին զԴուին, և որք գերեցանն երեսուն և հինգ հազար թուեցան»։

Երրորդ խմբի հեղինակներից Ղևոնդը՝ Դվինի առման թվականը որոշելիս՝ օգտվել է թե առաջին խմբի «Անանուն ժամանակագրութիւն»-ից և թե երկրորդ խմբի արաբական կամ ասորական մեղանհայտ ինչ որ աղբյուրից։ Ասողիկը քաղել է ժամանակագրական իր տեղեկությունները, գլխավորապես, Ղևոնդից։ Իսկ Մովսես Կաղանկատուացու հաշիվը համապատասխանում է երկրորդ խմբի ժամանակագրության։ Ուրեմն, աղբյուրների այս երրորդ խումբը

¹ Եզյանցի ձեռագիրը (Ը) ունի «Ի Դ՝ ամի» համապատասխան «Անանուն ժամանակագրութեան» վերահիշյալ վկայության. տե՛ս «Պատմութիւն տիեզերական», էջ 98, ծանոթ. 9։

² Բնագրում «յերրորդն», որ, հավանորեն, սխալ է։ Նույն հեղինակը (էջ 142) վկայում է, որ «Ի սորա (Կոստանդնի) երկրորդ ամին առաւ Դուին ի Տաճկաց»։

Դվինի առման թվականի մասին չի տալիս որևէ նոր տեղեկություն, այլ մեջ է բերում նախորդ խմբերի ժամանակագրական վկայությունները, աչքաթող անելով, որ այդ վկայություններն իրար հետ անհաշտելի են և հակասական:

Վերոհիշյալ երեք խումբ վկայությունների մեջ Դվինի առումը դրվում է, ինչպես տեսնում ենք, հետևյալ թվականներին՝

1. Եզրի կաթողիկոսության վերջին տարում=640 թ.՝ Սերբոս.

2. Հունաց կամ ասորոց 952 թ.=1 հոկտ. 640—641 թ. Դիոնիսիոս Տելմահարցի.

3. Հերակլ կայսեր թոռան Կոստանդնի երկրորդ տարում=642/643 թ. «Անանուն ժամանակագրութիւն», Ղևոնդ և Ասողիկ.

4. Հեջիրի 24 թվին=644/645 թ.՝ Տաբարի.

5. Հեջիրի 25 թվին=645/646 թ.՝ Բեկազորի (՝), Միքայել Ասորի և Ելիաս Մծբնեցի, և կամ Աբու Բաքրի, Ամրի ու Օթմանի իշխանության 26 տարում=645/646 թ.՝ Ղևոնդ, Ասողիկ: Աբու-Բաքրի, Ամրի և Օթմանի իշխանության սկիզբը Ղևոնդը ենթադրում է Հերակլ կայսեր 11-րդ տարում (620/621 թ.) ուրեմն՝ այս խալիֆների իշխանության 26-րդ տարին ընկնում է 645—646 թ.:

6. Հայոց 95 թվին=646 հունիս 13, 647 հունիս 17՝ Ասողիկ, և կամ Հերակլ կայսեր թոռան Կոստանդնի վեցերորդ տարում=646/647 թ.՝ Մովսես Կաղանկատվացի:

Այսպիսով՝ Դվինի առման թվականը վերոհիշյալ վկայությունների համաձայն ստացվում է՝ 640, 640/641, 642/643, 644/645, 645/646 և 646/647 թվերին:

Այս խառն ու հակասական տեղեկությունները հիմք են ծառայել, բնականաբար, անհաշտելի տարաձայնությունների նաև բանասիրական և պատմական թե հայ և թե օտար աշխատություններում:

Դվինի առումը դնում են այս աշխատություններում հետևյալ թվականներին (հիշում ենք միայն այն երկերը, որ ունեցել ենք ձեռքի տակ)՝

1. 640 թ. հունվարի 6-ին՝ Չամչյան, Պատմութ., Բ, էջ 343¹.

¹ Մ. Օրմանյանը («Աղագատում», Կոստանդնուպոլիս 1912—1913, էջ 704—705), հիմնվելով Սերբոսի և Սամուել Անեցու վկայությունների վրա, ենթադրում է, որ «արաբական բանակը Դուինի առջև կհասնի և խոսրովակերտի անտառին մոտ բանակ կգարնէ տրէ ամսոյ 20-ին, 640 հոկտեմբեր 6-ին շարժական տոմարով, որ ճիշտ ալ կը պատասխանէ պատմութեան յիշած յաւուր ուրբաթի և ի կուրս այգեստանին պարագահերոմու երեք ամիս կըտնէ Դուինի պաշարումը, և վերջապես 641 յունուար 6-ին յաւուր սրբոյ Յայաճուրեան (Սամ. 80), Արարացիք քաղաքը կը գրաւեն, և անխնայ կը կոտորեն 12.000 հոգի, 35.000 հոգի ալ զերի կըտանին վաճառելու, և եկեղեցի ու պարանք կապուտ կողոպուտ ընելով կրմեկ-

2. 640 թ. հոկտեմբերի 6-ին՝ Ալիշան, Այրարատ, էջ 407 և 495, նաև Հ. Համբարյան, Հուշարձան, 1911, էջ 244.

3. 642 թ. հունվարի 6-ին՝ Tournebize Histoire էջ 96 և Morgan, Histoire du peuple arménien էջ 116.

4. 622 թ. հոկտեմբերի 6-ին՝ Duiaurier, Recherches, էջ 227—231. Thopdschian, Zeitschrift für armenische Philologie, II, erstes Heft էջ 64 և А. Мюллер, История ислама, перевод Медникова, I, էջ 290.

5. 645/646 թ.՝ Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam, Paris, 1919, էջ 90. նույնը՝ 646 թ՝ էջ 180, նույնը—642 թ., էջ 371.

6. 647 թ. հոկտ. 6-ին՝ Кулаковский, История Визант., III, 1915, էջ 202.

Ժամանակագրական այս հակասությունները վերացնելու համար անհրաժեշտ էր, անշուշտ, պարզել աղբյուրների համեմատական արժեքը և որոշել, թե որը վերոհիշյալ վկայություններից կարող է համարվել վավերական ու ընդունելի: Կարևոր այդ խնդիրը քննության է առնված երկրորդ խմբի աղբյուրների նկատմամբ Մկր. Ղազարյանի «Armenien unter der arabischen herrschaft» ուսումնասիրության մեջ: Սակայն Ղազարյանի հիմնավոր ու համոզիչ դիտողություններն անուշադիր են թողնված գիտական հետազաաշխատություններում:

Ինչպես շատ ճիշտ դիտել է Ղազարյանը, Բելազորին որ առաջին անգամ գրի է առել Հայաստանի նվաճման վերոհիշյալ պատմությունը, ապրել է ինններորդ դարում (+892) և նրա տեղեկությունները հիմնված են բանավոր ավանդությունների վրա, մինչդեռ Սեբեոսն ականատես է եղել յոթերորդ դարի անցքերին: Երկրորդ՝ այն անցքերը, որ ըստ արաբական աղբյուրների տեղի են ունեցել Հաբիրի արշավանքի ժամանակ Հեջիրի 24/25 թվին, ինչպես՝ Կարին քաղաքի առումը, Գլինի անձնատուր լինելն առանց դիմադրության, Հաբիրի և Մավրիանոս զորավարի կռիվը և Հայաստանի, Վրաստանի ու Աղվանքի նվաճումը՝ հիշում է նաև Սեբեոսը, բայց ոչ 644—647 թվականներին, այլ յոթերորդ դարի հիսունական թվերին: Մկր. Ղազարյանի այս դիտողություններին կարելի է ավելացնել և այն, որ հենց արաբական աղբյուրների

նիւն: Նոր այս ենթադրությամբ Օրմանյանը փորձում է հաշտեցնել Սեբեոսի և Սամուել Անեցու հակասական վկայությունները: Սակայն բռնադրոսիկ այս հռահումը, անշուշտ սխալ է, որովհետև Սեբեոսի մոտ պարզ ասված է, որ արաբացիները «յաւուրն հինգերորդի դիմեցին ի վերայ քաղաքին» և «մատնեցաւ քաղաքն ի ձեռն նոցա»:

մեջ՝ Տաբարիի, Ֆաբուրիի և Իրն-ալ-Աթիրի երկերում՝ առաջ է բերված, ինչպես վերև տեսանք, նաև մի երկրորդ ավանդություն ըստ Վակիդիի, որը Հաբիրի և Սալմանի վերոհիշյալ արշավանքները դնում է յոթերորդ դարի հիսունական թվերին, այն է՝ Հեջիրի 31 թվականին (24 օգոստ. 651—12 օգոստ. 652 թ.): Արաբական այս երկրորդ ավանդությունը համապատասխանում է մոտավորապես ոչ միայն Սեբեոսի ժամանակագրությանը, այլև բյուզանդական պատմիչ Թեոֆանի վկայությանը, որն իր «Ժամանակագրության», մեջ Հաբիրի արշավանքը Հայաստան և նրա կռիվը Մավրիանոս զորավարի դեմ դնում է նույնպես Կոստանդին կայսեր 12-րդ տարում, այսինքն՝ 652/653 թ. (տես Chronographia, ed. de Boor, Lips 1883, էջ 345):

Կարևոր այս դիտողությունները, որ աչքաթող են արված, իրավունք են տալիս եզրակացնելու, որ Հաբիրի արշավանքի արաբական այն թվականները, որոնք մեջ են բերված Բելազորիի, Տաբարիի, Միքայել Ասորու, Նլիաս Մծբնեցու, Ղևոնդի, Ասողիկի և Մովսես Կաղանկատվացու երկերում՝ ավելի քան կասկածելի են և չեն կարող հավանական համարվել ու ընդունելի: Արաբական այդ վկայությունները վերաբերվում են ոչ թե Դվինի առաջին առմանը, որ հիշատակված է առաջին խմբի հնագույն աղբյուրներում, այլ Դվինի առմանը և Հայաստանի, Վրաստանի ու Աղվանքի նվաճմանը յոթերորդ դարի հիսունական թվականների սկզբներին: Այսպիսով՝ ինքն ըստ ինքյան հասկանալի են դառնում և այն անհաշտելի տարածայնությունները, որ կան Սեբեոսի և Բելազորու վկայություններում Դվինի առման մասին: Համաձայն Սեբեոսի՝ «դիմեալ ի ներքս զարբ թշնամեացն՝ սատակեցին սրով զբազմութիւն քաղաքին՝ ելին և քանակեցան ի նմին բանակետեղն... և խաղաղացոցին զբազմութիւն գերուոյն՝ լն հազար», իսկ ըստ Բելազորու՝ «(բնակիչք) խնդրեցին խնայել նոցա և պարգևել խաղաղութիւն. Հաբիր համաձայնեցաւ»:

Ինչպես տեսնում ենք, ավելի քան պարզ է, որ Բելազորու վկայությունը չի վերաբերվում Դվինի առաջին առմանը, որ մանրամասն նկարագրված է Սեբեոսի պատմության մեջ: Միանգամայն պարզ է նմանապես, որ Դվինի առաջին առման թվականը որոշելիս՝ կարող ենք անտես առնել թե երկրորդ խմբի արաբական և ասորական աղբյուրները և թե երրորդ խմբի հայկական աղբյուրները:

Իբրև միակ վստահելի աղբյուր մնում են, հետևապես, առա-

քին խմբի վերոհիշյալ վկայությունները, որոնք Դվինի առաջին առման մասին տալիս են հետևյալ թվականները.

1. Նգրի կաթողիկոսության վերջին տարին՝ Սեբեոս.

2. Հունաց կամ ասորոց 952 թ. (=640/641)՝ Դիոնիսիոս Տել-մահարցի.

3. Կոստաս-Կոստանդինի երկրորդ տարին (=642/643 թ.) և կամ «ի Ղ թուականին» (=641/642 թ.)՝ «Անանուն ժամանակագրութիւն» (նաև Ղևոնդ և Ասողիկ):

Հայկական և ասորական այս վկայությունների համաձայն՝ Դվինի առաջին առումը, ինչպես տեսնում ենք, ընկնում է 640—643 թվականների շրջանում, և ուրեմն՝ Դվինի առման տարեթիվը մնում է դարձյալ անորոշ:

Չնայած սակայն նաև այս վերջին աղբյուրների տարաձայնություններին՝ մի խիստ կարևոր հանգամանք, որ մատնանիշ են արել Ալիշանը (Այրարատ, էջ 407 և 495) և Համբարյանը (հուշարձան, էջ 244), կոլան է ծառայում ճշտիվ որոշելու Դվինի առման թվականը տոմարական պարզ ու անվիճելի հաշիվների օգնությամբ:

Սեբեոսի վերև մեջ բերված վկայության մեջ մատնանշված է, ինչպես տեսանք, Դվինի առման ամսաթիվը և օրը՝ «որ աւր Ի Լուրէ ամսոյն, յաւուր ուրբաթի»:

Արդ, հայկական տոմարը լինելով շարժական՝ 640—643 քառամյակին նավասարդի 1-ը գալիս է, ինչպես հայտնի է Դյուլտրյեյի ժամանակագրական հաշիվներից, հունիսի 19-ին (տես Dulaurier Recherches էջ 385). սրա համեմատ էլ նույն տարիներում տրեամսի քսանը (նավասարդի 1-ից մինչև տրեամսի 20-ը լինում է 110 օր) համապատասխանում է հոկտեմբերի 6-ին. Սակայն 640—643 թվերին այս վերջին ամսաթիվն ընկնում է զանազան օրեր՝

1. 640 թվին—ուրբաթ (Ձատիկը՝ ապրիլի 16-ին),

2. 641 թվին—շաբաթ (Ձատիկը՝ ապրիլի 8-ին),

3. 642 թվին—կիրակի (Ձատիկը՝ մարտի 24-ին),

4. 643 թվին—երկուշաբթի (Ձատիկը՝ ապրիլի 13-ին):

Ուրեմն՝ հիմնվելով տոմարական պարզ ու հասկանալի այս հաշվի վրա՝ կարելի է ապահովապես եզրակացնել, որ Դվինի առումը տեղի է ունեցել ոչ թե 641, 642 կամ 643 թվականներին, այլ 640 թվի հոկտեմբերի 6-ին, ուրբաթ:

Այս ուղիղ հաշիվը թեև արել են, ինչպես վերև տեսանք, Ալիշանը և Համբարյանը, սակայն մենք հարկ համարեցինք հանգամանորեն կանգ առնել նույն խնդրի վրա, որովհետև թուուցիկ ու համառոտ կերպով առաջադրված նրանց լուսաբանություններն ան-

տես են առնվել գիտական հետազոտ աշխատություններում: Մանրախուլզ այս քննությամբ ստացվում են արաբական այս արշավանքի և Դվինի առաջին առման մասին հետևյալ ուշագրավ հետեւությունները:

1. Ինչպես Հովհան Մամիկոնյանի, «Պատմութիւն սբ. Ներսիսի» գրվածքի, նույնպես և Սեբեոսի վերահիշյալ վկայությունները վերաբերվում են 640 թվի արաբական առաջին մեծ արշավանքին, որը տեղի էր ունեցել Օմարի խալիֆայության ժամանակ:

2. Արաբներն այս արշավանքի ժամանակ մտել են Հայաստան Միջագետքի կողմից, նվաճել Զորորոզ Հայքը, Տարոնը, Բզնունիքը, Աղիովիտը և արշավել, հավանորեն, հյուսիս-արևմտյան ուղղությամբ Բասեն, Վանանդ, Զավախք և Վիրք, իսկ հյուսիս-արևելյան ուղղությամբ՝ անցել են Բերկրիի ձորով Կոգովիտ ու հասել մինչև Դվին, որի առաջին առումը տեղի է ունեցել 640 թվի հոկտեմբերի 6-ին, ուրբաթ:

3. Դվինի առման տարին, ամսաթիվը և որը ճշտիվ որոշվում են ժամանակագրական այն կարևոր տվյալների օգնությամբ, որ առաջ են բերված Սեբեոսի և Դիոնիսիոս Տելմահարցու վկայություններում:

4. Վերահիշյալ երկրորդ խմբի աղբյուրների վկայությունները վերաբերվում են ոչ թե Դվինի առաջին առմանը, այլ Հաբիրի արշավանքին, Դվինի գրավմանը և Հայաստանի, Վրաստանի ու Աղվանքի նվաճմանը յոթերորդ դարի հիսունական թվականների սկզբներին:

5. Հայաստանում պատահած անցքերը Հաբիրի այս արշավանքի ժամանակ հիշատակված են հենց 652/653 թվերին Սեբեոսի մոտ, որը ժամանակակից էր այդ անցքերին:

6. Աղբյուրների երրորդ խմբի ժամանակագրական տեղեկությունները կարելի է անտես առնել, որովհետև այդ տեղեկությունները քաղված են առաջին և երկրորդ խմբի աղբյուրներից:

3. ԱՐԱՐԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՐՇԱՎԱՆՔՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ

ԿՈՂՄԻՑ՝ 642/643 ԹՎԻՆ

Համաձայն Սեբեոսի վկայության՝ արաբական առաջին մեծ արշավանքից հետո՝ Նեբսես կաթողիկոսի միջնորդությամբ և Կոստաս-Կոստանդին կայսեր հրամանով Հայաստանում ղրաւար է կարգվել և ստացել պատրիկության պատիվ Թեոդորոս Ուտունին: Սեբեոսի վկայությունից երևում է, որ այդ տեղի ունեցած պիտի լի-

ներ Դվինի առաջին առումից հետո, հավանորեն, 641 թվին։ Արաբական երկրորդ արշավանքի ժամանակ Հայաստանի սահմանների պաշտպանութունը հանձնարարված է եղել Թեոդորոս Ռշտունուն և Բյուզանդական զորավար Պռոկոպին։

Արաբական երկրորդ արշավանքի մասին ունի ընդարձակ մի վկայություն միմիայն Ղևոնդը։

1. «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայոց», Ս. Պետերբ. 1887, էջ 7, գլ. Բ՝

«Եւ մեծ մասն զօրուն հատեալ ասպատակէին յաշխարհս Հայոց ընդ կողմն Պարսից. և առնուին ի գերութիւն զաւանս Մարաց և զգաւառն Գողթն և զդաստակերտն Նախջաւանու. և զբազումս յարանց ընդ սուր անցուցանէին, և զայլս գերի վարեալ կանամբք և մանկտեաւ՝ անցուցանէին, ընդ դետն Երասխ ընդ հունն Ջուղայոյ։ Եւ ընդ երկուս բաժանեալ զօրքըն՝ ոմանք զգերեալսն դարձուցանէին յաշխարհն իւրեանց։ Եւ գունդ մի հատեալ ասպատակէին ընդ գաւառն Արտազ ի վերայ զօրավարին Յունաց, որումն անուն էր Պռոկոպ, որ էր բանակեալ ի գաւառին Կողովտի և սահմանս Բազումորոյ և Մարդուցայից. որում իրազեկ եղեալ իշխանն Թէոդորոս, որ էր յաղգէն Ռշտունեաց՝ ազդէր զօրավարին Պռոկոպայ, «Եթէ զօր հինին իսմայելի զարթուցեալ դայ ի վերայ մեր»։

«Իսկ նորա ի բաղմութիւն զօրացն ապաստանեալ և ոչ յԱստուած, որ յաջողէ զպատերազմ՝ ոչ ինչ գրէր զբանս իշխանին Հայոց։ Եւ նա մորմոքեալ ընդ կորուստ աշխարհիս Հայոց և ընդ ծուրութիւն զօրավարին՝ ոչ ունեւ ժոյժ, այլ մտեալ երկրորդէր և երրորդէր զբանն։ Եւ բարկացեալ զօրավարին ի վերայ իշխանին՝ ձգէր զվարզն որ ի ձեռին զհետ նորա։ Եւ սրտմտեալ Թէոդորոս՝ ելանէր յերեսաց նորա, և նոյնժամայն հրամայէր զօրացն, որ ընդ իւրով իշխանութեամբն էին, «վառեցարուք, ասէ, և ելէք ընդդեմ իսմայելի»։ Եւ նոքա հեծեալ յերիվարս իւրեանց՝ դարանամուտ եղեն ի սարակն, որում Եղբարսն կոչէին. և կալեալ զառաջս կրճիցն՝ զբազումս ի նոցանէ սատակէին և առեալ զկապուտ անկելոցն՝ հատուածեալ ի զօրավարէն գնացին ի գաւառն Գառնի։ Հրաման ետ ապա և Պռոկոպն իւրում զօրուն ելանել ի վերայ թշնամեացն. յորոց վերայ հեղեալ զօրն իսմայելի՝ հարկանէին զմեծ մասն Յունաց, և զայլսն փախստական արարեալ անցուցանէին ընդ բանակն իւրեանց. և ինքեանք դարձեալ ի բանակն նոցա հանգչէին։ Եւ ասեն լինել զթիւ զօրացն Յու-

նաց աւելի քան զվեց բիւր արանց, և Ղիսմայեւացիսն նուազ քան զբիւր մի արանց: Եւ ի վաղիւն ժողովեալ զկապուտ բանակին, դարձեալ ընդ կրօնկն՝ գնացին յաշխարհն իւրեանց: Եւ եղև այս ի քսան եւ երկրորդ ամի Աբու-Քաֆրայ և Օթմանայ եւ Ամրի, իշխանացն Իսմայելի»:

2. Նույն արշավանքի մասին Ասողիկի համառոտ վկայությունը (Քաթաթնամեթիւն տիեզերական», 1885, 2, գլ. Դ, էջ 120) առնված է Ղևոնդից:

Վերև մենք ասացինք, որ ըստ Ղևոնդի Աբու-Քեքրի, Ամրի և Օթմանի իշխանությունը սկսվել է Հերակլ կայսեր 11-րդ տարում (=620/621 թ., Հերակլը գահ է բարձրացել 610 թվի հոկտեմբերի 5-ին): Ղևոնդի այս վկայությունից կարելի է ըստ իս ենթադրել, որ նրա ժամանակագրական հաշիվը վերաբերվում է, հավանորեն, արաբական Հեջրին, որի սկիզբն ընկնում է սակայն ոչ թե 620/621, այլ 622 թվին:

Բանասերների այն կարծիքը, որ իբր Ղևոնդի ժամանակագրական ցուցումներն անլուծելի են, որովհետև նրա մոտ անորոշ է Աբու-Քեքրի, Ամրի և Օթմանի իշխանության սկիզբը, ինչպես տեսնում ենք, պարզ մի թյուրիմացություն է: Արաբական այս արշավանքի թվականը որոշվում է առանց դժվարության՝ համաձայն Ղևոնդի վերոհիշյալ ցուցման և ընկնում է Աբու-Քեքրի, Ամրի և Օթմանի իշխանության 22-րդ տարում, այսինքն՝ 641/642 թվականին, և կամ, հավանորեն, Հեջրի 22 թվին, այսինքն՝ 642/643 թվականին:

Հակառակ Ղևոնդի այս ժամանակագրության բանասիրական և պատմական նորազույն աշխատություններում նույն արշավանքի թվականի մասին հայտնված են տարբեր կարծիքներ: Ղևոնդի հրատարակության իր առաջարկում Կ. Եզյանցն ասում է, որ չէ՛լայտնի ստուգիլ ժամանակ այսր ասպատակի, զի ամն քսան երկրորդ իշխանութեանն Աբու-Քեքրի, Օմարայ և Օթմանայ, յորում զայն դնեն Ղևոնդ և Ասողիկ՝ չէ՛ մեկին և իմանալի մինչև ցայսօր, զի ոչ գիտեմք թէ՛ զոր ամն թուականութեանս մերոյ համարի Ղևոնդ առաջին ամ իշխանութեան նորա»: Նույն կարծիքին է նաև Մկրտիչ Ղազարյանը (տես Armenien unter der arabischen Herrschaft էջ 19, ծան. 1): Պրոֆ. Մարկվարտը Աբու-Քեքրի, Ամրի և Օթմանի 22-րդ տարին համապատասխան է համարում 653, 654 թ. (տես Osteuropäische und Ostasiatische Streifzüge 1903, էջ 441): Ալիշանը (Այրարատ, էջ 495) և Համբարյանը (Հուլարձան, էջ 244) նույն արշավանքի թվականը ենթադրում են 637 թվին՝ Դվինի առու-

մից երեք տարի առաջ, իսկ Tournebize-ը [Histoire, էջ 354]՝ 644 թվին:

Ինչպես տեսնում ենք, բանասերների և պատմաբանների կարծիքները ժամանակագրական այս խնդրի նկատմամբ նույնքան խառն են և հակասական, ինչպես և Դվինի առման թվականի մասին:

Ինձ թվում է սակայն, որ ուշադիր քննությամբ հնարավոր է ճշտիվ որոշել նաև այս արշավանքի տարեթիվը. անհրաժեշտ է միայն ի նկատի ունենալ անուղղակի մի շարք ցուցումներ, որ ուշադրության չեն առնվել:

Վերոհիշյալ արշավանքն Ատրպատականի կողմից անկարելի է ենթադրել 637 թվին, ինչպես այդ արել են Ալիշանը, Համբարյանը և ուրիշները, որովհետև 637 թվին արաբները դեռ նոր էին սկսել Պարսկաստանի նվաճումը և նրանք դեռևս չէին հասել Ատրպատականի կողմերը: Հայտնի է արդեն արաբական և ուրիշ ազբյուրներից, որ արևմտյան Պարսկաստանում վճռական կռիվը պարսիկների դեմ տեղի է ունեցել Նեհավենդում, յոթերորդ դարի քառասնական թվականների սկզբներին (տե՛ս Ph. Nöldeke, Aufsätze zur persischen Geschichte, Leipzig 1887, էջ 133, նաև Horn, Geschichte Irans in islamitischer Zeit, Grundriss den iranischen Philologie, II. 5, էջ 553.

Սերեհոսը, որ ժամանակակից էր արաբական արշավանքներին, այս մեծ կռիվը «Մարազ գաւառում» դնում է «յառաջնում ամի Կոստանդեայ թագաւորին յունաց և յամի տասներորդի Յազկերտի արքային Պարսից» (Թիֆլիս 1913, էջ 181, գլ. ԼԲ), այսինքն՝ 641/642 թ.:

Պարզ է, որ վճռական կռից հետո միայն արաբները կարող էին ներս խուժել Ատրպատական և այստեղից նաև Պարսկական Հայաստան: Եվ, իրոք, արաբական մատենագիրները՝ Տարարին և Յակուբին, որ այս կետում համերաշխ են միմյանց հետ, Ատրպատականի նվաճումը Մուղեյրա Ի. Շոբայի առաջնորդությամբ դնում են Հեջիրի 21/22 թվին, այսինքն՝ 642/643 թվականներին (տես «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», էջ 82 ևն, 104):

Կարևոր այս դիտողություններից դժվար չէ հետևել, որ Ղևոնդի նկարագրած Մարդուցայքի վերոհիշյալ կոտորածը չէր կարող պատահած լինել յոթերորդ դարի քառասնական թվականներից առաջ:

Ինչպես հայտնի է, Մարդուցայքի դեպքը թուլցիկ կերպով հիշատակված է նաև Սերեհոսի մոտ: Սերեհոսի պատմելով՝ երբ Կոստաս-Կոստանդին կայսրն արշավելու էր Հայաստան՝ հույն զոր-

քերն ամբաստանում էին Թեոդորոս Ռշտունուն, համարելով նրան պատճառ Մարդուցայքի՝ կոտորածի և պահանջում էին պատժել հայերին:

«Եւ ամբաստանութիւն ամենայն զաւրացն Հոռոմին և տրտունը,—ասում է Սեբեոսը,—Ռշտունեաց տեառնէն լինէին, և զՀայոց՝ առաջի թագաւորին իւրեանց վասն հարուածոց՝ որ եղեն ի Մարդոցէսն: Զի ասացին՝ թէ «միաբանեցան ընդ իսմայէլացիսն. զմեզ վստահացուցին. զզաւրսն ճապաղել ետուն յասպատակ յԱտրպատական, և զնոսա ածին ի վերայ մեր յանկարծակի, և հարկանել ետուն զմեզ, և մեր ամենայն ինչ անդ անկաւ. բայց թող երթամք ի Հայս և մեր իրացն խնդիր առնեմք» (Թիֆլիս 1912, էջ 225, գլ. ԼԵ):

Սեբեոսի այս վկայությունը, որ ժամանակակից պատմիչ է՝ մենք մեջ բերինք ցույց տալու համար, որ Ղևոնդի տեղեկությունը Մարդուցայքի կոտորածի մասին ստույգ է և պատմական:

Այդ կոտորածը, ինչպես վերև ասացինք, չէր կարող պատահած լինել յոթերորդ դարի քառասնական թվականներից առաջ: Եվ իրավի, բացի վերոհիշյալ դիտողություններից՝ ի նպաստ մեր եզրակացության կարելի է մատնանշել նաև մի ուրիշ կարևոր ցուցում:

Այդ դեպքի ժամանակը որոշելու համար ուշագրավ է առանձնապես Դիոնիսիոս Տելմահարցու կարևոր մի վկայությունը, որ ուշագրության չէ առնվել: Տելմահարցին իր ժամանակագրության մեջ հիշում է Պոսկոպ զորավարին և Թեոդորոսին, որոնք արշավել էին միասին մինչև Բատնա-Սառուգ: Այդ տեղեկությունն անհրաժեշտ ենք համարում ամբողջությամբ մեջ բերել:

«955 թվին (643—644) պատրիկ Վաղենտինը՝ Հռոմայեցոց զորավարը, եկավ կովելու արաբների դեմ: Ահաբեկված նրանց ներկայությունից՝ նա փախավ և թողեց իր հետ եղած բոլոր հարստությունները, որ ընկան արաբների ձեռքը:

Նույն թվին Պոսկոպը և Թեոդորոսը մի խիստ ուժեղ հարձակում դործեցին և հասան մինչև Բատնա-Սառուգ: Նրանք ավերեցին և կողոպտեցին այդ քաղաքը, վերցրին ինչ որ ցանկանում էին և վերադարձան իրանց երկիրը» (տես Chronique, publ. et trad. par Chabot էջ 6—7):

Տելմահարցու այս հատվածն ուշագրության արժանի է այն տեսակետից, որ այստեղ ևս, ինչպես և Ղևոնդի վկայության մեջ,

¹ Սեբեոսը փոխանակ «Մարդուցայք»-ի՝ ունի «Մարդոցէք»:

Պոռկոպ զորավարը և Թեոդորոս Ռշտունին հիշատակվում են իբրև զորապետներ, որ գործել են միասին արշավող արաբների դեմ։ Դժվար չէ կռահել, որ Մարդուցայքի դեպքը եղած պիտի լինի արշավանքից հետո։

Ղևոնդի վերահիշյալ վկայությունից հայտնի է, որ Մարդուցայքի կոտորածից առաջ Թեոդորոս Ռշտունին, թշնամանալով Պոռկոպին՝ հեռացել էր Գառնի գավառը, որը գտնվում էր Կոգովտի հարավակողմում։ Իսկ Սեբեոսը, ինչպես վերև տեսանք, հաղորդում է, որ հունական զորքերը գանգատվում էին կայսեր և մեղադրում Թեոդորոս Ռշտունուն, համարելով նրան ու հայերին պատճառ Մարդուցայքի կոտորածի։ Շատ պարզ է, ուրեմն, որ բյուղանդական զորքերի կոտորածից հետո Թեոդորոս Ռշտունին չէր կարող Պոռկոպի հետ միասին մասնակցած լինել վերահիշյալ արշավանքին Բատնա-Սառուգի ուղղությամբ։

Ըստ Սեբեոսի՝ 646 թվին նա իբրև ծանր հանցագործ շղթայակապ ուղարկված է եղել Կոստանդնուպոլիս և արդարանալուց հետո միայն՝ նորից ստացել է զորավարության իր նախկին իշխանությունը։

Այսպիսով, Բատնայի առումը դրվելու է, ինչպես տեսնում ենք, Մարդուցայքի կոտորածից առաջ։ Ճշտվում է նաև, որ այս երկու ժամանակամերձ դեպքերը տեղի են ունեցել յոթերորդ դարի քառասնական թվականների առաջին տարիներում։

Ինձ թվում է, հիմնվելով վերև մեջ բերված ժամանակագրական տեղեկությունների և կարևոր այլ ցուցումների վրա, կարելի է այս անցքերի ժամանակը որոշել ավելի ճշգրիտ կերպով։

Տեմահարցու վկայությամբ՝ Պոռկոպի և Թեոդորի արշավանքը Բատնա-Սառուգ և պատրիկ Վաղենտինի փախուստն Արևելքից տեղի են ունեցել միևնույն թվին, այն է՝ 955=643/644 թվականին։

Արդ՝ պատմական աղբյուրների տեղեկություններից հայտնի է, որ 641 թվի նոյեմբեր ամսին Կոստաս-Կոստանդինը գահ էր բարձրացել Վաղենտինի աջակցությամբ։ Այնուհետև՝ Վաղենտինի արշավանքն ու փախուստն Արևելքից պետք է դնել համաձայն Սեբեոսի, որ ժամանակակից պատմիչ է, ոչ թե 643/644 թվին, այլ 642/643 թվականին։ Դարձյալ ըստ Սեբեոսի՝ Կոստասի կայսրության երկրորդ տարում, այսինքն՝ 643 թվին, Վաղենտինը վերադարձել էր արդեն Կոստանդնուպոլիս և խորհչեր... համբառնալ զինքն ի պատիւ Թագաւորութեանս։ Թեոփանը Վաղենտինի վերադարձը և սպանությունը դնում է 644 թվին (an.m. 6136, տես Chronographia)։

ժամանակագրական այս ցուցումներին կարելի է հետևել, որ Պոռկոպի և Թեոդորոսի արշավանքն ևս Բատնա-Սառուզ պետք է ենթադրել 642/643 թվականին և ոչ 643/644 թվին, ինչպես հաշվում է Տելմահարցին:

Ի նկատի առնելով այս ցուցումները՝ կարող ենք դարձյալ հաստատապես եզրակացնել, որ վերոհիշյալ արաբական արշավանքի և Մարդուցայքի կոտորածի նկատմամբ terminus ante quem non պետք է ընդունել 642/643 թվականը:

Արդ՝ Ղևոնդի մոտ արաբական այս արշավանքի ժամանակը ցույց է տրված, ինչպես տեսանք, Աբու-Բաբրի, Ամրի և Օթմանի իշխանության 22-րդ տարում, հավանորեն, Հեջիրի 22 թվին, այսինքն՝ 642/643 թվականին: Եվ որովհետև մեծ կոիվը «Մարաց գավառում» (նահավենդում) հիշվում է Սեբեոսի մոտ 641/642 թվին, իսկ արաբական արշավանքներն Ատրպատականում և Պարսկահայաստանում, ինչպես վկայում են արաբական աղբյուրները, տեղի էին ունեցել 642/643 թվականներին, ուստի Ղևոնդի ժամանակագրական վկայությունը կարող ենք համարել հավանական և ընդունել:

Հստ այսմ՝ Պոռկոպի և Թեոդորոսի արշավանքը Բատնա-Սառուզ, ինչպես և Մարդուցայքի կոտորածը, դրվելու են 642/643 թվականին:

4. ԱՐՄԱՔ ԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ՝ 650 ԹՎԻ ՕԴՈՍՏ. Ց-ԻՆ, ԿԻՐ.

Արծափ բերդի առումը, որ տեղի է ունեցել արաբական մի նոր արշավանքի ժամանակ Ատրպատականի կողմից, ենթադրվում է սովորաբար 643 թվի օգոստոսի 10-ին, կիրակի: Այս տարեթիվը և ամսաթիվը, որ հիմնված են Սեբեոսի վկայության և Dulaurier-ի տոմարադիտական հաշվի վրա (Recherches, էջ 231—232), համարել են ստույգ գրեթե բոլոր բանասերները և պատմագետները¹ (տես Chazarian, Armenien unter der arabischen Herrschaft, էջ 29. Tournebize, Histoire politique et religieuse de l'Arménie էջ 354. Morgan, Histoire du peuple arménien էջ 116. Marquart, Streifzüge էջ 440. Համբարյան, Հուշարձան, էջ 245): Սակայն այդ տարեթիվը, որ համարվել է մինչև այժմ անվիճելի, միանգամայն անհավանական է և անընդունելի:

¹ Ալիշան Այրարատում (էջ 509) Արծափի առումը ղևում է 643 թվի օգոստոսի 11-ին, իսկ Բասմաճյանը (Իսկական պատմություն Հայոց, էջ 296)—652 թվին:

Որպեսզի պարզ և հասկանալի լինեն մեր առարկությունները՝ մեջ ենք բերում նախ այն բոլոր վկայությունները, որ վերաբերվում են արաբական այս մեծ արշավանքին։

1. «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլին», Թիֆլիս 1913, էջ 188—191, գլ. ԼԲ—ԼԳ՝

«Եւ եղև ի գալ միւսում ամի եկն զաւրն Իսմայէլի յԱտըրպատական, և բաժանեցան յերիս։ Առաջ մի յԱյրարատ, և առաջ մի ի սեփհական գնդին կողմանս. և առաջ մի յԱղուանս։ Արդ՝ որք ի կողմանս սեփհական գնդին, արշաւեալ սփոեցան և հարեալ զամենայն կողմանսն զայնոսիկ սրով սուսերի, առին զաւար և զգերութիւն։ Եւ եկին ժողովեցան ի յերևան՝ և մարտեան ընդ բերդին, և ոչ կարացին առնուլ։ Եկին ի յՈրդսպու, և ոչ նմա ինչ կարացին առնել։ Գնացին անտի և բանակեցան յԱրծափըս՝ հանգէպ բերդին առ ջրովն։... Եւ եղև յամին Երկրորդի Կոստանդնի, յամսեանն հոռի, որ աւր ԽԳ էր ամսոյն յաւուր կիրակէի ընդ առաւատս՝ ճշեցին Իսմայեացիքն ի բերդին վերջոյ և առաջոյ, և հարին զնոպա սրով սուսերի։ Եւ բազումք գահաժգիծ լեալ սատակէին։ Եւ զկանայս և զմանկունս իշուցին ի բերդէն՝ կամէին սատակել. և ոչ գոյր թիւ գերւոյն, և անասուն պաճարացն բազում յոյժ։ Եւ եղև ի վաղի առաւատուն՝ եկն եհաս ի վերայ նոցա զաւրավարն Հայոց, և եհար զնոսա անհուն կոտորածով։ Եւ էին նոքա երեք հազար ընտիր սպառազէնս յամենայն զաւրացն Իսմայէլի, և ոչ ոք զերծաւ ի նոցանէ. բայց սակաւ ճողոպրեալք հետեակք երթեալ ամրացան ի Շամբին։ Եւ ապրեցոյց տէր յաւուր յայնմիկ զբազմութիւն գերւոյն ի ձեռաց Իսմայէլացւոցն. և Վիսմայէլ խորտակեաց կործանմամբ մեծաւ. և մեռան Բ իշխանքն Իսմայէլի՝ Աւթման և Ոգոմայ։ Եւ եղև յաղթութիւն մեծ զաւրավարին Հայոց, և ետ տանել զաւրավարն Հայոց զընծայս Կոստանդնի ի պատերազմէն՝ զընտիր ընտիր երիւկարցն չ՝ ձի, զոր առեալ արքայի ուրախ եղև ինքն և ամենայն պաղատն, և արձակեաց անդրէն շնորհակալութիւն մեծ»։

2. «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբ. 1887, էջ 11, գլ. Գ՝

«Ապա յետ այնորիկ յերեսուն եւ վեցերորդ ամի իշխանութեանն ևնոցա (Աբու-Բաքրայ և Օթմանայ և Ամրի) զօր ժողովեալ դարձեալ յարձակեցան ի վերայ աշխարհիս Հայոց. որոց էին գլխաւորք Օթման և Օգբայ։ Եւ իբրև հասին ի սահմանս Հայոց՝ յերիս քաժանեալ առաջս՝ սփոեցան յաս-

պատակս իւրեանց: Առաջ մի հատեալ ընդ կողմն Վասպուրական աշխարհին, առին զաւանս և զամրոցս որ մինչև ի նախջաւան քաղաք. և առաջ մի ընդ կողմն Տարօնոյ: Եւ միւս առաջն հասեալ ի Կոգովիտ՝ պաշարէին զամրոցն Արծափաց» եւ այլն: (Արծափի առման մանրամասնությունները համապատասխանում են Սեբեոսի հաղորդած տեղեկություններին):

3. «Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբ. 1885, էջ 122՝

Ասողիկի աղբյուրն է Ղեռնդը և թվական ցույց է տրված դարձյալ՝ այլևս ամի իշխանութեան Արու Բաքրայ, Օթմանայ եւ Ամրայ»:

Ինչպես վերև ասացինք, Արծափի առման թվականը որոշելիս՝ Dulaurier-ն հենվել է Սեբեոսի վերոհիշյալ վկայության վրա՝ «յամին երկրորդի Կոստանդնի. յամսեանն հոռի, որ ար Խի էր ամսոյն, յաւուր կիւրակէի»: Ընթացողով արաբական այս մեծ արշավանքը և բերդի առումը «յամին երկրորդի Կոստանդնի», այսինքն՝ 643 թվին, նա հաշվել է, որ այս թվականին նավասարդի 1-ը գալիս է հունիսի 19-ին, իսկ հոռի 23-ը (նավասարդի 1-ից մինչև հոռի 23-ը լինում է 53 օր) համապատասխանում է օգոստոսի 10-ին: Արդ՝ 643 թվի օգոստոսի 10-ը, ինչպես իրավամբ մատնանշել է Dulaurier-ն եղել է իրոք կիրակի: Dulaurier-ի այս պարզ ու համոզիչ դիտողություններից հետո՝ ժամանակագրական այս խնդիրը համարվել է բավարար կերպով լուծված և Արծափի առումը դրվել է 643 թվի օգոստոսի 10-ին, կիրակի:

Ուղի՞ղ է արդյոք այս թվականը, որ կրկնվում է գրեթե անընդհատ բանասիրական և պատմական ուսումնասիրություններում:

Ընդունելով հանդերձ որ Dulaurier-ի տոմարական հաշիվները միանգամայն հիմնավոր են և անվիճելի, ինձ թվում է, կարելի է հաստատապես պնդել, որ նրա մատնանշած տոմարական զուգադիպությունները պատահական են և չեն կարող հիմք ընդունվել ժամանակագրական այս խնդրի լուծման:

Արծափի առման թվականը որոշելիս՝ անհրաժեշտ է նախ և առաջ նկատի ունենալ, որ Սեբեոսի «Պատմութեան» մեջ պատմական անցքերը դասավորված են ժամանակագրական կարգով և անցքերի այդ հաջորդականությունը հիմնովին խախտվում է նրա մոտ հենց Արծափի առման վերաբերյալ վերոհիշյալ վկայությամբ: Ժամանակագրական այս անհերքաշնակությունը Սեբեոսի գրվածքում վրիպել է բանասերների և պատմաբանների ուշադրությունից:

Արծափի առման վերաբերյալ վկայությունից առաջ Սեբեոսի մոտ հիշված են հաջորդական կարգով պատմական նախընթաց անցքերը, որ տեղի էին ունեցել Կոստաս-Կոստանդինի կայսրության երկրորդ, հինգերորդ և հետագա մի քանի տարիներում. օրինակ՝ պատրիկ Վաղենտինի դավադրությունը (643 թվին), Վարազտիրոցի աքսորից վերադառնալը (645/646 թվին), Թեոդորոս Ռշտունու դատը Կոստանդնուպոլսում և արգարացումը, Վարազտիրոցի փախուստը, Հայաստանի իշխան և կյուրապաղատ նշանակվելը և մահը, Թեոդորոս Ռշտունու արձակումը Հայաստան և նրա վերահաստատումը զորավարության նախկին իր պաշտոնում. և այս անցքերից հետո միայն հիշվում է արաբական մեծ արշավանքն Ատրպատականի կողմից և Արծափի առումը:

Հայ բանասերներից Չամչյանը, Համբարյանը և ուրիշները, ժամանակագրական այս անտեղությունը վերացնելու համար, ենթադրել են, որ իբր Սեբեոսի մոտ հիշված նախընթաց դեպքերը տեղի են ունեցել Արծափի առումից առաջ՝ 642 կամ 642—644 թվականներին: Վարազտիրոցի վերադարձն աքսորից և նրա կյուրապաղատ նշանակվելը Չամչյանը դնում է 642 թվին, իսկ Թեոդորոս Ռշտունու հաստատվելը զորավարության պաշտոնում և Արծափի առումը՝ 642 թվին (Պատմություն Հայոց, 2, 344—345): Համբարյանը, որ Արծափի առումը ենթադրում է 643 թվի օգոստոսի 10-ին, Վարազտիրոցի աքսորից ազատվելը և հարակից մյուս դեպքերը դնում է 642 թվին (Հուլարձան, էջ 245): Թե այս և թե նման ենթադրությունները, իհարկե, անընդունելի են, որովհետև Սեբեոսը պարզ ու որոշ վկայում է, որ Վարազտիրոսը վերադարձել էր աքսորից այսին հինգերորդի թագաւորութեան» Կոստանդինի, այսինքն՝ 645/646 թվականին: Համբարյանի առարկությունը, իբր այդ թվականը հայտնի սխալ է, անշուշտ, հիմնավոր չէ: Վաղենտինի դավադրությունը, ինչպես հայտնի է պատմական աղբյուրներից, տեղի էր ունեցել 643 թվին. այդ դավադրությունից հետո, ինչպես վկայում է Սեբեոսը, ռարարին զաւրավար զԹէոդորոս զոմն՝ հաւատարիմ իշխանացն Հայաստանեայց, յայնց՝ որ ի յունաց կողմանէ»։ այնուհետև՝ սրա բարեխոսությամբ ազատված է եղել աքսորից Վարազտիրոսը և հաստատված իր նախկին աստիճանում: Ինչպես տեսնում ենք, Վարազտիրոցի վերադարձն աքսորից պետք է եղած լիներ 645/646 թվին, և ոչ երբեք 642 թվականին,

¹ Այս Թեոդորոսին սխալմամբ շփոթում են Մարկվարտը և Կուլակովսկին Թեոդորոս Ռշտունու հետ, տե՛ս Marquart, Streifzüge, էջ 440 և Кулаковский, История Виз., III, 191.

ինչպես այդ ենթադրել են Չամչյանը, Համբարյանը և ուրիշները: Ինձ թվում է, Սեբեոսի «Պատմութեան» ԼԲ և ԼԳ գլուխներում անցքերի ժամանակագրական հաջորդականությունը կարելի է վերականգնել ոչ թե վերոհիշյալ բռնազրոսիկ լուսաբանությամբ, այլ Սեբեոսի բնագրի հավանական մի նոր ուղղումով, որը կատարելապես հաստատվում է, ինչպես կտեսնենք, հենց նույն ինքն Սեբեոսի մի քանի կարևոր այլ վկայություններով: Բացի այդ՝ բոլոր անտեղությունները Սեբեոսի մոտ վերանում են դարձյալ հենց այն օտույզ համարված թվականի սրբագրությամբ, որ վերաբերվում է Արծափի առման:

Սեբեոսի պատմության բնագիրը, որ հասել է մեզ 16-րդ դարի միայն մի աղճատ ձեռագրում, ինչպես հայտնի է, ունի բազմաթիվ աղավաղություններ:

Այդպիսի մի աղավաղություն է. իմ կարծիքով, նաև Արծափի առման վերաբերյալ յլամին երկրորդի Կոստանդինի» ընթերցվածը: Սկզբնական բնագրում եղած պիտի լինի յլամին Ը երրորդի Կոստանդինի» կամ յլամին Թ երրորդի Կոստանդինի» և աղավաղումն առաջ է եկել Ը կամ Թ և Բ տառերի նմանությունից:

Թե որն է այս ուղղումներից գերադասելի, այդ կարելի է որոշել տոմարական հաշիվների օգնությամբ:

Սեբեոսի վկայությունից գիտենք, որ Արծափի առումը տեղի էր ունեցել յլամսեանն հոռի, որ ար իԳ էր ամսոյն, յաւուր կիրակէի ընդ առաւաստս: Արդ՝ Կոստաս-Կոստանդինը թագավորած է 641 թվի նոյեմբերին, ուստի նրա կայսրության իններորդ տարին ընկնում է 649 թվի նոյեմբերից մինչև 650 թվի նոյեմբերը: Այս թվականներին նավասարդի 1-ը գալիս է հունիսի 17-ին և որովհետև նավասարդի 1-ից մինչև Հոռի ամսի 23-ը լինում է 53-օր՝ ուստի Հոռի ամսի 23-ը համապատասխան կլինի օգոստոսի 8-ին: Եւ հենց ճիշտ 650 թվին գատիկն ընկնում է մարտի 28-ին և Հոռի 23-ը կամ օգոստոսի 8-ը գալիս է իրոք կիրակի օր, ինչպես և ունի Սեբեոսը:

«Յլամին Ը երրորդի Կոստանդինի» ուղղումը չի հարմարվում, որովհետև 649 թվին Հոռի 23-ը կամ օգոստոսի 8-ը գալիս է ոչ թե կիրակի, այլ շաբաթ. Սակայն նույն այդ ուղղումը կարող էր ընդունելի համարվել, եթե հնարավոր լիներ ապացուցանել, որ Սեբեոսի մոտ աղճատված է նաև ամսաթիվը՝ «որ ար իԳ էր ամսոյն» փոխանակ «որ ար իԴ էր ամսոյն»: Այդ դեպքում՝ Արծափի առումը կընկնեի 649 թվի օգոստոսի 9-ին, որովհետև այս թվին Հոռի 24-ը կամ օգոստոսի 9-ը գալիս է դարձյալ կիրակի օր՝ համապատասխան Սեբեոսի վկայության:

Նախադասելի համարելով առաջին ուղղումը՝ Արծափի առման թվականը մենք ենթադրում ենք 650 թվի օգոստոսի 8-ին, կիրակի։

Մենք ընդունում ենք իհարկե, որ ամսաթվի և կիրակիի այս զուգադիպումը կարող է այստեղ ևս պատահական լինել, ինչպես Dulaurier-ի հաշվի մեջ. համաձայն ենք նաև, որ Արծափի առման թվականը որոշելու համար տոմարական մեր հաշիվն ինքնին բավական չէ։ Սակայն մեր առաջարկած ուղղումը հիմնված է և ուրիշ կարևոր ցուցմունքների վրա, որ հաստատում են դարձյալ նույն այս ենթադրությունը։

Մեջ ենք բերում մեր ենթադրությունը հաստատող նաև մի ուրիշ ապացույց։

Ղևոնդ երեցը, ինչպես վերև տեսանք, Արծափի առումը դնում է Դվինի առումից տասը տարի հետո։ Դվինի առումը նա ենթադրում է «ի քսան և վեցերորդ ամի նոցին (Արու-Բաքրայ, Ամրի և Օթմանայ) իշխանութեանն»։ Այդ մեծ արշավանքը նկարագրելուց հետո՝ նա վկայում է այնուհետև, որ արարները Շղադարեցին յևանելոյ ի վերայ աշխարհիս Հայոց ամս ժա, ուստի և Արծափի առումը նա ենթադրում է «յերեսուն և վեցերորդ ամի իշխանութեանն նոցա»։ Ըստ Ղևոնդի Դվինի առումն ընկնում է, ինչպես վերև հաշվեցինք, 645/646 թվին, ուրեմն՝ Արծափի առումը կընկնի նույն հաշվով 655/656 թվին, Այս թվականները, անշուշտ, սխալ են։ Համաձայն Սեբեոսի և Տելմազարցու վկայություններին Դվինի առումը, ինչպես վերև տեսանք, ճշտվով որոշվում է 640 թվի հոկտեմբերի 6-ին, ուրբաթ։ Ղևոնդի սխալ ժամանակագրությունը ծագել է, ինչպես ասացինք, արարական կամ այլ օտար աղբյուրների ազդեցությամբ, որոնց մեջ Դվինի առումը ենթադրված է Հեջիրի 24 կամ 25 թվին։ Հասկանալի է, որ այս սխալ թվականը հիմք էր ծառայելու նաև Արծափի առման թվականի սխալ որոշման։ Սակայն ժամանակագրական այս սխալ հաշիվները բնավ իրավունք չեն տալիս մեզ մերժելու Ղևոնդի պարզ ու կարևոր այն տեղեկությունը, որ Արծափի առումը տեղի է ունեցել Դվինի առումից տասը տարի հետո։ Այս տեղեկությունը, որ հիմնված է, հավանորեն, կամ ավանդության կամ թերևս զբաղորդ որևէ աղբյուրի վրա, կատարելապես համապատասխանում է մեր ենթադրության, և վերոհիշյալ մեր սրբագրությունը հաստատվում է այսպիսով ոչ միայն տոմարական հաշվով, այլև պատմական այլ վկայությամբ։ Ենթադրելով Արծափի առումը Դվինի առումից (640 թ. հոկտ. 6) տասը տարի հետո՝ Արծափի առման թվականը ստանում ենք ճիշտ և ճիշտ 650 թվին կամ

«յամին Թ երրորդի Կոստանդնի»՝ համաձայն վերոհիշյալ մեր սըր-
բազրության:

Կարելի է մատնանշել մեր ենթադրությունը հաստատող նաև
մի երրորդ ապացույց:

Որ Սեբեոսի բնագրում «յամին երկրորդի Կոստանդնի» ընթերց-
վածն ակներև մի սխալ է և մեր ուղղումը միանգամայն հիմնավոր՝
այդ պարզ երևում է արաբական նույն այս արշավանքներին Վերա-
քերող Սեբեոսի պարզ ու որոշ տեղեկություններից: Բանասերների
ուշադրությունից վրիպել է, որ հենց ինքը Սեբեոսն Արծափի առու-
մը և արաբական այս արշավանքներն Ատրպատականի կողմից են-
թադրել է Դամասկոսում կնքված երեքամյա զինադադարի դաշին-
քից առաջ՝ ծովային այն պատերազմների ժամանակ, որոնք տեղի
էին ունեցել 649 և 650 թվականներին: Արծափի առումը նկարա-
գրելուց հետո՝ Սեբեոսը շարունակում է.

տես էջ 191, գլ. ԼԲ (Թիֆլիս 1913)՝

«Իսկ այն դաւրն՝ որ կողմանս Այրարատեան, Իհար սրով
մինչև ի կողմանս Տայոց, Վրաց և Աղուանից՝ առ զաւար և
զգերութիւն, և եկն էանց ի Նախճաւան առ այն զաւր, որ մարտ
եղեալ կոռէին ընդ բերդին Նախճուանի: Բայց սակայն ոչ
կարացին առնուլ զնա: Առին զբերդն հրամայ, և սատակէին
զնոսա սրով, և զկանայս և զմանկունս գերի վարեցին:

Իսկ որի կողմանս Պաղեստինացուցն, հրամայեաց կազմիլ
նաւատորմիղս բազում և եմուտ ի նաւ, և կալաւ գործ պատե-
րազմի ընդ Կոնստանդնուպոլիս. և ոչ յաջողեցաւ նմա նաւա-
մարտութիւնն. քանզի ելին ընդդեմ նորա զաւրացն բազմու-
թիւն նաւաւք. և կործանեցին զնոսա ի խորս ծովուն, և զբա-
լումս վանեցին հրով. և զբազումս փախստական արարեալ
հալածեցին: Բայց սակայն զարհուրեցաւ արքայն Կոստանդին.
լաւ համարեցաւ տալ սակ, և առնել հաշտութիւն պատգամա-
ւորաւք. և փութացուցանէին Իսմայէլացիք զյոյնս՝ զի կատա-
րեսցեն զբան հաշտութեանն: Իսկ թագաւորն յունաց Կոստան-
դին՝ քանզի մանուկ էր, ոչ իշխեաց կատարել առանց կամաց
դաւրուն, և գրէ առ Պռոկոպ զի երթիցէ ընդ նմա Դամասկոս
առ Մաւիաս իշխանն զաւրուն Իսմայէլի, և կատարեսցէ զպայ-
ման հաշտութեան ըստ զաւրուն կամացն: Արդ՝ իբրև ետես
Պռոկոպ զհրամանն արքունի, և լուաւ բանս ի զաւրացն, զնաց
զհետ նոցա ի Դամասկոս առ Մաւիաս իշխան զաւրուն Իս-
մայէլի. և յայտնեաց զլափ սակին և ասաց սահմանն և առ
զհաշտութիւնն, և զնացա:

ինդիրը, ուրեմն, շատ պարզ է: Արծափի առումը դրվելու է, ինչպես տեսնում ենք, Պոսկոպի կնքած զինադադարից առաջ, որի տարեթիվը Թեոփանի մոտ ևս ցույց է տրված 650 թվականին (an. m. 6142, տես Chronographia ed. de Boor):

Արծափի առման թվականի ճշտմամբ վերականգնվում է Սեբեոսի իՐ և ԼԳ գլուխներում պատմական անցքերի ժամանակագրական հաջորդականությունը: 646 թվին Թեոդորոս Ռշտունին շղթալակապ տարվել էր Կոստանդնուպոլիս. արդարանալուց և զորավարության իր նախկին պաշտոնում վերահաստատվելուց հետո՝ նա վերադարձել էր Հայաստան, հավանորեն, 649 թվին. այնուհետև, ինչպես վկայում է Սեբեոսը, «ի գալ միւսում ամի», այսինքն՝ 650 թվին, տեղի էին ունեցել արաբական մեծ արշավանքներն Ատրպատականի կողմից և Արծափի առումը:

Ինչպես տեսնում ենք, Արծափի առման տարեթվի մեր նոր լուսաբանությամբ վերանում են ժամանակագրական այն անտեղությունները և թյուրիմացությունները, որ անվերջ կրկնվում են հայագիտական ուսումնասիրություններում, ինչպես և այն օտար երկերում, որ վերաբերում են բյուզանդական կայսրության և արաբական խալիֆայության պատմություններին:

Արաբական թե այս և թե վերոհիշյալ արշավանքների թվականների ճշտմամբ ոչ միայն փոխվում է արշավանքների նախկին ժամանակագրական դասավորությունը, այլև խախտվում են այն ընդհանրացումները, որ հիմնված են ժամանակագրական հին սխալների վրա:

Laurent-ի «L'Arménie entre Byzance et l'Islam» նորագույն ուսումնասիրության մեջ սրբագրվելու են, օրինակ, հետևյալ սխալ ենթադրությունները.

1. 640 թվից մինչև 651 թիվը մատնանշված են իռանի մոտ վեց արշավանք՝ Բյուզանդահայաստան կամ Պարսկահայաստան (տես էջ 90 և 371), մինչդեռ այդ պնդումը հիմնապես ժխտվում է նոր այս ուսումնասիրությամբ.

2. Ըստ իռանի՝ Հայաստանն այդ արշավանքների ժամանակ շարունակ անցել է մերթ արարների ձեռքը և մերթ բյուզանդացիների (տես էջ 199—200 և 371). այս ենթադրությունը ևս ճիշտ չէ:

Իրապես, ինչպես վերև տեսանք, մինչև 650 թիվը տեղի են ունեցել միայն երեք արշավանք հետևյալ հաջորդականությամբ՝

1. 640 թվին՝ արաբական առաջին մեծ արշավանքը Միջագետքի կողմից և Դվինի առումը (640 թվի հոկտեմբերի 6-ին, ուրբաթ).

2. 642/643 թվին՝ արաբական երկրորդ արշավանքը Ատրպատականի կողմից Պարսկա-հայաստան և Մարդուցայքի կոտորածը.

3. 650 թվին՝ արաբական երրորդ մեծ արշավանքը դարձյալ Ատրպատականի կողմից և Արծափի առումը (650 թ., օգոստ. 8-ին, կիր.):

Այս երեք արշավանքն էլ ունեցել են ասպատակության բնույթ. արաբական զորքերը վերցրել են ավար և գերիններ ու վերադարձել: Արաբական տիրապետությունը Հայաստանում հաստատվել է ոչ թե այդ արշավանքների ժամանակ, այլ յոթերորդ դարի հիսունական թվականների սկզբներին:

5. ԹԵՈՒՌՈՐՈՍ ՌԵՏՈՒՆԻ ԵՎ ԹԵՈՒՌՈՐՈՍ «ԶԱՒԻՐԱՎԱՐ ՅՈՒՆԱՅ».

Պատմագիտական նորագույն ուսումնասիրություններում շփոթել են, ինչպես՝ ներքև կտեսնենք, Թեոդորոս Ռշտունուն մի այլ Թեոդորոսի հետ, որը պատրիկ Վաղենտինի սպանությունից հետո (643 թ.) նշանակված է եղել «զաւրավար յունաց»:

Թյուրիմացությունն առաջ է եկել նրանից, որ պատմագետները սխալ են հասկացել Սեբեոսի վկայությունները նրա պատմության լթ գլխում:

Սեբեոսը՝ Վաղենտինի դավադրությունը և նրա գլխատումը նկարագրելուց հետո՝ տալիս է «ոմն Թէոդորոսի» մասին հետևյալ տեղեկությունը.

1. «Պատմութիւն ի Հերակլն», Թիֆլիս 1912, էջ 184, գլ. ԼԲ՝

Եւ զԿոստանդին հաստատեցին յաթոռ թագաւորութեանն: Եւ արարին զաւրավար զԹէոդորոս զոմն հաւատարիմ յիշխանացն Հայաստանեայց, յայնց՝ որ ի յունաց կողմանէ: Սա իբրեւ առ զաւրավարութիւնն՝ աղաչեաց զթագաւորն և խնդրեաց պարգևս՝ առնել ողորմութիւն այնոցիկ, զորս էր արսորեալ յԱփրիկէ: Եւ մանաւանդ վասն ասպետի՝ որդույ Սմբատայ խոսրով Շում կոչեցելոյ: Եւ քաղցրացոյց Աստուած զսիրտ թագաւորին և հրամայեաց ածել զնոսա ի քաղաքն թագաւորական: Եւ ընկալաւ զնոսա իբրեւ զսիրելիս թագաւորութեանն և զորդի նորա առաջին սպաթար զՍմբատ ի մէջ ամենայն սպաթարացն, և կանտիտատ: Եւ անդէն կարգեաց ի կարգն առաջի յամին հինգերորդի թագաւորութեան իւրոյ: Նոյնպէս և զՎահանն խոռխոռունի, և զայլ ևս»:

Նույն այս ժամանակ, ինչպես հաղորդում է Սեբեոսը, Կոստանդինն ուղարկում է Հայաստան Թումա իշխանին, որը հանկար-

ժակի հարձակվում է Կոստյքում Թեոդորոս Ռշտունու վրա, կալանավորում նրան և ուղարկում Կոստանդնուպոլիս: Ինչպես տեսնում ենք, Սեբեոսի վկայություններից պարզ հետևում է, որ Թեոդորոս Ռշտունին և հունաց զորավար Թեոդորոսը տարբեր անձնավորություններ են:

Սեբեոսի մոտ հունաց զորավար Թեոդորոսը հիշվում է նաև մի ուրիշ հատվածում:

Վարազտիրոցը, որ փախել էր Կոստանդնուպոլսից ու ամրացել Տաքքում, կյուրապաղատ է կարգվել Հայաստանում դարձյալ այս զորավարի ու ներսես կաթողիկոսի միջնորդությամբ:

«Յանժամ հրաման հտ զաւրավարն յունաց Թէոդորոս, վկայում է Սեբեոսը (էջ 187), հանդերձ իշխանաւքն զաւրուն և նախարարաւքն Հայոց՝ արձակել զներսէս կաթողիկոս առ Ասպետ, և տանել նմա երդումն հաւատարմութեան ի խնդրել նմա զիշխանութիւն աշխարհին, և ածել նմա զկին իւր զորդիսն»:

Թեոդորոս «յունաց զաւրավար»-ը, ինչպես երևում է այս հատվածի բովանդակությունից, Վարազտիրոցի փախուստի ժամանակ գտնվել է Հայաստանում, մինչդեռ Թեոդորոս Ռշտունին՝ համաձայն նույն այս լի գլխի շարունակության՝ ստացել էր նորից զորավարության իր նախկին իշխանությունը և արձակվել Կոստանդնուպոլսից Հայաստան ոչ թե Վարազտիրոցի փախուստից առաջ, այլ նրա մահից հետո:

Ուրեմն՝ ավելի քան պարզ է, որ այս երկրորդ վկայությունը ևս վերաբերվում է Թեոդորոս հունաց զորավարին և ոչ Թեոդորոս Ռշտունուն:

Սեբեոսի պարզ ու որոշ վկայությունները սխալ են հասկացված ոչ միայն գիտական հին երկերում, այլև պատմական ու բանասիրական նորագույն աշխատություններում, օրինակ՝

1. Юл. Кулаковский, История Византии, т. III, Киев, 1915, стр. 191—

«Вступив в сношения с императором при посредстве католикоса Феодор Рыштуни ходатайствовал о смягчении участи своих соплеменников, членов армянской знати, которые томились в ссылке по делу о заговоре на жизнь Ираклия в 638 г. То были Вараз-Тироц, сын Сумбата Багратуни и Ваган Хорхорунни. С первым из них он был связан воспоминаниями юности, проведенной при дворе Хозроя. Предоставляя Феодору Рышту-

ни высшие полномочия в Армении, император внял его просьбе, вернул из ссылки обоих и возвратил им их придворные саны».

2. Marquart, Osteuropäische und Ostasiatische Streifzüge, Leipzig 1903, էջ 440. տես նաև «Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը», Թարգմ. 2. Մ. Հապոդյանի, Վիեննա 1913, էջ 4:

«Հերակղ մահուրնէն յառաջ կերդուրնցնէ իր որդին՝ որ ետ կանչէ Ասպետը եւ իւր նախկին աստիճանին մեջ հաստատէ, Սեբ. 108 (641-ին): Կոստանդին Հերակղի եղբորորդին՝ Թէոդորոս Ռշտունեայ աղաչանաց վրայ կըկատարէ զայս. Սեբ. 114»:

Փաստական նույն այս սխալը հանդիպում է նաև ուրիշ աշխատություններում, որ անհրաժեշտ է իհարկե ուղղել:

Տուրնեբիզը (Histoire, էջ 355) և Մկր. Ղազարյանը (armenien unter der arabischen Herrschaft էջ 29) ենթադրում են, որ վերոհիշյալ հունաց զորավար Թեոդորոսը Թեոդորոս Վահևունին է և ոչ Թեոդորոս Ռշտունին: Սակայն Համբարյանը Հուշարձանում լույս տեսած իր հոդվածում (էջ 245) իրավամբ առարկում է, որ «Սեբէոս երկիցս կըլիշէ զԹեոդորոս Վահևունի, զոր նույն իսկ ապստամբ կնեքկայացնէ, մինչ հոս յիշուած Թէոդորոսը հաւատարիմ կը կոչէ կայսեր»:

Ուշագրավ է նաև այն, որ իներ՝ Սեբեոսը տարբերում է այս երկու Թեոդորոսներին՝ մեկին նա անվանում է Թեոդորոս Վահևունի իսկ մյուսին՝ «Թէոդորոս ոմն հաւատարիմ յիշխանացն Հայաստանեայց, յայնց՝ որ ի յունաց կողմանէ»:

Կարող ենք ուրեմն վստահորեն եզրակացնել, որ Սեբեոսի հիշած Թեոդորոսները՝ Թեոդորոս Ռշտունին, հունաց զորավար Թեոդորոսը և Թեոդորոս Վահևունին՝ տարբեր անձնավորություններ են:

6. ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆ՝ ԴՐՈՒՆԳԱՐ ԵՎ ՈԶ ԿՅՈՒՐԱՊԱՂԱՏ.

Պատմական և բանասիրական գրեթե բոլոր աշխատություններում Վարազտիրոցի որդին Սմբատը հիշատակված է իբրև կյուրապալատ և իշխան հայոց: Ընդհանուր այս կարծիքը, որ հիմնված է Սեբեոսի, Ղևոնդի և Հովհաննես կաթողիկոսի ցուցմունքների վրա, ավելի քան վիճելի է:

Մեջ բերենք նախ Սմբատի իշխան կարգվելու մասին աղբյուրների վկայությունները.

1. «Պատմութիւն Սեբէոսի ի Հերակլին», Թիֆլիս 1912, էջ 188, գլ. 18՝

«Արդ՝ մինչդեռ գայր հրովարտական և պատիւն առնել զնա (զՎարազտիրոց) կիրաւադատ, յանկարծակի եհաս նմա հիւանդութիւն և մեռաւ. եւ բարձին զմարմին նորա և տարան թաղեցին առ հաւրն իւրում ի Դարիւնս: Եւ զորդի նորա զանդրանիկ, որում անունն էր Սմբատ, կարգեաց արքայ ի պատիւ հաւր իւրոյ, տունալ նման զիշխանութիւնն բնիկ տանուտէրութեանն ասպետութեան, և արար զնա դրունգար զարաց իւրոց: Ետ նմա կին ի տանէն Արշակունեաց և իւրոց մերձաւորաց, և արձակեաց ի բանակն առ զարս իւր»:

2. «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբ. 1887, էջ 12, գլ. Դ՝

«Ի սորա (Մուսիայի) յառաջնում ամի իշխանութեանն և ի իծ ամի Կոստանդինի կայսեր, որ էր թոռն Հերակլի, սկսաւ զօրս գումարել ի վերայ աշխարհիս Հայոց իշխանն Տաճկաց: Ազդե եզև առ թագաւորն Կոստանդին բանն. և հրամայէր զօրավարին որ ի կողմանս Կիլիկեցոյ՝ ելանել ընդդէմ նոցա. Ընկենոյր և զիշխանն Թէոդորոս յիշխանութենէն վասն նինգութեանն, զոր արար առ Պոկոպայ, և փոխանակ նորա կացուցանէր զՍմբատ ոմն ի տոհմէ Բագրատունեաց, և առաքէր ընդ զօրավարին իւրում»:

3. «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ, Պատմութիւն Հայոց», Թիֆլիս 1912, էջ 85՝

«Իսկ նա (Վարազտիրոց) յառնուլ զիշխանութեան պատիւն՝ վաղվաղակի վախճանի. զոր և տարեալ եդին ի Դարօն առ հօր իւրում քաջին Սմբատայ: Ապա ներսէս զորդի նորա զՍմբատ ի պատիւ հորն խնդրէ կացուցանել, և հայցէ ևս զԹէոդորոս Ռշտունեաց տէր ի զօրավարութիւն հաստատել: Եւ այսպէս պայազատեալ՝ ապահովանայր առ ժամանակ մի շար հինից. Հազարու աշխարհիս մեր»:

Աղբյուրների այս վկայությունները բավական անկապ են և հակասական: Պատմաբանները և բանասերները, անուշադիր թողնելով ակներև այդ հակասությունները, օգտվել են անխտիր բոլոր աղբյուրներից առանց այդ վկայությունների համեմատական և քննական ստուգման: Հենվելով մեջ բերված վկայությունների վրա՝ նրանք ընդունել են, որ Սմբատը կարգված է եղել կյուրապազատ և հայոց իշխան իր հօր մահից հետո (տե՛ս Չամչյան, Պատմութիւն

Հայոց, Բ, էջ 345, 347, 349 և 356. Saint-Martin, Mémoires 1, էջ 337, Tournebize, Histoire էջ 96—97. K. Arslan, Etudes historiques էջ 276. Chazarian, Armenien unter der arabischen Herrschaft, էջ 30. Morgan, Histoire, էջ 116. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam, էջ 85, 333.

Չամչյանը, Սեն-Մարտենը և Տուրնեբիզը որոշել են անգամ նրա պաշտոնավարության տարեթիվը՝ 644—654 թ.:

Համապատասխանում են արդյոք այս եզրակացություններն աղբյուրների հաղորդած տեղեկություններին:

Ինձ թվում է, դժվար չէ համոզվել՝ որ այդ եզրակացությունները ոչ միայն հիմնավորված չեն, այլև բոլորովին հակառակ են ժամանակակից պատմագրի՝ Սերեոսի վկայության:

Քննենք մի առ մի աղբյուրների վերոհիշյալ վկայությունները:

Ղևոնդի պատմելով՝ Կոստաս-Կոստանդինը Սմբատին իշխան էր կարգել փոխանակ Թեոդորոս Ռշտունու Մարդուցայքի դեպքից հետո: Այդ դիտողությունը ճիշտ չէ: Սերեոսի պատմությունից մենք գիտենք, որ Թեոդորոս Ռշտունին Մարդուցայքի դեպքից մի քանի տարի հետո (646 թվին) դատի է տրվել Կոստանդնուպոլսում, արդար է ճանաչվել և վերահաստատվել զորավարության իր նախկին պաշտոնում և վերադարձել Հայաստան, հավանորեն 649 թվին: Ժամանակակից նույն պատմիչի վկայություններից հայտնի է, որ Թեոդորոս Ռշտունուց հետո Կոստանդինը նշանակել էր «իշխան հայոց հեծելոցն» (էջ 228, գլ. ԼԵ) Մուշեղ Մամիկոնյանին և այնուհետև կյուրապաղատ էր կարգել Համազասպ Մամիկոնյանին (էջ 246, գլ. ԼԸ): Ղևոնդի վկայությունը, ինչպես տեսնում ենք, կարելի է անտես առնել իբրև անհավանական և անվավեր:

Հովհաննես կաթողիկոսի ամբողջ հատվածը համառոտություն է, անտարակույս, Սերեոսի ընդարձակ վկայության: Այդ հատվածի վրա ևս հարկ չկա կանգ առնել:

Մնում է, ուրեմն, Սերեոսի վկայությունը, որը ժամանակակից լինելով Սմբատին՝ միակ արժանահավատ աղբյուրն է և ամենից ավելի մանրամասն ու ճշմարտապատում տեղեկություններ է հաղորդում նրա մասին: Եվ հենց Սերեոսի վկայությունը, ինչպես և Հովհաննես կաթողիկոսի անհաջող համառոտությունը, որ ուշագրություն մը չեն կարդացվել և բաղդատվել իրար հետ, հիմք են ծառայել վերոհիշյալ թյուրիմացության, որ իբր Սմբատը հոր մահից հետո նշանակվել է կյուրապաղատ և հայոց իշխան: Սխալ են հասկացվել Սերեոսի հատվածում Սմբատի մասին հետևյալ տողերը.

«Եւ զորդի նորա զանդրանիկ՝ որում անունն էր Սմբատ կարգեաց արքայ ի պատիւ հաւր իւրոյ, տուեալ նմա զիշխանութիւնն բնիկ տանուտէրութեանն ասպետութեան»:

Հատվածի երկրորդ մասից պարզ երևում է, որ «պատիւն» այստեղ ոչ թե Սմբատի հոր կյուրապաղատության «պատիւն» է, այլ «բնիկ տանուտէրութեանն ասպետութեան»։ Սերեոսի վկայության իմաստն այն է, որ Սմբատը լինելով Վարազտիրոցի անդրանիկ որդին՝ ճանաչվել է կայսեր կողմից իբրեւ Բագրատունյաց տանուտեր։ Նա չէր կարող կարգված լինել կյուրապաղատ և հայոց իշխան, որովհետեւ Սերեոսն իր վկայության շարունակության մեջ որոշ կերպով վկայում է, որ Սմբատը ստացել էր կայսրից դրոնգարի պաշտոն և ուղարկվել բանակ։ Իսկ դրոնգարությունը կամ գնդապետությունը, ինչպես հայտնի է, զորական հասարակ պաշտոն էր. ուստի միանգամայն հասկանալի է, որ Հայաստանի կյուրապաղատին չէր կարելի կարգել դրոնգար և ուղարկել բանակ։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հերքվում է Սմբատի մասին վերոհիշյալ կարծիքը, որ մինչև այժմ կրկնվել է գրեթե բոլոր երկերում։

ԺՈՂՈՎՐԴԵԿԸՆ ԸՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՅԸՍՏԱՆՈՒՄ ԸՐԱՐԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ՝

Եվրոպական պատմագիտության մեջ այն կարծիքն է սովորաբար տիրում, որ իբր թե արևելյան ժողովուրդները հլու և հնազանդ են լինում միշտ ճնշող բռնակալների հանդեպ, Հռչակավոր գերմանական պատմագետ Թ. Մոմզենը, օրինակ, իր Հռոմեական պատմության մեջ մատնանշում է, որ ասիացիներն անսահման հակում ունեն անգործության և ընդունակ չեն ինքնաբերաբար ոտքի ելնելու շահագործող իշխանությունների դեմ²։

Այդ կարծիքը, ինչպես կտեսնենք, բացարձակապես սխալ է։ Նորագույն ուսումնասիրությունները, գլխավորապես ռուս արևելագետների՝ ակագեմ. Բարտուլդի, պրոֆ. Ցակուբովսկու և ուրիշների, ինչպես և իմ այսօրվա դասախոսությունը, պարզ ապացույց են, որ ժողովրդական շարժումները և ապստամբությունները տեղի են ունեցել պարբերաբար ոչ միայն Միջնադարյան Ռուսաստանում և Արևմտյան Եվրոպայում, այլև Հայաստանում ու Մերձավոր Արևելքում։ Հատկապես արարական տիրապետության շրջանում գյուղացիների, արհեստավորների ու անգամ ստրուկների ըմբոստացումներն ու ապստամբությունները, ինչպես ցույց են տվել վերոհիշյալ ռուս գիտնականները, 9—10 դարերում դառել էին գրեթե անընդհատ։

Երբ խոսք է լինում այդ շարժումների մասին՝ պետք է նախ և առաջ ի նկատի ունենալ, որ մատնանշված ապստամբություններն ունեցել են կամ սոցիալական ու դասակարգային բնույթ և կամ

1 Տե՛ս առանձին գրքուկով, հրատարակություն Երևանի Պետական համալսարանի, 1939 թ.։

² Момзен, «Римская история», т. II, Москва, 1887, էջ 269։

եղել են ժողովրդական-ազատագրական շարժումներ ընդդեմ ճնշող ու կեղեքող օտար տիրապետողների:

Սոցիալական-գաղափարային բնույթի շարժումները Մերձավոր Արևելքում, ինչպես այժմ պարզված է, գտնվել են, մեծ մասամբ, Մազդակյանների ուսմունքի ազդեցության տակ: Սասանյան Պարսկաստանի Կավատ Թագավորի ժամանակ (488—531 թ.), այս ուսմունքը, ինչպես հայտնի է, անարգել կերպով տարածվել էր Պարսկաստանում և ունեցել ժողովրդական ստորին խավերի մեջ հսկայական հաջողություն: Իր կրոնական մասում այս աղանդը պարզապես խառնուրդ էր Ջրաղաշտական դուալիզմի և պարսկա-քրիստոնեական Մանիքեյական աղանդի: Իսկ սոցիալական իր մասում նա քարոզում էր ֆեոդալական դասային արտոնությունների վերացում, ընդհանուր հավասարություն և գույքերի ու հարստությունների, ինչպես և կանանց, հավասար բաշխում բոլոր մարդկանց մեջ: Մազդակի ու նրա հետևորդների ասելով, անհավասարությունը շար ու դիվային մի երևույթ է, իսկ հավասարության հաստատումն արդար մի պահանջ է և համապատասխանում է բարի աստծու կամքին:

Կրոնական-սոցիալական այս աղանդի վրա ես հարկավոր համարեցի առանձնապես կանգ առնել, որովհետև Մազդակյանները, ենթարկվելով հետագայում, վերոհիշյալ Կավատի Թագավորության վերջին տարիներում, սոսկալի հալածանքների, փախել էին մասամբ նաև Ատրպատական ու իրենց ուսմունքը տարածել էին Անդրրկովկասում և, ըստ երևույթին, նաև Հայաստանում: Հայտնի է արդեն, որ իններորդ դարի առաջին կիսում Ատրպատականում տարածված պարսիկ Բաբեկի և նրա հետևորդների «հուլորամյան» անվանվող աղանդի մեջ ևս կային գույքային հավասարության պահանջներ, որ պետք է վերագրել, անշուշտ, Մազդակյանների ազդեցության: Միանգամայն հնարավոր է նույնպես, որ հայ Պավլիկյան ու Թոնդրակյան աղանդների վրա ևս կարող էին որոշ ազդեցություն գործած լինել պարսկական այդ աղանդավորները: Սակայն այս խնդիրը կարոտ է գեռ ուշադիր ու լուրջ քննության և փաստական հիմնավորման ու ապացուցման մատենագրական համոզիչ վկայությունների օգնությամբ:

Տարբեր բնույթի շարժումներ էին, ինչպես վերև ասացի, ժողովրդա-ազատագրական շարժումներն ընդդեմ օտար տիրապետության: Եվ հենց այս կարգի՝ 8—9-րդ դարերի երկու հայկական մեծ ապստամբություններն ընդդեմ արաբական տիրապետության, գրկավոր նյութն են կազմելու իմ այսօրվա դասախոսության, իսկ

հատկապես կրոնական-սոցիալական բնույթ ունեցող դասակարգային շարժումների մասին Հայաստանում ես խոսելու եմ հաջորդ իմ դասախոսության ընթացքում, որի թեման է լինելու «Քաղաքները Հայաստանում 10—11-րդ դարերում»:



Արաբական տիրապետությունը հաստատվել էր Հայաստանում, ինչպես գիտեք, յոթերորդ դարի հիսունական թվականների սկզբներին: Նոր նվաճողների տիրապետության առաջին շրջանում, սկսած մոտ 650 թվից մինչև 750 թիվը, ուրեմն՝ գրեթե ճիշտ հարյուր տարի Հայաստանը գտնվում էր Օմայան խալիֆաների իշխանության տակ, իսկ 750 թվից սկսած մինչև 887 թիվը, այսինքն՝ մինչև Բագրատունյաց թագավորության հաստատումը՝ նա ենթարկվում էր Աբբասյան տոհմի խալիֆաներին: Արաբական տիրապետության առաջին շրջանում խալիֆայության կենտրոնը գտնվում էր Դամասկոսում և գերիշխող դեր էին կատարում նոր աշխարհակալ պետության մեջ Ասորիքի արաբները, իսկ երկրորդ շրջանում կենտրոնը դառել էր 762 թվին հիմնված Բաղդադ քաղաքը և գերակշիռ դեր էին խաղում Իրաքի արաբները և մահմեդականություն ընդունած պարսիկ ազնվականությունը:

Արաբական նվաճումների և աշխարհակալ ծավալման մասին առանձնապես հետաքրքիր է արաբական մատենագիր Յակուբի վկայությունը նրա «Գիրք խարաջի մասին» երկում, որի մեջ նա Օմար խալիֆին վերագրում է հետևյալ ուշագրավ խոսքերը.

«Մահմեդականներն ուտում են նրանց (նվաճվածներին), քանի իրենք կենդանի են, իսկ երբ մենք ու նրանք մեռնենք՝ մեր որդիները կուտեն նրանց (նվաճվածներին) որդիներին՝ իրենց կենդանության ժամանակ»:

Այս առտողներն ու շահագործողները, իհարկե, առավելապես Օմայան և Աբբասյան խալիֆներն էին և իշխող դասերը, մինչդեռ արաբական ու մահմեդական ժողովրդի ստորին խավերը իրենք ևս գտնվում էին տնտեսական ծանր դրության մեջ:

Օմայանների ժամանակ արաբների տիրապետությունը Հայաստանում, ինչպես և բնակչության, — իհարկե զխավորապես ստորին խավերի, — տնտեսական ու հարկային շահագործումն օտար այս աշխարհակալության կողմից եղել են, մանավանդ սկզբնական շրջանում, համեմատաբար մեղմ ու տանելի: Նրանց մեղմ ու զգուշ

շավոր այդ քաղաքականութիւնը բացատրվում է պարզապէս նրանով, որ Օմայաններն ի նկատի են ունեցել Հայաստանի ստրատեգիական ու ռազմական մեծ նշանակութիւնը և ուզեցել են, պահպանելով նրա ներքին ինքնուրույնութիւնը և նախարարական նախկին կարգերը՝ օգտագործել նրա զինվորական ուժերն իրենց նոր սահմանների պաշտպանութեան համար, ընդդէմ Բյուզանդիայի ու խաչարների: Օմայանների այս քաղաքականութեանը կամովին ընդառաջել էին և իրենք՝ հայկական նախարարութիւնները: Տեսնելով, որ Բյուզանդական կայսրութեան զորքերը գրեթէ անընդհատ պարտութիւն են կրում, և հույս չունենալով օգնութիւն ստանալու հույներից՝ նրանք հպատակել էին խալիֆայութեանը, կնքելով նրա հետ հատուկ պայմանագիր:

Այդ դաշինքը, որով տրվել էր նախարարութիւններին ներքին ինքնուրույնութիւն՝ կնքված էր 653 թվին Մուավիայի հետ: Թե ինչպիսի մեծ արտոնութիւններ էին նրանք ստացել՝ այդ երևում է դաշինքի բովանդակութիւնից:

«Այս թող լինի, — պայման է կապում Մուավիան, — հաշտութեան ուխտն իմ և ձեր մեջ՝ որքան ժամանակ դուք կամենաք: Երեք տարի ես ձեզանից հարկ չեմ առնելու. իսկ հետո կտաք, ձեր երդման համաձայն, որքան դուք կկամենաք: Ձեր երկրի մեջ պետք է ունենաք 15.000 հեծալազոր և նրանց պետք է պարենավորեք ինքներդ. արժեքը ես դուրս կգամ հարկից: Հեծելազորը ես Ասորիք չեմ տանի, սակայն տրիշ տեղ, ուր որ հրամայեմ՝ պետք է պատրաստ լինեն զնալու: Ձեր բերդերը ոչ ամիրաներ կուղարկեմ, ոչ արաբ սպա և ոչ նույնիսկ մեկ հատ հեծվոր: Թշնամի չպիտի մտնի Հայաստան. իսկ եթե հույները ձեզ վրա հարձակվեն՝ կուղարկեմ ձեզ օգնական զորք, որքան որ ուզենաք: Երդվում եմ մեծ Աստծու անունով, որ ստա չեմ խոստում» (Սեբեոս, դ. ԼԾ): («Այս լիցի ուխտ հաշտութեան իմոյ ընդ իս և ընդ ձեզ որչափ ամաց և դուք կամիջիք. և ոչ առնում ի ձէնջ սակ զերբեամ մի. ապա յայնժամ տաջիք երդմամբ, որչափ և դուք կամիջիք. և հեծեալ կալէք յաշխարհիդ ԺԾ հազար: Եւ հաց յաշխարհէն տուք, և ես ի սակն արքունի անգարեմ, և զհեծեալսն յԱսորիս ոչ խնդրեմ. բայց այլուր և հրամայեմ, պատրաստ լիցին ի գործ. և ոչ արձակեմ ի բերդորայն ամիրայս, և ոչ տաճիկ սպայ՝ ի բազմաց մինչև ցմի հեծեալ: Թշնամի մի մտցէ ի Հայս. և եթէ գայ Հոռոմ ի վերայ ձեր՝ արձակեմ ձեզ

զղարս յազնականութիւն որչափ և դուք կամիջիք: Եւ երդնում
ի մեծն Աստուած՝ եթէ ոչ ստեմա)¹:

Այս դաշնագրությամբ, ինչպես տեսնում ենք, հայկական նա-
խարարություններին տրվել էին ինքնավար իրավունքներ ու բացա-
ռիկ արտոնություններ: Սակայն շնայած դրան՝ արաբական տիրա-
պետությունը, անգամ այս սկզբնական շրջանում, Հայաստանի
համար եղավ աղետալի ու կորստաբեր: Նա պարբերաբար կրկնվող
պատերազմների ընթացքում շարունակ հարձակման ու ավերածու-
թյունների ենթարկվեց: Եթե նա հավատարիմ էր մնում խալիֆա-
յությանը՝ նրան անխնա պատժում էին հույները: Իսկ եթե անցնում
էր Բյուզանդիայի կողմը՝ վրեժ էին առնում արաբները:

Հայաստանի ամայացումը և տնտեսական քայքայումը Օմա-
յանների տիրապետության շրջանում պարզ ու որոշ մատնանշված
է ասորական մատենագիր Դիոնիսիոս Տելմահրացու ժամանակա-
գրության մեջ: Նկարագրելով արաբական Մասլամա հրամանատա-
րի ռազմերթը (716/7 թ.) դեպի Բյուզանդիա և նրա գալը Արածանի
գետի հովիտներն ու ներքին Հայաստան՝ Տելմահրացին վկայում
է, որ՝

«Այս ամբողջ երկիրն աչքի էր ընկնում և ուներ առաջ
բազմաթիվ բնակչություն, խաղողի շատ այգիներ, հացացան-
քեր և ամեն տեսակ սքանչելի ծառեր: Սակայն այնուհետև
նա ավերվել էր և նրա շրջանները չունեին այլևս բնակչու-
թյուն»²,

Եթե խալիֆների տիրապետության առաջին շրջանում Հայաս-
տանն ավերվում էր բյուզանդա-արաբական կռիվների պատճա-
ռով, որոնք հաճախ տեղի էին ունենում Հայաստանի տերիտորիա-
յի վրա, նրանց տիրապետության երկրորդ շրջանում, գլխավորա-
պես ութերորդ դարում, նա արյունաքամ էր լինում ոչ այնքան այդ
կռիվների, որքան ծանր և տաժանելի հարկերի պատճառով:

Օմայանների իշխանության ժամանակ, մանավանդ սկզբնա-
կան ժամանակաշրջանում, Հայաստանի արքունի հարկերը համե-
մատաբար ծանր չէին: Այդ երևում է ոչ միայն վերոհիշյալ դաշինքի

¹ «Պատմութիւն Սեբեոսի եպիսկոպոսի ի Հերակլես», Ս. Պետերբուրգ 1879, էջ 138:

² «Ses Chronique de Denys de Tell-Mahré» publ. et trad. par Chabot, Pa-
ris, 1895, էջ 12:

պայմաններին, այլև 12-րդ դարի հայ մատենագիր Սամուել Անեցու ուշագրավ մի վկայությունից: Սրա ասելով, երբ արաբական իշխանությունը հաստատվեց Հայաստանում, խալիֆայությունը

«վերցնում էր յուրաքանչյուր տնից շորս դրամ, երեք մոդ խորբալ (այսինքն՝ մաղած ցորեն), մեկ ձիատուպրակ, մեկ մազե պարան և մեկ ձեռնոց. իսկ քահանաներից, ազատներից և հեծելազորից հրաման տրվեց հարկ չառնել»:

(«Յամենայն տանէ առեալ Դ դրամ և Գ մոդ խորբալ, և ձիատուպրակ մի, և պարան մի մաղէ, և ձեռնարար մի. իսկ ի քահանայից և յազատաց, և ի հեծելոց՝ ոչ հրամայեաց առնուլ զհարկն»)¹:

Մեջ բերված այս վկայության մեջ ի նկատի է առնված 7-րդ դարում Հայաստանում գործածվող մոդը կամ գրիվը, որի կշռորդը, ինչպես ցույց եմ տվել իմ «Վշիռները և չափերը» աշխատության մեջ (էջ 75—79), հավասար էր 9 կիլ. 792., իսկ դրամը նույն այդ դարում Մերձավոր Արևելքում տարածված Սասանյան արծաթ դրամն է, որը համապատասխան է ըստ դրամական իր արժեքի մոտավորապես այժմյան 50 ոսկի կոպեկի²: Ուրեմն ըստ մեր այս հաշվի՝ 3 մոդ մաղած ցորենը, որ խալիֆայությունն առնում էր յուրաքանչյուր տնից համապատասխան կլինի 29 կիլ. 376 գր. կամ մոտ 2 փթի, իսկ վերոհիշյալ 4 դրամը հավասար կլինի մոտ 2 ոսկի ռուբլու Այս գումարի իրական արժեքը յոթերորդ դարում բավական բարձր էր, Այդ ժամանակաշրջանում մեկ փութ ցորենն արժեք մոտավորապես 25—50 ոսկի կոպեկ:

Ավելորդ չի լինի նույնպես մատնանշել որ վերոհիշյալ վկայության մեջ «ազատ»-ներից հետո հիշատակված հեծելազորը, հավանորեն, ռամիկներից կազմված «այրուձին» է, որ գոյություն ունեւր արդեն մարզպանության շրջանում: Ուշագրավ է, որ այս հեծելազորը, որն ազատ էր հարկերից, ինչպես և «ազատ»-ներն ու քահանաները ստանում էր Օմայաններից հատուկ ռոճիկ՝ տարեկան հարյուր հազար դահեկան³ (= մոտ 550.000 ոսկի ռուբլի):

¹ Տե՛ս Սամուել քահանայի Անեցույ, Հավագմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ 1893, էջ 82:

² Տե՛ս Զ. Մանանդյան, «Նյութեր Հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության», 2-րդ, Երևան 1928, էջ 29, ծան. 6:

³ Հմմտ. «Հուլագումն պատմութեան Վարդան Վարդապետի», Վենետիկ 1862, էջ 74 (զլ. 18): Վերոհիշյալ 100,000-ի գումարը ոմանք հայ քահանաներներից ենթադրել են դրամ կամ դիրհեմ: Այդ կարծիքը պարզապես սխալ է:

Միանգամայն պարզ է, որեմն, որ Օմայանների ժամանակ ոչ միայն ծանր չեն եղել Հայաստանից ստացվող հարկերը, այլև զգալի մասը հարկերի տրվել է որպես ռոճիկ հայկական հեծելազորին:

Արաբական հարկային քաղաքականությունը հիմնական փոփոխման ենթարկվեց Հայաստանում Օմայանների իշխանության վերջին շրջանում Հեշմ խալիֆի ժամանակ (724—743 թ.): Իր թագավորության առաջին կամ երկրորդ տարում այս խալիֆը կարգադրել էր իր Հերթ զորավարին աշխարհագիր անել Հայաստանում և ավելացնել նրա հարկերը: Այդ մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում Ղևոնդ պատմագիրը և Մովսես Կաղանկատվացին, որ կարևոր եմ համարում մեջ բերել ամբողջությամբ:

1. «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց», Գլ. Ժէ, էջ 100 (հրատ. 1887 թ.)

«Եվ սա (Հեշմը) իր իշխանության առաջին տարում հղացավ մի վատ խորհուրդ՝ ուղարկեց մի ռմն զորավար, որի անունը Հերթ էր, աշխարհագիր անել Հայոց աշխարհում և ծանրացնել նրա հարկատվության ծառայության լուծք տեսակ տեսակ շարիքներով... Եվ բազում վտանգ հասցրեց մեր աշխարհին մինչ այն աստիճան, որ բոլորը հառաչում էին ծանր նեղության պատճառով և ոչ ոք չէր կարող ազատվել հանրային վտանգից»:

(«Եւ սա յառաջնում ամի իշխանութեանն իւրոյ խորհուրդ վատ ի մէջ առեալ՝ առաքէր զոմն զօրավար, որում անուն էր Հերթ՝ աշխարհագիր առնել ընդ աշխարհս Հայոց վասն ծանրացոցանելոյ զանուր լծոյ ծառայութեան հարկատրութեան ւզգի ազգի շարեօք... Եւ բազում վտանգ հասուցանէր աշխարհիս, մինչ զի ամենեցոն հառաչել ի վերայ անհանգիստ նեղութեանցն, յորմէ ոչ գոյր ապրել ումեք յանհնարին վտանգիցն»):

2. «Մովսեսի Կաղանկատուացոյ, Պատմութիւն Աղուանից աշխարհի», 3-րդ, Ժէ, Մոսկվա 1860, էջ 258:

«Իսկ հարյուր յոթանասուն և չորս թվին Հայոց (մեր թվ. 725 թ.) ամառը անասունների կոտորածը եղավ և ձմեռը՝ Հերթի աշխարհագիրը, որն անթիվ պարտավորությունների հարկի տակ առավ մարդկանց, անասուններին և հողերի տարածությունները»:

(«Խսկ ի հարիւր եօթնասուն և շորս թուականութեանն
Հայոց (ամ տեառն 725), յամառն մահ անասնոց եղև, և ի
ձմերան՝ աշխարհագիրն Հերթի, որ էարկ զմարդ և զանասուն
և զսահմանս երկրի ընդ հարկաւ անթիւ ծառայութեան»):

Մեջ բերված այս վկայություններից տեսնում ենք, որ 725 թվին հաշվառման էին ենթարկվել Հայաստանում մարդիկ, անասունները և հողերը: Այս աշխարհագրից հետո վերանում էին պարզապես ֆեոդալական Հայաստանի հարկային նախկին արտոնությունները: Հարկերը գանձվելու էին այնուհետև ոչ թե առաջին մասն տներից կամ երդերից, այլ մարդկանց ու անասունների թվի համեմատ և ըստ հողերի տարածության ու, հավանորեն, նաև որակի: Նախկին երդահարկի բնույթը հիմնովին այժմ փոխվում էր և սկիզբ էր դրվում գլխահարկի, անասնահարկի և հողահարկի նոր սխեմայի, որը շուտով կատարյալ աղետ դառավ ամբողջ երկրի և, մանավանդ, հարկասուռ ռամիկ ժողովրդի համար:

Արաբական հարկային այս ծանր լուծն էր, որ 8-րդ դարում քտքի հանեց հարստահարված երկիրը և հիմնական պատճառը եղավ ժողովրդական կատաղի ապստամբությունների ընդդեմ խալիֆայության:

* *

Ութերորդ դարի գեսերին արաբական խալիֆայության մեջ տեղի ունեցավ քաղաքական մեծ հեղաշրջում: 748 թվին սկսվեցին նրա մեջ ներքին խռովություններ և 750 թվին, համառ ու արյունահեղ երկարատև կռիվներից հետո, սպանվեց Օմայան տոհմի վերջին խալիֆը, Մրվանը, և իշխանությունն անցավ Աբբասյանների և Իրաքի արաբների ձեռքը:

Այս խռովությունների ժամանակ հայկական նախարարություններն ուզեցին թոթափել արաբական լուծը և ապստամբեցին Գրիգոր Մամիկոնյանի առաջնորդությամբ՝ հույս ունենալով օգնություն ստանալ Բյուզանդիայից: Սակայն ապստամբությունը զլուխ չեկավ: Աշոտ Բագրատունին, Հայաստանի իշխանն ու պատրիկը, որին ստիպել էին մասնակից լինել ապստամբության, ինչպես և նախարարների մի մասը, բաժանվեցին շուտով Գրիգոր Մամիկոնյանից ու նրա կողմնակիցներից և հպատակվեցին հոժարակամ արաբներին:

Աբբասյանների իշխանության հաստատումից հետո դրությունը Հայաստանում դառավ անտանելի: Աբբասյան հարստության հիմ-

նագիրը՝ Արուստան ալ-Սաֆֆահը (750—754 թ. թ.) Հայաստան ուղարկեց որպես կառավարիչ իր եղբորը՝ Աբու-Ջաֆար ալ-Մանսուրին։ Սրա կառավարման ժամանակ Հայաստանի հարկատու ժողովրդի մեծագույն մասը մատնվեց հետին ծայր չքավորության։ Ոչ միայն չափազանց ավելացրին հարկերը, այլ պահանջում էին այժմ նաև նախկին երեք տարվա հարկերը, որոնք խալիֆայությանը չէին վճարված նախարարական ապստամբության ամբողջ տևողության ընթացքում։

Ղևոնդ պատմագիրը վկայում է, որ ալ-Մանսուրը պահանջում էր հարկ մինչևիսկ մեռելներից, ուստի և հրամայել էր քահանաներին ներկայացնել վախճանվածների ու նրանց ընտանիքների ցուցակները։ Այս վկայությունը, որ լավ չէ հասկացվել, իմ կարծիքով, պարզ է ու հասկանալի։ Ալ-Մանսուրը կարգադրել էր, ըստ իս, գանձել ժառանգներից մեռածների գլխահարկը, որն ապստամբության պատճառով խալիֆայությունը չէր ստացել նրանց կենդանության ժամանակ։ Փախել մի այլ շրջան և ազատվել հարկերից անկարելի էր, որովհետև Աբբասյանները հնարել էին ստուգման ու վերահսկողության հատուկ մի միջոց։ Որպեսզի կարողանան հայտնաբերել հարկ չվճարողներին՝ ալ-Մանսուրը հրամայել էր խարանել բոլորի վզերը, որոնք վճարել էին գլխահարկը՝ կապարե կնիքներով։ Ութերորդ դարի ասորական ժամանակագիր Դիոնիսիոս Տելմահրացու վկայությամբ՝ Միջագետքում կառավարչական հատուկ պաշտոնյաները խարանում էին երբեմն, ստրուկների նման, հարկահատույցների ոչ միայն վզերը, այլ նաև երկու ձեռքերը, կուրծքերը և կռակները¹։

Հարկային ծանր ալդ լուծը, ինչպես և հարկահանների հալածանքներն ու բռնությունները, ցայտուն կերպով նկարագրված են Ղևոնդի պատմության հետևյալ վկայության մեջ։

«Եվ տիրեց նրա (Մովսեսի) տեղ Աբդլան, որն ուղարկեց եղբորը, մյուս Աբդլային, իր տերության բոլոր երկրները։ Սա, գալով նախ հայոց աշխարհը՝ բազում վշտով ու նեղությամբ վտանգեց ամենքին և հասցրեց չքավորության և տնանկության. մինչևիսկ պահանջեց հարկեր նաև մեռելներից։ Նմանապես և որբերի ու այրիների ամբողջ բազմությունը նա շարաշար տառապեցրեց։ Տանջեց նույնպես աստվածային խորանի քահանաներին ու պաշտոնյաներին, ենթարկելով նրանց խոշտանգանքների, ծեծի ու խայտառակ ճիպո-

¹ Տե՛ս «Cronique de Denys de Tell-Mahre» 1895, էջ 104.

տահաբուժյան և պահանջելով, որ նրանք հայտնեն վախճան-վածների ու նրանց ընտանիքների անունները: Խոշտանգում էր նաև երկրի բնակիչներին ամենաբռնի ու դաժան հարկապահանջությամբ և, առնելով ամեն մի գլխից բազում դրամ արծաթի՝ դնում էր բոլորի պարանոցներին կապարե կնիք¹:

(«Եւ տիբէ ընդ նորա Արդւայ, և առաքէ զեղբայր իւր զմիւս Արդւայ շրջիւ ընդ ամենայն աշխարհս իշխանութեանն իւրոյ: Որ նախ ելեալ յաշխարհս Հայոց՝ բազում վշտօք և նեղութեամբ վտանգէր զամենեւին և հասուցանէր ի չքաւորութիւն տնանկութեան, մինչև պահանջել հարկս և ի մեռելոցն: Եւ զամենայն բազմութիւն որբոց և այրեաց շարալլով տառապեցուցանէր. վտանգէր զքահանայս և զպաշտօնեայս աստուածային խորանին խոշտանգանօք և քքօք այպանութեան և գանիւք՝ ի յայտ ածել զանուանս վախճանելոցն և զընտանիս նոցուն: Խոշտանգէր և զբնակիչս աշխարհիս բռնագոյն և դառն հարկապահանջութեամբ, առնով ըստ գլխոյ բազում զուգէս արծաթոյ, և դնել կնիք կապարեայ յամենեցուն պարանոցս»¹:

Միայն Հայաստանը չէր, որ հարկապահանջության տաժանելի օրեր ապրեց այս ժամանակաշրջանում: Ալ-Մանսուրը, ինչպես հաղորդում է Ղևոնդը, Հայաստանից անցավ խալիֆայության մյուս երկրները և, ծանրացնելով ամենուրեք հարկային լուծը, այնտեղ ևս նույն դաժանությամբ հավաքեց հարկերը: Նրա անսահման արծաթասիրության և ազահոլության պատճառով էր, որ անգամ յուր ազգը նրան անվանում էր «հայր» կամ «Արդուլ դանգի», այսինքն՝ ծառա ու մեծարող միմիայն դրամի:

Ալ-Մանսուրի Հայաստանից հեռանալուց հետո, նրան հաջորդող Եզիտ, Բագար ու Հասան կառավարիչների ժամանակ՝ հարկային լուծը Հայաստանում ոչ միայն չթեթևացավ, այլ ավելի ևս ծանրացավ: Աբբասյանները կարիք ունեին դրամական մեծ միջոցների պալատական իրենց շույլ ու շվայտ ապրուստի համար: Մեծ գումարներ էին հարկավոր նաև նոր հիմնված Բաղդադ քաղաքի շինության համար: Հասկանալի է, ուրեմն, որ այս պայմաններում, ծանրանալու էր օրավուր ինչպես Հայաստանի, նույնպես և խալիֆայության մյուս երկրների, գլխավորապես, աշխատավոր բնակչության դրությունը: Աբբասյանները վստահություն չունեին անգամ իրենց արաբական ու պարսկական հպատակների վրա: Սրանք

¹ Տե՛ս «Պատմութիւն Ղևոնդեայ», Ս. Պետերբուրգ, 1887, դ. ԻԸ, էջ 127:

պետութեան զանազան մասերում շարունակ ոտքի էին ելնում ու ապստամբում: Խալիֆների իշխանութեան գլխավոր հենարանը ոչ թե իրենց սեփական ժողովուրդն էր, այլ Խորասանից բերված վարձկան թուրք զորքերը, որոնց նույնպես անհրաժեշտ էր տալ սնունդ և ոռճիկ:

* * *

Ալ-Մանսուրի անմիջական հաջորդ՝ Եզիտ ոստիկանի իշխանութեան ժամանակ դրուֆտունը Հայաստանում դառել էր ծայրահեղորեն աղետալի: Դառն ու բռնի հարկապահանջութեան պատճառով երկիրը բոլորովին ուժասպառ էր եղել ու արյունաքամ: Ինչպես վկայում է Ղևոնդը (գլ. ԼԲ), Հայաստանում նվազել էր և գրեթե վերացել դրամն ու արծաթը:

Հնչյուն փողի այս հատնումը, ինչպես մատնացույց է արված «Հայաստանի առևտուրը և քաղաքները» ռուսերեն իմ աշխատության մեջ¹, չպետք է վերագրել միայն չափազանց հարկատվության, այլ, գլխավորապես, պետք է բացատրել նաև նրանով, որ արաբական տիրապետության ժամանակ Հայաստանի տնտեսական կյանքը զգալի չափով հետադիմել էր և զարգանում էր բնական տնտեսության հետադարձ հիմքերի վրա:

Դրամի և թանկարժեք մետաղների պակասման ու հատնումի հետևանքով անսահման բարձրանալու էր, իհարկե, նրանց արժեքը: Նույն այս ժամանակ, ինչպես վկայում է իր ժամանակագրության մեջ Միքայել Ասորին², Միջագետքում՝

«Ջափրի (այսինքն՝ ալ-Մանսուրի) շարաշար ագահութեան պատճառով այն աստիճան պակասեց արծաթը, որ եղն ու էշը ծախում էին մեկ դրամի և տղաները տալիս էին պահանջողներին 5 դրամի»³:

(«Իսկ շարաշար ագահութենէն Ջափրի այնչափ պակասեաց արծաթն, զի զեղն և զէշ դրամի միոյ վաճառէին, և զտղայն հինգ դրամի տային պահանջողացն»):

¹ Տե՛ս «О Торговле и городах Армении», էջ 133—136:

² Տե՛ս «Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորոց պատրիարքի», Երուսաղեմ 1871, էջ 353:

3. Ուշագրավ է, որ արաբական տիրապետության ժամանակ ստրուկների թիվը խիստ մեծ էր: Խալիֆ Մուավիան ունեցել է, օրինակ, միմիայն Արաբիայի իր կալվածներում 4000 ստրուկ: Ոմանք ունեցել են մինչև հսկ ավելի քան 10.000 ստրուկ: Մեծ գին ունեին, մանավանդ ստրուկ արհեստավորները:

Շատերը, ասում է նա (էջ 352), փորում էին գերեզմանները և փնտրում ոսկի ու արծաթ, որպեսզի վճարեն իրենց հարկերը:

Նման դրություն, ինչպես երևում է նաև հայ մատենագիրների վկայություններից, ստեղծվել էր նաև Հայաստանում:

«Հատեցրեց (Եզդիտը),— ասում է Ղևոնդը¹,— արծաթի գլուտը երկրից և հնարավոր չէր որևէ մեկին, տալով յուր գույքը և կարողությունը, ձեռք բերել իր անձի փրկության գինը: Չարաշար շարչարանքով, գեղոցով, կախաղանով և դառն տանջանքներով կեղում էին մարդկանց կյանքը: Ուստի և շատերը, փախչելով այրերը և երկրի փապարները՝ գաղվում էին ու թաքնվում: Ոմանք էլ ձյունախեղդ էին լինում և գետն էին իրենց ձգում անտանելի աղետի պատճառով»:

(«Ձի վախճանեաց զգիւտ արծաթոյ ի յերկրէս, և ամենայն ոք տալով զպաճարանս ընչից իւրեանց՝ ոչ գտանէին զգինս փրկանաց անձին իւրեանց. և չար կտտանօք, գելարանօք, և կախաղանօք և դառն տանջանօք կեղէին զկեանս մարդկան: Յորմէ փախստեայ եղեալ բազումք յայրս և ի փապարս երկրի՝ ղօղեալ թագչէին. և ոմանք ձիւնահեղձ և գետավէժ լինէին վասն անտանելի աղետիցն»):

Անհրաժեշտ է նույնպես մատնանշել, որ առաջին Աբրահայանների ժամանակ ոչ միայն անչափ ծանրացել էին Հայաստանի հարկերը, այլև սկիզբ էր գրվել նաև նախարարական ինքնավար կարգերի ու նախկին արտոնությունների ոչնչացման: Ղևոնդի վկայությամբ (գլ. ԻԸ)² Աբրահայանները կարգադրել էին, որ հայկական հեծելազորի ոռճիկը պետք է վճարե ոչ թե խալիֆայությունը, ինչպես այդ սահմանել էին Օմայանները, այլ իրենք՝ հայ իշխանները: Այսպիսով, ասում է Ղևոնդը, հեծելազորի պարտադիր ծառայությունը դառել էր «զրավաստակ աշխատութիւն»:

Պարզ է, որ հալածանքի նոր այս պայմաններում՝ խալիֆալ-Մանսուրը այլևս չէր կարող վստահություն ունենալ հայ նախարարների վրա: 770 թվին նա Հասան ոստիկանի հետ թուրքական զորքեր ուղարկեց Հայաստան:

Այս վայրագ ու արյունարբու վարձկանները, որոնք ավերածությունների ու թալանի առիթ էին փնտրում՝ զազրելի բռնություններ գործեցին Հայաստանի բնակչության անխտիր բոլոր խավերի վերաբերմամբ: Երկիրը մատնվեց այժմ սովի, սրի ու սարսափի:

¹ Տե՛ս Մալխասյանցի և Եզանցի հայտարարությունը, Ս. Պետերբուրգ 1887, Գլ. ԼԳ, էջ 135:

Եվ շուտով արաբական տիրապետութեան դեմ բռնկվեց ընդհանուր ապստամբութիւն, որին մեծ շափով մասնակցում էին նաև աւամիկները:

* *

Այս ապստամբութիւնը, որի մասին մանրամասն տեղեկութիւններ է հաղորդում Ղևոնդը, ուներ պարզապէս ազատագրական բնույթ: Նրա ճիշտ տարին, որը պատմագիտական երկերում, մեծ մասամբ, սխալ է տրվում, որոշվում է, ինչպես ցույց է տվել Ալի-շանը¹, 774 թվին:

Հուսահատված նախարարները, վկայում է Ղևոնդը,

«Երբ տեսան որ մեծ վտանգ է իրենց վրա հասել՝ մահն աչքի առաջ ունեցան և ձեռնամուխ եղան մի գործի, որը չէր կարող հաջողութիւն ունենալ, որովհետև իրենք քիչ էին թվով: Սակայն նրանք լավ համարեցին քաջութեամբ մեռնել, քան ապրել տաժանալից»:

(«Իբրև տեսին նախարարք Հայոց զվտանգ տարակուսանացն հասեալ ի վերայ ինքեանց՝ եղին զոգի ի ձեռին իւրեանց և ձեռնամուխ եղեն յիրս, զոր ոչ կարէին վճարել վասն զի նուազունք էին: Այլ սակայն լաւ համարեալ զմահ քաջութեամբ քան զկեանս վտանգաւոր՝ ձեռնամուխ եղեն յիրս ապստամբութեան»)»²:

Ինչպես և գրեթե միշտ՝ շարժման գրգռողը և ղեկավարը եղան Մամիկոնյանները: Ազատագրական ապստամբութիւնների առաջնորդ լինելը նրանք կարծես թե համարում էին իրենց տոհմային պարտականութիւնը:

Առաջինը գլուխ բարձրացրեց արաբական բռնութիւնների դեմ Արտավազդ Մամիկոնյանը, նա եկավ Դվին, որը արաբական իշխանութեան վարչական կենտրոնն էր, արտաքուստ ցույց տվեց իրեն մտերիմ ու հավատարիմ և զինեց ու հանդերձեց այստեղ իր զորքը, պատրվակ բռնելով, որ նախապատրաստութիւններ է տեսնում կռիւի համար խալիֆայութեան թշնամիների դեմ: Դվինից Արտավազդը շտապեց գնալ Կումայրի (= Լենինական), սպանեց այնտեղ հարկերի հրամանատարին և, վերցնելով նրա հավաքած հար-

¹ «Այրարատ», Վենետիկ 1890, էջ 525:

² S. S. հրատարակութիւն Մալխասյանցի և Եղյանցի, Ս. Պետերբուրգ 1887, էջ 137—138:

կերը՝ գնաց իր ընտանիքի ու այլ նախարարների հետ Եգիպտոս աշխարհը, որը գտնվում էր Բյուզանդիայի գերիշխանության տակ:

Զորս տարի հետո, 778 թվին, նույն այս Արտավազդը, որին Բյուզանդական կայսրը նշանակել էր ստրատեգ և կառավարիչ Անատոլիկոն թեմի՝ կարողացավ սոսկալի վրեժ առնել արաբներից և, գործակցութեամբ բյուզանդական երեք նշանավոր հայ զորավարների՝ Տաճատ Անձևացու, Վարազտիրոցի և Գրիգորիոսի՝ մեծ ջարդ տվեց և սաստիկ հարված հասցրեց նրանց Գերմանիկե քաղաքի մոտ՝ Կոմմագենում:

Շուտով Արտավազդի օրինակին հետևեց Մուշեղ Մամիկոնյանը, որը կոտորեց արաբներին, որոնք գտնվում էին նրա գավառում, և, գաղթելով ամբողջ իր տնով Կաղզվանի շրջանը՝ ամրացավ Արտագերս բերդում: Այստեղից նա ասպատակեց Բագրևանդ գավառը, կոտորեց հարկահավաքներին ու արաբական զորամասերը և դադարեցրեց հարկերի պահանջումը և բռնությունները: Մուշեղի մոտ, ինչպես վկայում է Ղևոնդը (գլ. ԼԴ, էջ 139), հավաքվեցին բոլոր ճնշվածներն ու հարստահարվածները: Արաբական զորքերը, որոնց ուղարկել էին նրա դեմ Կաբինից և Դվինից, ոչ միայն հաջողություն չունեցան, այլև մեծ ջարդ կրեցին ու մատնվեցին փախուստի:

Այնուհետև գրեթե բոլոր մյուս նախարարները ևս, Մուշեղի հաջողություններից սիրտ առած միացան նրան իրենց զորքերով և ապստամբությունը դառավ համատարած ու ընդհանուր: Ազատագրական այս շարժմանը մասնակցում էր նույնպես ռամիկ ժողովրդի բազմությունը:

Ահաբեկված արաբները, որոնց գլխավոր հենակետերը Հայաստանում քաղաքներն էին՝ Դվինը, Կաբինը, Արճեշը և այլ քաղաքավայրերը, ստիպված եղան պատասպարվել այդ ամբողջութուններում: Եվ հայերը, արաբական ծանր լծից ազատվելու համար՝ պետք է աշխատեին, բնականաբար, գրավել թշնամու այդ կայանները: Նրանք հարձակվեցին նախ գլխավոր ռազմակայաններից մեկի՝ Կարին քաղաքի վրա, որը սահմանամերձ էր Բյուզանդիային, և, շրջապատելով քաղաքը, սկսեցին պաշարողական կանոնավոր ու երկարատև գործողություններ՝ փորեցին խրամատներ ու աշխատեցին պարիսպների տակ ականներ անցկացնել:

775 թվի գարնան սկզբին ոտքի կանգնեցին արաբների դեմ Վասպուրականում Արծրունյաց ու Ամատունյաց նախարարները և ուղեցին հարձակվել արաբական նաև մի այլ մեծ կենտրոնավայրի՝ Արճեշ քաղաքի վրա: Նրանք հավաքել էին իրենց հեծյալ ջոկատները, որոնց ուղեկցում էին նաև հետիոտն ռամիկները, Բերկրի

գյուղի մոտ: Սակայն հարձակումը դեռ չսկսված՝ Հայաստան խուժեցին հարավից, Խլաթ քաղաքի վրայով, խալիֆայության 30.000 ընտիր խորասանյան զորքերը Ամր զորավարի առաջնորդությամբ:

Այդուհետ Բագրատունին, որը չէր միացել ապստամբության, նախազգուշացրեց նախարարներին՝ վերահաս վտանգի մասին: Սակայն ապստամբները, համարելով այդ նախազգուշացումը նենգություն՝ վճռեցին հարձակվել Արճեշի վրա: Բայց այստեղ Ամրի զորքերը, որոնք դարան էին մտել, գրոհեցին նրանց վրա և, մատնելով հեծելազորը փախուստի, կոտորեցին, գլխավորապես, անզին ու կռվի անվարժ հետիոտն: Ուսմիկներին, նախարարներից սպանվեցին, ինչպես վկայում է Ղևոնդը, միայն չորս հոգի, երեքը Տրուսյաց տոհմից և մեկը Ուրծայ գյուղից:

Ղևոնդ պատմագրի մոտ մատնանշված է Արճեշի կռվի ամսաթիվը և որը՝ ճյամսեանն հրոտից, որ օր չորրորդ էր ամսոյն յաւուր շաբաթու (գլ. ԼԴ, էջ 147): Համաձայն այս վկայության՝ կռվի թվականը, ամսաթիվը և օրը տոմարական հաշիվների օգնությամբ ճշտվել որոշվում է 775 թվի ապրիլի 15-ին, շաբաթ:

Մինչդեռ այս անցքերը կատարվում էին Արճեշի մոտ, պաշարված Կարինը, որի մեջ սաստկացել էր սովը, արդեն մոտ էր անկման: Սակայն Ամր զորավարի հաղթության լուրը վհատեցրեց ու լքում առաջ բերեց քաղաքը պաշարողների շարքերում: Ապստամբության ձախողումը և հետահաս տխուր վախճանը ակներև էին: Հայերն ունեին Կարինի մոտ ընդամենը մոտ 5000 կռվող, որոնց մեծ մասը կազմում էին հետևակ ու թեթև զինված ուսմիկները, մինչդեռ Ամրը գալիս էր նրանց դեմ, ունենալով իր հետ 30.000 լավ զինված հեծելազոր:

Հայկական փոքրաթիվ զորքը, ինչպես վկայում է Ղևոնդը, կարող էր հեշտությամբ խույս տալ թշնամու հետ ընդհարվելուց, որը վեց անգամ ավելի զորավոր էր: Բյուզանդիայի արևելյան սահմանները, ինչպես հայտնի է, հեռու չէին Կարին քաղաքից: Սակայն ապստամբները, ասում է Ղևոնդը,—

«Լավ համարեցին մեռնել, քան տեսնել իրենց երկրի կորուստը... և թեպետ իրենք թշնամիների թվից ավելի քիչ էին՝ ինքնակամ հոժարությամբ ենթարկեցին իրենց կյանքը վտանգի և, ժողովելով իրենց զորագնդերը, մոտ 5000 հոգի՝ գնացին Կարին քաղաքից և անցան Բասենի վրայով Բագրևանդ գավառը»:

(«Սակայն լաւ համարեցան զմահ անձանց քան տեսանել զկորուստ աշխարհիս... Թէպետե նուազունք էին քան զթիւ

թշամեացն՝ ինքնական յօժարությամբ դիմեցին ի վիշտն. և ժողովեալ զգունդս իւրեանց իբրև արս ԵՌ՝ դնացին ի քաղաքէն Կարնոյ, անցանէին ընդ սահմանս Բասենոյ ի գաւառն Բագրեանդ»¹։

Երկու բանակաների ճակատամարտը տեղի ունեցավ Բագրեանդ գավառում, Արածանի գետից դեպի հարավ, Արծնի գյուղի մոտ։ Սկզբում հայկական զորքը կատաղի կերպով հարձակվեց թշնամու գերազանց ուժերի վրա և կարողացավ շփոթություն առաջ բերել նրա շարքերում։ Սակայն շուտով Ամրի զորքերը ընկան հայերի աննշան ուժերի վրա և, մատնելով նրանց փախուստի՝ կոտորեցին մեծ մասը, գլխավորապես ռամիկ ժողովրդին։ Անվանի նախարարներից ընկան պատերազմի դաշտում Սմբատ Բագրատունի սպարապետը, նրա բարձակիցը և նիզակակիցը՝ Սահակ Բագրատունին, Մամիկոնյաններից՝ Մուշեղ զորավարը և Սամուելը, նաև Վահան Գնունին և ուրիշները։ Ապստամբությունը ճնշելուց հետո՝ արաբական զորավարն ասպատակներ սփռեց Բագրեանդի ու նրա սահմանակից գավառների շրջաններում և ենթարկեց այդ երկրներն ավերածության ու կողոպուտի։

Ղևոնդի վկայությամբ՝ ճակատամարտը Բագրեանդում Արծնի գյուղի մոտ տեղի էր ունեցել, ինչպես և Արճեշի կոնվը՝ հայկական հրոտից ամսում՝ «ի նոյն ամսեանն ի հրոտից ի ԺԴ յաւուր երկուշաբթուդ»²։ Համաձայն տոմարական պարզ հաշիվների՝ այս վկայության մեջ պետք է ուղղել ԺԴ (=14) թիվը և կարդալ «ի հրոտից ի ԺԳ (=13)»։ Այսպիսով ստացվում է ճշտիվ այս ճակատամարտի տարեթիվը, ամսաթիվը և օրը՝ 755 թվի ապրիլի 24-ին, երկուշաբթի³։

775 թվի ընդհանուր աղատագրական ապստամբությունը Հայաստանում պետք է համարել, անշուշտ, հայ ժողովրդի ամենամեծ հերոսամարտներից մեկը։ Մեռնել քաջությամբ և յթողնել իր հայրենի երկիրը՝ այդ եղել է միշտ նշանաբան հերոս ու քաջարի ժողովուրդների։

¹ Տե՛ս հրատ. Մալխասյանցի և Նզյանցի, Ս. Պետերբուրգ 1887, զլ. 17 էջ 148։

² Նույն տեղը, էջ 151։

³ Արճեշի և Արծնիի կոնվների թվականը պատմագիտական երկերում, մեծ մասամբ, սխալ է որոշված։ Տարեթիվը ճիշտ է ցույց տրված Ալիշանի «Այրարատ»-ում (էջ 525)։ Սակայն նրա մոտ ամսաթիվը որոշված է սխալմամբ ապրիլի 25-ին։

775 Թվի ապստամբութեան ճնշումից հետո՝ Հայաստանի պատմութիւնը ութերորդ դարի վերջին քառորդում անընդհատ մի ժամանակագրութիւն է պարբերական կոտորածների ու գաղթի, ժանրհարկապահանջութեան ու ավազակային կողոպուտների և ամեն յոսակ բռնութիւնների ու հալածանքների:

Արճեշի ու Արձնիի ճակատամարտերից հետո՝ ապստամբած հայ նախարարների ընտանիքները, գլխավորապէս Բագրատունիները և Մամիկոնյանները, ստիպված եղան լքել ու թողնել իրենց կալվածները Բագրեանդում ու հարավ-արեւմտյան Հայաստանում և փախչել կամ Բյուզանդիա և կամ Հայաստանի լեռնային ամուր ու անմատչելի արեւմտյան շրջանները, որոնք մոտ էին կամ սահմանակից Բյուզանդական կայսրութեան:

Լքված վայրերում նախարարական կալվածներն անցան հետըհետեւ, գլխավորապէս, մահմեդական ու արաբ էմիրների և կալվածատերերի ձեռքը, որոնք իրենց նոր կալվածներում բնակեցնում էին, մեծ մասամբ, Հայաստան ներգաղթած արաբական ցեղեր: Ութերորդ դարի վերջում և իններորդ դարի սկզբներում Հայաստանի այս մասերում կազմվեցին մահմեդական երկու մեծ ու հզոր իշխանութիւններ՝ Մանազկերտի ու Արզնի ամիրայութիւնները: Այժմ արդեն սկսել էին աստիճանաբար քայքայվել նախարարական նաև այլ շրջանները, և Հայաստանի մեծագույն մասի մեջ հետզհետեւ ու տնօրեն էին դառնում մահմեդական ու արաբ իշխանավորները:

Նկարագրելով այս ժամանակաշրջանի պատմական անցքերը՝ Հովհաննէս Դրասխանակերտցին տալիս է հայ նախարարութիւնների քայքայման մասին հետևյալ կարեւոր վկայութիւնը.

«Եւ որովհետեւ,— ասում է Դրասխանակերտցին,— հագարացիները վերցրին ու բոլորովին տեր դառան Հայաստանին, իսկ երկրի մեծամեծները պակասեցին և մնացածները թաքնվել էին, ծառայելով նրանց լծի տակ՝ դրա համար էլ մեր պատմութեան այս մասում քիչ են զրույցները մեր իշխանների մասին: Եւ եթե թերեւս որեւէ մի բան գտնվի՝ թող քեզ բավական լինի այն, ինչ որ ինձնից առաջ պատմել է Շապուհ պատմագիրը»:

(«Եւ վասն զի ապառսպուռ Հագարացիքն տիրեցին կալան զՀայաստանեայս և մեծամեծք աշխարհիս նուազեցան, և մնացեալք զօղեալ դադարեալ կային ընդ լծով ծառայութեան նոցա. սակս այսորիկ իսկ յայսմ վայրի պակասեաց ի Պատ-

մութենէ աստի զրոյցք իշխանաց մերոց, բայց եթէ գուցէ գտցի ինչ՝ բաւական քեզ բերցի նախ քան զմեզ պատմեալն ի Շապհոյ պատմագրէ»)¹։

Ուշագրավ տեղեկութիւն է հաղորդում նմանապես Ղևոնդ պատմագիրը հայ ռամիկ ժողովրդի ողորմելի վիճակի մասին ութն-րորդ դարի վերջերում։ Նշելով մոտ 12.000 հայերի, գլխավորապես ազնվականների ու հեծյալների, զաղթը Հայաստանից Բյուզանդիա Շապուհ Ամատունու առաջնորդութեամբ (հավանորեն 791 թ.)՝ Ղևոնդը պատմում է, որ

«Ժողովրդի կեսը, որ մնացել էին երկրում՝ սաստիկ կարոտութեան պատճառով անձնատուր եղան ստրկական ծառայութեան և դառան նման գաբավոնացիներին փայտ կտրողներ և ջուր բերողներ»։

(«Իսկ կէսք ժողովրդեանն որք մնացին՝ առ սաստիկ կարոտութեանն անձնատուրք եղեն ի ծառայութիւն ստրկի, փայտակոտորոք և ջրաբերք ըստ նմանութեան Գաբաւոնացւոց»)²։ Ինչպես տեսնում ենք վերոհիշյալ և նման վկայութիւններից, 775 թվի անհաջող ապստամբութիւնից հետո հայկական նախարարութիւնները ոչ միայն մեծ շափերով զրկվել էին իրենց ինքնավարական իրավունքներից ու արտոնութիւններից, այլև, կտրցնելով ռազմական ու դիմադրական նախկին իրենց ուժը, սկսել էին արդեն նվազել ու քայքայվել։

Գտնվելով ծանր կացութեան մեջ՝ հայկական բարձր ազնվականութիւնը, պահպանելու համար իր կալվածներն ու արտոնված դրութիւնը, հարկադրված էր այժմ հարմարվել ու համակերպվել տիրողներին։ Ոմանք նրանցից, ինչպես, օրինակ, Մեհրուժան Արծրունին, ընդունել էին մահմեդական կրօնը։ Ութերորդ դարի վերջին հենց քառորդից սկսած հայկական բարձր ազնվականութիւնն աշխատում էր բարեկամանալ ու խնամիանալ արաբական էմիրների ու իշխանավորների հետ խառն ամուսնութիւնների միջոցով։ Համակերպման որոշակի նշաններ կարելի է համարել նաև այն, որ այս ժամանակներից սկսած հետզհետե սովորական էին դառնում հայ ազնվականների շրջանում նրանց արաբականացած անունները, ինչպես՝ Աբու-Աբաս, Աբու-Մրվան, Աբու-Սահակ, Աբու-Մուսե և այլն։

¹ Տե՛ս «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ, Պատմութիւն Հայոց», Թիֆլիս 1912, էջ 111։

² Տե՛ս վերոհիշյալ 1887 թվի հրատարակութիւնը, գլ. ԽԲ, էջ 169։

Հայկական ֆեոդալիզմն ապրում էր, ըստ իս, ութերորդ դարի վերջերում, ավերումների, փախուստի, մեծ գաղթերի ու երկրի ամայացման վերոհիշյալ խռովահույզ շրջանում, իր ծանր հոգեվարքը։ Թվում էր, որ նրա վերջնական քայքայումն անխուսափելի է։ Մակայն շուտով, իններորդ դարի առաջին հենց կիսում, նրա վերակենդանացման համար ստեղծվեցին հանկարծ քաղաքական միանգամայն նպաստավոր ու նոր պայմաններ։ Իններորդ դարում նա հետզհետե ոչ միայն նորից ուժեղացավ, այլև ապրեց Բագրատունյաց թագավորության շրջանում տնտեսական ու քաղաքական բուռն ու աննախընթաց վերելքի շրջան։

* * *

Նախարարական Հայաստանի վերստին զորեղացմանը մեծապես նպաստեցին խալիֆայության մեջ ծայր առած խռովություններն ու ներքին պատերազմները, որոնք զրեթե անընդհատ էին դառել իններորդ դարից սկսած։

Բագրատունիները, որոնք 775 թվի ապստամբությունից հետո ապավինել էին Հայաստանի լեռնային արևմտյան շրջանները և գտնվում էին այստեղ Բյուզանդիայի հովանավորության տակ, ուշիուշով հետևում էին քաղաքական անցքերին խալիֆայության սահմաններում։

793—794 թվականներին Պարթավում և Փայտակարանում բռնկվեց պարսիկ աղանդավորների մեծ ապստամբությունն Ատալ-Մոկաննայի առաջնորդությամբ։ Ապստամբները՝ ոչ միայն կարողացան մի քանի անգամ պարտության մատնել իրենց դեմ ուղարկված արաբական ռազմականներին, այլև իրենք հարձակման դիմեցին ու մոտ շորս ամիս պաշարեցին Հայաստանում Դվին քաղաքը։ Նկարագրելով այս անցքերը՝ արաբական մատենագիր Յակուբին իր «Պատմության» մեջ առանձնապես մատնանշում է, որ այնուհետև «Հայաստանի ուժը զորացավ»։

Ներքին մեծ խռովություններին զուղընթաց վերսկսվեցին այն ժամանակ կատաղի ու անվերջ պատերազմները խալիֆայության ու Բյուզանդիայի և խալիֆայության ու փազարների միջև։ Այս պայմաններում հայկական նախարարությունների մինչևիսկ հյուժված ու թուլացած մնացորդները ստանում էին, բնականաբար, քաղաքական որոշ կշիռ ու նշանակություն։ Բագրատունիները, մասնա-

¹ Տե՛ս Մարկվարտ, Բագրատունիների ծագումը, Վիեննա 1915, էջ 39։

վանդ նրանք, որոնք ապաստան էին գտել Բյուզանդիայի սահմանամերձ լեռնային շրջաններում—Սպերում, Տալքում ու Կղարքում— և բարեկամութիւն էին հաստատել կայսրութեան հետ, կարող էին այժմ առանձնապէս վտանգավոր լինել խալիֆայութեան համար։ Պատի և խալիֆ Հարուն ալ-Ռաշիդը (785—809 թթ.) հարկադրված հղավ վարել նրանց հանդեպ մեղմ ու զիջող քաղաքականութիւն։

Հենց այս Հարուն ալ-Ռաշիդի ժամանակ Բագրատունի Աշոտ Մսակերը, Արձնիի կովում սպանված Սմբատ սպարապետի որդին, կարողացավ մասամբ դրամով և մասամբ զենքով հաստատել իր իշխանութիւնը Տալքում, Արշարունիքում, Շիրակում և Աշոցքում։ Նոր գրավված այս շրջաններում Բագրատունի այս ճյուղի կենտրոնը դառավ նախ Բագարանը՝ Ախուրյան գետի վրա, իսկ հետո՝ «Երաղգաւորք-Շիրակաւանը»։ 806 թվին Հարուն ալ-Ռաշիդը կարողացաւ Աշոտ Մսակերին իշխան Հայաստանի, և այնուհետև Աշոտն իր նվաճումները շարունակեց ավելի մեծ հաջողությամբ։

Հայաստանում խիստ ուժեղացել էր այդ ժամանակ Մանազկերտի ամիրայութիւնը, որը գրավել էր Հայաստանի զգալի մասը և նպատակ էր դրել իրեն՝ հիմնել առանձին, խալիֆայութիւնից անկախ, մի մեծ պետութիւն և միացնել իր իշխանութեան տակ նախարարական հայ երկրները Վանա լճից մինչև Արաքս գետը։ Մանազկերտի ամիրաները, որոնք ծագում էին Ասորիքի կայսիկների արաբական ցեղից և հայ մատենագրութեան մեջ անվանված են «Վայսիկք», ըստ երևույթին, անհաշտելի հակառակորդներ էին Իրաքի իշխող արաբական ցեղերին և Աբբասյաններին։ Իններորդ դարի առաջին քառորդում սրանք մի քանի անգամ ապստամբեցին Դվինի ու Պարթավի ոստիկանների դեմ, և Աշոտ Մսակերն ու նրա եղբայրը, Շապուհը, օգտվելով նաև այս խռովութիւններից, կարողացան ետ գրավել նրանցից ամբողջ Տարոնը։

Բագրատունիների և հայկական նախարարութիւնների զորեղացման համար նպաստավոր եղան նմանապէս և գահակալական համառ կռիւները խալիֆայութեան մեջ Հարուն ալ-Ռաշիդի որդիների՝ Մամունի և Էմինի միջև 809—813 թվերին։ Հայ նախարարները ժամանակին կարողացան անցնել Մամունի կողմը ու օգուտ քաղեցին և այս երկպառակութիւններից։

Ներքին այս խռովութիւններից մի քանի տարի հետո, 817 թվին, բռնկվեց արեւելյան Անդրկովկասում պարսիկ աղանդավորների մեծ ապստամբութիւնը Բաբեկի առաջնորդությամբ, որն իրեն հռչակեց «Մահդի», այսինքն՝ ատվածային էութեան մարմնացում։ Այդ ահաւոր շարժումն ունի միաժամանակ թե սոցիալա-

կան և թե ազատագրական բնույթ: Ապստամբները պահանջում էին, նման Մազդակյաններին, գույքերի, հարստությունների և կանանց հավասար բաշխում և միևնույն ժամանակ նպատակ էին դրել իրենց տապալել արաբական իշխանությունը և վերահաստատել պարսկական նախկին աշխարհակալությունը: Բարեկը, որին հայ պատմագիրները անվանում են Բաբան, մոտ քսան տարի ահ ու սարսափի մեջ պահեց արաբներին և, շարդ տալով անընդհատ նրանց զորքերին, տիրեց արևմտյան Մարաստանին, Համադանին, Աղվանքին և արևելյան Հայաստանին: Ապստամբությունը վերջնականապես ճնշվեց միմիայն 837 թվին, և Բաբեկը, որին կենդանի բռնել էր Աղվանքի և Շաբեհի իշխան Սահլը, գլխատվեց Բաղդադում 838 թվին:

Բաբեկի ապստամբության ճնշման ժամանակ խալիֆայության զորքերի հետ միասին կռիվներին մասնակցել էին նաև հայ նախարարներն ու նրանց զորքերը: Եվ այսպիսով՝ նրանք օգտվեցին մեծ չափով նաև այս երկպառակություններից՝ ամրացրին իրենց քաղաքական դիրքերը և հնարավորություն ունեցան գրավելու նոր ու նոր շրջաններ և կալվածներ:

Ութերորդ դարի վերջերում Բագրատունիները և հայկական այլ նախարարությունները, 775 թվի մեծ ապստամբությունից հետո, ինչպես տեսանք, սկսել էին արդեն քայքայվել և գրեթե մահած էին: Սակայն իններորդ դարի քառասնական թվականներին հատկապես Բագրատունիները ոչ միայն կարողացել էին վերականգնել իրենց նախկին հզորությունը, այլև ավելի էին զորեղ, քան ութերորդ դարում՝ նախքան ապստամբությունը:

Աշոտ Մսակերի մահից հետո (826 թ.) Բագրատունյաց տոհմի տարբեր ճյուղերը տեր էին դառել և իշխում էին թե իրենց հին կալվածների մեծագույն մասում և թե համարյա ամբողջ արևմտյան Անդրկովկասում:

Հիշատակության արժանի են մասնավորապես, բացի Բագրատունիների Շիրակի ճյուղից, նաև Կղարջքի ու Արտանուշի Բագրատունիները: Աշոտ Մսակերի հորեղբայրը՝ Վասակը, որը 775 թվի ապստամբությունից հետո ստիպված էր փախչել Կղարջք՝ հիմնել էր այստեղ Արտանուշի իշխանությունը: Սրա հաջորդները կարողացել էին նույնպես ընդարձակել իրենց իշխանության սահմանները և գրավել էին Քուլավերը և Արդահանը: Հետագայում նրանք, տաքածվելով Կուր գետի հովիտներով դեպի հյուսիս-արևելք և տիրելով հետգհետե ամբողջ Վրաստանին՝ հիմնադիր եղան նոր հարստության Վրաստանում:

իննեորորդ դարի առաջին կեսի վերջերին հայկական նախարարութիւնները, գլխավորապէս Բաղրատունիները և Արծրունիները, այնքան էին ուժեղացել, որ ձգտում էին արդեն վերականգնել ամբողջութեամբ իրենց արտոնութիւնները և ընդլայնել ըստ հնարավորութեան քաղաքական իրենց իրավունքները և ներքին անկախութիւնը:

Աշոտ Մսակերի մահից հետո (826 թ.) Հայաստանի սպարապետ կարգվեց նրա որդին՝ Սմբատ Աբլաբանը, իսկ «հրամանատար» և «իշխանաց իշխան» նշանակվեց Բագարատ Բագրատունին՝ Տարոնի իշխանը: Հայկական նախարարութիւնները, օգտվելով այժմ արաբական իշխանութեան թուլութունից, այլևս չէին հանդուրժում Հայաստան ուղարկված կառավարիչների խստութիւններն ու բռնութիւնները: Նրանք դիմում էին հաճախ խալիֆներին և պահանջում, որ Հայաստան ուղարկվեն իրենց ցանկացած մարդիկ: 840 թվին, օրինակ, հայ նախարարները Սմբատ սպարապետի գլխավորութեամբ ստիպեցին խալիֆ Էլ-Մուտասիմին ետ կանչել նոր նշանակված իշխող ոստիկանին և թողնել այդ պաշտոնի մեջ Ալիին: Այս վերջինը, որին նրանք անվանում էին «Եթիմ», այսինքն՝ որք, ցանկալի էր նրանց իր թուլութեան և մեղմութեան պատճառով:

842—847 թվականներին, Էլ-Վաթիկի խալիֆայութեան ժամանակ, ամբողջ Հայաստանը, ինչպես վկայում են արաբական աղբյուրները, գտնվել է շարունակ խառնակ ու ապստամբական վիճակում: Այդ աղբյուրների վկայութիւններից դժվար չէ նաև կոհհել, որ Բագրատունիները, ինչպես և Արծրունիները, տեսնելով խալիֆայութեան ռազմական ու քաղաքական տկարութիւնը՝ ռազեցել են, ըստ երևութիւն, հետևել հարևան մահմեդական ամիրայութիւնների օրինակին և աշխատել են ազատագրվել արաբական տիրապետութիւնից: Սակայն շուտով երևաց, որ նրանց այս հույսերը վաղաժամ էին:

847 թվին խալիֆայութեան գահը բարձրացավ Մութավաքիլը (847—861 թթ.), որը վարում էր վճռակա՛ն ու հաստատակա՛մ քաղաքականութիւն: Իր իշխանութեան հենց առաջին տարիներում նա նպատակ էր դրել իրեն, ինչպես վկայում է Թովմա Արծրունին (2, գլ. Ծ), ճնշել և պատժել ըմբոստ հայ նախարարներին:

849 թվին նա ուղարկեց Հայաստան Աբուսեթին իբրև վերակացու և հարկահավաքման գլխավոր: Երբ սա մոտեցավ Տարոնի սահմաններին՝ իշխանաց իշխան Բագբատը, տեսնելով որ Աբուսեթն ունի իր հետ հզոր զորաբանակ՝ շտապեց վճարել նրան ամբողջ

հարկագումարը և խնդրեց, որ նա ներս չմտնի իր զորքերով Հայաստան: Թովմա Արծրունին վկայում է, որ Մուսավաքիլը և Աբուսեիթն ուղեցել են դրկել իշխանությունից հատկապես Բազարատին և Աշոտ Արծրունուն: Սակայն երբ Աբուսեթը տեղեկություն ստացավ, որ Բազարատն ու Աշոտը դաշինք են կնքել և գործում են միասին՝ նա խուսափեց կռվից և վերադարձավ Բաղդադ: Նախքան հեռանալը՝ նա թողեց որպես փոխանորդ և Հայաստանի կառավարիչ ու հարկահավաք Մուսեին, որը ստորին Աղձնիքի և Արզն քաղաքի ամիրան էր և Բազարատի քրոջ ամուսինն էր:

850 թվին Մուսե ամիրան, որը կռված էր իր աներձագի հետ՝ մտավ իր զորքով Տարոն իբր հարկահավաքման համար: Բայց Բազարատին օգնության հասավ անմիջապես Աշոտ Արծրունին, և Բազարատը Վասպուրականի զորքերի օգնությամբ այնպիսի ջարդ տվեց արաբներին, որ Մուսեն հազիվ կարողացավ իր գլուխն ազատել: Տարոնի այս կռվից դեռ առաջ Աբուսեթն ուղարկել էր նաև Վասպուրական հարկահավաքման հազարապետ Ալա Մովսիսին, որը Մանազկերտի «Կայսիկ» կոչվող ամիրանների տոհմիցն էր: Սա, հաստատվելով Աղբակում, ասպատակել էր Վասպուրականի զանազան շրջանները, մատնելով երկիրն ավերածության և կողոպուտի: Բայց Աշոտ Արծրունին մեծ ջարդ տալով նրան՝ դուրս էր քշել Վասպուրականից:

Զայրացավ Մուսավաքիլն այս անցքերը լսելով և նորից ուղարկեց Հայաստան Աբուսեթին, հանձնարարելով նրան ձերբակալել Բազարատին և Աշոտին: Արաբական զորքերը, ներխուժելով Տարոն և Վասպուրական՝ պետք է վերացնեին առաջին հերթին հայկական այս իշխանությունները: Արշավանքի ժամանակ, դեռ Հայաստան չհասած՝ ճանապարհին մեռել էր Աբուսեթը: Ուստի և ուստիկանության սրա պաշտոնը և վերոհիշյալ հանձնարարությունները տրվեցին որդուն՝ Յուսուֆին:

851 թվին Յուսուֆը մեծ ու ընտիր զորքով եկավ նախ Վասպուրական և բանակեց Արծրունիների Ադամակերտ ուստանում: Այստեղից նա ուղարկեց երկրի զանազան կողմերն ասպատակներ և միաժամանակ հրավիրեց իր մոտ Աշոտին ու ուղեց նրան խաբեության մեջ: Բայց Արծրունյաց իշխանը, որին հայտնել էին այդ մասին, վերցրեց իր ազատագործը և հեռացավ Մարդաստան:

Շուտով Յուսուֆը հաշտություն և խաղաղություն հաստատեց Աշոտի հետ և, վերցնելով նրանից պատանդներ ու ապահովելով իր թիկունքը՝ եկավ Խլաթ: Բազարատն այժմ ինքն իրեն էր թողնված: Նշպես վկայում է Թովմա Արծրունին (Դպր. 2, գլ. 2), Յուսուֆը

հայտնեց Բագարատին, որ ձմեռվա ցրտերի պատճառով ինքը շտապում է վերադառնալ արքունիք և ուզում է Հայաստանի իշխանությունը նրան հանձնել: Տարոնի իշխանը, որ խաբվել ու եկել էր նրա մոտ, շղթայվեց և ուղարկվեց Սամարա, ուր գտնվում էր Մութավաթիլը:

Այնուհետև Հայաստանի դանազան կողմերն ուղարկվեցին կուսակալներ, որոնք ամեն տեղ մեծ անգթություններ գործեցին: Իսկ Տարոնում արաբական զորքերը մեծ թվով դերիներ վերցրին և նրանց մի մասը շնչին գնելով ծախեցին Ասորիքում ու այլ երկրներում, իսկ մյուս մասը պահեցին Մուշ քաղաքում, ոստիկանի ու իրենց ձմեռանոցում՝ որպես ծառաներ: Գարնանը նրանք մտադիր էին սրի ու ավերածոթյան մատնել ամբողջ Հայաստանը, և վճռել էին, վերցնելով հայկական իշխանությունները՝ հաստատել երկրում իրենց անմիջական տիրապետությունը:

Հայաստանի գրությունը դառնում էր այժմ նույնքան աղետալի, ինչպես և ութերորդ դարի վերջերին: Վտանգը սպառնում էր դարձյալ ոչ միայն նախարարական իշխանական դասին, այլ ամբողջ հայ ժողովրդին: Ուստի և այժմ ևս տարերային կերպով բռնկվեց ընդհանուր ապստամբություն, որն ուներ, ինչպես և 775 թվին, ազատագրական բնույթ: Այս մեծ ապստամբությունը, հատկապես Տարոնում տեղի ունեցած անցքերը 852 թվին՝ մանրամասն նկարագրված են Թովմա Արծրունու մոտ և հիշատակված են նաև արաբական աղբյուրներում:

«Այն ժամանակ,— պատմում է Թովման,— լեռան բնակիչները, տեսնելով որ իշխանին գերի տարան և որ իրենց ևս պիտի վիճակվի, ինչ որ դաշտեցիներին, եկան միասին խուլթի մեկնակազներին բազմություն արվեստագիտության իրենց ռազմամիջոցներով, որ ձեռք էին բերել ձմեռային ինքնապաշտպանության կարիքների համար: Նրանք վերցրել էին իրենց նիզակները, որ միշտ կրում էին, զգուշանալով անտառների որջերում գտնվող գազաններից կամ իրենց վրա հարձակվող թշնամիներից: Գրոհ տալով քաղաքի (Մուշի) վրա ու պաշարելով նրան՝ նրանք սրի մատնեցին և կոտորեցին զորքերը, ազատեցին բանտից Վասպուրականի պատանդներին, արձակեցին գերիներին և բաժանեցին իրենց մեջ թշնամու թալանը»:

(«Յայնժամ բնակիչք լերինն իբրև տեսին, թէ վարեցաւ իշխանն ի դերութիւն, ինքեանք աշտրաստեալ են զեօրն փառշման կրել զոր դաշտայինքն կրեցին՝ հասին միաբան

բազմութիւնն մեկնակազէնքն խութայ ի հնարս արունստագի-տութեանն իւրեանց, զոր ի պէտս օժանդակութեան ձմեռայ-նոյ հնարաւորեալ էին: Եւ բարձեալ աշտեայս հանապազա-կէիս ի պատրաստութիւն գազանացն որ ի մայրիսն որջանան, կամ թշնամեաց ի վերայ հասելոց, և եկեալ ի վերայ քաղաքին պաշարեն զնա, և զգօրսն մատնեն ի սատակումն սրոյ, և պատանդսն վասպուրականի հանեն յարգելանէն. և գերեացն ընդարձակեն, զկապուտ նոցա բաժանեն յինքեանս»¹։

Իր այս վկայութեան շարունակութեան մեջ Թովմա Արծրունիս նմանապես հաղորդում է, որ Սասունի լեռնականները, որոնք հար-ձակվել էին արաբական զորքի վրա խութեցի Հովնանի առաջնոր-դութեամբ, այս կովում սպանել էին նաև իրեն՝ Յուսուֆ ոստիկանին։

Առանձնապես ուշագրավ է, որ ապստամբած սասունցիները, ինչպես երևում է Թովմայի վկայութիւններէց, ոչ թե ճազատա-ներ կամ ազնվականներ էին, այլ պարզապես ռամիկ գյուղացիներ։

Նրա հաղորդած տեղեկութիւնները խութեցիների մասին այն-քան կարևոր են ու հետաքրքիր, որ կարևոր են համարում մեջ բե-րել ամբողջութեամբ։

«Այստեղ համառոտ կերպով կտամ,— ասում է Թովմա Արծրունին,— լեռան բնակիչների նկարագիրը՝ թե ինչպիսիք են և կամ ովքեր են, կամ ինչ կերպ նրանք ծանր աշխատանքով և սաստիկ տառապանքներով հայթայթում են իրենց ապ-րուստը և բավարարում իրենց կարևոր պետքերը։ Նրանց բնակութիւնները գտնվում են խոր ձորերում, լեռների փա-պարներում, անտառների թավուտներում և լեռների գագաթ-ներում։ Ապրում են ազգատոհմերով և այնքան միմյանցից հեռու են, որ եթե զորավոր տղամարդկանցից մեկը բարձր տեղից ուժգին բղավե, նրա ձայնի բոմբոյունը հազիվ կարող է որևէ տեղ լսվել, և տպավորութիւն է գործում, իբր թե ար-ձագանք է ժայռերի միջից։ Նրանց կես մասը խոտորել է հայ-րենի բնական լեզվից, որովհետև հեռու տեղեր են բնակվում և միմյանց հետ շփում չունեն. խոսում են իրար հետ կցկտուր ու օտարոտի լեզվով։ Եվ այնքան խրթնախոս են և իրար ան-ծանոթ, որ մինչևիսկ պետք ունեն թարգմանների։ Իբրև սնունդ գործադրում են զանազան ընդեղեններ, գլխավորա-պես կորեկ կոշվող բույսը, որը սովի տարիները ոմանք ան-

¹ Թովմայի վարդապետի Արծրունու, Պատմութիւն տանն Արծրունեաց, Զրաւ. Պատկանյանի, Ս. Պետերբուրգ, 1887, դպր. 2-րդ, գլ. է, էջ 119—120։

վանում են հաց: Կորեկը նրանք ոռոգում են ոտքերով (") ան-
տառների բաց տեղերում կամ ցանում են երկմատանի փայ-
տատներով: Իրենց մերկությունը ծածկելու համար հագնում
են բրդեղեն շորեր. ոտնամաններ պատրաստում են կոշիկնե-
րի ձևով այծերի մորթից: Թե ամառը և թե ձմեռը բավա-
րարվում են միևնույն սնունդով և միևնույն հագուստով:

(«Աստանօր սակատը բացայայտեցից ղորպիսութիւն
բնակչաց լերինն. թէ զիա՞րդ կամ ո՞րպիսիք ոք են, և ո՞րպէս
հնարաւորեալ յապրուստ անձանց վճարեն զկարևոր պէտս
իւրեանց լի աշխատութեամբ և սաստիկ տառապանօք. և
բնակութիւն նոցա ի խորածորս և ի փապարս լերանց և ի
պրակս մայրեաց, ի գազաթունս լերանց: Եւ բնակեն առան-
ձին ըստ տունս ազգաց, և այնչափ ի բացեայ են ի միմեանց՝
մինչ թէ ոք յարանց զօրաւորաց ի բարձրաբերձ տեղեաց ուժ-
դին խանչիցէ՝ հազիւ թէ ուրեք կարիցէ առնուլ զբոմբիւն ձա-
յնին, իբրև ի վիմաց ինչ արծագան լինելոյ կարծիս բերելով.
և կէսքն վրիպեալք ի բնական հայրենի լեզուէն, յաղաքս հե-
ռաբնակ լինելոյ և անհամբոյրք միմեանց հանդիպեալք, և
խօսս միմեանց եղեալ կարկատուն մուրացածի բանիւր: Եւ
այնքան խրթնի անծանօթք պատահեն առ միմեանս, մինչև
թարգմանաց անգամ կարօտանան. և զպէտս կերակրոցն
վճարեն ի սերմանց ինչ, առաւել ի կորեակ կոչեցեալ սերմա-
նէն, զոր ոմանք ի սով ժամանակի հաց անուանեն. և զնոյն
ոռոգեալ տոիւք ի միշոցս պրակացն, կամ երկմատանի փայ-
տատովք սերմանեալ. և է զգեստ նոցա ասուիս ի ծածկոյթ
մերկութեանն, և օդ ոտիցն հնարաւորեն զձև կաշկաց, ի մոր-
թոց այծից կազմեալ, և միով կերակրով և միով հանդերձիւ
բաւականան զամառն և զձմեռն»):¹

Թովմա Արծրունու այս վկայության մեջ, ինչպես տեսնում ենք,
խիստ հետաքրքիր տեղեկություններ են հաղորդված Սասունի բնակ-
չության մասին: Այդ տեղեկություններից երևում է, որ մինչևիսկ ին-
ներորդ դարում խոթեցիները գտնվում էին դեռ տնտեսական ու սո-
ցիալական նախնական վիճակում՝ ապրում էին ազդարոոհմերով և
առեփին երկրագործական հետամնաց տնտեսություն:

Ուշադրավ է մասնավորապես, որ խոթեցիների մի մասը խո-
սել է, ըստ երևութիւն, ոչ թե հայերեն, այլ ինչ որ խրթին ու ան-

¹ Տե՛ս «Թովմայի վարդապետի Արծրունույ, Պատմութիւն տաճն Արծրու-
նեաց», հրատարակություն 1887, դպր. II, գլ. է, էջ 120—121:

հասկանալի լեզվով: Թովմա Արծրունին մեջ բերված վկայության շարունակության մեջ այդ լեզուն համարում է «խրթնի և անհետազոտելի» և այդ լեզվով խոսող ապստամբներին անվանում է «գոեահօր Ասորոց»: Հենվելով սակայն նորագույն ուսումնասիրությունների վրա՝ կարելի է ըստ իս ամենայն հավանությամբ հետևել, որ դրանք ոչ թե ասորի գոեհիկներ էին, այլ, հավանորեն խալդեր կամ ուրարտացիներ, որոնք, ինչպես հայտնի է, ձուլվել էին հետգհետե եկվոր արմենների հետ և համարվում են, ինչպես և արմենները, հայերի նախնիքները: Թովմա Արծրունու վկայությունը խիստ արժեքավոր է, որովհետև ցույց է տալիս, որ հին խալդերի մնացորդները պահպանվել էին մինչև իններորդ դարը լիոնային Սասունում:

852 թվի ընդհանուր մեծ ապստամբությունը, որը պարզապես ժողովրդական-ազատագրական բնույթ ուներ, ճնշվեց դաժան ու անողոր խստություններ: Մութավաքիլն ուղարկեց Հայաստան մոտ երկու հարյուր հազար թրքական և արաբական զորք Բուղայի առաջնորդությամբ, որը սրի, գերության ու ավերածության մատնեց ամբողջ երկիրը և, ամենից առաջ, շարաշար պատժեց Տարոնի և Սասունի բնակիչներին: Հայ նախարարները և գլխավորները կալանավորվեցին և ուղարկվեցին Սամարա, ուր նրանք, փրկելու համար իրենց կյանքը և գույքը՝ գրեթե բոլորն ընդունեցին մահմեդականություն:

Բուղայի արշավանքից հետո՝ նախարարական Հայաստանը, որը սոսկալի հարված էր ստացել, թվում էր, որ անկարող կլինի ուշքի գալ և վերակենդանանալ: Սակայն շուտով, ինչպես և 775 թվի ապստամբությունից հետո, նա ոչ միայն կարողացավ վերականգնել իր նախկին հզորությունը, այլև ունեցավ տնտեսական, բաղադրական և կուլտուրական բուռն և անօրինակ վերելքի շրջան:

Իններորդ դարի երկրորդ կեսին սկսվեցին Բյուզանդական կայսրության հաղթական արշավանքները Հայաստանի սահմանամերձ հարավ-արևմտյան շրջաններում, և խալիֆայությունը, որը շարունակ պարտություն էր կրում, հետգհետե թուլացավ և դիմեց դիպի անկում:

867 թվին գահ բարձրացավ Բյուզանդիայում Մակեդոնիայից Պոլիս եկած Բարսեղ անունով մի հայ: Սա մինչև այդ բյուզանդական արքունիքում խոռոպապան էր և իր գեղեցկության պատճառով պալատական կանանց առաջին սիրելին էր: Գերմանական գիտնական Հ. Գեյցերը իր «Բյուզանդական կայսրների պատմության» մեջ ասում է, որ Բարսեղ Ա. կայսրը (867—886 թ.)՝ Մակեդոնական

դինաստիայի հիմնադիրը՝ «այն հանճարեղ ու անսահման ուժեղ բնավորութիւններէից էր, ինչպես Սուլլան, Թեոդորիխը, Խլոդովիխը և Նապոլեոն Ա-ը»¹։

Հենց այս Բարսեղն էր, որ քայլ առ քայլ ջախջախիչ հարվածներով ոչնչացրեց արաբների պաշտպանողական ամրացրած դիրքերն արեւելյան սահմաններում և կարողացավ ներխուժել Միջագետք։ Հաղթական այս առաջխաղացման ժամանակ նախարարական Հայաստանի կողմնորոշումը ստանում էր, բնականաբար, խիստ կարեւոր նշանակութիւն։ Ֆրանսիական գիտնական Վոռանի կարծիքով² Բարսեղ Ա-ի հաղթութիւնը կլինէր լիակատար, եթե հայերը ևս հարձակվեին արաբների աջ թևի վրա և օգնեին նրան մտնելու խալիֆայության կենտրոնական երկրները։ Հայաստանի ստրատեգիական սպառնական այդ դիրքային դրությամբ է բացատրվում, լոռանի կարծիքով, խալիֆայության քաղաքականության կտրուկ փոփոխութիւնը հայ նախարարների և հատկապես Բագրատունիների հանդեպ։ 885/6 թվին Աշոտ Բագրատունին ստացավ խալիֆ Մուտամիդից (870—892 թթ.) թագ և թագավորական տիտղոս։ Սկսվեց ֆեոդալական Հայաստանի արագ վերածնության ու զորեղացման մի նոր շրջան, որ տեւեց մինչև սելջուկյան արշավանքները։

¹ Տե՛ս Մեսրոպ Տէր-Մովսիսյանի հայերեն թարգմանութիւնը, *Էջմիածին* 1897, էջ 194։

² Տե՛ս «Հայաստանը Բյուզանդիայի և Իսլամի միջև» (Ֆրանսերեն), Փարիզ 1919, էջ 360 և այլն։

ՆՅՈՒԹԵՐ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ¹

1. ՇԻՐԱԿԱՅՈՒ ԿՇԻՌՆԵՐԸ ԵՎ «ՊԱՅՈՒԱՍԻԿ»-Ը

Անանիա Շիրակացին «Յաղագս կշռոց՝ և շարուց» գրվածքի մեջ ունի «պայուասիկ» բառը հետևյալ հատվածում.

«Դրամ ըստ պարսկական լեզուին անուանեցաւ և յարծաթ ոչ (յարծաթոշ)՝ տպաւորեցաւ, որ 2 մասն լտեր, և սատեր Դ դրամաց կշիռ. և պայուասիկն Ս լիտր է, որ է Ռ սատեր, որ լինի Տ դրամի կշիռ և թիւ» (տե՛ս Անանիայի Շերակունւոյ, Մնացորդք բանից, Ի լոյս ած Ք. Պ., Ս. Պետերբ. 1877, էջ 28—29, Ծանոթութեան մեջ Ք. Պատկանյանը ենթադրում է ամբողջ այս հատվածն աղճատված և հարկ է համարում ուղղել: «Հատուածս այս,— ասում է նա,— լի է վրիպակօք և ըստ կարծեաց Հ. Աւգերեանի միջանկեալ թուի լինել և ոչ Շիրակացոյն. տես կշռոց ևն յեր. 26: Մեք զայս ձև օրինակի տամք բնագրին.— Դրամն է 12Դ մասն լտեր (այն է ԺԲ գարեհատ), և սատեր է Դ դրամաց կշիռ, և պայուասիկն Ժ լիտր է, այն է (960. կամ մերձաւորապէս) Ռ սատեր, որ լինի (3840, կամ մերձաւորապէս) Տ դրամակշիռ: Յաղագս պայուասիկի տես ի Պատմ. Սեբէոսի, գլ. 1 է. գի անդէն ի նոցանէ միտյ միոյ ամի առնուին ՅԿն պայուասիկ (ի ձեռագիր օրինակին մեր՝ պայուասիկ) դրամ»:

Ք. Պատկանյանի այս ուղղումը միանգամայն սխալ է: Անանիա Շիրակացու բնագիրը ոչ միայն ուղիղ է, այլև խիստ ուշագրավ ու հետաքրքիր մի վկայութիւն է, որ հնարավորութիւն է տալիս որոշելու թե «պայուասիկ»-ը և թե Շիրակացու մյուս կշիռներն ալիսիան կիրգրամներով:

¹ Տե՛ս, «Գիտութեան և Արվեստի ինստիտուտի տեղեկագիր» N 2, Երևան 1937 թ.:

Շիրակացու ժամանակ բազմազան ու տարբեր սիստեմի կշիռներ կային, ուստի և խիստ դժվար էր որոշել, թե որ լիտրը և տաղանդը հիմք է ընդունվել Շիրակացու գրվածքում: Վերոհիշյալ հատվածը, որ համարվել է աղճատված՝ ոչ միայն աղճատված չէ, այլ խիստ կարևոր մի վկայություն է, որով լուսաբանվում են Շիրակացու բոլոր կշիռները:

Շիրակացու վկայության մեջ՝ «դրամ ըստ պարսկական լեղուին անտանեցաւ և յարծաթոջ՝ տպաւորեցաւ, որ է 2 մասն լտեր» ի նկատի է առնված, անտարակույս, Սասանյան արծաթ դրամը, որի կշիռը, ինչպես հայտնի է, մոտավորապես, չորս գրամ էր¹:

Եթե Սասանյան արծաթ դրամը կազմում էր լիտրի 1/80-րդ մասը՝ միանգամայն պարզ է, որ Շիրակացու լիտրը հռոմեական սիստեմի լիտրն է, որը, ինչպես հայտնի է, բարելոնական տաղանդի 1/100 մասն էր և հավասար էր այժմյան կշռով 326,4 գրամի²:

Այդ լիտրը հենց սովորական էր Բյուզանդական կայսրության մեջ և նրա ճիշտ կշիռը պետք է ուրեմն ընդունել ոչ թե մոտ 326 գրամ, ինչպես ունեն Ch. Diehl-ը⁴ և Հ. Օրբելին⁵, այլ 326,4 գրամ:

Սասանյան արծաթ դրամը, լինելով 1/80 լիտր, հավասար է եղել, ուրեմն, ասորական drachmê-ին և աստիկյան թուլլ drachmê-ին⁶ և նրա իսկական ու ճիշտ կշիռը եղել է 4.08 գրամ:

Շիրակացու լիտրի և դրամի ճշտմամբ որոշվում են այնուհետև այժմյան գրամներով՝ ինչպես նրա հիմնական բոլոր կշիռները, նույնպես և պարսկական «պայուասիկ»-ը: Ստացվում է կշիռների ոչ թե մոտավոր, այլ միանգամայն ճիշտ հաշիվը, որ հետևյալն է.

1 լիտր=12 ունկի=72 դահեկան=80 պարս. դրամ՝ 326,4 գրամ.

1 ունկի=1/12 լիտր=6 դահեկան=6 2/3 պ. դրամ՝ 27,2 գրամ.

¹ Բնագրի «յարծաթ ոչ» պետք է ուղղել «յարծաթոջ»:

² См. Е. А. Пяхомов, Монетные клады Азербайджана. Труды Общ. общ. и изучения Азербайджана, Вып 9, 1926. Նաև իմ «Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում», Տեղեկագիր Հ. Ս. Խ. Հ. Գիտ. և Արվ. Ինստիտուտի Նրևան 1926, № 1, էջ 11, ծանոթ.:

³ См. I. A. Decourdemanche, Traité pratique des poids et mesures des peuples anciens et des Arabes, 1909, էջ 22:

⁴ Ch. Diehl, Justinien et la civilisation byzantine au VI siècle, Paris 1901, էջ 537:

⁵ См. И. А. Орбели, Вопросы и решения варлапета Анании Ширакца, Петрогр., 1918, էջ 65:

⁶ Decourdemanche, էջ 24:

1 սիկղ=1/48 լիտր=1/4 ունկի=1 1/2 դահ.=1 5/9 պ. դրամ՝ 5,8 գրամ.

1 դահեկան=1/72 լիտր=1/6 ունկի=1 1/9 պ. դրամ՝ 4,53 1/3 գրամ.

1 պ. դրամը=1/80 լիտր=3/20 ունկի=9/10 դահեկան՝ 4,08 գրամ.

1 սատեր=4 դրամ՝ 16,32 գրամ¹.

1 կենդինար=100 լիտր՝ 32 կիլ. 640 գրամ.

1 տաղանդ=125 լիտր=9000 դահեկան=40 կիլ. 800 գրամ.

1 պայուսիկ=50 լիտր=1000 սատեր=4000 պարս. դրամ (սկզիռ և թիւ)՝ 16 կիլ. 320 գրամ:

Պարսկական պայուսիկը-ը, ինչպես տեսնում ենք, հավասար է եղել 1/2 կենդինարի:

Սեբեոսը, խոսելով մարաց ապստամբության մասին արաբական ժանր հարկապահանջության պատճառով, հիշում է նույն այս պայուսիկ-ը հետեյալ հատվածում. «Քանզի ոչ կարացին համբերել դառն և դժնդակ ծառայութեանն և հարկին ծանրութեանն՝ որ ի վերայ նոցա, զի անդրէն ի նոցանե միոյ միոյ ամի առնուին 345 պայուսիկ դրամ. և որ ոչն կարէր տալ, առնուին ընդ միոյ միոյ դրամի մարդ մի, և ի րաց բարձին ղհեծելութիւն և զիշխանութիւն աշխարհին» (Պետերք. 1879, գլ. 1է, էջ 147):

«Պայուսիկ»-ը վեղև տրված հաշվով հավասար էր 4000 Սասանյան արծաթ դրամի=16 կիլ. 320 գրամ, ուրեմն՝ Մարաստանի հարկը, լինելով 345 «պայուսիկ», անում է 365. 4000=1.460.000 Սասանյան արծաթ դրամ, իսկ նրա կշիռը=365.16,320=5956 կիլոգր. 800 գրամ:

«Պայուսիկ»-ի կշիռը, նաև նրա դրամական քանակը, ինչպես տեսնում ենք, շատ պարզ որոշվում է:

«Պայուսիկ»-ի ու Սասանյան արծաթ դրամի կշիռների ճշտումը կարևոր ու ուշագրավ է այն տեսակետից, որ հնարավորութիւն է տալիս լուսաբանելու արաբական աղբյուրների այն վկայութիւնները, որ վերաբերվում են Սասանյան Պարսկաստանի եկամուտներին ու հարկերին:

¹ Ի նկատի է առնված ասորական stater-ը, որի կշիռը եղել է իրոք 16,32 գրամ: Անանիա Շիրակացու մոտ (էջ 27) հիշատակված է նաև մի ուրիշ սատեր՝ ըստ ներայնացւոյց, որը կազմում է ունկիի 1/8 մասը, ուրեմն՝ 3,4 գրամ: Սատերների այս տարբերութիւնն է, որ շփոթեցրել է Ք. Պատկանյանին և հիմք ծառայել նրա վերոհիշյալ սխալ ենթադրութեան:

Օրինակ՝ Տաբարիի մոտ հանդիպում են մի քանի անգամ դրամական խոշոր գումարների հաշիվներ, որոնց մեջ հիշատակված է. իմ կարծիքով, հենց նույն այս «պայուասիկ»-ը որ Noeldeke-ն թարգմանել է Beutel¹: Տաբարիի այդ վկայություններից երևում է, որ «պայուասիկ»-ն իբրև դրամական մեծ կշիռ նույնքան տարածված ու սովորական է եղել Սասանյան Պարսկաստանում, ինչպես «կենդինար»-ը Բյուզանդական կայսրության մեջ:

Տաբարիի պատմելով, խոսքով Պարվեզն իր թագավորության 18-րդ տարում (607/8 թվին) կարգադրել էր հաշվել պետական ամբողջ մուտքը, որ ստացվել էր իր երկրների հարկերից և եկամուտների ուրիշ բոլոր աղբյուրներից: Նրան զեկուցանում են,—վկայում է Տաբարին,— որ այդ տարում նրա եկամուտները հողային հարկից ու մյուս աղբյուրներից կշռում են կտրված փողով 420 միլիոն «mithqāl» և այդ գումարը, հաշվելով 10 «dirham»-ը 7 «mithqāl», անում է 600 միլիոն «dirham»: Նա հրամայում է այդ փողը տանել զանձատուն, որ ինքը կառուցել էր Տիզբոնում և անվանել Բահար... խոսքով: Նույն տեղը բերում են հին դրամներով, որ կտրել էին Հազկերտի որդի Պերոզը և Պերոզի որդի Կավատը, 12.000 Beutel՝ յուրաքանչյուր Beutel-ը կտրված փողով 4000 «mithqāl», ուրեմն՝ ընդամենը 48 միլիոն «mithqāl», որ 7 առ 10

հարաբերությամբ անում է $68,571,428 + \frac{1}{2} + \frac{8}{3}$ «dirham»³:

Th. Noeldeke-ն ենթադրում է, որ mithqāl-ն այստեղ, հավանորեն, պետք է հասկանալ իբրև Սասանյան արծաթ դրամի կշիռ: Այս ենթադրությունը հաստատվում է, իմ կարծիքով, «պայուասիկ» կշռի վերահիշյալ որոշմամբ: Տաբարիի վկայությունների մեջ Beutel-ի կշիռը «կտրված դրամով» 4000 «mithqāl» է⁴, իսկ Շիրակացու մոտ, ինչպես տեսանք, «պայուասիկ»-ը լինի 4000 դրամի կշիռ

¹ Տես Th. Noeldeke, Tabari, Geschichte der Perser und Araber zur Zeit der Sasaniden, 1879, էջ 355—376 և 377:

² Տաբարիի դերմաներեն թարգմանության մեջ տպված է 40.000, որ պարզապես վրիպակ է:

³ Տես Th. Noeldeke, Tabari, էջ 355—356

⁴ Տես Th. Noeldeke, Tabari, էջ 355՝ «ebendahin wurden auch an älteren Münzen von Pêrôz, Sohn des Jazdegerd, und von Kawâdh, Sohe des Pêrôz, gerâgt, 12000 Beutel gebracht, jeder Beutel zu 4000 Mithqal in gemünztem Gelde, also im ganzen 48 Millionen Mithqal» էջ 376 «an gemünztem Geld 200000 Beutel, enthaltend 800 Millionen Mithqâl» էջ 377 «an gemünztem Geld 400 000 Beutel enthaltend 1600 Millionen Mithqal».

և թիւ»։ Այս համեմատութիւնից կարելի է հետևեցնել, որ Beutel-ը համապատասխան լինելով «պայուասիկ»-ին, «mithqâl»-ը ևս գործ է ածված նույն վկայութիւններում Սասանյան արծաթ դրամի կշռի իմաստով։

«Պայուասիկ»-ի ու Սասանյան արծաթ դրամի կշիռները, ինչպես տեսանք, այժմյան դրամներով հավասար էին, առաջինը՝ 16 կիլոգր. 320 գր., իսկ երկրորդը՝ 4,08 գր.։ Ուրեմն՝ այս կշիռների համաձայն Սասանյան Պարսկաստանի ընդհանուր եկամուտը 606/7 թվին պետք է ընդունել $420.000.000 \times 4,08 = 1.713.600$ կիլոգրամ Սասանյան արծաթ դրամ կամ 105.000 «պայուասիկ»։

Հիմնվելով դրամագետ Pertsch-ի հաղորդած տվյալների վրա և ընդունելով Սասանյան դրամի արծաթի արժեքը մոտ 70 պֆեննինգ կամ 86 սանտիմ, իսկ արարականինը (հնագույն շրջանի)՝ մոտ 40 պֆեննինգ կամ 50 սանտիմ՝ Th. Noeldeke-ն Սասանյան Պարսկաստանի ընդհանուր եկամուտը 607/8 թվին հաշվում է՝ Սասանյան «դրամ»-ով՝ մոտ 294 միլիոն մարկ կամ 360 միլիոն ֆրանկ, իսկ արաբական «դրամ»-ով՝ միայն 240 միլիոն մարկ կամ 300 միլիոն ֆրանկ¹։ Այս երկու հակասական թվերից Noeldeke-ն հալանական է համարում առաջինը։

Arthur Christensen-ը իր «L'empire des Sassanides» (København 1907, էջ 58) աշխատության մեջ հիմնվել է Նյուդեկեի նույն այս հաշիվների վրա, սակայն առանց որևէ բացատրության գերադասություն է տվել երկրորդ թվին, ընդունելով արաբական դրամի արծաթի արժեքը 50 սանտիմ²։

Ադուֆ Կրեմերը, որ օգտվել է Իբն Խորդադեբեյի և Կոդամայի աղճատված վկայություններից, Սասանյան Պարսկաստանի ընդհանուր եկամուտը 606/7 թվին ենթադրում է 420—600 միլիոն «dirham», անուշադիր թողնելով «mithqâl»-ի և «dirham»-ի 7-րդ առ 10-ը հարաբերությունը՝ 420 միլիոն «mithqâl» = 600 միլիոն «dirham» (Culturgeschichte des Orients unter den Chalifen, Wien. 1875, էջ 275)։

Վերոհիշյալ ենթադրությունները, իմ կարծիքով, վիճելի են,

¹ Sd' Th. Noeldeke, Tabari, էջ 355, ծան. 1։

² Հաշվելով գանձատան ամբողջ գումարը 468 միլիոն մսխալ Arth. Christensen-ն այդ ամբողջ գումարի արժեքը հավասար է համարում մոտավորապես 336 միլիոն ֆրանկի։ Ուրեմն՝ 606/7 թվի պետական ընդհանուր եկամուտը նա ընդունում է մոտ 300 միլիոն ֆրանկ, իսկ Պերդի ու Կավատի ժամանակներից մնացած հին դրամների արժեքը մոտ 36 միլիոն ֆրանկ։

որովհետև չեն համապատասխանում վերև ճշտված կշիռների հաշիվներին:

Տարարիի վկայությունների մեջ «mithqāl»-ը ինչպես տեսանք, գործ էածված որպես կշիռ Սասանյան արծաթ «dirham»-ի: Պարսկական այդ «mithqāl»-ը, ըստ երևույթին, անսովոր էր արաբական ժամանակներում, ուստի անհրաժեշտ է համարվել վերոհիշյալ գումարները հաշվել նաև արաբական «dirham»-ով, որի կշիռը եղել է 7/10 «mithqāl»: Հիմնվելով Բելազորիի վկայության վրա¹ Նյուդեկեն մատնացույց է անում, որ կային տարբեր «dirham»-ներ, որոնց կշիռը հավասար է եղել 1 կամ 4/5, կամ 1/2 «mithqāl»-ի²: Նվ իրոք, արաբական օրինական «mithqāl»-ը, ինչպես հայտնի է, հավասար էր այժմյան 5 2/3 գրամի, օրինական «dirham»-ը՝ 3,96 2/3 գրամի ($=4/5$ «mithqāl») և Արդլ-Մելիքի «dirham»-ը՝ 2,83 1/3 գրամի ($=1/2$ «mithqāl»)³:

Տարարիի վկայություններում, իմ կարծիքով, ի նկատի է առնված հենց այս վերջին հնագույն-ժամանակի Արդլ-Մելիքի «dirham»-ը, որի հարաբերությունը Սասանյան «mithqāl»-ի կամ արծաթ դրամի հանդեպ գրեթե 7-ը առ 10-ն է՝ 2,83 1/3(3):4,08:

Նոր այս ենթադրությամբ ոչ միայն վերանում է մարկերով ու ֆրանկներով հաշված գումարների անհասկանալի տարբերությունը, այլև սուղացվում է Սասանյան Պարսկաստանի 606/7 թվի ընդհանուր մուտքի համար տարբեր գումար: Ընդունելով «mithqāl»-ը որպես Սասանյան դրամ մաքուր արծաթից և նրա կշիռը՝ 4,08 գրամ, այդ դրամն արծաթի իր պարունակությամբ համապատասխան պետք է համարենք այժմյան արծաթ ռուբլու 22 2/3 կոպեկին: Սասանյան Պարսկաստանի եկամուտը 606/7 թվին կլինի այս հաշվով 420.000.000. 22 2/3 = 95.200.000 արծաթ ռուբլի:

Իրապես, եկամուտը կարող էր այդ գումարից մի փոքր պակաս լինել, եթե Սասանյան արծաթ դրամն ունեցած լիներ մաքուր արծաթի հետ որոշ տոկոս խառնուրդ³:

¹ Tabari, էջ 355, ծանոթ. 1:

² S. J. A. Decourdemanche, *Traité pratique des poids et mesures des peuples anciens et des Arabes*, Paris, 1909, էջ 25, 26, 27, 28 և 47:

³ «Հայաստանի աբգունի հարկերը մարզպանության շրջանում» նախագիծ իմ աշխատության մեջ Սասանյան արծաթ դրամի դրամական արժեքը ևս հավասար էի համարել մոտավորապես այժմյան 25 կոպեկին (էջ 11): Ինչպես տեսնում ենք, նրա արժեքն արծաթ 25 կոպեկից պակաս է և առ առավելն հավասար է 22 2/3 կոպեկի, եթե Սասանյան այդ դրամը ենթադրենք մաքուր արծաթից:

2. «ԱՊՈՒՌԻՇԻ»

«Ապուռիշի» բառը հանդիպում է Շիրակավանի 1228 թվի արձանագրության հետևյալ հատվածում. «Ես աթաբակ իվանէ և հոշակս վրաց և հայոց թագոհի վասն երկար կենդանութեան հարազատաց մերոց մանդատորթա խուցէս Շահնշահի և ամիր սպասալար Աւագին թողաք զգեղիս Շիրակա զապուռիշի և զջրսահին բաժն յորդեցէ յորդիք ազատ ի բաժէն» (տես Կ. Կոստանիանց, Վիմական տարեգիր, Ս.—Պետերբուրգ 1913, էջ 71):

Այս բառը, ինչպես հայտնի է, դեռևս բավարար կերպով մեկնրված չէ¹:

Մ. էմինն «ապուռիշի» համարել է իր թարգմանության մեջ գլուղի անուն՝ Апургъ²: Հ. Ղևոնդ Ալիշանը «Շիրակի» մեջ նույն բառի մասին ունի հետևյալ ենթադրությունը՝ «քանզի ընդ ջրսահի յիշի՝ թուի նույնպէս ջրոյ հարկ նշանակել ըստ ապ (ջուր) արաբացի բառին»³: Յ. Կարստը «Դատաստանագիրք Սմբատի» իր աշխատության մեջ «ապուռիշի և ջրսահին բաժն» թարգմանել է «Kanal und Schleusenzoll»⁴:

Պրոֆ. Հր. Աճառյանի «Հայերէն արմատական բառարանում» (Երևան 1926 թ.) «ապուռիշի» բառին տրված է հետևյալ բացատրությունը՝ «ջրի առ՞ու» նորագյուտ բառ... բառս գտաւ առաջին անգամ Մառ, Сборн. мат. Кавк. 17, 194, որ և կցում է պըս-äbriz «դոյլ, ջրաման, արտաքնոց» բառին, սակայն ոչ ձևով է նման և ոչ նշանակությամբ»:

«Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում» վերոհիշյալ իմ ուսումնասիրության մեջ (էջ 21) ես լավագույնն էի համարել եղած լուսաբանություններից Յ. Կարստի ենթադրությունը, վերապահությամբ, իհարկե, որ նրա բացատրությունը ևս չի կարելի ընդունել իբրև հաստատուն և վերջնական:

Ինձ թվում է այժմ, որ «ապուռիշի» բառը որևէ կապ չունի «առուի» ոչ էլ «ջրի ու դոյլի» հետ: Առաջարկում եմ այդ բառի հետևյալ նոր մեկնությունը:

«Ապուռիշի» պետք է կարդալ, իմ կարծիքով «ապուռ իշի», իսկ «ապուտ» միջնադարյան «յապուր» հարկն է, որ պահանջվել է

¹ Տե՛ս իմ աշխատությունը՝ «Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում», Հ.Մ.-Հ. Գիտության և Արվեստի Ինստիտուտի Տեղեկագիր, № 1. Երևան, 1926 թ., էջ 21—22:

² Армянския надпися, 1881, էջ 51:

³ Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 91:

⁴ I. Karst, Sempadischer Kodex, 1905, B. II, էջ 234:

անասունների ու ապրանքների անցուղարձի համար հատուկ տեղերում: «Յապուր» բառն այդ իմաստով գործ էածված Հեոն Գ-ի 1288 թվի հրովարտակում: «Եւ յապուր որ տան ընդ յԱյաս ու ընդ Կոսկլակ, նայ այսպէս լիննայ, որ տան ի պրիսիմն ի յըղտայրեոն նոր դրամ քսան ու հինգ, և ի պրիսմէ կտան ի յըղտայրեոն նոր դրամ քսանուհինգ, ի լեղակն ու յախայխիրն զարդ ի պըղպըղէն ու զընշպլէն ու ի պաղղամէն, ի յայլն ի յամենն տան ի յըղտայրեոն նոր դրամ քսան ու հինգ, տան ի ջորէրեոն նոր դրամ տասն և ինն, և ի յեշրեոն նոր դրամ տասն ու վեց» (Sba Langlois V., Le trésor des chartes d'Arménie ou cartulaire de la chancellerie royale des Roupeniers, Venise, 1863, էջ 157): Պրոֆ. Հր. Աճառյանն իր «Հայերէն արմատական բառարանում» «ապուր» բառը մեկնել է, իբրև փոխառութիւն արաբերենից՝ «արաբ. abûr «աւնցնիլ» բառից, ճիշտ ինչպես որ նույն հարկի լտ. ձևը passagium բառն նշանակում է «աւնցը» (էջ 461)¹:

«Թողաք զգեղիս Շիրակա զապուր իշի» — այսինքն՝ զապուր իշո պետք է, հավանորեն հասկանալ այն իմաստով, որ 1228 թվին իվանն աթաբեկը և նրա կինը խոշակը Շիրակ գյուղն ազատել են իշաբեոնների «յապուր» հարկից: Որ միջնադարյան pedaticum և passagium հարկը գոյութիւն է ունեցել ոչ միայն Կիլիկիայում, այլև և՛ բուն Հայաստանում 1228 թվին, այդ հաստատուում է, ուրեմն, հետաքրքիր այս վկայութիւյամբ, եթե մեր նոր լուսաբանութիւնը համարվի ընդունելի:

3. «ԶՐՓԱՔԱՐ», «ԶՐՓԱՅՔԱՐ»

Այս անծանոթ բառը գործ էածված Սեբեոսի և Ստեփանոս Ասողիկի համապատասխան հատվածներում, որ վերաբերվում են այսպես կոչված «Պարսից ժողովին»:

1. «Պատմութիւն Սեբեոսի եպիսկոպոսի ի Հերակլն», հրատ. Բ. Պատկանյանի, Ս. Պետերբուրգ 1879, էջ 122, «Իսկ որք զՔաղկեդոնին և զՎրաց և զԱղուանից կաթողիկոսն, և այլ բազում եպիսկոպոսունք ի Յունաց կողմանէ և իշխանք՝ որք եկեալ էին ի ծառայութիւն պարսից թագավորին, որով և չլիայքարն իսկ հրամայեաղ տալ»:

¹ Հայերեն արմատական բառարան, Հատ. Ա. Երևան 1926:

² Արձանագրութիւն ընթերցվածն աղճատված չէ՝ արդյոք արտագրութիւն ժամանակ, լավագույնն է, անշուշտ, «իշո», որ կարող է թերևս լինել ճիշտ բնթերցվածը:

2. «Ստեփանոսի Տառնեցու Ասողկան, Պատմութիւն տիեզերական». հրատ. Ստ. Մալխասյանցի, Ս. Պետերբուրգ 1885, էջ 96, տիպ որք զՔաղկեդոնի Իվերիոյ և Արտանից կաթողիկոսն, որ էր ի Փայտակարան, ի գրան արքունի, և այլք ոմանք եպիսկոպոսունք և երիցունք քաղաքաց, որ ի Յունաց կողմանէ, և իշխանք, որք եկեալ էին ի ծառայութիւն թագաւորին Պարսից, որոց զշփաքարն իսկ հրամայեաց տալ»:

Ստեփան Մալխասյանի հրատարակած Ասողիկի ծանոթություններում (էջ 96 և 351—352) առաջ են բերված այդ անծանոթ բառի ձևագրական տարբեր ընթերցվածները.

1. Ասողիկի առաջին տպագրության մեջ (Փարիզ 1859, էջ 97) «զշփաքարն», 2) Կ. Նզլանցի ձևագրում՝ «զշփաքարն», 3) Բրոսսեի ձևագրում՝ «զշրփաքածառ»:

Կարապետ վրդպ. Շահնազարյանցը, Ասողիկի առաջին տպագրության հրատարակիչը, ենթադրել է առանց որևէ հիմքի, որ «փաքար» բառը նշանակում է գուցե՝ «ռոճիկ, թոշակ» (Փարիզ 1859, էջ 211 ծան. 59):

Ասողիկի ֆրանսերեն թարգմանության մեջ Ե. Դյուլորյեն, հետևելով, ըստ երևութին, Կ. Շահնազարյանցին, նույն բառը թարգմանել է provisions («il leur fit fournir des provisions», Ed. Dulaurier, Histoire universelle per Etienne Asoghig de Daron, première partie, Paris 1883, էջ 126 և ծան. էջ 192):

Սեբեոսի պատմության առաջին և երկրորդ տպագրությունները, ինչպես և Պետերբուրգի Գիտությանց Ակադեմիայի գրչագիր օրինակը, ունեն «շրփաքարն» ընթերցվածը (Կոստանդնուպոլիս 1851 և Ս. Պետերբուրգ 1879, էջ 122), որի հավանական նշանակությունը լուսաբանված է Ք. Պատկանյանի հետևյալ ծանոթության մեջ՝ «թուի լինել պարսիկ բառ՝ pākār կամ pāikār, որ նշանակէ զհարկապահանջն և զտուրս հարկաց ի պէտս կալուածատեարց» (Սեբեոս 1879, էջ 122 ծան.):

Ք. Պատկանյանի ստուգաբանական այս բաղդատությունը կարևոր է և, անտարակույս, ավելի հիմնավոր է քան մյուս քմահաճ ենթադրությունները:

Հնդունելով «փաքար» բառի ծագումը պարսկերեն pāikār-ից, անհավանական չի լինի, իմ կարծիքով, այդ բառը համապատասխան համարել «պեկար, բեկար»-ին, որ քննության է առնված «Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում» իմ նախորդ աշխատության մեջ (էջ 32—37):

Լեզվական տեսակետից պարս. pāikār բառի տարբեր տառա-

դարձությունը հայերենում՝ «փայքար» և «պեկար»՝ այնքան էլ դժ-
վար բացատրելի չէ։ Հայտնի է արդեն, որ պարսկական ք և k-ն
հայերենում տառադարձվել են պ և կ կամ փ և ք. օրինակ՝ կուտ
և քուտ, պարտակ և փարտայ, կեշտ և քէշ, կերտել և քերթող, վնա-
սակար, բայց պայքար, պաշտպան, բայց փուշտիպան։

«Փայքար»-ի նույնացումը «պեկար» հարկի հետ հարմար
է նաև այն տեսակետից, որ Սեբեոսի և Ասողիկի վերոհիշյալ հատ-
վածները ստանում են նոր այս լուսարանությամբ հավանական ու
հասկանալի իմաստ։

Սեբեոսի և Ասողիկի պատմելով, «Պարսից ժողովում», որ տե-
ղի էր ունեցել Պարսից խոսրով Բ. Պարվեզի ժամանակ (590—
628 թ.), ուղիղ էր ճանաչվել հայոց հավատը, ժողովից հետո, ասում
են նույն պատմիչները, խոսրով Բ-ը հրաման է տվել քանդել նես-
տորական եկեղեցիները և սպանել նեստորական եպիսկոպոսներին։
Իսկ քաղկեդոնականներին՝ Վրաց և Աղվանից կաթողիկոսներին և
Յունաց կողմից՝ եկած եպիսկոպոսներին ու իշխաններին՝ նա հրա-
մայել է տալ մինչև անգամ «չըփայքարն»։

Այս տեղեկության պատմական ճշտությունը կարող է գունա-
վորված ու վիճելի համարվել։ Մեզ հետաքրքրում է այստեղ ոչ թե
խնդրի պատմական կողմը, այլ միայն «չըփայքար» բառի նշանա-
կությունը։

Եդ. Դյուլորյեն Ասողիկի ֆրանսերեն թարգմանության մեջ
կարծում է, որ Ասողիկը քաղկեդոնականներին վերաբերյալ այդ
հատվածում ուզեցել է ցույց տալ խոսրով Բ-ի անաշառությունը
դեպի բոլոր Պարսկաստանին հպատակ քրիստոնյա համայնքները.
իրոք թե խոսրով Պարվեզը, ճանաչելով հայոց միաբնակ դավանու-
թյան գերազանցությունը իր երկրներում, ըստ երևույթին, բարեմիտ
վերաբերմունք է ունեցել նաև քաղկեդոնական հոգևորականության
հանդեպ և հրամայել է հայթայթել նրանց պաշարը (էջ 192, ծան.)։

Ինձ թվում է, որ կարիք չկա կանգ առնել Եդ. Դյուլորյեի այս
բռնազրոսիկ բացատրության վրա։

Սեբեոսի և Ասողիկի համապատասխան հատվածներում, ինչ-
պես տեսանք տրված են նախ որոշ տեղեկություններ հալածանքնե-
րի մասին նեստորականների դեմ և ապա ակնարկված է, հավանո-
րեն, ոչ թե խոսրով Բ-ի բարյացակամությունը քաղկեդոնականների
հանդեպ, այլ արանց նվաստ ու ստորադաս վիճակը հայ միաբնակ

¹ Յոթերորդ դարի առաջին տասնամյակում պարսիկները նվաճել էին Բյու-
զանդական Հայաստանը և կայսրության արևելյան շրջանները։

եկեղեցու համեմատությամբ: Ռորով և շրփայքարն իսկ հրամայեաց տալ՝ Սեբեոսի խոսքերը, մեր կարծիքով, պետք է հասկանալ հենց այդ իմաստով՝ իբրև նվաստացուցիչ մի փաստ քաղկեդոնական եկեղեցու նկատմամբ: Արդ՝ վերագրելով՝ «փայքար» անծանոթ բառին «պեկար»-ի նշանակություն, մենք իրոք որ ստանում ենք Սեբեոսի վկայության իմաստալից ու բավարար մի նոր լուսաբանություն:

Մարդպանական Հայաստանի արքունի հարկերն ուսումնասիրելիս՝ ես ենթադրել էի, որ հայ հոգևորականությունը ձեռք է բերած եղել Հաղկերտ Բ-ի հալածանքներից հետո հարկային ինչ որ արտոնություն: Նա ազատ է եղել, ըստ երևույթին, գլխահարկից, բայց պարտավոր է եղել «տալ յարքունիս» «հաս» կամ «պեկար» հարկը, որ ես ենթադրել էի հողային հարկ¹:

Արդ՝ Սեբեոսի վկայության մեջ՝ «որով և զշրփայքարն»² իսկ հրամայեաց տալ՝ անհավանական չի լինի, իմ կարծիքով, մեկնել այն իմաստով, որ քաղկեդոնական եկեղեցուց պահանջվել է նույն իսկ «շրփայքար»-ը, այսինքն՝ բացի «փայքար-պեկար» հողային հարկից նաև այն հարկերը, որ «պեկար» չէին:

Եթե ընդունելի համարվի նոր այս ենթադրությունը, այդ դեպքում՝ «փայքար»-ը կամ «պեկար, բեկար»-ը, որ մատենագրական հին վկայություններում ունեցել է, հավանորեն, հողային հարկի նշանակություն, համապատասխան պիտի լինի ոչ թե պարսկերեն bekâr-ին, այլ paikâr-ին, որն ըստ Բ. Պատկանյանի նշանակել է թե «հարկապահանջ» և թե «զտուրս հարկաց ի պէտս կալուածատեարց», այսինքն՝ հողային հարկ:

Անհնարին չէ, իմ կարծիքով, որ «փայքար, բեկար»-ը հողային հարկի նշանակությամբ (= paikâr) և բեկար»-ը պարտադիր ձրի աշխատանքների իմաստով (bekâr) տարբեր փոխառություններ լինեն պարսկերենից՝ շփոթված իրար հետ հետագայում հնչյունական: Նմանություն պատճառով:

¹ «Հայաստանի արքունի հարկերը մարդպանության շրջանում», էջ 31, 34 և 35:

² Սեբեոսի առաջին և երկրորդ տպագրություններն ունեն, ինչպես տեսանք, «շրփայքարն» ընթերցվածը, իսկ Ասողիկի երկրորդ տպագրությունը և՛ «զշփայքարն»: Ի նկատի առնելով նույն բառի վերև առաջ բերված ձեռագրական տարբերակները՝ ես յավազույն եմ համարում «զշրփայքարն» ընթերցվածը:

4. «ԴԱՀԵԿԱՆ»-Ը ՇԻՐԱԿԱՑՈՒ ԹՎԱՐԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԵԶ

Անանիա Շիրակացու «Յաղագս հարցման և լուծման» գրվածքում շորս անգամ հանդիպում է «դահեկան»-ը, իբրև այն ժամանակվա դրամ (հարցումն Գ, ԺԱ, ԺԵ, ԺԹ)¹:

2. Օրբելին իր հրատարակության մեջ այդ «դահեկան»-ը համարել է արծաթ դրամ՝ «серебряная монета денарий» (էջ 64):

2. Օրբելու այս ենթադրությունը, իմ կարծիքով, հավանական չէ:

Շիրակացու թվաբանական խնդիրներում «դահեկան»-ը ոչ թե արծաթ դրամ է, այլ գործ է ածված բյուզանդական ոսկի դրամի համար, որի կշիռը Շիրակացու ժամանակ պետք է լիներ, իրոք, մեկ «դահեկան», այսինքն՝ 4 գրամ 53 1/3 սանտիգրամ: Այդ ոսկի դրամը, ինչպես հայտնի է, անվանվում էր solidus, nomisma, aureus և զանազան դարաշրջաններում ունեցել է նաև այլևայլ տարբեր անուններ ու երբեմն նաև տարբեր կշիռ:

Անանիա Շիրակացին հենց ինքը «Յաղագս կշռոց և չափուց» իր գրվածքում ասում է, «նոմիսմայ ըստ Հռովմայեցւոց դահեկանն անուանի» (Ս. Պետ. 1877, էջ 28): Վենետիկի ձեռագիրներից Բ օրինակը դահեկանի մասին ունի հետևյալ հավելվածը.

«Դահեկանն մի ոսկի է, որոյ կշիռն յամենայն ազինս մի և նույն է, և թե ուրեք գտանիցի պակաս, արտաքոյ քանակին ոսկւոյն է. զոր գաղտ անուղղայք արարեալ են» (տե՛ս Հար. վարդ. Ավգերյան, «Բացատրություն չափուց և կշռոց նախնեաց», Վենետիկ, 1821, էջ 27, ծանոթ. 2):

Եվ իրոք, մեր հին մատենագրության մեջ «դահեկան»-ը մեծ մասամբ գործ է ածված ոսկի դրամի իմաստով:

Հին կտակարանի հայերեն թարգմանությունների մեջ «դահեկան» են թարգմանված բնագրի chrysus-ը և nomisma-ն, որ ոսկի դրամ են²: «Դահեկան»-ը արծաթ denarion-ի իմաստով հանդիպում է,

¹ Տե՛ս Կ. Ա. Օրբելի, Вопросы и решения вардапета Ананья Ширакца, 1918, էջ 18, 22, 23, 25.

² Դահեկան—chrysus, տե՛ս Մեն, լէ 28, ԽԵ 22, ԲԻԻ է. 14, 20, 26, 86 Դ. Թադ. Ժ. 16, Դ. Թադ. Ե. 5, Ա. Մնաց. ԻԹ. 7, Բ. Մնաց. Բ. 15, 16: Նենմի է. 71,— դահեկան—nomisma, տե՛ս Ա. մակ. ԺԵ, 6:

Հին կտակարանի մեջ «դահեկան» է թարգմանված նաև հունարեն drachmē-ն, հետևյալ հատվածում. «և եղև իբրև դահեկանն ամենայն ուղտքն յըմպելոյ, և էառ այրն գինդս ոսկիս մի մի ըստ դահեկանի ձուլոյ» (Մեն, ԻԴ, 22): Այստեղ

գլխավորապես, Ավետարանի թարգմանություն մեջ¹։ Ըստ երևույթին, Ավետարանի այդ «դահեկան»-ին (denarion) է վերաբերվում Շիրակացուն վերագրված Վենետիկի Գ և Ե օրինակների վկայությունը²։ Երևի ժամանակին դահեկանն Կ ասարիոն էր. և դահեկանն էր արծաթիոն³։ Սակայն «դահեկան»-ի այս վերջին նշանակությունը՝ իբրև արծաթ denarion, որ հանդիպում է առավելապես թարգմանական գրականության մեջ, բացառիկ է ու արտասովոր։

«Դահեկան»-ը, ինչպես տեսանք, հիշատակված է նաև Անանիա Շիրակացու թվաբանական հարցումներում։ Հետաքրքիր է, առանձնապես, նրա ԺԵ-րդ հարցումը.

«Զի մի կայր ինձ ազնիւ, վաճառեցի և գնոցն չորրորդ մասինն կովեան գնեցի, եաւթներորդ մասինն այծեան, և մետասաներորդ մասինն եզնի, և երեք հարելը և ութեւտան դահեկանի ոչխարս առի։ Արդ գիտեա թէ ընդ ամենայն քանի՞ դահեկան լինի» (տե՛ս Вопросы и решения էջ 23)։ Հարցման լուծումից իմանում ենք, որ ազնիվ ձին վաճառվել է 616 դահեկան»-ի։ Այդ գնի չորրորդ մասով (=154 դահեկան) գնված են եղել կովեր, 1/7-ով (=88 դահեկ.)՝ այծեր, 1/11-ով (=56 դահեկ.)՝ եզներ և 318 դահեկան»-ի՝ ոչխարների։

Եթե ընդունենք «դահեկան»-ն իբրև արծաթ դրամ և նրա կշիռը մեկ «դահեկան», այն է՝ 4.53 1/3 գրամ³, եզների գնման համար կատացվի ընդամենը՝ 56 «դահեկան», որ այժմյան դրամով պետք է լինի մոտ 14 արծաթ ուլբլի⁴։

Արդ՝ ենթադրելով եզների այս գինը, մոտավորապես, իրականին համապատասխան՝ հարկադրված ենք լինելու եզրակացնել, որ եզի գինը Շիրակացու ժամանակ եղել է մի քանի ուլբլի։

Բոլորովին այլ հետևություն կատացվի, եթե «դահեկան»-ն ընդունենք այստեղ իբրև ոսկի դրամ։

Այս վերջին ենթադրությունը թվում է ինձ ավելի քան հավանական, որովհետև Շիրակացու «Յաղագս կշոռց և շափուց» գրված-

«դահեկան»-ը կշռի իմաստով է, բայց թարգմանությունը ճիշտ չէ, որովհետև drachmē-ն իր կշռով տարբեր էր «դահեկան»-ից։

¹ Դահեկան=denarion, տե՛ս Մատթ. ԺԸ, Ի. 2, 9, 10, 13, ԻԲ, 19, Մարկ. 2. 37, ԺԲ. 15, ԺԴ. 5, Գով. Է, 41, Ժ 35, Ի. 24, Ցովհ. 2. 7։

² Տե՛ս Հար. Ավգերյան «Բացատրություն շափուց եմ»։ էջ 38. նաև Անանիայի Շիրակունւոյ, Մնացորդք բանից Ս. Պետերբ. 1877, էջ 33։

³ Տե՛ս վերև, էջ 30։

⁴ 4.08 գրամ Սասանյան արծաթ «դրամը» հավասար էր, ինչպես տեսանք, 22 2/3 արծաթ կոպեկի, ուրեմն՝ 4.53 1/3 գրամ արծաթ «դահեկան»-ը հավասար կլինի մոտ 25 կոպեկի, իսկ 56 «դահեկան»-ը՝ մոտ 14 արծաթ ուլբլու։

քի վերոհիշյալ վկայություններից կարելի էր եզրակացնել, որ «դահեկան»-ը, ինչպես հնագույն հայ պատմագիրների, օրինակ, Նդի-շեի, Սեբեոսի, Հովհան Մամիկոնյանի մոտ, նույնպես և Շիրակա-ցու երկերում, ոչ թե արծաթ, այլ ոսկի դրամ է, ամենայն հավանա-կանությամբ, բյուզանդական solidus-ը, որի իսկական կշիռը պետք է լիներ մեկ «դահեկան», այն է՝ 4,53 1/3 գրամ:

Ի նկատի առնելով, «դահեկան»-ի և այժմյան ոսկի ռուբլու կշիռները, կարելի է որոշել նրանց կշիռների հարաբերությունը, ընդունելով, իհարկե, որ «դահեկան»-ը ևս լիակշիռ էր և պարու-նակում էր, իրոք, իր մեջ 4.53 1/3 գրամ մաքուր ոսկի:

Լիակշիռ և լիագին «դահեկան»-ն համապատասխան կլինի այս հաշվով 5 ռուբ. 85 ոսկի կոպեկի, որովհետև ռուսական 15 ռուբ-լիանոցը պարունակում է իր մեջ 11,612 գրամ մաքուր ոսկի: Բյու-զանդական լիտրը, ինչպես հայտնի է, 72 «դահեկան» էր և նրա կշիռը՝ 326,4 գրամ¹, ուրեմն կշռի տեսակետից նրա համարժեքը այժմյան ոսկի դրամով կլինի 421 ռուբլի 64 կոպ.:

Այսպես էլ հենց հաշվել են բյուզանդական solidus-ի և բյու-զանդական ոսկու լիտրի դրամական արժեքը եվրոպական նորա-գույն երկերում: Օրինակ, Շարլ Դիլը, մատնանիշ անելով, որ Յուս-տինիան կայսեր զահակալության ժամանակ սլետական գանձարա-նում եղել է 320.000 ֆունտ ոսկի՝ այդ գումարը համապատասխան է համարում մոտ 360.000.000 ոսկի ֆրանկի², Ուրեմն՝ նա ևս բյու-զանդական 1 լիտր կամ ֆունտ ոսկին հավասար է համարում մոտ 1125 ֆրանկի, այսինքն՝ 421 ռուբլու կոպեկներով: Շարլ Դիլի այս աշխատության ռուսերեն հրատարակության մեջ 350 միլիոն ֆրանկը վերածված է ռուսական դրամի. вступив на престол Юстиниан нашел в государственном казначействе огромную пасную сумму в 320.000 фунтов золота, т. е. около 120 мил-лионов рублей на наши деньги»³.

¹ Տե՛ս վերև, էջ 30:

² Charles Diehl Justinien et la civilisation byzantine 24 VI siecle, 1901, էջ 310: Նման հաշիվ անում է նաև P. M. Sikes-ը 533 թվի դաշնագրությամբ Բյուզանդիան վճարելու էր Սասանյան Պարսկաստանին Կովկասյան անցքերը և ամրությունները պահպանելու համար 11,000 Բյուզանդական ֆունտ ոսկի: Sikes-ը այդ գումարը հավասար է համարում մոտ 1/2 միլիոն ֆունտ ստերլինգի, որ մո-տավորապես համապատասխան է վերոհիշյալ հաշիվներին:

³ Տե՛ս Յ. Դյալ, Юстиниан и византийская цивилизация в VI веке 1908, էջ 318: Նույն այս հաշիվն ունի նաև ռուս բյուզանդագետ Յ. Կոպալովսկին. տե՛ս Кулаковский, История Византии т. I, Киев, 1913, էջ 521. «[Анастасий доказал блестящее состояние финансов империи тем, что оставил в насле-

Հասկանալի չէ, թե ինչու թարգմանիչը հարկ է համարել փոխել բնագիրը: Հայտնի է, որ ֆրանսիական 40 ֆրանկը պարունակում է իր մեջ նույնքան մաքուր ոսկի, որքան և ռուսական 15 ռուբլին ($=11,612$ գրամ): Ֆրանսիական ոսկի ֆրանկը հավասար լինելով $3/8$ -րդ ոսկի ռուբլու, 360 միլիոն ֆրանկը համապատասխան կլինի ոչ թե «մոտ 120 միլիոն ռուբլու» այլ $360.000.000 \times 3/8 = 135$ միլիոն ոսկի ռուբլու, որ իբրև կլոր թիվ միանգամայն համապատասխանում է վերև ճշտված «դահեկան»-ի և բյուզանդական լիտրի դրամական արժեքներին:

Ընդունելով լիակշիռ «դահեկան»-ը, որ պարունակում էր իր մեջ $4.53 \frac{1}{3}$ գրամ մաքուր ոսկի, հավասար 5.85 ոսկի ռուբլու կամ 15.60 ոսկի ֆրանկի, անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ նրա մեջ մաքուր ոսկին կարող էր երբեմն որոշ տոկոս պակաս լինել $4.53 \frac{1}{3}$ գրամից խառնուրդի (лигатура) պատճառով:

Այդ դեպքերում, բնականաբար, համապատասխան տոկոսով պակաս կլինի նաև «դահեկան»-ի ու այժմյան ոսկի դրամների կըշռական մատնանշված հարաբերությունը: Մեր եզրակացությունը, որ «դահեկան»-ը հավասար է 5 ռուբլի 85 կոպեկի, վերաբերվում է, ուրեմն, լիակշիռ այն «դահեկան»-ին, որի մեջ մաքուր ոսկու քանակը $4.53 \frac{1}{3}$ գրամ էր:

5. «ԱՍՍԱՐԻՈՆ» ԵՎ «ԱՍՊԱՐԻՈՆ»

Կշիռների վերաբերյալ Վենետիկի ձեռագրերի Գ և Ծ օրինակները, որոնց թվահամարները նշանակված չեն Հ. Ավգերյանի աշխատության մեջ, ունեն հետևյալ ուշագրավ հատվածները.

дие своему преемнику огромный фонд в количестве 320 тысяч фунтов золота, т. е. около 120 миллионов рублей на наши деньги.

1 Յ. Ուպենսկին, խոսելով Ցուատինյան կայսեր CLII նովելլայի մասին, որով կարգադրված է եղել ուղարկել տեղերը հարկերի մանրամասն ցուցակները՝ առաջ է բերում տուգանքների գումարները, որ վճարելու էին զանցառու պաշտոնյաները. «если в установленный нами срок означенныя подробныя росписи подагей по местам не будут разосланы, то стоящие во главе префектур чины подвергаются пене в 30 золотых литр. начальники провинций в 20 литр. ևն. [տե՛ս Իստ. Визант. Империи, т. I, էջ 593]:

Ծանոթության մեջ 30 ոսկի լիտրը նա համապատասխան է համարում մոտ $10\ 000$ ռուբլու: Այս հաշվով բյուզանդական լիտրը հավասար կլինի $333 \frac{1}{3}$ ռուբլի, իսկ nomisma-ն կամ solidus-ը՝ 4 ռուբ. 63 կոպ.։ Ի՞նչ փաստերի ու դիտողությունների վրա է հիմնված այս հաշիվը՝ ծանոթության մեջ բնավ բացատրված չէ: Նույն աշխատության մի ուրիշ հատվածում X-րդ դարի nomisma-ն կամ «պերպեր»-ը հավասար է համարված մոտ $4-5$ ռուբլու. տե՛ս Իստ. Виз. Имп. էջ 809:

1. «Տաղանդն կշռոյ անունն է որ է նիծ լիտր. և նիծ լիտրն հենն Ռ ասարիոն ըստ համարոյ»¹.

2. «Մոնաթն»² ինն Ռ ասարիոն է. ըստ հելլենական ղեփտոն կոչի, որ է անօսր, որ է դանգ. զոր Քրիստոս հինգ ձագի վաճառ ասաց. և ըստ Երրայեցեաց ասարիոն՝ նուազովթին կոչի: Ըստ ժամանակին դահեկանն Կ ասարիոն էր. և դահեկանն էր արծաթի»³.

Այս հատվածներում հիշված «ասարիոն»-ի առթիվ Հ. Ավգերյանն ունի հետևյալ ծանոթությունը. «Դ (օրինակ) ասպարիոն, որ է վրիպակ գրչի. զի պարտ է լինել ասսարիոն կամ ասարիոն» (էջ 38). Հ. Ավգերյանի այս ուղղումը, իմ կարծիքով, վիճելի է: Հ. Ավգերյանն ուշադրության չի առել այն, որ «տաղանդ»-ը 9000 ասարիոն չէր, այլ 430,000: Բնագրի վերոհիշյալ ուղղումով ստացվել է մի հաշիվ, որ խիստ դժվար է բացատրել:

Ճիշտ է՝ «ասարիոն»-ը մատենագրական մեք աղբյուրներում հանդիպում է տարբեր իմաստով՝ կամ իբրև երկու զարեհատի կշիռ կամ իբրև դրամ, բայց այս վերջին իմաստով, որքան ինձ հայտնի է, նա չատ փոքր դրամ է, մինչդեռ վերոհիշյալ հատվածներում տաղանդի 1/9000 մասն է, ուրեմն՝ հավասար է մեկ «դահեկան»-ի (=4.53 1/3 դրամ):

Հայերեն Ավետարանի մեջ, օրինակ, հունարեն assarion-ը փոքր դրամ է և թարգմանված է «դանդ» (տես Մատթ. Ժ. 28 և Ղուկ. ԺԲ, 6):

Եթե «տաղանդ»-ը ինն Ռ «ասարիոն» կամ «ասպարիոն» էր ըստ համարոյ, հավանական կլինի ենթադրել, որ այս վերջինը դրամի անունն է: «Ըստ թուոյ» և «ըստ համարոյ» խոսքերով կշիռների վերաբերյալ գովածքներում ակնարկված են, իմ կարծիքով, դրամները:

Արդ՝ հնարավոր չէ՞ արդյոք իբրև լավագույն ընդունել Գ օրինակի «ասպարիոն» ընթերցումը: Այս վերջին ենթադրությամբ հասկանալի է դառնում «տաղանդ»-ի և «ասպարիոն»-ի կշռական հարաբերությունը, որ այլապես մուլթ է ու դժվար բացատրելի:

¹ Տե՛ս Հար. Ավգերյան, Բացատրություն, էջ 37, 38 նաև «Անանիայի Շիրակույ. Մնացորդք բանից», էջ 33:

² Մոնաթ կամ մոնադ, ինչպես հայտնի է, գործ է ածվել տաղանդի իմաստով, տե՛ս Անանիայի Շիրակ., Մնացորդք բանից, 29. Նաև Հ. Ավգերյան, «Բացատրություն չափուց և կշռոց նախնեաց», էջ 26՝ «Տաղանդն նիծ լիտր է, զսա թուղք մոնադ կոչեն»:

³ Հմմտե՛ք Շիրակացու հետևյալ հատվածը «Եւ պայուսիկն Մ լիտր է, որ է Ռ սատեր, որ լինի Տ դրամի կշիռ և թիւ» (տե՛ս Անան. Շիրակ, էջ 29 Բացատրություն, էջ 26):

Դրամական այդ նոր միավորի գոյությունը անընդունելի չափոր
թիվա, որովհետև «ասպարիոն»-ն անհայտ մի բառ է բյուզանդական
հունարենում:

Հայտնի է, որ Թուրքիայում գոյություն է ունեցել «ասպր»
գրամը: Այս «ասպր» բառի ծագումը ենթադրում են նոր հունարեն
«aspros»-ից, որը նշանակել է «սպիտակ»: Իբրև ապացույց այս
լուսաբանության՝ մատնացույց են անում, որ նույն «ասպր» գրամը
Թուրքերենում անվանվել է նաև âq̄tcha, որի ադաման է aq, այ-
սինքն՝ «սպիտակ»¹:

Արդ՝ եթե Թուրքերեն «ասպր»-ը փոխառություն է հունարենից
և գործ էածվել արժաթ դրամի իմաստով, հավանական կլինի, իմ
կարծիքով, ենթադրել, որ նույն այդ բառը Բյուզանդիայում ևս
տարածված է եղել իբրև արժաթ դրամ:

«Ասպարիոն» ընթերցվածը վերոհիշյալ ձեռագրերում կարող
է հենց ուշագրավ մի վկայություն համարվել, որ այդ բառն իբրև
արժաթ դրամի անուն գոյություն է ունեցել նաև Հայաստանում,
հավանորեն, այն դարաշրջանում, երբ գրված են եղել «Գ և Ծ օրի-
նակ» Վենետիկի ձեռագրերը:

Այս ձեռագրերի մասին Հար. վարդ. Ավգերյանը «Յառաջա-
բանութեան» մեջ հաղորդում է հետևյալ տեղեկությունը.

«Գ և Ծ օրինակը ընտիր են գրչութեամբ, և միաբան ունին
զկշիռս և զչափս. միայն երրակի տարբերին յառաջնոյ անտի. նախ՝
զի համառօտագոյն են քան զնա. երկրորդ՝ չունին ի ճակատու զա-
նուն Անանիայի, և ոչ վերնագիր ի վերայ իւրաքանչիւր կշռոց և չա-
փուց. և երրորդ՝ յաւելուն ի սկզբան անդ զասպարիսական չափս:
Վասն որոյ և մեք զսոցա ևս զուղղագիր օրինակ արժան համարե-
ցաք առանձին դնել ի նախադրունս գործոյս զկնի Ասպարիսական
չափուց Խորենացոյն» («Բացատրութիւն չափուց և կշռոց», Յա-
ռաջաբանութիւն, էջ 5):

Ինչպես երևում է այս տեղեկությունից՝ Գ և Ծ օրինակներն
«ընտիր են գրչութեամբ», ուստի և այս ձեռագրերը կարող են
բավական հին լինել: Արդ՝ ի նկատի ունենալով նոր հունարեն
aspros-ի նշանակությունն իբրև «սպիտակ», նաև «ասպարիոն»-ի
վերոհիշյալ կշիռը՝ հավասար «դահեկան»-ի ($=1/9000$ տաղանդի)²
կարելի է, իմ կարծիքով, ենթադրել, որ «ասպարիոն»-ն իբրև բյու-
զանդական հատուկ դրամ եղել է, հավանորեն, արժաթ դրամ, որի
հնագույն կշիռը համաձայն վերոհիշյալ վկայությունների պետք է
ընդունել՝ 4.53 1/3 գրամ:

¹ Տե՛ս «Grande Encyclopédie» հանրագիտական բառարանում «aspre»
բառը:

ՆՅՈՒԹԵՐ ՀԻՆ ՀԱՅՐԱՍԵՐՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ¹ (II)

1. «Խոստակ»=feod, Lehn և «Խոստակդար»= feudataire, Lehnsträger

Հայաստանի նախարարական կազմակերպության առանձնահատկություններն ուսումնասիրելիս՝ առանձնապես ինձ հետաքրքրում էր հողատիրության խնդիրը և, մանավանդ, պայմանական հողատիրության՝ feodum-ի կամ Lehn-ի՝ գոյությունը հին Հայաստանում: Ինչպես հայտնի է, feodum-ը կամ Lehn-ը կազմում էր Արևմտյան Եվրոպայում միջնադարյան ֆեոդալիզմի հիմնական հատկանիշներից մեկը: Հարկավոր էր ինձ պարզել, թե արդյոք գոյություն չեն ունեցել նախարարական Հայաստանում ևս արևմրտյան feodum-ը կամ նման հողատիրական կարգեր:

Այդ կարևոր խնդրի ուսումնասիրության ընթացքում իմ ուշադրությունը գրավեց Ստեփանոս Օրբելյանի պատմության մեջ «Խոստակդար» բառը, որի նշանակությունը, իմ կարծիքով, վերջնական կերպով դեռ լուսաբանված չէ: Այն նշանակությունը, որ ես վերագրելու եմ «Խոստակդար» բառին, այնքան կարևոր է հայկական ֆեոդալիզմի պարզաբանման համար, որ ես անհրաժեշտ եմ համարում մանրամասն առաջ բերել մատենագրական, ինձ հայտնի, բոլոր հատվածները, որոնց մեջ հիշատակված են «Խոստակդար» և «խոստակ» բառերը:

Այդ երկու բառը հանդիպում են Մովսես Կաղանկատվացու և Ստեփանոս Օրբելյանի մոտ հետևյալ վկայություններում.

1. Աղվանից Վաչագան արքայի 6-րդ կանոնում.

¹ Տե՛ս Երևանի Պետական համալսարանի գիտական տեղեկագիր № 4, 1928 թ.:

«Վանաց երէց կամ վանական ոք՝ եթէ ի վանացն գայ-
թանք առնէ և ի վերայ յայտ լինի, անարգեսցեն զնա և ի
տեղւոյն ի բաց արասցեն, ի գխոստակն յեկեղեցին կալցեն»
(«Մովսեսի Կաղանկատուացոյ, Պատմութիւն Աղուանից աշ-
խարհի» հրատ. Մ. Էմինի, Մոսկվա, 1860, Ա. գլ. ԻԶ,
էջ 66—67):

2. «Ստեփանոսի Օրբելյան արքեպիսկոպոսի, Պատմութիւն
նահանգի Սիսական», Թիֆլիս 1911, Գլ. ԼԹ. էջ 206.

«Ետու ես տէր Փիլիպպէ զԲերդկաներէնոյ զկէսդ Սառ-
նաքարի փոխան, և զկէսդ սուրբ եկեղեցւոյդ. և իշխէ ոք հե-
ռացնել՝ ո՛չ եղբայր և ո՛չ որդի և ո՛չ յիմ խոստակդաբաց»:

3. Նույնը, Գլ. ԼԹ., էջ 207.

«Երկերիւր և իննսուն երեք թուականութեանս Հայոց.
որպէս կամ եղև ինձ Փիլիպպէի՝ որդւոյ Վասակայ, Սիւնեաց
տեառն, ետու զՏաթև վասն իմ հոգեացս ի ձեզ ի Տէր Դաւիթ՝
Սիւնեաց եպիսկոպոս. յիմ հօրէն յիս հրիտակ հասնալ էր.
անխուէշքարէ (*) ամենայն սահմանօք, լերամբ և դաշտիւ,
այգօք և ընկոյզեօք, մարգագետնովք և ջաղացանով և որ ինչ
համօրէն սահմանք են. և մի ոք իշխեսցէ յետ իմ անցման, իմ
որդիք կամ եղբարք կամ այլ խոստակդաբ հեռացուցանել
զայդ գիւղդ յայդ եկեղեցւոյդ և ի սուրբ խաչէդ»:

4. Նույնը, գլ. Խ. էջ 219.

«Եւ շէն մի Մաճանուն ի Բաղաց գաւառի, որ նախ տեառն
Ատրնբրսէհի՝ Սիւնեաց տեառն և իմ եղբօր, ինձ էր տուեալ,
և յետ այնորիկ Հրատահայ, իմ տեառնն, գնեալ էր յիմ եղ-
բօրէն, և ինձ վաճառեալ և հոգեցատուր արարեալ՝ ետու ես
Քուղիդուխտ զայդ շէնդ լերամբք և դաշտով, մարգով և ար-
տով, գետով, ջրով և ցամաքով, ծառովք և տնկովք ի սուրբ
խաչդ ի Տեր Սաղոմօն՝ Սիւնեաց եպիսկոպոս... Եւ մի ես և
մի իմ եղբօրորդիք եւ այլ խոստակդաբ պայքարել և համի-
մաղ կալ մի իշխեսցեն»:

5. Նույնը, գլ. ԽԳ., էջ 233.

«Եւ յայսմհետէ մինչև հաւիտեան այս լիցի սահման
Տաթևոյ սուրբ ուխտիս. և մի ոք իշխեսցէ այսմ հակառա-
կել՝ մի Բաղացիք և մի Որոտնեցիք և մի Վաղանդացիք, մի
Շնհէրացիք և մի Նորեցիք: Եթէ ոք ընդ հակառակս ելանէ
ի մերօց կամ յօտարաց, յաւագաց կամ ի ձեռնաւորաց եւ ի
խոստակդաբաց կամ ի տաճուաւորաց, ի սուրբ Երրորդութե-
նէն որոշեալ լիցի և յերից ժողովոցն նզովեալ եղիցի»:

Հայկազյան բառագրքի աշխատակիցները «խոստակ»-ը հասկացել են այս հատվածներում իբրև «խոշտակ, զաւակ, մանուկ, ժառանգ», իսկ «խոստակդար»՝ իբրև «խոշտակ յետագայ, այսինքն՝ զաւակ զաւակի, յետնորդք, թոռունք»։ Նույն բառգրքում «խոշտար» բառին տրվում է հետևյալ լուսաբանությունը. «խոշտար կամ խոստար, որ և խոստակ՝ մանուկ, տղայ, զաւակ, սան, համբակ, ժառանգ որբացեալ»։ «խոստակ» և «խոստակդար» բառերի այս նշանակությունը, ինչպես տեսնում ենք, հիմնված է այդ բառերի ստուգաբանական ծագման վրա՝ «խոստակ-խոշտակ-խոստար-խոշտար»։ Այդ ստուգաբանությունը սակայն ճիշտ չէ, ուրեմն՝ անընդունելի պիտի համարել նաև վերոհիշյալ ամբողջ բացատրությունը։

Նույն բառերի ստուգաբանական ուղիղ մեկնությունը տվել է արդեն պրոֆ. Հ. Հյուբշմանն իր Armenische Grammatik աշխատության մեջ (էջ 161), Հստ Հյուբշմանի «խոստակ» նշանակում է «Güter, Besitz», այսինքն՝ «կալված, ստացվածք» (=nr. xvästia. Güter, Besitz), իսկ «խոստակդար» նշանակում է «der Erbe» այսինքն, «ժառանգ» (=phl. xvastakdar «der Erbe» Pand-nama 80, eigentlich «Besitzhalter»)։

Հյուբշմանի այս մեկնությունից հետո միանգամայն հասկանալի է դառնում վերև առաջ բերված Աղվանից Վաչագան արքայի վեցերորդ կանոնը։ «խոստակն յեկեղեցին կալցեն» պետք է հասկանալ այն իմաստով, որ հանցավոր «վանաց երէց»-ից կամ «վանական»-ից եկեղեցին առնում էր ոչ թե նրանց որդիներին, ինչպես մինչև այժմ ենթադրել են¹, այլ նրանց կալվածները կամ հողաբաժինները։

Այս կանոնն իր բովանդակությամբ համապատասխանում է Շահապիվանի ժողովի երկրորդ և Շենրսեսի կաթողիկոսի և Ներշապհոյ Մամիկոնէից հպիսկոպոսի՝ հինգերորդ կանոններին, որոնք նույնպես վերաբերվում են իրանց կոչմանն անհամապատասխան՝ տգետ կամ հանցավոր եկեղեցականներին։

«Եթէ կրօնաւոր երէց,— ասված է Շահապիվանի Բ. կանոնում,— գտցի ի պղծութեան և ի պոռնկութեան կամ յայլ

¹ См. История Агван Монсея Каганкатвадци, пер. К. Патканяна, 1861, էջ 67։ «խոստակն ի յեկեղեցին կալցեն» Բ. Պատկանյանը թարգմանել է «снять в церковь», սակայն ծանոթության մեջ նա հայտնում է, որ այդ թարգմանությունը կասկածելի է։ Միևնույն սխալ ենթադրությունը արված է նաև Վաչագանի կանոնների իմ գերմաներեն թարգմանության մեջ և «խոստակն ի յեկեղեցին կալցեն» թարգմանված է «das Kind aber soll man in die Kirche nehmen» տես Beiträge zur albanischen Geschichte, 1897, էջ 46։

գործս շարեաց և ստուգեալ վկայիւք. քահանայութիւնն լուծցի և յեկեղեցւոյ բաժնէն հեռացեալ լիցի. Յ դրամ տուգանս տացէ և ի կարօտեալս ռաշխեսցեն. եթէ երէց, եթէ սարկաւագ՝ կանոնս այդ կացցէ, և նոքա ի կարգ զինուորութեան կացցեն ե ի հարկս արքունի, և ընդ պաշտօնեայս մի խառնեսցին» (տես Կանոնագիրք Հայոց, հրատ. Արսեն Ղլտճյանցի, Թիֆլիս 1914, էջ 61):

Իսկ «Ներսիսի կաթուղիկոսի և Ներշապհոյ Մամիկոտնէից եկիսկոպոսի» հինգերորդ կանոնը սահմանում է, որ «տղետք մի իշխեսցեն մտից սրբոյ եկեղեցւոյ, զի անիրաւ է, վասն անուսումնութեանն ընդ զինուորս կացցեն և զճայրենի ճող և ջուր կալցեն, և արքունիս հարկ, և գորդիս ի դպրոց տացեն, զի ուսցին» (Կանոնագիրք Հայոց, հրատ. Ա. Ղլտճյանցի, էջ 109):

Վերահիշյալ կանոններում՝ «խոստակն յեկեղեցին կալցեն», «յեկեղեցւոյ բաժնէն հեռացեալ լիցի» և «զհայրենի հող և ջուր կալցեն»՝ միեւնոյն իմաստն ունեն։ Հանցավոր կամ տգետ կրօնավորներից և քահանաներից եկեղեցին, ինչպես տեսնում ենք, ետ էր առնում նրանց անշարժ գույքը, հողն ու ջուրը, որովհետև այդ գույքը եկեղեցու «բաժին»-ն էր։

Նախորդ աշխատութիւններիցս մեկում ես արդեն մատնանիշ էի արել, որ դեռևս Արշակունյաց Թագավորութեան ժամանակ, քրիստոնեութեան տարածման սկզբնական իսկ շրջանում, հոգևորականութեանը տրված են եղել հատուկ հողաբաժիններ¹։ Այդ հողաբաժինների վերաբերմամբ, ինչպես պարզ երևում է վերևի առաջ բերված կանոններից, նաև Դվինի ժողովի ութերորդ կանոնից, հոգևորականներն ունեցել են միայն տիրութեան և օգտագործման իրավունք, իսկ գերագույն սեփականութեան իրավունքը պատկանել է եկեղեցուն։ Օգտատիրութեան (dominium utile) այդ իրավունքը եղել է ժառանգական, այսինքն՝ այդ հողաբաժինները հոգևորականներն իրավունք են ունեցել թողնել իբրև ժառանգութիւն իրանց որդիներին կամ մերձավորներին²։ Հասկանալի է, ուրեմն, թե ինչու Ներսիսի ու Ներշապհոյի հինգերորդ կանոնում այդ «հողն ու ջուրը» անվանվում է «հայրենի»։

¹ Տե՛ս «Դիտողութիւններ հին Հայաստանի շինականների գրութեան մասին մարզպանութեան շրջանում»։ ԶՍԽՀ Պետ. Համալսարանի Գիտ. Տեղեկագիր № 1, Երևան, 1935, էջ 13—17։

² Տե՛ս «Կանոն Դունայ ժողովոյն», Ը, Կանոնագիրք Հայոց, հրատ. Ա. Ղլտճյանցի, էջ 124—126։

Հողատիրության այս ձևը, անշուշտ, պայմանական էր: Հոգևորականները վերոհիշյալ գույքը, հողն ու ջուրը, ստացել էին իրանց հոգևոր «ծառայություն» համար: Եթե այդ «ծառայություն»-ն անհնարին էր դառնում նրանց տգիտության կամ ծանր հանցավորության պատճառով՝ եկեղեցին իրավունք ուներ այդ գույքը ետ գրավել և տալ «արժանաւոր»-ներին:

Վաշագան արքայի վեցերորդ կանոնը խիստ կարևոր է ու ուշագրավ այն տեսակետից, որ այդ կանոնում «եկեղեցւոյ բաժին» նույն այդ անշարժ գույքն անվանվում է «խոստակ»: «խոստակ»-ը, ուրեմն, ինչպես կարելի է ենթադրել, հիմնվելով վերոհիշյալ բացատրությունների վրա, այն հողաբաժիններն են կամ անշարժ գույքը, որ հատկացվել են հոգևորականներին նրանց հոգևոր «ծառայություն» համար իբրև *dominium utile*, այսինքն՝ ոչ իբրև լիակատար սեփականություն, այլ ժառանգական օգտատիրության իրավունքով: Դժվար չէ կռահել, որ հողատիրության այդ ձևը քրիստոնեական եկեղեցին ընդօրինակած պիտի լինի նախարարական Հայաստանի աշխարհիկ կենցաղից: Պրոֆ. Նիկ. Ադոնցը շատ ուղիղ դիտել էր, որ հայ եկեղեցին, գտնվելով նախարարական միջավայրի ազդեցության տակ, յուրացրել էր նախարարական կազմակերպության պատրաստի ձևերը և մեծ չափերով ենթարկվել էր ֆեոդալականացման, կամ ավելի ճիշտը՝ նախարարականացման¹:

Ի նկատի ունենալով այդ ազդեցությունը, ինձ թվում է, կարելի է ենթադրել, որ նախարարական Հայաստանում «խոստակ» են անվանվել բացի վերոհիշյալ հողաբաժիններից նաև այն հողերը կամ անշարժ գույքը, որոնք կալվածատեր սյուզերենների կողմից տրվել են «ազատ»-ներին իբրև *dominium utile*, այն պայմանով, որ «ազատ»-ները հողատու այս «տէր»-երի հանդեպ կատարելու էին զինվորական և այլ պատվավոր «ծառայություն» պարտականություններ: Այս վերջին իմաստով «խոստակ»-ը կատարելապես համապատասխան կլինի *feodum*-ին (=ֆրես. *fief* գերմ. *Lehn*):

Որ այս ենթադրությունն անհիմն չէ, այդ ցույց են տալիս «խոստակդար» բառի վերաբերյալ վերև առաջ բերված վկայությունները: Իմ կարծիքով, «խոստակդար»-ն այդ վկայություններում նշանակում է «խոստակ»-առու, այսինքն՝ *feudatarius*, *feudataire* կամ *Lehnshalter*:

Պրոֆ. Հ. Հյուբշմանը, ինչպես տեսանք, «խոստակդար»-ը Բարգմանում է «*Erbe*» «ծառանդ», բայց, ի նկատի ունենալով

¹ Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, 1908, էջ 322, 361 և ին:

«խոստակ» բառի իր ստուգաբանությունը, ավելացնում է՝ «eigentlich Besitzhalter»՝ «խակապես կալվածառու»:

Ակադեմիկոս Մ. Բրոսսեն իր «Histoire de la Géorgie» աշխատության մեջ՝ մերժում է Հայկազյան բառգրքի վերոհիշյալ մեկնությունը, որը, ինչպես տեսանք, արդյունք էր սխալ ստուգաբանության, և հենվելով Մ. Դորնի ցուցմունքների վրա՝ ենթադրում է, որ «խոստակ»-ը նշանակում է *richesse*՝ «հարստություն», իսկ «խոստակդար»՝ «un intendant, un surveillant des biens», այսինքն՝ «վերակացու կամ հարստությունների վրա հսկող»։ Հիմնվելով այս մեկնության վրա՝ «խոստակդար»-ը նա համարում է հոմանիշ «ձեռնառորի» և թարգմանում է «employé» «պաշտոնյա»:

Մինչև այժմ ոչ ոք ուշադրության չէ առել, որ «խոստակ»-ն իրավական իր բովանդակությամբ համապատասխանում է միջնադարյան ֆեոդին և, հետևաբար, «խոստակդար»-ը պարսկական *dâr* վերջավորությամբ, նշանակել է, հավանաբար, «խոստակ» առու (=գերմ. *Lehns-halter*):

Այս եզրակացությունը ստացվում է, իմ կարծիքով, ոչ միայն «խոստակդար» բառի ստուգաբանական վերլուծումով, այլև Ստեփանոս Օրբելյանի վերոհիշյալ վկայությունների ուշադիր քննությամբ:

Ինչպես հայտնի է, Ստեփանոս Օրբելյանն իր պատմության մեջ րադվածորեն զետեղել է այն վավերագրերի պատճենները, որոնք վերաբերվում են «Սիսական Նահանգ»-ի եկեղեցական կալվածքներին: Վերև առաջ բերված բոլոր վկայությունները գտնվում են հենց այդ կարևոր քաղվածքներում:

Այդ վկայություններից երկրորդը (Ստեփ. Օրբ. էջ 206) վերաբերվում է «Բերդկաներէջ» գյուղին, որ 839 թվին Սյունյաց «Փիլիպպէ» իշխանը տվել էր Սյունյաց Տեր Դավիթ Եպիսկոպոսին՝ կեսը «Սառնաքարին փոխան» և կեսը եկեղեցուն: Երրորդ վկայության մեջ ասված է, որ նույն «Փիլիպպէ» իշխանը 844 թվին նվիրել է Տաթևի նույն Ս. Խաչ եկեղեցուն Տաթև գյուղը (Ստեփ. Օրբել. էջ 206—208): Չորրորդ վկայությունից իմանում ենք, որ 867 թվին Քուլդիդոսյանը՝ «Փիլիպպէ»-ի քույրը և Սյունյաց Հրահատ իշխանի կինը, «անորդի զոլով» «Մաճ շէնը»՝ «գիր հոգեմասն քաժինն ընծայ է ի սուրբ Խաչն և ի Տէր Սաղոմօն» (Ստ. Օրբ. էջ 218—220): Վերջապես՝ հինգերորդ վկայությունը վերաբերվում է «Տաթևոյ սուրբ ուխտ»-ի սահմաննե-

¹ Introduction et tables des matieres. St. Petersburg. 1858, էջ LXXXVII

րին, որ հատուկ վճռով և առանձին գրությամբ որոշված են եղել 906 թվին (Ստ. Օրբ. էջ 230—234):

Ուրեմն՝ ինչպես տեսնում ենք, «խոստակդար» բառը հիշատակված է 839, 844, 867 և 906 թվականների Տաթևի վանքի փաստաթղթերում: Որ «խոստակդար»-ի նշանակությունն այս վկայություններում ոչ թե «ժառանգ» է կամ «պաշտոնյա», ինչպես ենթադրել են Հյուբշմանը և Բրոսսեն, այլ «ավատառու», այդ հաստատվում է, ինչպես ասացի, հենց նույն վկայությունների ուշադիր քննությամբ: Վերոգրյալ վկայություններից երկրորդում ասված է՝ «և չիշխէ ոք հեռացնել՝ ոչ եղբայր և ոչ որդի և ոչ յիմ խոստակդարաց», իսկ երրորդում՝ «մի ոք իշխեսցէ ետ իմ անցման, իմ որդիք կամ եղբայրք կամ այլ խոստակդարք հեռացուցանել զայդ գիւղդ»:

Եթե «խոստակդար»-ը հասկանանք առաջին հատվածում իբրև «ժառանգ»՝ կըստացվի, իմ կարծիքով, ավելորդ կրկնություն, որովհետև «Փիլիպպէ»-ի անմիջական ժառանգները, նրա որդիները, հիշատակված են արդեն նույն հատվածի սկզբում: Նոր Հայկազյան բառգրքի մեկնությունը՝ «թողունք կամ յետնորդք»՝ թեև հարմարվում է թե առաջին և թե երկրորդ հատվածներին, սակայն այդ մեկնությունը, ինչպես վերև տեսանք, կարելի է անտես առնել, որովհետև «խոստակդար»-ի այդ նշանակությունը հիմնված է ստուգաբանական բռնազբոսիկ և սխալ բացատրության վրա:

«խոստակդար»-ի իմաստը որոշելու համար ավելի կարևոր են չորրորդ և հինգերորդ վկայությունները:

Չորրորդ վկայության մեջ, որ գտնվում է Քուպղիդուխտի 867 թվի պայմանավճռում, ասված է՝ «Եւ մի ես և մի իմ եղբորդիք ես այլ խոստակդարք պայքարել և համիմաղ կալ մի իշխեսցեն»։ Քուպղիդուխտը, ինչպես տեսանք, զավակ չունի, ուստի «խոստակդար»-ն այստեղ ոչ «թողունք» կարող է նշանակել, ոչ էլ անմիջական ժառանգ: «խոստակդար»-ի իսկական իմաստը որոշվում է այս հատվածում փաստական ու կարևոր մի նոր ցուցման օգնությամբ, որ ուշադրության չէ առնվել: Վավերագրերի տակ, որ քաղվածորեն առաջ են բերված Ստեփանոս Օրբելյանի մոտ, սովորաբար, ստորագրել են կամ հիշվում են իբրև վկաներ հենց վերահիշյալ այն անձինք, որոնցից պահանջվում էր չառարկել կամ չընդդիմանալ նվիրատուի կամքին: Քուպղիդուխտի փաստաթղթի վերջում ասված է.

«Եւ գրեցի յ 316 թուականութեանս Հայոց վկայությամբ իմ եղբորորդեացս՝ տեառն Վասակայ և տեառն Աշոտի և տեառն Գրի-

գորոյ և տեառն Սահակայ և իւրեանց ազատաց և ամենայն Շնհէ-
րեցեաց» (Ստ. Օրբ., էջ 220):

Վերև հիշված «եղբորորդիք և այլ խոստակդարք», ինչպես
տեսնում ենք, այստեղ մատնացույց են արված իբրև վկաներ, սա-
կայն «խոստակդարք»-ի փոխարեն ասված է՝ «վկայութեամբ իմ
եղբորորդեացս և իւրեանց ազատաց և ամենայն Շնհէրեցեաց», Այս
զուգահիշումը, իմ կարծիքով պատահական չէ, այլ պարզ մի
ապացույց է, որ շորրորդ վկայության մեջ «այլ խոստակդարք» են
անվանված Քուպլիդուխտի «եղբորորդի»-ների ազատները, որոնք
«խոստակ»-առու էին, այսինքն՝ ավատառու:

Որ մատնանշված զուգահիշումը եզակի ու բացառիկ չէ, այդ
երևում է և մյուս փաստաթղթերից, որոնք Օրբելյանի մոտ առաջ
են բերված առանց կրճատման, Օրինակ, «Փիլիպպէ»-ի 844 թվի
վճռագրի սկզբում ասված էր՝ «և մի ոք իշխեսցէ յետ իմ անցման,
իմ օրդի կամ եղբարք կամ այլ խոստակդարք հեռացուցանել զայդ
գիւղը», իսկ նույն վճռագրի վերջում կարդում ենք.

«Եւ վկայք լիցին աստուածապահ տէր Գրիգոր՝ Սիւնեաց
տէր, տէր Ատրնեռէհ՝ Վասակայ որդի, Սիւնեաց տեառն,
տէր Գրիգոր՝ Սահակայ որդի, տէր Հրահատ և տէր Արուման՝
Սահակայ որդիք. տէր Հրահատ և տէր Գագիկ՝ Գրիգորոյ՝ Սիւ-
նեաց տեառն որդիք, տէր Վահան՝ Վարդանայ որդի. նույնպէս
և յիմ ազատաց՝ Հուռ, Քուրդոյ, Խոսրով՝ Շապուհոյ որդիք.
Ջևանշէր՝ Թէոգորոսի որդի, Աշնակ՝ Վահանայ որդի, Զագիկ՝
Վահանայ որդի, Վարդան՝ Զանատայ որդի, Սահակ՝ Վասակայ
որդի, Միհրան՝ Թուրքայ որդի, Յովհան՝ Ներսէհի որդի, Մու-
շեղ՝ տէր Տիրոցի որդի, Հասան՝ Շապուհոյ որդի, Վահան՝ Մը-
խիթարայ որդի, տէր Մուշեղ՝ Սմբատայ որդի, տէր Վահան՝
Բաբգենի որդի, տէր Բաբգէն և տէր Վասակ և տէր Աշոտ իմ
Փիլիպպէի որդիք. և ի կրօնավորաց Ահարոն... Եւ վասն առա-
ւել հաստատութեան զիմ սովորական մատանիս ի վերայ եդի
և զիմ որդեաց և զայլ ազատաց» (Ստ. Օրբ., էջ 207—208):

Ինչպես Քուպլիդուխտի փաստաթղթում, նույնպես և այս վրճ-
ռագրում, վերև հիշված «խոստակդար»-ներին ներքևում համապա-
տասխանում են դարձյալ ազատները, որոնք «Փիլիպպէ»-ի ավա-
տառուներն էին:

«Խոստակդար»-ի նշանակութունը իբրև feodataire կամ ավա-
տառու այնքան որոշ է ու ակնբախ այս երկու վճռագրում, որ ես

ավելորդ եմ համարում կանգ առնել ուրիշ նման վկայութիւններովրա, որ կան նաև մյուս փաստաթղթերում:

Որ «խոստակդար»-ը շունի «ձեռնաւոր»-ի իմաստ, ինչպես ենթադրել է ակադեմիկոս Մ. Բրոսսեն, այդ ևս պարզ երևում է վերև մատնանշված հինգերորդ վկայութիւնից 906 թվի վճռագրում. որով որոշված են եղել Տաթևի շրջակա սահմանները: Այդ վճռագրի մեջ «խոստակդար»-ը, ինչպես տեսանք, հիշատակված է հետևյալ հատվածում.

«Եթէ ոք ընդ հակառակս ելանէ ի մերոց կամ յօտարաց, յաւադաց կամ ի ձեռնաւորաց և ի խոստակդարաց կամ ի տանուէրաց, ի սուրբ Երրորդութենէն որոշեալ լիցի, և յերից սուրբ ժողովոցն նզովեալ եղիցի» (Ստեփ. Օրբ. էջ 233):

Այստեղ, ինչպես տեսնում ենք, «ձեռնաւոր»-ները հիշվում են առանձին «խոստակդար»-ներից առաջ: Ուրեմն՝ միանգամայն անվիճելի է, որ «ձեռնաւոր» և «խոստակդար» բառերն ունեցել են տարբեր իմաստ: Նույն այս հատվածը հետաքրքիր է ու ուշագրավ նաև այն տեսակետից, որ նրա մեջ ըստ ավագութեան կարգի նախ հիշատակված են «աւագ»-ները և նրանց «ձեռնաւոր»-ները, հետո՝ «խոստակդար»-ները՝ «աւագ»-ների և «տէր»-երի ավատաւորները և վերջում՝ «տանուտէր»-ները: «Տանուտէր»-ները վերջումն են դրված, որովհետև այս դարաշրջաններում այդ բառը, մեծ մասամբ, գործ է ածվել գյուղապետի իմաստով: Այս մասին ավելի մանրամասն խոսելու եմ ուրիշ աշխատութեան մեջ:

«խոստակդար»-ի նշանակւթյան այս նոր լուսաբանութեամբ որոշվում է Հայաստանի նախարարական կազմակերպւթյան հիմնական առանձնահատկութիւններից մեկը և վերջնականապես պարզվում է, որ «Ֆեոդ»-ը և պայմանական հողատիրութիւնը նախարարական Հայաստանում գոյութիւն են ունեցել արդեն իննբորորդ դարում:

Նրա ծագումը սակայն, անշուշտ ավելի հին է:

«խոստակ»-ը, ինչպես տեսանք, հանդիպում է նաև Աղվանից վաչագան արքայի կանոններում: Մինչև այժմ ենթադրել են, որ այդ կանոններն ընդունված են եղել «Աղուէն»-ի ժողովում 488 թվին¹: Իմ կարծիքով, այդ ժողովը, հավանորեն, տեղի էր ունեցել յոթերորդ դարի սկզբներում վաչագան Բարեպաշտի ժամանակ,

¹ Տես Մ. Չամչյան, *Պատմութիւն հայոց Բ.* էջ 219. Brosset Histoire de la Georgie, 1851, էջ 473. Fr. Tournebize, Histoire politique et religieuse de l'Arménie 1900, էջ 357, նաև իմ *աշխատութեան մեջ*՝ Beiträge zur albanischen Geschichte, Leipzig 1897, էջ 29:

որի իշխանության տարիները ևս, հետևաբար, ետ պետք է տարվեն վեցերորդ դարի վերջերը և յոթերորդի սկզբները¹։ Մովսես Կաղանկատվացու պատմության մեջ հիշատակված է, որ այդ ժողովին նախագահել է Միհրանական տոհմից Վարդան քաջ Գարգմանատե-րը, որը ստորագրել է, իրոք, կանոնների տակ (տես Ա գլ. ԻՁ. էջ 103 և Գ, գլ. Ժ, էջ 348)։ Իսկ այս Վարդանի ժամանակը գրվելու է. անշուշտ, Միհրանական տոհմի հաստատման սկզբնական շրջա-նում՝ յոթերորդ դարի սկզբներում։

«խոստակա»-ի և «խոստակդար»-ների գոյությունը կարելի է ըստ իս ենթադրել նաև VII—VI դարերից առաջ՝ թե Մարզպետության, և թե Արշակունյաց թագավորության ժամանակ։

Վերև մենք արդեն տեսանք, որ եկեղեցականների պայմանա-կան հողատիրությունը, որ առաջ եկած պիտի լիներ նախարարա-կան աշխարհիկ կարգերի ազդեցությամբ, կարող է սկիզբ առած լինել շորորոգ դարում։ Այդ արդեն ուշագրավ մի ակնարկ է, որ պայմանական հողատիրությունը գոյություն ունեցած պիտի լիներ՝ իբրև մանր ազնվականության ավատական հողատիրություն՝ նաև այդ հնագույն դարաշրջանում։ Նույն այս ենթադրության հիմք կա-րող է ծառայել «խոստակա»-ի և «խոստակդար»-ի ստուգաբանական ծագումը պարթևերեն xvastak և xvastakdâr բառերից։ Այս տեր-մինները լինելով Արշակունյաց շրջանի փոխառություն, նրանց հնությունը կարող է դարձյալ հավանական մի ցուցանիշ համար-վել, որ նախարարական Հայաստանում feod «խոստակա»-ը և feudataire «խոստակդար»-ը գոյություն են ունեցել ոչ միայն 9-րդ և 7-րդ դարերում, այլ հավանորեն, նաև Մարզպանական և Արշա-կունյաց ժամանակներում։

Հենվելով վերոհիշյալ մեր դիտողությունների վրա և ամփո-փելով մեր ասածները, կարող ենք անել հետևյալ հետևությունները.

¹ Վաչագան Բարեպաշտի ժամանակը որոշելու համար կարևոր են Կաղանկատվացու պատմության հետևյալ ցուցումները. 1. Նրա Ա գրքի ԻԱ գլխում («Թուղթ արքային Վաչագանայ ևն», էջ 76) կարդում ենք. «գտաճել և զամենա-սուրբ Նշխարս Գրիգորի... զոր էր բերեալ երիցուն՝ Մատթէ անուն, ի Յովհաննէ Հայոց կաթողիկոսէ, զոր ունէր նորին մատանեան կնքեալ, և առաքեալ անդ երի-ցունս առնոյր առ իւր»։ Արդ՝ այս «Մատթէոս քահանայ»-ին, ինչպես հայտնի է «Գիրք թղթոց»-ից (Թիֆլիս 1901, էջ 79 և 83), ուղարկել էր Աղվանք Հայոց Հով-հանես Գաբեղինացին (556/7—571, +573). 2. Կաղանկատվացու Ա գրքի ԻԵ գլխում առաջ է բերված «Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպոս»-ի թուղթը «առ Վա-չագան Աղուանից արքա» (էջ 96)։ Այս թուղթը, հավանորեն, պետք է վերագրել «Մա-միկոնէից Աբրահամ եպիսկոպոս»-ին, որ հետո 606/7 թվին դառավ կաթողիկոս։

1. «Խոստակ»-ը, լինելով կարևորագույն տերմին նախարարական կազմակերպության, իր իմաստով և իրավական բովանդակությամբ համապատասխանում է միջնադարյան feud-ին կամ Lehn-ին, իսկ «խոստակդար» նշանակում է «խոստակ»-առու, այսինքն՝ feodataire կամ Lehnshalter:

2. Նախարարական Հայաստանի հիմնական առանձնահատկություններից մեկն այն է եղել, որ հայ եկեղեցին, գտնվելով նախարարական միջավայրի ազդեցության տակ, յուրացրել էր նախարարական կազմակերպության պատրաստի ձևերը և մեծ շահերով ենթարկվել էր ֆեոդալականացման: Հետաքրքիր է այդ տեսակետից եկեղեցական «խոստակ»-ների գոյությունը, որոնք հատկացվել էին հոգևորականներին նրանց հոգևոր «ծառայության» համար օգտատիրության իրավունքով (dominium utile), մինչդեռ նույն հողաբաժինների նկատմամբ գերագույն սեփականության իրավունքը (dominium directum) պատկանել է եկեղեցուն:

3. Օգտատիրության այդ իրավունքը եղել է ժառանգական, ուստի և հասկանալի է, թե ինչու ներսեսի և ներշապուհի հինգերորդ կանոնում այդ հողաբաժիններն անվանվում են «հայրենի»:

4. Հողատիրության այս ձևը, ինչպես երևում է համապատասխան կանոնների քննությունից, եղել է պայմանական, ուստի, եթե հոգևորականների «ծառայություն»-ն անհնարին էր դառնում նրանց տգիտության կամ ծանր հանցավորության պատճառով՝ եկեղեցին իրավունք ուներ «խոստակ»-ները ետ գրավել և տալ «արժանաւոր»-ներին:

5. Ինչպես երևում է Ազաթանգեղոսի և Փավստոսի վկայություններից (տես «Դիտողություններ հին Հայաստանի շինականների դրության մասին», Պետհամալսարանի Տեղեկագիր № 1, էջ 13—17), 4-րդ դարում հոգևորականներին հատկացված են եղել որոշ հողաբաժիններ: Ավելի քան հավանական համարելով, որ այդ հողաբաժինները «խոստակ» էին և ոչ սեփականություն, կարելի է ըստ իս եզրակացնել, որ եկեղեցական «խոստակ»-ների ծագման սկիզբը պետք է դնել 4-րդ դարի առաջին կիստում:

6. 9—10-րդ դարերի վավերագրերում, որ մեջ են բերված Ստեփանոս Օրբելյանի մոտ, «խոստակդար», այսինքն՝ «խոստակ»-առու՝ անվանված են իմ կարծիքով, այն «աղատ»-ները, որոնք կալվածատեր «աւագ»-ներից ստացել էին «խոստակ»-ներ և ստանձնել էին իրանց «տէր»-երի հանդեպ զինվորական և այլ պատվավոր «ծառայութեան» պարտականություններ:

7. Ի նկատի ունենալով եկեղեցական կազմակերպության նա-

խառարականացումը և ընդունելով, որ եկեղեցական խոստակա-նե-րը համապատասխան պիտի լինեին, հավանորեն, աշխարհիկ խոստակա-ներին, կարելի է, իմ կարծիքով, ենթադրել, որ «ազատ»-նե-րի խոստակա-ները ևս համարվել են ժառանգական և «հայրենի»:

8. Թեև խոստակդար տերմինն առաջին անգամ հիշատակվում է Ստեփանոս Օրբելյանի մոտ 9—10-րդ դարերի վճռագրե-րում, սակայն, ի նկատի առնելով խոստակ և խոստակդար բառերի պարթևական ծագումը, նաև եկեղեցական խոստակա-ների գոյությունը 4-րդ դարում, հավանական կլինի ենթադրել, որ ավա-տառությունը, իբրև հողային ֆեոդալական հարաբերությունների հատուկ կարգ, եղել է նախարարական կադակերպության հիմնա-կան տարրերից մեկը ոչ միայն 9—10-րդ դարերում, այլ նաև ավե-րի հին շրջաններում Մարզպանության և Արշակունյաց թագավո-րության ժամանակ:

9. «խոստակ» և «խոստակդար» տերմինների վերահիշյալ լու-սաբանությունը կարող է թերևս կովան ծառայել ճշտելու համար պարթ. xvâstakdâr բառի իմաստը: Հյուրըմանը մատնանիշ է արել, որ xvâstakdâr-ը Pand-nama i Adarbad Maraspand եր-կում նշանակում է «ծառանգ» (der Erbe, Arm. Gram., էջ 161): Ճիշտ է արդյոք որոշված այդ բառի իմաստը: Ինձ թվում է, որ պարթևական այդ բառն իր նշանակությամբ կարող է համապա-ռասխան լինել հայերեն խոստակդար-ին (Lehnsträger):

2. «ՊՏՈՒՂ», «ՇԱՐԻԱՏ» ԵՎ «ՊԱԽՏ ՏԱՆՑ»

«Պտուղ»-ը, պրոֆ. Նիկ. Ադոնցի կարծիքով, նույն հարկն է, ինչ որ եվրոպական champart-ը արաբական mukasame-ը և պարսկական bahrak-ը, այսինքն՝ բերքի որոշ մասն է, որ տրվում էր իբրև հարկ կալվածատիրոջ [Армения в эпоху Юстиниана, էջ 482—483]:

Թադ. Ավդալբեգյանը, համաձայն լինելով այս խնդրում Ադոնցի հետ, իր կողմից ավելացնում է, որ «պտուղ» կամ «պտղի» հարկային տերմինը հռեկտրական դասին անցել է աշխարհիկ տըն-տեսությունից¹:

«Պտուղ»-ի նշանակությունը՝ իբրև քնական տուրք՝ պարզ երե-վում է Աղվանից վաչագան արքայի շորորոդ կանոնից:

¹ Տե՛ս Բ. Ավդալբեգյան, «Հաս, սակ, բաժ» Տեղեկագիր Հ.Ն.Ս.Հ. Գիտու-թյան և Արվեստի ինստիտուտի, Երևան, 1926, էջ 89:

«Պատուղք ի ժողովրդենէ երիցուն՝ կարգն այս լիցի-
թուանիկն շորս գրիւ ցորեան, վեց գրիւ գարի և վեշտասան
փաս քաղցու. և որ տառապեալն է՝ զհացիդ կէսն տացէ, և
գինի՝ որչափ և կարողն իցէ. իսկ որոյ վար և այգի ոչ է, մի
առցեն: Իսկ այնք՝ որ աւելի քան զայս տացեն սակս հոգւոյ,
բարի առնեն, որպէս Պօղոս ասէ, «Որ առատութեամբ սեր-
մանէ՝ առատութեամբ հնձեսցէ»: Եւ ոյր ոչխար է ի տան՝
ոչխար մի և երեք գլաթ բուրդ և մեկ պանիր»։ և ոյր ձիք ի
տան իցեն՝ մին յովանակ, և ոյր պախրէք իցեն՝ որթ մի» տե՛ս
Մովսէս Կաղանկատուացւոյ, «Պատմութիւն Աղուանից աշ-
խարհի» (Թիֆլիս 1913, Ա, գլ. ԻԶ, էջ 99)։

«Պատուղ»-ի նշանակութիւնը թե՛ այս և թե՛ ուրիշ վկայութիւն-
ներում միանգամայն որոշ է ու անվիճելի։ Սակայն ուշադրութեան
արժանի է, որ «պտուղ»-ը մատենագրական բոլոր վկայութիւն-
ներում գործ է ածվել միշտ եկեղեցական տուրքի իմաստով։ Իբրև
աշխարհական հարկ այս տերմինը, որքան փնձ հայտնի է, չէ հի-
շատակված ոչ մատենագրական աղբյուրներում, ոչ էլ արձանա-
գրութիւններում։ Հնարավոր է, իհարկե, որ կավածատիրոջ տրվող
բնական հարկերը ևս կարող էին «պտուղ» անվանվել. բայց այդ
հարկավոր է, իմ կարծիքով, հաստատել որոշ ու դրական որևէ
վկայութեամբ։ Վերոհիշյալ պնդումը կարոտ է, ուրեմն, փաստական
հիմնավորման։

Թե՛ բնական և թե՛ մյուս հարկերի խնդիրը քննելիս՝ պետք է ի
նկատի ունենալ, որ միևնույն հարկերը զանազան դարաշրջաննե-
րում ունեցել են հաճախ տարբեր անուններ։ Հարկային տերմին-
ների ուսումնասիրութիւնը, այդ տեսակետից, բավական քարոզ
աշխատանք է։ Բացի տերմինների նշանակութեան լուսաբանումից
անհրաժեշտ է, ուրեմն, որոշել նաև նրանց կիրառման ժամանա-
կաշրջանները։

Այս գիտողութիւնը վերաբերվում է, բնականաբար, և բնա-
հարկերին, տրոնք Բագրատունյաց, ինչպես և սելջուկյան ու թաթա-
րական տիրապետութեան շրջաններում, անվանվել են, ինչպես
կտեսնենք, ոչ թե «պտուղ» կամ «հաս»¹, այլ «շարիատ»։

«Շարիատ»-ի մասին կարևոր տեղեկութիւններ գտնվում են
վիմական արձանագրութիւններում և, բարեբախտաբար, այնքան

¹ Տե՛ս իմ աշխատութեանը՝ «Հայաստանի արքունի հարկերը մարզպանու-
թեան շրջանում», Տեղեկագիր Գիտութեան և Արվեստի ինստիտ. № 1, Երևան, 1926,
էջ 9, 29, 32 և 34—35։

շատ, որ հնարավորութիւնն են տալիս բավարար կերպով որոշելու նրա նշանակութիւնը, իբրև բնահարկ:

Ի նկատի ունենալով խնդրի կարևորութիւնը, հարկ եմ համարում մեջ բերել արձանագրութիւններէց «շարիատ»-ի վերաբերյալ բոլոր վկայութիւնները. որ առայժմ ինձ հայտնի են.

1. Վիմական տարեգիր, կազմ. Կ. Կոստանյանցի, Ս. Պետերբուրգ 1913, էջ 8, Տեկոր, 971 թ.

«Ես խաւրհանիւշ Հայոց թագուհի հաստատեալ եմ զՏեկորոյ շարյեաւոն յեղն կայք մի».

2. Վիմական տարեգիր, էջ 13, Տեկոր, 1008 թ.

«Ի նժէ թ. Հայոց... կամ եղև ինձ Կատրանիդէ, Հայոց թագուհի դուստր Վասակայ ևւ ամուսին Գագկայ. թողեալ եմ զՏեկորոյ շարյաւոն վասն Գագկայ Շահնշահի արեւշատության եւ իմ որդեացն»:

3. Վիմական տարեգիր, էջ 14՝ Մաստարայ 1015 թ.

«Ի նԿԴ թուականութեանս թորգոմյան ես Վահրամ իշխանաց իշխան, որդի Համդէի, թողի զՄաստարայի շարիաւոն վասն Գագկայ Շահնշահի կենդ»...

4. Վիմական տարեգիր, էջ 26՝ Ալամն, 1001 թ.

«Այս իմ գիր է Սոփէ... Շահնշահի հայոց եւ վրաց թագուհոյ, թողել եմ զԱլաման շարյաւոն վասն իմ հոգոս եւ արեւոս» ենւ.

5. Վիմական տարեգիր, էջ 107՝ Փարպի, 1264 թ.

«Ես Աղբուղայ, որդի Իւանէի, որդւոյն մեծին Շահնշահի, ես Աղբուղայ թողի զՓարպոյ այգեաց շարիաւոն... շժգ»:

6. Վիմական տարեգիր, էջ 126՝ Մրեն, 1284 թ.

«Թուակ, չլգ. այս մեր արձանագիր է պարոն Սէնոպ Սահմատինս Աւետեց որդւոյս եւ կենակից իմ Ուրտուրիտայ որ յառաջ գնեցի զՄրեն յիմ հալալ արդեանց և հաստատեցաք արձանագրով և թողաք զՄրենոյ տաւնակն նացին, ու ի շարիաւոն... Կիկլիշանայ ամիրտութեամբս գրեցաւ».

7. Վիմական տարեգիր, էջ 126 և 162՝ Արուճ, 1285 թ. (նաև 1325 թ.)¹:

¹ Միենույն այս արձանագրութիւնը տպւած է երկու անգամ 1285 և 1325 թվականների տակ (էջ 126 և 162): Սխալը բացատրվում է նրանով, որ հայոց թվականը Շահխաթունյանի մոտ (ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ դաւառացն Արարատայ, էջմիածին 1842, Բ, էջ 61) կարգացված է չլգ (=1285), իսկ

«Ի թուիս Կ. շրդ. ի փաթշահութեան Արղուն խանին, ի թագաւորութեան Դեմետրէի, պարոնութեան սպասալար Մխարկրծե (ա) լին, եղբարն Իւանէի, որդւոյն մեծին Շահըն-շահի, ես Մակլի խուսան աղայիս որդիս եկի յԱրուճ իմ հաւրս գանձագին գեղս, եւ թողի հացին շարիատն հաստից»...

8. Վիմական տարեգիր, էջ 127 Աման 1285 թ.

«Ես Դաւիթ, որդի Դեմէտրէ թագաւորին, թողի զԱւանայ զայգեաց շարէտն, վասն միամտութեան սոցա... Արդ որք ի մերոց կամ յաւտարաց տէր լինի Աւանայ եւ զհաստատեալ գիրս մեր խափանել ջանայ և զշարէտ առնու կամ»...

9. Վիմական տարեգիր, էջ 130՝ Օշական. 1288 թ.

«Ի թուին շէ... յամի թագաւորութեան... Արղուն զանին ես պարոն Սահմատինս, որդի պարոն Աւետեացն, թողի զՅաւլականն զհացի եւ զդարմանի զշարիատն զվերի եւ զներ-բի գամէն հանդի»...

10. Վիմական տարեգիր, էջ 130՝ Մրեն, 1288 թ.

«Թւ. Կ. շէ... ես պարոն Սէնոպ Սահմադինս եւ ամուսին իմ Ոտուրտա... Մրենայ հացին շարիատն թողել էաք և հայմալ թողաք զէգեց գինոյ և խաղողի խալէն»...

11. Վիմական տարեգիր, էջ 138 Հռիփսիմէի վանք, 1296 թ.

«Ի թվից լիսե, ի պատրոնութեան իշխանաց իշխանին մեծին Շահնշահի եւ Աղբուղին ես Շիրին փաթունս ու Պայա-լուն փաթունս ու Թաւթէս ու Թալէս ու Խոճէս ու Ղայիրս թողաք զՀռիփսիմուցս զբաբակին շարիատն եւ զշահնաին բաբակի հակն»...

12. Վիմական տարեգիր, էջ 142՝ Յովհաննավանք, 1201 թ.

«Ես Ամասշան, որդի Գրիգորին, եւ ամուսին իմ Բեռն. հէնց էլաւ պարոնաց ձեռնէ զերկիրս առին ես չբաժնեցայ ի ծառայութենէ. աստուած պարոնաց աշողումն երեւտ. երկիրս երեկ. Օհանավանք ինձ տվին հէրէնիք. հասարակաց տունս խլած էր էգոց հողի շարատ էր գրած. մեք քլ հասարակ ի սուրբ Կարապետս ապսպարեցաք, վանաց էգոյ շարիատ վեր կալաք»...

Ալիշանի մոտ («Այրարատ», Վենետիկ 1890, էջ 144)՝ չհդ (=1325)։ Ուղիղ է. անշուշտ, Շահխաթոնյանի թվականը, որովհետև Արղունն «էլղան» էր 1284—1291 թվերին։ Մեր բնագրում Շահխաթոնյանի սխալ ընթերցվածներն ուղղված են Ալի-շանի բնագրի համաձայն։

13. Վիմական տարեգիր, էջ 247՝ Շիրակաւան, անթվական.

«Որ ով եկեղեցոյս դրանս կա և սպասաւորէ սմա թէ արեղա եթէ միակեց, թէ շատ տաւար ունենան եթէ քիչ, թէ շատ վաստակ ցանեն եւ թէ քիչ, ոչ շարիատ, ոչ համարելէ, ոչ սուսունի, ոչ եզին թազար, ոչ մեծ շար, ոչ փոքր հետ եկեղեցոյս սպասաւորացս ոչ ում խաւաք չլինի»¹...

Այս վկայութիւններում, ինչպես տեսնում ենք, հիշատակված են.

ա. «զՏեկորոյ շարյեատն յեղն կայթ² մի» (վկ. 1).

բ. «զՓարպոյ այգեաց շարիատն» (վկ. 5).

գ. «զՄրենոյ տասնակն հացին, որ ի շարիատն» (վկ. 6).

դ. «Արուճի հացին շարիատն» (վկ. 7).

ե. «զԱւանայ զայգեաց շարէտն» (վկ. 8).

զ. «զՅաւշականո զհացի եւ զդարմանի զշարիատն զվերի եւ զներքի զամէն հանդի» (վկ. 9).

է. «Մրենոյ հացին շարիատն» (վկ. 10).

ը. «զՀոփսիսմուցս զբ(մ)բակին շարիատն» (վկ. 11) և

թ. «Ոհանավանքի էգոց հողի շարատ» (վկ. 12):

«Շարիատ» առնում էին, տրեմն՝ յուղից, այգիներից, հացից, դարմանից, բամբակից: Վեցերորդ վկայութեան մեջ «շարիատ» է անվանված հացի «տասնակ»-ը, առաջին վկայութեան մեջ՝ Տեկորից ստացվող մի կայթ յուղը, իսկ մյուս դեպքերում՝ թեև չի նշանակված «շարիատ»-ի քանակը, սակայն կարելի է վստահորեն ենթադրել որ «շարիատ»-ը դարձյալ բերքի որոշ մասն է, որ վճարվում էր որպես հարկ: Այդ բնահարկը, ինչպես պարզ երևում է վկայութիւնների բովանդակութիւններից, վճարվել է կալվածատերերին:

«Շարիատ» բառի ստուգաբանութիւնը և նրա նշանակութիւնը փորձել են լուսաբանել պրոֆ. Նիկ. Մառը և պրոֆ. Ս. Նիխազարյանը:

¹ Բացի վերոհիշյալ արձանագրութիւններից տե՛ս նաև 1323 թվի Սիթի խաթունի արձանագրութիւնը (Վիմ. տար. էջ 161), որ լափազանց աղճատված է:

² «Կայթ»-ը՝ իբրև հացահատիկների չափ՝ հավասար է եղել Շիրակացու ժամանակ, ինչպես ցույց է տվել Գալուստ Տեր-Մկրտչյանը, 60 լիտրի ուրեմն՝ նրա կշիռը կլինէր $326,4 \times 60 = 19,584$ կիլոգրամ: Տե՛ս Գալուստ Տեր-Մկրտչյան, «Անանիա Շիրակացի», Վաղարշապատ, 1895, էջ 19, հմտեմ նաև И. А. Орбеля, Вопросы и решения вардапета Анании Ширакца, Петроград, 1918, էջ 64. Լիտրի կշիռը տե՛ս իմ աշխատութեան մեջ՝ «Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմութեան» (1) Տեղեկագիր Գիտութեան և Արվեստի Ինստիտուտի, Երևան, 1927, № 2:

նիկ. Մառի ասելով՝ մինչև թաթարական տիրապետությունը Հայաստանում հարկատվության նկատմամբ տեղական սովորութիւնների հետ միասին իշխել է մահմեդական իրավունքը, ուստի և «շարիատ» է անվանվել այն հարկը, որ պահանջվել է համաձայն այդ իրավունքի:

Ս. Նղիազարյանը, որը նույնպես «շարիատ»-ը մեկնել է իբրև «налог по шариату»² փորձել է նաև որոշել հարկի բովանդակությունը: Հենվելով 1284 թվի Մրենի արձանագրության վրա (տե՛ս վերև վկայութ. 6), նա ենթադրել է, որ «շարիատ»-ը մահմեդական օրենքով սահմանված «տասանորդ»-ն է³: «Շարիատ»-ին, որ մահմեդական հիմնական հարկ էր, ենթակա էին, — ասում է Նղիազարյանը, — տնտեսության բոլոր ճյուղերն իրանց արդյունքներով ամեն տեսակ գույք, արհեստներ և առևտուր. վաճառքների մեծ առաջ են բերված, իրոք, դեպքեր, երբ «շարիատ»-ի տակ են դրվել մարդը, հացը, կաթը, եզը, անասունները և այլն⁴:

Հարգելի ուսուցչապետի այս վերջին եզրակացությունը, անտարակույս, սխալ է: Արձանագրական վկայություններում, ինչպես տեսանք, ոչ մի խոսք, անգամ ակնարկ չկա այն մասին, որ իբր «շարիատ»-ի տակ էին՝ «ամեն տեսակ գույք, արհեստներ, առևտուր մարդ կամ անասուններ»:

Ուշադրության արժանի են սակայն «շարիատ»-ի մասին վերոհիշյալ ստուգաբանական մեկնությունը⁵, նաև նրա քանակական որոշումը իբրև «տասանորդ»:

Ստուգաբանական մեկնությունը, թեև առաջին հայացքից թվում է հնարավոր, սակայն միանգամայն անընդունելի պիտի համարվի՝ ոչ միայն «շարիատ»-ի և իմաստների տարբերության, այլ՝ գլխավորապես, նաև այն պարզ պատճառով, որ «շարիատ»-ը գործ է ածված Հին կտակարանի գրաբար թարգմանության մեջ, երբ դե-

¹ Н. Марр, Новые материалы по армянской эпиграфике, С. Пет., 1893, էջ 80. Зап. Вост. отд. т. VIII.

² Проф. С. А. Егвазаров, Исследования по истории армянского права, Киев, 1919, էջ 4.

³ Նույնը, էջ 40.

⁴ Նույնը, էջ 40.

⁵ 2. Ղևոնդ Ալիշանը «շարիատ»-ը համարել է՝ «հասարակ կոչում տրից», և նրա ստուգաբանական ծագման մասին մատնացույց է արել որ, «շիրառ ըստ պարսից նշանակ է խորշ պարկի», տե՛ս «Շիրակ», Վենետիկ, 1881, էջ 92: Այս թույլ համեմատությունը, իհարկե, ճիշտ չէ՝ թե այդ բառերի տարբեր նշանակության և թե ձայնական օրենքների անհամաձայնության պատճառով:

ևս գոյութիւնն չունենին ոչ Մահմեդը, ոչ էլ մահմեդական օրենքները:

Նոր Հայկազյան բառգիրքը, որ նկատի է ունեցել հենց այս վկայութիւնները, «շարիատ»-ը մեկնել է իբրև — πλεονσμός, abundantia, բառերը, իբր «յաւելւած», այսինքն՝ «վաշխ յաւելնալ ի վերայ փոխոյ քան զգլուխ դրամոյն և այլոց ընչից»:

Ավելորդ չեմ համարում մեջ բերել Հին Կտակարանի կարևոր այդ վկայութիւնները:

1. Դևտ. ԻԾ. 37.

«Զարծաթ քո մի տացես նմա ընդ տոկոսսօք, և զկերակուր քո մի տացես նմա ընդ շարիատիւ»:

2. Բ. օրենք. ԻԳ, 19.

«Մի տացես եղբօր քում արծաթ վաշխիւ, և մի զկերակուր շարիատիւ»...

«Շարիատ»-ի հանդեպ հունարեն թարգմանութիւնն ունի առաջին հատվածում՝ πλεοναξμας, իսկ երկրորդում՝ τοχος, այսինքն՝ «յաւելուած» և «տոկոս»։ «Շարիատ», ինչպես տեսնում ենք, անվանվել է հինգերորդ դարում այն տոկոսը, որ վճարվում էր իբրև ավելում փոխ առած ուտելիքների կամ կենսամթերքների համար։ Իբրև բնահարկ նա նույնպես նշանակում էր, ինչպես տեսանք, որոշ տոկոս, որ ստացվում էր բերքից։ Շատ պարզ է, ուրեմն, որ «շարիատ» — բնահարկը նույն բառն է, ինչ որ հինգերորդ դարի «շարիատ» — տոկոսը, և, հետևաբար, նա չի կարող լինել մահմեդական շրջանի փոխառութիւն։

Մնում է պարզել մի խնդիր ևս, թե արդյոք ճիշտ է, որ «շարիատ»-ը որպես բնահարկ ունեցել է բացառապես «տասանորդ»-ի իմաստ։

Պրոֆ. Ս. Ելիազարյանը, ընդունելով որ այդ հարկը մահմեդական «տասանորդ»-ն է կամ «աշար»-ը, ինչպես, տեսանք, մատնացույց է արել վերոհիշյալ վեցերորդ վկայութիւնը՝ «զՄրենոյ տասնակն հացին, որ ի շարիատն»։ Իմ կարծիքով, այս ենթադրութիւնը ևս հավանական չէ։

Ծթե Մրենում «շարիատ»-ը տասանորդ էր, այդ չի կարող, բնականաբար, ապացույց լինել, որ նույն նշանակութիւնն ունեցել է նաև մյուս վկայութիւններում։ «Շարիատ»-ը որի բուն իմաստը տոկոս էր, բերքի որոշ մասն էր, որի քանակը տարբեր վկայութիւններում, որ վերաբերվում են զանազան դարաշրջանների, կարող էր նույնը չլինել։ Նրա քանակական որոշումն առանձին դեպքերում խիստ կարևոր մի խնդիր է, սակայն այդ խնդրի լուսաբանու-

թյան համար հարկավոր են անշուշտ. փաստական նոր տրվելակներ:

Բացի 1284 թվի Մրենի արձանագրությունից (վկայութ. 6), «շարիատ»-ի չափը տրված է նաև Տեկորի 971 թվի արձանագրության մեջ (տե՛ս վերև վկայութ. 1): «Ծն հասարեանիւշ Հայոց թագուհի,— ասված է այդ վկայության մեջ,— հաստատեալ եմ զՏեկորոյ շարիատն յեղն կայթ մի»: Նույն այս հարկը հիշատակված է նաև Մխիթար Գոշի Դատաստանագրքում՝ «կովու լիտր եղն միայն լիցի» (Վաղարշապատ, 1880, Բ. ա, էջ 315):

Հնագույն հարկերի քանակը որոշող թե՛ այս և թե՛ նման վկայություններն այնքան կարևոր են տնտեսագիտական հետազոտումնասիրությունների համար, որ ես ավելորդ չեմ համարում մի փոքր կանգ առնել չափերի վրա, որ մատնանշված են այս հատվածներում: «Շարիատ»-ի չափը, ինչպես տեսնում ենք, ցույց է տրված Տեկոր գյուղից ընդամենը՝ «կայթ մի», իսկ Գոշի վկայության մեջ՝ յուրաքանչյուր կովից մեկ լիար:

Եթե՛ վիժական տարեգրի «կայթ մի» ընթերցվածը ճիշտ համարենք¹ և տասերորդ դարի այս «կայթ»-ը հավասար ընդունենք Շիրակացու ժամանակվա «կայթ»-ին, որ 60 քուլզանդական լիտր էր: Տեկորի յուղի բնահարկը այժմյան կշռով, ինչպես ասացի, կլինի 19,584 կիլոգրամ:

Այս հաշիվն անում ենք սակայն վերապահությամբ, որովհետև կշիռները և չափերը կարող էին նույնը չլինել զանազան դարաշրջաններում և տարբեր տեղերում:

Մխիթար Գոշի մոտ վերոհիշյալ լիտրը, օրինակ, այլևս Շիրակացու հիշած քուլզանդական «լիտր»-ը չէ (=326,4 գրամ), այլ, ըստ երևույթին, արաբական ժամանակվա իրաքի լիտրն է, որի կշիռը հավասար էր 408 գրամի կամ 1 ռուսական ֆունտի: Այս հետևությունը ստացվում է Դատաստանագրքի Վենետիկի օրինակի լուսանցքի նկատողությունից և ձեռագրական այն ընթերցվածներից, որ մանրամասն առաջ են բերված Բաստամյանցի ծանոթության մեջ: «Մեր օրինակի մեջ,— ասում է Բաստամյանցը,— լուսանցքի վերա գրած է օտարի ձեռքով իբրև բացատրություն լիտր բառի՝ աճ (100) դրամ կշիռ եղ», որով կամենում է իբր ասել թէ՛ մի լիտրը հաւասար է հարյուր գրամ կշռին:— Վենետիկի օրինակի մէջ գրած է «լրտեղն» (անշուշտ՝ «լրտր եղն»)։ իսկ այդ բառի տակ

¹ Արձանագրությունների տպագիր հրատարակություններն այնքան անփութ են ու սխալաշատ, որ «կայթ մի» ընթերցվածը կարող է լինել աղճատված: Արձանագրության մեջ ուղիղ ընթերցվածը թերևս լինի «կայթսի»:

կցած է լուսանցքի վրա այսպիսի ծանոթություն՝ Այսպես ի հնագույն. ի մի օրին. «Լիտր իւղն». յերիս խանգարեալ օրինական «կովու հարիւր դրամ կշիռ իւղ տացեն»: Սոյնպէս գրած է և № 488, 749 Սին. Կարապ. օրինկ. մեջ՝ «եւ կովու Ծ (100) դրամ կշիռ եղ տացեն»¹:

Այս կարևոր ընթերցվածները գտնվում են Դատաստանագրքի ձեռագիր հին օրինակներում, ուստի հավանական պիտի համարեւ, որ Մխիթար Գոշի մոտ հիշատակված «լիտր»-ի կշիռը եղել է, իրոք. «Ծ դրամ»: Բյուզանդական «լիտր»-ի կշիռը (=326,4 գրամ), ինչպես գիտենք, հավասար էր 80 «գրամ»-ի («գրամ»-ը=4,08 գրամ), սակայն Իրաքի «լիտր»-ը, որ գործ էածվել արաբական աշխարհակալության ժամանակ գրեթե ամեն տեղ՝ անգամ Սպանիայում, Ֆրանսիայում և Ռուսաստանում՝ այժմյան կշռով 408 գրամ էր, և հենց այս «լիտր»-ը, իմ կարծիքով, համապատասխանում է Դատաստանագրքում մատնանշված «լիտր»-ին, որի կշիռը, ինչպես տեսանք, հավանորեն, 100 «գրամ» էր²:

Եթե ընդունելի համարվի իմ այս ենթադրությունը, յուզից վճարվող քնահարկը կամ «շարխատ»-ը, որ Գոշի Դատաստանագրքում սահմանված էր յուրաքանչյուր կովից մեկ լիտր, այժմյան կշռով պետք է հաշվել 408 գրամ կամ ուսական 1 ֆունտ:

Բացի «շարխատ»-ից, որի քնահարկ լինելը հաստատում են վերահիշյալ վկայությունները, քնական հարկի նշանակություն ունեցել է, ըստ երևույթին, նաև «պախտ» հարկը, որը հանդիպում է մի անգամ միայն Վիմական տարեգրում՝ Անիի 1046—1050 թվի հետևյալ արձանագրության մեջ.

Վիմական տարեգիր, էջ 27՝ Անի, 1045—1054 թ³.

¹ Տե՛ս Մխիթարայ Գոշի, Դատաստանագիրք Հայոց Բ, ա, էջ 315, ծանոթ. 673.

² Կշիռների և չափերի ուսումնասիրությունը, պետք է ասել, որ խիստ բարդ ու դժվար խնդիր է, որին պետք է մոտենալ առանձին զգուշությամբ: Ոչ միայն հին, այլ նաև գիտական նորագույն աշխատություններում կշիռների, չափերի և գրամների վերաբերմամբ հանդիպում են հաճախ միանգամայն սխալ ցուցումներ, որ կարող են հիմք ծառայել սխալ ու խառնաշփոթ հաշիվների: Օրինակ, Ն. Ռոժկովի «История России» աշխատության մեջ (1919, 1, էջ 156) բյուզանդական «լիտր»-ը կամ ֆունտը հավասար է ընդունվում ուսական այժմյան $\frac{3}{4}$ ֆունտի: Բյուզանդական «լիտր»-ի կշիռը, ինչպես ցույց է տրված իմ մի այլ աշխատության մեջ («Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության», 1, Տեղեկագիր Գիտ. և Արվ. Ինստիտուտի № 2) 326,4 գրամ էր, իսկ ուսական ֆունտի՝ 408 գրամ, ուստի նա հավասար է ոչ թե $\frac{3}{4}$ ուս. ֆունտի, այլ $\frac{4}{3}$:

³ Բյուզանդական իշխանությունը հաստատվել էր Անիում 1046 թվին: Զոյն կայսրուհին, որ հիշվում է սույն արձանագրության մեջ, վախճանվել է 1050 թվին:

«Եւ Առաւնս մագիստրոս, մեծարեալ ի մեծափառ Թագաւորութեանց ի գեղ զարդու եւ ի տես մանգութեան իմո, եկի յարեւելս, ի գեղեցկաշէն բերդս, յԱնի, բարձրացուցի բաւանդակ զպարիսպ սորին կառկառակոյտ արձանաւք եւ հաստահողոյս ամրությամբ, եւ ի յիմոց մեծածախ գանձուց արծի ջանիւ ջուր յորդաբուխ ի մէջ ամրոցիս յուրախութիւն եւ ի զովացումն ծարաւեաց: Բերի ոսկի մատանեաւ գիր աղատութեան զինքնակալ ծիրանեծին Թագուհոյն վասն պախտից տանց քաղաքիս և թաստակին, զոր տալին ամյամէ շափ ութից լտերց, այլ և ի խնդրո իշխանաւորացս խափանեցի եւ զգիւտ երկուց լտերց, զոր տայր մութսիբն այս ամէն»:

Թեեւ այս վկայության մեջ չէ հիշված, թե ի՞նչն էր տրվում «չափ ութից լտերց» և «երկուց լտերց», սակայն միանգամայն պարզ և որոշ է, որ «պախտ տանց»-ը բնական հարկ էր, ինչպես և «թաստակ»-ը, որի մասին խոսելու ենք առանձին:

«Պախտ»-ը, իմ կարծիքով, հոմանիշ է այստեղ «շարխատ»-ի և, հավանորեն, նույն հարկի պարսկական անունն է¹, ինչպես հայտնի է, հայերեն «քախտ» բառը, որը փոխառություն է պարթևերենից, հնդկա-իրանական լեզուներում նշանակում էր ոչ միայն «քախտ», վիճակ, ճակատագիր», այլև «մաս, բաժին»²: Ճիշտ այնպես, ինչպես և ռուսական ДОЛЯ բառը, որի սկզբնական իմաստը «մաս, բաժին» է, փոխաբերաբար նշանակում է նաև «քախտ, ճակատագիր»:

Ինձ թվում է, որ այս «պախտ»-բնահարկը պարթևերեն կամ պարսկերեն վերահիշյալ նույն baxt-ն է, որը կարող էր բացի իր սովորական նշանակություններից ունեցած լինել նաև բերքիս վճարվող մասի կամ բնահարկի նշանակություն:

Արձանագրությունը գրված է, հավանորեն, ոչ թե 1045—1054 թվականների ժամանակամիջոցում, այլ 1046—1050 թթ.:

¹ Պրոֆ. Ս. Եղիազարյանն այս հարկը նույնն է համարում, ինչ որ «դանագիր»-ը, և «պախտ տանց»-ը թարգմանում է ПОДОМНЫЙ НАЛОГ: Այս հարկը, — ասում է նա, — գոյություն է ունեցել Անդրկովկասի մահմեդական շրջաններում ovphuli [подомные деньги] կամ thuspiphuli [подомные деньги] անունով (տե՛ս Исследование, էջ 39), իմ կարծիքով, «դանագիր» և «պախտ տանց»-ը տարբեր հարկեր են: Բացի այդ՝ արձանագրության բովանդակությունից պարզ երևում է, որ «պախտ»-ը տարբեր է նաև հիշյալ մահմեդական հարկերից, որովհետև այս հարկը տրվել է ոչ թե գրամով, այլ լիտրերով:

² Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Երևան, 1926, էջ 906.

3. «ԹԱՍՏԱԿ»=ԹԱՍՈՒ-ՏԱԿ.

1046—1050 թվի Անիի արձանագրությունը, որի մեջ հիշատակված է «պախտ տանց» հարկը, ուշագրավ մի նեցուկ է ու կովան, որը, իմ կարծիքով, հիմք կարող է ծառայել «թաստակ» հարկի լուսարանություն համար:

Այս վերջին հարկը հիշված է հինգ անգամ IX դարի հետեւյալ արձանագրություններում.

1. Վիմական տարեգիր, էջ 13, Տեկոր 1014 թ.

«Եւ ես Աշոտ թագաւոր հաստատեցի եւ թողեալ եմ զհարկն (այսինքն՝ «զշարխատն») բնովիմք յաւիտեանից եւ զթաստակն վասն իմ արեւշատութեան եւ իմ ծնողաց ու 'դրարց եւ զաւակաց, որ աւր թ. կ. Հաոց նկգ էր»...

2. Վիմական տարեգիր—էջ 14՝ Հոռոմոս, 1013 թ.

«Ես Անանիա, առաջնորդ գոլով. ս. ուխտիս... զատեղի մեծաւ ջանիւ զհարկ եւ զթաստակ, առի ե զՔեղարագոմն իւր ամենայն գոյիւ ի. ս. ուխտս վասն ապաւինի տեղի լինելոյ ի փախստեան ժամանակի եւ այլ բազում ինչ աւգտի փայտի եւ խոտի... տուող այդմ պարգեւի Գագիկ էր... եւ որդեալք իւր՝ Սմպատ եւ Աբաս եւ Աշոտ:

3. Վիմական տարեգիր, էջ 21՝ Երերուք, 1038 թ.

«Յանուն Աստուծոյ ի թուականին ՆԶԷ. (Բ)արեպաշա թագուիս դուստր Աբասա, Սմբատ Շահնշահի կինս, եւ Աշոտ մա(յ)րս, որ ազատեցի զԵրէրվաց թաստակաւ յորդէց յորդիս Սմբատ Շահնշահանի հզուրի եւ արքայի արեւշատութեան»...

4. Վիմական տարեգիր, էջ 27՝ Անի, 1046—1050 թ.

«Ես Առանս... բերի ոսկի մատանեաւ գիր ազատութեան զինքնակալ ծիրանեծին թագուհոյն վասն պախտից տանց քաղաքիս եւ թաստակին, զոր տային ամ յամէ շափ ութից լտեբց. այլ ե ի խնդրո իշխանաւորացս խափանեցի իւ զգիւտ երկուց լտեբց, զոր տայր մութսիբն այս ամէն»¹:

Պրոֆ. Ս. Նոյազարյանը, կարծում է, որ «թաստակն» իրանական ծագում ունի եւ համեմատում է այս բառը dāstak-ի հետ²:

¹ Կա մի վկայություն եւ թաստակի մասին Ալամնի 1041 թվի արձանագրության մեջ. տե՛ս Н. Марр. Новые материалы по армянской эпиграфике. էջ 76:

² Ս. Նոյազարյանից առաջ հայերեն «թաստակ»-ի ծագումը պարսկերեն dāstāk-ից որոշ վերապահությամբ մատնանշել է Նիկ. Մառը: «Если название повинности, *թաստակ*, — *անում է նա*, — *обязано своим происхождением той статье закона или специальной грамоте, в силу которой требовалась ея*

«Քուրդերի մոտ,—ասում է նա,—մի սովորութիւն կա, որի համաձայն նախընտրելի իրավունք ունի տնտեսական տարվա վերջին, երբ լրանում է տարեկան իր վարձույթի ժամանակը, վերցնելու իբրև պարգև մեկ ոչխար կամ մեկ գառ իր ընտրութեամբ: Այդ ոչխարը կամ գառը, որ նրա աշխատավարձի մեջ չէ մտնում, այլ տրվում է նրան իբրև պարգև, անվանում է dāstak: «Թաստակ»-ը, որ հիշվում է վավերագրերում, կարող է թերևս հատուկ տուրք լինել հարկահավաքի օգտին»¹:

«Թաստակ»-ի այս ստուգաբանությունը թե հնչունական տեսակետից և թե իմաստի տարբերութեան պատճառով միանգամայն անընդունելի է, սակայն պրոֆ. Նդիազարյանի ենթադրութիւնը, ավելի ճիշտ գուշակութիւնը, որ «Թաստակ»-ը կարող է լինել լրացուցիչ տուրք հօգուտ հարկահան պաշտոնյաների, իմ կարծիքով, անհավանական չէ:

Նույն եզրակացութեան հանգել եմ և ես, բայց ոչ վերահիշյալ բացատրութեան հիման վրա, որ համարում եմ սխալ, այլ փաստական ուրիշ ցուցումների օգնութեամբ, որ բխում են արձանագրական վկայութիւններից: Վկայութիւններում, նախ և առաջ, աչքի է ընկնում, որ «Թաստակ»-ը հիշվում է «շարիատ» կամ «պախտ տանց» բնահարկի հետ միասին:

1008 թվին Կատրանդե թագուհին, ինչպես տեսանք, ազատել էր Տեկորը «շարիատ» հարկից, իսկ 1014 թվին Աշոտ թագավորը հաստատում է այդ և իր կողմից ազատում նույն Տեկորը նաև «Թաստակ»-ից (վկայութ. 1): Հռոմոսի առաջնորդ Անանիան 1013 թվին ազատել է Քմեծաւ ջանիւ զհարկ և զթաստակ» (վկայութ. 2): 1046—1050 թվականների ժամանակամիջոցում «Առան» մագիստրոսը բերել է Քգիւր ազատութեան... վասն պախտից տանց քաղաքիս եւ թաստակին» (վկայութ. 4):

Այս վկայութիւններից ստացվում է այն տպավորութիւնը, որ «շարիատ»-ը, որը Հռոմոսի արձանագրութեան մեջ անվանված է «հարկ», իսկ Անիի արձանագրութեան մեջ՝ «պախտ տանց», ինչ որ կապ է ունեցել «Թաստակի» հետ: Ինքնըստինքյան այս դիտողութիւնը կարող է անհիմն կամ քմահաճ թվալ, սակայն ճշուն և ենթադրութեան կոպտն է հանդիսանում մի նոր հանդամանք, որ արժանի է առանձին ուշադրութեան:

уплата, то его можно сблизить с персидским словом *litterae sigillo munitae lucu praefecit scriptae* [Vullers, Lex. Pers. Lat], «... Новые материалы по арм. эпиграфике, С. Пет., 1993, էջ 80»:

¹ Исследования по ист. армянск. права էջ 4 և 42:

Անիի 1046—1050 թվի արձանագրության մեջ ոչ միայն միասին են հիշված «պախտ տանց» բնահարկը և «թաստակ»-ը, այլ մատնանշված է նաև հարկերի քանակը: Առաջին քանակը՝ «չափ ուտից լտերց» վերաբերվում է, անշուշտ, քաղաքի ամեն մի տնից որովոր հիմնական հարկին, իսկ երկրորդը՝ «գիւտ երկուց լտերց», ամենայն հավանականությամբ, լրացուցիչ «թաստակ» հարկն է, որը, ինչպես տեսնում ենք, կազմում է առաջին հարկի $\frac{1}{4}$ մասը:

Անուշադիր շպետը է թողնել, որ այս վերջին քանակը՝ հիմնական հարկի $\frac{1}{4}$ -ը՝ արձանագրության մեջ անվանված է «գիւտ երկուց լտերց», այսինքն՝ «չահ» կամ «վաստակ»: Վերջապես՝ ուշագրավ է ու հետաքրքիր, որ «Առան» մագիստրոսը «խափանել» է այդ «գիւտ»-ը կամ «վաստակ»-ը թի խնդրո իշխանաւորաց»: Ըստ երևույթին, «ծիրանեծին թագուհոյ» ազատութեան դռ-ից դուրս այդ «գիւտ»-ը խափանելու համար հարկավոր է եղել նաև քաղաքի իշխանավորների համաձայնությունը:

Արդ՝ այս բոլոր դիտողություններից, կարծում եմ, կարելի է հետևեցնել, որ «թաստակ»-ը լրացուցիչ տուրք էր՝ $\frac{1}{4}$ -ը հիմնական բնահարկի, որ ստանում էին, հավանորեն, «մուխսիք»-ը կամ թերևս նաև ավելի բարձր կանգնած իշխանավորները:

Այս «մուխսիք»-ը, որ Անիի անթվական մի արձանագրության մեջ անվանված է «մուսալիպ»¹, իսկ Սմբատի Դատաստանագրում՝ «մուխթասիպ»², արաբական muhtasib-ն է, որը, ինչպես հայտնի է, արաբական տիրապետության ժամանակ քաղաքներում վարում էր ուժեղ կանապետի պաշտոն և հսկում էր շուկայի, կշիռների ու չափների վրա: Ինչպես տեսնում ենք Անիում նրան հանձնված է եղել նաև բնական հարկերի հավաքումը:

Գյուղական շրջաններում վարչական ու հարկահավաքման գործը վարել են, ինչպես երևում է արձանագրական վկայություններից, «ձեռնաւոր»-ները³: Եթե վերոհիշյալ կոահումը ճիշտ լինի, որ «թաստակ»-ը 1046—1050 թվի Անիի արձանագրության մեջ

¹ Տե՛ս Վիմական տարեգիր, էջ 221:

² Տե՛ս J. Karsl, Sempadscher kodex, Strassburg 1905. Bd I ճժԲ—էջ 162 և BD II, էջ 233:

³ Տե՛ս Վիմական տարեգրում հետևյալ արձանագրությունները՝ Հաղպատի 1210 թվի (էջ 51), Երազավանի 1228 թվի (էջ 71), Նորավանքի 1275 թվի (էջ 150), Օշականի 1286 թվի (էջ 129) և Օշականի 1288 թվի (էջ 130): «Ձեռնաւոր»-ների հիշատակումը 906 և 1086 թվականներին տե՛ս Ստեփանոս Որբելյանի մոտ՝ «Պատմութիւն Մահանգին Սիսիական», Թիֆլիս, 1911, գլ. ԽԳ. և Կ, էջ 233 և 327: Հմմտե՛ն նաև Նույն երկում՝ էջ 367, 417 (գլուխ ԿԵ և ԿԶ):

լրացուցիչ տուրք է, որ ստանում էր «մուխթասիպ»-ը, այդ դեպքում՝ Տեկորի 1014 թվի Հոռոմոսի 1013 թվի և Երեբունի 1038 թվի արձանագրություններում նույն «թաստակ»-ը պետք է ընդունենք դարձյալ լրացուցիչ տուրք, որ տրվել է գյուղական շրջաններում «ձեռնաւոր»-ներին:

Որ «ձեռնաւոր»-ների հատուկ հարկ, իրոք, գոյութիւն ունեցել է՝ այդ, իմ կարծիքով, կարելի է եզրակացնել XIII դարի հետևյալ վկայութիւններից.

1. Վիմական տարեգիր, էջ 51՝ Հազարտ, 1210 թ.

«Եւ է այս գեղ ազատ յամենայն հարկէ ի պատրոնաց. ի ձեռնաւորաց, ի գյուղականաց»:

2. Վիմական տարեգիր, էջ 150՝ Նորավանք, 1275 թ.

«Ու զՀալէձորոյ հարկն սահմանեցաք ի տարում վաթսուն տարեակ տայ, այլ ազատ է յամէն հարկաց. այլ ոչ ամիրայ, ոչ պարոն, ոչ ձեռնաւորի ոչինչ հաշիւ չկայ հետ Հալէձորոյ. ոչ շոր տայ¹ ոչ այլ ոչ ում»:

3. Վիմական տարեգիր, էջ 130՝ Օշական, 1288 թ.

«Թ թուականին չլէ յառաջնորդութեան տէր Համազասպայ եւ ի պարոնութեանն Սահմադինին և իւր որդւոցն Ամիրքէկին և Հազարքէկին ես Գէշմարդս էի ամիրայ և Հաւիկս ձեռնաւոր, թողաք զսր Կարապետին այգեացն զՅաւականու, զՄիրինու զձեռնաւորին զհարկն զինչ որ կայր»...

Վերջին վկայութիւն: մեջ հիշված «ձեռնաւորի հարկ»-ը հանդիպում է նաև 1296 թվի Հռիփսիմեի վանքի հետևյալ արձանագրութիւն մեջ.

4. Վիմական տարեգիր, էջ 138՝ Հռիփսիմէի վանք, 1296 թ.:

«Թողաք զՀռիփսիմուցս զբարակին շարիատն եւ զՀահահին բարակի հակն»...

«Շահահ» էին անվանւում, ինչպես հայտնի է, թաթարական տիրապետութիւնի շրջանում վարչական ու հարկահան պաշտոնյաները, ուստի «շահահայի հարկ»-ն այս վկայութիւն մեջ, իմ կարծիքով, նույնն է, ինչ որ «ձեռնաւորի հարկ»-ը:

Արդ՝ ի նկատի առնելով վերոհիշյալ բոլոր վկայութիւնները, նաև նրանց բովանդակութիւնի վերլուծումը, ես ենթադրում եմ, որ XI դարի «թաստակ»-ը և XIII դարի «ձեռնաւոր»-ի կամ «շահահ»-ի հարկը, հավանորեն, լրացուցիչ տուրք են, որ ստանում էր վարչա-

¹ Ուղղելի թերեւս «շարիատայ»:

կան պաշտոններով, քաղաքներում՝ «մուխթասիպ»-ը, իսկ գյուղական վայրերում՝ «ձեռնաւոր»-ները կամ «շահնա»-ները:

Հիմնվելով Անիի 1046—1050 թվի արձանագրության վրա՝ մենք ենթադրեցինք, որ «Թաստակ»-ի քանակը հավասար է եղել հիմնական բնահարկի $\frac{1}{4}$ -ին: Այդ տոկոսը կարող էր սովորական ու ընդունված լինել XI դարում: Ինչ վերաբերվում է XIII դարի «ձեռնաւոր»-ի կամ «շահնա»-ի հարկին, նրա տոկոսը հայտնի չէ, և դժվար է, իհարկե, անվերապահորեն պնդել, որ նույն $\frac{1}{4}$ տոկոսը պահպանված կլիներ և հետագա այդ դարում:

Որ XI դարի «Թաստակ»-ը, իրոք «շարիատ»-ի կամ «պախտ»-ի $\frac{1}{4}$ մասն է եղել, այդ, իմ կարծիքով, հաստատվում է ոչ միայն Անիի 1046—1050 թվի արձանագրական վկայության քննությամբ, այլև «Թաստակ» բառի ստոսգարանությամբ:

Որքան ինձ հայտնի է, «Թաստակ»-ը մինչև այժմ դեռ մեկնված չէ: Իսկ առաջարկում եմ, այդ բառի հետևյալ մեկնությունը: «Թաստակ»-ը, իմ կարծիքով, բարդ բառ է, որ կազմված է «թասու» (=բառորդ) և «տակ» (=«դաթ», — պատիկ) բառերից: «Թասուտակ»-ը համառոտվելով ստացվել է «Թաստակ»:

«Թասու»-ն, որ փոխ առած բառ է պարսկերենից (=նոր պարսկ. *tasu*)¹, հայերենում, ինչպես հայտնի է, երեք գարեհատի կշիռ էր և «դանգ»-ի $\frac{1}{4}$ մասը: Մխիթար Գոշի Դատաստանագրքից գիտենք, որ «դանգ»-ը և «Թասու»-ն գործածական են եղել նրա ժամանակ կոտորակային թվերի համար², նույնը հաստատում են նաև վիմական արձանագրությունների վկայությունները³:

«Թասու»-ի կոտորակային մեծությունը կախված էր հաշիվների հիմնական միավորից: Եթե հիմնական միավոր ընդունվում էր մեծ «դահեկան»-ը, որը հավասար էր 6 «դանգ»-ի, «Թասու»-ն՝ որպես «դանգ»-ի $\frac{1}{4}$ մասը, ստանում էր $\frac{1}{24}$ -ի խմաստ⁴, իսկ եթե հիմնական միավոր համարվում էր մեծ «դահեկան»-ի կեսը կամ «պօտատ դեկան»-ը, որը հավասար էր երեք «դանգ»-ի⁵, «Թասու»-ն համապատասխան էր դառնում $\frac{1}{12}$ -ի:

¹ H. Hübschmann, Armenische Grammatik, 1895. էջ 266:

² Դատաստանագրքը, մասն առաջին, ձի, էջ 287, մասն երկրորդ, ԿԲ, էջ 372, ԿԴ, էջ 378, ԿԵ, էջ 379—381:

³ Վիմական տարեգիր, էջ 58, 59, 74 ևն:

⁴ ՏԵ՛ս Դատաստանագրքը, մասն Բ, ԿԴ, էջ 380:

⁵ ՏԵ՛ս Դատաստանագրքը, մասն Բ, ԿԲ, էջ 372, նաև ժանոթ. 794, որի մեջ Բաստամյանը միանգամայն ուղիղ որոշել է, որ «պօտատ դեկանը հաւասար է ոսկի դեկանի կամ դահեկանի կիսին»:

լինելով «դանգ»-ի $\frac{1}{4}$ -ը, իմ կարծիքով, «թասու»-ն ունեցած կլիներ նաև $\frac{1}{4}$ -ի նշանակութուն այն դեպքերում, երբ հաշվի հիմնական միավոր կընդունվեր ոչ թե մեծ «դահեկան»-ը կամ նրա կեսը՝ «պօտատ դահեկան»-ը, այլ «դանգ»-ը:

Կարևոր է ու ուշագրավ այդ տեսակետից, որ պահլավերենում *tasum*-ը ունեցել է, պարզապես, $\frac{1}{4}$ -ի նշանակութուն¹:

Ինձ թվում է, որ կոտորակային հենց այս վերջին նշանակութունն ունեցած պիտի լինի «թասու»-ն «թաս-տակ» կամ «թասու-տակ» բառի մեջ: Նույն բառի երկրորդ մասը «տակ», իբրև թվական անունների վերջավորութուն, նշանակում է, ինչպես հայտնի է, դպթ, կամ «—պատիկ», օրինակ՝ «երկուտակ», «երեք-տակ» ևն: Այս բարդումը հին է և հանդիպում է արդեն խորենացու մոտ. տես խոր. Բ., գլ. է՝ «և առանց ոսկույ և ականց, զկրտսեր մարգարիտն երեքտակեան վարսակալ ածել» (Տփղիս 1913, էջ 110):

«Թասու-տակ»-ը կամ «թաս-տակ»-ը կազմված է, ուրեմն, նույն ձևով, ինչպես և «երկու-տակ»-ը կամ «երեք-տակ»-ը և նշանակում է «մեկ շորորոդ դպթ կամ մաս»:

Անիի 1046—1050 թվի արձանագրական վկայության վերև առաջ բերված լուսաբանությունը հաստատվում է, ինչպես տեսնում ենք, նաև «թաստակ» բառի այս նոր մեկնությամբ: Այսպիսով՝ արձանագրական վկայությունների քննությունը հիմք ու նեցուկ է ծառայում ստուգաբանական մեկնության հիմնավոր լինելուն, իսկ ինքը ստուգաբանությունն ապացույց է դառնում, որ վերոհիշյալ վկայությունների լուսաբանությունը պետք է համարել հավանական ու ընդունելի:

Ամփոփելով մեր ասածները «թաստակ» հարկի մասին՝ կարող ենք անել հետևյալ հավանական եզրակացությունները:

1. «Թաստակ»-ը՝ որ հանդիպում է XI դարի արձանագրություններում, լրացուցիչ տուրք է, որ տրվել է «մովսթասիք»-ին կամ «ձեռնաւոր»-ին.

2. Նույն այս տուրքը XIII դարում անվանվել է «ձեռնաւոր»-ի կամ «շահնայի հարկ».

3. XI դարում «թաստակ»-ի քանակը հավասար է եղել, ըստ իրևույթին, «շարիատ» կամ «պախտ» բնահարկի $\frac{1}{4}$ -ին.

4. «Թաստակ»-ը համառոտություն է «թասու-տակ» բառի և նշանակում է $\frac{1}{4}$ -րդ դպթ կամ մասն:

¹ H. Hübschmann, Armenische Grammatik, էջ 266:

4. «ՊՕՏՍՏ» = Bataniates, ՎՐՅ. potonat, patinat.

«Պօտատ դահեկան»-ը, ինչպես վերև ասվեց, «ոսկի դահեկան»-ի կեսն էր: Ոսկի այս փողի դրամական արժեքը, ինչպես և «պօտատ» բառի ստուգաբանական ծագումը փորձել է քացատրել Թ. Ավգալբեգյանը «Մի գաղտնիք հայ վիմական արձանագրությունների մեջ» հետաքրքիր իր նոր աշխատանքում, որ լույս էր տեսել Գիտություն և Արվեստի ինստիտուտի Տեղեկագրում¹:

«Պօտատ»-ի վերաբերյալ մատենագրական վկայությունները, որ հիշատակված են այս աշխատության մեջ, տեղ տեղ աղճատված են, ուստի նույն վկայությունները կարևոր են համարում մեջ բերել առանց այդ անախորժ աղճատումների, որոնք հնչյունական տեսակետից հիմք են ծառայել ստուգաբանական սխալ մեկնարանությունների:

1. Մխիթար Գօշ, Դատաստանագիրք, մասն Բ, ԿԲ— էջ 372.

«Ոսկի դեկանն վեց դանգ է, պօպաւո դեկանն երեք դանգ, թասուն ի դանգին չորիցն մին».

2. Հր. Աճառյան, «Ծուցակ հայերէն ձեռագրաց Սանասարեան վարժարանին ի Կարին», Հանդ. Ամս. 1896, թիվ 1, հունվար, էջ 24².

«Այս իմ գիր է հաւկոյ որ տվի զիմ արտ դարբնոցին արթն աստուածասիրին հայրենիք որ այլ ասել ու լսեր է պոխտիմոն³ տամ ճ պաւտ»...

3. Նույնը, էջ 24.

«Ըն պոտաւ լուծմ եզ տայ որ ասել ու լսեալ էր»...

4. Նույնը, էջ 25.

«Գ մաւդ հաց տվաք, բ կապիճ, ի պաւտաւնէր ու մարգերս առաք»...

¹ Երևան, 1927, № 2, էջ 46—49:

² Վկայություններ գտնվում են 980 թվի Ավետարանի հիշատակագրություններում:

³ Աճառյանի բնագրում՝ «պոխտիմոն» փխ. է պոխտիմոն, որն ուղղածն է «Պոխտիմոն»-ը (=հուն. Πόστος), ինչպես հայտնի է, այն «գրաւ»-ն էր դաշինքի ապահովումը՝ որ իբրև տուգանք տալու էր պայմանագիրը խախտողը: Նույն այս ձեռագրում հիշատակագրությունների մեջ «պոխտիմոն»-ը հիշված է մի քանի անգամ՝ էջ 3, 383 և 435: «Պոխտիմոն»-ի նշանակությունը և իրավական բովանդակությունը լուսաբանել է Կարսը, տե՛ս Sempadscher Kodex, Band II, էջ 203: Հիմառն նաև «Ասորական դատաստանագիրք», հրատ. Արս. Ղլտճյանցի, էջմիածին, 1917, ճիՁ, էջ 48:

5. Նույնը, էջ 25.

«դ պատատ¹ փողոցին արտին ենք տվել»...

6. Նույնը, էջ 25.

«զ պատատի¹ դեղիկն² ենք տվել ու ճոկն խաղղին մարդ առաք»...

7. Նույնը, էջ 25.

«ե պատատ ի վասիլ ենք տվել վարդանինց ճոկն խաղղին մարգին»...

8. Նույնը, էջ 25.

«ու առաք ու առաք ք պատատ² արտին ու մարգին»...

9. Նույնը, էջ 25.

«Մախէցի դարտս ծանիս ու առի ծա պատատ»...

10. «Գրովթին, գերովթին և վերագնովթին մեծ Տօնական գրոց», Ալիշան, Հայապատում, էջ 448.

«Ապա դատաւոր քաղաքին ձեռն յառաջ տարեալ՝ զուր պատճառանօք բանս ի վերայ եղեալ թէ հինգեհարիւր պատար մնաց ինձ առ Աստուածատուրն»:

Այս «պօտատ դահեկան»-ի առթիվ Գոշի «Դատաստանագրքի» հրատարակիչ Վ. Բաստամյանցն ունի հետևյալ ծանոթութիւնը.

«Պօտատ կամ պատատ³ անհասկանալի բառ. թերևս պէտք է լինի պողպատ, թէպէտ պողպատից դրամ երբէք չեն շինում, այլ պղնձից. այսքանս պարզ է որ պօտատ դեկանը, յօդուածիս խօսքով, հաւասար է ոսկի դեկանի կամ դահեկանի կիսին:— Ի դէպ անելացնեմ որ էջմիածնի մատենադարանի ձեռագրներից ես հավաքած ունիմ բաւական տեղեկութիւններ Հայոց չափերի, կշիռների և դրամների մասին, որ յոյս ունիմ հրատարակել մի ժամանակ, բայց դոցա մեջ ևս չէ պատահած պօտատ կամ պաւտատ եւ կամ պողպատ դրամ» (էջ 372, ծանոթ. 794).

¹ Ավդալբեգյանի աշխատության մեջ սպասարտ-ի փոխարին (հինդերորդ վկայութիւն) տպւած է սխալմամբ պօտատ, իսկ «պաւտատ»-ը 6-րդ, 7-րդ և 8-րդ վկայութիւնների մեջ դառել է նրա մոտ «պաւպատ» (Դ. և Ար. Ինս. Տեղեկագիր, № 2, էջ 48):

² Ավդալբեգյանի ուղղումը «ի Դեղիկն ենք տվել» հնարավոր է, բայց ոչ անվիճելի (էջ 48):

³ Բաստամյանցի այս ծանոթութիւնը բնագրում, որ առաջ է բերւած Բ. Ավդալբեգյանի մոտ (էջ 48), թե սկզբում և թե վերջում՝ «պաւտատ» բառի փոխարին գրւած է դարձյալ «պաւպատ»:

Բաստամյանցի այս ձանդոթությունից դժվար չէ կռահել, որ Գոշի դատաստանագրքի ձեռագրերն ունեցել են «պօտատ» կամ «պաւտատ» և ոչ «պաւպատ»: Դատաստանագրքի ընդգրկում «պաւպատ» ընթերցվածը, պարզապես, Բաստամյանցի ուղղումն է, որը «պաւտատ»-ը ենթադրել է «պողպատ» բառի աղճատումը:

Թ. Ավդալըքգյանի աշխատության մեջ ևս, ինչպես տեսանք, հինգ անգամ կոկնվոր «պաւպատ» ընթերցվածը գրչի սխալ է, իսկ բուն վկայություններում գրված է միշտ «պաւտատ» և ոչ «պաւպատ»:

«Պօտատ»-ի ձեռագրական փոփոխականներն են, ուրեմն, համաձայն վերոհիշյալ վկայությունների՝ «պաւտատ», «պօտատ», «պաւտատ» և «պաւտար»: Այս վերջին ընթերցումն առաջ է եկել, հավանորեն, Տ և Բ գրերի շփոթումից, ուստի մնում են ձեռագրական չորս ընթերցվածներ՝ «պաստատ», «պօտատ», «պոտատ», և «պաւտատ», որոնք հնչյունական տեսակետից միանգամայն հասկանալի են և դուրսով մեկնելի:

Թ. Ավդալըքգյանը, հիմք ընդունելով ենթադրական ու նորածին «պասպատ» ընթերցվածը, որը գոյություն չէ ունեցել ձեռագրական վկայություններում, «պօտատ»-ի ծագումը մեկնում է բյուզանդական «պեռպեռատ»-ից: «Այս *yperperum-uperperus-besant* ոսկին է հենց,— ասում է նա,— որ դարձել է պերպերատ (= (ի) պերպերատ), ապա հավանորեն պեպատ (= պե(ր)պ(եր)ատ), հետո հավաստի պոպատ-պօպատ, պասպատ ու ամենից վերջն էլ պոտատ-պօտատ-պատատ՝ ամենեին կապ չունենալով պողպատ մետաղի անվան հետ»: Ավելի քան բռնադրուսիկ այս մեկնությունը, որ հիմնված չէ լեզվահնչյունական կայուն օրենքների վրա, անընդունելի պիտի համարվի հենց այն պատճառով, որ հայերենում այս փողի անունը եղել է, իրոք, ոչ թե «պօպատ», այլ «պօտատ» կամ «պատատ»:

«Պօտատ»-ի և բյուզանդական «պեռպեռատ»-ի միեւնոյն գրամ լինելը Թ. Ավդալըքգյանը եզրակացնում է նաև Գոշի ու Սմբատ Գունդատաբլի մոտ մատնանշված արյան զննրի բաղգատությունը:

«Մեր կարծիքով,— ասում է նա,— «պօպատ» ղեկանի՝ կես դար անլույծ մնացած հարցը հիմնովին լուսաբանվում է Սմբատ Գունդատաբլի Դատաստանագրքով: Երբ Գոշը քրիստոնեի արնագինը որոշելու նպատակով դրում է.

«Գին արեան մարգոյն... ի դէպ կարծեմ երեք հարիւր վաթսուս եւ հինգ լինել գին դահեկանի, ոսկի դահեկան»¹,—

¹ Գոշ, «Դատաստանագրք», Բ. ա, էջ 308, 309.

Գունդատարը սրա դիմաց գրում է՝ արնագնի գումարը փոփոխելով. «Ընդհանուր գին արեան քրիստոնէին 300 դեկան պերպեռատ է»¹: Այս բաղդատութիւնից Ավդալբեգյանը եզրակացնում է, որ «պօտատ»-ին համապատասխանում է Սմբատի հատվածում «պերպեռատ»-ը:

Այս եզրակացութիւնը ևս, իմ կարծիքով, հիմնավոր չէ:

Եթե Գոշի «ռսկի դահեկան»-ի դիմաց Գունդատարը դնում է «պերպեռատ դեկան»-ը, դրանից կարելի է թերևս հետևենել, որ «պեռպեռատ դեկան»-ը համապատասխան է եղել «ռսկի դահեկան»-ին, որը, ինչպես վկայում է Գոշը, «լինի երեքտասան դրամ արծաթ ըստ ժամանակին վարման»²: Մի այլ հատվածում Գոշը, ինչպես տեսանք, մատնանշում էր, որ «ռսկի դեկան» վեց դանգ է. պօպատ դեկանն երեք դանգ³:

Միանգամայն պարզ է, որ վերոհիշյալ բաղդատութիւնից «պօտատ»-ի մասին շի ստացվում և ոչ մի հետևութիւն, և ձեռք դար անլուծ մնացած այդ հարցը՝ ոչ միայն «հիմնովին շի լուսաբանվում Սմբատ Գունդատարի Դատաստանագրքով», այլ, ընդհակառակը, լուսաբանվում է, հավանորեն, Գոշի «ռսկի դահեկան»-ի հարցը, որը, ըստ երևութիւն, համապատասխան է եղել բյուզանդական «պեռպեռատ»-ին:

«Պօտատ»-ի թե ստուգաբանութիւնը, թե կշիռը և թե դրամական արժեքը, ինչպես կտեսնենք, հիմնովին լուծվում են վրացական աղբյուրների օգնութեամբ, որ հիշատակված են ակադեմիկոս Մ. Բրոսսեի «Histoire de la Géorgie» աշխատութեան մեջ:

Բրոսսեի ասելով՝ 11-րդ դարից սկսած մինչև 15-րդ դարը վրաստանում տարածված է եղել botinat դրամը, որ Դավիթ Վերաշինողին վերագրված կտակի մեջ անվանվում է potonat, Սամադավի-Դադիանի 15-րդ դարի վճռագրում՝ patinat⁴: Այդ փողը, ինչպես ուշիղ դիտել է Բրոսսեն, Նիկեփոր 3-րդ Բոտանիատի (1078—1081 թ.) դրամն է, որ նրա անունով կոչվել է botinat⁵:

Հայերեն «պօտատ» կամ «պատատ»-ը իմ կարծիքով, հենց այս potonat կամ patinat փողն է:

¹ Սմբատ Գունդատար, «Դատաստանագրք», հրատ, Արո. Հլտնյանցի, էջ-միածին, 1918, հոդվ. Ա. էջ 17:

² Տե՛ս Մասն Բ, ա, էջ 309:

³ Տես Մասն Բ, ԿԲ, էջ 372:

⁴ Տե՛ս Histoire de la Géorgie, Introduction, 1858 էջ LXXXVIII. CLXXVII—IX, CCXII նաև Additions et éclaircissements, 1851, էջ 233

⁵ Introduction էջ CLXXVIII նաև Additions էջ 233

ինչպես բյուզանդական «դուկատ»-ը ծագել է բյուզանդական կայսրների Dukas ազգանունից (Կոնստանդին X Դուկաս՝ 1059—1067 թ. և Միքայել VII Դուկաս՝ 1071—1078 թ.), նույնպես և «պօտատ» կամ «պատատ» դրամի անունը (վրց. potonat և patinat) առաջ է եկել ինչպես տեսնում ենք, նիկեիոյ III-ի Botaniates մականունից:

«Պօտատ»-botinat-ի կշիռը և դրամական արժեքը պարզ որոշվում է, իմ կարծիքով, վրացական աղբյուրների ուղագրավ ու կարեոր մի վկայությամբ, որ մինչև այժմ մնացել է անհասկանալի, 1284 թվի վրացական մի վավերագրում ասված է, որ ոմն Songhoul նվիրել է վանքին 110 ոսկի «դրագմ» (dragmes), 400 «դուկատ», նաև արծաթեղեն 50 «դրամ», (dragmes) արժողությամբ՝ ընդամենը 300 «բոտինատ» (botinats)¹:

Այս վկայությունից,—ասում է Բրոսսեն,—ականքե հետևում է, որ potonat-ը կամ botinat-ը պետք է լիներ ոսկի փող» (Introduction, էջ LXXXVIII): Մի ուրիշ տեղ Բրոսսեն մատնանշում է, որ նույն վկայությունից կարելի է միայն հավաստիորեն եզրակացություն անել ոսկի «դրագմ»-ի, «դուկատ»-ի և «բոտինատ»-ի պրոգրեսիվ արժեքի մասին, սակայն այս տարբեր փողերի իսկական արժողությունը մնում է անհայտ, որովհետև պետք է դեռ գտնել թե որքան ոսկի «դրագմ» կար մեկ «դուկատ»-ում, նաև պարզել «բոտինատ»-ի արժեքի հարաբերությունն այս վերջինի ու ոսկի «դրագմ»-ի համեմատությամբ (Introduction, էջ CLXXVIII):

Ենթադրելով, որ վերոհիշյալ վկայության մեջ 110 ոսկի «դրագմ»-ը + 400 «դուկատ»-ը + 50 «դրագմ»-ը հավասար են եղել 300 «բոտինատ»-ի՝ Բրոսսեն, բնականաբար, «բոտինատ»-ը համարել է ոսկի փող, որ ունեցել է խիստ մեծ արժեք (Introduction, CLXXVII):

Սակայն, ըստ երևույթին, նրան ևս հայտնի է եղել, որ 11—15-րդ դարում այդպիսի մեծ արժողությամբ բյուզանդական ոսկի փող գոյություն չէ ունեցել, ուստի ծանոթության մեջ նա կասկածելի է համարում այդ հատվածի ուսական թարգմանությունը, որից ինքն օգտվել է²: «Ապահով չեմ,—ասում է նա,— որ այս տեղեկությունները ճիշտ են թարգմանվել, որովհետև «բոտինատ»-ի

¹ Տե՛ս Introduction էջ LXX XVIII և CLXXVII. Cette donation était de 110 dragmes d'or, de 400 doucats et de pièces d'argentile, d'une valeur de 300 dragmes en tout 300 botinats [էջ LXX—XVIII]:

² Закавказск. Вестн., 1845, ч. неофиц., էջ 130:

համար ստացվում է ահագին արժեք, որ անկարելի է ենթադրել (Introduction, էջ CLXXVIII ծանոթութ.):

Մ. Բրոսսեի այս կասկածները, ինչպես կտեսնենք, հիմնավոր չեն:

Անհասկանալի թվացող վերոհիշյալ հաշիվը ոչ միայն լուծվում է, այլ նրա օգնությամբ լուսաբանվում են նաև Քրոտինատ-ի կշիռը և դրամական համարժեքն այժմյան ոսկի փողով:

Մատնանշված հաշվի մեջ «300 բոտինատ»-ը համապատասխանում է, իմ կարծիքով, տշ թի «գուկատ»-ների և «դրագմ»-ների, այլ միայն «դրագմ»-ների ընդհանուր գումարին: Songhoul-ի նվիրատվության հաշիվը պետք է, ուրեմն, հասկանալ այսպես՝ 110 ոսկի «դրագմ» 400 «գուկատ», նաև արծաթեղեն 50 «դրագմ» արժողությամբ՝ ընդամենը 160 «դրագմ», որ հավասար են 300 «քրոտինատ»-ի: Այս լուծման միջոցով ստացվող եզրակացությունը կատարելապես համաձայնում է Գոշի վկայության հետ «Պոտատ»-ի և «ոսկի դահեկան»-ի մասին:

Ոսկի «դրագմ»-ը հիշյալ հաշվում արարական «դենար»-ն է, այսինքն՝ 7-րդ դարի վերջում Աբդ-Մելիքի ժամանակ հաստատված ոսկի փողը, որն անվանվում էր թերևս նաև darachmi և որի կշիռը 4,25 գրամ էր¹:

Եթե մեկ «դրագմ»-ը հավասար ընդունենք 4,25 գրամի՝ 160 «դրագմ»-ը հավասար կլինի 4.25 . 160 = 680 գրամի: 300 «քրոտինատ»-ը համարժեք լինելով 160 «դրագմ»-ի՝ «քրոտինատ»-ի կշիռը կստացվի $680:300=2.26 \frac{2}{3}$ գրամ: Արդ՝ Մխիթար Գոշի վկայությունից գիտենք, որ «պոտատ դահեկան»-ը «ոսկի դահեկան»-ի $\frac{1}{2}$ -ն էր. ուրեմն՝ Մխիթար Գոշի մոտ հիշատակված «ոսկի դահեկան»-ի կշիռը պետք է ենթադրենք $2.26 \frac{2}{3} . 2 = 4.53 \frac{1}{3}$ գրամ: Եվ իրապես, այս վերջին կշիռը Շիրակացու հիշած բյուզանդական հենց այն «դահեկան»-ի կշիռն է, որ մատնացույց էի արել իմ նախորդ աշխատության մեջ²:

Այսպիսով ստացվում է, ինչպես տեսնում ենք, խիստ կարևոր մի հետևություն և՛ պարզ որոշվում է, որ բյուզանդական հին «դահեկան»-ը (Solidus, aureus կամ nomisma) իր կշիռն անփոփոխ

¹ S^t Decourdemanch, Traité pratique des poids et mesures des peuples anciens et des Arabes, Paris 1808, էջ 25— «Darachmi [dinar d'Abdu-Mélik] 4,25 gr.»:

² S^t Անյուբեր Հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության (1) Գլու. և Արվ. ինստիտուտի Տեղեկագիր, № 2, Երևան, 1927, էջ 30, էջ 37—40:

պահպանած է եղել մինչև Մխիթար Գոշի ժամանակաշրջանը՝ 12-րդ դարի վերջերը:

Հայտնի է արդեն, որ Բյուզանդական կայսրության մեջ կտրվել են ոսկի փողեր նաև փոքր կշռով՝ հավասար solidus-ի կամ nomisma-յի $1/2$ -ին կամ $1/3$ -ին:

Արդ՝ ինչպես տեսնում ենք, Նիկեփոր III Բոտանիատի անունը կրող ապոտատ դահեկան»-ը, իրոք այդ մեծ դահեկան»-ի կեսն էր՝ հավասար 2.26 $2/3$ գրամի:

Գոշի Դատաստանագրքում հիշված ռոսկի դահեկան»-ի և ապոտատ»-ի կշիռները և կշռական հարաբերությունը պարզելուց հետո՝ դժվար չէ այնուհետև որոշել նրանց համարժեքն այժմյան ոսկի փողով:

Ինչպես ցույց է տրված իմ նախորդ ուսումնասիրության մեջ¹, բյուզանդական լիակշիռ ու լիագին՝ առանց խառնուրդի՝ հին դահեկան»-ը համապատասխանում էր այժմյան 5,85 ոսկի ռուբլու կամ 15,6 ոսկի ֆրանկի, ուրեմն, նույն արժեքը պետք է վերագրել նաև Գոշի հիշատակած ռոսկի դահեկան»-ին: Լիակշիռ ու մաքուր ոսկուց ապոտատ դահեկան»-ը լինելով ռոսկի դահեկան»-ի $1/2$ -ը, համապատասխան կլինի 7,8 ոսկի ֆրանկի, կամ 2.92 $1/2$ ոսկի ռուբլու:

Եթե այդ դահեկան»-ները լիակշիռ չլինեին կամ մաքուր ոսկու հետ ունեցած լինեին իրանց մեջ խառնուրդ (лигатура)՝ նրանց արժեքը, բնականաբար, համապատասխան տոկոսով պակաս կլիներ:

Թ. Ավդալբեգյանը վերոգրյալ իր աշխատության մեջ ենթադրում է, որ Գոշի ռոսկի դահեկան»-ը կարող է համապատասխան լինել Վոռմէական դահեկան»-ին, որի արժեքն Ալիշանի «Սիսուան»-ում գնահատված է 25 ոսկի ֆրանկ², իսկ ապոտատ»-ը, որը, նրա կարծիքով, բյուզանդական ապեռպեռատ»-ն է, նա համաձայն Ալիշանի վկայության ապեռպեռատ»-ի արժեքի մասին³ հավասար է կարծում 12 ոսկի ֆրանկի⁴:

Այս ենթադրությունը, ինչպես երևաց փաստական, տվյալների վրա հիմնված հաշիվներին, ճիշտ չէ:

¹ «Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության» (1) Գիտ. և Արվ. ինստիտուտի Տեղեկագիր, № 2, էջ 39:

² Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 378:

³ Նույնը:

⁴ Տե՛ս Գիտ. և Արվ. ինստիտուտի Տեղեկագիր, № 2, էջ 49, ծանոթութ. 6:

նվ իրոք, «Հոռմէական դահեկան»-ը, որ հարեանցի հիշված է «Սխուռան»-ում, հնազույն ժամանակաշրջանի փող էր և, որքան հայտնի է, Բյուզանդական կայսրութիւնն այդ կշռով մեծ «դահեկան» այլևս չէ ունեցել: Բյուզանդական ամենամեծ ոսկի փողը համապատասխան է եղել ոչ թե 25 ֆրանկի, այլ առ առավելն այժմյան 15,6 ոսկի ֆրանկի, իսկ «պոտատ դահեկան»-ը, որ սրահեսն էր, համապատասխանում է ոչ թե 12 ֆրանկի, այլ միայն 7,8 ոսկի ֆրանկի:

«Ոսկի դահեկան»-ի ու «պոտատ»-ի կշիռների ու դրամական արժեքի ճշտումը կարող է կռվան ու նեցուկ հանդիսանալ կարևոր ու նոր լուսաբանութիւնների համար, որոնք հնարավորութիւն կտան ուղղումներ մտցնելու Ավդալքեզյանի մատնանշած ժամպատարագների գների մեջ, նաև հիմք կծառայեն տնտեսագիտական այլ եզրակացութիւնների:

Վերոհիշյալ նոր տվյալների օգնութեամբ հնարավոր է դառնում օրինակ, որոշել Գոշի մոտ հիշված «դրամ»-ի փողային արժեքը:

Մխիթար Գոշի ասելով՝ «ոսկի դահեկան»-ը չլինի երեքտասան դրամ արծաթ ըստ ժամանակին վարման» (Դատաստանագիրք, մասն Բ, ա, էջ 309):

Արդ՝ որովհետև «ոսկի դահեկան»-ը համապատասխան համարեցինք ռուսական արդի 5,85 ոսկի ռուբլու և ֆրանսական 15,6 ոսկի ֆրանկի՝ հետևաբար, հիշյալ «դրամ»-ը, որն ըստ ժամանակին վարման կազմում էր «ոսկի դահեկան»-ի 1/13-ը, համապատասխան կլինի 45 ոսկի կոպեկի կամ 1,2 ոսկի ֆրանկի¹:

¹ «Դրամ»-ի այս զուգադիրն այժմյան ոսկի փողով, որ համապատասխանում է ոսկու և արծաթի այդ ժամանակվա հարաբերութեանը, ավելի բարձր է, քան այն, որ հաշվում են սովորաբար այժմյան արծաթ փողերով: Սասանյան «դրամ»-ը, ինչպես մատնացույց էի արել նախորդ աշխատութեան մեջ, համապատասխանում է 0,226 ²/₃ արծ. ռուբ. (տե՛ս Տեղեկագիր Գիտ. և Արվ. Ինստիտուտի № 2, էջ 33): Մաքուր արծաթի և մաքուր ոսկու կշռական հարաբերութիւնը հավասար է ռուսական արծաթ և ոսկի ռուբլիներում մոտ 23:1: Եթե արծաթի և ոսկու սովորական հարաբերութիւնը ենթադրենք Սասանյան Պարսկաստանում 10:1, նույն Սասանյան «դրամ»-ը համապատասխան կլինի 0,226²/₃ 2,3=մոտավորապես 52 ոսկի կոպեկի:

Պետք է ասել, որ հին արծաթ «դրամ»-ների կշռական բաղադրութիւնն այժմյան արծաթ փողերի հետ, որ զիտական նորազույն երկրի հետևութեամբ առաջ է բերված նախորդ իմ աշխատութիւններում, կարող է առիթ ծառայել որոշ թյուրիմացութիւնների ինչպես հայտնի է, այժմյան բարձր պրոքի արծաթ ռուբլիները, ֆրանկները կամ մարկերը փաստորեն մաքուր դրամ են (разменная монета, և սրանց հարաբերութիւնը ոսկի փողի հանդեպ Ռուսաստանում 23:1 է, իսկ Ֆրանսիայում՝ 15,5:1: Հենց այս պատճառով էլ նոր արծաթ փողերի կշռական հարաբե-

Վրացական աղբյուրներում բացի ոսկի potonat կամ patinat «գահեկան»-ից հիշված է նաև արծաթ botinaour դրամը: Մ. Բրոսսեն նկատում է, որ այս botinaour դրամը ևս նիկեիոր III Բոտանիատի ժամանակվա արծաթ փողն է, որ դարձյալ նրա անունով կոչվել է botinaour¹: Վերև առաջ բերված հայկական վկայությունների մեջ, ինչպես երևում է համապատասխան հատվածների լրիվ բովանդակությունից, «պոտատ»-ը բացառապես ոսկի փող է: Botinaour-ի հիշատակությունը վրացական աղբյուրներում ուշադրության արժանի է, որովհետև հետագայում մատենագրական մեքերիկների մեջ ևս կարող է երևան գալ նաև այդ botinaour-ը արծաթ դրամի նշանակությամբ:

«Պաւտատ»-ի վերաբերյալ մանրախույզ այս քննությամբ ստացվում են, ինչպես տեսնում ենք, հետևյալ ուշագրավ հետևությունները.

1. «Պերպերատ-պետատ-պաւպատ-պաւտատ» ստուգաբանական մեկնությունը ճիշտ չէ:

2. «Պաւտատ գահեկան»-ը նիկեիոր III Բոտանիատի դրամն է, որ նրա անունով կոչվել է botinat-հայեր.՝ «պաւտատ» կամ «պատատ» և վերացեր.՝ potonat կամ patinat.

3. «Պաւտատ»-ը ոսկի փող է և նրա կշիռը հավասար է 2,26 2/3 գրամի:

4. «Ոսկի գահեկան»-ը Մխիթար Գոշի Դատաստանագրքում բյուզանդական հին solidus կամ nomisma «գահեկան»-ն է և նրա կշիռը հավասար է 4,53 1/3 գրամի.

բությունը չի համապատասխանում հաճախ նրանց իրական փողային հարաբերությանը: Պարզենք այդ օրինակով: Որովհետև մեր արծաթ ռուբլին պարոմակում է իր մեջ 18 գրամ մաքուր արծաթ, իսկ ֆրանսիական բարձր պրոբի 5 ֆրանկը՝ 22 1/2 գրամ, Սասանյան արծաթ «դրամ»-ը (=4,08 գրամ) համապատասխան կլինի 0,2262/3 արծ. ռուբ. (4,08:18) կամ 0,9062/3 արծ. ֆր. (4.08:4.5): Սակայն, իրապես, 0,2262/3 արծ. ռուբ. որպես փող համարժեք է ոչ թե 0,9062/3 ֆր., այլ 0,6044/9 ֆր.: Այս հանգամանքը կարող է, անշուշտ, պատճառ դառնալ խառնաշփոթ ու սխալ հաշիվների:

Մխիթար Գոշի վկայությունը կարևոր է հենց այն տեսակետից, որ հնարավորություն է տալիս հաշվելու այն ժամանակվա «դրամ»-ն այժմյան ոսկի փողով, և այդ հաշիվը շատ ավելի հարմար է ու ընդունելի, քան վերոհիշյալ հաշիվը, որ հիմնված է հին և ժամանակակից դրամների մաքուր արծաթի կշռական բաղդատության վրա:

¹ Տես M. Brosset. Histoire de la Georgie, introduction էջ LXXXVIII XCIII, CLXXVII—VIII.

5. Լիակշիռ և մաքուր ոսկուց՝ «պաւտատ դահեկան»-ը համա-
պատասխանում է այժմյան 7,8 ոսկի ֆրանկի կամ $2,92 \frac{1}{2}$ ոսկի
ռուբլու, իսկ «ոսկի դահեկան»-ը՝ 15,6 ոսկի ֆրանկի կամ 5,85
ոսկի ռուբլու:

6. Մխիթար Գոշի մոտ հիշատակված արծաթ «դրամ»-ը, որ
հավասար էր $\frac{1}{13}$ առսկի դահեկան»-ի, գնահատվել է արգի փողով՝
45 ոսկի կոպեկ կամ 1,2 ոսկի ֆրանկ:

ՀԱՏՎԱԾՆԵՐ

ԱԿԱԴԵՄԻՅԱՆ Զ. ՄԱՆԱՆԴՅԱՆԻ «О ТОРГОВЛЕ И ГОРОДАХ»
1954 թվին ԲԱՐՅՓՈՒԿՎԱԾ ԵՎ ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ,
ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ.

ԳԼՈՒԽ 5-ԲԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱՐԱԿԱՆ
ԽԱՆԻՑԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱԴՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Առևտրի լնացումը և Հայաստանի փառաբանների անկումը
արաբական տիրապետության առաջին դարերում:

Արաբական տիրապետության դարաշրջանը և, հատկապես, 7-րդ դարի վերջը ու ամբողջ 8-րդ դարը Հայաստանի համար եղել են ծանր փորձությունների և աղետների շրջան, որոնք քայքայել են նրա ներքին բարեկեցությունը և չափազանց բացասական ազդեցություն են ունեցել նրա տնտեսական զարգացման վրա:

Հայաստանը դեռևս չէր կազդուրվել նախորդ դարաշրջանի Բյուզանդական-Սասանյան համառ և հյուծող կռիվների ազդեցությունից, երբ մեր թվարկության 640 թվից սկսած, կրեց արաբական արշավանքների բոլոր աղետները և սարսափները: Արաբների ասպատակությունները, որոնք զուգակցվում էին ավերածություններով և գերեվարությամբ, պարբերաբար կրկնվում էին՝ հարավից Միջագետքի կողմից (640 թ.) և հարավ-արևելքից — Ադրբեջանի կողմից (642—643 և 650 թվերին), որի հետևանքով Հայաստանը, ներքին ինքնավարության և ֆեոդալական-նախարարական կարգերի պահպանման որոշակի պայմաններով, ընդունել էր արաբական լուսիֆայության իշխանությունը:

Արաբական տիրապետութիւնը Հայաստանում հաստատվեց 7-րդ դարի հիսունական թվերի սկզբներին և շարունակվեց մինչև Բագրատունիների թագավորության հաստատումը (652—887/88 թթ.)։ Նոր տիրապետության առաջին շրջանում, սկսած 652 թվից մինչև 750 թիվը, համարյա մի ամբողջ հարյուրամյակի ընթացքում, Հայաստանը գտնվում էր Օմայան խալիֆների իշխանութան տակ. իսկ 750 թվից մինչև 887/8 թիվը, այսինքն՝ մինչև Բագրատունյաց թագավորության առաջացումը, Հայաստանը ենթարկվել է Աբբասյան խալիֆներին։ Արաբական տիրապետության առաջին շրջանում խալիֆայության կենտրոնը եղել է Դամասկոսը և տիրող նոր պետության մեջ գլխավոր դերը խաղում էին Սիրիայի արաբները. իսկ հետագա շրջանում՝ կենտրոն էր դառել Բաղդադը, որը հիմնված է եղել 762 թվին, և խալիֆայւթում գլխավոր դերը պատկանում էր Իրաքի արաբներին և մահմեդականութուն ընդունած պարսիկ ազնվականությանը։

Օմայանների ժամանակ, հատկապես, նրանց իշխանության առաջին շրջանում, արաբական տիրապետութիւնը Հայաստանում, ինչպես և ազգաբնակչության շահագործումը նրանց կողմից, իհարկե, գլխավորապես ստորին խավերի շահագործումը, եղել է համեմատաբար մեղմ և հանդուրժելի։ Աշխարհակալների այդ մեղմ ու զգուշավոր քաղաքականութիւնը բացատրվում է նրանով, որ Օմայանները հաշվի էին առնում Հայաստանի ռազմական և զինվորական նշանակութիւնը, և պահելով նրա ներքին ինքնուրույնութիւնը ու նախկին նախարարական կարգերը, ուզում էին օգտագործել նրա զինվորական ուժերը իրենց նոր սահմանների պաշտպանութան համար ընդդէմ Բյուզանդիայի և խազարների։ Սակայն, արաբական տիրապետութիւնը, նույնիսկ այդ դարաշրջանում, եղել է Հայաստանի համար աղետալի։ Բյուզանդիայի և խալիֆայության միջև պարբերաբար կրկնվող կռիվների ժամանակ, Հայաստանը շատ անգամ փոխում էր իր կողմնորոշումը և ենթարկվում էր անողոք ավերածութիւնների՝ թե մեկի և թե մյուսի կողմից։ Եթե նա հավատարիմ էր մնում խալիֆայությանը, նրան դաժան կերպով պատժում էին հույները, իսկ եթե անցնում էր հույների կողմը, վրեժ էին առնում արաբները։

Հայաստանի ավերումը և քայքայումը Օմայանների տիրապետության ժամանակաշրջանում պարզորոշ կերպով նշված է սիրիական պատմիչ Դիոնիսիոս Տելմահարացու ժամանակագրության մեջ։

Նկարագրելով արաբական Մասլամա զորավարի արշավանքը

Բյուզանդիա և նրա երևալը Արաթանի գետի հովտում ու Հայաստանի
նեքսում, Դիոնիսիոսը գրում է՝

«Առաջ այդ երկիրը աչքի էր ընկնում և ուներ շատ մեծ
բնակչություն, բազմաքանակ խաղողի այգիներ, հացաբույ-
սերի ցանքեր և ամեն տեսակի հիանալի ծառեր, Այնուհետև
նա ավերվեց և նրա բնագավառներում այլևս բնակչություն
չմնաց»¹:

Եթե խալիֆայության տիրապետության առաջին շրջանում Հա-
յաստանը ավերվում էր արաբների և բյուզանդացիների կռիվների
պատճառով, որոնք տեղի էին ունենում նրա տերիտորիայում, ապա
խալիֆայի տիրապետության երկրորդ շրջանում, գլխավորապես
8-րդ դարում, Հայաստանը արյունաքամ էր լինում ոչ այնքան պա-
տերազմների հետևանքով, որքան ծանր ու անտանելի հարկերի
ճնշման տակ, որոնք եղել են պատճառ համաժողովրդական ապրս-
տամբությունների, և որոնք իրենց հերթին խեղդվել են «հրով ու
սրով»:

Օմայանների իշխանության ժամանակ, հատկապես այդ իշ-
խանության առաջին շրջանում, պետական հարկերը Հայաստանում
եղել են համեմատաբար ոչ ծանր, Համաձայն Սամուել Անեցու վկա-
յության, խալիֆայությունը Հայաստանում հաստատվելիս՝ «յու-
րաքանչյուր երգից»:

«Յամենայն տանէ առեալ Դ դրամ և Գ մոթ խորբալ և
ձիատոպրակ մի, և պարան մի մազէ և ձեռնարար մի: Իսկ
ի քահանայից և յազատաց և ի հեծելոց ոչ հրամայեաց առ-
նուլ զհարկն»²:

Այդ վկայության մեջ հիշված՝ մոդը կամ գրիվը իր քաշով
կազմում է 9 կիլոգրամ 792 գրամ, դրամը՝ Սասանյան արծաթ
դրամն է, որը հավասար է մոտավորապես 50 կոպեկ ոսկով, Հե-
տևաբար 3 մոդ ցորենը կազմում է 29 կիլոգրամ 376 գրամ, իսկ 4
դրամը—2 ուռլի ոսկով:

Այդ գումարի իրական արժեքը 7-րդ դարում եղել է բավական
բարձր: 1 փուֆ ցորենի արժեքը յոթերորդ դարում եղել է 35—50
կոպ. ոսկով, խալիֆայության հարկային քաղաքականությունը Հա-
յաստանում ենթարկվել է հիմնական փոփոխության Հիշամ խալիֆի
ժամանակ (724—743):

¹ Տես «Chronique de Denys de Teil-Mahré», publ. et trad. par J. B
Chabot, Paris, 1895, p. 12.

² Սամուել Անեցի, Վաղարշապատ, 1893, էջ 82:

724—725 թվերին Հիշամի հրամանով Հայաստանում կատարվել է ընդհանուր աշխարհագիր և հաշվի են առնվել՝ մարդկանց թիվը, անասունները և հողերի տարածությունը: Այդ փոփոխությունից հետո ինքնավար Հայաստանի հարկային արտոնությունները վերացել էին և այնուհետև հարկերը ենթակա են եղել գանձման ոչ թե ըստ երդի կամ ըստ ծխի, ինչպես առաջ, այլ ըստ գլխաքանակի և ըստ հողամասերի տարածության ու, հավանորեն, նաև ըստ օգտագործվող հողերի որակի: Այսպիսով, մտցվում էր հարկատվության նոր ձևը՝ գլխահարկ, հողային հարկ և անասնահարկ: Հարկապահանջության այդ ձևը կարճ ժամանակում դառավ երկրի համար իսկական աղետ, մանավանդ, գյուղացիության և քաղաքների բնակչության ստորին խավերի համար:

Դեռևս մինչև այդ ընդհանուր աշխարհագիրը, Եղիշ Զ-րդ խալիֆի (720—724 թ.) ժամանակ Հայաստանի կառավարիչ է նշանակված եղել ալ-Ջարրախ իբն-Աբդուլլա ալ-Խակամին, որը առաջին անգամը Հայաստանում մտցրել էր արաբական կշիռները և չափերը:

«Նրանից հետո (Հերթից) — վկայում է Բելազորին, — Հայաստանի կառավարիչ է նշանակված հղել ալ-Ջարրախ իբն Աբդուլլա ալ-Խակամին՝ մասխիջների ցեղից: Երբ նա ժամանեց Բերդաա, նրան տեղեկացրին կշիռների և չափերի մեջ տեղի ունեցող շարարկությունների մասին, և նա այդ վերացրեց, մտցնելով ճշգրիտ նոր չափ, որը հայտնի է Ջարրախյան անունով, և որը մինչև օրս գործադրություն ունի բնակչության մեջ»¹:

Զ-րդ դարում Հայաստանի կրած ծանր ցնցումների հետևանքը եղել է մշակույթի երկարատև անկումը², նաև Հայաստանի տնտեսական կյանքի լճացումը, և նույնիսկ հետադիմությունը. միաժամանակ տեղի է ունեցել դրամատնտեսական հարաբերությունների խիստ թուլացում: Այդ տեսակետից ուշագրավ են աղբյուրների այն հաղորդագրությունները, որոնք տալիս են Հայաստանի և Հյուսիսային Միջագետքի դրության նկարագրությունը 8-րդ դարի երրորդ քառորդում: Ըստ Դևոնդ պատմագրի վկայության, ալ-Մանսուր խալիֆի ժամանակ (754—775) Հայաստանը անկարող եղավ վճարել Աբբասյաններին դրամական հարկերը՝ երկրում զգացվող

¹ См. Баладзори, Книга завоевания стран, *Թարգմանություն* П. К. Жузе-ի, Баку, 1927, էջ 16.

² Н. Я. Марр, Кавказский культурный мир и Армения, էջ 36—37.

արծաթի և թանկագին մետաղների պակասության պատճառով¹։ Պարզ է, թե ինչպիսի կորստաբեր հետևանքներ պիտի ունենար այդ իրողությունը։ Ղևոնդի հաղորդությունից երևում է, որ բնակչությանը շնչին գներով ծախում էր իր ունեցվածքը և ոչ մի կերպ չէր կարող հավաքել պահանջվող գումարը, հարկերը վճարելու համար։ Միքայել Աստուրի վկայությամբ² Հյուսիսսային Միջագետքում բնակչությունը իր երեխաներին տալիս էր հարկահավաքներին 5 դրամով, և վաճառում էր եզները և էշերը, յուրաքանչյուրը 1 դրամի³։

Պատմագիրը անուղղակի կերպով ցույց է տալիս նաև դրամի պակասելու ու դրամական հարաբերությունների թուլացման և ուրիշ դրամայատմառ։

«Եւ յետ այսորիկ [ալ Մանսուր-նալիֆից],— վկայում է Ղևոնդը,— յաջորդէ ղիշխանութիւն նորա Մահմետ Մահադի որդի նորա։ Եւ սա էր աղնուական քան զհայր իւր և լաւագույն բարուր։ Եբաց զամենայն տունս, գանձուց զորս աղխեալ պահէր ամբարիշտն Աբդլա, և բաշխեաց պարգևս զօրաց իւրոյ։ Համարձակեաց և զդրունս մարգից՝ հանել զվաճառականս ի վաճառս իւրեանց և ընդ զպէսս կարօտելոց. և եղև առատութիւն երկրի, և գիւտ արծաթոյ ընդարձակեցավ. և թնակչաց երկրի անդորրութիւն եղև ի հարկապահանջ բռնութենէն. զի թէպէտև զանուր լծոյ հարկին ծանրացուցց՝ սակայն վասն գիւտի արծաթույն հանգեաւ երկիրս առ փոքր մի ի շար տառապանաց վտանգին. քանզի և լերինք արծաթոյ յայտնեցաւ յաշխարհիս Հայոց առ ի հանել ի նոցունց խանութս արծաթոյ զտոյ ի պէտս մարդկան յաւուր իշխանութեան նորա»։ Հայաստանի տնտեսական անկումը 8-րդ դարում և դրամական շրջանառության տնտեսությունից բնական տնտեսության վերադարձը, բացատրվում է, ինչպես տեսնում ենք, ոչ միայն հիշված քաղաքական ցնցումներով, այլևս սփոթված նավահանգիստների հետ միջադժային ցամաքային առևտրի ընդհատմամբ։ Այդ կուտուր-տնտեսական լճացումը և Հայաստանի միջով կատարվող տարանցիկ առևտրի երկարատև անկումը միանգամայն անտեսվում է Հայաստանի պատմությանը վերաբերող նորագույն աշխատություններում։ Բացի այդ, Հայաստանի քաղաքների և առևտրի

¹ Ղևոնդ, Պատմություն Հայոց, Ս. Պր. 1887 թ., գլ. 33 և 34, էջ 135 և 139։

² Միքայել Աստուրի—Ժամանակագրություն, Երուսաղեմ, 1871, էջ 352։

³ Ղևոնդ, Պատմություն Հայոց, գլ. 37, էջ 154։

ծաղկման նոր սկզբնավորումը այդ աշխատություններում կապում
 են երբեմն Օմայանների ժամանակ առաջացած միջազգային առև-
 տրի զարգացման հետ։ Այդ ենթադրությունը, ինչպես տեսնում ենք,
 հակասության մեջ է գտնվում վերև հիշված տվյալների հետ և բնավ
 չի արդարացվում այն փաստական տեղեկություններով, որոնք մեզ
 հայտնի են խալիֆայության և Բյուզանդիայի առևտրական հարա-
 բերությունների մասին։ Չնայելով այն ծայր աստիճան նպաստա-
 վոր պայմաններին, որոնք ստեղծվել էին արաբական նվաճումների
 շնորհիվ համաշխարհային ընդարձակ հարաբերությունների հա-
 մար, ոչ մի կասկած չի կարող, որ Հայաստանը արաբական
 տիրապետության առաջին դարերում կորցրած է եղել իր տեղը մի-
 ջազգային առևտրում։ խալիֆայության առևտուրը համաշխարհային
 մասշտաբով զարգանում էր, ինչպես հայտնի է, ոչ թե Բյուզան-
 դիայի սահմանամերձ շրջաններում, այլ գլխավորապես՝ Զինաս-
 տանի, Ջնդկաստանի, Իսպանիայի և ամբողջ Հարավային եվրո-
 պայի հետ։ Արաբական խալիֆայության բարգավաճման դարաշրջ-
 անը, ինչպես ճիշտ ցույց է տվել Գուրկու-Կրյաժինը¹, նշանավոր-
 ված էր նրա և Բյուզանդիայի միջև տեղի ունեցող անընդհատ կռիվ-
 ներով։ Անմիջական առևտրական հարաբերությունները վերջինի
 հետ եղել են համարյա անհնարին։ Պոնտական Տավրոսից մինչև
 Միջերկրական ծովը ձգվում էր լայն սահմանային գոտի, որտեղ
 երկուստեք ցրված էին ամրոցները և ղեկավարական բնակավայրե-
 րը, որոնք դարերի ընթացքում վարել են սահմանային կռիվներ։

Միջազգային առևտրական հարաբերությունները Հայաստանի
 վրայով Տրապիզոնի հետ հնարավոր եղան, ինչպես կտեսնենք,
 խալիֆայության անկման և Բյուզանդիայի ու հայ Բագրատունի-
 ների քաղաքական գործընթացման շրջանում։ Իսկ 7-րդ և 8-րդ դա-
 րերում, խալիֆայության զինվորական և քաղաքական հզորության
 ու Բյուզանդիայի հետ ունեցած կատաղի կռիվների դարաշրջանում,
 Հայաստանը ոչ թե եղել է տնտեսական, այլ եղել է բացառապես
 խալիֆայության զինվորական և ռազմագիտական առաջապահը,
 և միջազգային առևտուրը նրանում, որ կրճատված է եղել նախըն-
 թաց դարաշրջանում, այդ ժամանակ ընդհատված է եղել և բո-
 լորովին դադարել է։

Բյուզանդիայի հետ առևտրական հարաբերությունների ընդ-
 հատումը չէր կարող շանդրադառնալ Հայաստանի քաղաքների դրու-

¹ В. Гурко-Кряжин, Прошлое и настоящее Советской Армении,
 „Новый Восток“, 1927, кн. 16—17, стр. 206,

Թյան վրա, որոնք դեր էին խաղում միջազգային առևտրում։ Այդ քաղաքները, որոնք խիստ տուժել էին արաբական արշավանքների ու պարբերաբար կրկնվող ապստամբությունների և կռիվների ժամանակ, ստացել էին այլ նշանակություն։ Նրանք դառել էին արաբական իշխանության զինվորական և վարչական կենտրոնները և բնակեցված են եղել արաբներով ու դառել էին, գերազանցորեն, արաբական վեհաժողովների գաղութներ։ Հայկական և արաբական աղբյուրները հիշատակում են արաբական կայազորեր և զինվորական բնակավայրեր՝ Դվինում, Նախիջևանում, Արճեշում և Թեոդոսուպոլսում։ Հայկական քաղաքների նշանակությունը, իբրև արաբական տիրապետության ամրացված կայաններ և հենակետեր, պարզ երևում է նրանից, որ իրենք՝ արաբները այդ կայանները անվանում էին «Հայաստանի սահմանային ամրոցներ»¹։

Հայաստանում, իբրև գլխավոր քաղաք, մնում էր Դվինը, որը եղել է արաբ կառավարիչների նստավայրը։ Քանզված լինելով 7-րդ դարի վերջերի և 8-րդ դարի սկզբի ապստամբությունների և կռիվների ժամանակ, Դվինը, ինչպես հաղորդում է Ղևոնդը², վերականգնված է եղել Աբդուլ-Ազիզի կողմից, որը եղել է Հայաստանի կառավարիչ խալիֆ Վալիդի ժամանակ (705—715)։

«Իսկ Աբդուլ-Ազիզը, — վկայում է Ղևոնդը, — տիրեալ աշխարհիս Հայոց՝ խաղաղացույց զամենայն լարձախմուսնս անիրաւութեան յաշխարհէս. և զխրոխտացեալ անղգամութիւն որդւոյն Իսմայելի սաստիկ կշտամբութեամբ ցածուցաներ։ Շինէր լներստին զքաղաքն Դուին հզօրագոյն և ընդարձականիստ մեծությամբ քան զառաջինն, և ամրացուցանէր դրամբք և դռնափակօք, անցուցանէր շուրջ զպարսպովն պարիէնս փոսից լցեալ ջուր յապաստան ամրոցին»։

Նույն պատմագրի հաղորդագրություններից երևում է, որ արաբները առանձին ուշադրություն էին դարձրել Թեոդոսուպոլիս քաղաքին, որը արաբական աղբյուրներում կոչվում է Կալիկալա։ Եվ այդ միանգամայն հասկանալի է, որովհետև Թեոդոսուպոլիսը պաշտպանում էր գլխավոր ճանապարհները, որոնք գնում էին Տրապիզոնից և Փոքր Ասիայից Արաքսի հովիտներով դեպի Ագրե-

¹ Sté. J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam depuis la conquête arabe jusqu'en 836, Paris, 1919, p. 173; Thopdschian H., Die inneren Zustände Armeniens unter Asch I, Diss., Berlin, 1904, S. 118.

² Ղևոնդ, Պատմություն հայոց, գլ. 10-րդ, էջ 36։

ջան և Մեդիա: Արաբները այդ քաղաքը անվանում էին «Հզոր ամ-
րոց Ազերբայջանի, Ջաբալի և Ռեյի ժողովուրդների համար»¹:

Գտնվելով արաբական տիրապետությունների ծայրագույն
արևմուտքում, Թեոդոսուպոլիսը հաճախ ենթարկվում էր հարձակ-
ման ու ավերման, և նրա պատերը ու ամրությունները քաղմիցս
քանդվել են բյուզանդացիների կողմից: 756 թվին նա վերականգնը-
ված է եղել Հայաստանի արաբական կառավարիչ Նզիդի կողմից,
իսկ 833 թվին Մուտասիմ² հալիֆի (833—842) կողմից: Այդ առաջ-
նակարգ ամրոցի պաշտպանությունը Նզիդը հանձնել էր արաբների
զինվորական գաղութին, որոնք միաժամանակ պահում էին շրջա-
կա քրիստոնյա բնակչությունը հնազանդության մեջ: Հայաստանը,
ինչպես ասում է Ղևոնդը, պետք է նրանց պահեր և հայթայթեր
նրանց սննդամթերք³:

Արաբական զինվորական կայաններ եղել են նաև Հյուսիսային
Անդրկովկասում. և շատ ուշագրավ է, որ նոր քաղաքներ նրանց
կողմից հիմնադրված են եղել ոչ թե Հայաստանում, այլ ներկա
Ադրբեյջանի տահմաններում: Բյուզանդացիների դեմ զինավոր
զինվորական առաջապահ հյուսիսում եղել է, անշուշտ, Թիֆլիսը:
Համաձայն Բելազորիի հաղորդագրությանը՝ Թիֆլիսից քսան ֆուր-
սախ և Բերդաաից (Պարթավից) 40 ֆարսախ հեռավորության
վրա Մրվան իրն-Մուհամեդը շինել էր Կիսալ⁴ քաղաքը:

Մինորսկու կարծիքով, այդ քաղաքի անունը պետք է եմֆադրել
ոչ թե Kisál կամ Kusál, ինչպես սխալ է ցույց տված մի քանի արա-
բական ձեռագրերում, այլ Kasál (Կասալ): Հիմնվելով Բելազորիի
մոտ մեջ բերված հեռավորությունների վրա, Մինորսկին Կասալը
նույնացնում է ներկա Ղազախի հետ, Աղստե գետի ափին, որը
հանդիսանում է իբրև հանգուցային կետ, որտեղից ճանապարհ-
ները բաժանվում են տարբեր ուղղությամբ՝ մեկը դեպի արև-
մուտք—Կուր գետի աջ ափով—դեպի Թիֆլիս, մյուսը—դեպի արե-
վելք, Գյանջախի վրայով, դեպի Բերդաա, և երրորդը—դեպի հարավ,

¹ J. Laurent, l'Arménie entre Byzance et l'Islam, p. 176; Ibn Haukal
B. G. A., II, 1873, p. 293

² Ibidem, p. 176—177.

³ Ղևոնդ, Պատմություն Հայոց, 29-րդ, էջ 180.

⁴ Sbe⁴ Ghazarian M., Armenien unter der arabischen Herrschaft, Mar-
burg, 1903, S. 58. Beladhort, éd. de Goaje, Leiden, 1870, p. 207.

Պրոֆ. Պ. Կ. Ժուզեն, իր՝ Բելազորիի ուսերեն թարգմանության մեջ Կիսալը
համարում է ոչ թե քաղաքի անուն, այլ մարզի անուն, որտեղ շինված է եղել քա-
ղաքը:

Դիլիջանի ու Երևանի վրայով, դեպի Դվին¹։ Նա միանգամայն ճիշտ նշում է, որ Աղստե գետի հովիտը ունեւ հաղորդակցության ճանապարհի կարեւոր նշանակութիւն՝ կապվելու հարավային մարզերի հետ, որոնք գտնվում էին Արաքս գետի ավազանում։

Արաքսների ղեկավարները, որոնք շինել էին Կասալի մարութիւնները, ուղում էին, ակներկորեն, ենթադրում է նա, ունենալով անմիջական կապ Դվինի և Նախիջևանի հետ, վերահսկողութիւն ունենալ Բերդաաից Թիֆլիս տանող ճանապարհի վրա։

Նույն հեղինակը վկայում է, որ Օսման խալիֆի ժամանակ (644—656) Սալման իբն-Ռաբիայի կարգադրութեամբ՝ Շամքորում բնակեցված են եղել արաբական զոդերը։ Այդ քաղաքը, որ քանդված է եղել սաւարդիտների (հայ. սևորդիների) կողմից, վերակառուցվել է Հայաստանի կառավարիչ Բուդայի միջոցով 854 թվին։

«Բերդաաի բնակիչներից ոմանք ինձ հաղորդեցին, — ասում է Բելադորին, — որ Սալման-իբն-Ռաբիա ալ Բախսլին ուշարկել է Շամքոր քաղաքը, որը համարվում էր հին քաղաք, մի զորաբանակ, որը և տիրեց նրան։ Այդ ժամանակից սկսած քաղաքը չի դադարել լինել բնակելի ու ծաղկած վիճակում, մինչև որ այն քանդեցին սաւարդիտները։ Այդ մի ժողովուրդ էր, որը թափվում էր տարբեր կողմերից, ուժեղանում էր և անկարգութիւններ էր անում, երբ Եղիզ իբն Ուսայդը թողեց Հայաստանը։ Բայց 240 թվին (354) Մուտասիմ-բիլլախի կողմից հովանավորված Բուդան, թող նրան Աստված ներում շնորհե. Հայաստանի, Աղբրբայջանի և Շիմշատի կառավարիչ լինելով վերանորոգեց այդ քաղաքը, նա բնակեցրեց այնտեղ փազարների մի մասը, որոնք եկել էին նրա մոտ և խնդրել էին նրա հովանավորութիւնը, որովհետև իրենք ուղում էին ընդունել իսլամը։ Նա տեղափոխեց այնտեղ նաև Բերդաայից վաճառականներին և անվանեց քաղաքը Մութավաքիլիա»²։

363- 844 թվին Մուհամմեդ իբն իսալիդը հիմնադրեց Գանձակ քա-
247 լաքը (Գյանջա-Կիրովաբադ) և բնակեցրեց Դիարբեքիրից բերած
179 արաքսեցիներին³։

7 Գ. Գանձակից դեպի արևելք, Թարթառ և Կուր գետերի միախառնման տեղից ոչ հեռու գտնվում էր Առանի Պարթավ քաղաքը, որը

¹ Տե՛ս Minorsky, Transcaucasla, Jurnal Asiatique, Iuli, 1930, p. 73—90.

² (Բելադորի) Баладзорн, перевод Жызс, Баку, 1927 г., էջ 13—14.

³ Laurent, p. 177. Մովսէս Կաղանկատաղի, Պատմութիւն Աղուանից, Թարգմ. Պատկանյանի, Մ. Գ. Բ., 1861, էջ 270. համեմատե՛ J. Markwart, Ost-europäische und Ostasiatische Streifzüge, Leipzig, 1903, S. 462.

արաբների մոտ կոչվում էր Բերդաա, և որը եղել է ամբողջ արաբական էրմենիայի կառավարչի աթոռանիստը, այսինքն՝ Աղբ-բեջանի, Վրաստանի և Հայաստանի:

Հիշված քաղաքները, որոնք ծառայում էին իբրև արաբների քաղաքական ու զինվորական հենակետեր, եղել են միաժամանակ կարևոր առևտրական կենտրոններ, և մինչև 9-րդ դարի երկրորդ կեսը, ինչպես ես կարծում եմ, նրանք միջազգային առևտրի մեջ խաղացել են ավելի մեծ դեր, քան Հայաստանի քաղաքները: Այդ լափազանց կարևոր փաստը, որը թերազնահատվել է պատմագիտական աշխատություններում, բացատրվում է, ըստ երևույթին Բյուզանդիայի հետ առևտրական հարաբերությունների ընդհատումով և միջազգային առևտուրը դեպի Կուր գետի ավազանը փոխանցելու հետևանքով: Առևտրի աշխուժացումը արևելյան Վրաստանում և ներկա Ադրբեջանի երկրամասում կապված է, անշուշտ, խաղարների և սլավոնների արևելյան առևտրի ծաղկման հետ: 7-րդ դարից սկսած, ինչպես հայտնի է, Պոնտոսի հյուսիսային ափերում և Դոն ու Դնեպր գետերի միջև ընկած տափաստաններում սկսեցին հաստատվել խաղարները:

«8-րդ դարում, — ասում է Կլյուչևսկին, — նրանց մեջ տեղավորվեցին Անդրկովկասից հրեաները և արաբները: Հրեաների ազդեցությունը այդտեղ եղել է այնքան ուժեղ, որ խաղարական խազանների դինաստիան իր արքունիքով, այսինքն, խաղարական հասարակայնության բարձր դասի հետ ընդունել էր երրայեցոց հավատքը: Փոված լինելով Վոլգա և Դոն գետերի առափնյա լայնարձակ տափաստաններում, խաղարները հիմնել էին իրենց պետության կենտրոնատեղին Վոլգայի ստորին հոսանքի շրջանում: Այստեղ նրանց Իտիլ մայրաքաղաքը շուտով դառավ հսկայական բազմալեզու վաճառատեղի, որտեղ կողք կողքի ապրում էին՝ մահմեդականներ, հրեաներ, քրիստոնյաներ և հնթանոսներ: Խաղարները Վոլգայի բոլգարների հետ միասին դառան միջնորդ՝ աշխույժ ապրանքափոխանակության, որը առաջացել էր Բալթիական հյուսիսի և արաբական արևելքի միջև մոտավորապես 8-րդ դարի կեսերից, մոտավորապես այն ժամանակը, երբ Աբբասյանների օրով խալիֆայության կենտրոնը տեղափոխվեց Դամասկոսից — Բաղդադ¹:

¹ Проф. Ключевский, Курс русской истории, Москва, 1914, т. I, стр. 146.

Այդ առևտրում, բացի խազարներից և Վուլգայի բուլղարներից, մասնակցում էր, ինչպես հայտնի է, նաև Կիևյան Ռուսիան: Հստա-
արաբական աշխարհագիր խորդադքեյի հաղորդագրության, որը
ժամանակակից է եղել Ռյուրիկին և Ասկոլդին, ռուսները իրենց
երկրի առանձին մասերից ապրանքներ էին տանում դեպի Սև ծո-
վը, որտեղ Ռումի (Յուզանդիա) թագավորը նրանցից գանձում էր
տասանորդ՝ իբրև մաքս: Նրանք այնուհետև գնում էին սլավոնական
Տանաիս (Դոն) գետով և հասնում էին խազարական խամլիխ քա-
ղաքին (Իտիլի արևելյան կեսը), որտեղ խազարիայի տիրակալը
նույնպես վերցնում էր նրանցից տասանորդ: Այնտեղից նրանք
գնում էին դեպի Կասպից ծովը ու այնուհետև Գուրգան, որտեղից
երբեմն ուղարկում էին իրենց ապրանքները ուղտերով Բաղդադ¹:

Արաբական աղբյուրների մի շարք վկայություններից պարզ
երևում է, որ Հյուսիսային Անդրկովկասի առևտուրը, որը սկսվել էր
8-րդ դարում, հասավ իր ամենամեծ զարգացմանը 9-րդ և 10-րդ
դարերում: Պատահական չէ, իհարկե, որ Թիֆլիսի և Ադրբեջանի
քաղաքների տնտեսական զարգացումը վերագրվում է հենց այդ
ժամանակին: Եվ կարելի է վստահ կերպով ենթադրել, որ նոր քա-
ղաքների երևան գալը այստեղ և մայրաքաղաք Պարթավի փարթավ
ծաղկումը բացատրվում են, գլխավորապես, Հարավային Ռուսաս-
տանի հետ միջազգային առևտրի զարգացմամբ:

Վերև հիշված բոլոր տվյալներից երևում է, որ սկսած 8-րդ
դարից մինչև Բագրատունիների թագավորության ժամանակ առև-
տրը նոր վերելքը, մինչդեռ Հայաստանի վրայով տարանցիկ ճա-
նապարհները փակված են եղել, և Հայաստանի քաղաքները գտնը-
վում էին անկման դրուֆյան մեջ, միջազգային առևտրական հարա-
բերությունները տեղափոխվել էին դեպի հյուսիս, և այդ առևտրում
գերակշռող դեր խաղում էին Հյուսիսային Անդրկովկասի քաղաք-
ները:

ԱՌԵՎՏՐԻ ՎԵՐԱՇՆՈՒՆԴԸ ԵՎ ԾԱՂԿՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ 9—10-ՐԴ ԵՎ 11-ՐԴ ԴԱՐԻ

ԱՌԱՋԻՆ ԿԻՍՈՒՄ

Հայաստանի քաղաքական և մասամբ ներքին կյանքի պատ-
մությունը Բագրատունիների թագավորության ժամանակաշրջանում
վերջին ժամանակները արժանացել է առանձին ուշագրության:

¹ Նույնը, էջ 147—148. Markwart, Osteurop. und Ostas. Streifzüge, S. 203, 350—352. De Goeje, Bibl. Geogr. Arab., VI, p. 115.

Բացի գերմաներեն լեզվով հրատարակված մի շարք դիսերտացիաներից¹, Բագրատունիների ժամանակաշրջանի Հայոց պատմության համար մենք ունենք գերմանական գիտնական Մարկվարտի² համաճանորեն կազմված աշխատությունը։ Պետք է, սակայն, նշել, որ տարանցիկ առևտրի մասին մեր կողմից քննարկվող խնդիրը այդ աշխատություններում տրված է չափազանց սեղմ։ Բարեբախտաբար այդ պակասը շատ դեպքերում լրացնում է W. Heyd-ի կլասիկ աշխատությունը՝ «Histoire du commerce du Levant»։ որը, անշուշտ, ծառայում է իբրև կապիտալ ձեռնարկ միջին դարերի պատմության համար։

Հայաստանի տնտեսական վերածնունդը և քաղաքային կենտրոնների ծաղկումը հնարավոր դառան, ինչպես ինձ թվում է, 9-րդ դարի երկրորդ կեսից սկսած, շնորհիվ արտաքին քաղաքական իրադրության հիմնովին փոփոխման, որը նպաստավոր է եղել Հայաստանի քաղաքական և տնտեսական զարգացման համար։

9-րդ դարի երկրորդ կեսից սկսած տեղի է ունեցել, ինչպես հայտնի է խալիֆայության անկումը և քայքայումը և Բյուզանդական կայսրության աստիճանական զորեղացումը։ Իշխանությունը Մակեդոնական դինաստիային անցնելուց հետո, դեռևս Բարսեղ 1-ի (867—886) ժամանակ, Բյուզանդիան օգտվեց խալիֆայության թուլացումից և կործանիչ հարվածներով ոչնչացրեց արաբների պաշտպանողական դիրքերը, որտեղից նրանք անընդհատ, համարյա ամեն տարի ասպատակում էին Փոքր Ասիայի սահմանամերձ շրջանները։ 872 թվին Բարսեղ 1-ը վերցրեց և քանդեց Տեփրիկը։

Այնուհետև բյուզանդացիք կարող էին ազատ գործել ընդդեմ սլաշտպանողական գոտիների, և քայլ առ քայլ գրավելով արաբների անմատչելի ամրությունները, նրանք ներս էին մտնում Մալաթիայի և արևելյան Կիլիկիայի միջև գտնվող մարզերը։ Ռոմանոս Լեկապենի (920—944) կայսրության օրով բյուզանդացիք շարունակեցին սկսված ճնշումը ավելի մեծ հաջողությամբ։

«Մուկտադիր խալիֆի (908—932) ժամանակ, նոր անկման հետևանքով,— ասում է Ա. Մյուլլերը,— խալիֆայու-

¹ Daghabaschian A., Gründung des Bagratidenreiches durch Aschot Bagratuni, Diss., Berlin, 1893; Thopdschian H., Die Inneren zustände Armeniens unter Aschot I., Diss., Berlin 1904; Akullian A., Eine Verleibung armenischer Territorien durch Byzans im XI Jahrhundert, diss., Gröningen, 1912 և ուրիշ։

² J. Markwart, Osteuropäische und Ostasiatische Streifzüge.

Թյան զինվորական հաջողությունները բնականաբար հետըզհետե ավելի էին թուլանում և ահա կատարվեց հարյուր տարուց ավելի շլված իրողությունը — ամրոցների երկաթե օղակը պատռեց հայ-բյուզանդական զորավար Հովհաննես Կուրկուսանը, 926 թվին հույները գրավեցին Մալաթիան և 927 թվին հեղինկեցին Հայաստանը ընդհուպ մինչև նրա մայրաքաղաք Դվինը, 928 թվին գրավեցին Երկրի արևմտյան մասը մինչև Էրզնրում, իսկ 929 թվին նաև Հյուսիսային Միջագետքը՝ Մալաթիայի, Ամիդի (ներկա Դիարբեքիր) և Մալաթիայի միջև։ Թեև արաբական կուսակալները, գործելով Մոսուլի և Տարսուսի կողմից՝ շատ անգամ փորձում էին ետ քշել Կուրկուսի զորքերը, սակայն այդ հաջողվում էր նրանց անել միայն ժամանակավորապես։ 934 թվից իսլամի համար երկար ժամանակով կորցված էին Սամոսատը, Մալաթիան և ամբողջ Արևմտյան Հայաստանը¹։

Արաբների պաշտպանողական ամրությունների վրա Բյուզանդիայի կատարած հաղթական գրոհի ժամանակ, ֆեոդալական Հայաստանի կողմնորոշումը, նրա վերաբերմունքը դեպի կոլոդ պետությունները, անշուշտ, ստանում էր առանձնահատուկ կարևոր նշանակություն։ Լոռանի² կարծիքով Բարսեղ 1-ի հաղթությունը կարող էր լինել ավելի լիակատար, եթե հայերը հարձակվեին արաբների աջ թևի վրա, կամ եթե նրանք օգնեին կայսերը տանել պատերազմական գործողությունները ավելի խորը՝ դեպի արևելք։ Հենց այդ, Հայաստանի համար չափազանց նպաստավոր իրադրության մեջ է բացատրվում, փնչպես ճիշտ ենթադրում է Լոռանը³, խալիֆայության քաղաքականության շատ խիստ փոփոխությունը ֆեոդալական Հայաստանի վերաբերմամբ։

Դեռևս 802 թվին Աշոտ Բագրատունին, որը հետագայում կոչվեց Մեծ, ստացավ Հայաստանի կառավարման իրավունքը՝ «իշխանաց իշխան» տիտղոսով, Հավատարիմ մնալով խալիֆայությանը և չեզոք Բարսեղ 1-ի հաղթական կռիվների ժամանակ, Աշոտը 25 տարի մնաց «իշխանաց իշխան», և նրա ժամանակը Հայաստանը ուժեղացավ՝ թե քաղաքականապես և թե տնտեսապես։ Քառորդ դար կառավարելուց հետո, 887/88 թվին նա Մուսամիդ խալիֆից

¹ А. Миллер, История ислама, 1895, т. II, էջ 236—237.

² J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam, p. 260.

³ Նույնը, էջ 263—273:

(870—892) ստացաւ Թագ և Թագավորի տիտղոս: Այգ տիտղոսը ճանաչել էր նաև Բարսեղ 1-ը:

Պետք է, սակայն, նշել, որ Բագրատունիների Թագավորական դինաստիային բնավ չհաջողվեց ենթարկել իր իշխանութեանը անհնազանդ ֆեոդալներին: Խոշոր ֆեոդալները տրամադիր չէին լսելու իրենց սյուզերեն Թագավորին, որը մնացել էր խալիֆի վասալ և հարկատու: Ըմբոստ ֆեոդալները ձգտում էին օգնություն ստանալ կամ խալիֆայութունից, կամ հարևան ամիրաներից, ոչ պակաս հզոր, քան Բագրատունիները: Չնայելով Բագրատունիների հանդեպ ունեցած արտաքուստ հաճոյաբարո և բարյացակամ քաղաքականութեանը, անհնազանդ ֆեոդալների անջատականութիւնը և ապստամբութիւնները դրսից խրախուսվում և նույնիսկ հրահրվում էին, որովհետև Հայաստանի միացումը, իբրև հզոր Թագավորութիւն, ցանկալի չէր ոչ խալիֆայութեանը, ոչ Բյուզանդիային և ոչ հարևան ուժեղ ամիրայութիւններին: Ուստի և հասկանալի է, որ Բագրատունիների Թագավորական տիտղոսը մնաց իբրև լոկ տիտղոս, առանց իրական բովանդակութեան: 10-րդ դարում, ինչպես հայտնի է, Հայաստանի և Անդրկովկասի բոլոր մեծ ֆեոդալները դառան նույնպես «Թագավորներ» և ունեին նույնպիսի Թագավորական հանդերձանք և Թագ, ինչպես և Աշոտ 1-ի հաջորդները:

Սաճյան Յուսուֆ ամիրայի՝ Սմբատ 1-ի (890/1—913/4) վերաբերմամբ ունեցած դաժան դատաստանից և այնուհետև տեղի ունեցած խառնակութիւններից և ապստամբութիւններից հետո, որոնց ընթացքում տեղի էր ունենում երկրի անխնա ալիքում, սկսած 10-րդ դարի երկրորդ քառորդից, ավելի քան հարյուր տարի Հայաստանում տիրում էր համեմատաբար խաղաղութիւն: Չունենալով ակտիվ մասնակցութիւն Բյուզանդիայի և արաբների կռիւներին, և մնալով արտաքուստ խալիֆայութեան վասալներ, Բագրատունի Թագավորները պահում էին բարեկամական հարաբերութիւններ և՛ Բյուզանդիայի, և՛ խալիֆայութեան հետ: Խաղաղութիւնը և հանգստութիւնը նոանց տիրութիւններում չէր խանգարվում ոչ մէկի, ոչ մյուսի կողմից:

Շնորհիվ միջազգային առևտրի գլխավոր ճանապարհներից մեկի վրա իր ունեցած դիրքին, Բագրատունյաց Հայաստանը, որը կապված էր բարեկամական պայմանագրով Բյուզանդիայի հետ և առաջի ժամանակը վասալական կապերով խալիֆայութեան հետ, դառել էր իդեալական շեզոք երկիր՝ տարանցիկ առևտրի և միջազգային հարաբերութիւնների համար: Ապահովութիւնը և կյանքի խաղաղ պայմանները, անշուշտ, հանդիսանում էին իբրև չափա-

զանց նպաստավոր գործոն երկրի բարգավաճման և տնտեսական վերածնության համար:

Սակայն դրանով չի բացատրվում նրա աննախընթաց վերելքը և տնտեսական զարգացումը: Քաղաքային կենտրոնների այդ զարգացումը և բարգավաճումը բացատրվում է, ինչպես ճիշտ ցույց է տվել Գուրկո-Կրյաժինը, նրանով, որ «Հայաստանը, տվյալ իրադրության մեջ, դառել էր բուֆեր՝ ոչ միայն քաղաքական, այլև առավել տնտեսական, որովհետև այդ երկրամասը հանդիսանում էր իբրև միակ տարանցիկ ճանապարհ երկու կովոդ կողմերի առևտրական հարաբերությունների համար»¹:

Հայաստանի տնտեսական արագ վերածնության սկիզբը պետք է տանել 9-րդ դարի երկրորդ կեսը: Սկսված վերածնությունը, ինչպես հիշված է վերևում, ընդհատվել էր խռովորությունների, ապրստամբությունների և Սաճյան Յուսուֆ ամիրայի պատժիչ արշավանքների ժամանակ: Իսկ այնուհետև 10-րդ և 11-րդ դարի առաջին կիսում, երկրի տնտեսական զարգացումը և քաղաքների աճը հասավ աստիճանաբար իր ծաղկման գագաթնակետին:

Բագրատունյաց շրջանի Հայաստանի բարգավաճ դրությունը երևում է նախ և առաջ նրանից, որ այդ ժամանակաշրջանի արաբական հեղինակները Հայաստանը համարում էին խալիֆայության ամենահարուստ երկրներից մեկը: Այդ տեղեկությունները հաստատվում են նաև հայկական աղբյուրների հաղորդագրություններով: Առաջին Բագրատունի թագավորների ժամանակ Հայաստանի բարեկենցության մասին ուշագրավ վկայություն է տալիս Ասողիկը.

«Յաւուրս Սմբատայ և յիշխանութեան հոր իւրոյ էր շինութիւն և խաղաղութիւն յաշխարհիս Հայոց ըստ մարգարեութեանն հանգչել իւրաքանչիւր ուրուք ընդ որթով իւրով և ընդ թգենեաւ: Եւ այսպես ագարակաց աւանացեալ և աւանաց քաղաքացեալ բազմամարդութեամբ և ընչեղութեամբ, մինչև հովվաց և անդէորդեաց մեթաքսեայս զգենուլ պատմուճանս»²:

Ասողիկի տեղեկությունը հովիվների մետաքսե շորերի մասին, իհարկե, պարզ չափազանցություն է, որովհետև տվյալ ժամանակաշրջանում ստորին դասերի դրությունը զգալիորեն վատացել էր, բայց, ընդհանուր առմամբ, վկայությունը ճիշտ է և համապատաս-

¹ В. Гурко-Кряжин, Прошлое и настоящее Советской Армении, Новый Восток, 1937 г., кн. 16—17, էջ 206

² Ասողիկ. Հնդհանուր պատմություն, թարգմ. Էմինի, Մոսկվա, 1864, 3-րդ, 3, էջ 109.

խանում է արաբական աղբյուրների համանման տեղեկություններին:

Սմբատ 1-ի (890/1—913/4) ժամանակը Հայաստանի բարեկեցության մասին նման տեղեկություն տալիս է նաև Հովհաննես Կաթողիկոսը՝

«Իսկ աշխարհիս Հայաստանեայց յառուսն յալնոսիկ այդ արարեալ Տեառն և պատսպարեալ և յաջողեալ ի բոլոր բարութիւնս՝ բնակեցան իւրաքանչիւր ոք ի ժառանգութիւնս իւրեանց. և սեպհականեալ զերկիր՝ տնկեցին այգիս և արմատացուցին բուրաստանս ձիթենեաց և պարտիւզաց. հերկեցին հերկս արտաքոյ փշոց և կթեցին պտուղս հարիւրաւորս. ղեղան շտեմարանք ցորենոյ ի ժամանակի լրութեան հնձոց. լցան գութք գինոյ ի կութս այգեստանեայց և լերինք ցնձութիւն զգեցան, ղի բազմացան ի նմա արօտականք անդեացք սրբառոց և հօտք ոշխարաց, Եւ գլխաւոր նախարարք մեր յապահովացեալք և հանգուցեալք ի հինից ասպատակաց՝ շինէին եկեղեցիս վիմարօ հաստահեղոյս ձուլեալ կրով ի մենաստանս և յաւանս և յագարակս»¹:

Նոր քաղաքների հարստության մասին, որոնք շինված են եղել այդ դարաշրջանում և գառել էին խոշոր առևտրական կենտրոններ, հետաքրքիր տեղեկություններ հաղորդում է 11-րդ դարի պատմագիր Արիստակես Լաստիվերտցին: Անի քաղաքը, որը 10-րդ դարի երկրորդ կեսից դառել էր Բագրատունիների մայրաքաղաքը, նա անվանում է «ամբողջ աշխարհում հայտնի» քաղաք²: «Հոյակապ և նշանավոր ամենուրեք» Արծն քաղաքի մասին, որը գտնվում էր Թեոդոսուպոլսից ոչ հեռու, Արիստակեսը հաղորդում է, որ նրա հարստությունները բերում էին «ծովով և ցամաքով»³, նմանապես նկարագրելով Կարս քաղաքը, Արիստակեսը նշում է այդ քաղաքի բնակիչների ունևորությունը և նորից ընդգծում է, որ նրանց հարստությունները կուտակված էին «ծովից ու ցամաքից»⁴:

Մեջ բերված վկայությունները, թեև անուղղակի, բայց միանգամայն որոշակի հաստատում են, որ Հայաստանի քաղաքների հարստացման գլխավոր աղբյուրը եղել է վերստին զարգացող միջազգային առևտուրը: Որ Հայաստանը եղել է տարանցիկ երկիր մի-

¹ Հովհաննես Կաթողիկոս, Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1912, էջ 198—199.

² Արիստակես Լաստիվերտցի, Պատմութիւն, Տփլիս, 1912, գլ. 24, էջ 162.

³ Նույնը, գլ. 12, էջ 78:

⁴ Նույնը, գլ. 15, էջ 91.

չազգային առևտրական հարաբերությունների համար, դրա մասին կա անմիջական ցուցում Հովհաննես Կաթողիկոսի մոտ: Երբ 9-րդ դարի վերջում Սաճայի որդին՝ Աֆշին ամիրան զայրացած լինելով Բյուզանդիայի հետ ունեցած Բագրատունիների բարեկամությունից, առաջ շարժվեց ընդդեմ Սմբատ 1-ի, վերջինս, ըստ Հովհաննես Կաթողիկոսի, իր դեսպանների միջոցով համոզում էր Աֆշինին, որ այդ բարեկամությունը խալիֆայությանը միայն օգուտ կբերե: Շնորհիվ կայսրության հետ ունեցած մոտիկության, նա կարող է մատուցել նրան և խալիֆին ճոխ շորեր, զարդարանքներ և կահույք. բացի այդ խալիֆայության վաճառականների համար կբացվի Բյուզանդիայի ճանապարհը և, այդպիսով, առևտրական հարաբերությունները կհարստացնեն խալիֆայության գանձարանը:

Համաձայն վերև բերված վկայությունների և աղբյուրների այլ ցուցմունքների կարելի է վստահորեն եզրակացնել, որ իբրև ղեկավար ուժ Հայաստանի տնտեսական կյանքի, որը նպաստել է նրա քաղաքների արագ աճին, եղել է Արևելքի հետ Բյուզանդիայի ունեցած արտաքին առևտուրը, որը վերստին հաստատվել էր Բագրատունիների թագավորության բուֆերային երկրամասի վրայով:

Երկրում նյութական հարստությունների աճը և ֆեոդալական աղնավակնության ու եկեղեցու ձեռքին դրամական միջոցների կուտակումը ստեղծել էին արտակարգ բարենպաստ պայմաններ շինարարության զարգացման համար:

Հայաստանի քաղաքները, գլխավորապես նրանք, որոնք գրտնրվում էին տարանցիկ գլխավոր ճանապարհների մոտ, հարստանում, շինվում և ընդարձակվում էին: Թագավորները և Հայաստանի խոշոր ֆեոդալները մրցում էին իրար հետ իրենց կառուցած տաճարների, պալատների և այլ շենքերի փարթամությամբ: Անշուշտ, անհրաժեշտ էր ունենալ հսկայական միջոցներ, որպեսզի շինեին այնպիսի հոյակապ եկեղեցիներ և վանքեր, որոնց քանդակները պահպանվել են մինչև մեր օրերը Անիում և Կարսում: Աչքի է ընկնում այդ կողմից նաև Գագիկ Արծրունու (908—936) թագավորության վիթխարի շինարարությունը, որի վրա ծախսված են հսկայական նյութական միջոցներ, գլխավորապես, Ախթամարում, որը մանրամասն նկարագրված է Թովմա Արծրունու պատմության մեջ²:

¹ Հովհաննես Կաթողիկոս, Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1912, էջ 159—160.

² Թովմայ Արծրունի, Պատմութիւն տունն Արծրունեաց, 1887, 4-րդ, 6—8, էջ 290—299.

երկրում խոշոր ֆեոդալների և իշխող դասերի տրամադրության տակ եղած ազատ դրամական միջոցների առկայությունը բացատրվում է ոչ միայն միջազգային առևտրի զարգացման, երկրի քնդհանուր բարեկեցությունից և ազգաբնակչության թվական շատացման հետևանքով, այլև հարկային դուրսի փոքր չափով, որը հարստացած Հայաստանը պետք է վճարեր արաբներին: Արաբական պատմագիր Իբն-Հալդունը Հայաստանի տարեկան հարկը 3-րդ դարի վերջերում հաշվում է 13 միլիոն դիրխեմ: Արաբական աշխարհագիր Իբն իսթուդաբյի տվյալներով Հայաստանի հարկերը, ներառյալ նաև Անդրկովկասի մյուս երկրները, 9-րդ դարի քառասնական թվականներին կազմել են 4 միլիոն դիրխեմ: 10-րդ դարի կիսում, Հայաստանի ծաղկման շրջանում, հարկերի չափը, համաձայն Իբն Հաուկադի տեղեկությունների չէր ավելացել, և կազմում էր մոտավորապես նույնը՝ 4 միլիոն դիրխեմ, որից մեկ միլիոն դիրխեմ, իբրև բաժին, ընկնում էր Բագրատունյաց Հայաստանի՝ վրա: Հայկական աղբյուրների անուղղակի ցուցմունքներից երևում է, որ Բագրատունիները նույնիսկ այդ փոքր տուրքը վճարում էին շատ անկանոն և Ադրբեջանի ամիրաները, որոնք միաժամանակ համարվում էին խալիֆայության Հայաստանի կուսակալները, հաճախ մտնում էին իրենց ամբողջ զորաբանակներով Հայաստանի սահմանները և զանձում էին խալիֆայությանը հասնող հարկերը, սպառնալով հարձակվել և ավերել երկիրը:

Այսպիսով, ինչպես վերոհիշյալից երևում է, նորագույն հայկական ուսումնասիրություններում արտահայտվող այն կարծիքը, որ Բագրատունիները վճարել են ծանր հարկ կրկնակի չափով, և որ երկրի արտադրական ուժերի զարգացումը այդ դարաշրջանում եղել է ավելի վատ պայմաններում, քան նախընթաց ժամանակաշրջանում, միանգամայն անհիմն է և անհավանական: Կասկածից դուրս է, որ քննարկվող դարաշրջանը եղել է ոչ միայն առևտրի և

¹ Տես՝ Ghazarian M. Armenien unter der arabischen Herrschaft, S. 66—67; Alf. von Kremer, Culturgeschichte des Orients unter den Chalifen, 1876, Bd. I. S. 358, 377; J. Laurent, l'Arménie entre Byzance et l'Islam, p. 161.

² Հմմտ. Թովմա Արծրունի, 4-րդ, 3, էջ 283, 284. Հովհաննես Կաթողիկոս, էջ 167, 205 և Ասողկ, 3-րդ, 18, էջ 199:

³ Այն պնդումը, որ Բագրատունիները հարկ էին վճարում միաժամանակ և խալիֆին և ամիրային, չունի ոչ մի հիմնավորում: Արաբական և հայկական աղբյուրների հազորդագրություններից պարզ երևում է, որ Բագրատունիների վճարած հարկը ստանում էր ոչ թե ինքը խալիֆը, այլ Ադրբեջանի ամիրան, որը տալիս էր խալիֆին որոշ գումար ամբողջ հարկատու շրջանից, ներառյալ նաև Հայաստանը:

բաղաճների ժառկման շրջան, այլև երկրի արտադրական ուժերի զարգացման, գերազանցորեն, արհեստավորական աշխատանքի և արդյունաբերության: Ես իմ նախընթաց աշխատություններից մեկում ցույց եմ տվել, որ այդ ժամանակաշրջանում դրամական շրջանառությունը ունեցել է լայն տարածում, որը նպաստել է դրամային-տնտեսական հարաբերությունների զարգացմանը¹:

10—11-րդ դարերում, ինչպես որոշակի վկայում են հայկական արձանագրությունները, տեղի էր ունենում գյուղացիների բնապարհակների փոխանակումը դրամական վճարումներով: Արիստակես Լաստիվերտցու հաղորդագրություններից ես դժվար չէ տեսնել, որ ամենուրեք դրամական տնտեսության խորացման հետ միաժամանակ տեղի էին ունենում հիվանդագին երևույթներ, որոնք առաջանում էին վաշխառուական կապիտալի գործարկման ուժեղացումով և բնակչության ստորին խավերի դաժան շահագործման հետևանքով:

Նկարագրելով Արծն քաղաքի ավերումը 1049 թվին սելջուկների կողմից, Արիստակես Լաստիվերտցին վկայում է, որ այդտեղ

«Վաշխից և տոկոսեաց օրէնք եգան, ցորենոյ բազմապատկութիւն, որով երկիր պղծի և արգելու զարգանդ առ ի տալոյ ղպտուղ ի ժամու իւրում առ ի կերակուր մարդկան: Որ խաբէր զընկերն՝ պարծէր իմաստուն գոլ, և որ յափըշտակէր՝ ասէր, ես հղօր եմ: Զտանս տնակից աղքատացն, և զսահմանս անդաստանայ նոցա հափշտակէին մեծատունքն»²:

Նույն հեղինակը, պատմելով 1064 թվին Անի քաղաքը Ալի-Ասլանի կողմից գրավելու և ավերելու մասին, հատկապես հիշատակում է վաշխառությունը և այնտեղ տիրող սոցիալական անբարեկազմ վիճակը:

«Այլ և ի ճարպոյ անիրաւութեան ի նմա գործելոցն, — դրում է Լաստիվերտցին, — տոչորեցաւ բարձրաշէն և գեղեցկայարմար ապարանքն, և եղև ամենայն բնակութիւնն իբրև հողաբլուր. և վաշխն և նենգութիւնն որ ի նմա խափանեցաւ:

Այս է բաժին անիրաւ քաղաքաց, որ շինեն զինքեանս արեամբ օտարաց, և ի քրտանց տընանկաց փարթամանան, և ի վաշխից և յունիրաւութեանց տոնս փրեանց ամրացուցանեն. և ինքեանք ղմիտս իւրեանց անողորմ ունելով առ աղ-

¹ Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների ժամանակ. 1922, էջ 93:

² Կոստանյան, Վիմական տարեգիր, Ս. ՊՔ., 1913, էջ 5, 6, 13:

³ Արիստակես Լաստիվերտցի, 12-րդ, էջ 79—80:

քառս և տնանկս՝ միայն հեշտութեան և փափկութեան սպասեն և ի գործոց աշտեղութեան ոչ խորշին, այլ միայն արքայ լինին ի ցանկութեանցն որ զնոսա ըմբռնեալ ունի»¹:

Անիի հայկական Թագավորութեան վերջին օրերին Թուրքական ցեղերի ներխուժումից առաջ, Ֆեռդալական Հայաստանի կյանքը, ինչպես ճիշտ է ցույց տալիս Ն. Մառը, ներկայացնում էր հակադրույթ հայ աշխատավոր բնակչութեան տնտեսական ճնշվածութեան և հարստութեան կուտակմանը փոքրաքանակ տիրող դասերի անդամների ձեռքերում: Հսկայական հարստությունների մասին, որոնք եղել են Թեկուզ միայն հոգևորականութեան ձեռքին, հետաքրքիր տեղեկություններ է տալիս մեզ Մատթեոս Ուռհայեցի պատմագիրը: Երբ սելջուկյան իբրահիմ և Գիլըմուշ ղուրավարները վերցրին Արծն քաղաքը, դրոճ է նա, «եպիսկոպոս Դավթակի գանձատունը գրավեց իբրահիմը. նրա գանձերը բռնեցին 40 ուղտերի վրա. նրա տանից վար անելու համար դուրս էին գալիս 800 գուլթան, ամեն մեկում վեց զույգ եղներ»²:

Հակառակ ազնվականության, վաճառականության և հոգևորականության հարստության և ունեւորության, Անիի աշխատավոր բնակչությունը, ինչպես ցույց են տալիս այդ մայրաքաղաքի պեղումները, պատասպարվում էր քարքարոտ գետնում փորված խրդձուկ խողերում և որջերում:

Աշխատավոր բնակչության ծանր դրությունը երևում է, ի միջի այլոց, նրանից, որ կան տեղեկություններ այդ ժամանակաշրջանում տեղի ունեցած գյուղացիական ապստամբությունների մասին (10-րդ դարի առաջին քառորդում):

Համաձայն Հովհաննես Կաթողիկոսի վկայության, որը թշնամաբար է վերաբերվում ապստամբներին

«Նուազունքն քան զմեծամեծոն ձեռներէց լինել ջանային, և ծառայքն ըստ Սողոմոնի հնարէին, զի զտեսարս տրեխաւորեալ ի գետնի գնացուցան և խնքեանք ելցեն յերիվարս առօրե պարանոցս և առաթուր հարողա՝ խրոխտացնալք և սոնքացեալք և մեծաւ ապստամբութեամբ»³:

Քացի ապստամբություններից, 10—11-րդ դարերում ուժեղացավ նաև Թոնդրակեցի աղանդավորների կրոնական-սոցիալական շարժումը, որոնք խիստ քննադատութեան էին ենթարկում տիրող

¹ Արիստակես Լաստիվերոսի, 24-րդ էջ 167. հմմտ. Н. Я. Марр, АНУ, էջ 30.

² Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 103.

³ Հովհաննես Կաթողիկոս, «Պատմութիւն Հայոց», Տփլիս, 1912, էջ

դավանանքը և ֆեոդալական եկեղեցու կազմակերպությունը: Այդ աղանդի ուսմունքը, որի հետևողներն էին շքավոր ժողովրդի լայն աշխատավորական մասսաները, պաշտպանում էր դեմոկրատական քրիստոնեությունը և այն ժամանակվա պայմաններում հանդիսանում էր իբրև լողոք ոչ միայն պաշտոնական եկեղեցու այլև տիրող դասերի ճնշման դեմ:

Պալիկյանների և թոնդրակեցիների հայկական աղանդները, որոնք Բյուզանդական կայսրության մեջ և Հայաստանում ենթարկվում էին դաժան հալածանքների, պարբերաբար վտարվում էին դեպի Բուլգարիա և ուրիշ հրկրներ: Նրանց դադափարախոսությունը, ինչպես այժմ ենթադրում են, ընդունել էին Բուլգարիայում բողոմիցները, իսկ ավելի ուշ նաև ալբիդեցիները: Եվ հենց այդ աղանդավորներն էին, ինչպես ցույց է տալիս Ն. Մառը, որ «իրենց արյան հեղեղատներով պարարտացրին հողը՝ եվրոպական ավելի քախտավոր վերանորոգչական շարժումների համար»¹:

Հետաքրքիր են այդ դարաշրջանում նաև ուրիշ հակասությունները, որոնք երևան էին գալիս իդեոլոգիական ասպարեզում: Մի կողմից ուժեղ կերպով սկսեց դարդանալ հեղեցական սխոլաստիկական գրականությունը, որտեղ նկատվում են միստիկ բնույթ ունեցող խոյանքներ, իբրև նախադգուշացում ֆեոդալական կազմակերպության մոտալուտ անկման, մյուս կողմից ծնունդ էր առնում ժողովրդական աշխարհիկ գրականությունը, որտեղ մարմնացում էին ստանում աշխատավոր մասսաների իղձերն ու ձգտումները: Այն ժամանակ, երբ հին Երևան քաղաքում, ինչպես ասված է Կոդեոնի՝ մասին հայկական ավանդության մեջ, միայնակյաց գիտուն և ոգևոռ Լուհաննես՝ Կոդեոնը, շրջապատված զուղղորդուն ու հառաչող իշխաններով և ազնվականներով, բացատրում էր նրանց 11-րդ դարի սկզբներում սարսափելի և ցնցող երկնային նշանները և ասում էր նրանց լացով ու խորը կսկիծով, որ կապված սատանան աղատվել է կապանքներից ի մահ կենդանի արածների, և որ երկիրը այսուհետև խորասուզվելու է խավարի մեջ, մինչդեռ նույն այդ ժամանակ Սասունի լեռներում աշխատավոր հայ ժողովուրդը աշխուժությամբ երկում էր իր «Սասունցի Դավիթ» մեծ վիպերգությունը և իմաստնարար նախազգում էր արդարության ու ուրախության նոր աշխարհի ստեղծումը:

¹ Տե՛ս Н. Я. Марр, Ани, էջ 30:

² Տե՛ս Н. Я. Марр, Сказание о католикосе Петре и ученом Иоанне Козерне. СПб., 1895, էջ 19—34.

10—11-րդ դարերում սոցիալական պայքարի ակնառու սրումը բացատրվում է, ինչպես ասեցինք, դրամա-տնտեսական հարաբերությունների խորացմամբ, վաշխառուական կապիտալի դերի ուժեղացմամբ և, ըստ երևույթին, գյուղացիներից պահանջվող դրամական տուրքերի ծանրությամբ:

Հայաստանի տնտեսական կյանքում տեղի ունեցող տեղաշարժերին վերաբերող կողմնակի ցուցում կարող են ծառայել Արիստակես Լաստիվերտցու կրոնական-բարոյական խոհերը՝ բարի հին ժամանակի մասին և նրա գանգատները տիրող դասերի ագահության և շահամոլության ու վաշխառության աճի վերաբերմամբ, և դրա հետ միաժամանակ տեղի ունեցող երևույթների՝ չքավորների գուլքի և հողերի կենտրոնացմանը հարուստների ձեռքերում¹:

Ուստի կարելի է ենթադրել, որ քննարկվող դարաշրջանում Հայաստանի տնտեսական կյանքը վերակառուցվում էր նոր հիմքերի վրա:

Արհեստների և առևտրի զարգացումը, առևտրական-վաշխառուական տարրի տեսակարար կշռի բարձրացումը, քաղաքային կենտրոնների ծաղկումը և աճը նպաստեցին, անշուշտ, նոր տնտեսական և սոցիալական հարաբերությունների առաջացմանը, և կարելի է որ այդ նոր ուժերը ժամանակի ընթացքում առաջ բերեին ֆեոդալական կազմակերպության տապալումը, եթե այդ զարգացումը չընթեցատվեր 11-րդ դարի կեսերին տեղի ունեցած իրադարձություններով և սելջուկների արշավանքներով:

ՐԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Բագրատունյաց ժամանակի Հայաստանի քաղաքների մասին մենք ավելի մանրամասն տեղեկություններ ունենք, քան Սասանյան դարաշրջանի քաղաքների մասին:

Հայաստանի ամենախոշոր առևտրական կենտրոնը՝ Դվինը, 9-րդ դարի երկրորդ կիսում կործանվեց, ինչպես հայտնի է, երկրաշարժից: Նա նորից վերակառուցվել է և շնորհիվ իր նպաստավոր տեղադրության, տարանցիկ առևտրում շարունակում էր խաղալ հանգուցային կայանի դեր. միաժամանակ Դվինը եղել է տեղական արդյունաբերության աչքի ընկնող կենտրոն: Նրա մասին մանրամասն տեղեկություններ են հաղորդում 10-րդ դարի արաբական հեղինակները՝ Իստախրին, Իբն-Վառդազը և Մուկագգասին:

¹ Արիստակես, 12-րդ, էջ 80 և 24-րդ, էջ 167:

«Դարբիլը,— գրում է Իստախրին իր «Գիրք թագավորությունների և ճանապարհների» աշխատության մեջ,— Արդաբիլից մեծ է. այդ քաղաքը ծառայում է իբրև մայրաքաղաք Հայաստանի և նրանում կառավարչի պալատը նման է Առանի կառավարչի պալատին Բերդաանում և Ազերբայջանի կառավարչի պալատին Արդաբիլում: Դարբիլը շրջապատված է պարսպով. այստեղ կան շատ քրիստոնյաներ, և քաղաքի մայր մզկիթը եկեղեցու կողքին է: Այդ քաղաքում պատրաստվում են բրդե հագուստեղեն և գորգեր, բարձեր, միստարներ, ժապավեններ և հայկական արտադրության այլ իրեր: Նրանց մոտ արտադրվում է նաև ներկ, որ կոչվում է «կիրմիզ» (որդան կարմիր) և նրանով ներկում են մահուղը: Նա իմացել եմ, որ այդ որդ է, որը մանում է իր շուրջը մետաքսի որդի նմանությամբ. բացի այդ ես իմացել եմ, որ այնտեղ պատրաստում են մետաքսե շատ կտորներ: Դարբիլը Հայաստանի մայրաքաղաքն է և այնտեղ է Սանբատը (Սմբատ 1), Աշոտի որդին (Աշոտ 1): Քաղաքը միշտ գտնվել է անվանի քրիստոնյաների ձեռին, իսկ քրիստոնյաները կազմում են Հայաստանի բնակիչների մեծ մասը, նա է և «Արման թագավորությունը»¹:

Մյուս արաբական աշխարհագիր Իբն-Հաուկալը, որ ապրել է Իստախրիից շատ ավելի ուշ, յուր աշխարհագրական աշխատության մեջ «Գիրք ճանապարհների և թագավորությունների» վերնագրով. համարյա բառացի կերպով բերում է Իստախրիի հիշված տեղեկությունը և իրենից ավելացնում է միայն հետևյալը՝

«Դարբիլում պատրաստվում են շատ մետաքսե հագուստներ: Իսկ ինչ վերաբերում է այդ վերջիններին, ապա նրանք մեծ մասամբ նման են Ռումի երկրում արտադրվողներին, թեև դրանք և ավելի արժեքավոր են: Իսկ ինչ վերաբերում է այն արտադրանքներին, որոնք կոչվում են «Հայկական գործվածքներ», այդ «բուտտ» է², գորգեր, ծածկոցներ, փոքրիկ գորգեր, բարձեր և նստելիքներ. դրանց նմանը չկա երկրի առարկաների մեջ ծայրից ծայր և ամեն ուղղություններով»³:

Մանրամասն տեղեկություններ Դվինի մասին հաղորդում է նաև

¹ Sbe Bibl. Geogr. Arab., հրատ. de Geoe, I, p. 188, ուսերեն թարգմ. Կարաուզովի, «Сборник материалов», вып. XXIX, 1901, էջ 19:

² «Բուտտ», ըստ Կարաուզովի, գործվածքի մեծ կտոր է, որ գցում են գլուխների և ցած է ընկնում ուսերից:

³ Sbe Bibl. Geogr. Arab., հրատ. de Geoe, II, p. 245, ուսերեն թարգմ. Կարաուզովի, «Сборник материалов», вып. XXXVIII, 1908, էջ 22:

10-րդ դարի 2-րդ կեսի արաբական գրող ալ-Մուկադդասին, որը շատ տեղ է հատկացնում քաղաքի նկարագրությանը:

«Դարբիլը», — գրում է նա, — նշանակալի քաղաք է, այնտեղ կա անմատչելի բերդ և մեծ հարստություններ. նրա անունը հին է. նրա մահուդները հռչակավոր են, նրա գետը ջրառատ է. նրան շրջապատում են այգիները. քաղաքը ունի արվարձաններ. նրա բերդը վստահելի է. հրապարակները խաչաձև են. նրա արոտները հիասքանչ. մայր մզկիթը մեծ բլուրի վրա. իսկ նրա կողքին եկեղեցի. քաղաքին հսկում են քուրդերը. քաղաքին կից կա միջնաբերդ. բնակիչների շենքերը՝ քարից և կավից. քաղաքը ունի շատ դարպասներ, ինչպես՝ Բաբ-Կեյ-դար, Բաբ-Թիֆլիս և Բաբ-Անի: Իր բոլոր թրժանիքներով հանդերձ այնտեղ գերիշխում են քրիստոնյաները. իսկ այժմ պակասել է նրա բնակչությունը և բերդը քանդվել է»¹:

Դվինից Տրապիզոն տանող ճանապարհի վրա այդ դարաշրջանում առաջացել են նոր քաղաքներ՝ Անին, Կարսը և Արծնը:

Անին հիշվում է դեռ 5-րդ դարում, իբրև նշանակալի բերդ Կամսարականների իշխանական տոհմի կալվածքում: Հետագայում Շիրակի մարզը նրա հետ և Անի բերդը ձեռք է բերել Աշոտ Մսակերը (826): Հիմնավորվելով Արշարունիքում, Շիրակում և հարակից շրջաններում, Բագրատունիները ընտրել էին իրենց աթոռանիստ նախ Բագարանը, հետո Նրազգավորք-Շիրակավանը և Կարսը, և միայն 10-րդ դարի 2-րդ կեսում, Աշոտ Ողորմածի (953—977) ժամանակ Բագրատունիների մայրաքաղաքը փոխադրված է եղել Անի: Պաշտպանված լինելով արևելքից և հարավից Ախուրյան գետով, արևմուտքից՝ Մաղկաձորի ձորով, և շրջապատված լինելով պատերով ու ամրություններով, որոնք շինել էին Աշոտ 3-րդը 963—964 թվերին և նրա որդի Սմբատ 2-րդը (977—990), նոր մայրաքաղաքը գաղափարով Հայաստանի ամենից ուժեղ քաղաքներից մեկը և միաժամանակ դառավ միջազգային և տարանցիկ առևտրի կենտրոնը:

Ներկայումս այդ քաղաքի մասին կա ակադ. Ն. Մառի կապիտալ աշխատությունը²: նրա կուլտուրական դեմքը որոշված է ղգալի մանրամասնություններով Ն. Մառի սիստեմատիկ պեղումների մի-

¹ Sbe Bibl. Geogr. Arab., հրատ. de Geojc, III, p. 377, նույնպես «Сборник материалов», вып. XXXVIII, Ал-Мукаддасий, Թարգմ. Կարաուլովի, էջ 9—10.

² Н. Я. Марр, Ани, Книжная история города и раскопки на месте городища, Ленинград—Москва, 1934.

չոցով, որոնք կատարուել են 19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբում Անիի ավերակների տեղամասում:

Անիում գտնված իրերը տվել են առատ նյութ վերականգնելու այդ խոշոր առևտրական կենտրոնի կենցաղը իր զարգացած արհեստագործական-արդյունաբերական կյանքով, իշխաններով, կամուրջներով, բաղնիսներով, ջրմուղներով և ուրիշ աշխարհիկ բնույթ ունեցող շինվածքներով ու գեղատեսիլ եկեղեցական կառուցվածքներով:

Արհեստագործական և գեղարվեստական-արհեստագործական արդյունաբերության արտադրանքը, որ գտնված է պեղումների ժամանակ, միանգամայն պարզ լինելով է տվել, որ Անիի և Բագրատունյաց քաղաքների կուլտուրական կյանքը եղել է զարգացման ավելի բարձր աստիճանի վրա, քան Արևմտյան Նվորդայի միջնադարյան քաղաքներում:

Անիից դեպի Արտանուշ և Արծն տանող ճանապարհի վրա դտնվում էր Կարսը, որը սկզբնական շրջանում եղել է բերդ, և սկսված նավահանգիստների հետ միջազգային առևտրի զարգացման լնթացքում հետզհետե մեծացավ և դառավ Բագրատունյաց Հայաստանի գլխավոր առևտրական կենտրոններից մեկը: Աշոտ Երկաթի թագավորության ժամանակ (914—928) Կարսը եղել է նրա եղբոր Աբասին բաժին ընկած կալվածքը, և հետագայում երբ թագավորությունը անցավ Աբասին, Կարսը դառավ նոր թագավորի աթոռանիստը: Մայրաքաղաքի տեղափոխումը Անի, ինչպես հիշվում է վերևում, տեղի է ունեցել Աբասի որդի Աշոտ Ողորմածի ժամանակ: Աբաս 1-ի մյուս որդին Մուշեղը, ինչպես հայտնի է, շճանաչեց Անիի թագավորի իշխանությունը և, այդպիսով, Անիի թագավորության կողքին առաջացավ Կարսի կամ Վանանդի նոր թագավորությունը:

Տրապիզոն տանող ճանապարհի վրա մյուս խոշոր քաղաքը եղել է Արծնը, որը գտնվում էր Թեոդոսուպոլսից (Կարին—էրզերում) ոչ հեռու: 11-րդ դարի բյուզանդական գրող Միքայել Ատտալիատի¹ վկայությամբ, Արծնը, որ հիմնադրված է եղել լքված և ամայացած Թեոդոսուպոլսի մոտ, եղել է շամրացված խոշոր քաղաք, հարմար տեղադրությամբ և այնտեղ վաճառվում էին ապրանքներ, որոնք բերվում էին Պարսկաստանից, Հնդկաստանից և Ասիայի այլ երկրներից:

Հայտնի բյուզանդական ժամանակագիր Գեորգի Կեդրենոսը հաղորդում է նույնպես, որ

¹ J. Laurent, l'Arménie entre Byzance et l'Islam, p. 44; W. Held, Histoire du commerce du Levant, I, p. 44 — 45; Михаил Атталиат, История, Бонн, 1853, էջ 148.

«Արծնը մի բաց քաղաք է բազմամարդ և շատ հարուստ, բազմաբանակ՝ բնակչությամբ: Այնտեղ բնակվում էին տեղական վաճառականներ, նաև մեծ թվով ասորիներ, հայեր և ուրիշ ժողովուրդներ: Շատ լինելով իրենց թվով, նրանք անհրաժեշտ չէին համարում ապրել պարիսպների ներսում, թեև մոտ էր Թեոդոսուպոլիսը, որը մեծ ու հզոր քաղաք էր՝ անահիկ շրջապարիսպով»¹:

Մենք արդեն տեսանք, որ Արծն քաղաքի միջազգային առևտրի և հարստությունների մասին, որոնք աջտեղ կուտակված են եղել Օծովից ու ցամաքից», վկայում է նաև Արիստակես Լաստիվերոսին:

Դեպի Սև ծովը տանող ճանապարհի վրա գտնվում էր Արտանուջ քաղաքը, որը 9—10-րդ դարերում եղել է Բագրատունյաց վրացական ճյուղի աթոռանիստը:

Այդ քաղաքի լայն առևտրական կապերի մասին հետաքրքիր տեղեկություններ է տալիս Կոնստանդին Միրանաժինը² (913—959): Նրա հաղորդումներից երևում է, որ Արտանուջը եղել է իբրև առևտրական կենտրոն՝ Տրապիզոնի, Իբերիայի, Աբխազիայի և Հայաստանի միջև տեղի ունեցող հարաբերությունների համար: Այդ առևտրից, ասում է Կոնստանդինը, Արտանուջի Բագրատունիները ստանում էին զգալի մաքսեր: Հայաստանի քաղաքները, համաձայն մեջ բերված տեղեկությունների, ունեցել են առևտրական հարաբերություններ ոչ միայն Տրապիզոնի հետ, այլև Սև ծովի արևելյան առափնյա մարզերի հետ:

Կուր գետի ավազանում գտնվող քաղաքների բարգավաճ դրությամբ մասին հիշված է վերևում: Անկասկած է, անշուշտ, որ Բագրատունյաց Հայաստանը ունեցել է առևտրական հարաբերություններ նաև այդ քաղաքների հետ: Այդ հյուսիսային քաղաքներից ամենից խոշոր առևտրական կենտրոնը եղել է, անշուշտ, Բերդաա-Պարթավը: 10-րդ դարում, ինչպես երևում է արաբական աղբյուրների հաղորդագրություններից, այդ քաղաքը իր մեծությամբ գերազանցում էր Անդրկովկասի և Ադրբեջանի մնացած բոլոր քաղաքները և բռնում էր մեկ ֆարսախ երկարություն ունեցող տարածություն և մի քիչ փոքր ըստ լայնության³:

«Ինչ վերաբերում է Բերդաաին,— գրում է ալ-Իստախ-

¹ J. Laurent, p. 44; Георгий Кедрин, Хроника Бонн, 1835, II, էջ 577.

² J. Laurent, p. 43; J. Markwart, Osteuropäische und ostasiatische Streifzüge, S. 183; Konst. Porfyr., De administrando imperio, cap. 46.

³ См. В. Бартольд, Историко-географический обзор Ирана, СПб., 1903, էջ 151.

րին, — այդ քաղաքը մեծ է, ունի ֆարսախից ավելի նրկարու-
թյուն և լայնութիւն, առողջ է, բարգաւաճ և շատ առատ ցան-
քերով ու պտուղներով: Իրաքում և Խորասանում Ռեյից և Իս-
պահանից հետո չկա քաղաք ավելի նշանակալի, ավելի բար-
գաւաճ և իր տեղադրութեամբ ու հանդերով ավելի գեղեցիկ,
բան Բերդաան... Բերդաանից արտահանվում է շատ մետաքս:
Մետաքսի որդերին կերակրում են թթի ծառերի վրա, որոնք
ոչ ոքի չեն պատկանում: Այնտեղից շատ մետաքս է ուղարկ-
վում Պարսկաստան և Խուժաստան... Բերդաանի դարպասնե-
րի մօտ, որ կոչվում են «քուրդերի դարպասներ», «ալ-Քյուր-
րի» շուկան, մեկ քառակուսի ֆարսախ մեծութեամբ: Այնտեղ
է հավաքվում ժողովուրդը յուրաքանչյուր կյուրակի և այդտեղ
են հավաքվում մարդիկ ամեն տեսակ երկրներից, նույնիսկ
Իրաքից: Այդ շուկան ավելի մեծ է «Կուլսեր»-ի շուկայից...
նրանց մօտ գանձապահատը գտնվում է մայր մզկիթում,
ըստ սիրիական սովորութեան, իսկ սիրիական գանձապա-
հատները միշտ մզկիթներումն են գտնվում: Այդ գանձապա-
հատը ունի հարթ կտուր, արճիճով ծածկված, երկաթի դռնով
իննը սյուների վրա: Կառավարչի պալատը քաղաքում մայր
մզկիթի կողքին է, իսկ շուկաները՝ քաղաքի արվարձաննե-
րում»¹:

Բերդաանի առևտրական խոշոր նշանակութունը երևում է նաև
նրանից, որ արաբական ալ-Մուկադդասի պատմագիրը անվանում է
նրան այդ մարզի Բաղդադը:

«Բերդաան, հաղորդում է Մուկադդասին, գլխավոր քա-
ղաքը, մեկ քառակուսի, տեղադրված է հարթավայրում, նրա
մօտ գտնվում է հսկայական ամրութիւն. նրա շուկաները
հաճախակի չարդախների հովանու տակ. շուկայի մյուս կող-
մը — մայր մզկիթը. այդ քաղաքը այդ մարզի Բաղդադն է.
նրանց տները գեղեցիկ են՝ թրծված աղյուսից և գիպսից: Հա-
ճելի, գեղեցիկ և պտուղներով հարուստ քաղաք է, Մայր մզկի-
թի սյուների մի մասը աղյուսից ու գիպսից է, իսկ մի մասը —
փայտից»²:

¹ Տե՛ս B. G. A., հրատ. de Geofe, I, p. 182—184 և Կարաուլովի թարգմ.
«Сборник материалов», вып. XXIX, 1901, էջ 7—9: Նման տեղեկութուն առկա է
Բու-Հասնալը իր «Ճանապարհների և թագավորութիւնների գրքում», տե՛ս Կար-
աուլով «Сборник мат., XXXVIII, էջ 86—87:

² Տե՛ս Bibl. Geogr. Arab., III, p. 37. Նաև Կարաուլովի ուսանին թարգ-
մանութիւնը «Сборник материалов», вып. XXXVIII, 1908, էջ 7—8:

Ուշագրավ է նաև Մուկադդասիի և ուրիշ հաղորդագրութիւնը՝

«Բերդաաից,— գրում է նա,— արտահանում են ծածկոցներ և այնտեղ պատահում են հիանալի ջորիններ. կյուրակ յորերը Բերդաաում կազմակերպւում է շուկա, որ կոչւում է «կյուրկիյա»¹, որտեղ հավաքւում են այդ մարզի բնակիչները. նաև ուրիշ շրջաններից... Այդ շուկայում վաճառում են մետաքս և հագուստներ: Չկա նմանը նրանց մոտ պատրաստվող մորթիների և դորգերի, կոշենիլի, ծածկոցների, ներկերի, մրգի, որ կոչւում է «ղուկալ», կասբուլի և «տիրրիխ» ձկան: Նրանց մոտ կա թուղ և շաքանակ, շատ լավ որակի»²:

Մուկադդասիի այդ բերված վկայութիւնը շատ կարևոր է, որովհետև այնտեղ հիշվում է կոշենիլը (=հայ. որդան կարմիր) Արաբատյան դաշտավայրի, կասբուլի (=հավանական է հայկ. «գաւպեն» կամ «կապպին»)՝ Մուշի շրջանի առանձին տեսակ մանանա և վանա լճի հայտնի տառեխ ձուկը, որոնք եղել են և վաճառվել են Բերդաաում: Հիմնվելով Մուկադդասիի այդ հաղորդագրութեան վրա, կարելի է, ինձ թվում է, եզրակացնել, որ Հայաստանի և Անդրկովկասի հյուսիսային քաղաքների միջև գոյութիւն է ունեցել սերտ առևտրական կապ:

Բերդաաի ծաղկմանը ծանր հարված է հասցրել 943 թվին ռուսների արշավանքը: Այնուհետև այդ քաղաքը չէր կարող այլևս ոտի կանգնել ավերածութիւնից: Բերդը և շրջապատը քանդվել էին, բնակիչների թիվը պակասել էր և առևտրի մեջ գերակշռող դեր սկսեց խաղալ հետդհետե Գյանջան, որը 11-րդ դարում դառավ Առանի և հարևան շրջանների գլխավոր քաղաքը:

Միջազգային առևտրի հիմնական ուղեգիծը դեպի Տրապիզոն դնում էր Հայաստանի վերոհիշյալ քաղաքների վրայով: Համաձայն արաբական պատմագիր Մասուդիի վկայութեան, Տրապիզոնում սմեն տարի կազմակերպւում էին տոնավաճառներ, որտեղ հաճախում էին չնրքեղները և մահմեդական, բյուզանդական, հայկական ու այլ վաճառականներ³:

«Տրապիզոնը,— հաղորդում է Իստախրի աշխարհագիրը.— հուլյների տահմանային քաղաքն է. մեր վաճառականները բոլորն էլ

¹ Հայերեն կյուրակի բառից (փոխառութիւն հունարենից):

² S. M. Караулов, «Сборник материалов», XXXVIII, 1908, էջ 14—15. Bibl. Geogr. Arab., III, p. 379.

³ W. Heyd, Histoire du commerce du Levant, I, p. 44; Masoudi, Les prairies d'or, texte et traduction par Barbier de Meynard et Povel de Costeville, Paris, 1861—1877, II, p. 3

առում են այնտեղ. հունական արտադրութեան բոլոր կտորեղենը և դիպակը (փարշան), որոնք ներմուծվում են մահմեդական երկրներից, անցնում են Տրապիզունի վրայով»¹:

Աղբյուրների՝ հիշված և ուրիշ վկայություններից պարզ երևում է, որ քննարկվող դարաշրջանում Տրապիզոնը եղել է Սև ծովի արեւմելյան առափնյա գլխավոր առևտրական կայանը և միջազգային առևտրում խաղացել է բացառիկ դեր:

Բացի վերև հիշված Հայաստանի խոշոր առևտրական կենտրոններից՝ Դվինից, Անիից, Կարսից և Արծնից, որոնք տեղավորված էին գլխավոր կարավանային ճանապարհի երկարությամբ, միջազգային առևտրում նշանակալի դեր էին խաղում նաև Հայաստանի ուրիշ առևտրական կայաններ, որոնք գտնվում էին, գլխավորապես, Հայաստանի հարավային ճանապարհների վրա: Առևտրական կայանների այդ հարավային խումբը գտնվում էր կամ Արծրունիների թագավորության մեջ, կամ մահմեդական ամիրայություններում, որոնք առաջացել էին հին Հայաստանի տերիտորիայում 8-րդ դարի վերջում և 9-րդ դարում: Այդ խմբի կարևորագույն առևտրական կայաններն էին՝ Վանը, Ոստանը, Բերկրին, Արճեշը, Մանազկերտը, Խլաթը, Բաղեշը, Արզնը, Մայաֆարկինը և Ամիդը:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում այդ քաղաքների տիրոջ և բնորոշ առանձնահատկությունների ու նրանց բնակչության լեզուական խնդիրը: Վերևում մենք արդեն նշել էինք, որ Բագրատունացի դարաշրջանի քաղաքները առաջանում էին սովորաբար հին բերդերի մոտ: Ամենից առաջ նրանք հանդիսանում էին իբրև պաշտպանության միջոց և դրա համար շրջապատված էին ամուր պաշտպաններով, որոնց հետևը պատերազմի դեպքում թաքնվում էր շրջակա բնակչությունը: Աղբյուրների մի քանի ցուցմունքներից դուրս գալով, քաղաքային կյանքը ինչպես միջակ, այնպես էլ մեծ քաղաքներում պտույտներ էր գալիս գյուղատնտեսական մթնոլորտում:

Ազգաբնակչության զգալի մասը կազմված էր հողատիրական շահվականությունից՝ խոշոր և մանր, ու նաև քաղաքի բնակիչներից, որոնք ունեին իրենց այգիները, բանջարանոցները և հողագործական տնտեսություն²: Խոշոր քաղաքները, որոնք գործոն մասնակ-

¹ W. Heyd, p. 44; Istachri, Livre des routes et des royaumes, éd. de Goije, I, p. 148

² Որ Հայաստանի քաղաքներում գյուղատնտեսությունը կազմում էր զբաղմունքի կարևոր ճյուղերից մեկը, կախ կողմնակի ցուցմունքներ հայկական պատմագիրների մոտ և Անիի արձանագրություններում: Հմմտ՝ Մաաթեոս Ուռուսյեցի

ցությունն էին ունենում միջազգային առևտրում, միաժամանակ եղե-
նն առևտրական և արհեստավոր բնակչության կենտրոնը։ Շնորհիվ
իրենց տնտեսական լայն կապերի, այդ քաղաքները վարում էին
ծավալուն առևտուր ոչ միայն բյուզանդական և խալիֆայության
ապրանքներով, այլև իրենց արդյունաբերական արտադրանքներով,
որոնք կարելի էր վաճառահանել Անդրկովկասի երկրամասերում և
նրա սահմաններից դուրս գտնվող վայրերում։ Բագրատունյաց Հա-
յաստանի քաղաքների արևելյան տիպի մասին բացատրություննե-
րոված են իմ աշխատության մեջ՝ «Հայաստանի քաղաքները 10-
11-րդ դարերում»¹։ Հիմնվելով Ն. Մառի և Թ. Թորամանյանի Անիում
կատարած բազմամյա աշխատանքների վրա, կարելի է վստահորեն
հղրակացնել, որ ինչպես Անին, այնպես էլ Բագրատունյաց Հայաս-
տանի մյուս մեծ քաղաքները, քիչ էին տարբերվում Առաջավոր
Ասիայի մահմեդականների քաղաքներից։

Պարսկաստանի և Միջին Ասիայի մեծ քաղաքները, ինչպես այդ
երևում է ակադ. Վ. Բարտոլդի հաղորդագրություններից, կազմված
էին երեք մասից, որոնք կոչվում էին «Կուխենդուզ» (միջնաբերդ)
«Հահրիստան» (ինքը — քաղաքը) և «Ռաբատ» (արվարձան)։ Քա-
ղաքներում շահրիստանը շրջապատված էր հատուկ պարսպով և
կազմում էր քաղաքի կենտրոնական մասը։ Այնտեղ մայր մզկիթի
շուրջը տեղավորված էին գլխավոր շուկաները և հենց նրանումն էլ
գտնվում էր «Կուխենդուզ»-ը, այսինքն — միջնաբերդը։ Շահրիստա-
նի պարսպից դուրս գտնվում էր «Ռաբատ»-ը՝ այսինքն՝ արվարձան-
ները կամ քաղաքամերձ մասերը, որոնք համարվում էին քաղաքի
բաղադրիչ մասը և երբեմն շրջապատված էին լինում արտաքին պա-
րսպով։ Շահրիստանում սովորաբար բնակվում էին տիրող դասերը
և բարձր ազնվականությունը, իսկ Ռաբատում՝ առևտրա-արդյունա-
բերական բնակչության մեծագույն մասը և քաղաքացիների ստո-
րին խավերը։ Ռաբատը նույնպես ոմներ իր շուկաները և այնտեղ էին
գտնվում առանձին արհեստավորական ֆաղամասերը։

Ինչպես հայտնի է, ամայացած Անիի ավերակները պահել են
մեղ համար միջնադարյան Հայաստանի մեծ քաղաքների բնույթը
և յուրահատուկ տիպարը։ Եվ շատ հետաքրքրական է, որ այդ հայ-
կական քաղաքները իրենց հատակագծով և արտաքին տեսքով հա-
մարյա ամբողջությամբ համապատասխանում են մուսուլմանական
Արևելքի միջնադարյան քաղաքներին։ Դժվար չէ, ամենից առաջ

¹ Պատմութիւն, Երուսաղեմ, 1860, էջ 121 և 556 (Դավթակի մասին)։ Կ. Կոստանյան
Հիմնական տարեգիր, ՄՊԲ., 1913, էջ 19 և 27 և ուրիշ։

¹ Երևան, 1940, էջ 20—22։

համոզվել, որ պարիսպներով շրջապատված Անիի ներքին մասը
կղել է այդ քաղաքի շահրիստանը, և նա կոչվել է, իրապես, Արիս-
տակես (աստիվերտցու՝ պատմական աշխատության մեջ շահրիս-
տան¹։ Շահրիստանի մեջ գտնվում էր ամրոցը և պալատը, որոնք
համապատասխանում են վերև հիշված «կոփսենդուզ»-ին։ Իսկ «ռա-
լադ» կոչվում էին Անիում, ակներևորեն, շահրիստանին կից գտնվող
արվարձանները, որոնք կազմում էին քաղաքի ամենաընդարձակ
մասը։

Բագրատունյաց Հայաստանի խոշորագույն քաղաքների բնակ-
չության քանակի մասին—Դվինի, Անիի, Արծնի—աղբյուրները տա-
լիս են անուղղակի տեղեկություններ։ Թովմա Արծրունին հաղորդում
է, որ Դվինի երկրաշարժի ժամանակ այնտեղ զոհվել են 70.000
մարդ²։ Համաձայն Գ. Կեդրենոսի հաղորդագրության, Արծն քա-
ղաքը 1049 թվին սելջուկները վերցնելու և այրելու ժամանակ, ոչըն-
չացվել են այնտեղ սրով ու հրով 140.000 մարդ³։ Մատթեոս Ուռհա-
յեցին Արծնում սպանվածների քանակը հաշվում է 150.000 մարդ⁴։
Անի քաղաքում պատմագիրների խոսքով, հաշվվում էր 100.000
բնակիչ և 10.000 տուն⁵։ Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ Անի
քաղաքը Ալփ-Ասլանի կողմից պաշարելու ժամանակ (1064 թ.)
այնտեղ պատարագի արարողություն էին կատարում հազար ու մի
նկեղեցիներում⁶։

Մեջ բերված թվերը, իհարկե, շատ վիճելի են և քիչ հավանա-
կան, բայց նրանք, ինչպես ինձ թվում է, թույլ են տալիս այնուա-
մենայնիվ ենթադրել, որ Բագրատունյաց Հայաստանի խոշոր քա-
ղաքների բնակչության քանակը եղել է զգալի չափով ավելի (10—
20 հազար) Եվրոպայի միջնադարյան քաղաքների միջին քանակից,
և կարելի է, հետևաբար, կարծել, որ բնակչության քանակով նրանք
զգալիորեն գերազանցել են այդ քաղաքներին։

Անիի բնակչության քանակը որոշելիս, սովորաբար ցույց են
տալիս տարածության փոքր չափը, որ քաղաքը տնեցել է պարիսպ-
ների ներսում, ընդամենը 150 դեպյատին. այդ տարածության վրա

¹ Արիստակես Լաստիվերտցի, Պատմութիւն, Տիփիս, 1912, էջ 63 (գլ. 10)։

² Թովմա Արծրունի, 3-րդ, 22, էջ 231. հմտոս Հովհաննես Կաթողիկոս,
էջ 162—163։

M. J. Saint-Martin, Mémoires historiques et géographiques sur l'Arménie,
Paris, 1819, II, p. 205

⁴ Մատթեոս Ուռհայեցի, 1-ին, 73, էջ 121։

⁵ И. Орбели, Развалины, Ани, СПб., 1911, էջ 27.

⁶ Մատթեոս Ուռհայեցի, 2-րդ, 88, էջ 177։

կարող էր, իհարկե տեղավորվել միայն աննշան բնակչություն: Թ. Թորամանյանը¹, որը Անիում և նրա շրջակայքում կատարել է որոնումներ, միանգամայն ճիշտ ցույց է տալիս, որ Անիի բնակչության մեծ մասը ապրել է ոչ թե ներսը, այլ քաղաքի պարիսպներից դուրս: Պարիսպներին հարակից քաղաքի շրջակայքում գտնված ևն տմենուրեք ավերակներ և հետքեր՝ քաղաքային տների, եկեղեցիների, բաղնիսների և հայտնաբերված է ընդարձակ գերեզմանոց՝ տարածությունը ավելի քան մեկ քառակուսի կիլոմետր:

Այսպիսով, բնակչության թիվը 50—100.000 Անիի համար հնարավոր է և միանգամայն թույլատրելի:

ԱՂՅՈՒՐՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բազրատունյաց Հայաստանի տնտեսական կյանքի և Հայաստանից խալիֆայության շրջանները արտահանվող իրերի մասին, որոշ պատահական, բայց շատ հետաքրքիր տեղեկություններ կարելի է գտնել արաբական աշխարհագիրների և պատմագիրների աշխատություններում: Այդ տեղեկությունները բավական մանրամասն բերված էին Վոռանի գրքում՝ *L'Arménie entre Byzance et l'Islam* (էջ 35—42):

Տաբարիի պատմական աշխատության մեջ կա տեղեկություն, որ Հայաստանը իր հացը արահանում էր Բաղդադ², Այդ վկայությունը չափազանց կարևոր է: Նա ցույց է տալիս, որ Հայաստանի ֆեոդալական-գյուղատնտեսական տնտեսությունը ներգրավված է եղել միջազգային առևտրի շրջանառության մեջ:

Իբրև արտահանության գլխավոր առարկա, արաբական հեղինակների մոտ շատ հաճախ հիշվում է «տառեխ» վանա լճի ձուկը և Արաքս ու Կուր գետերի «սուրմախի»-ն (*surmachi*)³: Բնորոշ է, որ միջին դարերում՝ չորացրած և աղը դրած ձուկը եղել է լայն սպառման առարկա, ոչ միայն Արևմտյան եվրոպայում, այլև Արևելքում: Մենք արդեն վերևում տեսանք, որ «տառեխ»-ը վաճառ-

¹ Թ. Թորամանյան, Անին—քաղաք է թե ամրոց, տե՛ս журнал „Этнографическое обозрение“ Тифлис, 1912, кн. XXII, էջ 61—84.

² Laurent, p. 38; Ghazarian M., Armenien unter der arabischen Herrschaft, S. 68; Tabari, éd. de Goeje, Leiden, 1879—93, III, p. 272—275.

³ Istachri, BGA, I, p. 183; Ibn Fakih, BGA, V, p. 296 (շուրմախի). Կառավարի կարծրով «սուրմախի»-ն «շամայա»-ն է, այդ ձուկը շատ յուղոտ ու համեղ է և գործ է ածվում ծխով մշակված վիճակում. տե՛ս Караулов, Сборник материалов, XXIX, էջ 60:

վում էր Բերդաա քաղաքի շուկայում: Այդ ձկան արտահանությունը՝ Միջագետք, Սիրիա և Իրաք հիշվում են Իբն-Հաուկալի, Իստախրիի և Յակուտի մոտ: Իբն-Հաուկալը հաղորդում է նաև «սուրմախի» ձկան արտահանությունը Իրաք և Ռեյ2: Վանա լճում ձկնորսություն կատարելու իրավունքի մասին հետաքրքիր վկայություն կա Բելագորիի մոտ:

«Ինչ վերաբերում է Տիրբիխի լճին,— հաղորդում է նա,— (Հարիբ իբն-Մասլաման) նրան ձեռք չտվեց, և նա (լիճը) մնում էր ազատ մինչև այն ժամանակը, մինչև որ Ջադիրի և Հայաստանի կառավարիչ նշանակվեց Մուհամմեդ իբն Մերվան իբն ալ-Հաֆամը3, որը ձեռք դրեց ամբողջ որսի վրա և այն վաճառում էր, ստանալով դրանից իրա համար մեծ շահույթ. հետագայում այդ իրավունքը նրանից խլեցին»4:

Պետք է նաև նշել, որ Իբն-Հալդունի հարկային ցուցակում նշանակված է, որ Հայաստանը բացի դրամական տուրքերից, պետք է ամեն տարի խալիֆայությանը տար բնաբերքով՝ 20 գորգ, 580 ֆունտ «ռակմ», 10000 ֆունտ աղը դրած ձուկ, 200 չորի և 30 բազն5:

Չափազանց հետաքրքրական են արաբական աղբյուրների տեղեկությունները Հայաստանից շինարարական անտառանյութի արտահանության մասին: Արաբական աշխարհագիր Իբն-ալ-Ցակիհի վկայությամբ՝ Հայաստանի անտառներում ստացվում էին ծառեր ահագին հաստության: Հատկապես կարևոր դեր էր խաղում առևտրի մեջ ընկույզի ծառը6: Արաբատի լանջերում եղած մեծ անտառների մասին հաղորդում է նաև Իստախրին7: Մեջ բերված տվյալների հիման վրա կարելի է, ըստ երևույթին, ենթադրել, որ Բագրատունյաց դարաշրջանում Հայաստանի անտառները բռնում էին դեռևս զգալի տարածություն:

¹ Laurent, p. 39; Ibn Haukal, BGA, II, p. 249; Istachri, BGA, I, p. 190; Jakout, Geographischer Wörterbuch, hrsg. v. Wüstenfeld, 1866—1873, II, S. 458

² Ibn Haukal, BGA, II, p. 241.

³ Մուհամմեդ իբն Մերվանը եղել է Հայաստանի վարիչ 595—705 թ., տե՛ս Lauren, p. 338:

⁴ Баладзори, Книга завоевания стран, перевод Жузе, Баку, 1927, էջ 10.

⁵ A. Kremer, Culturgeschichte des Orients unter den Chalifen. I, S. 359; Ghazarian M. Armenien unter der arabischen Herrschaft, S. 68.

⁶ Laurent, p. 40; Thopischian, Die inneren Zustände von Armenien, 1904, S. 149; Ibn Fakih, BGA, V, p. 125.

⁷ Laurent, p. 40; Thopdshian, Die inneren Zustände von Armenien, S. 150; Istachri, p. 191; Сборник Материалов, вып XXIX, էջ 37.

Դեռևս հնագույն ժամանակներում Հայաստանը հայտնի էր իր նշույզներով: Հայկական նշույզները բարձր էին գնահատվում նաև արաբական ժամանակաշրջանում: Համաձայն Իբն-Հաուկալի հաղորդագրության, հայկական ջորիների նկատմամբ, շնորհիվ նրանց սմբուսության և դիմացկունության, մեծ պահանջ է եղել ամբողջ հորասանում, Իրաքում և Սիրիայում¹:

Արաբական և հայկական աղբյուրները հիշատակում են նաև լեռնային արդյունաբերության արտադրանքի մի ամբողջ շարք. որոնք արդյունահանվում էին Բագրատունյաց Հայաստանում:

8-րդ դարի վերջին քառորդում, ինչպես երևում է Ղևոնդ պատմագրի հաղորդագրությունից, Հայաստանի լեռներում, հավանական է Սպերում, հայտնաբերված են եղել արծաթի հանքատեղեր: Պատմելով առաջին Աբբասյանների ժամանակ ծանր դրամական հարկերի մասին և Հայաստանի թշվառության մասին, որը առաջացել էր փողի և աղնիվ մետաղների պակասության պատճառով, Ղևոնդը վկայում է, որ այդ սարերում արծաթի արդյունահանումը զգալի չափով նպաստեց վերացնելու դրամային սուր ճգնաժամը:

Հայտնի է, որ Հայաստանի հնագույն բնիկները ծանոթ են եղել երկաթի, պղնձի և ուրիշ մետաղների գործադրությանը և արդյունահանմանը: Կասկածից դուրս է, իհարկե, որ երկաթի ու պղնձի հանքերի շահագործումը և հալումը կատարվել է Հայաստանում նաև Բագրատունյաց ժամանակաշրջանում: Յակուտի պատմա-աշխարհագրական բառարանում ձերկաթի հանքատեղեր ցույց են տրված՝ Տուրուբերան և Վարաժնունիք գավառներում, նաև Պալուի մոտ²: Նույն Վարաժնունիքում նաև Գուգարքում և ուրիշ տեղերում եղել է պղնձի հանք³: Ուրիշ հանածոներից աղբյուրներում հիշվում են բորակ և զառիկ (մկնդեղ), որոնց արտահանումը տալիս էր շահույթ:

Վանա լճի շրջակայքում, վկայում է Իբն-Հաուկալը իր «Գիրք ճանապարհների և թագավորությունների» երկում, արդյունահանվում է նատրիումի աղ, որը արտահանվում է Իրաք և Զազիր հացթուփների համար:

Այդ լճի մոտ են գտնվում զառիկի հանքերը, որը նույնպես

¹ Laurent, p. 39; Ibn Haukal, BGA, II, p. 248; Сборн. мат., XXXVIII, էջ 97

² Ghazarlan M., S. 74—75; Laurent, p. 41; Jakout, I, p. 455, 480, IV p. 92.

³ Laurent, p. 41; Ghazarlan M., S. 74—75; Jakout, I, p. 455; Hübschmann, Ortsnamen, S. 164.

արտահանվում է ուրիշ տեղեր, այդտեղ արդյունահանվում է կարմիր և դեղին զառիկ¹:

Համաձայն Յակուտի և Իբն-ալ-Ֆակիհի տվյալների, Հայաստանում արդյունահանվում էին բացի այդ՝ լեռնային ձյուֆ, սնդիկ, պղնձարջասպ, արծաթ և արճիճ²: Մի քանի շրջաններում հիշվող աղահանքերից, ամենից մեծ նշանակություն են ունեցել, անշուշտ, Կողբի աղահանքերը:

Մետաղների արդյունահանման և մշակման մասին տեղեկություններ են տալիս նաև հայկական աղբյուրները: Մովսես Կաղանկատվացու «Աղուանից պատմութեան» մեջ հիշվում են վարպետներ, որոնք ունեցել են հասկացողություն ոսկու լվացման, արծաթի, երկաթի արդյունահանման և պղնձի մշակման մասին³:

Վերամշակող արդյունաբերության բազմատեսակ կերտվածքների մասին վկայում են ոչ միայն հին հայկական հեղինակները, այլև այն հնության առարկայական մնացորդները, որոնք գտնված են պեղումների ժամանակ, գլխավորապես Անիում: Անիում կատարված պեղումների միջոցով, ինչպես հայտնի է, հայտնաբերված են մեծ քանակությամբ իրեր՝ կավագործական, դարբնոցային, զինագործական, ոսկերչական, մանածագործական և այլ արհեստագործական արտադրանքներ:

Այդ իրերը, որոնց մեծագույն մասը ունեցել է տեղական ծագում, ցույց են տալիս Հայաստանում բազմատեսակ արհեստների զարգացումը: Իժմախտաբար միշտ չի կարելի տարբերել, թե այդ իրերից որոնք են վերաբերում Բագրատունյաց ժամանակին և ավելի ուշ դարաշրջաններին:

Հիշված արդյունաբերական ճյուղերից ամենից մեծ նշանակություն ունեն մանածագործական արդյունաբերությունը: Արաբական աղբյուրների տվյալներով, Բագրատունյաց ժամանակաշրջանում այդ ճյուղը զարգանում էր անսովոր արագությամբ և օգտագործվում էր ոչ միայն տեղական պետքերի, այլև լայն արտաքին շուկայի համար: Զանազան տեսակ հայկական գործվածքների և նրանցից պատրաստված կտորեղեն իրերի մասին, հատկապես, Դվին քաղաքի, տեղեկություններ կան՝ Իրն Հաուկալի, Իստախրիի և ուրիշ

¹ Ibn-Haukal, BGA, II, p. 249; Сборник материалов, XXXVIII, էջ 97

² Laurent, p. 41; Jakout. I, p. 455; Ibn Fakih, BGA, V, p. 297; համեմատե՝ Караулов, Сборник материалов, XXVI, 1902, էջ 39.

³ Մովսես Կաղանկատվացի, օուս. թարգմ. Պատկանյանի, սպր. 1861, 2-րդ. 16, էջ 131:

արաբական հեղինակների մոտ¹։ Այդ վկայություններում հիշվում են Դվինի գործվածքները, marizi անունով, գոտիները, 1—10 դինար արժողությամբ, չալմաները (տիուբան), ծածկոցները, բարձերը, բարձի երեսները, վարագույրները և բազկաթոռի կտորներ։ Ամենից արժեքավոր կտորները եղել են բրդից և մետաքսից։ Այդ կտորեղենները մանրամասն հիշվում են Իբն-Հաուկալի հետևյալ վկայություններում²։

1. «Դարիլում պատրաստում են բմբուլի և բրդի գործվածքներ՝ գորգերի, բարձերի, նստելիքների, ժապավենների և հայկական ուրիշ տեսակ արտադրանքների համար, որոնք ներկված են լինում կարմիր ներկով»³։

2. «Այդ քաղաքներում և նրանց միջև գտնվող շրջաններում կան ապրանքներ, արտահանության իրեր, տարբեր տեսակի անհրաժեշտ անասուններ, ոչխարներ և կտորեղեն, որոնք արտահանվում են զանազան երկրներ, որտեղ նրանք հայտնի էին և հռչակ ունեին, ինչպես, օրինակ, ժապավենները, որ պատրաստվում էին Սալամասում և ծախվում էին՝ հատը մեկից մինչև տասը դինարով. և ոչ մի տեղում նմանը չկա։ Հիշված հայկական կտորեղենը պատրաստվում է Դարիլում։ Մերանդում, Թավրիզում, Դարիլում և հայկական շրջաններում պատրաստվում են հայկական նստելիքներ և գորգեր, որոնք հայտնի են հայկական «մեխֆուր» անվան տակ։ Դրանց նմանը շատ քիչ կա այն բոլոր երկրներում, որտեղ պատրաստվող գործվածքները նմանություն ունեն հայկական արտադրությանը։ Նմանապես Հայաստանում պատրաստվում են՝ հագուստներ, շալեր և ծաղկավոր ծածկոցներ, որոնք պատրաստվում են Մայաֆարկինում և Հայաստանի ուրիշ տեղերում»⁴։

Դվինում պատրաստվում էր նաև ծաղկավոր երեսներանգ մետաքսի կտոր՝ bozjun⁵։ Հայաստանի մանածագործական ապրանքները արտահանվում էին ոչ միայն խալիֆայության արևելյան շրջ-

¹ Laurent, p. 41; Ibn-Haukal, BGA, II, p. 244—246: Сборник материалов, XXXVIII, էջ 95—97; BGA., I, էջ 188 և ուրիշ։ Իստախրիե հաղորդում է, որ Դարիլ քաղաքում պատրաստում էին բրդի հագուստներ և գորգեր, բարձեր, ժապավեններ և հայկական արտադրության այլ իրեր»։ Կараулов, Сборник материалов, XXI, էջ 19։

² Sб'ս Сборник материалов, XXXVIII, էջ 92—BGA, II, p. 244, Հմմտեալ Մուկադդասիի համապատասխան հաղորդումները, Сборник материалов, XXXVIII, էջ 14—BGA, III, էջ 380։

³ Сборник материалов, XXXIII, էջ 94—95 = BGA, II, p. 246։

⁴ Kremer Alf., Culturgeschichte des Orients, I, S. 342։

շանները, այլև Բյուզանդիա, Կրեմերի ցուցմունքից, որը հիմնված է արարական աղբյուրների վկայությունների վրա, երևում է, որ միջազգային առևտրի գլխավոր նավահանգստային կենտրոնում՝ Տրապիզոնում վաճառվում էին հայկական հիանալի մետաքսե կտորեղեններ՝ dybag և bozjun, նաև ուրիշ կտորներ¹։ Շքեղ, մետաքսով և ոսկով բանված, հագուստների, բազկաթոռների համար՝ պատկերավոր և ծաղկազարդ հիանալի կտորների մասին կա վկայություն Հովհաննես կաթողիկոսի մոտ²։ Ոսկով (կլապիտոն) և մետաքսով կարված հագուստ գտնված է, ինչպես հայտնի է, Անիում 1908 թվի պեղումների ժամանակ³։

Այդ բոլոր տվյալները վկայում են ինչպես մանածագործական արդյունաբերության զարգացման, այնպես էլ նրա արտադրանքի արտահանումը արտաքին շուկաները։

Պետք է նաև հիշատակել, որ իբրև արտահանության կարևոր ապրանք եղել են, ըստ երևույթին, նմանապես հայկական գորգերը։ Վերևում ցույց էր տրված, որ Իրն-Հալոունի հարկային ցուցակում նշված է, որ խալիֆայությունը Հայաստանից ստանում էր տարեկան 20 գորգ։ Հայկական գորգերը, ինչպես երևում է ակադ. Վ. Բարտոլդիի ցուցումից, ունեին մեծ հռչակ. նորա հիշվում են ընծաների թվում, որ ուղարկել էր Ղազնեխտյան սուլթան Մահմուդը Կաշգարի Կադրը խանին⁴։

Այդ վկայությունները հաստատում են, ինչպես ինձ թվում է, Հայաստանի գորգագործության նշանակությունը արտահանության համար։

Բազրատունյաց Հայաստանի մանածագործական արդյունաբերության զարգացմանը նպաստում էին, անշուշտ, հիանալի ներկերը, որոնք մեծ քանակությամբ գտնվում էին Հայաստանում։

Հոմական, հռոմեական և հին-հայկական աղբյուրների հաղորդագրություններից մենք գիտենք, որ Հայաստանը դեռևս հին ժամանակներում հայտնի էր իր հանքային և բուսական ներկերով։ Ստրաբոնը իր աշխարհագրության մեջ (9-րդ, 14, 9) հաղորդում է, որ Սիսապիրիտիսում (Սպերում) կա «մետաղ սանդիկ (sandix), որ կոչվում է նաև հայկական ներկ և նման է ծիրանին»։ Պլինիոսի մոտ հիշվում են խրիզոկոլլից պատրաստվող orocitis ներկը և armenium

¹ Kremer Alf., Culturgeschichte des Orients, I, S. 342.

² Հովհաննես կաթողիկոս, Տփլիս, 1912, էջ 198, 210։

³ И. Орбели, Развалины Ани, 1911, էջ 47։

⁴ В. Бартольд, Историко-географический обзор Ирана, СПб., 1903.

քարը՝ Մովսես Խորենացուն վերագրվող աշխարհագրության մեջ հիշվում է կիստորը¹։ Արաբական ժամանակաշրջանում մեծ հռչակ ունեւ հայկական որդան կարմիր ներկը, որը ստացվում էր Արատյան հովտում։

Արաբական աղբյուրներում այդ ներկը կոչվում էր «կիրմիզ»²։ Հայկական որդան կարմիրը, ինչպես ցույց է տրված վերևում, վաճառվում էր Բերդաա քաղաքի շուկայում։ Համաձայն Իստախրիի հաղորդագրության, Բերդաաից արտահանվում էր Հնդկաստան և ուրիշ երկրներ մարենա ներկը³։ Որովհետև որդան կարմիրը և մարենան բարձր էին գնահատվում, կարելի է ենթադրել, որ այդ ներկերը, որոնք մեծ համբավ ունեին, եղել են Հայաստանի արտահանության ամենաշահավետ ապրանքներից մեկը։ Heyd-ի կարծիքով, որդան կարմիրը, ըստ երևույթին, գործադրությունն ունեւ նաև Բաղդադում, մետաքսե գործվածքները ներկելու համար, որոնք «կիրմիզ» անվան տակ արտահանվում էին Նվրոպա⁴։ Ներկարարական արհեստը, հատկապես, որդան կարմիրով ներկելը տարածված էր, իհարկե, նաև Հայաստանում։

Ներկարարական արհեստի ամենախոշոր կենտրոնը եղել է, ըստ երևույթին, Արտաշատը, որին Բելագորին տալիս է Կիրմիզ անունը, այսինքն՝ որդան կարմիրի ներկատների քաղաք⁵։

Ինչպես տեսնում ենք, Բագրատունյաց Հայաստանում առևտրի և արդյունաբերության բարգաւաճ դրության մասին ոչ մի կասկած չի կարող։

ՔԱԳՐԱՏՈՒՆՅԱՆ ԳԱՐԱՇՐՋԱՆՈՒ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԸ

Քաղաքների մեծանալու և այնտեղ արդյունաբերության զարգացման կապակցությամբ, բնականաբար, առաջ է գալիս հարց

¹ Մովսես Խորենացի, *Վեհերիկ*, 1843, էջ 607։

² Istachri, BGA, I p. 188; Ibn Fakih, BGA, V, p. 297; համեմատե՛ս Караулов, Сборник материалов, XXIX էջ 19 և XXXI, էջ 39

³ W. Heyd, Histoire du commerce du Levant, II, p. 609; Istachri BGA, I, p. 190; համեմատե՛ս Караулов, Сборник материалов XXIX, էջ 25 Heyd-ի մոտ Բերդաա-Պարթավից արտահանվող մարենան (rubia tinctorum), անվանված է կշեռի (որդան կարմիր)։ Հայաստանում մարենայի առատ լինելու մասին կա ցուցմունք նաև Իբն-ալ-Ֆակիրի մոտ, XXXI, էջ 39 = BGA, V, էջ 297։

⁴ W. Heyd, p. 609.

⁵ Laurent, p. 42; Баладзори, перевод Жузе, էջ 10.

այդ քաղաքների ներքին կազմակերպության և քաղաքային բնակչության սոցիալական դրուժյան ու, մասնավորապես, արհեստավորության մասին; Դժբախտաբար, այդ խնդրին անհնարին է տալ ճիշտ ու որոշակի պատասխան, որովհետև Հայաստանի քաղաքների ներքին կյանքի մասին մենք համարյա տվյալներ չունենք:

Հետաքրքիր է այդ տեսակետից, որ դեռևս Մովսես Խորենացին, որը արտացոլել է ֆեոդալական-հողատիրական ազնվականության հայացքները, քաղաքացիներին դասել էր ֆեոդալական ազնվականությանը հետո երկրորդ տեղը, գյուղացիներից բարձր: Գյուղական աղգաբնակչությանը կարգադրված էր, ինչպես վկայում է Խորենացին, մեծաբել քաղաքացիներին ազնվատոհմիկ իշխաններին հավասար չափով¹:

Հովհաննես կաթողիկոսի մոտ ևս կա ցուցում, որ Ներսես 3-րդ կաթողիկոսը (641—661), երբ էջմիածնի մոտ շինեց Զվարթնոց եկեղեցին, բնակեցրեց այն տեղում բազմաքանակ բնակչություն «քաղաքային հիմունքներով»²: Մեջ բերված հաղորդագրությունները վկայում են քաղաքային բնակչության ինչ-որ արտոնությունների և առանձնահատուկ իրավունքների մասին, բայց ինչում էին կայանում այդ արտոնությունները և ինչ կազմակերպություն ունեին այդ քաղաքները, դժվար է պարզել շնորհիվ աղքատիկ տվյալների:

Հիմնվելով 13-րդ դարի չհրատարակված արձանագրությունների վրա, որտեղ հիշվում են Անի քաղաքի «եռիցանի» կամ «ավազանի»-ները, Մառը հնարավոր է գտել եզրակացնելու, որ Անի քաղաքում «կազմվում էր» կամ թերևս և կազմվել էր ինքնուրույն քաղաքային կյանք՝ քաղաքային ավազանու գլխավորությամբ, օրենսդրական իրավունքներով քաղաքի սահմաններում: Նա ենթադրում էր, բացի այդ, որ «ամեն ինչ թեքում է այն բանին, որպեսզի կարելի լինի պնդել, որ հենց Անին է եղել այն բովը, որտեղ հայկական ֆեոդալիզմը վերածվել էր, դեռևս իր հայրենիքում, հայկական բուրժուական աշխարհի»³:

Պետք է նշել, որ ավազներ հիշվում են նաև Դվին քաղաքում 9 և 10-րդ դարերի արաբական աղբյուրներում: Այսպես, Բելազորի պատմագիրը (9-րդ դարի վերջում), որը նկարագրել է Հաբիբ իբն-Մասլամայի հաղթական կռիվները Հայաստանում և Վրաստանում, հաղորդում է, որ «Դվին քաղաքի ավազները, այդ թվում Բարմակ իբն-Արզուլլան», պատմել են իրեն, որ Հայաստանից Հաբիբը գնա-

¹ Моисей Хоренский, թարգմ. էմինի, II, 8, էջ 61.

² Հովհաննես կաթողիկոս, էջ 88:

³ Н. Я. Марр, Ани, Л—М., 1934, էջ 35:

ցել է իր զորքերով Վրաստան¹։ Իսկ արաբական աշխարհագիր Իբն-Հաուկալը իր «Դիրք ճանապարհների և թագավորությունների» աշխատության մեջ, որը գրված է 977/8 թ., հաղորդում է նույնպես, որ Դարիլ քաղաքը անցյալ ժամանակներում եղել է Բագրատունի թագավոր Սմբատ 1-ի և նրա նախորդների ձեռքում և «որ քաղաքը գտնվել է բնակիչներից ականավորների իշխանության տակ»։

Զբացահայտվ մեջ բերված տեղեկությունների կարևորությունը, ես գտնում եմ, որ համեմայն դեպս, ավելի քան հավանական է, որ Բագրատունյաց դարաշրջանի քաղաքները, որոնք պատկանում էին խոշոր ֆեոդալներին և մեծ մասամբ դառել էին նրանց աթոռանիստը, գտնվում էին այդ սենյորների իշխանության տակ և ունեին սենյորական վարչակարգ։ Կառավարվում էին նրանք, ինչպես և արևելքային եվրոպական քաղաքները, սենյորային վարչարարությամբ, պաշտոնական անձնավորություններով, որոնք նշանակվում էին իրենց տերերի՝ Բագրատունի թագավորների և այլ խոշոր սենյորների կողմից։ Հայկական քաղաքների գլխավոր պաշտոնյաներից մեկը, ինչպես երևում է Անի քաղաքի արձանագրություններից, եղել է մուհթասիպը (արաբ. muhthasib), որը գանձում էր քաղաքային տուրքերը և հարկերը², ուներ ըստ երևույթին, հսկողություն շուկաների, կշիռների և չափերի վրա և կատարում էր նաև ոստիկանական ուրիշ պարտականություններ³։ Բագրատունյաց Հայաստանի քաղաքներում մուհթասիպների հիշատակումը, որ արաբական քաղաքների սովորական պաշտոնական անձինքն էին, կարող է ծառայել, ինչպես ինձ թվում է, իբրև անուղղակի ցուցում, որ իր տիպով և իր ներքին կազմակերպության էությունամբ հայկական քաղաքները ունեցել են զգալի նմանություն խալիֆայության քաղաքներին։

Քաղաքների տնտեսական զարգացման և արհեստավոր բնակչության շատացման կապակցությամբ հարց է ծագում քաղաքային արհեստավորության սոցիալական դրության և Բագրատունյաց Հայաստանում արհեստավորների համքարային կազմակերպության մասին։ Կոնկրետ պատմական տվյալների բացակայության պատճառով, այդ խնդրի լուսաբանումը ևս չափազանց դժվար է։ Անուղղակի կերպով կարելի է միայն կռահել, որ հայ արհեստավորների

¹ Стр. Баладзори, Книга завоевания стран, перевод Жузе. Баку, 1927, էջ 11

² Сборник материалов, XXXVIII, էջ 92—93; տե՛ս նաև ВГА, II, p. 245.

³ Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, սՊբ. 1913, էջ 21. 221.

⁴ J. Karst, Sempadscher Kodex, 1907, I, S. 162, և II, S. 233; Kriemel, Culturgeschichte des Orients. I, S. 423—426.

կորպորատիվ համքարական կազմակերպությունը, որ գոյություն է ունեցել ուշ ժամանակներում, իր արմատներով հասնում է հին դարերի քաղաքների արդյունաբերական զարգացման դարաշրջաններին¹։ Բյուզանդիայի և արաբական խալիֆայության ներքին կյանքի ուսումնասիրություններից երևում է, որ արհեստավորների խումբային միավորումներ գոյություն են ունեցել Բագրատունիների ժամանակաշրջանում՝ ինչպես բյուզանդական կայսրության, այնպես էլ խալիֆայության քաղաքներում²։

Ուրեմն կարելի է ենթադրել, որ արհեստավորների նման կազմակերպություններ եղել են, հավանորեն, և Բագրատունյաց Հայաստանում, որը գտնվում էր այդ պետությունների կուլտուրական ուժեղ ազդեցության տակ։ Այդ ենթադրությունը, իհարկե, միայն սլարզ կոհանում է, և կարելի է հուսալ, որ խնդրի ավելի հիմնավորված պարզաբանումը հնարավոր կլինի տալ միջնադարյան հայկական քաղաքների շհրատարակված արձանագրությունները հրապարակելուց հետո։

ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

Հռոմեա-պարթևական և բյուզանդական-սասանյան դարաշրջաններում միջազգային տարանցիկ ճանապարհը, որ միացնում էր էկրատանան Սև ծովի նավահանգիստների հետ, գնում էր Ալաշկերտի դաշտավայրի վրայով՝ Արտաշատ (կամ Դվին) — Փարախոտ — Ջողկերտ — Բագավան — Արամանա — Գաղտառիճ — Սատաղ ուղեգծով։ Այդ ճանապարհից ոչ հեռու գտնվում էին հին հայկական քաղաքները՝ Երվանդաշատը և Զարեհավանը։ Բագրատունյաց ժամանակաշրջանում կարավանային երթի և միջազգային առևտրի համար գերակշռող նշանակություն ունեւր ոչ թե այդ ճանապարհը, այլ նոր մագիստրալը, որը գնում էր խալիֆայությունից դեպի Տրապիզոն՝ Անի, Կարս և Արծն քաղաքների վրայով։

Հիմնական տարանցիկ ճանապարհի տեղափոխմամբ է հենց բացատրվում այդ նոր քաղաքների արագ բարձրացումը և այն աչքի ընկնող դերը, որպիսին նրանք ունեին միջազգային առևտրում։

¹ Ахвердов, Тифлисские амкары, Тифлис, 1933, էջ 4—9

² Christo M. Macri, L'organisation de l'économie urbaine dans Bysance, sous la dynastie de Macédoine, Paris, 1925; Kremer Alf., Culturgeschichte des Orients, II. S. 186—188.

Կարսից նոր մագիստրալը գնում էր դեպի Արծն — Թեոդոսուպոլիս — Տրապիզոն, ամենայն հավանականությամբ, այժմյան Սարիղամիշի վրայով։ Կարսը եղել է միաժամանակ կարևոր հանգուցային կայան և մշտական առևտրական կապ է ունեցել Արտանուջի վրայով՝ Սև ծովի արևելյան նավահանգիստների հետ, և Արտահանի շրջանի վրայով՝ Վրաստանի և Աբխազիայի հետ։

Բացի հիշված հիմնական մագիստրալից, եղել է նաև մյուս՝ հարավային ճանապարհը, որը գնում էր խալիֆայության հյուսիս-արևմտյան մարզերից և այժմյան պարսկական Ադրբեջանից դեպի Միջագետք, Սիրիա, Փոքր Ասիա և Պոնտոս։ Այդ ճանապարհը, որ Բյուզանդիայի հետ միջազգային առևտրի համար ունեւ համեմատաբար երկրորդական նշանակություն, նկարագրված է արաբական աղբյուրներում, գլխավորապես՝ Իստախրիի, Իբն-Հաուկալի և Մուկադդասիի մոտ։

ՃԱՆԱՊԱՐՀԸ ԱՐԴԱՔԻԼԻՑ ԴԵՊՈՒ ԱՄԻԴ.

1. Ալ-Իստախրի, «Сборн. мат.», XXIX, էջ 33—35 = BGA, I, p. 194՝

Արդաբիլից մինչև Մարաղա 40 ֆարսախ. Մարաղայից մինչև Դահարական [Դեհարկան], մզկիթով քաղաքը, երկու չվերթ. նրանից՝ մինչև Ուրմիա քաղաքը երկու չվերթ. Ուրմիայից մինչև Սալմաստ 2 չվերթ, Սալմաստից մինչև Խոյ 7 ֆարսախ. Խուվեյից [Խույից] մինչև Բերկրի 30 ֆարսախ. Բերկրից մինչև Արճեշ մեկ օր. Արճեշից մինչև Խիլաթ [խիլաթ] երեք օր². Խիլաթից մինչև Բիթլիս մեկ օր. Բիթլիսից մինչև Միաֆարկին [Մայաֆարկին] երեք օր³ և Միաֆարկինից մինչև Ամիդ երկու օր։

2. Իբն-Հաուկալ «Сборник мат.», XXVIII, էջ 104 = BGA, II, p. 253—254՝

«Արդաբիլից մինչև Մարաղա մոտավորապես 40 ֆարսախ. Մարաղայից մինչև Ուրմիա չճի վրայով մոտ 20 ֆարսախ, իսկ լճափով մոտ 30 ֆարսախ. Ուրմիայից մինչև Սալմաստ 2 չվերթ. Սալմաստից

¹ Ավերդդ չեմ համարում նշել Կարաուլովի մոտ յույց տրված ցուցանիների էական տարբերակները [Բուլոնի ցուցակը—A, Բեուլենի ցուցակը—B, Գոտանյան հատվածները], որոնց պատճենները տվել է Միլլերը—C. C տարրերակում ճերանից բառից հետո ունեն ճերանից մինչև Թավրիզ 2 չվերթ. այդտեղից մինչև Մարանդ 2 չվերթ և Մարանդից մինչև Սալմաստ 1 չվերթս։


² A և B—ամեկ օրս։

³ C.—«Բիթլիսից մինչև Արզան—2 օր և Արզանից մինչև Միաֆարկին—1 օր»

մինչև Խուլի [խոյ]—9 ֆարսախ. Խոյից մինչև Բերկրի—30 ֆարսախ. Բերկրից մինչև Արճեշ—երկու օրվա ճանապարհ. Արճեշից մինչև Խիլաթ [խլաթ]—3 օր. Խիլաթից մինչև Բիթլիս—3 օր. Բիթլիսից դեպի Արղան մինչև Միաֆարկին [Մայաֆարկին] 4 օր. Մայաֆարկինից մինչև Ամիդ—2 օրվա ճանապարհ:

3. Ալ-Մուկադդասի, «Сборник матер.» XXVIII, էջ 18=BGA,

III



«Արղաբիլից մինչև Մեյանիշ 2 շվերթ. ...Մեյանիշից մինչև Խոնաշ մի շվերթ. այնուհետև մինչև Կուր-սեբե մեկ շվերթ. հետո մինչև Մարաղա մեկ շվերթ. այդտեղից մինչև Խարրական կամ մինչև Ուրմիա երկու-երկու շվերթ. հետո մինչև Սալմաստ նույնքան. այնուհետև մինչև Խուլի [խոյ] մեկ շվերթ. այդտեղից մինչև Բերկրի 5 շվերթ. այնուհետև մինչև Արճեշ 2 շվերթ. հետո մինչև Խիլաթ կամ մինչև Բիթլիս երեք-երեք շվերթ. Բիթլիսից Ամիդ կամ Միաֆարկին չորս-չորս շվերթ»¹.

¹ IX դարի կեսի դրոշ, Իրն-խորդադրնյի մոտ առաժույթյունները Մարաղայից դեպի Խոյ ցույց են տրված ֆարսախներով, [Մարաղայի] դեպի Դեհարկան 11 ֆարսախ, այնուհետև դեպի Բավրիզ 9 ֆարսախ. հետո դեպի Մարանդ 10 ֆարսախ. հետո դեպի ալ-Խան 4 ֆարսախ, վերջապես, դեպի Խոյ 6 ֆարսախ, տե՛ս «Сборн. мат.» XXXII, էջ 9=BGA, VI, էջ 120.

Այդ հաղորդագրությունների ուշադիր քննությունը հնարավորություն է տալիս եզրակացնել, որ Արդարիւից դեպի Մարաղա ճանապարհը գնում էր, ինչպես ցույց է տրված Մուկադդասիի մոտ, Մեյանիջի, Խունաչի և Կուլ-սերեի վրայով. իսկ Մարաղայից դեպի Խուվեյ կամ Խոյ կարելի էր գնալ երեք ուղղությամբ՝ 1. Մարաղայից դեպի Դեհարկան, և հետո Ուրմիա լճով Ուրմիա քաղաքը և այդտեղից Սալմաստի վրայով դեպի Խոյ: 2. Մարաղայից լճափով հարավային և ապա հյուսիս-արևմտյան ուղղությամբ Ուրմիա քաղաքը և այդտեղից Սալմաստի վրայով դեպի Խոյ և 3. Մարաղայից դեպի Դեհարկան և այդտեղից Թավրիզի և Մարանդի վրայով դեպի Խոյ:

Կարաուլովի կարծիքով, արաբների մոտ մեկ օրվա ճանապարհը հավասար էր 5—7 ֆարսախ, այսինքն՝ 30—40 կմ.¹ Առևտրական ճանապարհը Խոյից դեպի Ամիդ գնում էր դեպի Բերկերի, ըստ երևույթին, Կոթուրի լեռնանցքով և այդտեղից Վանա լճի հյուսիսային ծովեզրով դեպի Խլաթ և Խլաթից Բիթլիսի ու Ֆարկինի վրայով. դեպի Ամիդ — այժմյան Դիարբեքիր:

Արճեշից սկսած, հիշված ճանապարհը ունեցել է ճյուղավորում, որ հայտնի է հայկական աղբյուրներից: Այդ ճյուղը գնում էր դեպի Փոքր Ասիա հետևյալ կայարանների վրայով՝ Արճեշ — Մանադկերտ — Խնուս — էրզերում — Երզնկա և Սիվազ:

Վերոհիշյալ աշխարհագրոնների մոտ մանրամասն ցույց է տրված նաև Մարաղայից դեպի Դվին գնացող ճանապարհի ուղղությունը:

ՃԱՆԱՊԱՐՀԸ ՄԱՐԱՂԱՅԻՑ ԴԵՊԻ ԴՎԻՆ

1. Ալ-Իստսիսի, «Сборник матер.», XXIX, էջ 35 = BGA, I, p. 194՝

«Մարաղայից մինչև Ուրմիա 30 ֆարսախ. Ուրմիայից մինչև Սալմաստ 14 ֆարսախ. Սալմաստից մինչև Խուվեյ [Խոյ] 7 ֆարսախ. Խուվեյից մինչև Նաշավա [Նախիջևան] 3 օր և Նաշավայից մինչև Դաբիլ [Դվին] 4 չվերթ»:

2. Իբն-Հաուվալ, «Сборн. матер.», XXVIII, էջ 104 = BGA, II, p. 254՝

«Ճանապարհը Մարաղայից դեպի Դաբիլ՝ Ուրմիայի և Սալմաստի վրայով դեպի Խուվեյ—53 ֆարսախ. Խոյից դեպի Նաշավա—5 օր. իսկ Նաշավայից դեպի Դաբիլ [Դվին]—4 չվերթ»:

¹ Տե՛ս «Сборн. мат.», XXIX, էջ 59, ծանոթ. 21:

3. Ալ-Մուկադդասի, «Сборн. матер.», XXXVIII, էջ 17—BGA, III՝

«Դաբիլից մինչև Նաշավա 4 չվերթ. մինչև Խուվեյ երեք օրվա ճանապարհ. մինչև Սալմաստ—2 չվերթ. այնուհետև մինչև



Ուրմիա 1 չվերթ. հետո Խարրականից 2 չվերթ. այնտեղից մինչև Մարաղա նույնքան»:

Իրն-Խորդադրեյի մոտ կա, բացի այդ, հաղորդագրություն Մարանդից Նաշավայի վրայով դեպի [Դվին] Դաբիլ զնացող ճանապարհի մասին՝

«Մարանդից մինչև [գետի] հովիտը 10 ֆարսախ. այդտեղից մինչև Նաշավա 10 ֆարսախ. այնուհետև մինչև Դաբիլ 20 ֆարսախ»¹:

«Զվերթը» կամ «մանգիլը», ինչպես ցույց է տվել Մարկվարտը իր պատմական-աշխարհագրական աշխատություններում, արաբական աշխարհագիրների մոտ նշանակում է ոչ թե մի օրվա ճանապարհ, այլ կայարանային տարածությունը — մոտավորապես 4 ֆարսախ²: Սակայն, փաստորեն, բերված իտիներարիայում «շըվերթ»-ը կամ «մանգիլ»-ը եղել է հավասար ոչ թե 4, այլ 5 ֆարսախի, իբն-հորդադբեյի և Կոդամայի մոտ «Նաշավաից մինչև Դաբիլ» հեռավորությունը ցույց է տրված 20 ֆարսախ, իսկ Խտախրիի, Իբն-Հաուկալի և Մուկադդասիի մոտ — 4 շվերթ: Ուստի, միանգամայն ակնհերե է, որ Նախիջևանից դեպի Դվին «շվերթ»-ը կամ «մանգիլ»-ը հավասար է եղել ոչ թե 4, այլ 5 ֆարսախի, ինչպես այդ ճիշտ ցույց է տվել Կարաուլովը:

Արաբական աշխարհագիրների՝ Խտախրիի, Իբն-Հաուկալի և Մուկադդասիի մոտ մանրամասն ցույց է տրված նաև Դվինից դեպի Բերդաա կամ Պարթավ զնացող ճանապարհը, որով Բագրատունյաց Հայաստանը կապված է եղել արևելյան Անդրկովկասի հետ, այժմյան Ադրբեջանի: Այդ հյուսիսային գիծը, նրանց նկարագրությամբ, հանդիսանում է հետևյալ կերպով՝

ՃԱՆԱՊԱՐԶԸ ԴՎԻՆԻՅ ԴԵՊԻ ՊԱՐԹԱՎ

1. Ալ-Խտախրի «Сборн. матер.», XXIX էջ 33=BGA, I, p. 193՝

«Բերդաաից մինչև Կալկատուս 9 ֆարսախ. Կալկատուսից մինչև Մկտրիս 13 ֆարսախ. Մետրիսից մինչև Դավմիս 12 ֆարսախ. Դավմիսից դեպի Կիլկույ 16 ֆարսախ. Կիլկույից մինչև Սիսաջան 16 ֆարսախ և Սիսաջանից մինչև Դաբիլ 16 ֆարսախ»:

2. Իբն-Հաուկալ, «Сборн. матер.», XXXVIII, էջ 101—102=BGA, II, p. 251՝

¹ Տե՛ս «Сборн. матер.», XXXII, էջ 11—13=BGA, VI, p. 122. Համեմատե՛ նաև Կոդամա, «Сборн. матер.», XXXII, էջ 27=BGA, VI, p. 213՝ «Մարանդից մինչև աս-Սարի հովիտով 10 ֆարսախ. հովիտից մինչև Նաշավա 10 ֆարսախ. Նաշավայից մինչև Դաբիլ 20 ֆարսախ»:

² Տե՛ս Markwart J. Eianschahr, Berlin, 1901, S. 189, 257, 288 և Osteuropäische und Ostasiatische Streifzüge, Leipzig, 1903, § 239:

«Բերդաաից մինչև Կալկատու 9 ֆարսախ, Կալկատուսից մինչև Մետրիս 13 ֆարսախ, իսկ այստեղից մինչև Դավմիս 12 ֆարսախ. Դավմիսից մինչև Կայլակվին—16 ֆարսախ. Կայլակվինից մինչև Սիսաջան—16 ֆարսախ. Սիսաջանը հաճելի քաղաք է, միջին մեծության. Սիսաջանից մինչև Դաբիլ—16 ֆարսախ:

3. Ալ-Մուկադդասի, «Сборн. мат.» XXXVIII, էջ 17=BGA, III, p. 181՝

«Կալկատուսից մինչև Մետրիս 2 չվերթ. այդտեղից մինչև Դու-միս 2 չվերթ. մինչև Կիլ-վեյ 2 չվերթ. իսկ այնուհետև կընկ-նես Դաբիլ հայկական երկիրը»¹:

Կարաուլովը ենթադրում է, որ արաբական աղբյուրներում բեր-ված հեռավորությունները միշտ ճիշտ չեն: Նրա կարծիքով, «այդ հեշտությամբ բացատրվում է նրանով, որ տարածությունները չա-փում էին հեծնելու անասունի երթով: Արաբները, ապրելով դաշտա-վայրում, անցնում էին իրենց հեռավորությունները ավելի շուտ, քան թե ճանապարհորդելով Կովկասի լեռնոտ տեղերում, որտեղ հեռա-վորությունը իսկապես կարող էր շատ ավելի մեծ երևալ, քան իրա-պես եղել է: Ուրիշ եղանակով արաբները չափում էին հեռավորու-թյունները հաղվագյուտ դեպքերում»²: Համաձայն Իստախրիի և Իբն-Հաուլիի Դվինի և Բերդաաի [Պարթավի] մեջ եղած տարածու-թյունը եղել է 82 ֆարսախ. այսինքն մոտավորապես 470 կմ.³: Այդ, իսկապես, կարծես մի քիչ շատ է: Նույն տարածությունը Իբն-Խոր-դադբեյի և Կոդամայի մոտ ցույց է տրված ավելի քիչ: Իբն-Խորդադ-բեյի մոտ 7—չվերթ, իսկ Կոդամայի մոտ—9 չվերթ⁴:

Մեջ բերված ճանապարհի ուղղությունը Կարաուլովը ենթա-դրում է Պարթավից [Բերդաա] դեպի հարավ-արևմուտք Թարթաո գետի հոսանքով. այնուհետև Մետրիսից դեպի հարավ. այդտեղից դեպի արևմուտք դեպի Արփա-չայ և այդ գետի երկարությամբ դեպի Սիսաջան. Արաքս գետի մոտ, որը Կարաուլովը համադրում է այժմ-յան Կիսաջանին, որ գտնվում է Արաքսից և Արփա-չայից ոչ հե-

¹ Մուկադդասիի հիշված հաղորդագրության մեջ, ինչպես ճիշտ նկատել է Կարաուլովը, բնագիրը աղճատված է և բառ է բաց թողված:

² Sб'» «Сборн. мат.», XXIX, էջ 68, ծանոթ. 68:

³ Մենք ներքևում կտեսնենք, որ մեր կողմից քննարկվող արաբական և հայկական իտիներարիաների հիմքում եղել է արաբական մղոնը, որը հավասար էր 1917,6 մետրի և արաբական ֆարսախը, որ հավասար էր 5752,8 մ.:

⁴ «Сборн. мат.», XXXII, էջ 11=BGA, VI, p. 122 և նույն տեղում նաև էջ 29=BGA, VI, p. 227:

ռու¹։ Կարառուովի մոտ հաջող որոշված է միայն՝ Բերդաաից դեպի Կալկատուս և Սիաաջանից դեպի Դաբիլ գծերի ուղղութիւնները. իսկ մնացած գծերի ուղղութիւնները, ինչպես ներքևում կտեսնենք, նա սխալ է ցույց տվել։

Վերահիշյալ ճանապարհը Դվինից դեպի Պարթավ մանրամասն քննարկված է իմ «Հայաստանի գլխավոր ճանապարհները» աշխատութիւն մեջ²։ Այդ ճանապարհը, ինչպես ցույց է տրված իմ աշխատութիւն մեջ, որոշվում է լիակատար պարզութեամբ հին Կաղանկատուքի, Հաթերքի և այժմյան Զոդի լեռնանցքի վրայով դեպի Սոտք, այնուհետև Սեանա լճի հարավային ափերի երկարութեամբ դեպի Գեղարքունիք և այնտեղից Սելիմի լեռնանցքի վրայով դեպի Սիսական և հյուսիս-արևմտյան ուղղութեամբ դեպի Դվին։

Հիշված կայարանական կետերից Կալկատուսը, որ գտնվում էր Բերդաաից 9 ֆարսախ [մոտ 50 կմ.] հեռավորութիւն վրա, անշուշտ, նույնական է հին Կաղանկատուքին³, որ գտնվում էր Թարթառ գետի ձախ կողմը, այժմյան Մադագիս գյուղից ոչ հեռու⁴։

Մյուս երեք կայարանների անունները որոշելիս պետք է նկատի առնել, որ այդ անունները անսովոր և անհասկանալի լինելով արաբական լսողութեան համար, ենթարկվել են խիստ աղճատման։ Գրիչները իրենց հերթին մտքերել են մեծ խառնաշփոթութիւն, իրար խառնելով նման արաբական տառերը և տեղափոխելով կետերը։

Կալկատուսից հետո հետևյալ կայարանը Մետրիսը գտնվում էր, ամենայն հավանականութեամբ հայկական Հաթերք գավառում [սեռ. հոլ. Հաթերքս]։ Մետրիս անունը ես ենթադրում եմ, որ պետք է ուղղել Հաթրիսի և կարծում եմ, որ աղավաղումը տեղի է ունեցել արաբական և լատիների նմանութեան հետևանքով, ու նաև դրված կետերի պակասութիւնից։ Հաթրիս անունը համապատասխանում է գավառի անվանը, որտեղ գտնվում էր այդ կայարանը։


Հետևյալ Daumis կայարանը, որ գտնվում էր Հաթրիսից 12 ֆարսախ հեռավորութեան վրա, գտնվում էր Hatris-ին հարակից Սոտքի գավառում [Sauth, սեռ. հոլ. Sautiths]։ Daumis անունը անբռնազբոսիկ կերպով կարելի է ուղղել և դարձնել Zautis, որովհետև

¹ Տե՛ս Կարառուովի, արաբական աշխարհագիրների հաղորդած տեղեկութիւնների հիման վրա, կազմած՝ Կովկասի, Հայաստանի և Ադրբեջանի քարտեզը, որը կցված է նրա, վերևում ցույց տրված հղմամբերին—Сбор. карт., XXVII [1908], էջ 128։

² Երևան, 1836, էջ 175—204 և 248—250։

³ Markwart, Das Itinerar von Artax-ta nach Armastica, Wien, 1920, S. 56.

⁴ Մ. Բարխուդարյան, Պատմութիւն Աղվանից, Վաղարշապատ, 1902, էջ 31։



արաբական ճ և z, նույնպես և m և t տառերի շփոթումը սովորական են արաբական ձեռագրերում: Ուստի կարելի է ենթադրել, որ Zau-tis-ը եղել է հին հայկական համապատասխան՝ Սուտք գավառի անունը:

Մոտակա Կիլ-Կույ կայարանը Իստախրի մոտ և Կալակվինը Իբն-Հաուկալի մոտ [կամ նաև տարբերակներ «Կիլ-Կուրե», «Կ-ն. Կլուին» և «Կիլիկոն»]¹ ինչպես ճիշտ ենթադրում է Մարկվարտը², համապատասխանում է հին-հայկական Գեղարքունի մարզի անվանը: Այդ կայարանը, իսկապես, գտնվում էր Սուտքին հարակից Գեղարքունի գավառում:

Հետևյալ Սիսաջան կայարանը ևս համապատասխանում է հին-հայկական Սիսական³ մարզի անվանը, որտեղ գտնվում էր այդ կայարանը: Իսկ մոտակա Դարիլ կամ Դվին կայարանը գտնվում էր, ինչպես հաղորդում են հիշված աշխարհագիրները, Սիսականից 16 ֆարսախ հեռավորության վրա:

Արաբական աշխարհագիրների տվյալներով՝ առևտրական ճանապարհների հանգույցային կայան Անդրկովկասում քացի Դարիլ-

¹ Տե՛ս «Сборник мат.», XXIX, էջ 32 և 33:

² Das Itinerar von Artaxata nach Armastica, S. 56:

³ Նույն տեղում, էջ 56:

Դվինից եղել է նաև Բերդաան: Իստախրի և մյուս աշխարհագիր-
ների մոտ մանրամասն ցույց են տրված այն ճանապարհները, որոնք
Բերդաայից գնում էին դեպի Թիֆլիս, Արդաբիլ և դեպի Բաբ-ու-Աշ-
վար. այժմյան Դերբենտ:

ՀԱՆԱՊԱՐՀԸ ԲԵՐԴԱԱԻՑ [ՊԱՐԹԱՎԻՑ] ԴԵՊՈԹԻ ՔԻՖԼԻՍ

1. Ալ-Իստախրի, «Сборн. мат.», XXIX, էջ 31—33 =
BGA, I, p. 193:

«Բերդաայից դեպի Ջանդա, քաղաք, 9 ֆարսախ, Ջանդայից
դեպի Շամքուր 10 ֆարսախ, Շամքուրից մինչև հունան քա-
ղաքը, 21 ֆարսախ. հունանից մինչև Կալա-իբն Կանդաման
10 ֆարսախ և Կալաից մինչև Թիֆլիս 12 ֆարսախ»:

2. Իբն-Հուկալ, «Сборн. мат.», XXXVIII, էջ 101 =
BGA, II, p. 251—

«Բերդաայից մինչև Ջանդա, նշանավոր քաղաքը—9 ֆարսախ.
Ջանդայից մինչև Շամքուր 10 ֆարսախ. Շամքուրից մինչև
հունան քաղաքը 11 ֆարսախ. հունանից մինչև Կալա-իբն-
Կանդաման 10 ֆարսախ. Կալաից մինչև Թիֆլիս 12 ֆարսախ.
ընդամենը 52 ֆարսախ»:

3. Ալ-Մուկադդասի, «Сборн. мат.», XXXVIII, էջ 17 =
BGA, III, p. 381—382՝

«Բերդաայից մինչ Յունան, մինչև Բերդենչ, մինչև Ջանդա և
մինչև Կալկատուս մեկական շվերթ....

Ջանդայից դեպի Շամքուր մեկ շվերթ. այնուհետև դեպի հու-
նան 3 շվերթ. մինչև Կալա-իբն-Կանդաման մեկ շվերթ և ապա
մինչև Թիֆլիս 2 շվերթ»:

4. Իբն-հորդադրեյ, «Сборн. мат.», XXXII, էջ 11 = BGA,
VI, p. 122՝

«Բերդաայից դեպի Թիֆլիս 10 շվերթ»:

5. Կուդամա, «Сборн. мат.», XXXII, էջ 29 = BGA, VI,
p. 227՝

«Բերդաայից մինչև Մութևաքքիլիա քաղաքը [= Շամքուր] 6
շվերթ. Մութևաքքիլիա քաղաքից մինչև Թիֆլիս 10 շվերթ»:

Մարկվարտի կարծիքով, Կալա-իբն-Կանդաման կայարանը, որ
գտնվում էր Թիֆլիսից 12 ֆարսախ հեռավորության վրա [= մոտ
70 կմ.], եղել է վրացական Գարդարանի գավառում, որ հիշված է

Վախուշտի¹ մոտ: Նրա տեղագրությունը Մարկվարտը ենթադրում է խրամ և Կուր գետերի միախառնման տեղում, այժմյան Ղրղ-Ղալա ամրոցի ավերակների մոտ²: Իսկ հետևյալ խոսնան կայարանի տեղագրությունը, որ գտնվում էր Կալա-իբն-Կանդամանից 10 ֆարսախ հեռավորության վրա [=մոտ 57 կմ.] և որը նա համադրում է հին-հայկական Հունարակերտին նա ցույց է տալիս մոտավորապես Շամքորի և Ղրղ-Ղալաի միջև՝ կես ճանապարհին³:



Արաբական ֆարսախներով բերված վերոհիշյալ հեռավորությունների մասին Կարաուլովը ճիշտ ցույց է տալիս, որ Իստախրի մոտ ցույց տրված հեռավորությունները զգալի չափով տարբերվում են իրական չափերից, որ կարելի է ներկայումս հաշվարկել. օրինակ, Գյանջայի [Գանձակ] և Թիֆլիսի միջև իսկական հեռավորությունը

¹ Wachusht. Description géographique de la Géorgie, éd. Brosset p. 179:

² Համեմատե Կարաուլովի նման կարծիքը, «Сборн. мат.», XXXVIII, էջ 22. Նախթ. 7:

³ Տե՛ս Das itinerar von Artaxata nach Armastica, S. 30—31, խոսնանի տեղագրությունը Կարաուլովը ենթադրում է «Աղ Թուրք բլուրի վրա, Աղստաֆա գետից մի փոքր ներքև Կուր գետի աջ ափին», տե՛ս «Сборн. мат.», XXXVIII, էջ 22:

կազմում է 181 վերստ, իսկ Իստախրին տալիս է 300 վերստից՝ ավելի: Այդ անճշտությունները մեծ մասամբ բացատրվում են, անշուշտ, Իստախրիի և Իբն-Հաուկալի բնագրերի անճշտություններից, որոնք, ինչպես ինձ թվում է, կարելի է հեշտությամբ վերացնել, և կատի առնելով ծանոթություններում Կարաուլովի կողմից նշված ձեռացուցակների տարբեր ընթերցվածքները: Վերացնելով Իստախրիի և Իբն-Հաուկալի բնագրերում կոպիտ ու ակներև սխալները, հանապարհը Բերդաաից դեպի Թիֆլիս կատացվի միանգամայն այլ կերպ, որը համապատասխանում է մոտավորապես իսկական հեռավորություններին:

Բերդաաից մինչև Գյանջա 9 ֆարսախ. Գյանջայից դեպի Շամքոր 4 ֆարսախ². Շամքորից Խոնան 11 ֆարսախ³. Խոնանից դեպի Կալա-իրն-Կանդաման 10 ֆարսախ. Կալա-իրն-Կանդամանից դեպի Թիֆլիս 12 ֆարսախ. ընդամենը 46 ֆարսախ կամ մոտավորապես 276 կիլոմետր:

ՀԱՆԱՊԱՐՀԸ ԲԵՐԴԱԱԻՑ ԴԵՊԻ ԱՐԽԱՔԻՆ

1. Ալ-Իստախրի, «Сборн. мат.», XXIX, էջ 29=BGA, I, p. 192՝

«Բերդաաից դեպի Յունան 7 ֆարսախ. Յունանից՝ դեպի Բայլական 7 ֆարսախ. Բայլականից դեպի Վարսան 7 ֆարսախ. Վարսանից դեպի Բալխաբ⁵ 7 ֆարսախ. Բալխաբից դեպի Բերդենտ 7 ֆարսախ և Բերդենտից դեպի Արդաբիլ 15 ֆարսախ»:

2. Իբն-Հաուկալ, «Сборн. мат.», XXXVIII, էջ 101=BGA, II, p. 251՝

«Բերդաաից մինչև Յունան 7 ֆարսախ. Յունանից մինչև Բայլական քաղաքը 7 ֆարսախ. Բայլականից, — իսկ այդ քաղաքը առողջ է, հարուստ է աղբյուրներով, անտառներով, այգիներով և պտուղներով. նա գտնվում է գետի բազուկների վրա,

¹ Տե՛ս «Сборн. мат.», XXIX, էջ 68, ծանոթ. 68.

² «Сборн. мат.», XXIX, էջ 31, ծան. F—E «չորս» [E=Իբն-Հաուկալի պարսկական վարիանտը]:

³ Տե՛ս «Сборн. мат.», XXVIII, էջ 101—111 ֆարսախ»:

⁴ Կարաուլովի ծանոթություններում նշված են հետևյալ տարբեր ընթերցվածքները [վերև հիշված ցուցակների], A — առանց կետերի պարզ լե. B — «ուման», C—«Տուրան» և «Տուման»:

⁵ A—«...լսար, B—պարզ լե, C—տեղար»:

իսկ նրանց վրա իրենց ջրադացները, — 7 ֆարսախ մինչև քաղաքը, որը Բայլականից մեծ է. ավելի ընդարձակ է և ավելի խիտ է բնակեցված: Նա ունի մեծ քանակությամբ շուկաներ և ապրանքներ, և այնտեղ կա ամենը, ինչ որ լինում է մեծ քաղաքներում. նրա շուրջը պատ է, և նրանում կա առանձին թաղ քաղաքի շուկաների համար: Վարսանից մինչև Բալխար 7 ֆարսախ: Բալխարը կայարան է և բնակելի վայր. նրանում կան ճանապարհին կից իջևաններ և կարվանսարաններ, որտեղ իջևանում են ճանապարհորդները: Բալխարից մինչև Բերզենդ քաղաքը, որը իր դրուֆյամբ նման է Բայլականին, 7 ֆարսախ. Բերզենդից մինչև Արդաբիլ 15 ֆարսախ գյուղերի ու կայարանների միջև, ճանապարհի աջ և ձախ կողմում»:

3. Ալ-Մուկադդասի, «Сборн. мат.», XXXVIII, էջ 17 = BGA, III, p. 381.

«Բերդաաից մինչև Յունան.... մեկական չվերթ. Յունանից մինչև Բայլական մեկ չվերթ. հետո մինչև Վարսան մեկ չվերթ. մինչև Բալխար — մեկ չվերթ. մինչև Բերզենտ մեկ չվերթ, և ապա մինչև Արդաբիլ երկու չվերթ»:

4. Իբն-հուրդադբեյ, «Сборн. мат.», XXXII, էջ 9—13 = BGA, VI, p. 121—122.


Արդարիլից մինչև հուլշա 8 ֆարսախ. այնուհետև մինչև Բերզենտ 6 ֆարսախ... ճանապարհը Բերզենտից մինչև Բելասաղան անապատը, իսկ այդտեղից մինչև Վարսան, Ազերբայջանի ծայրամասը, 12 ֆարսախ.... Վարսանից մինչև Բերդաա 8 չվերթ.... Վարսանից մինչև Դարման 3 ֆարսախ: Հետո մինչև Բայլական 9 ֆարսախ. այնուհետև մինչև Բերդաա 14 ֆարսախ»:

5. Կոդամա, «Сборн. мат.», XXXII, էջ 25—27 = BGA, VI, p. 213.

«Արդաբիլից մինչև Խան Բաբեկ 8 ֆարսախ. Խան Բաբեկից մինչև Բերզենտ 6 ֆարսախ. Բերզենտից մինչև Բախլար 12 ֆարսախ.... Վարսանից Բերդաա գնացողը պետք է գնա Վարսանից մինչև Կումամ 3 ֆարսախ, հետո մինչև Բայլական 7 ֆարսախ և ապա մինչև Բերդաա 3 ֆարսախ»:

Բերդաաից դեպի Արդաբիլ մեջ բերված ճանապարհի մասին մանրամասն բացատրություն է տալիս Կարաուլովը: Նրա կարծիքով, Յունան կամ Դերման կայարանային կետը համապատասխանում է ալթմյան Դեյրանին. այնուհետև Կուր և Արաքս գետերի միախառնը. ման առեղիդ ու հեռու գտնվում էր Բայլականը. ավելի հեռու Արաքս

սեփարի հոսանքով դեպի վեր, այժմյան Կարա-սու գետի բերանում գտնվում էր Վարսանը, իսկ դեպի Արդաբիլ հետագա ճանապարհը գնում էր Կարա-սու գետի երկարությամբ¹:



Այդ ուղղությունը ներկայումս համարվում է ավելի քան վիճելի: Բալլականի ավերակները, ինչպես ցույց է տվել Մինորսկին, գտնվում են ոչ թե Կուր և Արաքս գետերի միախառնման մոտ, այլ այժմյան Ղարաբաղում, Շուլչի քաղաքից դեպի հարավ-արևելք²: իսկ Վարսանի ավերակները, որի տեղադրությունը Կարառվովի կող-

¹ Տե՛ս «Сборн. мат.», XXIX, էջ 67, ծանոթ. 59:

² Minorsky, Hudud al-Alam, London, 1937, p. 398.

մից ցույց է տրված Կարա-սուի գետաբերանի մոտ, ինչպես ենթադրում է Մինորսկին, գտնվում են Արաքս գետի ափին և այժմ կոչվում են Այդանի ավերակներ¹։ Բայլականի և Վարսանի նոր տեղադրումը, ինչպես տեսնում ենք, վերացնում է Կարաուլովի ենթադրությունը այդ ճանապարհի հյուսիսային ուղղության մասին դեպի Կուր և Արաքս գետերի միախառնման տեղը։

**ՆԱՆԱՊԱՐՀԸ ԲԵՐԴԱՆԻՑ ԴԵՊՈՒ ԲԱՔ-ՈՒՆ-ԱՐՎԱՔ
[ԴԵՐԲԵՆՏ]**

1. Ալ-Իստախրի, «Сборн. мат.», XXI, էջ 29—31 = BGA, I, p. 192¹
«Բերդաաից դեպի Բերդենշ 18 ֆարսախ. Բեդենշից դեպի Կուրի գետանցքի ծանծաղուտը դեպի Շեմախի 14 ֆարսախ. Շեմախիից դեպի Շարվան² երեք օրվա ճանապարհ. Շարվանից դեպի Աբխազ³ Լրկու օրվա ճանապարհ. Աբխազից դեպի Ջասար-Սամուռ 12 ֆարսախ և Ջասար-Սամուռից⁴ դեպի Բաքու-Աբվաբ 20 ֆարսախ»։

2. Իբն-Հաուկալ, «Сборн. мат.», XXXVIII, էջ 101 = BGA, II, p. 251¹
«Բերդաաից մինչև Բերդենշ, Կուրի վրայի նշանավոր առևտրական քաղաքը, 18 ֆարսախ. Բերդենշից, անցնելով Կուր գետի ծանծաղուտով, մինչև Շամախի 14 ֆարսախ. Շամախիից մինչև Շարվան երեք օրվա ճանապարհ. Շարվանից մինչև Աբխազ 2 օրվա ճանապարհ և Աբխազից մինչև Ջասար-Սամուռ 12 ֆարսախ. Ջասար-Սամուռից մինչև Բաքու-Աբվաբ 20 ֆարսախ»։

3. Ալ-Մուկադդասի, «Сборн. мат.», XXXIII, էջ 17 = BGA, III, p. 381—
«Բերդաաից մինչև Բերդենշ.... մեկական չվերթ.... Բերդենշից մինչև Շեմախի 2 չվերթ. մինչև Շարվան 3 չվերթ. մինչև Աբխազ 2 չվերթ. այնուհետև մինչև Ջասար-Սամուռ 2 չվերթ և ապա մինչև Բաքու-Աբվաբ 3 չվերթ»։

Minorsky, Hudud al-Alani, London, 1937, p. 395


¹ Կարաուլովի ծանոթություններում նշանակված են հետևյալ տարբեր բնութագրվածքները՝ А—«Շաբարան»,

² А—«ալ-լա-խան», В—«Ալ-լայջան».

³ С—«աա-Սամուռ».

⁴ С—տալիս է «տասը ֆարսախից քիչ»։

Մեջ բերված ճանապարհի ուղղութիւնը Բերդաաից դեպի Բար-
ուկ-Արվար [Դերբենտ] Կարաուլովը որոշում է Շիրվանի [Շամախի],
Աբխազի [Կուբա] և Զասուր-Սամուռի [=Սամուռի ամբարտակը]
վրայով:



Կարաուլովի մոտ բերված համադրութիւնները՝ Շիրվան=Շա-
մախի և Աբխազ=Կուբա, ինչպես այժմ պարզված է, ակներև սխա-
լ են¹: Այդ կալարանական կետերի մասին հետաքրքիր մեկնաբանու-
թիւններ է տալիս Մինորսկին իր պատմական-աշխարհագրական

¹ «Сборн. мат.», XXIX, էջ 67, ժան. 60: Այդ սխալը նկատել և ուղղել է
ինքը՝ Կարաուլովը: Տե՛ս «Сборн. мат.», XXXVIII, էջ 22, նաև նրա հիշված քա-
տեղը:

«Հուդուդ-ալ-ալամ» կապիտալ աշխատության մեջ, նա ենթադրում է, որ Բերդենջ կայարանական կետի անունը պետք է ուղղել և կարգալ Բարդեջ: Հիմնվելով Մուկադդասիի վերևում հիշված վկայության վրա, Բարդեջի տեղադրությունը Մինորսկին ենթադրում է Բերդաաից ոչ թե 18 ֆարսախ հեռավորության վրա, այլ միայն մեկ օրվա շվերթի: Ուստի այդ կայարանի տեղադրությունը նա ենթադրաբար դնում է Կուր գետի աջ ափին, այժմյան Քեփրի-Քենտի դիմացը, որ գտնվում է Բերդաաից դեպի արևելք, մոտավորապես 54 կմ. հեռավորության վրա¹:

Շեմախիից հետո մոտակա կայարանը՝ Շիրվանը, որ գտնվում էր Շեմախիից երեք օրվա ճանապարհի հեռավորության վրա, ինչպես ենթադրում է Մինորսկին, համապատասխանում է, Շիրվանի մայրաքաղաք, հին Շաբարանին կամ Շավարանին²:

Բագրատունյաց դարաշրջանի ճանապարհների մասին, որոնք անցնում էին Հայաստանի վրայով, տեղեկություններ կան նաև Հայկական միջնադարյան ճանապարհացույցներում, որոնք, զբախտաբար քիչ են ուսումնասիրված և նույնիսկ չեն հրատարակված բոլորը: Այդ ճանապարհացույցներից մեկը տպված է այսպես կոչված «Աղվեսագրքում», որը հրատարակված է Ամստերդամում [1668—9 թվերին] և ապա Մարսելում [1676—8 և 1683 թվերին]: 1683 թվի Մարսելի բնագրի ֆրանսերեն թարգմանությունը գետեղված է Սեն-Մարտենի մոտ նրա «Memoires historiques et géographiques sur l'Arménie» [II, p. 395—397]: Այդ ճանապարհացույցը, ինչպես նորերս հաջողվել է պարզել, նույնական է այն ճանապարհացույցին, որը պահպանվել է էջմիածնի 971—981 թվերի ձեռագրում [№ 2679, ըստ Գևորգյան գրացուցակի № 102]:

Այդ հնագույն ցուցակի հայերեն բնագիրը հրապարակված է Մովսես Խորենացուն վերաբերող իմ ուսումնասիրության մեջ, իսկ այդ բնագրի ռուսերեն թարգմանությունը — իմ հոդվածում՝ «Средневековый итинерарий в армянской рукописи X столетия», որը տպագրված է գիտությունների Ակադեմիայի ժողովածուի մեջ, որ նվիրված է ավագ. Ն. Մառի³ քառասունամյա հոբելյանին: Այդ բնագիրը, անշուշտ, առանձնապես հետաքրքիր է, որովհետև նրանով որոշվում է ճանապարհացույցի ծագման վերջնական տարեթի-

¹ Տե՛ս «Hudud-al-Alam», էջ 403:

² Տե՛ս նույն տեղում, էջ 404:

³ Տե՛ս իմ աշխատ. «Խորենացու առեղծվածի լուծումը», 1934, էջ 85—87 և «Академия наук акад. Н. Я. Марру» ժողովածուն, 1935, էջ 723—728:

վը — մինչև 971—981 թվերը: Բացի այդ, այդ ցուցակը նախկին տպագիր հրատարակությունների համեմատությամբ ունի որոշ մանրամասնություններ, իսկ բնագրի սկզբում տալիս է շատ արժեքավոր տեղեկություններ հին մղոնաչափերի և ստադիոնների մասին. որոնք, ինչպես կտեսնենք, հանդիսանում են իբրև բանալի ճշգրիտ և անվիճելի կերպով որոշելու ճանապարհների հեռավորությունները: Բերում ենք նոր ցուցակի բնագիրը «Աղվեսագրքի» Մարսելի հրատարակության [1683] այն տարբեր ընթերցվածքների հետ, որոնք կարևոր են ճանապարհացույցի բովանդակության համար:

ՔԱԳՐԱՏՈՒՆՅԱՅ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅՈՒՅՈՒՆՆԵՐԻ

[Նշումներ՝ E=էջմիածնի ձեռագիրը, № 2679,

M=«Աղվեսագրքի» Մարսելի հրատարակությունը, 1683 թ.] «Գիտելիք հեռավորությունների մասին մղոններով: Ստադիոնը — 170 քայլ, քայլը—6 ոտք, ոտքը—16 մատ, մղոնը—7 ստադիոն. պարսկական հաշվարկմամբ ստադիոնը—143 քայլ, մղոնը—1000 քայլ, ֆարսախը—3 մղոն:

1. Դվինից դեպի Կարին 200 մղոն. Կարինից մինչև սահմանային խանդակը¹ 100². այդտեղից դեպի Կոլոնիա 90. այդտեղից դեպի Նեոկեսարիա³ 100. այդտեղից դեպի Ամասիա 80. այդտեղից դեպի Գանգրա 105⁴. այդտեղից դեպի Անգարա 80. այդտեղից դեպի Կոստանդնուպոլիս 120⁵. այդտեղից դեպի Հոռոմ 3000⁶:

2. Դվինից դեպի Խլաթ 170 մղոն. այդտեղից դեպի Քղիմար 80. այդտեղից դեպի Ուռհայ 180. այդտեղից դեպի Նփրատ դետր 40. [այդտեղից դեպի էմեսա 150⁷]. այդտեղից դեպի Դամասկոս 120⁸. այդտեղից դեպի Թափոր լեռը 90. այդտեղից դեպի Նրուսահեմ 100:

3. Դվինից դեպի Բերդկունք 60 մղոն. այդտեղից դեպի Պարթավ 160. այդտեղից դեպի Կասպից ծովը 90:

¹ M—«Մինչև խանդակը, որ բաժանում է հայերի երկիրը հույների երկրից» Академия наук акад. Н. Я. Марру» ժողովածու, 1935, I, 723—728:

² M—«120»:

³ M—«Դեպի Նեոկեսարիա, E սխալմամբ դեպի Նիկիա»:

⁴ M—«130»:

⁵ M—«320»:

⁶ M—«6000». E—«90 փոխանակ—3000»:

⁷ Այդ տարածությունը, որ E-ում բաց է թողնված, կա M-ի մեջ:

⁸ M—«100»:

4. Դվինից դեպի Նախիջևան 70 մղոն. այդտեղից դեպի Գանձակ Շահաստան 120. այդտեղից դեպի Տիզբոն 370. այդտեղից դեպի Կուֆա 70. այդտեղից դեպի Բասրա 140. այդտեղից դեպի Պարսից ծոցը 20:

5. Գանձակից¹ դեպի Նինվե 120², այդտեղից դեպի Մծբին 120³. այդտեղից դեպի Ուռհայ 150:

6. Նախիջևանից դեպի Արդաբիլ 200 մղոն. այդտեղից դեպի Վարդանակերտ 70. այդտեղից դեպի Փայտակարան 60. այդտեղից դեպի Կասպից ծովը 50⁴:

7. Դվինից դեպի Կողը 50. այդտեղից դեպի Կոտագլուղ չո⁵. այդտեղից դեպի Թիֆլիս 140. այդտեղից դեպի Հոնա-րակերտ 70. այդտեղից դեպի Պարթավ 100:

8. Երուսաղեմից դեպի Ադեքսանդրիա քաղաքը 500. այդտեղից դեպի Պենթապոլիս 1000. այդտեղից դեպի Տրիպոլիս 50⁶. այդտեղից դեպի Աֆրիկա 1500⁷. այդտեղից դեպի Սեպ-տե 900. այդտեղից դեպի օվկիանոս 2000⁸. Հեռավորություն-ների վերջավորությունը մղոններով:

Անշ բերված հայկական ճանապարհացույցի տվյալներում կան, ինչպես տեսնում ենք, շատ հետաքրքիր տեղեկություններ այն ճա-նապարհների մասին, որոնք գնում էին Դվինից—Կարնո, Խլաթի և Նախիջևանի վրայով դեպի Բյուզանդական կայսրության և արաբա-կան խալիֆատի խոշոր առևտրական կենտրոնները:

Պետք է նախ և առաջ նշել, որ այս ճանապարհացույցում, ինչ-պես մանրամասնորեն պարզված է իմ «Հայաստանի գլխավոր ճա-նապարհները»⁹ աշխատության մեջ, Դվինից դեպի Պարթավ գնա-ցող ճանապարհի սկզբնական մասը ցույց է տրված ո՛չ թե Շարուրի,

¹ Գանձակի տակ հասկացվում է, անշուշտ, Գանձակ Շահաստան և Նինեխայի տակ—Մուսուլ:

² M—«100»:

³ M-ի մեջ քայք է թուղված Նինվեի հեռավորությունը Մծբինից:

⁴ Այդ ամբողջ հատվածը [6] M-ի մեջ չկա:

⁵ M—«Դեպի Կոտ դյուղը 105»:

⁶ M—«300»:

⁷ M—«1030»:

⁸ M—«Դեպի անհայտ օվկիանոսը 1000». Սեն-Մարտենի ֆրանսիական թարգ-մանության մեջ Ամասիայի և Անկարայի հեռավորությունը իրարից ցույց է տրված 208 մղոն, Կոստանդնուպոլսի և Հոռոմի միջև 3000 մղոն. Քղիմարից դեպի Նդեսիա 160 մղոն. Բերդկունքից դեպի Պարթավ 140 մղոն և Պարթավից դեպի Կասպից ծովը 20 մղոն:

⁹ Երևան, 1936, էջ 194—195 և 249:

Սիսականի և Սելիմի լեռնանցքի վրայով, ինչպես արաբական աշխարհագիրների մոտ, այլ բոլորովին ուրիշ ուղղությամբ՝ Երևանի, Ելենովկայի և Ղարանլուղի վրայով։ Երկու ճանապարհները միանում էին Գեղարքունիքում և դնում էին դեպի Պարթավ Ջողի լեռնանցքի վրայով։

Բերդկունքի տեղագրությունը, որ գտնվում էր Դվինից 60 մղոն [=115 կմ.] հեռավորության վրա, որոշվում է հին-հայկական Մազազ գավառում, Ելենովկայից դեպի հարավ-արևելք, մոտավորապես Աղկալայի տեղում, որի մոտ ներկայումս գտնվում են հին քաղաքի ավերակները։

Հատկապես կարևոր է հայկական ճանապարհացույցում Դվինից դեպի Կողբ գնացող ճանապարհի հիշատակումը և այդտեղից դեպի Կոտ-գեղ և Թիֆլիս։ Մարկվարտի կարծիքով, Կողբը նույնական է այժմյան Կողբին։ Կողբից ճանապարհը դեպի Թիֆլիս նա ենթադրում է այժմյան Լենինականի [Ալեքսանդրոպոլ] վրայով դեպի Կոտ-գեղ, որը նա համարում է սահմանային կետ Հայաստանի և Վրաստանի միջև։ Այդ ճանապարհի ուղղությունը Լենինականից Կոտ-գեղի վրայով դեպի Թիֆլիս Մարկվարտը դժվարանում է որոշել Կոտ-գեղի տեղագրությունը վերաբերող տվյալների բացակայության պատճառով։ Այդ ճանապարհի որոշումը, ինձ թվում է, հնարավոր է, եթե նկատի առնվի Կողբի և Թիֆլիսի միջև եղած հեռավորությունը՝ Կողբից դեպի Կոտ-գեղ 120 կամ 105 մղոն և Կոտ-գեղից դեպի Թիֆլիս 140 մղոն։ Մարկվարտը ճիշտ ցույց է տվել, որ ճանապարհը Կողբից դեպի Լենինական գնում էր Արփա-չայի աջ կողմով, Լենինականից դեպի Թիֆլիս գոյություն ունեն, ինչպես հայտնի է, երեք ճանապարհ՝ 1. արևելյանը — Փամբակ և Դերեդ գետերի երկարությամբ. 2. մեջտեղի — այժմյան Վարանցովկայի և Եկատերինենֆելդի վրայով և 3. արևմտյանը — Ախալքալաքի—Բակուրիանիի—Բորժոմի վրայով և ապա Կուր գետի երկարությամբ։ Այդ ճանապարհներից վերև հիշված հեռավորությանը [260 կամ 245 մղոն=մոտավորապես 500 կամ 470 կմ.] համապատասխանում է հեռավոր արևմտյան ճանապարհը Ախալքալաքի—Բակուրիանիի—Բորժոմի վրայով։

Նվ, իսկապես, այդ ճանապարհի վրա Կողբից մոտավորապես 705—720 մղոն հեռավորության վրա [մոտավորապես 200—

¹ Markwart, Das Itinerar von Artaxata nach Armastica, S. 55—57:

² Պետք է նշել, որ իսկական թվերը վերականգնելու համար, պետք է համեմատել և քննարկման ենթարկել այդ ճանապարհացույցի գոյություն ունեցող բոլոր ցուցակները և օգտագործել այն բնագրի քննական հրատարակության համար։

230 կմ.) Ախալքալաքի և Գոտուլար կայարանի միջև գտնվում է Կոտելիա գյուղը, որը ըստ երևույթին նույնական է ճանապարհացույցի Կոտ-գեղին: Մեր ենթադրությունը ավելի քան հավանական է, որովհետև Կոտելիայից դեպի Թիֆլիս հետագա ճանապարհի երկարությունը ևս համապատասխանում է ճանապարհացույցի մեջ ցույց տրված հեռավորությանը [140 մղոն=մոտ. 268 կմ.]:

Մեջ բերված հայկական ճանապարհացույցի հնագույն ցանկում հատկապես արժեքավոր է, ինչպես նշված է վերևում, վերնագրից հետո եղած հաղորդագրությունը մղոնների և ֆարսախների մասին: Այդ հաղորդագրության մեջ հիշվում է ստադիոնը, որը հավասար է 170 քայլի, և ստադիոնը ըստ պարսկական հաշվի», որ հավասար է 143 քայլի: Այդ վերջին ստադիոնի տակ, ինչպես պարզված է իմ չափագիտական «Կշիռները և չափերը հնագույն հայկական աղբյուրներում»¹ աշխատության մեջ, հին հայկական հեղինակները նկատի են ունեցել պարսկական երկարության [գծային] չափերի ստադիոնը կամ ասպարեզը, որը եզրիպտական-արաբական չափերի համակարգության մեջ կոչվում էր ghalva, որ հավասար էր 230,112 մ.²:

Մովսես Խորենացու «աշխարհացույցի» ընդարձակ օրինակի մեջ այդ պարսկական ստադիոնի երկարությունը որոշված է ոչ թե 143, այլ 144 քայլ: Այդ 144 ընթերցվածքը 143-ի փոխարեն, ինչպես երևում է իմ «Կշիռները և չափերը» աշխատության մեջ բերված մանրամասն հաշիվներից, պետք է համարել ավելի ճիշտ: Ուստի այդ քայլը հավասար կլինի 230,112:144=1,598 մետրի:

Ցուցակում եղած մյուս ստադիոնի որոշման համար պետք է նկատի ունենալ, որ նրա երկարությունը ցույց է տրված կլոր թվով: Սակայն իրականապես այդ ստադիոնը, ինչպես դժվար չէ ուշադիր չափագիտական քննությամբ որոշել, հավասար է հղել ոչ թե 170, այլ 171³/₇ քայլի [1200/7]:

Մեջ բերված հատվածի երկարության [գծային] և ճանապարհային չափերը, համաձայն հիշված տվյալների կստացվեն հետևյալ հարաբերությամբ —

$$1. \text{Քայլը } 1/114 \text{ պարսկական ստադիոնի} = 230,112:144 = 1,598 \text{ մ.}$$

$$2. \text{Ստադիոնը} = 1200/7, \text{ քայլ} = 1,598 \times 1200/7 = 273,93/7 \text{ մ.}$$

$$3. \text{Մղոն} = 7 \text{ ստադիոն} = 1200 \text{ քայլ} = 1,598 \times 1200 = 1917,6 \text{ մ.}$$

$$4. [\text{Ֆարսախը} = 3 \text{ մղոն} = 1917,6 \times 3 = 5752,8 \text{ մ.}]$$

¹ Երևան, 1930, էջ 98—110:

² Համեմատե J. A. Decourdemanche, Traité pratique des poids et mesures, des peuples anciens et des arabes, Paris, 1909, p. 82 և 83.

5. Ատաղիոնը «բոս» պարսից հաշվի» = 144 քալ = $1.598 \times 144 = 230,112$ մ.

6. Մղոն պարսկական = 1000 քալ = 1598 մ.

7. Ֆարսախ = 3 մղոն = $1598 \times 3 = 4794$ մ.

Այդ հաշվարկումները կասկածի ենթակա չեն, որովհետև բերված գծային և ճանապարհային չափերը միանգամայն իրական են և գտնվում են Դեկուրդեմանշի¹ համեմատական չափագիտության մեջ:

Առաջին մղոնը և նրան համապատասխան ֆարսախը արաբական ճանապարհային չափեր են, որոնցով ցույց են տրված վերևում հիշված հեռավորությունները արաբական ճանապարհացույցներում: Իսկ երկրորդ մղոնը համապատասխանում է իսկապես պարսկական նոր մղոնին, որը նույնական էր հռոմեական մղոնին՝ 5000 քարեկոնյան ոտք [$= 0.3196 \times 5000 = 1598$ մ.]:

Անկասկած է նաև, որ բերված միջնադարյան հայկական ճանապարհացույցին հիմք է ծառայել արաբական մղոնը, որը հավասար է եղել 1917,6 մ.: Դժվար չէ ստուգել այդ հենց իր ճանապարհացույցի տվյալներով: Նրանում ցույց տրված Դվինի և Նախիջևանի միջև եղած տարածությունը 70 արաբական մղոն, որ կազմում է [$1917,6 \times 70 = 134,232$] իսկապես համապատասխանում է Դվինի տեղում գտնվող այժմյան Արտաշատի և Նախիջևան քաղաքի միջև եղած հեռավորությանը: Նախկին փոստային ճանապարհով Նախիջևանի հեռավորությունը Ղամարլու գյուղից, որը գտնվում է Արտաշատ—Դվինից մի քանի կիլոմետր դեպի հարավ, կազմում է նաև ներկայումս 127 կմ.: Հետևաբար, վերևում հիշված մեր եզրակացությունները միանգամայն հաստատվում են նաև արդիական տրվյալներով:

Որովհետև բերված ճանապարհացույցը պահպանվել է 971—981 թվականների ձեռագրում և նրանում հեռավորությունները ցույց են տրված արաբական մղոններով, ուստի միանգամայն պարզ է, որ նրա երևան գալը պետք է ենթադրել VII—X դարերում: Այդ ճանապարհացույցում, ինչպես պարզել են իմ ուսումնասիրությունները², կան Մովսես Խորենացուն վերագրվող «Հայկական աշխարհացույցի» հետ շփման կետեր, ուստի դժվար չէր եզրակացնել, որ քե-

¹ Համեմատե J. A. Derourdemanche, *Traité pratique des poids et mesures des peuples anciens et des arabes*, Paris, 1909, p. 67, 68, 76, 82, 88, 133 և 135:

² Տե՛ս Сборник «Академия наук академику Н. Я. Марру», էջ 726—734:

ված ճանապարհացույցը հանդիսանում է Բագրատունյաց դարաշրջանի գործ և գրված է IX դարում:

Հին հայկական գրական հիշատակարանները ուսումնասիրելու և տարեթիվներ որոշելու ընթացքում ինձ համար իբրև ուղեցույց ծառայել է Հայաստանի սոցիալական ու տնտեսական զարգացման այն ընդհանուր ըմբռնումը, որ նշված է իմ աշխատություններում: Իմ համոզմունքով, այնպիսի հիշատակարաններ, ինչպիսիք «Հայկական աշխարհացույցն» է և «հեռավորությունը մղոններով», որոնք առանձին հետաքրքրություն էին ներկայացնում հարուստ դասի և հայ վաճառականության համար, կարող էին երևան գալ Հայաստանում առևտրի և միջազգային հարաբերությունների զարգացման դարաշրջանում, հատկապես IX դարում: Տանել նրանց արաբական տիրապետության առաջին դարերը կլինեի շատ կասկածելի, որովհետև VII—VIII դարերը եղել են Հայաստանի համար միջազգային առևտրի լճացման շրջան:

Արաբական և հայկական վերևում հիշված աղբյուրների տեղեկություններով, ինչպես տեսնում ենք, որոշվում են Հայաստանի և Անդրկովկասի հաղորդակցության հիմնական ճանապարհները Արաբական խալիֆայության դարաշրջանում: Պետք է նշել, որ քննարկված ճանապարհները ավելի հանգամանորեն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է հետազոտել և հրատարակել նաև այն չհրատարակված ճանապարհացույցները, որոնք գտնվում են հին հայկական ձեռագրերում:

ՔԱՂԱՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 10—11-ՐԴ ԴԱՐՆԵՐՈՒՄ¹

10—11-րդ դարերը հայ ժողովրդի պատմական անցյալում տրևա-
տեսական և կուլտուրական մեծ ու անօրինակ վերելքի շրջան էին,
և՛յդ վերելքի հիմքը և առանցքը կազմում էին, ինչպես այժմ պարզ-
ված է, քաղաքների արագ բարգավաճումը, առևտրի ու ապրանքային
տնտեսության բուռն զարգացումը և հարուստ ու ազդեցիկ առևտրա-
կան հայ բուրժուազիայի զորեղացումը:

Հովհաննես Դրասխանակերտցին տնտեսական այս վերելքի
մասին գրում է.

«Իսկ այն օրերում Տերը բարեհաճ վերաբերվեց Հայաստան աշ-
խարհին, պատսպարեց և աջողություն շնորհեց ամեն տեսակ բարի
գործերում: Ամեն մարդ բնակվեց իր ժառանգության մեջ և, սեփա-
կանելով իր երկիրը՝ տնկեց այգիներ և աճեցրեց ձիթենիների ու
պարտեզների բուրաստաններ. հերկեցին հերկ փշերից հեռու և հա-
վաքեցին պտուղ հարյուրապատիկ. լիքը լցվեցին հումձը վերջանա-
լուց հետո ցորենի ամբարները և լցվեցին այգեկութից հետո գինու
հսրերը. ցնծությունը տիրեց լեռներին, որովհետև նրանց վրա շա-
տացան արածող տավարի նախիրները և ոչխարի հոտերը: Եվ մեր
գլխավոր նախարարները, ապահովվելով և հանգստանալով առաջա-
տակների հարձակումներից՝ շինում էին մենաստաններում, ավան-
ներում ու ագարակներում քարաշեն, հաստահեղույս, կրածույլ եկե-
ղեցիներ»:

«Իսկ աշխարհիս Հայաստանեայց յաւուրս յայնոսիկ այց արա-
րեալ Տեառն և պատսպարեալ և յաջողեալ ի բոլոր բարութիւնս՝ բնա-
կեցան իւրաքանչիւրոք ժառանգութիւնս իւրեանց. և սեպհականեալ

¹ Տե՛ս առանձին դրույկով, Արմֆանի հրատարակությամբ, Երևան, 1940 թ.:

գերկիր՝ տնկեցին այգիս և արմատացուցին բուրաստանս ձիթենեաց և պարտիզաց. հերկեցին հերկս արտաքոյ փշոց և կթեցին պտուղս հարիւրաւորս. գեղան շտեմարանք ցորենոյ ի ժամանակի լրութեան հնձոց. լցան գուրք գինւոյ ի փութս այգեստանեայց և լերինք ցնծութիւն ղգեացան, զի բազմացան ի նմա արօտականք անդեայք արջառոց և հօտք ոչխարաց: Եւ գլխաւոր նախարարք մեր յապահովեցնալք և հանգուցեալք ի հինից ասպատակաց՝ շինէին եկեղեցիս վիմարդ, հաստահեղոյս ձուլեսլ կրով՝ ի մենաստանս և յաւանս և յազարակս»¹:

Որ Բագրատունյաց Թագավորութեան ժամանակաշրջանը, իրոք, մի նոր դարաշրջան էր Հայաստանի տնտեսական ու կուլտուրական մեծ պարգացման՝ այդ պարզ երևում է ոչ միայն հայ, այլև օտար աղբյուրների վկայութիւններէից:

Ինչպես հայտնի է նորագույն աշխատութիւններից, արաբական մատենագիրները Բագրատունյաց Հայաստանը համարում էին իրենց ամենահարուստ երկրներից մեկը: Տասերորդ դարի արաբական աշխարհագիր Իբն-Ֆակիհը իր «Դիրք երկրների մասին» գրվածքում մատնանշում է, որ միմիայն Արաքսի գետահովիտում նրա ժամանակ եղել են մոտ 1000 քաղաք ու գյուղ²: Նմանապես և Յակուտն իր «Աշխարհագրական բառարանի» մեջ Հայաստանում գտնվող քաղաքների ու գյուղերի քանակի մասին տալիս է դարձյալ չափապանց մեծ թիւ՝ 18.000 մեծ և փոքր գյուղաքաղաքներ³:

Արաբական հեղինակների այս և նման տեղեկութիւնները, որ լիովն են խիստ չափազանցված՝ ճիշտ են, ըստ երևութին, միայն այն չափով, ինչ չափով որ նրանք համապատասխանում են Ստեփանոս Ասողիկի վկայութեան: Տարոնեցի այս պատմիչը, որը Բագրատունյաց շրջանի պատմագիր է՝ մատնանշում է, որ Սմբատ Ա-ի (890/1—913/4 թ.) և Աշոտ Ա-ի (887—890/1 թ.) ժամանակ, ուրեմն, իններորդ դարի վերջերում և տասերորդ դարի սկզբներում՝

«Հայոց աշխարհում շենութիւն էր և խաղաղութիւն, և համաձայն մարգարեութեան ամեն մեկը հանգչում էր իր որթի ու թզենու տակ: Եվ այսպես իրենց բազմամարդութեամբ ու ընչեղութեամբ ազարակները դառել էին ավաններ և ավանները քաղաքներ. մինչև

¹ Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցոյ, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 198—199:

² Տե՛ս Լուսն, «Հայաստանը Բյուզանդիայի և Իսլամի միջև» (Փրանսերեն), Փարիզ, 1919, էջ 44:

³ Նույնը, էջ 44:

խակ հովիվներն ու նախրապանները հագնում էին մետաքսե պատմուճաններ»¹:

(«Յաւուրս սորա և յիշխանութեան հօր իւրոյ էր շինութիւն և խաղաղութիւն յաշխարհիս Հայոց ըստ մարգարէութեանն՝ հանգչիլ իւրաքանչիւր ուրուք ընդ որթով իւրով և ընդ թգնեալ: Եւ այսպէս ագարակաց աւանացեալ և աւանաց քաղաքացեալ բազմամարդութեամբ և ընչեղութեամբ, մինչև հովուաց և անդէորդաց մետաքսեայ ազգենու պատմուճան»)²:

Ասողիկի այս վկայության մեջ չափազանցված է, անտարակույս, նրա հաղորդած տեղեկությունը նախրապանների ու հովիվների մետաքսե շորերի մասին: Մենք մատնացույց էինք արել «Հայաստանի առևտրի ու քաղաքների մասին» ռուսերեն մեր աշխատության մեջ, որ Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում բնակչության ստորին խավերի դրությունը ոչ միայն չէր թեթևացել, այլև խիստ ծանրացել էր³: Սակայն, Ասողիկի մյուս կարևոր տեղեկությունները Հայաստանի բարգավաճման և ագարակների ավանադման ու ավանների քաղաքացման մասին, ինչպես տեսնում ենք, չիովին համապատասխանում են արաբական մատենագիրների վերոհիշյալ վկայություններին և, ուրեմն, կարող են միանգամայն հավաստի ու վստահելի համարվել:

Ասողիկի և արաբական աղբյուրների վկայություններին կարող է կովան ծառայել, ըստ իս, նաև այն, որ հայ մատենագրական երկերը Բագրատոսնյաց Հայաստանում հիշատակում են, իրապես, մեծ թվով «գլուղաքաղաքներ» և «քաղաքագլուղեր», որոնք, հավանորեն, հենց այն հին ավաններն էին, որ դառել էին քաղաքներ: Հովհաննես Դրասխանակերտցու մոտ մատնանշված են, օրինակ, հետևյալ «քաղաքագլուղերը»՝ «Արուճ», «Աւան», «Բագարան», «Երադգաւորք», «Երեւան», «Կողբ», «Մրեն», «Քարունջ», «Գառնոյ գիւղաքաղաք» ու «Թաւնայ գիւղաքաղաք» են:

Դվին — Պարթավ հին ճանապարհի վրա, ինչպես մատնացույց էինք արել «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները» մեր աշխատության մեջ⁴, նաև այժմ գտնվում են հին Բերդկունքի ու Մաքենիսի ընդարձակ ավերակները, որոնք կոչվում են «Ազատ քաղաք»-ներ

¹ «Ստեփանոսի Տարոնեցոյ Ասողկան, Պատմութիւն տիեղիրական», II. Պետերբ., 1885, III գլ. 9, էջ 161:

² Տե՛ս «О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен», Эривань 1930, էջ 145:

³ Տե՛ս էջ 185—192:

և որոնք նշանավոր կենտրոնավայրեր են եղել Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում:

Հավանորեն, թե այս «Ազատ քաղաք»-ները և թե Հովհաննես Դրասխանակերտցու մոտ հիշատակված վերոհիշյալ «գիւղաքաղաք»-ները հենց այն «քաղաքացեալ աւան»-ներն են, որ հիշված են նաև Ասողիկի մոտ:

Հայաստանի բարգավաճ վիճակը և քաղաքային կյանքի զարգացումը Բագրատունյաց շրջանում, 10—11-րդ դարերում, ինչպես սեփական ենք, միանգամայն անժխտելի է և հաստատվում է մատենագրական բազմաթիվ վկայություններով:

* * *

Արդ՝ ինչո՞վ պետք է բացատրել այդ արտակարգ բարգավաճումը 10—11-րդ դարերում:

Մեր նախորդ աշխատություններից մեկում մենք արդեն մատնացույց էինք արել¹, որ արաբական տիրապետության սկզբնական շրջանում՝ 7—8-րդ դարերում, Հայաստանի տնտեսական կյանքը ևս էր մղվել իր առաջավոր դիրքերից և զարգանում էր բնական տնտեսության հետադարձ հիմքերի վրա:

Օմայյանների և առաջին Աբբասյանների ժամանակ Արևելքի առևտուրը Բյուզանդիայի հետ գրեթե անհնարին էր դառել շնորհիվ բյուզանդա-արաբական պարբերաբար կրկնվող համառ պատերազմների:

Այս դրությունը հետզհետե փոխվեց, սկսած իններորդ դարից և, գլխավորապես, 10—11-րդ դարերում:

Արաբական խալիֆայության աստիճանական թուլացման և Բյուզանդական կայսրության զորեղացման պատճառով Բագրատունյաց Հայաստանի քաղաքական ու տնտեսական զարգացման համար անսպասելի կերպով ստեղծվեցին այդ ժամանակ բացառիկ նպաստավոր պայմաններ: Իններորդ դարի վերջերին Շիրակի Բագրատունիները, որոնք դառել էին արաբական խալիֆայությանը ենթակա, սակայն ինքնիշխան թագավորներ՝ աշխատեցին շեղոք մնալ ու չմասնակցել բյուզանդա-արաբական կռիվներին: Նրանց երկիրը, որը Թեոդոսուպոլսի ու Արտանուշի վրայով հաղորդակցություն ուներ Տրապիզոնի և բյուզանդական այլ նավահանգիստների հետ՝ ի միայն մեծ նշանակություն ստացավ իբրև համաշխարհային առև-

¹ Տե՛ս «О торговле и городах Армении» էջ 130—140

տըրի տրանզիտային ճանապարհ, այլև դառավ տնտեսական իգեա-
լական բուֆեր երկիր և շեղոք վայր միջազգային առևտրի:

Ռուս գիտնական Գուրկո-Կրյաժինը, որը մատնացույց է արել
կարևոր այս փաստը՝ Բազրատունյաց Հայաստանի առևտրական դե-
րը համարում է բացառիկ ու արտակարգ այն պատճառով, որ այս
ժամանակաշրջանում բոլորովին ընդհատված էին համաշխարհա-
յին առևտրական հարաբերությունները Ասորիքի ու Փոքր Ասիայի
վրայով:

Պոնտական Տավրոսից սկսած մինչև Միջերկրական ծովը, ասում
է Գուրկո-Կրյաժինը¹, մոտ 600 կիլոմետր երկարությամբ և 300 կի-
լոմետր լայնությամբ տարածվում էր սահմանային լայն գիծը, որը
երկու կողմից էլ ծածկված էր ամրություններով և բյուզանդական
ստրատոտներին ու մուսուլմանական դաշինքների զորական բնակա-
վայրերով, որոնք դարերի ընթացքում վարում էին սահմանային
կռիվներ: Աշխարհագրական այս պայմաններում Բազրատունյաց
Հայաստանը դառել էր, բնականաբար, գլխավոր ու միակ տրանզի-
տային ճանապարհը և միակ հարմար ու ապահով վայրը համաշ-
խարհային առևտրի:

Բազրատունիների հովանավորության տակ զարգացող մեծ
առևտրի վերակենդանացմանը պետք է վերագրել, անշուշտ, թե Հա-
յաստանի տնտեսական բարգավաճ վիճակը և թե հոյակապ քա-
ղաքների հիմնումն ու նրանց բուռն արագ աճումն այս ժամանա-
կաշրջանում:

* * *

Տնտեսական այս վերելքի շրջանում, տասերորդ դարում, հիմ-
նրվել են Հայաստանում, խալիֆայությունից Դվինի վրայով Տրա-
պիզոն տանող տարանցիկ ճանապարհի մոտ՝ Անին, Կաթաղ և Արծնը,
որոնք ամենակարճ ժամանակում դառան խոշոր ու փարթամ քա-
ղաքներ:

Անին, որը հայ մատենագրության մեջ 10-րդ դարից առաջ հի-
շատակված է որպես ամրոց՝ շուտով հայտնի ձղավ իբրև տիեզերա-
հուշակ մեծ քաղաք: Աշոտ Ողորմածի ժամանակ՝ 953 թվին, նա դա-
ռավ գահանիստ կենտրոն ու Շիրակի թագավորության մայրաքա-
ղաք: Նրա ընդարձակ պատմությունը և պեղումների միջոցով հայտ-

¹ Տե՛ս В. Гурко-Кряжин; Прошлое и настоящее Советской Армении, «Новый Восток». Москва, 1927, кн. 16—17, էջ 205—206:

նաբերված հնությունների մանրամասն նկարագրությունը տվել են ակադեմիկներ Ն. Մառը և Հ. Օրբելին¹։

Անիից Արծն և Արտանուշ տանող ճանապարհի վրա գտնվում էր Կարսը, որը նախքան տասերորդ դարը հիշվում է նույնպես որպես ամրոց՝ «ամուրն Կարուց», «Կարուց բերդն»։ Սրա արագ աճումը և վերածվելը տասերորդ դարում խոշոր քաղաքի կապ ունեն դարձյալ տրանզիտային ու միջազգային մեծ առևտրի զարգացման հետ։ Աշոտ Երկաթի եղբայրը և հաջորդը՝ Աբաս Ա-ը (928—953) ի նկատի ունենալով Կարսի ռազմական ամուր դիրքը՝ նրան դարձրեց իր թագավորության աթոռանիստ կենտրոնը։ Իսկ Աբաս Ա-ի մահից հետո՝ նրա որդին՝ Մուշեղը, չճանաչեց իր մեծ եղբոր՝ Անիի թագավոր Աշոտ Բղորմածի իշխանությունը և իր կուսակիցների կողմից ինքը ևս կարգվեց Կարսի մեծ թագավոր։ Եվ այսպիսով սկիզբ դրվեց Կարսի կամ Վանանդի թագավորության։ Նկարագրելով այս քաղաքի ավերումը Սելջուկյան արշավանքների ժամանակ՝ 11-րդ դարի հայ մատենագիր Արիստակես Լաստիվերտցին վկայում է, որ նա հարբստացել էր «բազում ընչեղությամբ ի ծովէ և ի ցամաքէ ամբարեալ»²։ Լաստիվերտցու այս խոսքերը, ինչպես տեսնում ենք, պարզ կերպով ցույց են տալիս, որ Կարսի հարստացման աղբյուրը եղել է ծովային ու ցամաքային առևտուրը։

Կարսից միջազգային առևտրի տարանցիկ ճանապարհը գնում էր Թեոդոսուպոլսի մոտ գտնվող Արծն քաղաքը, որը նույնպես հիմնված էր 10-րդ դարում։ Արիստակես Լաստիվերտցին վկայում է, որ Արծն քաղաքը

«հոյակապ էր ու հայտնի էր բոլոր երկրներում, իբրև մի քաղաք որ լեռան վրա է. և ծովը և ցամաքը երկնում էին և առատաձեռն կրում էին սրան իրենց կարողությունը»։

(«Որ հոյակապ և ականաւոր էր ամենայն աշխարհաց, իբրև դքաղաք, որ ի վերայ լերինն կայցէ. և ծով և ցամաք երկնէր և առատանայր կրել ի սմա զզօրութիւն իւր») ³։

Ինչպես մատնացույց է արել Գրանտիական պատմադատ Վոռաներ⁴, Արծն քաղաքը հիշատակված է նաև բյուզանդական մատենագիրների Ատտալիատեսի և Կեդրենոսի հետևյալ վկայություններում։

¹ Տե՛ս Н. Я. Марр, Ани, Ленинград, 1934 և Օրբելի, Անվո ավերակները, Քսրգմ. ուսերենից, 1911։

² Տե՛ս «Պատմութիւն Արիստակեսի վարդապետի Լաստիվերտցու»։ Թիֆլիս, 1912, գլ. ԺԵ, էջ 91։

³ Տե՛ս նույնը, գլ. ԺԲ, էջ 78։

⁴ «Հայաստանը Բյուզանդիայի և Իսլամի միջև», Փարիզ, 1919, էջ 44, ծան. 1։

1. Միքայել Ատտալիաան, Պատմություն, Բոնն 1853, էջ 148՝

«Թեոդոսուպոլիսը թողնված էր ու լքված տարիներ առաջ և գերադասություն էր տրված լավ դիրք ունեցող հարևան Արծն քաղաքին, ուր ժափալվել էր մեծ անպարիսպ այդ քաղաքը և ուր վաճառվում էին այն ամենը, ինչ որ արտադրում էին Պարսկաստանը, Հնդկաստանը և Ասիայի մյուս երկրները»:

2. Կեդրինոս, Ժամանակագրություն, Բոնն 1838, II, էջ 577՝

«Սա (Արծնը) անպարիսպ քաղաք է, բազմամարդ և խիստ հարուստ: Այստեղ բնակվում էին տեղական վաճառականներ և նաև մեծ թվով ասորիներ, հայեր և ուրիշ ժողովուրդներ: Որովհետև սրանք շատ էին թվով, ուստի և անհրաժեշտ չէին համարում ապրել պարիսպների ետև, չնայած որ մոտ էր Թեոդոսուպոլիսը, որը մեծ ու հզոր քաղաք էր և ուներ անառիկ շրջապարիսպ»:

Ինչպես տեսնում ենք, նաև Արծն քաղաքի միջազգային առևտրական կենտրոն լինելը պարզ երևում է մեջ բերված վկայություններից:

Կարս քաղաքից մի այլ գիծ գնում էր Արտանուշի վրայով դեպի Սև ծովի արևելյան նավահանգիստները: Առևտրական այս ճանապարհագծի վրա խոշոր ու հարուստ քաղաք էր դառել Արտանուշը, ուր տեթերորդ դարի վերջում հաստատվել էր Բագրատունիների Կղարջքի ճյուղը, որն իններորդ դարում հիմնադրել էր Վաղարշապատի Վրաստանում: Արտանուշի առևտրական մեծ դերը մատնացույց է արել բյուզանդական Կոստանդին Միրանաժին կայսրը (913—959) իր «Պետության կառավարման մասին» դրվածքում (գլ. 46)¹:

«Վաճառականները, — ասում է նա, — գալիս են այստեղ Տրապիզոնից, Վրաստանից, Աբխազիայից և բոլոր կողմերից: Այդ վաճառականներից ստացվում է բավական մեծ մաքս»:

Բացի Անիից, Կարսից, Արծնից և Արտանուշից, որոնք ամենակարճ ժամանակում զարգացել ու դառել էին շքեղ ու փարթամ քաղաքներ, 10—11-րդ դարերում զորեղացել ու հարստացել էին նաև Հայաստանի նախկին քաղաքները՝ Դիվնը, Վաղարշապատը, Վանը, Արճեշը, Խլաթը և մյուս կենտրոնները:

Քաղաքների ու քաղաքային կյանքի արտակարգ մեծ զարգացումը 10—11-րդ դարերում, որ հետևանք էր միջազգային առևտրի բուռն վերակենդանացման, ինչպես տեսնում ենք, դարձյալ ակներև

¹ De administrando impio, ed. Bonn. էջ 206:

ու ցայտուն կերպով ցույց է տալիս, որ Բագրատունյաց թագավորութեան ժամանակաշրջանը տնտեսական մեծ վերելքի մի շրջան էր:

*

Բագրատունյաց Հայաստանի բուռն այս վերելքը պայմանավորված էր, անտարակույս, նաև նրանով, որ Հայաստանը, 10-րդ դարի երկրորդ քառորդից սկսած, ավելի քան մեկ դար, գրեթե չենթարկվեց հարձակումների ու ավերածությունների և ապրեց խաղաղ ու հանգիստ մինչև 11-րդ դարի քառասնական թվականները՝ մինչև Սելջուկյան արշավանքները:

Քաղաքական անդորրութեան և տնտեսական բարգավաճման բարենպաստ պայմաններում ցայտուն կերպով արտահայտվեցին հայ ժողովրդի ստեղծագործական մեծ ընդունակությունները կուլտուրական շինարարության ու զարգացման բոլոր ասպարեզներում՝ պրականության ու գիտության, արվեստի ու արհեստների և, մասնավոր, ճարտարապետության մեջ:

Նյութական հարստությունների անընդհատ աճումը և դրամական մեծ միջոցների կուտակումը իշխանական տոհմերի, խոշոր առևտրականների և եկեղեցու ձեռին արտակարգ նպաստավոր պայմաններ ստեղծեցին համատարած շինարարության համար: Թագավորները, խոշոր ֆեոդալները և հարուստ առևտրականները մերցում էին իրար հետ, և աշխատելով իրար գերազանցել՝ կառուցում էին շքեղ ու ճոխ եկեղեցիներ, պալատներ ու այլ շենքեր:

Անշուշտ, հսկայական միջոցներ էին հարկավոր կառուցելու համար ճարտարապետական այնպիսի գլուխգործոցներ, ինչպիսիք են Բագրատունիների երկհարկանի պալատն Անիում, Անիի հոյակապ կաթողիկեն, Հովիվի եռահարկ եկեղեցին, ինչպես և գեղեցիկ ու փարթամ մյուս շենքերը, որոնց ավերակները պահպանվել են Անիում, Կարսում և այլ տեղերում:

10—11-րդ դարերում, Սելջուկյան արշավանքներից առաջ, շինարարությունը խիստ զարգացել ու մեծ չափերի էր հասել ոչ միայն Անիի, Կարսի և Լոռիի Բագրատունյաց թագավորություններում, այլև Կասպուրականում, Սյունիքում, Տաթոնում և Հայաստանի մյուս շրջաններում:

Բացի եկեղեցիներից ու ապարանքներից, այս ժամանակ կառուցվել են հոյակապ ու ընդարձակ քաղաքային պարիսպներ, ինչպես, օրինակ, Աշոտ Ողորմածի (953—977 թ.) և նրա որդու Սմբատ

Բ-ի (977—989 թ.) կառուցած Անիի պարիսպները, քարե մեծ կամուրջներ, օրինակ, հայկական մեծ կամուրջներն Ախուրյան գետի վրա, որոնք զարմանք են պատճառում այժմյան ճարտարապետներին, կուռ ու ամուր բերդեր, ջրմուղներ, իջևաններ և զանազան այլ շենքեր: Հատուկ ուշադրության արժանի են զանազան տիպի ջրմուղները: Նիկ. Մառի 1910 թվին Անիում կատարած պեղումներից հայտնի է, որ այստեղ կավե խողովակները ջրի ուժեղ ճնշումից ապահովելու համար անփոփոխած են եղել լավ շինված ու միմյանց պինդ հագցրած քարե խողովակների մեջ:

Գաղափար տալու համար, թե ինչպիսի մեծ ծավալ ու չքեղ բնույթ է ունեցել 10—11-րդ դարերի շինարարությանը՝ ավելորդ չեմ համարում հակիրճ կերպով մեջ բերել Թովմա Արծրունու վկայություններն Ախթամարի շինության մասին տասերորդ դարի սկզբներում:

«(Գաղիկ Արծրունին),— պատմում է Թովմա Արծրունին,— հրաման տվեց բազմաթիվ արհեստավորների ու անթիվ մարդկանց. որ նրանք կտրեն ծանր ու դժվարակիր վեմ քարեր և գցեն ծովի անհնարին խոր հատակը: Եվ որոշ ժամանակվա ընթացքում, շնորհիվ մեծ արքայի հանձն առած ջանքերի՝ հանկարծակի քարահատակ ամբարտակը վեր ելավ ու կանգնեց, բարձրանալով հինգ կանգուն ծովի երեսի վրա: ...Նրա վրա նա շուրջանակի կառուցեց լարածգությամբ պարիսպը մոտ հինգ ասպարեզ տարածությամբ: Եվ պարիսպն էր հրաշակերտ, հանդակերպ, զարդարված էր բարձրաբերձ լաճանիխտ բուրգերով ու բարձր աշտարակներով և ուներ իր մեջ անկյունավոր, խորանանման, տախտակաձև հանգստանալու գահույքներ, ուր իր որդիների ու աղատակույտ զորքերի հետ միշտ ուրախանում էր արքան: Իսկ պարսպի ծայրերը նա տարավ քարանձավի դժվարամած կիրճերը և սերտ կերպով միացրեց իրար: Ծովի խորահատակ հիմքերի բերանին նա դրեց ահավորատես, հաստահեղույս, քեռռապինդ դռներ. և այսպիսով, ծովի մի մասն առնելով կղզու կողմը՝ նա հրաշալիք գործեց և ստեղծեց նավերի բազմության համար խաղաղ ու ապահով նավահանգիստ»:

(«Հրաման տուեալ քազում արուեստաւորաց և անթիւ մարդկան զհատեալ վէմս ծանոնս և դժոռարակիրս հոսել ընկենուլ յատակս ծովուն անհնարին խորութեանն. և ժամանակաւ ինչ այսպէս ջան լանձին կալեալ մեծի արքային՝ և յանկարծակի եկն եկաց կանգնեցաւ քարայտալկն ամբարտակ կանգունս հինգ ի վերայ բարձրացեալ մկանաց ծովուն, ... յորոյ վերայ լար եդեալ ձգէ զպարիսպն շուրջանակի իբր ձիարշաւանօք հինդ և պարիսպն է հրաշակիրտ»:

ահնդակերպ, բարձրագրեմ լայնանիստ ըրգամբք և բարձրացնալ աշտարակօք դարձարեալ, անկիւնաւոր խօրանանման տախտակած և յինքնան ունելով գահոյք զբօսանաց, յորում հանդերձ որդւովք և ազատակոյտ զօրօք միշտ ուրախանայր արքայ: Իսկ և զգլուխս պարբային ամեալ ի կիրճս դժուարամածս քարանձաւին՝ ի համբոյրս միմեանց մերձեցուցանէ. ի շրթունս խորայատակ հիմանց ծովուն ղնէ դրունս ահաւորատեսս, հաստահեղոյսս, բեռապինդս. որով և դմասն ինչ ծովուն ի կղզին կոյս հատանելով՝ հրաշալիս իմն ներգործեաց, բազում նաւաց յօրինեալ խաղաղ և անքոյթ նաւահանգիստ»¹:

Այնուհետև, ինչպես վկայում է Թովմա Արծրունին, Գագիկ Թագավորը կատարում է իր մոտ հավաքված իշխանների, ազնվականութեան, հոգևորականութեան ու ռամիկների խնդիրը և թույլ է տալիս, որ այդ տեղում, որը լինելու էր իբրև ապաստանի վայր հարձակվող թշնամիներից՝ նրանք կառուցեն շինություններ ու ձեռակերտներ: Եվ հինգ տարվա ընթացքում արագ կերպով քաղաքը շինվում է և պայծառանում:

Առանձնապես հետաքրքրական է Թովմայի մոտ նաև Թագավորական քառանկյունի պալատի կառուցման նկարագրությունը:

«Եվ որովհետև արքունիքում հավաքվել էին,— պատմում է Թովման,— բազմաթիվ արհեստավորներ, պատվավոր մարդիկ, ժողովված քերիքի ամեն ազգերից, որոնք կարող էին անել արքայի ուզածը և գործը կատարում էին իսկույն համաձայն հրամանի՝ Թագավորը հրամայեց նրանցից մի ոմն ճարտարապետի, իմաստուն և հանճարեղ անձի, շինել քառանկյունի պալատ, որի լայնութեան ու երկարութեան չափը քառասուն կանգուն էր, նուրբան էր և բարձրությունը: Սրա որմերի լայնությունն ուներ երեք մեծաքայլ չափ տարածություն, և նրանք անապակ կրի ու քարի զանգված էին, որ իրար էին խառնված ինչպես կապարի ու պղնձի ձուլվածքը: Եվ պալատի շինությունը հիմքից մինչև օդի մեջ կախված նրա զլուխը մնում էր հաստատուն առանց սյուների. և այս, իրավի, մտքից վեր է ու արժանի է դարմանքի: Պալատն ուներ և վամարակից խորաններ ու անկյուններ և գեղապաճույճ շրջապատեր, որոնք մտքի համար անթվարկելի էին և աչքերի համար անղննելի: Նա ուներ նաև երկնքի պես բարձր, ոսկեզարդ և լուսաճաճանչ գմբեթներ, որոնց բլթ մեկը ուղենար նայել, Թագավորին իբր պատիվ անելով՝ նախ

¹ Թովմայի վարդապետի Արծրունոյ, Պատմութիւն տառն Արծրունեաց, 1887, IV, գլ. Է, էջ 293—294:

պետք է խույրը գլխից հաներ և ապա, տանջելով վիզը՝ հագիւմ կկատողանար նշմարել զանազան ներկերով նկարված պատկերները»:

(«Եւ քանզի էին ի դրան արքունի գումարեալք արուեստաւորք բազումք, արք պատուաւորք ժողովեալք յամենայն ազգաց յերկրէ, որք ոչ վրիպէին առնել զոր խորհէր արքայ, այլ ըստ հրամանին վաղվադակի և գոծն առնոյր զկատարումն՝ ունեմն ի նոցանէ ճարտարապետի առն իմաստնոյ և հանճարեղի հրամայէ թագաւորն շինել տաճար մի քառանկիւն, իս կանգնաւ ունելով զչափ լայնութեան և երկայնութեան, նմանապէս և ի բարձրութիւնն. որոյ որմոյն լայնութիւնն երիւք մեծաքայլութեամբ չափով ունի զպարզութեան. գունդ անապակ կրոց և քարի, իբրև ռհայտածս կապարի և պղնձոյ ընդ միմեանս խառնեալ. և շինուած տաճարին ի հիմանց անտի մինչև ցգրուփ նորին ի թռիչս կազմեալ՝ առանց սեան ունի զհաստատութիւն. և զոր արդարև արժանի զարմանալոյ ի վեր քան զմիտս: Ունի և խորանս կամարակիցս և անկիւնս և շրջապատս գեղապաճոյճս, անթիւ մտաց և անզննելի աչաց. ունի և գումբէթս երկնահարթս ոսկեզարդս և լուսաճաճանչս, յոր թէ նայել ոք կամիցի՝ իբր թագաւորի իմն պատիւ առնելով՝ նախ ի բաց առցէ զխոյր գլխոյն, և ապա տանջեալ զպարանոցն հազիւ թէ նշմարել կարիցէ զզանազան զեղոցն կերպագրութիւնս»¹:

Թովմա Արծրունին, այս հոյակապ պալատի զարմանալի որմնանկարները և երկբացիկ ու գեղեցիկ դռները նկարագրելուց հետո՝ կարևոր տեղեկություն է հաղորդում պալատի շինութեան համար գործադրված երկաթի քանակի մասին:

«Պատմեց մեզ, — ասում է նա, — քաղաքի գործավարներէյ վստահելի մի վերակացու, որ պալատի շինութեան վրա բանեցվել է 200.000 լիտր երկաթ. և նա հավանորեն ու ճշմարտապես ավելի շուտ պակաս է ասել, քան թե առատութեամբ ավելացրել է ու բազմապատկել: Իսկ փառաց պալատի դիրքը քաղաքի մեջ երևում էր որպէս մի մեծ բլուր գավառի բլուր կողմերից: Նա իր քարձրութեամբ ավելի ցած չէր քան կղզու ծայրում գտնվող քարանձավը:

Անմերձեանալի ամրություններով թագավորը պարսպել էր նաև ամրոցի ծայրերը և շինել էր նրա մեջ մեծամեծ շտեմարաններ և համբարանոցներ, նմանապէս և գանձատեղեր և անհուն ու բազմաքանակ զենքերի ու ձիու զարդերի համար պահեստներ»:

(«Պատմեաց մեզ և հաւատարիմ ոստիկան մի ի գործավարաց քաղաքին, եթէ եմուտ ի շինուած տաճարին ւերկաթ լտերս իբրև ՄԻ-

¹ «Թովմայի վարդապետի Արծրունւոյ, Պատմութիւն տաճան Արծրունեաց», 1887, IV, գլ. է, էջ 295:

և հաւաստապէս ճշմարտութեամբ նուազեաց զասելն, քան թէ առատութեամբն յաւելեաց ի բազումս. իսկ և նիստ փառաց տաճարին յամենայն կողմանց զաւառին ի մէջ քաղաքին երևի իբրև զմեծ մի պտր. ոչինչ նուազեալ բարձրութեամբ քան զքարանձաւ ծայր կըզդոյն:

Պարսպէ անմերձենալի ամրութեամբ և զծայրս ամրոցին, և շինեալ ի նմա շտեմարանս մեծամեծս և համբարանոցս, միանգամայն և տունս զանձուց և զինուց և ասպազինաց անհուն բազմութեանց»¹։

Հարուստ ու հոյակապ այս շինարարությունը և ճարտարապետութեան ու արվեստների մեծ զարգացումը, որ մատնանշված են Թովմա Արծրունու մոտ, ընդհանուր ու համատարած երևույթ էին վերածնվող Հայաստանի բոլոր շրջաններում:

Ուշագրավ են մեջ բերված վկայությունների մեջ ոչ միայն արվեստի ու ճարտարապետության, այլև շինարարական տեխնիկային վերաբերող տեղեկությունները: Թովմա Արծրունու մատնանշած կապարի ու պղնձի ձուլվածքի նման պինդ կրաքարային որմածքը քառանկյունի հսկայական պալատը, որ կառուցված էր առանց սյուների, և այդ պալատի վրա բանեցված 200.000 լիտր կամ մոտ 5000² փութ³ երկաթը՝ կարևոր ցուցումներ են, անշուշտ, որ կարոտ են դեռ ուշադիր քննության համապատասխան մասնագետների կողմից:

Շքեղ ու հարուստ շինարարության գլխավոր կենտրոններն էին 10—11-րդ դարերում, առավելապես, Հայաստանի փերոհիշյալ մեծ քաղաքները և հայկական մանր իշխանությունների նստավայրերը: Մական այդ պատմական վայրերում գտնվող հուշարձաններն ու նյութական կուլտուրայի մնացորդները, դժբախտաբար, բավարարաչափ դեռ չեն ուսումնասիրված: Բացառություն են կազմում միմիայն Անին ու նրա հիշատակարանները, որոնք շնորհիվ ակադեմ. նիկ. Մառի գիտական լուրջ ու երկարատև աշխատանքներին, ուսումնասիրված են և մեզ գաղափար են տալիս թե Բագրատունյաց դաշաշրջանի քաղաքների և թե, ընդհանրապես, միջնադարյան հայ կուլտուրայի ու ներքին կենցաղի մասին:

Արդ՝ ամենից առաջ, պետք է պարզել, թե ինչ էին ներկայացնում հենց իրենք՝ Բագրատունյաց շրջանի քաղաքները:

Հիմնվելով Ն. Մառի և Թ. Թորամանյանի Անիում կատարած էրկարամյա հնագիտական հետախուզումների վրա՝ դժվար չէ, իմ

¹ Թովմայի վարդապետի Արծրունոյ, Պատմութիւն տունն Արծրունեաց, 1857, IV, գլ. է, էջ 296:

² Լիտրը Թովմայի վկայության մեջ, հավանորեն, Իրաքի լիտրն է, որը հավասար է 105 գրամի:

կարծիքով, համոզվել, որ Անին ու Բագրատունյաց Հայաստանի մյուս մեծ քաղաքները շատ քիչ էին տարբերվում Առաջավոր ու Միջին Ասիայի ժամանակակից քաղաքներից:

Պարսկաստանի ու Միջին Ասիայի մեծ քաղաքները, ինչպե՞ս երևում է ակադեմ. Բարտոլդի հաղորդած տեղեկություններից¹, բաղկացած էին երեք մասերից, որ անվանվում էին «կուխենդուգ», «շահրիստան» և «ռաբադ»: «Շահրիստան»-ը, որը շրջապատված էր հատուկ պարիսպով՝ քաղաքների ներքին մասն էր, և կարելի է ասել, որ նա հենց բուն քաղաքն էր: Նրա կենտրոնում, մայր մզկիթի շուրջը, զետեղված էին մեծ շուկաները, և նրա մեջ էր գտնվում նաև «կուխենդուգ»-ը՝ քաղաքի միջնաբերդը կամ ամրոցը: «Շահրիստան»-ին կից և նրա պարիսպներից դուրս գտնվում էին քաղաքի արվարձանները՝ «ռաբադ»-ը, որը համարվում էր նույնպես քաղաքի մասը և հաճախ շրջապատված էր, ինչպես և «շահրիստան»-ը, հատուկ պարիսպներով: «Շահրիստան»-ում ապրում էին ազնվականությունը և իշխող դասերը, իսկ «ռաբադ»-ում, գլխավորապես, աշխատավոր ռամիկ բնակչությունը, որի մեջ մեծ թիվ էին կազմում հողից զրկված ու քաղաք գաղթած չքավոր գյուղացիները: «Ռաբադ»-ը ևս ուներ իր շուկաները և նրա մեջ էին գտնվում, մեծ մասամբ, նաև արհեստավորական առանձին թաղերը:

Բագրատունյաց թագավորության նշանավոր Անի քաղաքը, ինչպես հայտնի է, իր ավերակներում պահպանել է հայկական մեծ քաղաքի բնույթն ու կերպարանքը: Եվ դժվար չէ ըստ իս պարզել, որ ողջ, որ նա ըստ իր հատակագծի միանգամայն համապատասխանում է արևելյան վերոհիշյալ երկրների քաղաքներին: Պարիսպների մեջ գտնվող նրա ներքին մասը, որ մանրամասն ուսումնասիրել ու նկարագրել է ակադեմ. Նիկ. Մառը, պարզապես Անիի «շահրիստան»-ն է, որն Արիստակես Լաստիվերտցու պատմության մեջ անվանված է «շահաստան»²: Սրա մեջ էին գտնվում Անիի միջնաբերդը և Բագրատունիների լեռհարկանի ապարանքը, որոնք համապատասխանում են Պարսկաստանի ու Միջին Ասիայի «կուխենդուգ» անվանվող ամրոցներին: Պարսպապատ Անին, որի տարածությունն ընդամենը մոտ 170 հեկտար է, ինչպես շատ ճիշտ նկատե՞

¹ См. В. Бартольд, Историко-географический обзор Ирана, СПб. 1903, էջ 8, 9, 29, 35 ևն.:

² См. в т. 1, էջ 63. Հմտե՛ն նաև «Մեխիտինէ շահաստան», Լաստիվ, գլ. 112, «շահաստան Բռնավէժ», «շահաստան Նիւշապուհ», Ղազար Փարպեցի, II, 48 և II) 68, «շահաստան Բաղէշ», «շահաստան Դուին», Թովմա Արծրունի (Ս. Պետերբ. 1887), II 6, էջ 110 և III 22, էջ 230, ևն.:

է Թորամանյանը¹, հաղիվ կարող էր բավականանալ Բագրատունի-
ների ընտանիքին, ազնվականութեանը, պաշտոնեութեանը և բարձ-
րաստիճան եկեղեցականներին: Ուստի և, նրա կարծիքով, մեծագույն
մասն Անի քաղաքի, որի մեջ բնակվում էր հասարակ ժողովրդի բազ-
մութիւնը, պետք է ենթադրել պարիսպներից դուրս շրջակա արվար-
ձաններում:

«Անիի պարիսպի հիւսիսային կողմը տարածուած ընդարձակ
դաշտավայրին մէջ,— ասում է Թորամանյանը,— քննական պտոյս
մը շատ բան կը բացատրէ պարիսպէն դուրս ապրող ժողովուրդի
կեանքին և դիրքին վրայ: Աւագ դռնէն մօտաւորապէս կէս քիլոմեթր
հեռու դէպի հիւսիս մեծ բաղնիքի մը կիսականգուն մնացորդը, մէկ
քիլոմեթր աւելի անդին Հովիւի եկեղեցին, անկէջ աւելի հեռուն դէպի
հիւսիս դարձեալ մի ուրիշ մատուռի ու անոր կից գեղեցիկ մահար-
ձանի մը մնացորդները պատահական կերպով անսպասակ չէին
շխուած: Եթէ մօտավորապէս մէկ ու կէս քիլոմեթր դէպի հիւսիս
կարելի է այսպէս բնակութեանց մատուռներու ու դամբարաններու
մնացորդներ տեսնել, նոյն բաները կարելի է տեսնել նաև դէպի
արևելք, շատ քիչ ընդհատումներով մինչև Հոռոմոսի վանքը, և դէպի
արևմուտք մինչև Անի գիւղի արևմտեան սահմանները»²:

Մատնանշելով և ուրիշ հիշատակարանների մնացորդներ Անիի
շրջակայքում՝ Թորամանյանը ենթադրում է, որ

«պարիսպներէն դուրս էր բուն Անի քաղաքը և պարիսպը քա-
ղաքին ամրոցն էր»³:

Թորամանյանի այս ենթադրութիւններից ճիշտ չէ, իհարկե,
նրա կռահումը, որ իբր թե Անիի պարսպապատ մասը քաղաքի ամ-
րոցն էր: Այդ մասը, իրապէս, ինչպես տեսանք, «շահրիստանն» էր
կամ «շահաստան»-ը, որի հարավային անկյունում գտնվում էր
քարձր տեղում Անիի միջնաբերդը կամ ամրոցը:

Սակայն միանգամայն ուղիղ է և համոզիչ Թորամանյանի հիմ-
նական եզրակացութիւնը: Անի քաղաքի մեծագույն մասը, ինչպես
գիտատական տվյալներով ցույց է տրված Թորամանյանի հոգվա-
ծում, կազմել են ակներևաբար ընդարձակ ավերակներն Անիի ար-
վարձաններում, որոնք, ինչպէս տեսանք, միջնադարյան արևելյան
քաղաքների կարևոր մասն էին և անվանվում էին «ռաբադ»:

¹ Տե՛ս նրա հոդվածը՝ «Անի քաղաք թե՛ ամրոց», Ազգագրագիտ. հանդես, 1911, № 1, Թիֆլիս, 1912, էջ 66:

² Տե՛ս նույնը, էջ 68:

³ Նույնը, էջ 70:

Անիի մասին կարևոր այս եզրակացությունը բոլորովին նույն լույս է սփռում Բագրատունյաց Հայաստանի մեծ քաղաքների տարածության և աղգաբնակության թվի վիճելի խնդիրների վրա:

Արաբական մատենագիրները հաղորդում են, որ Առաջավոր ու Միջին Ասիայի քաղաքները, օրինակ՝ Մերվը, Ռեյը, Պարթավը և ուրիշները՝ ոսնեին ավելի քան մեկ փարսախ կամ մոտ 6 կիլոմետր երկարություն ու նույնքան լայնություն և գրավում էին մոտ 40 քառակուսի կիլոմետր տարածություն, այսինքն՝ մոտ 4000 հեկտար: Միանգամայն հավանական է, իմ կարծիքով, որ նույն տիպի և մոտավորապես նույն մեծության քաղաքներ էին նաև Անին և 10—11-րդ դարերի հայկական մյուս մեծ քաղաքները: Այս վերջիններքի մակերեսը որոշելիս անհրաժեշտ է, իհարկե, ի նկատի ունենալ ոչ միայն նրանց պարսպապատ «շահաստան» մասը, որն Անիում ընդամենը կազմում է մոտ 170 հեկտար, այլև նրանց արվարձանները:

Եվ իհիշտ են մեր այս դիտողությունները, ինձ թվում է, կարող ենք նաև վստահորեն եզրակացնել, որ Բագրատունյաց շրջանի խոշոր ու նշանավոր քաղաքներն իրենց բնակչության քանակով շատ ավելի մեծ են եղել, քան միջնադարյան եվրոպական քաղաքները, որոնք առ առավելն ունեցել են 25.000 բնակիչ, իսկ, ընդհանուր առմամբ, ավելի ևս պակաս¹:

Դվինի, Անիի ու Արծնի բնակչության թվի մասին մատենագրական աղբյուրների մեջ կան, մեծ մասամբ, անուղղակի վկայություններ: Թովմա Արծրունին, օրինակ, նկարագրելով 893 թվի Դվինի մեծ երկրաշարժը՝ վկայում է, որ այդ երկրաշարժի ժամանակ Դվինում մահացել էին ավելի քան 70.000 մարդ²: Բյուզանդական պատմագիր Կեդրենոսը հաղորդում է, որ Սելջուկյան 1049 թվի արշավանքի ժամանակ ավերված ու հրդեհված Արծն քաղաքում սպանվել ու այրվել էին մոտ 140.000 բնակիչ³: Անի քաղաքի մեջ, պատմիչների ասելով, հաշվվում էր 10.000 տուն և 100.000 բնակիչ⁴:

Մեջ բերված այս կլոր թվերը կարող են, իհարկե, համարվել

¹ Տե՛ս Կարլ Бюхер, Возникновение народного хозяйства, вып. второй СПб. 1907, էջ 131:

² Տե՛ս «Պատմութիւն տանն Արծրունեաց», Ս. Պետերբուրգ, 1837, III, 22, էջ 230—231:

³ Տե՛ս Հրատարակ. Բեկկերի, Բոն, 1839, հատոր II:

⁴ Տե՛ս Զ. Օրբելի, Անվո ավերակները, հայեր. թարգմ. Վաղարշապատ, 1911, էջ 26:

վիճելի ու անհավաստի: Սակայն ի նկատի առնելով Անիի և մյուս մեծ քաղաքների ընդարձակ արվարձանները, ինձ թվում է, կարող ենք վստահորեն ենթադրել, որ Բագրատունյաց Հայաստանի խոշոր քաղաքներն ունեցել են, հավանորեն, ավելի քան 50.000 և նույնիսկ մինչև 100.000 բնակիչ:

Քաղաքների բնակչության իրավական դրուժյան մասին մենք պրեթև չունենք տեղեկություններ: Մատենագրական մի քանի վկայություններից կարելի է միայն կռահել, որ իրենց սոցիալական յրրությամբ քաղաքացիներն ավելի բարձր են եղել դասված, քան գյուղացիները:

Խոսելով Վաղարշակ Թագավորի սահմանած կարգերի մասին՝ խորենացին հատկապես մատնանշում է, որ քաղաքացիներին պետք է ավելի հարգել ու պատվել քան գյուղացիներին:

«Հրաման է տալիս (Վաղարշակը),— ասում է խորենացին,— որ քաղաքացի մարդիկ ավելի հարգված ու պատվված լինեն քան գյուղացիները և որ գյուղացիները պատվեն քաղաքացիներին ինչպես իշխաններին, իսկ քաղաքացիները շատ չպարծենան գյուղացիների մոտ, այլ նրանց հետ վարվեն եղբայրաբար, որպեսզի պահսլանվի բարեկարգությունը և աննախանձ կյանքը, որ պատճառ են բարեկեցության և կենաց խաղաղության»:

(«Հրաման տալ՝ և քաղաքացեաց մարդկան արգոյ և պատիւ լինել առաւել զգեղջկաց և գեղջկաց պատուել զքաղաքացիս որպէս սիշխանս. և քաղաքացեաց մի կարի առ գեղջկօքն պերճանալ, այլ եղբայրաբար վարիլ, վասն բարեկարգութեան և աննախանձոտ կենաց, որ է շինութեան և խաղաղութեան կենաց պատճառք»)¹:

Խորենացու այս վկայության մեջ կարելու է ոչ թե նրա պատմական կողմը, այլ այն, որ խորենացու ժամանակ, փններորդ դարի երկրորդ կիսում, քաղաքացիներն ավելի հարգված ու արտոնված դաս են համարվել, քան գյուղացիները:

Քաղաքացիների այս արտոնյալ դրուժյունը մատնացույց է արված նաև Հովհաննես Դրասխանակերտցու ուշագրավ մի վկայության մեջ: Խոսելով Զվարթնոց եկեղեցու շինության մասին՝ նա հաղորդում է, որ ներսես Գ. Կաթողիկոսը՝

«Աղատ ժամանակ դտնելով՝ իր շինած հրաշակերտ եկեղեցու դրսի կողմը փակում ու ամրացնում է պաշտպանող շրջապարիսպով և բնակվելու տուն է կառուցում իրեն համար սրա ներսում կոփած

¹ Տե՛ս «Մովսիսի Խորենացու, Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, II, Գլ. Ը, էջ 117—118:

Հաստատանքից քարերից: Այլև նույնպես Հաստատում ու բնակեց-
նում է այնտեղ երգերի մարդկանց բազմությունը քաղաքների բնակ-
չության պայմանով»:

(«Բայց հայրապետն ներսէս պարապ անձին գտեալ՝ զարտա-
բոյս հրաշակերտ եկեղեցւոյն, զոր իւր իսկ էր շինեալ՝ շուրջանակի
պատուար պարսպով փակեալ ամրացուցանէր, յօրինեալ ի նմա
յարկս բնակութեան ինքնեան Հաստատանքից Կոփածոյ քաղաքը:
Այլ և կարգեալ Կացուցանէր ի նմա ամբոխութիւնս երգումարդաց
ըստ պայմանի քաղաքականաց»)¹:

Թե ինչպիսի ներքին կազմակերպություն ևն ունեցել և թե ինչ-
պես են կառավարվել վերոհիշյալ քաղաքները՝ այդ մասին ևս մենք,
դժբախտաբար, պարզ տեղեկություններ չունենք: Որոշ է միայն, որ
նրանք, լինելով թագաւորական կամ իշխանական երկրների կեն-
տրոնավայրեր, գտնվել են Բագրատունիների, Արծրունիների և աշ-
խարհիկ կամ հոգևոր ֆեոդալների իշխանության տակ:

Մատենագրական աղոտ ու պատահական վկայություններից
երևում է նույնպես, որ հայկական մեծ քաղաքները նման են եղել
արեւելյան հարևան երկրների մեծ քաղաքներին ոչ միայն ըստ
իրենց տիպի, այլ մասամբ նաև ըստ իրենց վարչական ներքին կար-
գերի: Անիի արձանագրություններում հիշատակված է, օրինակ, Անի
քաղաքի կարևոր պաշտոնյաներից մեկը՝ «մուխսիբ»-ը կամ «մու-
սալիպ»-ը², արաբական հայտնի «մուխթասիբ»-ը, որին թե խալի-
ֆայության և թե Բագրատունյաց քաղաքներում հանձնարարված է
եղել վերահսկողությունն առևտրի, արհեստների, շուկայի, կշիռ-
ների և չափերի վրա ու գանձումը քաղաքային հարկերի:

Աղբյուրների որոշ ցուցումներից ու ականարկներից դժվար չէ
նաև հետևել, որ քաղաքային կյանքում կարևոր տեղ է ունեցել
երկրագործությունը և քաղաքների բնակչության զգալի մասը կազ-
մել են հողատեր ազնվական կամ ռամիկ քաղաքացիները, որոնք
քաղաքի արվարձաններում ունեցել են այգիներ, քանջարանոցներ
և հողագործական այլ տնտեսություններ: Բայց մեծ քաղաքների
հարստության գլխավոր աղբյուրը ոչ թե գյուղատնտեսությունն էր,
այլ, ինչպես վերև տեսանք, միջազգային ու ներքին մեծ առևտուրը:
Ուստի և հասկանալի է, որ քաղաքային տնտեսության մեջ մեծ կշիռ
ու նշանակություն էին ստացել հայ վաճառականությունն ու բուր-

¹ Տե՛ս «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ, պատմութիւն հա-
լոցո. Թիֆլիս, 1912, էջ 88:

² Տե՛ս Կ. Կուսանյանց, Վիմական տարեգիր, Ս. Պետերբ. 1912, էջ 27 և 221:

ուսագիտական և խոշոր դեր էին կատարում նմանապես և արհեստավորները:

Արհեստավորության մասին Կովկասում և Հայաստանում խիստ հետաքրքրական են ակադեմ. Ն. Մառի դիտողությունները: Մառը ենթադրում է, որ արհեստներով զբաղվել են այս երկրներում տարբեր ցեղեր և որ այդ որոշ տեղերում պահպանվել է մինչև մեր օրերը: Նա ընդունում է նույնպես արհեստագործության ժառանգական լինելը, արհեստակցական եղբայրությունների գոյությունը և ընտրական սկզբունքի կիրառումն այս կազմակերպություններում, որոնք հետագայում վերածվել են համքարությունների¹:

Ակադեմ. Մառի այս ենթադրությունները միանգամայն հնարավոր կռահումներ են, և ավելի քան հավանական է, որ նորագույն դարերի արհեստավորական համքարությունների ծագումը շատ հին է և որ նրանք գոյություն են ունեցել դեռ Բագրատունյաց Հայաստանում, և, հավանորեն, նաև ավելի հին ժամանակներում: Համքարությունները հայերի մոտ, ինչպես շատ ճիշտ մատնանշել է Ախվերդովը², իրենց ծագումը պարտական են արևելյան կյանքի ինքնուրույն հիմունքներին և գոյություն են ունեցել մինչև իսկ հին Պարսկաստանում: Եվ իրավի, Սասանյան Պարսկաստանի և արական խալիֆայության ներքին կյանքին վերաբերող նորագույն ուսումնասիրություններից հայտնի է, որ արհեստավորների խմբական միավորություններ գոյություն են ունեցել ինչպես արաբական խալիֆայության, նույնպես և ավելի առաջ Սասանյան Պարսկաստանի քաղաքներում:

Դառնալով հարմար ու չեզոք տեղիտորիա տրանզիտային ու միջազգային առևտրական հարաբերությունների համար՝ Բագրատունյաց շրջանի Հայաստանը և նրա քաղաքային կենտրոններն իրենք ևս մեծ չափով մասնակից եղան համաշխարհային այդ առևտրին սեփական իրենց արտադրության ապրանքներով: Այդ մասին ուշագրավ տեղեկություններ հաղորդում են, զխավորապես, արական աղբյուրները, որոնց վկայությունները բավական ընդարձակ

¹ Տես Март Н., Кавказский культурный мир и Армения, Петроград, 1915, էջ 16—17:

² Տես Тифлиссские амкары, из записок Ю. Ф. Ахвердова, Тифлис, 1983, էջ 6—7:

մեջ են բերված ֆրանսիական գիտնական Լոուանի «Հայաստանը և Բյուզանդիայի և Իսլամի միջև» աշխատության մեջ:

Արաբական մատենագիր Տաբարին, օրինակ, իր պատմության մեջ վկայում է, որ Հայաստանը հարուստ է եղել հացաբույսերով և իր ցորենն արտահանել է Բաղդադ¹: Այս կարևոր վկայությունից պարզ երևում է, որ ապրանքային լայն շրջանառության մեջ մտած է եղել մինչև իսկ Հայաստանի ֆեոդալական-երկրագործական մշակույթը:

Առանձնապես հետաքրքրական են նաև արաբական մատենագիրների հազորդած տեղեկությունները Հայաստանի մեծ անտառների և Հայաստանից արտահանվող շինարարական փայտի մասին²: Արաբական աշխարհագիր Իբն ալ-Ֆակիհի վկայությամբ՝ Հայաստանի անտառներում կտրում էին ծառեր 20 թիզ հաստությամբ և համեմատաբար մեծ քանակությամբ վաճառում էին ընկուղենիներ: Բւշահրության արժանի է և այն, որ Իստախրիի մոտ մատնացույց են արված մեծ անտառներ՝ հատկապես Արարատ լեռան լանջի վրա: Այս վկայություններից պարզ երևում է, որ Բագրատունյաց շրջանում անտառային տնտեսությունը եղել է Հայաստանում անհամեմատ ավելի ընդարձակ, քան հետագա ավելի ուշ ժամանակներում:

Իբրև վաճառքի ու արտահանության կարևոր առարկաներ արաբական մատենագիրների մոտ հաճախ հիշատակված են Հայաստանի ձկները՝ Վանա լճի տառեխը, Սևանա լճի իշխանը և Կուր գետի շամային: Ուշագրավ է, որ միջին դարերում չորացրած ու աղած ձուկը լայն սպառման առարկա էր ոչ միայն Արևմտյան Նվրոպայում, այլև Արևելքում: Տառեխը և շամային, ինչպես հայտնի է արաբական աղբյուրներից, վաճառվում էին մինչև իսկ Հայաստանից դուրս՝ Ադրբեջանում, Իրաքում և այլ երկրներում: Իբն Հալդունի հարկացուցակից հայտնի է նույնպես³, որ բացի դրամական մեծ հարկերից, արաբական խալիֆայությունը վերցնում էր Հայաստանում իբրև բնահարկ մեծ քանակությամբ աղած ու թթու դրած ձուկ:

Իբն Հալդունի հարկացուցակի մեջ մատնանշված է առանձնապես, որ իբրև բնահարկ Հայաստանը յուրաքանչյուր տարի խալիֆայությանը տալիս էր 200 ջորի: Ըստ երևույթին, Հայաստանի ջորինները, ինչպես և ձիերը, շատ բարձր էին գնահատվում ոչ միայն հին

¹ Տե՛ս Լոուան, «Հայաստանը և Բյուզանդիայի և Իսլամի միջև», Փարիզ, 1919, էջ 38:

² Նույնը, էջ 40:

³ Տե՛ս A. Kremer. Culturgeschichte des Orients unter den Chalifen, I, էջ 358

քսենոֆոնյան, այլ արաբական այս ժամանակաշրջանում՝ Հայկական ձիերի պահանջը, ինչպես վկայում է Իբն Հաուկալը, նրանց պնդակազմության ու դիմացկանության պատճառով, շատ մեծ էր ամբողջ խորասանում, իրաքում և Ասորիքում¹։

Արաբական և հայկական աղբյուրները նույնպես հիշատակում են մի շարք լեռնային արդյունաբերության արտադրանքներ, որոնք արդյունահանվում էին Բագրատունյաց Հայաստանում։ Ց-րդ դարի վերջին քառորդում, ինչպես հայտնի է Ղեռնդ պատմագրի վկայություներից², Հայաստանի լեռներում, հավանորեն Սպերում, գտնվել էին արծաթի հանքեր։ Յակուտի աշխարհագրական բառարանում մատնանշված են երկաթի հանքեր վարածնունիք գավառում և Բալուի մոտ³, Պղնձի հանքեր կային դարձյալ այս վարածնունիք գավառում⁴ ու նաև Գնդարքում և Ալահունիքում։ Մյուս հանածոներից աղբյուրների մեջ հիշատակվում են բորաքս և զադիկ, որոնց արտահանությունը, տալիս էր, ինչպես վկայում է Իբն Հաուկալը⁵, մեծ վաստակ։ Համաձայն Յակուտի և Իբն ալ-Ֆակիհի վկայությունների, Հայաստանում արդյունահանվում էին նաև լեռնային ձյուլթ, սնդիկ, պղնձարջասպ և արճիճ⁶, Աղահանքերից, որ հիշատակված են մի քանի շրջաններում, ամենից նշանավորն էր Կողբի աղահանքը։

* * *

Ավելի մեծ է եղել Բագրատունյաց Հայաստանի մասնակցությունը միջազգային ու տեղական մեծ առևտրին արհեստագործական իր արտադրություններով։

Աղբյուրների վկայություններից երևում է, որ վերածնության այս ժամանակաշրջանում արագությունը զարգացել էր մանածագործական արդյունագործությունը։ Այդ արդյունագործության և հետևապես Հայաստանում պատրաստվող բրդե, բամբակե ու մե-

¹ Տե՛ս Լոռան, «Հայաստանը Բյուզանդիայի և Իսլամի միջև», էջ 39։

² Տե՛ս հրտ. Մալխասյանցի և Եղյանցի, Ս. Պետերբ. 1887, դւ. 1 է, էջ 155։

³ Մկր. Հաղարյան, «Հայաստանը արաբական տիրապետության տակ» (գեոմ.), Մաղբուրդ, 1903, էջ 74։

⁴ Նույնը, էջ 74։

⁵ Տե՛ս Լոռան, էջ 41։

⁶ Համեմատե՛ք Н. А. Караулов. Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане. Сборник материалов для описания местностей и племен Кавказа, 1902, XXXI, էջ 39։

⁷ Տե՛ս Լոռան, էջ 41, Караулов, Сборник материалов, XXI, Kremer, Culturgeschichte des Orients, I ևն։

տաքսե զանազան գործվածքների ու կտորների մասին կարևոր տեղեկություններ հաղորդում են արաբական մատենագիրները՝ Իստախրին, Իբն Հաուկալը, Յակուբին, Մասուդին և ուրիշները։ Սրանց վկայություններում հիշատակվում են Դվինի կտորներն ու հագուստները, որոնք անվանվում էին «մարիզի» (marizi), գոտիները, որոնք արժեին 1-ից մինչև 10 դենար (= մոտավորապես 5-ից մինչև 50 ոսկի ռուբլի), գլխի փաթեցները, ծածկոցները, բազմոցների ու բարձի երեսները, թիկնոցները և վարազույթները։ Հիշատակվում է նաև Դվինում պատրաստվող երփներանգ ու ծաղկավոր «բոզյուն» (bozjun) կոշիկը մետաքսե ծանր կտորը։

Հայաստանի մանածագործվածքներն արտահանվում էին ոչ միայն խալիֆայության արևելյան երկրները, այլև Բյուզանդիա։ Գերմանական գիտնական Կրեմերի ցուցումներից¹, որոնք հիմնված են արաբական աղբյուրների վրա՝ հայտնի է, որ Տրապիզոնում, որը բյուզանդա-արաբական առևտրի գլխավոր նավահանգստային կենտրոնն էր՝ վաճառվում էին մետաքսե հիանալի հայկական գործվածքներ՝ դիպակ (dubag) և «բոզյուն» (bozjun) ու նաև այլ կտորներ։ Հայկական գորգերը համարվում էին ընտիր ու արժեքավոր, և Հայաստանը յուրաքանչյուր տարի խալիֆայությանը տալիս էր իբրև բնահարկ 20 գորգ²։ Թանկարժեք հայկական գորգերը հիշատակված են նվերների թվում, որ տւղարկել էր Ղազնևիտյան Մահմուդը Կաշգարի Կադըր-խանին³։

Շքեղ ու ոսկեզարդված մետաքսե հագուստների ու նաև բազմոցների փարթամ ու նկարազարդված երեսների մասին, որ նվիրել էր Սմբատ Ա-ը (890/1—914 թ.) Ատրպատականի Յուսուֆ ոստիկանին՝ հետաքրքրական են նույնպես Հովհաննես Դրասխանակերտցու հետևյալ վկայությունները.

1. «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտույ, Պատմութիւն Հայոց», Թիֆլիս 1912, էջ 198՝

«Իսկ արքան, ուրախանալով նրա (Յուսուֆի) առատածեռն պարգևների վրա և ընդունելով մեծ շնորհակալությամբ՝ նրանից ոչ պակաս, այլ ավելի դեռ շատ ինքը նրան ընծայեց հանդերձանքների բարեվայելուչ, չքնադատես ու երևելի զարդարանքներ և բազմոցների նկարազարդված ու կարմիր որդանաների գործվածքներ, և ըմպանակներ ու զավաթներ, և ամբողջովին ոսկուց շինված քամար՝

¹ S. Kulturgeschichte des Orients unter den Challfen, I, էջ 342:

² Նույն տեղում, էջ 358:

³ S. Бартольд, Историко-географический обзор Ирана.

գործ հռոմ վարդապետների, տեսակ տեսակ ապակու գույններով...»:

(«Իսկ արքայի խրախ լեալ ի բարեձիր պարգևս նորա՝ և ընկալալ մեծաւ շնորհակալութեամբ, ոչ սակաւ ինչ քան թէ բազմամասնաբար յիւրմէն ևս նմա ընծայէր բարեվայելուչ և շքնադատես և խրեելի զարդս հանդերձանաց, և նկարակերտ կազմուածս բազմականաց կարմրութեամբ որդանց, և ըմբակս և նուազս և կամար ի համակ ոսկուոյ՝ գործ հռոմայական ճարտարաց, յերանգս գունակ գունակ ապակուոյ...»):

2. Նույնը, էջ 210՝

«Իսկ երբ պատրվակը բացվեց և հասկանալի եղավ մեզ հագորացի վայրագ գազանի մոմռոցն ու սպառնալիքը՝ ըստ բարի կամեցողության արքա Սմբատի ու նաև այլ նախարարների հանձնարարութեամբ՝ ես ճանապարհվեցի ու գլուխս քաշ գնացի պարսկական Ատրպատական դառնաբարոս ոստիկանի մոտ և արքունի թանգարաններից նրան տարա բազմազան ընծաներ ու նվերներ՝ ոսկեկար երեւելի զգեստներ և շատ բազմոցներ, որ գործել էին նկարագորդող կանայք, և շատ ձիեր ու ջորիներ, որ հարգարված էին զենքերով ու զարդերով, նաև ոսկու և արծաթի գանձեր»:

(«Իսկ արդ իբրև բացաւ պատրուակն՝ զեկուցաւ մեզ մոմռումն և սպառնութիւնն վայրագն գազանի Հագարացուն, ըստ բարոյականի կամեցողի արքային Սմբատայ և այլոց ևս նախարարացն սադրելոյ, դէմ եդեալ ես տարադէմ գնացի և Պարսս Ատրպատականի առ ոստիկանն դառնացող ընծայիւք և պատարագօք բազմօք յարքունի թանգարանաց երեւելի ոսկեճամուկ զգեստուք և ի նկարակերտ կանանց ոստայնանկութեանց բազում բազմականս կազմեալ, և բազում ձիս ու ջորիս ի զարդս և ի զէնս յարգարեալ, այլ և գանձս ոսկույ և արծաթոյ»):

Միջնադարյան հայ մանածագործութեան ուսումնասիրութեան ու փնտհատման համար առանձնապես կարևոր են, իհարկե, նաև այն մանածագործվածքները, որոնք ձեռք են բերված պեղումներով, Այս տեսակետից կարևոր գյուտեր են արված Անիում կատարված պեղումների ժամանակ: Ակադեմիկ Հ. Օրբելու «Անվոն ավերակները» աշխատութեան մեջ¹ մատնացույց է արված, որ 1908 թվին Անիում

«Գտնված է մետաքսե ամբողջ հագուստ ոսկե բանվածքներով ու մետաքսով, և ոսկով նուրբ հյուսած քող և մետաքսե ժապավենից գոտի»:

¹ Տե՛ս հայերեն թարգմ., Վաղարշապատ, 1911, էջ 46:

Մանածագործական արդյունաբերության զարգացման համար Հայաստանը ոչ միայն ունի հումք՝ բուրդ, բամբակ ու մետաքս, այլև ամեն տեսակ ներկեր, որոնց պահանջը չափազանց մեծ էր մինչև դարերում:

Ինչպես հայտնի է հունական, հռոմեական և հին հայկական աղբյուրներից, Հայաստանը դեռ հին ժամանակներում խիստ հարուստ էր հանքային և բուսական ներկերով: Ստրաբոնն իր «Աշխարհագրության» մեջ հաղորդում է¹, որ Սպերում կար «սանդիկ» (sandix) մետաղը, որն անվանվում էր նաև «հայկական ներկ» և նման էր ծիրանի ներկին: Պլինիոսը նույնպես իր «Բնական պատմության» մեջ² հիշում է Հայաստանում պատրաստվող մի ներկ, որ նկարիչներն անվանում էին «որոբիտիս» (orobitis), նաև Հայաստանից արտահանվող մի քար, որ կոչվում էր «արմենիում» (armenium) և ներկում ոսկեբորակի (chrysocolla) նման: Խորենացու «Աշխարհագրության» մեջ³ Աղձնիք նահանգում հիշատակված է «գղթոր»-ը, որը, ըստ երևույթին գործադրվում էր սև ներկի համար:

Բայց ամենից հռչակավոր ու մեծագին ներկը Հայաստանի «որդան կարմիրն» էր, որն արդյունահանվում էր Արարատյան դաշտում: Այս ներկի մասին կարևոր տեղեկություն է տալիս Ղազար Գարպեցին.

«Նաև իզուր չէ, — ասում է նա, — Արարատյան ամենաբաղձալի դաշտն իրեն մեջ սնուցանում է եղեգնասեռ բույսերի արմատներ, այլ նա, ծնելով նրանցից որդեր իբրև կարմրատեսիլ գույների պարզ՝ ընծայում է օգուտ սիրողներին որպես շահ և շքեղություն»:

(«Նաև զարմատս նղէգնասեռ բուսոցն ոչ ընդունայն սնուցանել յինքեան ամենաբաղձ դաշտն Այրարատոյ, այլև ի նմանէ ծնեալ որդունս, ի զարդ կարմրատեսիլ գունոց, ընծայէ օգտասիրացն շահս և շքեղութիւնս»)⁴:

Արաբական աղբյուրների մեջ այս ներկն անվանված է «կիրմիզ»։ Նա մեծ քանակությամբ ծախվում էր Պարթևիում, Բաղդադում և արևելյան մեծ քաղաքներում և, ինչպես մատնանշում է գերմանական գիտնական Հայդը⁵, նրանով Բաղդադում. ներկում էին

¹ Տե՛ս հայերեն թարգմ., Վաղարշապատ 1911, XI, 14, 9:

² XXXIII, 27, 1 և XXXV, 28, 1 (հրատր. Լիտտերի, Փարիզ, 1883):

³ Տե՛ս «Մատենագրութիւնք», Վենետիկ, 1843, էջ 607:

⁴ «Ղազարայ Գարպեցոյ, Պատմութիւն հայոց», Տիգլիս, 1904, I գլ. 7, էջ 10:

⁵ See Heyd, Histoire du commerce du Levant, հատ. II, էջ 609:

մետաքսե գործվածքները, որոնք «կիրմիզ» անունով արտահանվում էին նույնիսկ Եվրոպա: Հայաստանում ներկարարության ամենախոշոր կենտրոնն էր Դվինի մոտ գտնվող Արտաշատը, որն արաբական մատենագիր Բեռազորին անվանում է «կիրմիզ»-ի, այսինքն՝ «որդան կարմիրի գյուղ»¹:

Արհեստագործական արտագրության մյուս ճյուղերից մեծապես զարգացած էր Հայաստանում բրուտությունը: Սրա զարգացման պարզ ապացույց է այն ամանեղենը, որ ձեռք է բերված պեղումներից և պահվում է թանգարաններում: Անիի ու Դվինի պեղումների ժամանակ, ինչպես հայտնի է, գտնված են ոչ միայն սովորական կավեղեններ, այլ մինչև իսկ շքեղ հախճապակի: Մասնավորապես Անիում գտնված հախճապակյա ամանների մասին, որոնք, մեծ մասամբ, Անիում են շինված, ուշագրավ են ակադեմ. Օրբելու հաղորդած տեղեկությունները:

«Զարմանալի են, — ասում է Օրբելին, — հախճապակյա ամանները իրենց թափանցիկ կողերով և ուռուցիկ ու խոր գծած նկարներով, և ճենապակիից ամանները՝ իրենց հարուստ և բազմազան ոսկեգոծ ու բազմերանգ նկարներով, նույնպես և ուռուցիկ ու ներս ընկած զարդարանքներով. դրանք գտնված են թագավորական ապարանքի պեղումներում: Բեկորներից երևում է, որ ամանների մեծագույն մասը թափովի է, և աչքի են ընկնում թափման (որ հինգ տեսակից ավելի է) բարձր կատարելությամբ, նույնպես և գեղարվեստորեն կատարված լինելովն ու ներկերի պայծառությամբ»²:

Մետաղների արդյունահանման և մշակման մասին պատահական ու հարեանցի տեղեկություններ տալիս են հայկական աղբյուրները: Մետաղագործությունը, ինչպես մատնացույց է արել ակադեմ. Ն. Մառը, կովկասյան ժողովուրդները ժառանգել էին հարեթական բնիկներից, որոնց մոտ մետաղագործական արհեստները զարգացած էին դեռ հնագույն ժամանակներում: Հատկապես Բագրատունյաց շրջանում Մովսես Կաղանկատվացու մոտ հիշված են արհեստագործներ, որոնք ունեին գիտություն «ոսկեգործության, արծաթահալության, երկաթահանության և պղնձագործության»³:

Անիի և Դվինի պեղումների ժամանակ հայտաբերված են մի շարք իրեր, որոնք գաղափար են տալիս նաև Բագրատունյաց ժա-

¹ Баладзорн, перев. П. К. Жүзе. Баку, 1927, էջ 10:

² Տե՛ս «Անվո ավերակները», հայեր. թարգմ., Վաղարշապատ, 1911, էջ 48—49:

³ «Պատմութիւն Աղուանից աշխարհի», Մոսկվա, 1860, II, 16, էջ 131:

մանակաշրջանի դարձնության, զինագործության, ոսկերչության ու այլ արհեստների մասին:

Ակադեմ. Շրջելու վերոհիշյալ աշխատության մեջ հիշատակված են, օրինակ, Անիի պեղումների ընթացքում գտնված մետաղե հետեյալ իրերը՝ մեծ սուր, եռաժանի տեգ, նիզակների ծայրեր, արույրե ու պղնձե սափորներ, պղնձե սկավառակ, արծաթե գավաթներ, երկաթե ճրագակալներ և այլն: Պետք է սակայն մատնանշել, որ շատ դժվար է ճշտիվ որոշել այդ իրերի ծագման դարաշրջանը:

* *

Քաղաքների ու քաղաքային տնտեսության բուռն ու արագ զարգացումը 10—11-րդ դարերում արժանի է առանձին ուշադրության: Լինելով կենտրոններ արհեստների, արդյունաբերության և փողային ու ապրանքային տնտեսության՝ Բագրատունյաց Հայաստանի քաղաքները իրենց մեջ պարունակում էին ֆեոդալական կազմակերպությանը ներհակ ու ընդդիմադիր նոր ուժեր, որոնք, ինչպես և Արևմտյան Եվրոպայում, հետզհետե ծնունդ էին տալիս տնտեսական ու սոցիալական նոր հարաբերությունների:

Տնտեսական կյանքում պարզ նկատելի էր այս ժամանակաշրջանում բացահայտ հեղաբեկումը փողային շրջանառության զարգացման ուղղությամբ: Արձանագրությունների տեղեկություններից երևում է, որ դրամական շրջանառությունը տարածվել էր ամբողջ երկրում ամենամեծ չափերով: Մեր նախորդ աշխատություններից մեկում մենք արդեն ցույց էինք տվել, որ 10-րդ և 11-րդ դարի առաջին կիսի տուրքերից շատերը եղել են դրամական¹:

Սյունյաց Սուփան իշխանի 901 թվի Մաքենոցք վանքի արձանագրության մեջ ասված է՝

«Ես Սուփան, Սյունյաց իշխան, շինեցի Մաքենոցքի եկեղեցիները և առատորեն զարդարեցի պատմական կահույքով և աստվածային գրքերով. և տվի սրան, որ եկեղեցու անունով կոչվում է Աստվածածին, մեր սեփական հողը բոլոր սահմանով՝ լեռ ու դաշտով. և տվի ձկան որսատեղին Բողաշենը սեղանին, և 700 դրամ Դեղձանագետի կապալից, 200 դրամ Կաթուկից, 350 Անմեռից, որ միասին կանեն 1250 դրամ»:

(«Ես Սուփան, Սինեաց իշխան, շինեցի զՄաքենոցաց եկեղեցիս, և անխնայաբար զարդարեցի պատուական սպասուք և աս-

¹ Տե՛ս «Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում», Երևան, 1922, էջ 93—94:

տուածային կտակարանաւք և ետու զսեփական տեղն մեր ի սա, որ ըստ անուան եկեղեցւոյս Աստուածածին ասի, ամենայն սահմանաւ լերամբ և դաշտիւ, և ետու որս ձկանց, զՐողաշէն, սեղանոյն և եւթն հարիւր դրամ ի Գեղձանագետոյ ղապալէն, երկու հարիւր դրամ ի Կաթկայ, երեքհարիւր յիսուն յԱնմեռէն, որ լինի ՌՄԾ. դրամ...»¹։

Նմանապէս՝ Շապուհ Բագրատունին, հայոց Աշոտ Թագաւորի որդին, 903 թվի վանեմանի արձանագրութեան մեջ ասում է՝

«Եւ տվի (վանեմանի եկեղեցուն) հինգ գյուղի սահման՝ Կոթաքարը, Աղարո վանքը, Շավառնահողը, Գետամեջը, Կթանոցը, Գետավանաց ծովը՝ 260 դրամ Կոթաքարից, 530 Բրտենիքից, 660 Աղարո վանքի ծովից, 990 Կարբի գետերից և նավերից»։

(«Եւ ետու հինգ գեղոց սահման՝ Կոթաքարն, Աղարոյ վանսն Շաւառնահողն, Գետամէջն, Կթանոցն, Գետավանաց ծովն, երկու հարիւր վաթսուն դրամ ի Կոթաքարէն, հինգհարիւր երեսուն ի Բըրտենեացն, վեց հարիւր վաթսուն յԱղարոյ վանացն ծովէ, իննհարիւր իննսուն ի Կարբին գետերէն և նաւերէն»)²։

Գագիկ Շահնշահը 1010 թվի Մաստարայի արձանագրութեան մեջ հայտնում է՝

«Եւ Գագիկ Շահնշահս, Աշոտի որդին, հայտնեցի իմ կամքը՝ թողի Մաստարայի հարկի ավելորդը, 6000-ը դարձրի 5000»։

(«Կամ եղև ինձ Գագկայ Շահինշահի, որդւոյ Աշոտոյ, թողու զՄաստարայի հարկին զաւելորդն 2000. և ածի 5000»)³։

Մեջ բերված արձանագրությունների բովանդակությունից երևւում է, որ 10—11-րդ դարերում նույնիսկ գյուղական հարկերը ստացվել էին դրամով։

Միանգամայն բնական է ու հասկանալի, որ Բագրատունյաց Հայաստանում ևս, ինչպէս և Ֆեոդալական այլ երկրներում, դրամական տնտեսութեան աճման ու խորացման հետ զուգընթաց ուժեղանալու էր վաշխառուական կապիտալի դերը և ծանրանալու էր ռամիկ բնակչության դրութիւնը, որը հարկադրված էր վաշխառուներից դրամ վերցնել ահագին տոկոսներով։ Ժողովրդի այս ստորին խավերի անողոր շահագործումը և ծանր դրութիւնը ցայտուն կերպով նկարագրված է Արիստակէս Լաստիվերտցու պատմութեան մեջ։

Խոսելով Արծն քաղաքի ավերման մասին 1049 թվին՝ Լաստիվերտցին լկայում է, որ այստեղ

¹ Տե՛ս «Վիմական տարեգիր», կազմ. Կ. Կոստանյանց, Ս. Պետերբ. 1913, էջ 5։

² Նույնը, էջ 6։

³ Նույնը, էջ 13։

սահմանվել էին վաշխի և տոկոսների օրենք և ցորենի բազմապատկութուն, որով երկիրը պղծվում է և խանգարում է արգանդին իր ժամանակին պտուղ տալ որպես մարդկանց ուտելիք: Ով խաբում էր ընկերոջը՝ պարծենում էր, որ իմաստուն է, և ով հափշտակում էր՝ ասում էր,— ես հզոր եմ: Մեծատունները հափշտակում էին բնատանկից աղքատների տները ու նաև նրանց անդաստանների սահմանները:

(«Վաշխից և տոկոսեաց օրէնք եղան, և ցորենոյ բազմապատկութիւն, որով երկիր պղծի և արգելու զարգանդ առ ի տալոյ զպտուղի ժամու իւրում առ ի կերակուր մարդկան: Որ խաբէր զընկերն՝ պարծէր իմաստուն գոյ, և որ յափշտակէր՝ ասէր,— Ես հզօր եմ: Զտունս տնակից աղքատացն, և զսահմանս անդաստանաց նոցա յափշտակէին մեծատունքն...»)¹:

Նույն հեղինակը, նկարագրելով Անի քաղաքի ավերածութիւնը և կոտորածը 1064 թվին՝ վաշխի մասին տալիս է դարձյալ հետևյալ տեղեկութիւնը.

«Այլ և նրա մեջ կատարված անիրավության ճարպից այրվեց բարձրաշէն ու գեղեցկահարմար ապարանքը և բոլոր բնակարանները դառան սոսկ մի հողաբլուր. և վաշխն ու նենգութիւնը, որ նրա մեջ տեղի էին ունենում, դադարեցին: Այս է անիրավ քաղաքների բաժինը, որոնք շինվում են դրսեցիների արյունով և փարթամանում են տնանկների քրտինքով և իրենց տներն ամրացնում են վաշխով ու անիրավութիւններով»:

(«Այլ և ի ճարպոյ անիրաւութեան ի նմա գործելոցն տոշորեցաւ բարձրաշէն և գեղեցկայարմար ապարանքն, և եղև ամենայն բնակութիւնն իբրև հողաբլուր. և վաշխն և նենգութիւնն, որ ի նմա խափանեցաւ: Այս է բաժին անիրաւ քաղաքաց, որ շինեն զինքենաս արեամբ օտարաց, և ի քրտանց տնանկաց փարթամանան, և ի վսոշխից և յանիրաւութեանց զտունս իւրեանց ամրացուցանեն»)²:

* *

*

11-րդ դարի առաջին կեսում, Սելջուկյան արշավանքներից առաջ, ֆեոդալական Հայաստանի կյանքը, ինչպես շատ ճիշտ մատնանշել է ակադեմ. Նիկ. Մառը³, իրենից ներկայացնում էր հակա-

¹ «Պատմութիւն Արիստակայ վարդ. Լաստիվերացոյ», 1912, ԺԲ, էջ 79:

² Նույնը, ԻԴ, էջ 166—167:

³ Տե՛ս АНН, էջ 29:

դրում, մի կողմից, աշխատավոր հայ ժողովրդի կեղեքվածության և, մյուս կողմից, հարստությանների կուտակման իշխող դասերի փոքրաթիվ խմբի ձեռին:

Թե ինչպիսի մեծ հարստություններ հավաքվել էր նուրնիսկ հայ եկեղեցու և հոգևորականության մոտ՝ այդ պարզ երևում է, որինակ, Մատթեոս Ուռհայեցու կարեւոր մի վկայությունից:

Նոսելով Արծն քաղաքի ավերման մասին 1049 թվին՝ Ուռհայեցին պատմում է, որ կողոպտված

«ոսկու, արծաթի ու դիպակների մասին ավերորդ է խոսել, որովհետև անկարելի է այդ գրի առնել: Բայց ես շատերից հաճախ լսել եմ քորեպիսկոպոսի մասին, որին անվանում էին Դավթուկ, որ նրա դանձանոցը վերցրել էր Աբրիհիմ-ը և նրա գանձերը բռնել էին քառասուն ուղտի վրա. նրա տնից դուրս էին ելնում (հերկի) ութ հարյուր գովթան, որոնցից յուրաքանչյուրին լծված էին վեց լուծ եղ»:

(«Այլ գոսկույ և վարծաթոյ և գդիպակաց աւելորդ է ասել, վասնի զի ոչ արկանի ընդ գրով. բայց զայս քաղում անգամ լուեալ է մեր ի բաղմաց յաղագս քորեպիսկոպոսին՝ որ ասէին Դավթուկ, եթև զգանձատունն նորա Աբրիհիմն էառ և քառասուն ուղտ բարձան զգանձարանն նորա, ութ հարիւր վեցկի եղանց ելանէին ի տանէ նորա»)¹:

Որ Բագրատունյաց թագավորության ժամանակ Հայաստանի տնտեսական կյանքը վերակառուցվում էր նոր հիմքերի վրա և որ այդ հեղաշրջումը կատարվում էր փողային ու ապրանքային տրեստության զարգացման, դասակարգային հակասությունների խորացման և բնակչության ստորին խավերի անողորմ շահագործման ուղղությամբ՝ այդ երևում է Արիստակես Լաստիվերտցու կրոնա-քարոյական դատողություններից նախկին ժամանակների առաքինի բարբերի ու երջանիկ կյանքի մասին, որ նա հակադրում է իր ժամանակվա անիրավ ու արծաթասիր բարբերին և փարթամ ու շվաչտ կենցաղին:

Նոսելով Արծն քաղաքի կոտորածի մասին 1049 թվի Սելջուկյան արշավանքի ժամանակ՝ Արիստակես Լաստիվերտցին այդ քաղաքի հին արդարակից նիստուկացը հակադրում է նրա նոր անիրավ կյանքին:

¹ Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, «Ժամանակագրություն», 'Վաղարշապատ, 1893, էջ 108:

«Արդ՝ առաջվա՝ ժամանակները, — ասում է նա, — երբ սա առատորեն բարի գործերով էր զարդարված՝ ամեն ինչ սրա ուզածի պես էր լինում. և սա նման էր նորահարս կնոջ, որն ամենքին ցանկալի էր վայելուչ գեղեցկության ու պայծառ զարդերի պատճառով... Բայց երբ մեր եկեղեցիները մուտք գործեցին Սեքստացիք և Պիհոնացիք և արդարության օրենքները վերածեցին անիրավության ու հարգվեց ավելի արծաթասիրությունը, քան աստվածսիրությունը և մամոնան քան Քրիստոսը՝ այն ժամանակ բոլոր համեստ կարգերը փոխվեցին և վերածվեցին անկարգության: Սրա (Արծն քաղաքի) իշխանները դառան գողերի ընկերակիցներ, շարագործներ ու արծաթի ծառաներ: Սրա դատավորները դառան կաշառակերներ և կաշառքի համար խարդախում էին իրավունքը...»:

(«Արդ սա յառաջինսն՝ մինչդեռ բարեացն առատութեամբ պսակեալ էր, ամենայն ինչ ըստ մտի էր սորա. և նման իմն էր նորահարսն կնոջ, որ դեղոյն վայելչութեամբ և զարդուցն պայծառութեամբ՝ ցանկալի գոլ ամենեցուն: ...Բայց յորմէ հետէ մտին յեկեղեցիս մեր Սեքստացիք՝ և Պիհոնացիք, և արդարութեան օրէնքն յանիրաւութիւն դարձաւ, և յարգի եղև արծաթսիրութիւն քան զաստուածասիրութիւն և մամոնայն քան զՔրիստոս. յայնժամ ամենայն համեստութիւն կարգաց զառածեալ՝ յանկարգութիւն դարձաւ: Իշխանք սորա գողակիցք եղեն գողոց, վրիժագործք և արծաթոյ ծաւայք. դատաւորք սորա կաշառառուք և վասն կաշառաց գողանացին զիրաւունս...»)²:



Բագրատունյաց Հայաստանի տնտեսական զարգացումը. 10—11-րդ դարերում մեզ հիշեցնում է Արևմտյան Եվրոպայի զարգացումը ռեֆորմացիայից առաջ 14—15-րդ դարերում: Արդյունագործական արտադրության և ապրանքային ու դրամական տնտեսության զարգացման զուգընթաց, ինչպես հայտնի է, Եվրոպայում սկսվել էին հեղաբեկվել ֆեոդալական հին կարգերը և այդ հեղաբեկումը կատարվում էր դասակարգային սուր պայքարի պայմաններում: Նույնը նկատելի է ըստ իս գերմանական ռեֆորմացիայից մոտ չորս դար առաջ՝ Բագրատունյաց Հայաստանում:

Արաբական տիրապետության ժամանակ, ինչպես մատնանշել

¹ Ուղղել ենք Սեքստացիք փխ. «Սեքստայիք»:

² Տե՛ս գլ. ԺԲ, էջ 78—79:

ենք մեր նախորդ ուսումնասիրություններում¹, Հայաստանի տնտեսական կյանքը մեծապես հետադիմել էր և զարգանում էր բնական տնտեսության հետադարձ հիմքերի վրա: Բայց 10—11-րդ դարերում ապրանքա-դրամական տնտեսության բուռն զարգացումը Հայաստանում ևս, ինչպես և Արևմտյան Եվրոպայում, հետզհետե քայքայելով նախկին բնատնտեսությունը, սկսել էր արգեն անդրադառնալ ֆեոդալական կարգերի վրա և, նպաստելով տնտեսական ու սոցիալական նոր հարաբերությունների գոյացման՝ ուժեղացրել էր դասակարգային պայքարը:

Այս ժամանակաշրջանում վաշխառուական կեղեքումների պատճառով խիստ սաստկացել էր գյուղացիության հողազրկումը և ռամիկ ժողովրդի աղքատացումը: Արիստակես Լաստիվերտցին, ինչպես վերև տեսանք, պարզ մատնանշում է, որ մեծատուները հափըշտակում էին աղքատների տները ու նրանց անդաստանները, և որ քաղաքները շինվել էին տնանկների արյունով ու քրտինքով, վաշխով ու անիրավություններով:

Ինչպես ֆեոդալական արևմտյան երկրներում, նույնպես և Արևելքում, հողազուրկ ու աղքատ ռամիկ բնակչությունը կուտակվում էր, մեծ մասամբ, քաղաքների արվարձաններում: 10-րդ դարի արաբական մատենագիրները մատնանշում են, որ ընչազուրկ մասսաները, որոնք ապրում էին «ռաբադ»-ներում, այսինքն՝ շահաստան քաղաքների արվարձաններում, պետության ամենաանհանգիստ տարրն էին և մեծ դեր էին կատարում քաղաքացիական կռիվներում²: Ն. Մառը, հիմնվելով իր կատարած պեղումների վրա՝ մատնացույց է արել, որ ժողովրդի ստորին այս խավերն Անիում ապրում էին մուրացկանային հյուղերում և քարքարոտ զետնում փորված որջերում³:

Միանգամայն բնական է, որ քաղաքներում խմբված թշվառ ու անզոր ժյու բնակիչների զխավոր զբաղմունքը պետք է լինե՞ր կամ մուրացկանությունը կամ ղողությունն ու ավազակությունը:

Այդ տեսակետից բնորոշ է ու հետաքրքրական Ասողիկի վկայությունը գիշերային կողոպուտների ու ավազակությունների մասին Կարս քաղաքում:

«Եվ սկիզբ դնելով ամեն տեսակ բարեգործությունների,— պատմում է Ասողիկը,— Կարսի Աթա թագավորը (984—1029 թ.)

¹ Տե՛ս «О торговле и городах Армении», էջ 133—137:

² Համեմատե՛ս А. Ю. Якубовский, Махмуд Газневи, „Фердовси“, Сборник статей, էջ 63:

³ Տե՛ս Ани, Ленинград, 1934, էջ 29:

ամենից առաջ իր երկրում վերացրեց ավազակութիւնը և մարդա-
դավութիւնը, որ Վանանդի ժողովուրդը, ինչպես ասում է պատմա-
գիրը¹, համարում էր իբր հայրենի գործ: Սրա հոր ժամանակ ոչ
միայն ճանապարհներին ու բաց տեղերում էին թալանում, այլև
հենց քաղաքի մեջ երեկոյան ժամերին ու ամբողջ գիշերը լսվում էին
կողոպտւոտների անվերջ ճիշեր ու ձայներ: Իսկ սա ինքը վրեժխնդիր
եղավ և բռնված գողերին անաչառ կերպով մահվան դատաւարտեց.
առանց խնայելու մեծերին կամ փոքրերին, իշխաններին կամ շի-
ռականներին: Եվ նա այնպես խաղաղեցրեց իր երկիրը, որ բոլորը
նույնիսկ գիշերները ման էին գալիս ինչպես ցերեկը և անգամ ան-
մարդաբնակ տեղերում շրջում էին որպես ապարանքում: Ամենքը
պարապում էին շինութիւն ու աշխատանքի գործերով և ուղղվել էին
արդարադատ դատաստանի միջոցով:

(«Եւ սկիզբն արարեալ ամենայն բարեգործութեանց՝ նախ և
առաջին երարձ նա յաշխարհէն իւրմէ զաւազակութիւն, զմարդադա-
ւութիւն, զոր ազգն Վանանդայ իբրև զհայրենիք ունէին, ըստ ասելոյ
պատմագրին: Եւ յաւուրս հօր սորա ոչ միայն ի ճանապարհս և ի
բացեայ տեղիսն կողոպտէին՝ այլ ի նոյն ինքն ի քաղաքին՝ յերե-
կոյացեալ ժամում և զգիշերն ամենայն ճիշք և ձայնք կողոպտանաց
լինէին: Այլ սա ինքնին վրէժխնդիր եղեալ, և զգտեալ գողսն անա-
չառ մահու դատաւարտեալ՝ ոչ խնայելով ի մեծս կամ ի փոքունս,
յիշխանս կամ ի շինականս. և այնպէս խաղացոյց զաշխարհն իւր՝
մինչ զի ի գիշերի իբրև ի տունջկան, և յանապատի իբրև յապարանս
շրջէին ամենեքեան, շինութեան և աշխատութեան գործոց պարա-
պէին, արդարադատ իրաւամբք ուղղեալք»)²:

* *

*

Քաղաքների ու ապրանքա-դրամական հարաբերութիւնների
դսրգացման այս ժամանակաշրջանում Բագրատունյաց Հայաստա-
նում ևս, ինչպես Ղեֆորմացիայից առաջ Արևմտյան Եվրոպայում,
դասակարգային պայքարի սաստկացման պարզ ցուցանիշներ էին
գյուղացիական ապստամբական շարժումները:

Գտնվելով տնտեսական ծանր դրութիւն մեջ, հայ գյուղացիու-
թիւնը, որն այժմ ամենամեծ շահաբորժման էր ենթարկ-

¹ Տե՛ս «Մովսիս Խորենացոյ, Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, III, գլ. 44, էջ 313:

² «Մտնփանոսի Տարօնեցոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական», Ս. Պե-
տերք. 1885, III, գլ. ԺԷ, էջ 196—197:

վում, ապստամբել էր իշխող հողատեր աղնվականության դեմ տա-
սերորդ դարի սկզբներում: Այդ ապստամբությունը, որ տեղի էր
ունեցել Սմբատ Ա-ի մահից (914 թ.) և Ատրպատականի Յուսուֆ
ոստիկանի աշխարհավեր. արշավանքներից հետո՝ հիշատակված է
Հովհաննես Դրասխանակերտցու պատմության հետևյալ հատվա-
ծում.

«Ստորները,— ասում է կաթողիկոս պատմիչը,— աշխատում
էին ավելի առաջ անցնել քան մեծամեծները, և ծառաները, խորին-
տանալով, փքվելով ու մեծ ապստամբություն բարձրացնելով՝ Սո-
լոմոնի նման հերյուրում էին, որ տերերը տրեխ հագնեն և գետնի
վրա ման գան, իսկ իրենք բարձրանան երկարավիզ և ոտնատակ
տորոող ձիերի վրա: Իսկ մեր թագավորներին, պետերին և իշխա-
ներին, որոնք ի բնե մեր նախարարություններն էին, աշխատում էին
հանել և դուրս քշել նրանց. բնակություններից և ուղում էին ըստ
իրենց ցանկության կարգել պատահական ու նոր պայազատներ և
սպասալարներ»:

(«Վասնղի նուազունքն քան զմեծամեծսն ձեռներէց լինել շա-
նային և ծառայքն ըստ Սողոմոնի հնարէին, զի զտեսարս տրեխաւո-
րեալ՝ ի գետնի գնացուացեն և ինքեանք ելցեն յերկարս ահիպարա-
նոցս և առաթուր հարողս՝ խրոխտացեալք և սռնքացեալք մեծաւ
ապստամբութեամբ: Իսկ թագաւորք մեր և պետք և իշխանք, զորո
ի բնէ նախարարութիւնքն էին՝ ցանային վարատել և խլել յիւրքան-
չիւրոցն բնակութեանց, և ըստ ախորժից իմն ձեռական և նոր ստեղ-
ծանել պայազատս և սպասալարս»)¹:

Դասակարգային հակասությունների սրման ու ֆեոդալական
կարգերի դեմ մղվող պայքարի ուժեղացման արտահայտություն-
ներից մեկն էր 10—11-րդ դարերում նաև Թոնդրակեցիների աղանդի
լայն տարածումը, որն ուներ ոչ միայն կրոնական, այլև սոցիալա-
կան բնույթ: Այս շարժումը պարզապես դեմոկրատական էր և սրա
հետևորդը գրեթե բացառապես աշխատավոր հասարակ ժողո-
վուրդն էր:

Թոնդրակեցիները, որոնք, հավանորեն, հաջորդներն էին հայ
Պավլիկյանների՝ ամենախիստ քննադատությանն էին ենթարկում
պաշտոնական հայ եկեղեցին, նրա դավանաբանությունը, ծիսակա-
սարությունները և ֆեոդալական բնույթ ունեցող նրա երարխական
կազմակերպությունը: Թոնդրակյան աղանդավորների գաղափարա-
խոսությունը հիմնականում մի սուր բողոք էր ոչ միայն հղիացած

¹ «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցու, Պատմութիւն Հայոց»,
Թիֆլիս, 1912, էջ 258—259:

ու այլասերվող տիրող եկեղեցու դեմ, այլ նաև հայկական ֆեոդալիզմի և իշխող դասերի հարստահարությունների ու ճնշման դեմ:

Հայ երկրում և հայ միջավայրում ծագած ու սնած Պալիկյան ու Թոնդրակյան աղանդավորները, որոնք դաժան հալածանքների էին ենթարկվել Հայաստանում, ինչպես հայտնի է, վտարվել էին. մեծ մասամբ, Ասորիք, Փոքր Ասիա և մասամբ նաև Բուլղարիա: Եվ հենց այս աղանդավորները եղան, ինչպես այժմ ենթադրում են, հիմնադիրները և նախահայրերը բուլղարական բողոմիլների և հալավային Ֆրանսիայի ալբիգենների, որոնք նախակարապետներն էին գերմանական ռեֆորմացիայի և եվրոպական պրոտեստանտիզմի:



Տնտեսական ու սոցիալական այն երևույթները, որ վերև մենք մատնանշեցինք, ցուցանիշներ են, իհարկե, որոշ տեղաշարժի ու փոփոխությունների, որ տեղի էին ունենում Հայաստանի ներքին կյանքում 10-րդ և, մանավանդ, 11-րդ դարերում: Այդ երևույթները հատկանշական են ու բնորոշ քայքայվող ֆեոդալիզմի համար, որի սկիզբը կարելի է, ըստ իս, Հայաստանում ենթադրել հենց այս ժամանակաշրջանում:

«Ֆեոդալիզմը Հին Հայաստանում» մեր ընդարձակ աշխատության մեջ մենք ուսումնասիրել էինք Հայաստանի նախարարական կազմակերպությունը միմիայն Արշակունյաց թագավորության և մարզպանության շրջաններում: Հայկական ֆեոդալիզմի լրիվ ուսումնասիրության համար անհրաժեշտ է, իհարկե, նաև նրա անկման այս շրջանի մանրամասն պարզաբանումը, որը կարոտ է դեռ լուրջ ու ուշադիր քննության:

Թողնելով այդ ապագային՝ մենք ավելորդ չենք համարում տալ այժմ ֆեոդալիզմի այս շրջանի մասին մի քանի թուղիկ դիտողություններ:

Մատենագրական աղբյուրների քննությամբ, իմ կարծիքով, ընդհանրապես որոշվում է, որ 10-րդ և, գլխավորապես, 11-րդ դարի առաջին կիսում, տնտեսական ուժեղ ու արագ զարգացման հետ միապին, ֆեոդալական կյանքի աստիճանական վերասերումը տեղի էր ունենում հիվանդագին կերպով՝ իշխող դասերի հուսալքման ու անկումային տրամադրությունների մթնոլորտում: Այս հոռետեսությունը, մեկամաղձությունը ու միստիկան նկատելի են, ըստ իս, 11-րդ դարի գրականության ու գաղափարախոսության մեջ, որ հետագա-

յում պետք է մանրամասն լուսաբանվեն պատմական-գրական հաս-
տուկ ուսումնասիրությունների միջոցով:

Ուշագրավ է նախ և առաջ այն, որ սոցիալական հակասություն-
ների սրման ու հին կյանքի աստիճանական կազմալուծման այս
ժամանակաշրջանում դժգոհությունը չար ու անիրավ կյանքից իր
գործնական արտահայտություն էր գտել վանական ու ճգնավորա-
կան կյանքի մեջ, որը խիստ զարգացել էր հատկապես 10-րդ դա-
րում: Այս ժամանակվա իդեոլոգիայի մեջ իշխում էր աշխարհի ու
կյանքի ոճայնության գաղափարը և փրկությունը քուր շարիքնե-
րից համարվում էր մարմնի ոչնչացումը և խորշումը զգալի աշխար-
հից: Հուսահատական փախուստը կյանքից և միստիկական մոռյալ
այդ աշխարհայեցողությունը, ինչպես հայտնի է, իրենց կատարյալ
արտահայտությունն են գտել մեծագույն հայ բանաստեղծի, Գրիգոր
Նարեկացու, ճգնավորական ողբերգության մեջ:

Հուսաբեկումը և իր ժամանակվա շվայտ ու ամբարտաւան կեն-
ցադի դատապարտումը, ինչպես վերև տեսանք, մեծ տեղ է գրավում
Արիստակես Լաստիվերտցու պատմական երկում:

Առանձնապես հետաքրքրական են այս շրջանում նաև այն
հերհակությունները, որոնք աճել ու խորացել էին ոչ միայն իշխող
ու շահագործվող դասակարգերի, այլև սրանց հակադիր գաղափա-
րախոսությունների մեջ: Մի կողմից խիստ զարգացել էր այս դարե-
րում եկեղեցական սխոլաստիկական ու միստիկական գրականու-
թյունը, որի մեջ բնորոշ էին տխուր մարգարեություններն աշխարհի
վերջը մոտենալու մասին, իսկ մյուս կողմից հետզհետե փարատվում
էր թանձր միջնադարը և արդեն ծնունդ էր առնում աշխարհիկ ու
ժողովրդական գրականությունը, որի մեջ մարմնավորվում էին ու-
միկ ու աշխատավոր ժողովրդի ակնկալությունները և ձգտումները:
Ժողովրդական նոր մտածողության և աշխարհայեցողության ար-
տադրություններ պետք է համարվեն, անտարակույս, մասնավորա-
պես Թոնդրակեցի կոչված վերոհիշյալ հայ աղանդավորների զբը-
վածքները, որոնցից, դժբախտաբար, մեր ձեռքը հասել են միմիայն
անշան մնացորդներ:

Մեր վերոհիշյալ փաստական դիտողություններից Հայաստանի
տնտեսական ու սոցիալական զարգացման առանձնահատկություն-
ների մասին 10—11-րդ դարերում, կարելի է, ըստ իս, հետևյալն, որ
առևտրի, քաղաքների, արդյունաբերության և դրամական ու ապ-
րանքային տնտեսության բուռն ու արագ աճմամբ Հայաստանում
ևս ֆեոդալիզմը սկսել էր քայքայվել և որ հասարակական կյանքն
այստեղ ևս կարող էր վերակառուցվել առաջադեմ նոր հիմքերի վրա,

ինչպես այդ հինգ դար հետո տեղի տնեցավ Արևմտյան Եվրոպայում։ Բագրատունյաց Հայաստանի տնտեսական բնական ու առաջադեմ ընթացքը, ինչպես հայտնի է, շուտով ընդհատվեց Թուրք-թաթարական աշխարհավեր արշավանքների պատճառով, և նրա զարգացումը ետ շարտվեց իր առաջավոր դիրքերից ու վերսկսվեց բնական սընտեսության զորեղացման հետագարձ հիմքերի վրա։

Հայաստանի քաղաքների ու տնտեսության բուռն ու ուժգին վերելքը 10—11-րդ դարերում, մինչև սելջուկյան արշավանքները, որ մենք ուրվագծեցինք վերև համառոտ ու ընդհանուր կերպով, պետք է, իհարկե, ապագայում ենթարկվի ընդարձակ ու մանրաքննին հետազոտության։

Հանրամատչելի ու հակիրճ մեր այս տեսությունը նախապատրաստական մի փորձ է միայն, որի մեջ մենք անհրաժեշտ համարեցինք տալ նախնական ընդհանուր մեր դիտողությունները կարևորագույն այս ժամանակաշրջանի մասին։

ԺԱՄԱՆԱԿԻՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Հայ ժողովրդական պատմության՝
«կսած մաքագանության հաստատումից Հայաստանում մինչև
Բագրատունյաց Բագավորության անկումը:

428—485

Պարսկաստանի ձգտումը և միջոցառումները Հայաստանը
կուլտուրային անջատել արևմտյան ազդեցությանից

438/39—457

Հագկերտ Բ՝ թագավոր պարսից

441

Ատտիլայի արշավանքը

446—449

Գորգասալ՝ վրաց թագավոր

450—451

Վարդանանց ապստամբությունը

451 փետրվ. 17

Ավարայրի կռիվը

451

Փաղկեդոնի ժողովը

457—459

Հորմիզդ III՝ թագավոր պարսից

457—474

Լևոն Ա՝ կայսր Բյուզանդիայի

459—484

Պերոզ՝ թագավոր պարսից

465

Կալանավորված և աքսորված նախարարների վերադարձը
Պարսկաստանից

477—491

Ջենոն՝ կայսր Բյուզանդիայի

478—490

Հովհան Մանդակունի

481

Սահակ Բագրատունի՝ մարզպան հայոց

481—484

Վահան Մամիկոնյանի ապստամբությունը և պարտիզանական կռիվները

484

Պերոզ պարսից թագավորի ծանր պարտությունը հեփթաղների դեմ մղած կռիվում և նրա անհայտացումը

484—488

Վաղարշ՝ թագավոր պարսից [Պերոզի եղբայրը]

485—505

Վահան Մամիկոնյան՝ Հայաստանի մարզպան

488—531

Կավատ Ա՝ թագավոր պարսից

491—518

Անաստաս՝ կայսր Բյուզանդիայի

497—499

Ջամասպ՝ որը Կավատ Ա-ի զորավարն էր և բարձրացել խռովությունների ժամանակ և 2 տարի թագավորելուց հետո գահընկեց է եղել

502—505	կալատ Ա-ի առաջին պատերազմը Բյուզանդիայի դեմ
503, 10/1	Ամիդ-Դիարբեքի զրավումը պարսիկների կողմից
505/6	Դվինի ժողովը, Բաբկեն կաթողիկոսի հրավերով
505—509	Վարդ՝ [Վահան Մամիկոնյանի եղբայրը] մարզպան Հայաստանի
506	Խաղաղության կնքումը Պարսկաստանի և Բյուզանդիա- յի միջև 7 տարով
518—527	Յուստին I՝ թագավոր Բյուզանդիայի
521	Փրիստոնեոսյան ընդունումը Լազիստանում և Կոլխի- դայում և նրանց ենթարկումը Բյուզանդիայի գերիշ- խանությանը
526	Բյուզանդական զորքերի արշավանքը Պարսկական Հա- յաստան Վելիսարի առաջնորդությամբ
527—565	Յուստինիանոս՝ կայսր Բյուզանդիայի
527—532	Պարսկական երկրորդ պատերազմը Բյուզանդիայի դեմ
528/29	Բյուզանդական զորքերի վերակազմությունը
529	Վասակ Մամիկոնյան՝ սպարապետ ստորին Հայոց
530	Բյուզանդիայի հաղթությունը Դարայի մոտ
531—578/9	Խոսրով I Անուշիրվան՝ թագավոր պարսից
532—540	Խաղաղության ժամանակաշրջանը—8 տարի
536, 18/III	Բյուզանդական Հայաստանի ռաժանումը չորս առան- ձին մասերի և չորս կառավարիչների հաստատումը
536, 31/III	Բյուզանդական Հայաստանի քաղաքական վերակազ- մությունը, որ Հայկական շրջանները ոչ մի բանով չտարբերվեն կայսրությունից
540—545	Պարսկական երրորդ պատերազմը Բյուզանդիայի դեմ
541	Լազերի դեսպանության դիմումը Խոսրով պարսից թա- գավորի օգնությանը
541	Բյուզանդիայի կռիվները և Լազիկայի նվաճումը
542	Խոսրովի արշավանքը Բյուզանդիայի դեմ
543	Բյուզանդացիների արշավանքը պարսկական Հայաս- տան
544	Խոսրովի ֆոր արշավանքը և կռիվներ Միջագետքում բյուզանդացիների հետ փոփոխակի հաջողությամբ
545	Զինադադարի կնքում պարսից և Բյուզանդիայի միջև
548	Արշակ և Արտավան Արշակունիների դավադրությունը Յուստինիանոս կայսեր դեմ
548/9—556/7	Ներսես Բ՝ կաթողիկոս հայոց
549	Լազյան պատերազմի վերսկսումը և Լազիկայի վերա- գրավումը Բյուզանդիայի կողմից
551	Պետրայի վերագրավումը բյուզանդացիների կողմից
554/5	Հարկահավաքման գործի հանձնարարումը Խոսրով Ա-ի կողմից Ներսես Բ կաթողիկոսին և հոգևորականու- թյանը
554/5	Դվինի ժողովը
562	Բանակցություններ և խաղաղության դաշնագրության կնքում պարսից և Բյուզանդիայի միջև

564	Սուրենի նշանակումը պարսկական Հայաստանի մարզպան
565—578	Յուստինոս II՝ կայսր Բյուզանդիայի
571	Մահմետի ծնունդը
572	Բյուզանդիայի կողմից կոիվների վերսկսումը Պարսկաստանի դեմ
572, 22/II	Նոր ապստամբություն (III) Վարդան Մամիկոնյանի առաջնորդությամբ և նախարարների մասնակցությամբ, և Սուրեն մարզպանի, մոզերի ու պարսիկների կոտորածը, և Դվին քաղաքի առումը
573	Դարայի նվաճումը խոսրովի կողմից
574	Ջինադադար Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև
575	Բանակցություններ Բյուզանդացիների և պարսիկների միջև զինադադարը երկարացնելու մասին
576	խոսրովի նոր արշավանքը և Կարինի անհաջող պաշարումը
577	Խաղաղության բանակցությունների վերսկսում
578—582	Տիբերիոս՝ կայսր Բյուզանդիայի
579—590	Որմիզդ՝ թագավոր պարսից
580	Մավրիկիոս զորավարի կոիվը պարսիկների դեմ Կալինիկումի մոտ և պարսիկների պարտությունը
582—602	Մավրիկիոս՝ կայսր Բյուզանդիայի
582—599	Կոիլներ պարսիկների և Բյուզանդացիների միջև Աղձաշիքում և Միջագետքում
589	Մարտիրոսաց քաղաքի զրավումը պարսիկների կողմից
590	Վահրամ Չուբինի ապստամբությունը
590—602	Խաղաղ ժամանակաշրջան
590—623	խոսրով II՝ թագավոր պարսից
596	Ապստամբական զորահավաքը պարսկական Հայաստանում
602—610	Փոկաս՝ կայսր Բյուզանդիայի
604—628	Քսանեշորս տարվա կոիվներ պարսիկների և Բյուզանդիայի միջև
606	խոսրով II-ի արշավանքը և Դարայի նվաճումը
607—616	Սմբատ Բագրատունի՝ մարզպան Վրկանայ
607—610/11	Աբրահամ կաթողիկոս և վրաց ու հայոց եկեղեցիների բաժանումը
608	Կոիվներ Հայաստանում
610—641	Հերակլ՝ կայսր Բյուզանդիայի
611—617	Պարսիկների հաղթական արշավանքները և Ասորիքի նվաճումը ու Կեսարիայի, Դամասկոսի, Նրուսահեմի, Սպիստոսի և Քաղկեդոնի զրավումը
622—624	Հերակլ կայսր արշավանքը Պարսկաստան և Հայաստան և զինվորական գործողություններ Հայաստանում
623	Սլավների նավատորմի չհաջողված և Կրետե կղզու վրա

625	Կոնվենեթ պարսից և Բյուզանդիայի միջև՝ Միշագետքում և Հայաստանում, և պարսիկների պարտութունը Տիգրանակերտի մոտ
626	Հերակլ կայսեր դաշնը խազարների հետ
627	Հերակլ կայսեր արշավանքը Պարսկաստանի խորքերը և վճռական հաղթություն Մուսուլի մոտ
629—630	Արտաշիւր՝ թագավոր պարսից
630	Մեկկայի նվաճումը արաբների կողմից
632	Մահմետի մահը
632—642 + 651/2	Հազկերտ Գ՝ թագավոր պարսից
632—634	Աբու-Բաքիր՝ Մահմետի հաջորդը և տեղակալը
633	Արաբների առաջնադասումը մինչև Եփրատ գետը և Բյուզանդական զորքի պարտությունը
633	Բասորայի առումը արաբների կողմից
634—644	Օմար՝ խալիֆ արաբական, Մահմետի գլխավոր գործակիցներից մեկը
636	Արաբների հաղթական արշավանքները և Դամասկոսի գրավումը
637	Արաբների արշավանքը Ատրպատականի կողմից և Տիգրոսի գրավումը
638	Երուսաղեմի առումը արաբների կողմից
639/40	Միշագետքի նվաճումը արաբների կողմից
640, հոկտ. 6-ին	Արաբական առաջին մեծ արշավանքը Հայաստան Միշագետքի կողմից և Դվինի առումը
640—642	Արաբների արշավանքը Եգիպտոս և Եգիպտոսի նվաճումը
640/41—661	Ներսես Գ՝ կաթողիկոս հայոց
641—668	Կոստանդին III՝ կայսր Բյուզանդիայի
642/43	Արաբական երկրորդ արշավանքը Ատրպատականի կողմից Պարսկա-Հայաստան և Մարտուցայքի կոտորածը
642—643	Թեոդորոս Ռշտունիի հայ զորավարի հարձակումը արաբների վրա և գերիների ազատումը
644—656	Օթման (Օսման)՝ արաբական խալիֆ
645/46	Դվինի ժողովը
646	Կարինի գրավումը արաբների կողմից
646	Արաբների մեծ արշավանքը և Դվինի վերագրավումը
649	Արաբների առաջին ծովային արշավանքը Կրետե
650, 8/VIII	Արաբների մեծ արշավանքը Ատրպատականի կողմից և Արծափի առումը
650	Թեոդորոս Ռշտունու հարձակումը Արծափում արաբների վրա և նրանց ջարդը ու գերիների ազատումը
651—653	Ջինադադար Բյուզանդացիների և արաբների միջև երեք տարով
652—887/8	Արաբական իշխանության հաստատումը և տեղականությունը Հայաստանում
653	Համաձայնություն կնքում խալիֆատի և հայերի միջև՝

- նախարարութիւններին ներքին ինքնուրույնութիւն
տալու մասին
- 653—654 Կիպրոս և Ռոդոս կղզիների գրավումը արաբների կողմից
- 654 Կոնստանդին III կայսեր արշավանքը Հայաստան
- 655 Կոնստանդ III կայսեր հեռանալուց հետո՝ երկրի վերագրավումը Թեոդորոս Ռշտունու կողմից և բյուզանդացիների հալածումը:
- 655 Թեոդորոսի հաստատումը խալիֆատի կողմից երկրի իշխան՝ արաբական գերիշխանության տակ
- 656—661 Ալալ (Ալի)՝ արաբական խալիֆ
- 657/58 Համազասպ Մամիկոնյանի վերադարձը Բյուզանդիայից, իբրև կուրապաղատ
- 661—680 Մուավիա՝ արաբական խալիֆ—Օմայանների տոհմից
- 661—750 Օմայանների դինաստիայի իշխանության տևողութիւնը Հայաստանում
- 662 Խարաջի հարկապահանջութիւնը Հայաստանում արաբական իշխանության կողմից՝ նաև նախարարներից ու հոգևորականներից
- 662—685 Գրիգոր Մամիկոնյանը՝ իշխան և կառավարիչ
- 664 Հայերի գաղթը Փոքր Ասիայից դեպի Արևմուտք՝ մեծ չափերով
- 668 Արաբների արշավանքը մինչև Քաղկեդոն
- 668—685 Կոնստանդին IV կայսր Բյուզանդիայի
- 673—678 Արաբների համառ փորձերը՝ գրավել Պոլիսը
- 678 Նրեսունամյա խաղաղության դաշնագրության կնքում Բյուզանդիայի և խալիֆատի միջև
- 678—703 Սահակ Գ՝ կաթողիկոս հայոց
- 680—683 Եզիդ I՝ արաբական խալիֆ
- 683 Մուավիա II՝ արաբական խալիֆ
- 683—686 Խաղաղների արշավանքը Հայաստան
- 683—693 Ներքին երկպառակութիւններ և գահակալական կռիվներ խալիֆատում [Եզիդի, Մրվանի և Աբդլ-Մելիքի միջև]
- 684—685 Մրվան I՝ արաբական խալիֆ
- 685—695 Յուսուֆիանոս II՝ կայսր Բյուզանդիայի
- 685—705 Աբդլ-Մելիք՝ արաբական խալիֆ
- 686/7 Լեոնտիոս բյուզանդական զորավարի արշավանքը Հայաստան
- 686—706 Պարբերաբար կրկնվող կռիվները Հայաստանում բյուզանդացիների և արաբների միջև
- 686—690 Աշոտ Բագրատունի
- 687 Հայերի գաղթը Փոքր Ասիայից դեպի Արևմուտք՝ մեծ չափերով
- 688 Յուսուֆիանոս II կայսր մուտքը Հայաստան
- 689—691 Ներսես Կամսարականը Շիրակի իշխան-կյուրապաղատ
- 690 Արաբների հարձակումը Հայաստանի վրա

691	Արաքնների և բյուզանդացիների միջև կնքված խաղաղության լուծված
692/93	Բյուզանդացիների պարտությունը Փոքր Ասիայում Սեբաստոպոլիսի մոտ [Միվասից դեպի արևելք], և Հայաստանը նորից ամբողջությամբ արաքների գերիշխանության տակ
695—698	Լեոնտիոս Ապսիմարոս՝ կայսր Բյուզանդիայի
698—705	Տիբերիոս Ապսիմարոս՝ կայսր Բյուզանդիայի
700	Խալիֆատի կարգադրությունը, որ մահմեդականությունը ներդնողները պետք է վճարեն՝ գլխահարկ
701	Աբդուլ-Մելիքի զորքերի արշավանքը Մահմեդի հրամանատարությամբ Հայաստան
702	Արաքների նոր արշավանքը և Սմբատի պարտությունը ու ճախարարների կոտորածը
705—715	Վալիդ [Վլիթ]՝ արաբական խալիֆ
706	Արաքների կրկնվող արշավանքը և միջոցառումներ նախարարական տոհմերը բնաջինջ անելու
706—748	Խաղաղ ժամանակաշրջան Հայաստանում
715—717	Սուլեյման՝ արաբական խալիֆ
716—717	Արաքների արշավանքը դեպի Պոլիս, Պոլսի անհաջող պաշարումը և նահանջ դեպի Ասորիք
717—720	Օմար II՝ արաբական խալիֆ
717—741	Լեոն III՝ կայսր Բյուզանդիայի
718—729	Հովհան կաթողիկոս՝ իմաստասեր
719	Մանզղկերտի ժողովը
720—724	Նզիդ II՝ արաբական խալիֆ
724—743	Հեշմ՝ արաբական խալիֆ
724—725	Մարդահամար-աշխարհադիր Հայաստանում
730—731	Խաղաղների արշավանքը Հայաստանում
732	Արաքների կոիվները խաղաղների դեմ և Աբխազիայի նվաճումը
732—750 + 761	Աշոտ Բագրատունի լին [Վասակ Բագրատունու որդին]՝ իշխան, պատրիկ, զորավար հայ ղորքերի
741—764	Տրդատ՝ կաթողիկոս հայոց
741—775	Կոնստանդին V Կոպրոնիմոս՝ կայսր Բյուզանդիայի
743—744	Վալիդ [Վլիթ] II՝ արաբական խալիֆ
743/4	Սմբատ Մամիկոնյանի որդիների՝ Գրիգորի և Դավթի արձակումը բանտից Վլիթի հրամանով
744	Գրիգոր Մամիկոնյանի նշանակումը պատրիկ և զորավար հայ զորքերի
744	Նզիդ III՝ արաբական խալիֆ
744	Երկպառակություններ խալիֆատում
744	Իբրահիմ՝ արաբական խալիֆ
744/45—750	Մովսես II՝ արաբական խալիֆ
745—751	Մելիտենի, Կլավդիայի, IV Հայքի և Թեոդոսուպոլսի բնակչության գաղթեցումը բյուզանդացիների կողմից և նոր գաղութների հաստատումը

- 748
748—750
748—750
750
750
750
750
750—754
750—887
750—1258
751/2
752
754 Ռվից հետո
754—775
762
770
771
771
774/775
775
775, 15/IV
775—780
775—785
775—788
778
778
- Ներքին խռովություններ խալիֆատում
Նախարարների ապստամբությունը արաբների դեմ Գրի-
գոր Մամիկոնյանի առաջնորդությամբ
Տաճատ Անձեաքու գաղթը Թրակիա
Բագրատունյաց ճյուղի՝ Սահակի հիմնադրումը Տա-
րոնում
Մուշեղ Մամիկոնյանը՝ Գրիգոր Մամիկոնյանի հաջորդ,
իշխան
Օմայան տոհմի խալիֆ Մուլանի ծանր պարտությունը
Մուսուլի մոտ Աբասյան արաբական տոհմի հետ ու-
նեցած կռիվում, և Աբասյանների իշխանության հաս-
տատումը խալիֆատում
Աշոտ Բագրատունու կուրացումը
Աբու Աբաս ալ-Սաֆֆախ՝ արաբական խալիֆ՝ Աբաս-
յան դինաստիայի հիմնադիրը
Աբասյանների տիրապետության տեղությունը Հայաս-
տանում
Աբասյանների դինաստիայի ընդհանուր տեղությունը
Կոնստանդին V կայսեր արշավանքը և Մալաթիայի ու
Թեոդոսուպոլսի դրավումը
Կարնո շրջանի հայերի գաղթը Կոնստանդին V-ի զոր-
քերի հետ Բյուզանդիա
Բագրատի որդի Իսահակը իշխան [6 տարի]
Աբու Զաֆար Աբդլա ալ-Մանսուր՝ արաբական խալիֆ
Բաղդատ րադարի հիմնադրումը
Արարսիան Հասան ոստիկանի արշավանքը Հայաստան
խալիֆ ալ-Մանսուրի հրամանով և ղաղրեյի բռնու-
թյուններ Հայաստանի բնակչության բոլոր խավերի
վերաբերմամբ
Հայերի ապստամբությունը ընդդեմ արաբների ռաժիկ-
ների մասնակցությամբ
Վասակ Բագրատունու փախուստը Կղարջը և Արտա-
նուճի Բագրատունյաց ճյուղի կազմավորումը
Ապստամբական շարժում Հայաստանում Արտավազդ և
Մուշեղ Մամիկոնյանների ղեկավարությամբ և հար-
կահանների կոտորածը Շիրակում, Տարոնում ու
Բաղրևանդում
Գնունիների գաղթը Ադիոմիտից Տայք
Արծրունի և Ամատունի նախարարների ապստամբու-
թյունը և նրանց պարտությունը Արճնշի մոտ
Նեոն IX՝ կայսր Բյուզանդիայի
Մահդի [Մահադի]՝ արաբական խալիֆ
Եսայաս՝ կաթողիկոս Հայոց
Ավերածություններ Կիլիկիայում և Տավրոսում արաբ-
ների կողմից
Կուրմներ արաբների հետ Արտավազդ Մամիկոնյանի
առաջնորդությամբ և բյուզանդական նշանավոր հայ

	զորավարների՝ Տաճատ Անձեացու, Վարազտիրոցի և Գրիգորիոսի օգնությամբ և արաքների ծանր պարտությունը Գերմանիկի մոտ
778/9	Ազրարային ժողովրդական ապստամբություն Գիրկանիայում՝ կարմիր դրոշակներով
780	Մահդիի [Մահադիի] որդու Ահարոնի նոր արշավանքը
780—797	Կոնստանդին VI՝ կայսր Բյուզանդիայի
783	Նուսթա դինադադար արաքների և բյուզանդացիների միջև
783/84	Խազարների արշավանքը Անդրկովկաս
784—794	Հեղափոխական շարժումների՝ Խորասանում, Տաբարիստանում և Պարսկաստանի այլ շրջաններում
785/86	Մեհրուժան Արժրունու և Բադրատ Բադրատունու առերես կրոնափոխութիւնը
785—786	Մուսն՝ արաբական խալիֆ
786—809	Հարոն ալ-Ռաշիդ՝ արաբական խալիֆ
786	Վրաց Արշիլ Թազավորի նահատակությունը
786 և 788	Մահմեդականների գաղթը Հայաստան
788—790	Ստեփանոս՝ կաթողիկոս Հայոց
790	Հովհաննես՝ կաթողիկոս Հայոց
791	12.000 հայերի դադթը Բյուզանդիա Շապուհ Ամատունու առաջնորդութամբ
791—792	Սողոմոն՝ կաթողիկոս Հայոց
792—795	Գեորգ՝ կաթողիկոս Հայոց
793/794	Պարսկական աղանդավորների ապստամբութիւնը Պարթևում և Փայտակարանում Աբու Մուսլիմի ղեկավարությամբ
795—806	Հովսեփ՝ կաթողիկոս Հայոց
797—802	Իրենն՝ կայսր Բյուզանդիայի
799/800	Խազարների արշավանքը և Վրաստանի շրջանների ավերումը
802—811	Նիկեփորոս՝ կայսր Բյուզանդիայի
806/7—825/6	Աշոտ Մսակեր՝ Հայաստանի իշխան-վարչապետ
806	Աշոտ Մսակերը խալիֆատից ստանում է իշխանի տիտղոս և նշանակվում է Հայաստանի վարչապետ
806—830	Կռիվների դադարումը Բյուզանդիայի և խալիֆատի միջև
808	Հեղափոխական շարժումների Ատրպատականում
809—813	Գահակալական կռիվներ խալիֆատում Հարուն ալ-Ռաշիդի որդիների՝ Մամոնի և Ամինի [Էմինի] միջև
809—813	Մուհամեդ ալ-Ամին [Էմին]՝ արաբական խալիֆ
809	Շահաբի որդու՝ Իսմայիլի ապստամբությունը Թիֆլիսում
810—833	Վրաստանի Աշոտ Բադրատունին՝ իշխան-կյուրապաղատ
812—825	Նդեսիայի և Մարաշի ամիրա՝ Նասր
812	Նասր ամիրայի ապստամբությունը ընդդեմ խալիֆատի

- 813 Կայսիկների ապստամբությունը Դվինում և Պարթև-
վում խալիֆատի դեմ հայերի օգնությամբ
- 813—820 Աբդլ-Մելիք կամ Լիպարոն Աբգլա՝ ամիրա Մանադ-
կերտի
- 813—833 Մամոն՝ արաբական խալիֆ
- 813—820 Լևոն V՝ կայսր Բյուզանդիայի
- 816—817 Ատրպատականի բնակչության ապստամբությունը խա-
լիֆատի դեմ
- 816—817 Պարսկական աղանդավորների՝ խուրամիտների սոցիա-
լական և ազատագրական ապստամբական շարժում-
ները Բաբեկի ղեկավարությամբ
- 819 Ապստամբական շարժումներ արևմտյան Մաբաստանում
[Համադանում] և արևելյան Հայաստանում
- 820—830 Սեադա՝ Մանազկերտի ամիրա
- 820 Սեադայի ավերիչ արշավանքները Հայաստանում
- 826 Բաղաջ աշխարհի ապստամբությունը
- 826—850 Սմբատ Արլաբաս՝ մեծ սպարապետ
- 826՝ Տարոնի Բագարատ Բագրատունին՝ հրամանատար և
իշխանաց իշխան
- 827 Արևմտյան Սյունիքի ապստամբությունը
- 829 Վրաց և Արտանուշի իշխան Աշոտ Բագրատունու առաջ-
խաղացումը և Կուր գետի հովիտների գրավումը
- 833/34 Բաբեկի պարտությունը Համադանի մոտ
- 833—842 Մուտասիմ՝ արաբական խալիֆ
- 835 Ափշինի հաղթությունը Բաբեկի դեմ ունեցած կռվում
- 836 Ափշինի կողմից Բաբեկի մայրաքաղաք Պարթավի գրա-
վումը և ավերումը
- 836 Սամարա քաղաքի հիմնադրումը
- 837 Հուլ բնակչության մի մասի գաղթը Բյուզանդիա
- 839 Ապստամբական-հեղափոխական շարժում Տարաբիս-
տանում Մազլարի առաջնորդությամբ ընդդեմ տիրող
դասերի
- 839 Ապստամբություն Մազանդարանում
- 840 Սահակ ամիրայի ապստամբությունը Թիֆլիսում
- 842—847 Վաթիկ [Վասիկ]՝ արաբական խալիֆ
- 844 Գանձակ [Գյանջա] քաղաքի հիմնադրումը
- 847—861 Մութավաքիլ՝ արաբական խալիֆ
- 849 Մութավաքիլի կարգադրությամբ Աբուսեթ ոստիկանի
մուտքը Հայաստան, իբրև վերականգնու և գլխավոր
հարկահավաք
- 850 Աղձնիքի և Արզն քաղաքի ամիրա Մուսեի արշավանքը
Տարոն
- 850 Մոկքը, Տարոնը, Սպերը, Սյունիքը և Աղվանքի մի մա-
սը Բագրատունիների իշխանության տակ
- 850 Աշոտ Արժրուծին և Բագրատ Բագրատունին դուրս են
քշում Ալային Վասպուրականից և Մուսեին Տարոնից

851	Աբուսեթի որդի՝ Յուսուֆ ոստիկանի արշավանքը Վասպուրական
852	Սասունի լեռնականների ապստամբությունը Հովնան խոթեցու առաջնորդությամբ
852	Արաբական զորավար Բուղայի արշավանքը Հայաստան Բուղան Դվինում
852—853	Բուղայի վերադարձը
855/56	Դվին քաղաքի ավերիչ երկրաշարժը
858	Ալ-Մուստային՝ արաբական խալիֆ
862—866	Աշոտ Բագրատունու նշանակումը ալ-Մուստայինի կողմից Հայաստանի վարիչ՝ իշխանաց իշխան կոչումով
862—887	Աշոտ Բագրատունի՝ իշխանաց իշխան
864 և 913	Ապստամբություն Պարսկաստանում [Մազանդարանում]
	Համայնական հոգերի դրավման պատճառով
866—869	Մատաղզա՝ արաբական խալիֆ
867—886	Բարսեղ Ա՝ կայսր Բյուզանդիայի
868—905	Իզիպատոսի և Ասորիբի աստիճանաբար անջատումը խալիֆատից՝ նրա թուլացման պատճառով
870—892	Ահմեդ՝ արաբական խալիֆ
871—882	Բարսեղ Ա կայսեր հաղթական առաջխաղացումը Տավրոսից դեպի Անտիոսիական, դեպի Մելիտենե և դեպի Թեփրիքե [Տեֆրիկ]
872	Տեֆրիկի ավերումը Բարսեղ Ա-ի կողմից
876—896	Գևորգ Բ՝ կաթողիկոս հայոց
877	Լուլայի և Մելիսոսի դրավումը և Անտիոքի ամիրայի զորքերի ջարդը բյուզանդական զորքերի կողմից
879—930	Սաճյան գլխաստիան Ադրբեջանում և նրա իշխանության տևողությունը
879—889	Աբուսաճ ամիրա՝ Սաճյան գլխաստիայի հիմնադիրը
879—886	Բյուզանդական զորքերի հաղթական արշավանքները դեպի Մարտին, Մծբին, Մելիտենե, Տարսոն և Անիկամախ
880 թ.-ից հետո	Աշոտ Բագրատունու հաղթական արշավանքը դեպի Մանաղկերտ, և Բերկրիի, Խլաթի ու Արճեշի գրավումը
886—912	Լևոն VI՝ կայսր Բյուզանդիայի
886/887	Աշոտ Բագրատունու թագադրությունը
889—900	Ափշին՝ ամիրա Ադրբեջանի [Սաճյան]
890/1	Աշոտի մահը
890/1—913/14	Սմբատ Ա՝ Բագրատունի թագավոր
892—902	Մուսամիդ՝ արաբական խալիֆ
893—898	Աշոտ Արծրունի
893	Դվինի մեծ երկրաշարժը
895	Տաթևի վանքի հիմնադրումը
899	Ատրնեբսեհ կյուրապաղատը՝ թագավոր
900—927	Յուսուֆ՝ ամիրա Ադրբեջանի, Ափշինի եղբայրը
902—908	Ալի ալ-Մուկտաֆի՝ արաբական խալիֆ

904—937

Գագիկ Արծրունի, որը 908 թվին Յուսուփ ամիրայից ստացել է թագ

907

Յուսուփ [Յուսուֆ] ամիրայի արշավանքը Հայաստան Զաիր ալ-Մուկտագիր՝ արաբական խալիֆ

908—932

909

Յուսուփի արշավանքը Նախճավան

910

Վաղարշակերտի պաշարումը Գագիկ Արծրունու կողմից Կոնստանդին VII-Միրանաթին՝ կայսր Բյուզանդիայի

912/13—959

Աշոտ Երկաթ՝ Բագրատունի թագավոր Հայոց, որը 921 թվին կայսրությունից ստացել է թագ

914—928/29

918/919

Յուսուփ ամիրայի ապստամբությունը և բանտարկու-
թյունը

926

Բյուզանդական Հայ զորավար Հովհաննես Կուրկուասի
Հաղթական արշավանքը և Մալաթիայի նվաճումը

927—930

929

Հյուսիսային Միջագետքի նվաճումը բյուզանդական
Հայ զորավար Հովհաննես Կուրկուասի կողմից

929—953

Արաս՝ Բագրատունի թագավոր Հայոց [Աշոտ Երկաթի
եղբայրը]

929—991

Աբու-Մուհամմեդ Հասան՝ Մուսուլի և Դիարբեքրի Համ-
տունյան իշխանական տոհմի ղեկավար

934

Մալաթիայի և Արևմտյան Հայաստանի նվաճումը բյու-
զանդացիների կողմից

935

Մալաթիայի [Մելիտենե] գրավումը արաբների կողմից
Աշոտ-Դերենիկ՝ Արծրունի թագավոր

937—953

943

Ռուզիկների արշավանքը Անդրկովկաս և Պարթավի
[Պարտավի] ավերումը

949

Բյուզանդական զորավար Չմշկիկի արշավանքը Կարինի
կողմերում

951—1003

Գրիգոր Նարեկացի

953—977

Աշոտ Գ Ողորմած, Շահնշահ, Արաս թագավորի որդին
Ռոմանոս Գ՝ կայսր Բյուզանդիայի

959—962

961

Աշոտ Ողորմածի թագադրությունը Անիում

962—984/85

Մուշեղ՝ Բագրատունի թագավոր Կարսում, Աշոտ
Ողորմածի եղբայրը

963—969

Նիկիփորոս՝ կայսր Բյուզանդիայի

963—964

Անիի պարիսպների կառուցումը Աշոտ Ողորմածի ձեռ-
նեցությամբ

969—970

Բյուզանդական զորքերի արշավանքը Վարդ զորավարի
առաջնորդությամբ և Մանազկերտի ու Անտիոքի
առումը

969—976

Հովանես Չմշկիկ՝ կայսր Բյուզանդիայի

972—992

Տեր-Խաչիկ՝ կաթողիկոս Հայոց

973—974

Մծբինի, Ամիդի ու Ֆարկիսի նվաճումը բյուզանդացի-
ների կողմից

976—1025

Բարսեղ Բ՝ կայսր Բյուզանդիայի

977—989

Սմբատ Բ Բագրատունի թագավոր, Աշոտ Ողորմածի
որդին և հաջորդը

979—986	Վարդ Փոկասի կռիվները արաբների հետ
981—1018	Բյուզանդիայի քառասունամյա կռիվները բուլգարների և սլավոնների հետ—ընդհատումներով
982	Սմբատ Բ-ի եղբայրը՝ Գուրգենը ժառանգում է Տաշիրը, Տավուշը և Կայանը
983	Աբուտուլայի Գողթան ամիրայի արշավանքը և կոտորած Վասպուրականում
983—1001	Վրաց Դավիթ կյուրապաղաթը Տայքի իշխան
987/88	Աբլահ զմեռալի արշավանքը Վասպուրական
987—989	Քաղաքացիական կռիվներ Բյուզանդիայում
989—1020	Գագիկ թագավոր՝ Սմբատ Բ-ի եղբայրը և հաջորդը
990	Քրդական Մերվանյան տոհմի հանգես գալը Բերկրիում և տիրապետությունը՝ Ամիդ, Արզն, Յարկին և այլն քաղաքների երկրամասերում
991	Հայ ազնվականների մահմեդականության ընդունումը Սամարայում
996	Բյուզանդիայում գյուղացիական հողերի անձեռնմխելիության մասին օրենքի հրատարակումը
998	Ատրպատականի Մամլուժ ամիրայի արշավանքը Ապահոնիք և նրա պարտությունը
1016	Սենեքերիմ թագավորի գաղթը Սեբաստիա
1016	Բյուզանդացիների հաղթական արշավանքը Հայաստան և Արևմտյան Հայաստանի ու Վասպուրականի գրավումը
1021/2	Անիի թագավոր Հովհաննես-Սմբատի կողմից Անին ու իր երկիրը, իր մահից հետո, Բագրիդես Բ կայսեր կտակելու մասին եղած պաշտոնական որոշումը
1041	Հովհաննես-Սմբատի և իր եղբոր Աշոտի մահը
1042	Աշոտի որդի Գագիկը՝ Անիի թագավոր
1045	Գագիկ թագավորի հրավիրումը Պոլիս և ստիպումը Անին հանձնել Բյուզանդիային և փոխարենը ստանալ Բյուզանդական Պիզա քաղաքը իր շրջակայքով
1042—1054	Պոնտանգին Մոնոմախոս՝ կայսր Բյուզանդիայի
1045	Անիի թագավորության միացումը կայսրության
1047/48	Սելջուկների առաջին արշավանքը Հայաստան
1064	Կարսի թագավորության նվաճումը և միացումը Բյուզանդական կայսրության:

Յ Ա Ն Կ

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Հայաստանում մտգեղանորթուն հառաժափելուց հետո մինչև
Բազմառունդաց քաղաքաւորթուն անկումը

Ա Հայկական աղբյուրները

1. «Անանուն ժամանակագրութիւն», Երևան, 1940 թ.։ Գրված է, ինչպես մատնացույց են արել հրատարակիչները, 14-րդ դարի սկզբներին։ Ժամանակագրութիւնը սկսվում է Ադամից և հասնում է մինչև 1300 թիվը։
2. «Պատմութիւն Արիստակեսի վարդապետի լատիվերացույ», Թիֆլիս, 1912։ լատիվերացին եղել է ժամանակակից սելջուկյան արշավանքների և 1049 թվին ինքը ականատես է եղել Սմբատաբերդ և Արծն քաղաքների կոտորածների։ Պատմութիւնը սկսվում է 1070 թվականից և հասնում է մինչև 1071 թիվը։
3. «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901 թ.։ Այս գիրքը հավաքածու է զանազան պատմական գրութիւնների և թղթակցութիւնների, որոնց մեջ տրվում են կարևոր և հավաստի պատմական տեղեկութիւններ։
4. «Նդիշէի, վասն պատերազմին Վարդանանց, Վենետիկ, 1864 թ.։ Նդիշէի պատմութիւնը մարզպանութիւն սկզբնական շրջանի գլխավոր աղբյուրներից մեկն է։ Գրվածքը ունի հռետորական բնույթ։ Պատմական դեպքերը երբեմն խեղաթյուրված են։ V դարի կրօնական պատերազմների և պատմական իրադարձութիւնների ճշմարտութիւնը գտնելու համար անհրաժեշտ է կատարել Նդիշէի և Փարպեցու վկայութիւնների բաղդատութիւնը։
5. «Թովմայի վարդապետի Արծրոնույ, պատմութիւն ասնն Արծրոնեաց, Ս.—Պետերբուրգ, 1887։

Թովմա Արծրոնու պատմութիւնը սկսվում է Ադամից և հասնում է մինչև 930 թիվը։ Բաղկացած է չորս դպրութիւնից, որոնցից ամենակարևորը չորրորդ (Դ) դպրութիւնն է, որտեղ Թովման տալիս է իր ժամանակի ականա-

տեսի պատմութիւնը Այս երկը խններորդ դարի երկրորդ կեսի և տասներորդ դարի առաջին քառորդի կարևորագույն աղբյուրներից մեկն է:

6. «Ղաղարայ Փարպեցւոյ, Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան», Տփղիս, 1904 թ.:

Փարպեցու պատմութիւնը, որ Փափստոսի պատմութիւն շարունակութիւնն է, մարզպանութիւն շրջանի գլխավոր աղբյուրներից մեկն է և հասնում է մինչև 485 թիվը, մինչև Վահան Մամիկոնյանի մարզպան կարգվելը:

7. «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց», Ս.—Պետերբուրգ, 1837:

Ղևոնդի պատմութիւնը գրված է ութերորդ դարի վերջերում, և ընդգրկում է 632 թ.—788 թվ. ժամանակաշրջանը: Այս երկը արաբական հիշված ժամանակաշրջանի հիմնական և հավաստի աղբյուրներից մեկն է:

8. «Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898 թ.:

Ուռհայեցու ժամանակագրութիւնը սկսվում է 952 թվից և հասնում է մինչև 1136/37 թիվը:

9. «Մխիթար Այրիվանեցի, ժամանակագրութիւն», Պետերբուրգ, 1867:

Այրիվանեցին գրել է մի համառոտ ժամանակագրութիւն, հավանորեն, 14-րդ դարի սկզբներում, որը սկսվում է բիրիական առասպելներից և հասնում է մինչև 1289 թիվը:

10. «Մովսէս Դասխուրանեցու (վանական վարդապետ), պատմութիւն»:

Կարևոր է այս երկի Բ-րդ դիրքը, որտեղ տրվում է է-րդ դարի անցքերի պատմութիւնը, որոնց ինքը եղել է ակնատես:

11. «Մովսէսի Կաղանկատուացւոյ, Պատմութիւն Աղուանից աշխարհի», Մոսկվա, 1860:

Կաղանկատուացու պատմութիւնը ընդգրկում է Աղվանից պատմութիւնը՝ սկզբից մինչև 10-րդ դարի կեսերը: Կարևոր են իր ժամանակվա իրադարձութիւններին վերաբերող պատմական տեղեկութիւնները:

12. «Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913 թ.:
- Մարզպանութիւն շրջանի մի քանի խնդիրների լուսաբանման համար կարող է ծառայիլ իբրև օժանդակ աղբյուր:

13. «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ, Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912 թ.:

Հ. Դրասխանակերտցին եղել է ժամանակակից [+925 թ.] Սմբատ և Աշոտ Բագրատունիների Մերձավոր դեպքերի պատմութիւն համար օգտվել է նաև Շապուհ Բագրատունու պատմութիւնից:

14. «Յովհաննու Մամիկոնյանի եպիսկոպոսի, Պատմութիւն Տարոնոյ», Վենետիկ, 1860 թ.:

Այս երկի պատմական փաստերը կարոտ են ստուգման ժամանակակից վավերական աղբյուրների բաղդատութիւնը: Կարող է ծառայել իբրև օժանդակ աղբյուր:

15. «Հովհաննու Մանգակունւոյ Հայոց Հայրապետի ճառք», Վենետիկ, 1860 թ.:

16. «Պատմութիւն Շապուհ Բագրատունու»:

Այս պատմութիւնը գրված է ժողովրդական լեզվով IX դարի վերջում կամ

X դարի սկզբում, Շապուհը եղել է ականատես իր ժամանակի պատմական անցքերին և տալիս է հավաստի տեղեկություններ:

17. «Ուխտանէս, Պատմութիւն Հայոց», Վաղարշապատ, 1871: Ուխտանեսի պատմությունը մեծ մասամբ քաղվածք է Կաղանկատվացու գրքից:

18. «Պատմութիւն սրբոյն Ներսիսի և գիւտ Նշխարաց», Սուփերք Հայկականք, է, Վենետիկ, 1853:

19. «Ստամուէլի Անեցու քահանայի հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1895 թ.:

Այս երկը տալիս է ժամանակագրական տեղեկություններ աշխարհի սկզբներից մինչև 1179 թիվը:

20. «Սևրևոսի եպիսկոպոսի Բագրատունեաց, Պատմութիւն ի Հերակլա, Թիֆլիս, 1913:

Սեբեոսը տալիս է Վահան Մամիկոնյանի ապստամբությունից սկսած մինչև 590 թիվը տեղի ունեցած անցքերի պատմությունը համառոտ ձևով: Իսկ 590 թ.—661 թվերի պատմությունը տալիս է ընդարձակ: Սեբեոսի պատմությունը վեցերորդ դարի վերջերի և VII դարի առաջին կեսի պատմության գլխավոր և հավաստի աղբյուրներից մեկն է:

21. «Ստեփանոսի Տարոնեցույ Ասողկան, Պատմութիւն տիեզերական», Ս.—Պետերբուրգ, 1885 թ.:

Ասողիկը գրել է իր «Տիեզերական պատմութիւնը» XI դարի սկզբում՝ արարչագործությունից սկսած մինչև 1004 թիվը: Պատմությունը բաղկացած է երեք մասից: Ամենակարևորը երրորդ մասն է, որտեղ տրվում են բազմաթիվ կարևոր ու հավաստի ինքնուրույն մանրամասնություններ՝ Աշոտ Բագրատունու թագավորությունից սկսած մինչև 1004 թիվը:

22. «Վարդանայ վարդապետի, Հաւաքումն պատմութեան», Վենետիկ, 1862:

Վարդանը տալիս է իր աշխատության մեջ պատմական տեղեկություններ՝ աշխարհի սկզբնավորությունից մինչև 1267 թիվը:

23. «Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Պատմութիւն Նահանգի Սիսական», Թիֆլիս, 1911:

Այս ընդարձակ պատմությունը, որ բաղկացած է 74 գլուխներից, տվյալ ժամանակաշրջանի Հայոց պատմության կարևորագույն աղբյուրներից մեկն է, մանավանդ արժեքավոր է Սյունյաց իշխանական տոհմի և Օրբելյանների պատմության համար:

ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ա. Վրացական աղբյուրներ

«Ջուլանշերի պամլի, համառոտ պատմութիւն Վրաց», Վենետիկ, 1884 թ.:

Բ. Բյուզանդական աղբյուրներ:

1. Georgios Kedrenos, «Weltchronik», տես՝ Corpus scriptorum historiae byzantinae, Bonn, 1839, Bd. II.

Կեդրոնային ժամանակագրական երկը քաղվածք է այլևայլ աղբյուրներից. սկսվում է Ագամից և հասնում է մինչև 1057 թիվը: Նրա մեջ ուշագրավ տեղեկություններ են հաղորդված Բագրատունյաց թագավորության ժամանակ և Անի քաղաքը Բյուզանդիային տալու մասին:

2. Theophanes Բյուզանդացի, որը գրել է VI դարի վերջերում 10 գիրք՝ հատվածներ 566—581 թվերի պատմական անցքերի մասին:

3. Թեոփանես, ժամանակագրություն 284—813 թիվը, տե՛ս Theophanis chronographia, Leipzig, 1883—1885: Այդ աշխատությունը հեղինակը գրել է 810—814/15 թվերին և տալիս է ժամանակագրական տեղեկություններ հայերի հերթական թագավորության տարիների մասին:

4. Պրոկոպիոս Կեսարացի [Procopii], ծնվել է 5-րդ դարի վերջերին և մասնակից է եղել վանդալների հետ տեղի ունեցած կռիվներին:

Գրել է պատմություն [Istorikon]—8 գիրք՝

ա. Կռիվներ Պարսկաստանի դեմ—2 գիրք,

բ. Վանդալների դեմ—2 գիրք,

գ. Գոթերի դեմ—3 գիրք

և դ. 8-րդ գիրքը մինչև 554 թիվը տեղի ունեցած պատմական անցքերի մասին:

Բացի այդ, նա ունի նաև այլ երկեր, որոնք կարևոր են Բյուզանդիայի ներքին կյանքի ուսումնասիրության համար:

5. Մենանդր [Menandre]. Բյուզանդական այս պատմիչը ծնվել է VI դարի կեսերին և գրել է հատվածներ 558—582 թվերի պատմական անցքերի մասին: Օգտվել է, ըստ երևույթի, Թեոփանեսից:

6. Constantinos Fotihs (Foties, De administrando Imperio, Ecceae, 1828—40 913—959 թ.)

7. Վսեկրատայ Սքուլաստիկոսի, Եկեղեցական պատմություն, Վաղարշապատ, 1897 թ.:

ԱՍՈՐԱԿԱՆ ԱՂԲՏՈՒՐՆԵՐ

1. Evagrius, Historia ecclesiastica:

Եվագրիոսը գրել է եկեղեցական պատմություն 6 գիրք, 431—593 թթ.: Օգտվել է Մենանդրի և Հովհաննես Նպիփանեսից:

2. Միքայել Ասորի, Ժամանակագրություն, Նորուսաղեմ, 1871 թ.: Միքայել Ասորիի գրել է ընդարձակ ժամանակագրություն՝ Ագամից սկսած մինչև 1194/5 թ.:

3. Հեսու Ասորի, Ժամանակագրություն, գրված է մոտավորապես 507 թվին:

4. Հովհաննես Նպիփանեսի [Ասորիքոմ]:

Գրել է վեցերորդ դարի վերջերում պատմական հատվածներ 572—592/3 թվերի անցքերի մասին:

5. Chronique de Denis de Tele-Mahre, Publ. et trad. par Chabot, Paris, 1895.

ԱՐԱՐԱԿԱՆ ԱՂՔՅՈՒՆՆԵՐ

1. Ал-Мукадасий, տե՛ս Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане, «Сборник материалов для описания местностей Кавказа», перевод Караулова, вып. XXXVIII, 1901—1903. *Տե՛ս նաև* Bibl. Geogr. Arab., ed. de Goeje, t. III.
2. Beladhorî, Le livre de la conquête des pays. *Տես նաև* Баладзори, Книга завоевания стран, перевод П. Жузе, Баку, 1927.
3. Ibn-Chordadbeh. Bibl. Geogr. Arab. éd. de Goeje. *Տես նաև* Караулов Сведения арабск. писателей о Кавказе, Армении и Азербайджане; «Сборник материалов для описания племен и местностей Кавказа».
4. Ibn-Fakih, Bibl. Geogr. Arab., éd. de Goeje. *Տես նաև* Караулов «Сборник материалов для описания местностей и племен Кавказа».
5. Ibn-Haukal, Bibl. Geogr. Arab., éd. de Goeje, *Տես նաև* Караулов, Книга путей и царств, «Сборник материалов...».
6. Istaebrî, Livre des routes et des royaumes, éd. de Goeje, B. G. A. I. *Տես նաև* Караулов, «Сборник материалов...».
7. Kodama, Bibl. Geogr. Arab., éd. de Goeje. *Տես նաև* Караулов, «Сборник материалов для описания племен и местностей Кавказа».
8. Masoudi, Les prairies d'or, Paris, 1861—1877.
9. Jakut's Geographischer Wörterbuch, Leipzig, 1866—1873.
10. Ծաճյա Անտիոքացի, XI դարի առաջի կեսի արաբական պատմագիր է. կարևոր աղբյուր է Բագիլիսու Բ-ի և Դավիթ Ղյուրապաղատի ժամանակը տեղի ունեցած պատմական իրադարձությունների:
11. Տարարի, տե՛ս Բ. Խալաթյանց, Արաբական մատենագիրները Հայերի մասին. տե՛ս նաև Tabari, Bibl. Geogr. Arab., éd. de Goeje.

ՑԱՆԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. Akulian A., Einverleibung armenischer Territorien durch Byzanz im X Jahrhundert, Diss., Gröningen, 1912.
2. Адонц Н., Марзбан Васак перед судом истории.
3. Ադոնց Ն., Բագրատունիների փառքը:
4. Ալիշան Ղ., Այրարատ, Վենետիկ, 1890:
5. Նույնի, Շիրակ, Վենետիկ, 1838:
6. Նույնի, Հայապատում, Վենետիկ, 1901:
7. Aslan Kévork, Etudes historiques sur le peuple arménien, Paris, 1909.
8. Бартольд В., К истории крестьянских движений в Персии, Сборник этюдов из всеобщей истории, Москва, 1923.

9. Бартольд В., Историко-географический обзор Ирана, С.-Петербург, 1903.
10. Բաժաճյան Կ., Իսկական պատմութիւն Հայոց, Կ. Պոլիս, 1914.
11. Baynes-Norman H., The Byzantine empire, London, 1925.
12. Бердзенишвили Н., Джавахишвили И., Джанашиа С., История Грузии, ч. I, Тбилиси, 1946.
13. Brosset M., Histoire de la Géorgie, depuis l'antiquité jusqu'au XIX siècle. Petersbourg, 1849—1858.
14. Брюсов В., Летопись исторических судеб армянского народа, Ереван, 1940.
15. Գարագաշյան Ա. Մ., Քննական պատմութիւն Հայոց, հատ. Դ. Թիֆլիս:
16. Գեղցեր Հ., Համառոտ պատմութիւն Հայոց, Թարգմ. Գր. Վ. Գալեմբարյանի, Վիեննա, 1897.
17. Gelzer H., Abriss der byzantinischen Kaisergeschichte, München. 1897. նույնը հայերեն՝ Գեղցեր Հ., Համառոտութիւն Բյուզանդական կայսրերի պատմութեան, Վաղարշապատ, 1901.
18. Gelzer H., Die Anfänge der armenischen Kirche, sitzungsberichte der Kön.-Sächs. Gesellschaft der Wissenschaften, Leipzig, 1895.
19. Գյուլեւորդեր Կ., Հոռմեական Հայաստան և Հոռմեական սատրապութիւնները Դ—Ջ դարերուն, Թարգմ. Նորշուանի, Վիեննա, 1914 թ.
20. Նույնի, Բյուզանդիոն և Պարսկաստան և անոնց դիվանագիտական յարաբերութիւնները Յուստինիանոս ժամանակ, Թարգմ. Հ. Համբարյանի, Վիեննա, 1911.
21. Гурко-Кряжин, Прошлое и настоящее Советской Армении, Новый Восток, 1927, кн. 16—17.
22. Daghabaschian A., Gründung des Bagratidenreiches durch Aschot Bagratuni Diss., Berlin, 1833.
23. Darmester J., série VIII, t. III.
24. Джавахов И., История церковного разрыва между Грузией и Арменией в начале VII века, И. А. Н., 1908 г., №№ 5 и 6.
25. Diehl, Justinian et la civilisation byzantine au VI siècle, Paris, 1901.
26. Diehl, Le monde oriental de 395 à 1081, 1936.
27. Dulaurier Ed., Recherches sur la chronologie arménienne, Paris, 1859.
28. Thophdschian H., Politische und Kirchen-geschichte Armeniens unter Aschot I und Sembat I, Westasiatische Studien, VIII, 1905.
29. Thophdschian H., Die inneren Zustände Armeniens unter Aschot I, Diss., Westasiat. studien, Berlin, 1904.
30. Lebeau S., Histoire du Bas-Empire, Paris, 1824.

31. Лен-пуль Стенли, Мусульманские династии, хронологические и генеалогические таблицы, перевод Бартольда, С.-Петербург, 1899.
32. Հեն, Հայոց պատմություն, հատ. Բ, Երևան.
33. Laurent J., L'Arménie entre Byzance et l'Islam, depuis la conquête arabe jusqu'en 886, Paris, 1919.
34. Karst J., Sempadischer Kodex, Strassburg, 1905.
35. Kremer A., Culturgeschichte des Orients unter den Chalifen, Wien, 1876.
36. Кремер А., «Арабский Нерон».
37. Կոստանյան Կ., Վիմական տարեգիր, Ս.-Պետերբուրգ, 1913.
38. Кулаковский Ю., История Византии III, Киев, 1915.
39. Honigmann E., Die Ostgrenze des Byzantinischen Reiches, Bruxelles, 1935.
40. Horn P., Geschichte Irans in islamitischer Zeit, Grundriss der iranischen Philologie, II Band, Strassburg, 1903.
41. Ghazarian M., Armenien unter der arabischen Herrschaft, Marburg, 1903.
42. Манандян Я., О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1932.
43. Մանանդյան Հ., Արարական արշավանքները Հայաստանում, տե՛ս Մանր հեղուկություններ, Երևան, 1932 թ.
44. Նույնի, ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արարական տիրապետության դեմ, Երևան, 1939 թ.
45. Նույնի, Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում, տե՛ս Գիտ և Արվեստի ինստիտուտի Տեղեկագիր, № 1, Երևան, 1926 թ.
46. Մարկվարտ, Հայ Բազրատունեաց ճիւղագրութիւնը, Թարգմ. Հասպոզյանի, Վիեննա, 1913.
47. Markwart J., Untersuchungen zur Geschichte von Eran, Leipzig. 1905.
48. Markwart J., Osteuropäische und Ostasiatische Streifzüge, Leipzig. 1903.
49. Март Н., Ани, книжная история города и раскопки на месте города, Ленинград—Москва, 1934.
50. Նույնի, Кавказский культурный мир и Армения, Петербург, 1915.
51. Morgan J., Histoire du peuple arménien, Paris, 1919.
52. Мюллер А., История ислама с основания до новейших времен, пер. Медникова, С. Петербург, 1895/96.
53. Justl F., Geschichte Irans, II, Strassburg, 1903.
54. Nöldeke Th., Aufsätze zur persischen Geschichte, Leipzig, 1887.
55. Նույնի, Tabari, Geschichte der Perser und Araber zur Zeit der Sassaniden, Leiden, 1879.

56. Schlumberger G., L'Épopée Byzantin, Paris, 1896.
 57. Schur Werner, Die Orientpolitik des Kaisers Nero, Klio, 15, 1923.
 58. Spiegel F., Eranische Alterthumskunde, Leipzig, 1871—1878.
 59. Успенский, История Византийской Империи, Москва—Ленинград, 1948.
 60. Չամչյան Մ., Պատմութիւն Հայոց, հատ. Բ, Վենետիկ, 1785.
 61. Saint-Martin M., Mémoires historiques et géographiques sur l'Arménie, t I—II, Paris, 1818—1819.
 62. Vasiliev A., Histoire de l'empire byzantin, 1932, Paris.
 63. Weil G., Geschichte der Chalifen, Mannheim, 1846.
 64. Winckler Hugo, Weltgeschichte, Leipzig, 1901.
 65. Նույնի, Volken Vorderasiens, Leipzig, 1899.
 66. Tournebize Fr., Histoire politique et religieuse de l'Arménie, Paris, 1900.
 67. Օրմանյան Մ., «Ազգապատում», Կոստանդնուպոլիս, 1912/13 թ.
-

ՅԱՆԿ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ

Ճբաս սպարապետ (Աշոտ I-ի նղբայր)—
38, 40.

Աբաս I, թագավոր հայոց—45, 313, 357.

Աբաս Բագրատունի, թագավոր Կարսի—
48, 381.

Աբաս, Դագիկի որդի—273.

Աբաս, Հովհաննես, Սմբատի կնոջ հայ-
րը—273.

Աբբասյան դինաստիա—19, 27, 56.

Աբբասյաններ—19, 20, 27, 56, 57.

Աբբասյան տոհմ—209, 214, 215, 216,
218.

Աբբասյան խալիֆներ—290, 292, 298,
322, 355.

Աբդլա—215, 216, 293.

Աբդլ-Մելիք խալիֆ—24, 240, 284.

Աբդել-Մելիք, ամիրա Մանազկերտի—33.

Աբդուլ-Ազիզ—25, 295.

Աբդուլ-Համիդ Ի. Ջաֆար—180.

Աբդուհհիմ, արաբ զորավար—21, 174.

Աբխազլա—314, 330, 343, 358.

Աբխազ—Կուրա—344.

Աբխազներ—48.

Աբլահաճ, ամիրա Ատրպառականի—47.

Աբրահամ Մամիկոնյան եպիսկոպոս—
261.

Աբրահամ հոստովանող—79.

Աբրահամ կաթողիկոս—17.

Աբրահամ եպիսկոպոս—261.

Աբու-Բաբիր խալիֆ—84, 181, 182, 183,
189, 193, 194, 195, 198.

Աբուլարաս ալ-Սաֆահ—215.

Աբուլ-Աբաս Աբդլա խալիֆ—27, 224.

Աբու-Ջաֆար Աբդլա ալ-Մանսուր—27,
28, 31, 57, 215, 216, 217, 218, 292,
293.

Աբու-Մուսլիմ (Ատա-ալ-Մոկկանա)—33,
60, 225.

Աբուսեթ, արաբ ոստիկան—33, 66, 90,
112, 228, 229.

Աբուսայիդ Բահատուր խան—96.

Ագաթանգեղոս—52, 262.

Ագարակ—118.

Աղամակերտ—229.

Աղոնց նիկ.—78, 79, 81, 85, 91, 93,
97, 102, 104, 105, 106, 107, 109, 115,
116, 128, 137, 138, 256, 263.

Աղրեհյան—42, 52, 55, 57, 64, 162,
289, 295, 296, 297, 298, 299, 306,
311, 314, 334, 336, 341, 370.

Ազդոր—165.

Ալանաց դուռ—42.

Ալա Արման—104.

Ալաշկերտ—329.

Ալամն—273.

Ալաման—265.

Ալա Մովսիս—229.

Ալդան—150, 343.

Ալի ոստիկան—110, 228.

Ալ-Իստախրի—149, 310, 311, 314, 316,
320, 321, 323, 324, 326, 330, 332,
334, 335, 337, 338, 339, 340, 343,
370.

Ալ-Խան—331.

Ալ-Մուկադդասի—310, 312, 315, 316,
324, 330, 331, 332, 333, 334, 335,
338, 341, 343, 345.

Ալ-Վաթիկ խալիֆ—36, 61, 228.

Ալ-Վալիդ—180.

Ալ-Ջարրախ իրն-Արդուլա ալ-Խակամ—
292.

Ալփասլան—94, 307, 319.

- Ախալքալաք—165, 348, 349.
 Ախալցխա—165.
 Ախթամար—40, 182, 305, 360.
 Ախվերդով—329, 369.
 Ախուրյան գետ (Արփաշայ)—46, 226, 312, 335, 348, 360.
 Ակակիոս, Հայաստանի ենթահյուսակա-
 տոս—53, 130, 135.
 Ակրատ գետ—180.
 Ահարոն, Սահակի որդի—259.
 Ահմադան—144.
 Ահմեդ ալ-Մուքամիդ (տե՛ս Մուտամիդ).
 Ահմետ ալ-Մուստալիմ խալիֆ—64, 228.
 Աղաբո վանք—377.
 Աղբակ—229.
 Աղ Թողուր բլուր—339.
 Աղբուղա, Իվանի որդի—265, 266.
 Աղդամ—152.
 Աղեքսանդրիա—142, 347.
 Աղիովիտ—21, 35, 156, 178, 187.
 Աղկալա—348.
 Աղվանք—9, 18, 23, 24, 31, 33, 36, 37, 38, 51, 63, 81, 83, 149, 150, 151, 152, 153, 182, 184, 185, 186, 194, 199, 226, 227, 243, 244, 261.
 Աղվաններ—44, 162.
 Աղվանից թագավորութուն—45.
 Աղի գյուղ (Ասի-ավան)—157.
 Աղի լեռնանցք—155, 157.
 Աղ-շայ գետ—154, 176.
 Աղստե (Աղստաֆա) գետ—44, 296, 297, 339.
 Անառյան Հր.—241, 242, 272, 279.
 Ամատունյաց նախարարներ—220.
 Ամասլան, որդի Գրիգորի, ամուսին Բե-
 սուէի—226.
 Ամասիա—346, 347.
 Ամիդ (Դիարբեքիր)—46, 157, 160, 172, 176, 297, 301, 317, 330, 331, 332.
 Ամիրգոնա խան—123.
 Ամիրբեգ—276.
 Ամստերդամ—345.
 Ամր զորավար—30, 181, 182, 183, 189, 193, 194, 195, 198, 221, 222.
 Այաս—242.
 Այրարատ—16, 17, 21, 100, 151, 173, 182, 194, 321.
 Անանիա, Հոռոմոսի վանքի առաջնորդ—
 273, 274.
 Անանիա Շիրակացի—59, 84, 93, 94, 99, 235, 236, 237, 238, 246, 247, 248, 250, 251, 267, 270, 284.
 Անաստաս, կայսր Բյուզանդիայի—80.
 Անգեղակոթ—153.
 Անգարա—346, 347.
 Անգրկովկաս—50, 61, 64, 72, 149, 208, 227, 272, 296, 298, 299, 302, 306, 314, 316, 318, 351.
 Անձեացոց—45.
 Անի—41, 44, 45, 46, 47, 48, 66, 68, 70, 71, 72, 73, 93, 94, 95, 96, 97, 98, 109, 121, 122, 271, 272, 273, 274, 275, 277, 278, 304, 305, 307, 308, 312, 313, 317, 318, 319, 320, 323, 325, 327, 328, 329, 356, 357, 359, 359, 360, 363, 364, 365, 366, 367, 368, 373, 375, 376, 378, 381.
 Անի գյուղ—365.
 Անիի Բագրատունյաց թագավորութուն
 —73.
 Անյեռ—376, 377.
 Անտիոք—46, 142.
 Աշխարհ, Հոնադ—29.
 Աշկալա—146.
 Աշնակ—109.
 Աշնակ, Վահանի որդի—259.
 Աշոտ պատրիկ, Հայաստանի իշխան—24.
 Աշոտ պատրիկ, Տարոնի իշխան—46.
 Աշոտ պատրիկ Բագրատունի—27, 214.
 Աշոտ Բագրատունի, Սահակի որդի—80, 221.
 Աշոտ I Բագրատունի, սկզբում Վրացի
 իշխան, իսկ ապա թագավոր—34, 35, 38, 39, 40, 63, 64, 104, 110, 114, 234, 301, 302.
 Աշոտ Մսակեր—35, 60, 61, 226, 227, 228, 312.
 Աշոտ, որդի Ատրնեբեհի—35.
 Աշոտ II Նրկաթ—43, 44, 45, 313, 357.
 Աշոտ սպարապետ, Աշոտ Նրկաթի հորեղ-
 բոր որդի—44.

Աշոտ Դերենիկ, Թագավոր Վասպուրականի—45.
 Աշոտ III Ողորմած—45, 46, 94, 273, 274, 312, 313, 356, 357, 359, 377.
 Աշոտ, Գագիկ I Թագավորի որդի—48, 273.
 Աշոտ Արծրունի—36, 62, 229.
 Աշոտ—259.
 Աշոտ, որդի Գորգեի—118.
 Աշոցք—35, 39, 61, 226.
 Ապահոմիք—154, 155, 156, 371.
 Ապլ զարիպ—109.
 Ապուսահլ, Գագիկ I-ի քեռորդի—48.
 Առան—297, 311, 316.
 Աշարիա—164.
 Աշի-լալ գետ—167.
 Առաջին Հայք—13.
 Առաջավոր Ասիա—318, 364, 366.
 Առոն (Առան-Ահարոն) մագիստրոս—273, 274, 275.
 Առուճ (Արուճ)—30, 94, 95, 265, 266, 267, 354.
 Ասի-ավան—157.
 Ասիա—313, 358.
 Ասիացիներ—207.
 Ասկուլդ—299.
 Ասողիկ Ստեփանոս Տարոնեցի, պատմիչ—16, 24, 26, 28, 38, 40, 45, 46, 47, 48, 67, 103, 154, 177, 182, 183, 185, 186, 189, 195, 242, 243, 244, 245, 303, 353, 354, 355, 381, 382.
 Աստվածածնա վանք—110, 111, 114, 118, 377.
 Աստականի ծովածոց—143.
 Աստվածատուր—280.
 Աստվածատրյան Թ.—100.
 Ասորեստան—21, 165, 167, 171, 178, 179, 182.
 Ասորիներ—127, 183, 186, 314, 357, 358.
 Ասորիք (Սիրիա)—22, 46, 62, 142, 149, 157, 210, 226, 230, 356, 371, 384.
 Ասորիքի արարներ—208.
 Ասպետ—200.
 Ավագ, ամիրսպասալար—241.
 Ավան—266, 267, 354.

Ավարներ—161.
 Ավարայրի դաշտ—10, 51.
 Ավգերյան Հար.—84, 235, 246, 247, 249, 250, 251.
 Ավդալբեգյան Թ.—81, 263, 279, 280, 281, 282, 285, 286.
 Ավդուլա (Աւդուլա)—118.
 Ավետյաց—266.
 Ատրենբսեճ Բագրատունի—35, 259.
 Ատրենբսեճ Սյունեցի—253.
 Ատրվշնասպ, մարզպան Հայաստանի—11, 90.
 Ատրորմիզդ, մարզպան Հայաստանի—10.
 Ատրպատական—21, 22, 23, 31, 33, 44, 47, 91, 143, 146, 148, 149, 165, 171, 172, 180, 187, 190, 191, 193, 194, 196, 199, 200, 201, 208, 372, 373.
 Արարիա—84, 182, 217.
 Արարներ—19, 20, 22, 23, 24, 25, 26, 27, 29, 31, 54, 55, 58, 63, 174, 177, 178, 180, 184, 185, 187, 190, 191, 192, 198, 200, 209, 211, 214, 220, 226, 229, 234, 289, 290, 291, 295, 296, 297, 298, 300, 301, 302, 306, 332, 335.
 Արարական ցեղեր—223, 226.
 Արարական շախարհակալութիւն—18, 19, 106, 109, 289.
 Արարական խալիֆայութիւն—54, 78, 86, 112, 115, 173, 214, 226, 289, 290, 291, 294, 300, 302, 303, 320, 325, 328, 351, 355, 369, 370, 372.
 Արագածոտն—39.
 Արարատ լեռ—370.
 Արարատյան դաշտավայր—55, 316, 326, 374.
 Արամնա—329.
 Արածանի գետ—30, 154, 155, 211, 222, 291.
 Արաքս (Երախս) գետ—33, 36, 37, 38, 69, 83, 144, 146, 150, 154, 165, 166, 188, 295, 297, 320, 335, 341, 342.
 Արդաբիլ—149, 150, 311, 330, 331, 338, 340, 341, 342, 347.
 Արգան—227, 330.

- Զբղն (Արզան) քաղաք—176, 223, 229, 317, 331.
 Արենադբեր—118.
 Արիստակես Լաստիվերտցի—66, 304, 307, 308, 310, 314, 318, 319, 357, 364, 377, 379, 381, 385.
 Արիբ—9.
 Արծափ բերդ—193, 194, 195, 196, 197, 199, 199, 200, 201.
 Արծն—60, 66, 70, 71, 304, 307, 308, 312, 313, 314, 317, 318, 319, 329, 330, 356, 357, 358, 366, 377, 379, 380.
 Արծրունյաց Բագավորություն—44, 45, 72.
 Արծրունյաց նախարարներ—220.
 Արծրունիներ—34, 40, 60, 228, 317, 363.
 Արզում խան—265, 266.
 Արձնի գյուղ—222, 223, 226.
 Արճեղ—30, 39, 58, 155, 157, 180, 220, 221, 222, 223, 295, 317, 358.
 Արման Բագավորություն—311.
 Արմենիա—82.
 Արմեններ—233.
 Արյաց աշխարհ—9, 12.
 Արտավազ զորավար—31.
 Արտավազ Մամիկոնյան—29, 57, 219, 220.
 Արշակունյաց Բագավորություն—9, 76, 82, 87, 89, 90, 99, 101, 108, 204, 255, 261, 263, 384.
 Արշակունիներ—14, 53, 87, 100, 127.
 Արշարունիք—35, 39, 44, 60, 226, 312.
 Արշակ III, Հայոց Բագավոր—14, 53.
 Արտավան Արշակունի—14, 53.
 Արտանուշ—227, 313, 314, 330, 355, 357, 358.
 Արտանուշի Բագրատունիներ—227, 314.
 Արտաշատ (Կիրմիդ, ալ-քիրմիդ)—80, 91, 165, 166, 180, 326, 329, 350, 375.
 Արտահան քաղաք—35.
 Արշոյառիճի սբ. Գրիգոր եկեղեցի—94.
 Արազ գավառ—154, 166, 188.
 Արտաշիր I, պարսից Բագավոր—100.
 Արտագերս բերդ—220.
 Արսիդիտես Աթենացի—52.
 Արցախ—17.
 Արենիք—48, 52, 69, 72, 192, 305, 320, 355, 370, 381.
 Արենյան Անգրկովկաս—226, 334.
 Արևմտյան Եվրոպա—69, 70, 87, 121, 122, 124, 207, 253, 313, 320, 370, 376, 380, 381, 382, 386.
 Արևմուտք—54, 72.
 Աֆրիկա—201, 317.
 Աֆշին (Ափշին), արաբ զորավար—33.
 Աֆշին Սաճյան, Ադրբեջանի ամիրա—42, 64, 305.
 Բաբեկ-«Մահդի»—33, 61, 208, 226, 327.
 Բաբեկ Սյունի—11.
 Բաբ-Կելդար—312.
 Բաբ-Բիֆլիս—312.
 Բաբ-Անի—312.
 Բաբգեն, Փիլիպպի որդի—253.
 Բաբ-ուլ-Աբվար (Դերբենտ)—338, 343, 344.
 Բագարան—39, 226, 312, 354.
 Բագավան (Ուլ Քիլիսա)—154, 329.
 Բագարատ Բագրատունի—228.
 Բագար, Հայաստանի կառավարիչ—216.
 Բագրատ մագիստրոս—122.
 Բագրատունի Բագրատ, Վրդխանաց իշխան, Աշոտ Մսակերի որդի—35, 36, 62, 228, 229, 230.
 Բագրատունիներ—33, 34, 35, 44, 60, 64, 65, 73, 206, 223, 225, 226, 227, 228, 234, 294, 304, 305, 306, 312, 359, 364, 365, 368.
 Բագրատունյաց Բագավորություն — 34, 43, 50, 55, 56, 67, 69, 102, 104, 106, 109, 110, 119, 120, 122, 209, 225, 264, 289, 290, 299, 300, 302, 303, 310, 317, 322, 323, 328, 329, 345, 346, 350, 353, 354, 355, 359, 363, 366, 369, 370, 379.
 Բագրատունիների Կարաբի ճյուղ—358.
 Բագրատունյաց տոհմ—227.
 Բագրատունյաց վրացական ճյուղ—314.
 Բագրևանդ—27, 29, 30, 39, 44, 57, 154, 220, 221, 222, 223.

Բաղարադա—176.
 Բալխար—149, 340, 341.
 Բալու—371.
 Բակուրիանի—165, 343.
 Բահադին—118.
 Բազադի վանք—253.
 Բաղդադ—56, 63, 170, 209, 216, 227, 229, 290, 298, 299, 315, 320, 326, 370, 374.
 Բողեշ (Բիթլիս)—176, 317, 330, 331, 332.
 Բաղնիշներ—253.
 Բալաքան (Փայտակարան)—33, 149, 340, 341, 312, 343.
 Բան Բանն Մարզ—171.
 Բաղունայիս—180.
 Բասեն—21, 174, 184, 221, 222.
 Բասեն-սու—146.
 Բասմաշյան Կ.—175, 193.
 Բասրա—347.
 Բաստամյան Վ.—82, 121, 270, 277, 280, 281.
 Բատման-սու—159.
 Բատնա-Սառուզ—191, 192, 193.
 Բարդա—171.
 Բարխուդարյան Մ.—152, 336.
 Բարմակ իրն-Արդուլա—327.
 Բարսեղ I—39, 63, 64, 233, 234, 300, 301, 302.
 Բարսեղ II—47, 48.
 Բարտուղ Վ.—96, 171, 207, 314, 318, 325, 364, 372.
 Բելասաշյան անապատ—341.
 Բելազորի—24, 176 177, 180, 183, 184, 185, 240, 292, 296, 297, 321, 326, 327, 328, 375.
 Բեկլալ և Բերդարիս պալատներ—163, 170.
 Բերդենդ (Բարդեշ)—149, 338, 340, 341, 343, 345.
 Բերդկաններն զյուզ—257.
 Բերդաա (Պարթավ)—292, 296, 297, 299, 311, 314, 315, 316, 321, 326, 334, 335, 336, 338, 340, 343, 344, 345, 354.
 Բերդկունք—346, 347, 348, 354.

Բերկրի գյուղ—21, 39, 220, 317, 330, 331, 332.
 Բեկկեր—336.
 Բեռլին—330.
 Բզնունիք—21, 163, 164, 178, 182, 187.
 Բիշնադի լեռանց—153.
 Բյուզանդիա—12, 13, 14, 15, 16, 18, 20, 22, 23, 24, 28, 34, 35, 39, 44, 45, 47, 49, 52, 53, 54, 56, 58, 59, 60, 63, 64, 65, 69, 72, 73, 75, 91, 92, 119, 120, 142, 170, 210, 211, 214, 220, 221, 223, 224, 225, 226, 233, 251, 290, 291, 294, 298, 300, 301, 302, 305, 325, 330, 355, 372.
 Բյուզանդական կայսրություն—12, 16, 17, 34, 39, 45, 46, 48, 72, 80, 99, 126, 161, 173, 210, 223, 233, 236, 238, 285, 286, 300, 309, 347, 355.
 Բյուզանդական Հայաստան—13, 53, 142, 200.
 Բյուզանդական իշխանություն—271.
 Բյուզանդացիներ—15, 24, 25, 46, 73, 148, 150, 200, 291, 296, 300.
 Բոգոմիլներ—309.
 Բողաշեն—377.
 Բոսպորյաններ—15.
 Բոսփոր (Բոսֆոր)—18, 142.
 Բոսաքենդ—159.
 Բորժոմ—165, 348.
 Բորջոկ գյուղ—155.
 Բրյուխեր Կ.—336.
 Բրյուսով Վ.—67.
 Բրոսս Մ.—257, 258, 260, 282, 283, 284, 287.
 Բրտնիք—377.
 Բուզու ձոր—188.
 Բուլղարիա—72, 309, 384.
 Բուլղարներ—31, 47, 49, 298.
 Բուլա—37, 38, 63, 233, 297.
 Բուլա, արաբ զորավար—179.
 Բուրգոնական իրավունք—132.
 Գագիկ I Բագրատունի—47, 48, 109, 117, 265, 273, 377.
 Գագիկ Արծրունի—40, 43, 44, 45, 64, 305, 360, 361.

Գագիկ, Գրիգորի որդի—259.
 Գարովանցիներ—224.
 Գաղտառիճ—146, 329.
 Գալշավան—144.
 Գանգրա—346.
 Գանձակ Ատրպատականի—143, 144, 151, 152, 170, 171, 296, 297, 316, 339, 340.
 Գանձակ (Շահաստան)—48, 145, 146, 148, 149, 297, 347.
 Գարդման—151.
 Գարդաբան գավառ—338.
 Գառնի—188, 192, 354.
 Գարոս լեռնաշղթա—148.
 Գեղեր—39, 233.
 Գեղարքունիք—336, 337, 348.
 Գեղմարդ—276.
 Գետամեջ—377.
 Գետավանաց ծով—377.
 Գեղրանդ—144.
 Գթլմուշ, սելջուկյան զորավար—71, 308.
 Գիրոն—143.
 Գյուտերբոկ—75, 91, 92.
 Գեոմի—35, 90.
 Գոգ և Մագոգ—20.
 Գողթն—188.
 Գոմեցոց ձոր—118.
 Գոնֆարիս—14.
 Գոտուլյար—349.
 Գորիս—153.
 Գրիգոր Մամիկոնյան, հայոց իշխան—27, 214.
 Գրիգոր, իշխան հայոց—23.
 Գրիգորիս, հայ զորավար—31, 220.
 Գրիգոր մագիստրոս Պահլավունի—67, 109.
 Գրիգոր Նարեկացի—68, 105, 385.
 Սբ. Գրիգոր եկեղեցի—94.
 Գրիգոր Լուսավորիչ—109, 111, 112.
 Գրիգոր, որդի Մարծպանի—118.
 Գրիգոր, որդի Լապաստակի—122.
 Գրիգոր, Սյունաց տեր—259.
 Գրիգոր, Սահակի որդի—259.
 Գրիգոր—261.
 Գրիգոր—258.
 Գրիգորաշեն—118.

Գուգարք—16, 42, 44, 322, 371.
 Գուրգեն, Սմբատ II-ի եղբայրը, Կյուրիկյան թագավորության հիմնադիր—47, 48, 49.
 Գուրգեն, եղբայրը Վասպուրականի Սենեքերիմ թագավորի—48.
 Գուրգան—299.
 Գուրկու Կրյաժին—294, 304, 356.
 Գևորգ Կիպրացի—164.
 Գևորգ Պիսիդա—148.
 Դաղբաշյան Ա.—300.
 Դամասկոս—24, 25, 56, 142, 199, 290, 298, 346.
 Դանիել մարգարե—20.
 Դ'Անվիլ—148.
 Դավթակ քրեպիսկոպոս—71, 308, 379.
 Դավիթ, Սյունաց եպիսկոպոս—253, 257.
 Դավիթ Կյուրոպաղատ—47.
 Դավիթ Անհողին, Կյուրիկյան թագավոր—48.
 Դավիթ և Վահագ Եփաթ—118.
 Դավիթ, որդի վրաց Դեմետրե թագավորի—266.
 Դավիթ Վերաշինող—282.
 Դավմիս—334, 335, 336.
 Դաստակերտ, Խոսրով թագավորի աթոռանիստ—168, 170.
 Դաբա—15, 16, 142, 176, 180.
 Դարման—341.
 Դարունը—204.
 Դերեհտ—348.
 Դեկուրդեմանշ—349, 350.
 Դեհարկանի շրջան—167, 330, 331, 332.
 Դեղձանագետ—376, 377.
 Դեմետրե թագավոր—226, 266.
 Դեյուսն—341.
 Դենշապուհ, պարսիկ պաշտոնյա, աշխարհագիր—10, 75, 77, 80, 84, 86, 88, 89, 106.
 Դենշապուհ, պարսիկ—16.
 Դերբենտ—162, 338.
 Դերենիկ Արծրունի—40.
 Դիալա գետ—170.
 Դիդանաս—160.
 Դիլշ—248.

Դիլիրան—297.

Դիոկլետիանոս, հռոմեական կայսր—78.

Դյոնիսիոս Տելմահարցի, սիրիական պատմիչ—133, 186, 187, 191, 198, 211, 290, 291.

Դմանիս—48.

Դյակոնով Մ.—103, 104.

Դյուլորյե Ե.—175, 186, 193, 195, 198, 243, 244.

Դյուտական գյուղ—150.

Դենսյուր—298.

Դոմիցիա Կորոպուն—166.

Դոմեվանք—159.

Դոն—298.

Դոբն Մ.—257.

Դսեղ—118.

Դվին (Դաբիլ)—15, 16, 21, 22, 24, 25, 29, 31, 33, 37, 39, 41, 44, 45, 47, 54, 57, 58, 60, 70, 80, 91, 92, 98, 103, 108, 110, 111, 112, 113, 114, 115, 118, 119, 124, 143, 144, 145, 146, 178, 179, 180, 181, 182, 183, 184, 185, 186, 187, 189, 190, 193, 200, 219, 220, 225, 226, 255, 295, 297, 301, 310, 311, 312, 317, 319, 323, 324, 327, 328, 329, 332, 333, 334, 335, 336, 337, 338, 346, 347, 348, 349, 354, 356, 358, 366, 372, 375.

Եբրայեցիներ—250, 298.

Եգերացիների երկիր (Կուլսիգա, Լազիկա)—29, 161, 163, 164.

Եգերացիներ—42, 44, 144, 220.

Եգիպտոս—44, 142.

Եգեսիա—33, 142, 347.

Եդիտ խալիֆ—103.

Եդիտ իբն-Ուսայդ, Հայաստանի կառավարիչ, ոստիկան—28, 216, 217, 292, 296, 297.

Եդյանց—189, 218, 219, 243, 371.

Եղնիկ Կողբացի—52.

Եզր կաթողիկոս—179, 182, 183, 186.

Եթովպացիներ—15.

Ելենովկա—348.

Ելիաս Մծբնեցի—183, 185.

Եկատերինենֆիլդ—348.

Եղեգական—159.

Եղիաղաբյան Ս.—93, 95, 96, 98, 117, 267, 268, 269, 272, 273, 274.

Եղիշե—9, 10, 50, 74, 75, 76, 78, 80, 81, 83, 85, 86, 87, 88, 93, 99, 101, 102, 106, 107, 109, 248.

Եվլախ—152, 153.

Եվկլիդես—67.

Եվսեբիոս Կեսարացի—52, 153.

Եվտիբիոս պատրիարք—144.

Եվրոպա—70, 97, 319, 326, 375.

Երազագվորս—Շիրակավան—226, 313, 354.

Երզնկա—164, 332.

Երևուրդ—273, 276.

Երկրորդ Հայք—13.

Երվանդաշատ—329.

Երրորդ Հայք—13.

Երուսաղեմ—46, 142, 148, 346, 347.

Նրևան—39, 123, 194, 297, 309, 348, 354.

Ջաբ փորր, դետ—170.

Ջաբ յեծ, դետ—168.

Ջագրոս (Ջարասպ) լեռնաշղթա—165, 167, 170, 171.

Ջալեման—116.

Ջավազան իշխան—176.

Ջարեհավան—329.

Ջարևանդ դավառ—165, 167.

Ջաուտիս—336, 337.

Ջաբարիա կաթողիկոս—37, 42.

Ջաբարիա ամիրսպասալար—94.

Ջաբարիա, թոռն Ավագի—118.

Ջենոն կայսր—128.

Ջիեիլ հրամանատար—161, 162.

Ջոդ—336, 348.

Ջոմիկ—156, 157.

Ջոյե կայսրուհի—271.

Ջոնիկարտ—159.

Ջվարթնոց—67, 327, 367.

Էկրատանա—329.

Էմին, Հարուն ալ-Ռաշիդի որդի—61, 226.

Էմին Մ.—95, 96, 100, 117.

Էվքսինյան Պոնտոս—163.

Էշմիածին—67, 280, 327, 345.

էրզրում—301, 332.

էրմենիա—298.

Թալե—266.

Թալին գյուղաքաղաք—354.

Թախտ-ի-Սուլեյման—148.

Թողթե—266.

Թալրիզ—146, 148, 166, 167, 324, 330, 331, 332.

Թարթառ, գետ—150, 297, 335, 336.

Թալիոր լեռ—346.

Թեոդոս I, Հռոմեական կայսր—14, 82.

Թեոդորոս Ռշտունի—22, 23, 55, 177, 179, 181, 182, 187, 188, 191, 192, 193, 196, 200, 201, 202, 203, 204, 205.

Թեոդորոս Վահանունի—178, 179, 203.

Թեոդորոս, Հայ զորավար հռոմաց—196, 201, 202, 203.

Թեոդորոս, Հերակլ կայսեր եղբայր—161.

Թեոդորիկ—39, 234.

Թեոփանես—23.

Թեոֆան—143, 148, 149, 151, 153, 156, 157, 158, 160, 161, 162, 167, 170, 171, 185, 192, 200.

Թիֆլիս—33, 162, 163, 165, 296, 297, 299, 338, 339, 340, 348, 349.

Թովմա Արծրունի—36, 37, 38, 40, 41, 67, 70, 90, 103, 113, 143, 144, 146, 148, 228, 229, 230, 231, 232, 233, 305, 306, 319, 360, 361, 362, 363, 364, 366.

Թոնդրական աղանգ—208, 308, 309, 383, 384, 385.

Թորամանյան Թ.—318, 320, 363, 365.

Թրակիա—17, 18.

Թումա, իշխան Կոստանդնի—201.

Թուրքեր—63, 163, 217, 218.

Թուրքական ցեղեր—308.

Թուրքիա—251.

Թեարմայս—148.

Ժուզե Պ.—296.

Շուկովսկի Վ.—116.

Իբերիա—243, 314.

Իբն ալ-Աթիր—24, 176, 177, 181, 185.

Իրն Հաուկալ—149, 306, 310, 311, 315, 321, 322, 323, 324, 326, 330, 332, 334, 335, 337, 338, 340, 343, 371, 372.

Իրն Հալդուն—306, 321, 325, 370.

Իրն Խորդադրեյ—239, 299, 306, 331, 333, 334, 335, 338, 341.

Իբրահիմ (Աբրահիմ), սելջուկյան զորավար—71, 308, 379.

Իյազ—176.

Իոհաննես պրեֆեկտ—128.

Իպպոլիտ Հռոմեացի—59.

Իսգենյ, պարսիկ ազնվական—168.

Իսկի-Քաղաղ—170.

Իսմայել (արաբներ)—22, 27, 32, 183, 189, 194, 199.

Իսմայիլ, ամիրա Թիֆլիսի—33.

Իսմայելյան թագավորություն—21.

Իսմայելացիներ—35, 189, 194, 199.

Իսպահան—315.

Իսպանիա—58, 294.

Իսսոս—143.

Իսրայել—107, 182, 295.

Իվանե Բաթաբեկ—96, 241, 242.

Իտիլ—298, 299.

Իրան—20.

Իրանական Արեւելք—54.

Իրաք—315, 321, 322, 370, 371.

Լազիստան, Լազերի երկիր (Լազիկա)—15, 42, 161, 163, 164.

Լազեր—15, 153, 162, 163.

Լանգլուս Վ.—242.

Լենինական (Ալեքսանդրապոլ)—348.

Լիկ-Կեկիտ գետ—145.

Լոռան—20, 34, 35, 39, 105, 200, 234, 296, 297, 301, 313, 314, 320, 321, 322, 323, 324, 326, 353, 370, 371.

Լոռիի Բագրատունյաց թագավորություն—359.

Լևոն Գ.—242.

Խաչանների դինաստիա—298.

Խազարիա—299.

Խազարներ—23, 56, 60, 161, 162, 164, 165, 167, 210, 225, 290, 297, 298, 299.

հաղորդ—23.

հազմ, արարական ուստիկան Հայաստանի—31.

հալաթյանը Բ.—181.

հալդեր—233.

հալիգ ուստիկան—228.

համլիխ—229.

հան Բարեկ—341.

հանկին—170, 171.

հաչեն—47.

հաչեան Առաւելեան—178.

հարրական—331, 333.

հլաթ—39, 44, 62, 176, 229, 317, 330, 331, 332, 346, 347, 358.

հլոդովիխ—234.

հնայտու մարզ—167.

հնուս—332.

հոճեն—266.

հոյ (հուվել)—146, 154, 166, 330, 331, 332, 333.

հոշակ—96, 242.

հոյ—Տասվիջ մագիստրալ—148.

հոսորովանուշ, հալոց թագուհի—265, 270.

հոսորով I (Անուշիրվան), պարսից թագավոր—14, 15, 16, 77, 80, 81, 83, 88, 89, 91.

հոսորով II Պարվեզ, պարսից թագավոր—18, 142, 144, 146, 148, 151, 161, 165, 174, 175, 202, 238, 244.

հոսորովակերտ—179, 183.

հորասան—217, 315, 322, 371.

հրամ գետ—339.

հրամա բերդ—199.

հրխտո Մ.—329.

հրխտենսեն Ա.—239.

հուլեցիներ—230, 231, 232.

հուժաստան—815.

հունաղ—331.

հունան—338, 339, 340.

հուլթ—35, 37, 230.

հուլշա—341.

հուրամիտներ—61.

հուրրամյան ազանդ—208.

Մաների երկիր (Ջանիկ)—15, 42, 161, 163, 164.

Մաղկաձոր (Մաղկոց ձոր)—46, 312.

Մաղկոտն—48.

Մղուկ—153.

Մումբ կայարան—157.

Կազան—162.

Կազըր խան Կաշգարի—326, 372.

Կաթուկ—376.

Կալա—338.

Կալա իրն Կանգամա (Կարգարան)—338, 339, 340.

Կալակատուս—334, 335, 336, 338.

Կալլինիկոն—91, 98.

Կաղանկատույթ—150, 152, 336.

Կաղզվան—33, 220.

Կամսարականներ—312.

Կայան—47.

Կալակվին—335, 337.

Կապադովկիա—82, 143.

Կապկուհ—23.

Կասպից դուռ—162.

Կասպից ծով—299, 346, 347.

Կավառ I, պարսից թագավոր—12, 13, 88, 171, 175, 208, 238.

Կարաուզով—150, 311, 312, 315, 316, 320, 324, 326, 330, 334, 335, 336, 339, 340, 341, 342, 343, 344, 371.

Կարա-սու—342, 343.

Կարաքենդ—154.

Կարրի գետ—377.

Կարին (Բեռդոսուպուլիս, Կալիկալա)—13, 22, 27, 30, 42, 57, 58, 66, 143, 144, 145, 146, 158, 164, 180, 184, 220, 221, 295, 296, 304, 313, 314, 330, 346, 347, 355, 358.

Կարին-էրզրում—313.

Կարնո շրջան—29, 158.

Կարս—41, 45, 47, 48, 66, 146, 304, 305, 312, 313, 317, 329, 330, 356, 357, 358, 359, 381.

Կարսո Յ.—26, 87, 97, 98, 241, 275, 279, 328.

Կարսի Բագրատունյաց թագավորութիւն—45, 72.

- Կատրանիդն թագուհի—265, 274.
 Կաֆարտութ—176.
 Կեդար—43.
 Կեդրենոս Գ.—70, 313, 319, 357, 358, 366.
 Կելիշին լեռնացի—167.
 Կեսարիա—142, 146.
 Կթանոց—373.
 Կթիճ բերդ—13.
 Կիլիկիա—73, 142, 143, 157, 242, 300.
 Կիլիկիացիներ—204.
 Կիլտիզ—159.
 Կիլ-վեյ—335.
 Կիլկույ (Կիլ-կույ, Կիլկուն, Կիլ-կուրե)—334, 337.
 Կիկլիան—265.
 Կիսաջան—335.
 Կիսալ (Կասալ) քաղաք—296, 297.
 Կիրակոս Գանձակեցի—180.
 Կիւյան Ռուսիա—299.
 Կլյուչսկի—298.
 Կղարշք—35, 42, 60, 226, 227.
 Կյուրիկյան (Կորիկյան) թագավորութուն—45, 47.
 Կոգովիտ (Դոգովիտ)—21, 48, 55, 165, 166, 178, 179, 182, 187, 188, 193, 195.
 Կոդամա—239, 334, 335.
 Կոթա վանք—110, 114, 115.
 Կոթաքար—377.
 Կոթուր—164, 332.
 Կոլոնիա—346.
 Կողբ—323, 347, 348, 354, 371.
 Կոմմադեն—220.
 Կոստաս-Կոստանդին III, Կայսր Բյուզանդիայի—23, 23, 185, 186, 187, 190, 192, 194, 195, 196, 197, 199, 201, 203, 204, 205.
 Կոստանդին V, Բյուզանդիայի Կայսր—29.
 Կոստանդին VII, Բյուզանդիայի Կայսր—44.
 Կոստանդին X Դուկաս—94, 95, 98, 117, 122, 283.
 Կոստանդին Միրանաժին—153, 314, 358.
 Կստանդին, Հերակլի թոռ, Կոստանդիանի որդի—179, 181, 182, 183.
 Կոստանյանց Կ.—94, 241, 265, 307, 313, 328, 368.
 Կոստանդնուպոլիս—13, 14, 143, 144, 161, 174, 192, 196, 199, 200, 202, 205, 346, 347.
 Կովկաս—335, 336, 369.
 Կովկասյան երկրներ—105.
 Կովկասյան ժողովուրդ—375.
 Կոռայք—202.
 Կոտա գյուղ—347, 348, 349.
 Կոտելիա—349.
 Կորճևք—16.
 Կորյուն—52, 90.
 Կ. Պոլիս—233.
 Կրեմեր Ադ.—84, 239, 321, 324, 325, 370, 372.
 Կրտին, Մխիթար իպատոսի որդի—122.
 Կուդամա—338.
 Եկուսերեռ-ի շուկա—315.
 Կուկլակ—242.
 Կուլակովսկի—158, 161, 162, 163, 167, 171, 196, 202, 248.
 Կումայրի (Լենինական)—29, 219.
 Կումուս—341.
 Կուր գետ—36, 37, 42, 69, 83, 163, 165, 227, 296, 297, 298, 314, 320, 339, 341, 342, 343, 345, 370.
 Կուր-Սերե—331.
 Կուրտիկ Մամիկոնյան—39.
 Հաբիր իբն-Մասլամա ֆիհրի—22, 180, 181, 184, 185, 187, 211, 290, 321, 327.
 Հաբեթական թնիկներ—375.
 Հագարացիների աշխարհ—32, 204, 223.
 Հազարբեկ—276.
 Հազկերտ II, պարսից թագավոր—9, 50, 73, 74, 75, 76, 77, 81, 83, 85, 86, 90, 113, 190, 245.
 Հազր գյուղ—27.
 Հաթերք—336.
 Հալիճոր—276.
 Հաղպատ—275, 276.
 Համադան—33, 148, 227.

Համազասպ—276.
 Համամ Ամատունի—32.
 Համբարյան Հ.—184, 186, 189, 190,
 193, 196, 197, 203.
 Համզե—265.
 Հայանք գավառ—100.
 Հայդ—300, 316, 317, 326.
 Հապոգյան—203.
 Հաշիշ—20, 25.
 Հառիճա գետ—117, 118.
 Հասան-Ղալա—146.
 Հասան, Շապուհի որդի—259.
 Հավիկ—276.
 Հատիմ, Հայաստանի կառավարիչ—33.
 Հատուխ—336.
 Հարավային նվորպա—58, 294.
 Հարուն ալ-Ռաշիդ (Ահարուն)—31, 32,
 33, 35, 60, 226.
 Հարմոզիկա—165.
 Հարթ—21.
 Հերակլ—91.
 Հերակլ կայսր—6, 91, 141, 142, 143,
 144, 145, 146, 148, 149, 150, 151,
 152, 153, 154, 155, 156, 157, 158,
 160, 161, 162, 163, 164, 165, 166,
 167, 168, 170, 171, 172, 174, 177,
 178, 183, 189, 201, 202, 203, 204.
 Հեր—165.
 Հերթ, աշխարհագիր—26, 213, 214, 292.
 Հեթթաղներ—11, 51.
 Հիշամ (Հեշմ) խալիֆ—25, 26, 56, 103,
 213, 291, 292.
 Հիուննթսանդ—83.
 Հյուբշման—93, 97, 99, 102, 157, 254,
 256, 258, 263, 277, 278.
 Հնդկաստան—58, 294, 313, 326, 358.
 Հոռոմ—18, 22, 373.
 Հոռոմոս—273, 274, 276, 365.
 Հովհան, Ներսեսի որդի—259.
 Հովհաննես Գաբելիճաքի—261.
 Հովհաննես Կուրկուաս, Բյուզանդիայի
 հայ զորավար—45, 301.
 Հովհաննես Դրասխանակերտցի կաթողի-
 կոս—24, 32, 33, 37, 40, 41, 42, 43,
 67, 71, 103, 104, 105, 112, 116,

204, 223, 224, 261, 304, 305, 308,
 325, 327, 352, 353, 354, 355, 367,
 368, 372, 383.
 Հովհաննես Չմշկիկ, կայսր Բյուզանդիա-
 յի—46.
 Հովհաննես Կոզեռն—309.
 Հովհաննես-Սմբատ, Գագիկ I թագավորի
 որդի—48, 109.
 Հովհան Խուժեցի—36, 62, 231.
 Հովհան Մամիկոնյան, պատմագիր—21,
 101, 174, 175, 178, 187, 203, 204,
 248.
 Հովհան Մանդակունի—89.
 Հովիկ եկեղեցի—365.
 Հոնեռ—12, 15.
 Հոռմ—20, 31, 125, 191, 346, 347.
 Հոռմեացիներ—15, 127, 139, 156.
 Հոռմեական կայսրություն—78, 82, 98,
 126, 132.
 Հրատ Մեծ (Վշնասպ)—144.
 Հրահատ, Սյունաց իշխան—253, 257,
 259.
 Հրեաներ—18, 19, 298.
 Հրեմոնք գյուղ (Խրեմոնք)—154.
 Հունարակերտ—42, 339, 347.
 Հուռ, որդի խոսրով Շապուհի—259.
 Զադավանք—120.
 Զագիկ, Վահանի որդի—259.
 Զողկերտ—329.
 Զազար Փարպեցի—9, 10, 11, 50, 89,
 90, 136, 364, 374.
 Զազարյան Մ.—176, 184, 189, 203,
 306, 322, 371.
 Զազախ—296.
 Զամարյու—350.
 Զայիր—266.
 Զարարաղ—342.
 Զարարաղ—149.
 Զարանյուղ—348.
 Զարասու—150.
 Զլղ-Ղալա ամրոց—339.
 Զլաճյան Ար.—90, 99, 100, 108, 109,
 110, 111, 115, 118, 225, 279, 282.
 Զեռնդ երեց, պատմիչ—23, 24, 25, 26,

27, 28, 29, 30, 31, 32, 57, 58, 59,
181, 182, 183, 185, 186, 189, 190,
191, 192, 193, 194, 195, 198, 203,
204, 205, 213, 215, 216, 217, 218,
219, 220, 221, 224, 292, 293, 295,
296, 322, 371.

Ղևոնդ երեց, կաթողիկոսի տեղապահ—10.

Ճաներ—15.

Ճինար—117.

Ճորա պահակ—23.

Մազազ դավառ—348.

Մազդակ—208.

Մազդակյաններ—12, 227.

Մազդակյանների ուսմունք—208.

Մալաթիա (Մելիտինե)—13, 45, 158,
300, 301.

Մալխասյանց Ս.—218, 219, 222, 234,
371.

Մակեդոնիա—47, 63, 233.

Մակեդոնական դինաստիա—300.

Մակի հուսա—266.

Մակու—51.

Մահմետ Մահադի—31, 293.

Մահմետ—84, 174, 269.

Մահմեդական ցեղեր—31.

Մահմետ զորավար—25.

Մահմետ Ի. Սադ—180.

Մազմուզ, Ղազնևիտյան սուլթան—325,
372.

Մահ—253, 257.

Մամիկոնյաններ—12, 76, 219, 223.

Մամոն, Հարոն ալ Ռաշիդի որդի—36,
61, 226.

Մալաֆարկին—176, 301, 317, 324, 332.

Մալ—144, 148.

Մանազկերտ—33, 39, 44, 46, 158, 223,
226, 229.

Մանգղեաց խաչ—18.

Մանդակիս—151, 336.

Մանիքեյական աղանդ—208.

Մասլինների ցեղ—292.

Մաստարա—265.

Մասուդի—316, 372.

Մավրիկիոս, կայսր Բյուզանդիայի—17,
18, 142.

Մավրիանոս զորավար—180, 184, 185.

Մատթե երեց—261.

Մատթեոս Ուռհայեցի—71, 303, 317,
319, 379.

Մատիրոպոլ-Ֆարկին, բերդը՝ Կթիճ—13,
158, 159, 160.

Մարանդ—146, 166, 167, 330, 331, 333,
334.

Մարաստան—237, 377.

Մարաց աշխարհ—144, 149.

Մարաշ (Գերմանիկե)—31, 33, 220.

Մարաղա—148, 330, 331, 332, 333.

Մարդաստան—229.

Մարգին ամրոց—176.

Մարկվարտ—148, 189, 196, 203, 225,
334, 336, 337, 338, 339, 348.

Մարսել—345, 346.

Մառ Նիկ.—68, 71, 163, 241, 267, 268,
273, 292, 308, 309, 312, 318, 327,
345, 346, 357, 360, 363, 364, 369,
378, 381.

Մաքենիս—354.

Մաքենոցք վանք—376.

Մեդիա—296.

Մեդացիներ—149.

Մելիտինե—տե՛ս Մալաթիա.

Մելանիդ—331, 332.

Մենանդր—92.

Մետրիս—334, 335, 336.

Միլանդուար—167.

Մինազա—165.

Մինգրելիա—163, 164.

Միմոռսկի—150, 296, 297, 342, 343,
344, 345.

Միշագետք—16, 21, 44, 55, 57, 63, 142,
172, 173, 177, 178, 187, 200, 215,
217, 234, 289, 292, 293, 301, 321,
330.

Միչերիական ծով—59, 294, 356.

Միչին Ասիա—318, 336, 364.

Միրզա Աբդուլլա Գաֆարով—115.

Միքայել VII Դուկաս—283.

Միքայել Ատտալիատես—313, 357, 358.

Միքայիլ Ասորի—16, 28, 57, 177, 181, 183, 185, 217, 293.

Մխարկրժեկի, որդի Շահնշահի, Իվանեի եղբայր—266.

Մխիթար Այրիվանեցի—38.

Մխիթար Կոշ—82, 86, 87, 98, 110, 112, 113, 114, 116, 118, 121, 124, 135, 137, 270, 271, 277, 279, 280, 281, 282, 284, 285, 286, 287, 288.

Մխիթար իսկառու—122.

Մծբին—46, 91, 98, 100, 176, 347.

Մյուլլեր—300, 301.

Մոմզեն Թ.—207.

Մոսուլ—18, 301.

Մովսես Կաղանկատվացի—26, 81, 67, 81, 83, 84, 143, 144, 150, 151, 160, 161, 162, 163, 182, 183, 185, 213, 252, 253, 254, 261, 264, 297, 323, 375.

Մովսես Խորենացի—278, 291, 326, 327, 345, 348, 350, 367, 374, 383.

Մսիս—46.

Մրվան II իբն-Մուհամեդ խալիֆ—214, 215.

Մրկ—117, 120, 265, 266, 267, 268, 269, 270, 276, 354.

Մցխեթ—18, 165.

Մուավիա—23, 81, 199.

Մուսավաթիլ (Ջափր)—36, 87, 88, 89, 63, 228, 229, 230, 233, 297.

Մուհամմեդ իբն-խալիդ—297.

Մուհամմեդ իբն-Մերվան ալ-Հաֆսա—321.

Մուկտադիր խալիֆ—300.

Մուշեղ իշխան—27.

Մուշեղ Մամիկոնյան—29, 30, 57, 58, 205, 220, 222.

Մուշեղ, Կարսի թագավոր, Աբաս I-ի որդի—45, 313, 357.

Մուշ—230, 316.

Մուշեղ, Տիրոցի որդի—259.

Մուսայելյան—93, 107.

Մուսե խալիֆ—31.

Մուսե, ամիրա Արզն քաղաքի—36, 90, 229.

Մուտամիդ խալիֆ—40, 64, 234, 301.

Մուտասիմ-Բիլլախ խալիֆ—36, 290, 297.

Մուրկա, Հերակլ կայսեր ազդական—163.

Ցակուբ, արաբ պատմիչ—24, 87, 60, 181, 185, 190, 209, 225, 272.

Ցակուբովսկի—207, 381.

Ցավչական—267, 276.

Ցակուտ—221, 322, 323, 353, 371.

Տոման—338, 340, 341.

Տուսուֆ Սաճյան, Ադրբեջանի ամիրա—42, 43, 44, 45, 64, 103, 302, 303, 372, 373.

Տուսուֆ (Տուսեփ) ոստիկան, Աբուսեֆի որդի—36, 62, 299, 331.

Տուստինիանոս I, կայսր Բյուզանդիայի—13, 15, 53, 125, 126, 128, 132, 133, 134, 135, 136, 137, 138, 139, 140, 248, 249.

Տուստինոս II, կայսր Բյուզանդիայի—16.

Տուստինիանոս II, կայսր Բյուզանդիայի—16, 23, 24.

Նախնական (Նախնական, Նաշավա)—117, 120, 144, 145, 153, 154, 165, 168, 178, 188, 195, 199, 295, 297, 332, 333, 334, 347, 349.

Նահրավան—170.

Նապոլեոն Ա.—39, 234.

Նասր, ամիրա Նոբսիայի և Մարաշի—83.

Նեհավենդ—190, 193.

Նեոկեսարիա—346.

Ներշապուհ Մամիկոնյան—100, 113, 115, 254, 255.

Ներշապուհ—262.

Ներշիկ—159.

Ներսես Մեծ, կաթողիկոս—21, 177, 178, 187.

Ներսես II, կաթողիկոս—100, 113, 115, 254, 255, 262.

Ներսես III Տայեցի, կաթողիկոս—26, 187, 327, 367, 368.

Ներսես—204.

Ներթին Հայթ—13.

Ներթին Հայաստան—83.

Նըսր, արաբ ոստիկան—45.

Նիկիա—246.
 Նիկիոփորոս—161.
 Նիկոմեդիա—143.
 Նոմֆի գետ—160.
 Նոնվե—165, 168, 247.
 Նյուգեկե—83, 84, 143, 160, 190, 238, 239, 240.
 Նորականք—275, 276.
 Նորեցիք—253.
 Նորման Բելնգ—157, 167.
 Նվարսակ—154, 166.
 Նուրայտին Քոթիթ—94.

 Շարարան (Շավարան)—345.
 Շախաթոնյան—265, 266.
 Շահապիվան—122.
 Շահապիվանի ժողով—254.
 Շահբուլաղ բերդ—152.
 Շահեն, հոսրովի զորավար—142, 151, 152, 153, 161.
 Շահնազարյան Կ.—243.
 Շահնշահ I—94, 241.
 Շահնշահ II—266.
 Շահր-Վարազ (Սարվարզան), հոսրովի զորավար—142, 143, 149, 151, 153, 154, 155, 156, 157, 160, 161.
 Շահրապիվան—151.
 Շահրարան գյուղ—170.
 Շահրիզուր—170, 171.
 Շահրիզուր—170, 171.
 Շամախ—343.
 Շամբին—194.
 Շամշուտե դղյակ—48.
 Շամքոր (Մուքավաքիլիա)—151, 297, 333, 339, 340.
 Շապուհ, պատմադիր—223, 224.
 Շապուհ Ամատունի—32, 178, 224.
 Շապուհ, Աշոտ Մսակերի եղբայր—226.
 Շապուհ Բագրատունի, Աշոտ Թագավորի որդի—377.
 Շավառնահող—377.
 Շարվան—343.
 Շարուր—347.
 Շարլ Դիլ—248.
 Շեմախ—343, 345.
 Շիմշատ—45, 297.

Շիրակական—94, 241, 267, 275.
 Շիրին խաթուն—266.
 Շիրակ—29, 35, 39, 44, 57, 60, 93, 94, 96, 97, 109, 144, 145, 146, 164, 165, 226, 227, 241, 242, 312, 356.
 Շիրակի Բագրատունիներ—355.
 Շեներաքիներ—253, 259.
 Շորապանի—163.
 Շպիգել—84, 106.
 Շուշի—149, 150, 152, 153, 342.

 Ոգոմա—194.
 Ոմիրիտներ—15.
 Ուլբեղլա, արաբ ոստիկան Հայաստանի—31.
 Ոստան—45, 317.
 Որդսպու (Որդսպու)—21, 154, 156, 178, 194.
 Որոտնեցիք—253.

 Չամլյան—43, 175, 183, 196, 197, 204, 205, 260.
 Չերքեզներ—316.
 Չինաստան—58, 294.
 Չորրորդ Հայք—13, 176, 177, 187.

 Պախոմով—236.
 Պաղեստինացիներ—199.
 Պաղեստին—19.
 Պանտոս—156, 157, 161, 298, 330.
 Պավլիկյան աղանդ—208, 383, 384.
 Պավլիկյաններ—309.
 Պատկանյան Ք.—91, 235, 237, 242, 243, 245, 254, 297.
 Պատրանսավան—159.
 Պարթավ—33, 60, 150, 151, 225, 226, 297, 299, 346, 347, 348, 366, 374.
 Պարսկաստան—9, 11, 12, 13, 15, 16, 18, 44, 51, 52, 54, 75, 83, 85, 91, 113, 141, 142, 143, 161, 165, 167, 171, 188, 190, 208, 244, 313, 315, 318, 358, 364, 369.
 Պարսիկներ—20, 80, 142, 143, 149, 151, 156, 162, 168, 190.
 Պարսիկ աղանդավորներ—33.
 Պարսկական Թագավորություն—83.

Պարսկական Հայաստան—114, 128, 146,
 151, 152, 156, 190, 193, 200, 201.
 Պարսկական Ադրբեջան—149, 150, 330.
 Պարսք—166.
 Պարսից ծոց—347.
 Պենթապոլիս—347.
 Պետրոս կաթողիկոս—109.
 Պերոզ I, պարսից թագավոր—77.
 Պերոզ II, պարսից թագավոր—11, 119,
 238.
 Պերն—239.
 Պիլա—143.
 Պիհոնացիներ—380.
 Պլինիոս—170, 325, 374.
 Պղատոն—67.
 Պոլիս—233.
 Պոդոս—264.
 Պոմպեոս—165, 166.
 Պոնտական Տավրոս—59, 294, 356.
 Պոնտոս—143, 145, 160.
 Պոռոկոպ, բյուզանդական զորավար—189,
 191, 192, 193, 199, 200, 204.
 Պոռոկոպիոս Կեսարացի, պատմիչ—14, 53,
 91, 92, 126, 128.
 Պրոպոնդիտա—143.
 Պտինգերյան քարտեզ—145, 146, 154,
 157, 159, 165, 166, 167.
 Ջարալ—296.
 Ջաղիր—321, 322.
 Ջահալ (Շահալ)—33, 38.
 Ջանդա—338.
 Ջասար-Սամուռ (աս-Սամուռ)—343, 344.
 Ջավախք—21, 174, 187.
 Ջեբուխան, խաղաղների առաջնորդ—161,
 162.
 Ջեկեսուլ-չայ—171.
 Ջվանշիր (Ջուանշիր), Աղվանքի իշխան—
 81.
 Ջվանշիր, վրաց պատմիչ—163, 169.
 Ջուղա—188.
 Ջեանշիր, Թեոդորոսի որդի—259.
 Ռավլինսոն—148, 168, 170, 171.
 Ռաբբա—176.
 Ռեյ—396, 315, 321, 367

Ռյուրիկ—399.
 Ռշտունիք—16, 40, 45, 55.
 Ռոմիլո Ն.—271.
 Ռոմիլ Վահան (Ռախադդ), պարսից զո-
 րավար—165, 168.
 Ռոմանոս Լեկապե—300.
 Ռուրիկյան թագավորություն—87, 97.
 Ռում (Բյուզանդիա)—399, 311.
 Ռուսաստան—103, 207, 271, 286, 299.
 Ռուսներ—119, 299.
 Ռուսս, Խոսրովի պալատ—168.
 Ռեանգուզ—167.

Սաբիրների երկիր—154.
 Սալման Ի. Ռաբիա Բահլի—180, 181,
 297.
 Սալմաստ—167, 330, 331, 332.
 Սակաշեն—154.
 Սահակ Բագրատունի—29.
 Սահակ Բագրատունի—11, 30, 222.
 Սահակ—259.
 Սահակ կաթողիկոս—108, 136.
 Սահակ—82.
 Սահակ, Արշարուճյաց եպիսկոպոս—117.
 Սահակ Մամիկոնյան—17.
 Սահակ, Վասակի որդի—259.
 Սահմատին Սենոպ Ավյաց—265, 266,
 267.
 Սահլ, Շաքիի իշխան—227.
 Սահա—305.
 Սահյան ամիրայություն—35, 42, 64.
 Սամադավլե-Դադիան—282.
 Սամարա—36, 37, 38, 63, 230, 233.
 Սամոսատ—160, 301, 333.
 Սամուել Անեցի—26, 180, 183, 184, 212,
 291.
 Սամուել Մամիկոնյան—222.
 Սառնաքար—253, 257.
 Սասանյան Պարսկաստան—9, 12, 18, 19,
 50, 51, 54, 75, 76, 77, 78, 79, 82,
 83, 84, 85, 87, 92, 105, 106, 109,
 109, 111, 119, 149, 151, 161, 204,
 237, 238, 239, 240, 286, 369.
 Սասանյան թագավորություն—20, 45,
 79, 86, 90, 115, 170.
 Սասանյաններ—59, 64, 87, 310.

Վաստեղի Դավթի—309.
 Մասուն—35, 36, 231, 232, 209.
 Մասունցիներ—37, 63, 231, 232.
 Մատաղ—158, 229.
 Մառիկ—118.
 Սարա գետ—160.
 Մարգիս, Արտավազդի որդի—122.
 Մարգիս Միլինց—94.
 Մարիդամիշ—145, 146, 220.
 Մարմատացիներ—46.
 Մաֆֆի Ի. Մուսթթա Սուլամ—176.
 Սերենոս—17, 20, 21, 22, 23, 59, 91, 103, 143, 144, 145, 146, 149, 151, 153, 155, 156, 165, 167, 168, 178, 183, 184, 185, 186, 187, 190, 191, 192, 193, 194, 195, 196, 197, 198, 199, 200, 201, 202, 203, 204, 205, 206, 235, 237, 242, 243, 244, 245, 248.
 Սերաստուպոլ—24.
 Սերաստիա—157, 160.
 Սելուկ Բուրքեր—65, 70, 73, 224, 234, 307, 319.
 Սեմեր—19.
 Սենեքերիմ, Թագավոր Վառդուրակապետի—48.
 Սեն Մարտեն—158, 168, 205, 219, 245, 347.
 Սիթի խաթուն—267.
 Սիեկես Պ. Մ.—348.
 Սիմեոն, Աղվանից կաթողիկոս—115.
 Սիսական—257, 337, 348.
 Սիսաշան—334, 335, 336, 337.
 Սիրիա—27, 158, 290, 321, 322, 330.
 Սիրիացիներ—158.
 Սլավոններ—49, 119, 298.
 Սմբատ Գունդստաբլ—86, 87, 97, 98, 114, 275, 281, 282.
 Սմբատ Արարբաս Խոստովանող, հայոց սպարապետ—35, 38, 228.
 Սմբատ իշխան—101.
 Սմբատ I Թագավոր—40, 41, 42, 43, 44, 64, 103, 104, 110, 111, 114, 302, 303, 304, 305, 311, 328, 372, 373.
 Սմբատ (Հովհաննես-Սմբատ), Գաբիկի որդի—109, 273.
 Սմբատ Խոսրով Շում—201.

Սմբատ Բագրատունի, սպարապետ—25, 67, 202, 203, 204, 205, 206.
 Սմբատ II—46, 47, 94, 95, 259, 333.
 Սմբատ Բագրատունի, սպարապետ—25, 60, 222, 226.
 Սյունաց Սուրբան իշխան—110, 276.
 Սյունից—17, 23, 26, 26, 41, 44, 91, 152, 153, 154, 259.
 Սյունաց Թագավորություն—45.
 Սյուրիայի արաբներ—56.
 Սողոմոն—43, 71, 253, 257, 303, 333.
 Սոնդուլ—233, 284.
 Սոուդ բուլաղ—167.
 Սպեր (Սիսակիրիտիս)—26, 226, 222, 325, 371, 374.
 Սուլլա—39, 234.
 Սուլեյմանիա—171.
 Սուրեն—101.
 Սուրեն, մարզպան Հայաստանի—16.
 Սեհրա, ամիրա Մանգլիկերտի—33, 83.
 Սեորդիներ—297.
 Սե ծով—53, 66, 141, 299, 314, 317, 329, 330, 358.
 Սեանա լիճ—69, 336, 370.
 Վալիդ խալիֆ—295.
 Վախտանգ Գորգասալ, վրաց Թագավոր—11.
 Վախուշտ—339.
 Վալիդի—131, 185.
 Վահան Մամիկոնյան—11, 12, 51.
 Վահան, Վարդանի որդի—259.
 Վահան, Բագրենի որդի—259.
 Վահան Ամատունի—76, 90.
 Վահան, Սյունաց իշխան—91.
 Վահան Գնունի—222.
 Վահան Խոսրովունի—201, 202.
 Վահրամ, իշխանաց իշխան—265.
 Վաղարշակներ—48.
 Վաղարշակ, պարսից Թագավոր—12, 367.
 Վաղանդադիներ—253.
 Վաղենդին, հոսմեական զորավար—191, 192, 196, 201.
 Վալոց ձոր—47.
 Վան—40, 157, 317, 358.

Վանա լիճ—69, 72, 73, 157, 158, 159,
 226, 320, 321, 322, 332.
 Վանանդի թագավորություն—313.
 Վանանդ—21, 39, 164, 174, 187, 257,
 382.
 Վանանդի մարզ—73, 145, 146.
 Վանեվան եկեղեցի—337.
 Վալազան, Աղվանից թագավոր—252,
 254, 256, 203.
 Վալազան Բարեպաշտ, աղվանից թագա-
 վոր—260, 261.
 Վասակ, մարզպան—10.
 Վասակ Բագրատունի—35, 227.
 Վասակ—258.
 Վասպուրական—16, 30, 37, 45, 48, 62,
 72, 73; 112, 105, 229, 230, 231.
 Վարազդիորոց—31, 196, 202, 203, 204,
 206, 220.
 Վարաժնունիք—322, 371.
 Վարանցովկա—348.
 Վարդան Մամիկոնյան I—50, 81.
 Վարդան Մամիկոնյան II—16.
 Վարդանանց պատերազմ—10.
 Վարդան, Զանտալի որդի—259.
 Վարդան, Գարդմանա տեր—261.
 Վարդան, պատմիչ—35, 38.
 Վարդանակերտ—150, 165, 166, 347.
 Վարսան—150, 340, 341, 342, 343.
 Վարդ, Նիկեփոս կայսեր եղբորորդի—46.
 Վարդիկ (Անկիկ), Մոկաց իշխան—179.
 Վեհվեհնամ—90.
 Վելիաս—15.
 Վլադիմիրսկի Բուդոնով—132.
 Վլադիմիր Սուրբ—134.
 Վլիթ խալիֆ—25.
 Վիդանա—164.
 Վիրբ—9, 21, 23, 24, 151, 174, 187.
 Վուլգա—298.
 Վուլգայի բուդարներ—299.
 Վրաստան—29, 31, 37, 38, 47, 48, 51,
 52, 62, 72, 91, 150, 152, 163, 164,
 180, 182, 184, 185, 187, 199, 227,
 242, 244, 282, 298, 327, 328, 330,
 348, 358.
 Վրկան—17.
 Վաշտուխս գլուղ—154.

Յաբարի—68, 77, 78, 79, 80, 83, 84,
 86, 89, 113, 119, 176, 177, 181, 183,
 185, 190, 238, 240, 320, 370.
 Յաթե—253, 257, 258, 260.
 Յաճատ—31.
 Յաճատ Անձևացի—220.
 Յաճիկներ—36, 46, 183.
 Յաճկաստան—21, 174.
 Յայթ—16, 22, 35, 47, 48, 60, 202, 226.
 Յանախ (Դոն)—299.
 Յանաուտ գլուղ—152, 153.
 Յաշիր—47.
 Յասվիչ—146, 166, 167.
 Յավրոս—157, 159.
 Յարանտ—157, 158.
 Յարոն—21, 35, 36, 37, 46, 57, 62, 100,
 101, 102, 158, 174, 177, 178, 182,
 187, 195, 226, 228, 229, 230, 233,
 359.
 Յարոն—301.
 Յեկոր—265, 267, 270, 273, 274, 276.
 Յեկրիկ—300.
 Յերնովսկի—153, 156.
 Յեր-Մկրտչյան Գ.—94, 267.
 Յեր-Մովսիսյան Մ.—234.
 Յիգրանակերտ ավան—151, 153, 152,
 159.
 Յիգրիս—158, 160, 170.
 Յիգրոն—165, 168, 170, 171, 347.
 Յիրան—174.
 Յիրիխի լիճ (Վանա լիճ)—221.
 Յոսպ—40.
 Յորեա դեոտ—168, 170.
 Յրապիզոն—23, 66, 144, 161, 163, 294,
 295, 312, 313, 314, 316, 317, 326,
 330, 355, 356, 358, 372.
 Յրապիզոնի մարզ—164.
 Յրդատ III—109, 112.
 Յրդատ կաթողիկոս—29.
 Յրիպուլիս—347.
 Յրունյաց տոհմ—221.
 Յուս—42.
 Յուրուբերան—16, 158, 322.
 Յուր-Արդին—176.
 Յուրենբիզ—203, 205.
 Յփիս կամ Տփղիս—42, 44, 45, 162,
 163.

Յամաքաճար—117.

Յիսաա—15.

Ուռայ—176, 346, 347.

Ուսպենսկի—349.

Րաւի—17, 42, 150.

Ուրարտացիներ—233.

Ուրծա գլուղ—221.

Ուրմիա—146, 148, 167, 330, 331, 332, 333.

Ուրմիա լիճ—146, 167, 171, 330, 332.

Ուրտուրիտա (Ուտուրտա)—265, 266.

Փամբակ—348.

Փայտակարան—17, 33, 60, 91, 149, 150, 225, 347.

Փայտաշեն—118.

Փառեսոս—47.

Փալստոս Բյուզանդացի—52, 90, 262.

Փաւլուն ամիրա—48.

Փարախոտ—329.

Փարանդիոն—88.

Փարպի—265, 267.

Փիլիպպե, Բերդկաների գլուղի տեր—253, 257.

Փիլիպպե, Սյունաց Վասակ իշխանի որդի—253, 257, 258, 259.

Փոկաս կայսր—18, 143, 163.

Փորթուզալ Միքայել փաշա—80, 81, 85, 86, 88, 93, 99, 102, 104, 106, 107.

Փոքր Ասիա—18, 24, 44, 54, 73, 141, 143, 158, 295, 300, 330, 332, 356, 384.

Փաղկեդոն—142, 161, 242, 243.

Փաղկեդոնականներ—244.

Փարանուղ—354.

Փարդա—176.

Քարքե—101.

Քեղամագոմ—273.

Քեփրի-քենդ—348.

Քեփրիքեյ—145, 146.

Քոլավեր—227.

Քսենոֆոն—160, 170.

Քրիստոս—75, 168, 250.

Քուրդեր—312.

Քուրդ, Խոսրով Շապուհի որդի—259.

«Քուրդերի դարպասներ»—315.

Օրոլենսկի—153, 156.

Օգրայ—194.

Օթմաշ, արաբ զորավար—194.

Օթման, խալիֆ—180, 181, 182, 187, 189, 193, 194, 195, 198.

Օհանավանք—266, 267.

Օմայան դինաստիա—19, 20, 27.

Օմայան խալիֆներ—55, 209, 290.

Օմայաններ—56, 61, 210, 211, 212, 213, 214, 218, 355.

Օմար խալիֆ—25, 26, 176, 177, 209.

Օշական—266, 275, 276.

Օսման Ի. Աբի-լ-Ասս—176, 181, 297.

Օրմանյան Մ.—183, 184, 290, 291, 294.

Օրբելի Հ.—236, 246, 267, 319, 325, 357, 366, 373, 375, 376.

Օրբելյան Ատ.—110, 118, 252, 253, 257, 258, 259, 260, 262, 263, 275.

Ֆազիս—Ռիոն գետ—163, 164.

Ֆարկին—332.

Ֆարկին—Մարտիրոսով—159.

Ֆերգան—20.

Ֆիլիպպիկ—146.

Ֆիրդուսի—97, 106.

Ֆրանսիայի արքեպիսկոպոս—384.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
Առաջաբան	5
Համառոտ պատմական տեղեկություններ, ընդհանրացումներ և սկզբնաղբյուրներից քաղված կարևոր վկայություններ	9
Համառոտ տեսություն Հին Հայաստանի պատմության	50
Հայաստանի արքունի հարկերը մարդպանության շրջանում	74
Յուստինիանոսի նովեղները հայերի ժառանգելու կարգի մասին	125
Հերակլ կայսեր պարսկական արշավանքների ընթացողիները (մարշրուտները)	141
Արաբական արշավանքները Հայաստանում	173
Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ	207
Նյութեր Հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության	235
Նյութեր Հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության	252
Հատվածներ ակադ. Հ. Մանանդյանի «О торговле и городах» 1954 թվին բարեփոխված և վերահրատարակված աշխատություններից հայերեն թարգմանությամբ	289
Քաղաքները Հայաստանում 10—11-րդ դարերում	352
Ժամանակագրական աղյուսակ	387
Ցանկ աղբյուրների և գրականության	390
Ցանկ հատուկ անունների	407



Խմբագիր՝ Լ. Ժամկաշյան
 Գեղ. խմբագիր՝ Գ. Խաղիկյան
 Տեխ. խմբագիր՝ Ն. Ախիրյան
 Վերստուգող տրամադրիչ՝ Լ. Դշնայան

ՎՖ 03672

Պատվեր 754

Ցիւմ 5000

Հանձնված է տրամադրության 27/1 1960 թ.:

Ստորագրված է տպագրության 23/VIII 1960 թ.:

Թուղթ՝ 60X92¹/₁₆: Տպ. 26,75 մամ., հրատ. 23,5 մամ.:

Գինը 7 ա. 40 կ.:

1/1 1961 թ. գինը՝ 74 կ.:

ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Հրատարակչությանն են
 պատկանում ֆուրգյունարկության Գլխավոր վարչության
 Պուլտրաֆիզմաթեմատ, Երեան, Տերյան 91:



